

pußte  
Zugstap I

1893

891.99

P-35

70. ph — 10

96

89/99  
P-35

NOV 1901

# Ր Ա Յ Յ Ի




## ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

«Առանց փայտի կրակը կը հանգչի եւ թի  
որ բանասրկու չը լինի, կռիւը կը դադարի,  
Ինչպէս անտէր գորու թիւն է տալիս կոշտեղծ  
ու փայտը կրակին, այնպէս է կռուտակը  
ճարգը վե՛ճ բարբաբելու համար»:

Առ: Սոսոսի Իջ ք: 20—21 հոտ:



Թ Ի Յ Լ Ի Ս

Տ Կ Մ Ր Մ Ն Մ Ո Վ Ա Է Ս Վ Պ Ր Պ Մ Ն Ե Ս Ն Ի  
Типографія М. Вартанянцъ, Ганов. ул.

1893

43

Доз. ценз. Тифлисъ, 1893 г. 27-го января.  
Тип. М. Вартаианица, Гановская улица.



1121-98

ՊԱՇՏԵԼԻ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՅԻ

ՆՈՒՐՈՒՄ Է:

ՔԵՂԻՆԱԿԻ ՎՅՏԱՅԵԱՆ ԱՅՐԻՆ

24 .08. 2013



1121-98

Օր քարնանային, օ՛ր թարմ և սիրուն,  
 Շնչում է արփին, նոր կեանք ջերմութիւն,  
 Բայց դեռ դաշտերը ձմեռուայ քնով  
 Թմրած, նիրհում են, զարթնել չեն ուզում:  
 Եւ լի յոյսերով մշակը ժրաջան  
 Նիհար եզներով վարում է գութան:  
 Զարթեցէք խոր քնից, ո՛վ թմրած արտեր,  
 Մինչ ե՞րբ պիտ ննջէք՝ ամայի դաշտեր:  
 — Յաջողութիւն Քեզ, ո՛վ անբախտ մշակ,  
 Մշակ անպտուղ խոտան դաշտերի,  
 Բարեմաղթում է մշակը մտքերի,  
 Որ կարեկից է քո դառն վշտերի:

*Բաղդատ*





Կ Ա Յ Տ Ե Ր



# Կ Ա Յ Ծ Ե Ր

«Բայց այն Արարիչն ինչպէս թառառ զհայկ  
ինձ, եւ ձեռքումը կրակի կայծեր կային, որ  
սեղանի վրայից ունեւելքով վեր էր սուած, եւ  
իմ բերանին զիւրցնելով, սասց. ահա այդ քո  
չբժուհիքն ինչպէս զիւր ու, եւ քո անօրէնու-  
թիւններդ կը վերացնէ, եւ քո մեղքերդ  
կը սրբէ քեզանից»:

Եւ այլ Զ. ք. 6—7 ձ.:

## Ա.

### Ը Ն Տ Ա Ն Ի Ք

Իմ մանկութիւնից շատ փոքր բան կարող եմ  
գրել, որովհետեւ նա անցաւ այնքան շուտ եւ այն-  
քան դարտակ կերպով, որ շատը ես ինքս չեմ  
յիշում:

Բայց երբ մտաբերում եմ անցեալը, իմ  
տխուր եւ յիմարութիւններով լի անցեալը, կրկին  
զարթնում են վաղեմի յիշողութիւնները, եւ որ-  
պէս միտն իտաւարի միջից, նկարվում է իմ առ-  
ջեւ մանկութիւնը իր անմեղ-երեխայական կեր-  
պարանքով:

Ահա մինը միտի ետեւից երեւան են գալիս  
ծանօթ պատկերները.—

Ես տեսնում եմ հայրենի տնակը իր հին, ժամանակի աւերմունքից մաշված պարխապներով: Գեռ նոյն տերեւախիտ ծառերը հովանաւորում են նրան իրանց հսկայական ճիւղերով, դեռ նոյն ճնճղիկները երգում են ոստերի վրայ, ինձ թըւում է, որպէս թէ ծանօթ լինէին նրանց խորամանկ երեսիկները:

Կարծես, շատ ժամանակ չէ անցել, կարծես, հէնց երէկ լինէր այդ, — ես տեսնում եմ իմ պառաւ տատին, նստած իր սովորական տեղում, մեր խրճիթի դռան հանդէպ: Կարձեալ նոյն ընկուզենին պատասպարում է պեւոր գլուխը ամառնային արեգակի կրակոտ ճառագայթներից: Նա նստած է, որպէս միշտ, լուռ եւ մտախոհ կերպով: Նրա ծնկերի վրայ մրափում է իր մտերիմը՝ ահագին մազոտ կատուն, երեւի, քաղցր երազներ է տեսնում:

Սիրելի տատ, եւ այս բոպէիս քո երեսի մոյգ-դեղնագոյն խորշոմների մէջ ես տեսնում եմ նոյն բարութիւնը, որպէս առաջ, եւ այժմ քո լի գլխով աչքերը նայում են իմ վրայ վաղեմի սիրով: Ինձ թըւում է, որպէս թէ դեռ լսում եմ քո խմաստալից խրատները. — «Փարհատ, որդի, բաց գլխով մութի մէջ ման չը գաս, չարքերը կը զարկեն գլխիդ . . . յօրանջելու ժամանակ երեսիդ խաչ հան, որ սատանան չը մտնէ փորդ . . . գիշերը մատաք չը ծամես, մեռելները կը նեղանան» . . . — Սյապխի շատ խրատներ տալիս էիր գու ինձ, զգուշացնում էիր, որ աւերակներ չէի չը մտնեմ . . . զգուշացնում էիր, որ գերեզ-

մանատան մօտից մենակ չ'անցնեմ. . . ու սեւ կա-  
տուի հետ չըխաղամ. . .

Տառս կոչվում էր Նուշան: Նա ժառանգել  
էր իր մօր անունը: Թէ քանի տարեկան էր,—  
ես հիմա էլ չը գիտեմ: Բայց նա ականատես էր  
եղած այնպիսի անցքերի, որոնց վրայից դարեր  
էին սահել: Այսուամենայնիւ, նա բոլորովին չէր  
կորցրել իր ժրութիւնը: Կը տեսնէիր, մի ան-  
վաստակիւի մեքենայի պէս, առաւօտից մինչեւ  
երեկոյ, անդադար շարժման մէջ է: Նրա ամե-  
նատես աչքերը ամեն բանի վրայ կը նայէին եւ  
ամեն բան կը գիտէին. նրա անհանգիստ լեզուն  
ամեն բանի մասին հարցմունքներ կանէր եւ ան-  
վերջ հաշիւ ու համարներ կը պահանջէր: Մինչեւ  
մահ նա չը թողեց ձեռքից իր կառավարութեան  
դաւաղանը— ահագին փայտեայ շերեփը, որով  
նա ընթրիքի եւ ճաշի ժամանակ կերակուր էր  
բաժանում: Մինչեւ նրա մահը մեր տան թէ  
մեծը եւ թէ փոքրը ամենայն խոնարհութեամբ  
հպատակում էին նրա հեղինակութեանը:

Տառս շատ աշխատասէր կին էր: Ես դեռ  
յիշում եմ, թէ որպէս գիշերի մեծ մասը, նստած  
այծի մորթի վրայ, դնում էր իր առջեւ մանկու  
մեքենան, եւ ոսկրացած ձեռքով, պտոյտ տալով  
ճախարակի թեւքը, բամբակից թել էր պատ-  
րաստում: Ինձ թւում է, թէ դեռ զարկում է  
իմ ականջներին պառաւի դողդոջուն մեղեդին  
իր տխուր, մեղամաղձական հնչիւններով. ինձ  
թւում է, թէ դեռ լսում եմ նրա նահապետական  
մեքենայի խուլ ձոձոսքը:

Մեր գիւղում տատս համարվում էր խելացի պառաւներէից մէկը, իսկ իր տան մէջ նրա իմաստութիւնը համուում էր անխալալականութեան: Ըշմարխոն ասած, ես էլ փոքր ժամանակս հիացած էի նրա իմաստութիւնով: Նա ամեն բան գիտէր: Նա գիտէր, թէ ինչ նշանակութիւն ունեն այս եւ այն երազները: Նա գիտէր, թէ ինչ խորհուրդ ունեն, երբ մարդու մարմնի այս եւ այն մասները «խաղում են»: Նա հասկանում էր կաշաղակի լեզուն, եւ բացատրում էր, թէ ինչ լաւ խաբարներ է բերում նա, երբ մեր պատի վրայ նստած, կրչկրչում է: Նա լսել չէր կարող բուի շարագուշակ ձայնը, եւ պատուիրում էր ինձ՝ քարով սպանել նրան, երբ կը նստէր մեր պատի վրայ: Նա գիտէր, թէ ինչու Սողոմոն իմաստունը անիծեց ճնճղիկին, կամ ո՞վ գըրեց հոպոպի գլխի վրայ այն գեղեցիկ փետուրէ տանդրը:

Այն, տատս շատ բան էր իմանում: Նա պատմում էր ինձ, թէ ինչպէս կը հասնի աշխարհի վերջը. կամ երբ կը յայտնվի Նեգը: Նա ասում էր, թէ անիծեալ Նեգը կը գայ, մի ահագին էշի վրայ նստած, թէ նրա աւանակի ականջները այնքան երկար կը լինեն, որ մի ականջի ծայրը կը հասնի մինչեւ արեւմուտք, իսկ միւսինը մինչեւ արեւելք: Նա ասում էր, թէ այն ժամանակ կը յայտնվին «աջուջ - մաջուջները», թէ դրանք այնքան փոքրիկ թղուկներ են, որ իմ կոշիկները կարող էին նրանց համար բնակարաններ լինել:

Բայց ես աւելի սիրում էի տառիս հէքիաթները:

Ես դեռ յիշում եմ մի քանի հէքիաթներ, որ գիշերները պատմում էր նա: Երբեմն, միանգամ սկսած հէքիաթը վերջացնում էր մի ամբողջ շաբաթուայ ընթացքում: Այն, ինչպէս լաւ պատմում էր նա: Ես բոլորը, բոլորը հասկանում էի եւ միշտ ուրախութեամբ էի լսում: Բայց երբ պատմում էր դեւերի, սատանաների, կրողների եւ դժոխքի մասին,— ես սարսափում էի, եւ աւելի շատ էի վախենում, երբ խօսում էր մեռելների մասին:

Իսկ երբ տառս մեռաւ, նրանից չէի վախենում: Նա խիտ հանգիստ կերպով պառկած էր դագաղի մէջ, կարծես քնած լինէր: Նրա գէմքը էլի այնպէս բարի էր, որպէս առաջ: Ես մտածում էի, թէ նա հրեշտակների մօտ կը գնայ, նրա համար, որ ինձ երբէք չէր ծեծում: Երբ նրան թաղեցին, ես շատ լաց եղայ: Մայրս ասում էր, թէ նա մի օր գերեզմանից կը վերկենայ. ես ուրախանում էի:

Իմ մօրը կոչում էին Նիգար: Գուք տեսել էք դեռ նոր բացված մի ծաղիկ, որ թառամել էր իր կոկոնի մէջ,— այդ իմ մայրն էր: Ի՞նչ ճկնիկ, ես երբէք չեմ կարող մտածնալ քո միշտ տխուր եւ գունաթափ գէմքը: Ի՞նչու դու ուրախ լինել կարող չէիր . . . Ի՞նչու այնպէս սպանված էին քո գեղեցիկ աչքերը, որոնցից արտասուքը շատ քիչ էր պակասում . . .

Մայրս մի բարձրահասակ կին էր, նիհար

եւ թոյլ կազմուածքով: Ոտքի վրայ նա միշտ հիւանդ էր, բայց երբէք չէր պառկում: «Ո՞վ պիտի պահէ իմ երեխաներին», պատասխանում էր նա, երբ նրան ասում էին, թէ պէտք է փոքր ինչ հանգստանալ, թէ պէտք է փոքր ինչ կազդուրել սպառլած ուժերը: Ամբողջ օրը դադարում չունէր: Նա էր թխում մեր տան հացը, նա էր եփում կերակուրները, նա էր լուանում մեր շօրերը, նա էր կարում եւ կարկանդակում մեր հագուստը: Բայց անային հոգսերը չէին, որ մաշում էին նրան, — նրա ցաւը սրտիցն էր . . . Ես այն ժամանակ չէի հասկանում, բայց հիմա հասկանում եմ . . .

Մեր գիւղում գոլասանլած էր մօրս վարպետութիւնը կարելու եւ ձեւելու մէջ, բայց շատ քիչ էին վճարում նրա աշխատութիւնների համար: Շարաթական մի քանի շահի հազիւ էր վաստակում եւ նրանցով ապրում էինք: Տատիս մեռնելէն յետոյ տան հոգսը բոլորովին մնաց մօրս վրայ: Քոյրերս՝ Մարիամը եւ Մագթաղը դեռ փոքրիկներ էին, գրանք աւելի խանգարում էին մօրս, քան թէ օգնում էին:

Մարիամը եւ Մագթաղը երկուորեակներ էին, այնքան նման միմեանց, որ ես շատ անգամ սխալվում էի մինը միւսից որոշել: Մայրս նրանց ձանաչելու համար կարել էր զանազան գոյներով գդակներ, — Մարիամինը կանաչ գոյնով, իսկ Մագթաղինը կարմիր: Ես դեռ յիշում եմ այն անմեղ կռիւները, որ ծագում էին այդ երկու հրեշտակների մէջ իրանց գդակների մասին:

Պատճառները շատ ծիծաղելի էին. օրինակ, երբ Մարիամին սիրում էին, Մազթաղը խլում էր նրա գգակը, դնում էր իր գլխին, որ ինքն էլ Մարիամ դառնայ եւ նրան էլ սիրեն:

Ես շատ անհանգիստ երեխայ էի, բայց գարձեալ մայրս ինձ չէր ծեծում, որովհետեւ նրա մի հասակ տղան էի: Մօրս սէրը հասնում էր մինչեւ այն թուլութեանը, որ շատ անգամ ներում էր իմ անկարգութիւններին: Կը պատահէր՝ վաղ-առաւօտեան, ամենեւին երեսս չըլլալայած ու մազերս չը սանդրած, տանից դուրս կը գայի, եւ ամբողջ օրը կըխաղայի, կը թափառէի գատարկաշրջիկ երեխաների հետ: Մայրս մասամբ գոհ էր լինում, երբ ես տանը չէի գտնւում, նրա համար որ, եթէ տանը մնայի, անպատճառ, կամ մի բան կը կտարէի, կամ մի բան կը վիթէի, եւ եթէ ոչինչ չը լինէր, կը սկսէի քոյրերիս ծեծել, Խեղճ երեխաներ, ինչպէս համբերում էին չար եղբօր կոպտութիւններին: Կարծես, նրանք զգում էին, թէ իրանք աղջիկներ էին, իսկ ես — տղայ. կարծես, մտածում էին, թէ ես շատ բանով բարձր էի նրանցից, ուրեմն, իրատուք ունէի տանջելու: Եւ այսպէս, մանկութիւնից պատրաստուում էին լինել տղամարդի ստրուկներ . . . Այլ մտքեց նրանց մէջ այդ զգացմունքը:

Մեր դրացիները հանդատութիւն չունէին ինձանից: Նրանց մէջ կազմիկ էր մի այսպիսի համոզմունք, թէ մայրս ինձ ծնելու միջոցին, ոգիները գողացել էին նրա տղան եւ փոխարէնը

մի դեւ էին դրել: Բայց իմ եւ դեւի մէջ ոչինչ նմանութիւն չը կար. ես բաւական գեղեցիկ երեսխայ էի, ինչ անկէք, որ չար էի: Բայց գարձեալ մայրս չէր հաւատում այդ զրոյցներին, նա ասում էր, եթէ մի այսպիսի բան լինէր, տատս կը գիտենար: Նա դեւերի հանգամանքները լաւ էր հասկանում:

Իմ հօրս յիշում եմ որպէս մի երազ: Այսքանը միտքս է գալիս, որ նա մի չոր ու ցամաք մարդ էր, մօրս նման բարձր հասակով, եւ դէպիցած կռացած մէջքով: Նրա գլուխը պատած էր տարածամ ալեւորած, սպիտակ մազերով: Նրան կոչում էին Հայրապետի տղայ Սհակ: Եւեսուն եւ վեց տարեկան տղամարդ էր նա, բայց վաղահաս ծերութիւնը բոլորովին փոխել էր նրա երիտասարդական դէմքը: Ինչու այնպէս շուտ ծերացաւ նա, ինչու մօրս նման նա էլ միշտ տխուր էր, եւ երբէք ուրախ լինել կարող չէր:

Մեր տանը խիստ սակաւ էի տեսնում հօրս: Նա, որպէս սովորաբար ասում են, դաշտի մարդ էր: Տարուայ երեք եղանակներում — գարուն, ամառ եւ աշուն — նա մշակում էր իր հողերը եւ փոքրիկ այգին, իսկ ձմեռը իր ջուլհակի խորի մէջ կտաւ էր գործում: Բայց գարձեալ մնում էր միշտ աղքատ: Հայրս շուայլ մարդ չէր. ոչ արագ էր խմում, ոչ ծխում էր եւ ոչ էլ լառւտում կամ հագնւում էր: Ես դեռ չեմ մոռացել նրա բազմամեայ հոգաթափները, որոնք ստէպ կարկատիկուց այնքան ծանրացել էին, որ հազիւ կարելի էր շարժել: Նրա մորթէ գը-


դակը բոլորովին կորցրել էր իր մազերը: Եւ ինչով պէտք էր բացատրել այդ խնայող եւ աշխատաւոր մարդու դառն աղքատութեան պատճառները:

Լինում էր, շատ անգամ տանը հաց չունէինք ուտելու, քոյրերս լաց էին լինում սովից: Եւ ահա, գիշերային տարածամ պահուն յայտնրվում էին հարկապահանջները: Սկսում էին դուռը զարկել: Կը կտարէին, եթէ խողոյն չը բաց անէինք: Ներս էին թափվում մի խումբ կատաղի Ֆէրէ-շէրէ: Բոլորովին գոխք էր դառնում այն ժամանակ մեր տունը: Ամենքս սարսափում էինք: Հայրս մեռելի գոյն էր ստանում, իսկ մայրս երկիւղից սկսում էր դողալ: Ես եւ քոյրերս փախչում էինք ու մանում մեր քնաշորերի մէջ, թէ եւ երբէք քնել կարող չէինք, բայց սուս էինք կենում:

Ֆէրրաշները հօրս բռնում էին ու կապում մեր խրճիթի սան վրայ, այնքան պինդ, որ շարժվել կարող չէր, կարծես, ամբողջ մարմնով մեխած լինէր սան հետ: Նրա մօտ դիզվում էր մի ահագին խուրճ գալար ճիւղտների, սկսում էին ծեծել հօրս: Նա մորմորում էր, աղաղակում էր, աղաչանք էր անում,—բայց ո՞վ էր նրա ձայնը լսողը . . .

Ֆէրրաշները հարկ էին պահանջում եւ եթէ մի փոքր ուշանում էր, սկսում էին հօրս մերկ տաների տակ կրակ լցնել, այդ բաւական չէր, նրա մորմինը այրում էին տաքացրած շամփուրներիով: Այդ սոսկալի տանջանքների ժամանակ,

7 1221-98



ինչ որ իմ մօր դրութիւնն էր, Աստուած ազատէ, ես անկարող եմ նկարագրել: Նա բոլորովին գթում էր: Նա կտրում էր իր գլխի եւ պարանոցի զարգերից ամենաթանկագինը եւ տալիս էր Ֆէրրաշներին: Նա աղաչում էր, պաղատում էր, որ չը ծեծեն հօրս, որ չը սպանեն նրան, որ սպասեն մինչեւ առաւօտ, մինչեւ լոյսը ծագի, որ հայրս կարողանայ մի տեղից պարտք անել եւ պահանջած հարկը վճարել:

Այս բոլորիս էլ իմ մարմնի վրայ դող էր նկնում, երբ մտաբերում եմ այն սարսափելի գիշերները . . . Ֆէրրաշները գալիս էին միշտ գիշերով, ինչպէս չար երեխաները միշտ գիշերային մթութեան ժամանակն են քանդում խեղճ ծառի բոյնը, եւ գիշերով են բռնում նրան, որովհետեւ գիտեն, որ ողորմելի թռչունը այն ժամանակ մի ուրիշ պատասպարան չունի բացի իր օթեւանը:

Չարհուրելի գիշերներ . . . Արքան արտասուքի եւ սրբան տանջանքների պատճառ էին դառնում նրանք մօրս . . . Նա գիշերային այն մթին խաւարի մէջ մենակ դուրս էր գալիս տանից, աւնում էր իր հետ մի պղինձ, կամ մի ուրիշ բան, եւ տանում էր գինետուն, որ գրաւ դնէ եւ նրանց համար ըմպելիքներ բերէ: Նա մտրթում էր մեր հաւերը եւ նրանց համար կերակորներ էր պատրաստում. բայց անողորմ հիւրերի ուտելուն եւ խմելուն չափ չը կար:

Այսպիսի դէպքեր պատահում էին համարեա միշտ, որովհետեւ հարկերը վերջ ու սահման չունէին: Ամեն բանի համար պահանջում

էր, թէ ցանրի համար, թէ անասունների համար եւ թէ մեր ընտանիքը կազմող հոգիների համար: Հաշիւ չը կար. հաշիւը կախված էր պահանջողի կամքից միայն: Աերջապէս հարկերը կարող էին ծագել հաղարումէկ հանգամանքներից, եւ այնքան զանազան միմեանցից, որ շատերի անունները մոռացել եմ: Արտեղից պէտք էր վճարել — Պէտք էր տանից մի բան ծախել, մի բան գրաւ դնել, Բայց մեր տանը ոչինչ չէր մնացել. մեր տունը նմանում էր մերկ գերեզմանի: Այդ կարող էր հասկանալ Ֆէրրաշը, նա ինքն էր ծախել տալիս մեր կովը, մեր եզր եւ մեր գոմէշը, ամենեւին չբնութագրելով, թէ վաղը մեր արօրը կը դադարէ գործելուց եւ մի ամբողջ ընտանիք կը գրկվի ապրուստի միջոցներից:

Հայրս վերջին ժամանակներում բոլորովին թողեց իր հոգերի մշակութիւնը, որովհետեւ ստացած արդիւնքը մինչեւ անգամ չէր լրացնում հարկերի վճարը: Բայց այսպիսով նա դարձեալ չ'ազատուեցաւ Ֆէրրաշներից, նրանց այցելութիւնները դարձեալ շարունակվում էին:

Խոնջով պէտք էր ապրել — Մնում էր մի բան, որ սոված չը մեռնենք — միշտ պարտք եւ պարտք անել . . . Բայց որքան ծանր էին սոկոսները . . . Ես այն ժամանակ երեխայ էի, ի հարկէ, հաշիւներ չէի կարող հասկանալ, բայց դեռ չեմ մոռացել մեր անիրաւ վաշխառուի վայրենի դէմքը: Նրան կոչում էին Հաջի-Բաբա. դա մի հարուստ մահճակալան էր, բայց հոգէառ հրեշտակը ձեզ օրինակ, երբ յայտնվում էր սոկոսները հաւա-

քելու: Նա գրել-կարդալ չէր իմանում եւ ոչ տուած փողերի համար պարտամուրհակ էր պահանջում: Նրա պարտամուրհակը իր խղճմտանքն էր, իսկ ամսաթիւը կամ տարեթիւը հաշուում էր եղանակների փոփոխութեան վրայ: Նա մի տուարակի մէջ իր հետ ման էր ածում փայտի զանազան կտորներ, երկայն եւ կարճ, բարակ ձողերի նման, որոնց վրայ նշաններ էին արած գոյնզգոյն դերձաններով, — դրանք նրա հաշուեմատեաններն էին: Զողերի վրայ կային շատ եւ փոքր թւով խազեր, որ նշանակում էին գումարների որքանութիւնը, իսկ գոյնզգոյն դերձանները պարտականների անուններն էին որոշում:

Հաջի-Բարան գանգատ անելու սովորութիւն չունէր, երբ նրա պարտականներից մէկը իր ժամանակին փող չէր վճարում կամ ուշացնում էր. — նա իր դատաստանը իր ձեռքովն էր անում: Սակնին յայտնի էր Հաջի—Բարայի ահագին մահակը, որով նա ցարդում էր իր պարտականների սոկորները: Նա մինչեւ անգամ իր հրամանով բանտարկում էր շատերին եւ ծախել էր տալիս նրա տան կայրը:

Նս գեռ յիշում եմ անգութ վաշխառուի խօսքերը, երբ նա տոկոսները առնելու համար մեր տունն էր գալիս: — «Սհակ, ասում էր նա իմ հօրը, — գիտես որքան է անցել, տես, այս ծառը գեռ նոր էր տերեւ բացել (նա ցոյց էր տալիս մեր բակի ընկուզենին) հիմա կրկին կանաչել է նա, ուրեմն, անցել է մի բոլորակ տարի: Թէ գլուխը չես կարող տալ, գոնէ կաթը

(տակոս) տուր, թէ չէ, այդ ջուխտ աղջիկներդ  
կը տանեմ, կը թուրբացնեմ . . .

Մարիամը եւ Մագթազը, երբ այդ խօսքերը  
լսում էին, կուչ էին գալիս, եւ միմեանց, գրը-  
կելով, սկսում էին լաց լինել: Անմեղ արարած-  
ներ, կարծես նրանք հասկանում էին, թէ ինչ  
սարսափելի բան է թուրքի հարեմը . . .


Ահա այսպէս էին անցնում մեր սեւ օրերը:

Հայրս, չը կարողանալով հայրենի երկրում  
իր ընտանիքը պահել, ստիպվեցաւ դիմել գէպի  
պանդխտութիւն, օտար աշխարհներում բախտ  
որոնելու: Մենք տարանք նրան մինչեւ գիւղից  
գուրս ճանապարհ գցելու: Ես եւ քոյրերս շատ  
ուրախ էինք, երբ նա գնում էր, կարծում էինք,  
թէ բազարն է գնում, որ մեզ համար չամիչ  
կամ խորմայ բերէ: Բայց մայրս լաց էր լինում:  
Տխուր էր եւ հայրս. մահուան չափ տխուր էր  
նա: Ես մինչեւ այսօր չեմ մոռացել այն խօս-  
քերը, որ բաժանման րոպէում ասաց նա մօրս.  
— «Ամանաթ քեզ որդիքս, Նիգար, եթէ կեն-  
դանի կը մնամ, թող չեմ տայ, որ նրանք սոված  
մնան» . . . — «Շուտ եկ, շուտ, հայրիկ, կանչում  
էինք ես եւ քոյրերս նրա ետեւից, — մեզ համար  
չամիչ եւ փշատ բեր:»

Բայց նա գնաց, էլ չը վերադարձաւ . . .

Տարի չ'անցաւ, հօրս մահուան լուրը մեզ  
հասաւ: Այդ ցաւալի մահը, որի մանրամասնու-  
թիւնները ես կը պատմեմ յետոյ, ամենասաստիկ  
ներդործութիւն ունեցաւ մեր դժբախտութեան  
փրայ: Այն ժամանակ յայտնվեցաւ Հաջի-Բարան,

տիրեց մեր բոլոր կայքերին եւ մեզ մերկ ու սաա-  
բորիկ դուրս արեց հայրենական տնակից: Մայրս  
քննելով իմ եւ քոյրերիս ձեռքից, գնաց քեռուս  
տունը, այնտեղ ապրելու: Միակ ժառանգու-  
թիւնը, որ մնաց մեր հօր հարստութիւնից, էին՝  
Մըրօն—մեր ահագին շունը եւ Նազլուն—տա-  
տիս մտերիմ կատուն. դրանք չը բաժանուեցան  
մեզանից:



## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Պարսկաստանի Ատրպատական կոչուած նահանգի ամենահարուստ գաւառներից մէկն է Սալմաստը: Նա բռնում է Ուրմիոյ ծովակի արեւմտեան ափերը, եւ շրջապատած լեռների ալիքաւոր բարձրութեամբ, կազմում է մի գեղեցիկ, բոլորակ հովիտ, որ ոռոգւում է Սոլայ գետով: Այդ գետը Սալմաստայ նեղոսն է, որի բազմաթիւ ճիւղերի վրայ, մինը միւսի մօտ, շարված են մեծ եւ փոքրիկ գիւղեր, որոնց գեղեցիկ երեւոյթը ամենեւին չէ համապատասխանում աղքատ բնակիչների անմխիթար վիճակին:

Սալմաստը որպէս հին ժամանակներում եղել է Հայաստանի բազմամարդ գաւառներից մէկը, եւ այժմ նրա բնակիչների մեծ մասն բաղկացած էին հայերից: Մնացեալ ազգաբնակութիւններին սլատկանում էին թուրքերը, հրէաները, ասորիները եւ քրդերը, — այդ բոլորը միասին վեր առած, հազիւ թէ հայերի կէս մասին էին հաւատարւում:

Ամեն դար, սկսեալ խորին հեթանոսական  
ժամանակներից, թողել էր այդ գաւառում իր  
տիրապետութեան հետքերը: Այստեղ գեռ տես-  
նրվում էին հին Զարեհաւանի հետքերը: Այստեղ  
ահագին մոխրաբլուրներ գեռ յիշեցնում էին  
մոգական ատրուշանները եւ «բարձր» կոչու-  
ղաբառը տարիներով լախած նիւթերը: Այստեղ  
բարձր մինարէթներ իրանց գեղեցիկ մօզայիկնե-  
րով ցոյց էին տալիս արաբացոյ տիրապետու-  
թիւնը եւ յիշատակը այն ազգի, որը ուր եւ  
իշխում էր տարածում էր արհեստ, գիտութիւն  
եւ արիւն: Այստեղ գեռ մնացել էին բեկորները  
այն ամրոցի, ուր մեծ Հուլաւունը պահում էր  
իր գանձերը: Այստեղ դանազան լեռների եւ  
բլուրների բարձրաւանդակի վրայ գեռ մնում էին  
փրատակները մեծամեծ բերդերի, որպէս փշրանք  
աւատական իշխանների խորտակված փառքի,  
որոնք իրանց բռնակալութեան ներքոյ ճնշում  
եւ խեղդում էին ամեն կենդանի զօրութիւն:—  
Իսկ այդ բոլոր հնութիւնների մէջ իմ ուշա-  
դրութիւնը գրաւում էր մէկը. դա Փիրշաւուշ  
լեռան ժայռերից մէկի վրայ քանդակած, պատ-  
մական մի անցքի տխուր նկարագիրն էր: Պա-  
րբոպաձեւ ժայռի հարթած մակերեսոյթի վրայ  
գուրս էին բերված մի քանի ձիաւորներ հնա-  
գարեան հագուստով եւ նոյնպէս նախնական  
զէնքերով: Աէկին գերի էին տանում: Նա թա-  
գաւոր էր: Այ մի արձանագրութիւն չէր ցոյց  
տալիս դրանց ո՞վ եւ ի՞նչ ժամանակի մարդիկ  
լինելը: Միայն հայ ժողովրդի մէջ պահված էր

մի ցաւալի աւանդութիւն. գերին Արշակունեաց վերջին թագաւոր Արտաշէսն էր, որից յետոյ Հայաստանն ընկաւ պարսիկների իշխանութեան ներքոյ եւ կորցրեց իր թագաւորներին: Կարծես, այդ պատկերը, որպէս մշտական նոխատիւնք, իր քարաժայռի բարձրութիւնից յանդիմանում լինէր հայերին, ասելով. «Ահա, ինձ նման միշտ գերի եւ ստրուկ կը մնաք դուք, որովհետեւ ձեր թագաւորին գերութեան մասնեցիք» . . .

Եւ իրաւ, հայ մարդու գերութիւնը եւ ստրկութիւնը իսկոյն նկատուում է այդ երկրում, երբ մարդ փոքր ինչ խորին կերպով ծանօթանում է փողոյրդի կենցաղավարութեան հետ: Երկրի արտաքին կերպարանքը խարուսիկ է, կարող է մինչեւ անգամ սխալանքի մէջ ձգել անփորձ հետազոտողին: Երբ ջերմ, ամառնային օրերում մարդ հեռուից նայում է Սալմաստայ պայծառ արեգակի ճառագայթներով լուսաւորված հովտին, տեսնում է՝ դաշտերը, մշակված աշխատասէր ձեռքով, խոտանում են առատ հունձք. — տեսնում է՝ ցորեանը, գարին, բրինձը, բամբակը եւ ընդեղէնների ամեն տեսակները, իրանց բեղմնաւորութեամբ, ներկայացնում են խիստ գոհացուցիչ առատութիւն. — տեսնում է՝ մրգաբեր այգիները լիացած են պտուղների ամենաաղնիւ տեսակներով. — տեսնում է՝ խոտաւէտ արօտամարգերի վրայ արածում են տաւարների նախիրներ եւ ոչխարների հօտեր, — մի խօսքով, նա տեսնում է, որ բնութիւնը անխնայ առատութեամբ թափել է այստեղ իր հարստութիւնները:

Նա սկսում է մտածել. «Ո՞րքան բախտաւոր են ապրում այստեղ մարդիկ» . . . Իսկ այդ ճոխութիւնները, բնութեան այդ պարզեւնները չեն պատկանում այն բիւրաւոր աշխատող ձեռքերին, որոնք դաշտերի վրայ, արեւի կրակոտ բոցերի մէջ քրտինք են թափում:

Ահա գիւղերում այստեղ եւ այնտեղ բարձրանում են ամրոցներ, որոնք իրանց հսարտ աշտարակներով եւ ատամնաւոր պարխալներով իշխում են շրջակայքի վրայ, նրանց մէջ բնակվում են «աղաները» իրանց ախտերով եւ մոլութիւններով,—ահա նրանցն է պատկանում երկրի բոլոր բեղմնաւորութիւնը, նրանք են շուայում մշակ մարդու աշխատաւոր ձեռքի վաստակը:

Երեխայութեանս ժամանակ, երբ ես որ եւ իցէ անկարգութիւն էի անում, տատս եւ մայրս ամեն մէկը իր առանձին եղանակն ունէր ինձ սաստելու, որ վախենամ եւ հանգիստ կենամ: Տատս ասում էր. «ՍճԼՍ, սճԼՍ, մարդագէլը եկաւ, քեզ կըտամ, կուտի»:—Մայրս ասում էր. «Ձէնդ կտրի, թէ չէ, Ֆէրրաշին կը կանչեմ» . . . Թէ առաջին եւ թէ վերջին սպառնալիքը իմ վրայ միօրինակ ազդեցութիւն էին գործում. ես Ֆէրրաշից նոյնքան էի վախենում, որքան գայլից: Բայց երբ փոքր ինչ մեծացայ, «մարդագայլից» այլ եւս չէի վախենում, որովհետեւ հասկանում էի, թէ մարդը գայլ չի դառնայ, բայց Ֆէրրաշի երկիւղը երբէք դուրս չեկաւ իմ սրտից . . . Ինձ թւում է որ այս բոստիս էլ լսում եմ նրա մտրակի ձայնը: Ինձ թւում է, թէ իմ ականջին զարկում են:

գիւղացու ցաւալի հառաչանքները, եւ ես տեսնում եմ նրան թուլացած, ուշաթափ եղած հարկապահանջի անգուլթ գանահարութիւնից. . .

Քեռուս տունը, ուր տեղափոխվեցանք մենք, մեզ հասած գժրախտութիւնից յետոյ, գտնվում էր Քօհնայ-Շահարում Քօհնայ-Շահար նշանակում է հին քաղաք. այսպէս կոչում էին նրան Սալմաստայ նոր քաղաքից որոշելու համար, որի անունը Ռիլիման էր: Հին քաղաքը կորցրել էր իր անունը: Շատ հաւանական է, որ դա լինէր մեր Զարեհաւանը կամ Զարեւանդը, որի անունով մի ժամանակ կոչվում էր ամբողջ գաւառը:

Այս քաղաքներում բնակվում էին չորս ազգութիւններ, հայ, թուրք, ասորի եւ հրէա. իւրաքանչիւր ազգութիւն գետեղված էր առանձին թաղերում: Հայերը ունէին երկու եկեղեցի, իսկ ասորիները՝ մէկ: Հին-քաղաքն արժանի էր իր կոչմանը, այստեղ, կարծես, մի քանի քաղաքներ շինված էին մինը միւսի վրայ: Նոր շէնք կառուցանելու համար նիւթեր պէտք չէին. քանդում էին գետինը եւ հողի տակից գուրս էին բերում ահագին քանակութեամբ ազիւս, կոփածոյ քարեր, եւ շատ անգամ բացվում էր մի ընդարձակ, ստորերկրեայ բնակարան: Արքան փորձանքներ, որքան յեղափոխութիւններ պէտք է կրած լինէր այդ քաղաքը. որքան ազգեր այնտեղ բնակվել եւ անհետացել էին. իսկ հայը, նրա նախկին բնակիչը, դեռ մնում էր: Արարներից մնացել էր մի լայնատարած գերեզմանատուն միայն, գեղեցիկ զարդարած տասնամարերսով:

Քաղաքի բոլորովին սպառված մի անկիւնումն էր գտնվում քեռուս տունը, մեծ հեղեղատի ափի մօտ: Այդ հեղեղատը գարնան անձրեւների ժամանակ յորդանում էր, եւ բանդելով աւերակները, բերում էր իր հետ զանազան հնութիւններ: Ես շատ ուրախ էի լինում, երբ հեղեղը փոքրանում էր, որովհետեւ մեր դրացի երեխաների հետ գնում էինք գետի ափերի մօտ եւ աւազների միջից գտնում էինք հին դրամներ, կանանց զարդեր, եւ վաճառելով հրէա ոսկերիչներին, փող էինք ստանում:

Հայերի տները թէեւ փոքրիկներ էին, բայց հովանաւորված պարտէզներով եւ ծառերով, գեղեցիկ տեսք ունէին: Բնակարանը, ասում են, խիստ խորին կապ ունի մարդու կեանքի եւ բնաւորութեան հետ: Այս մտքով, հայերի աների ձեւը եւ նրանց ներքին ու արտաքին դիրքը, ոչ միայն մեծ նշանակութիւն ունէին բնակիչների ճաշակի մասին, այլ առաւելապէս արտայայտում էին նրանց յիճակը եւ հասարակական դրութիւնը: Տները շատ սերտ եւ անմիջական կերպով կցած էին մինը միւսի հետ, այնպէս որ, տանիքների վրայով կարելի էր հայոց թաղի մի ծայրից մինչեւ միւսը գնալ: Բոլոր տները ունէին գաղտնի հաղորդակցութիւն: Այդ հաղորդակցութիւնը պահպանվում էր զանազան ծակերի միջոցով, որ բացված էին մի տանից միւսի մէջ: Ծակերը բացված էին աննկատելի տեղերում: Նրբանցից շատերը այնքան նեղ էին, որ մի ձեռք միայն կարելի էր անցկացնել եւ ծառայում էին

աւելի բանաւոր հաղորդակցութեան համար: Երբ պատահում էր մի անսովոր դէպք, մի քանի բուսկէի մէջ թաղի միւս ծայրում արդէն գիտէին: Ամեն մի լուր, ամեն մի խօսք, ծակերի միջոցով, կայծակի արագութեամբ տարածվում էր ամբողջ թաղի մէջ, առանց մի մարդ իր տանից դուրս գալու: Ծակերից շատերը այնքան մեծ էին, որ կարելի էր, մանաւանդ վտանգի ժամանակ, մի տան կայքը թագցնել կամ տեղափոխել միւսի մէջ, կամ հարեւանի մօտ ապաստան գտնել: Թագատի համար իւրաքանչիւր տան մէջ կային ստորերկրեայ մառաններ, որոնց գաղտնի մուտքը, միայն տան տիրոջն էր յայտնի:

Ասացի, հայոց թաղի բոլորովին սպառված ծայրումն էր քեռուս տունը, ուր մենք պատրասարան գտանք մեզ հասած դժբախտութիւնից յետոյ, այսինքն այն օրից յետոյ, երբ հօրս պարտատէրները մեզ արտաքսեցին հայրենական տնակից: Ամենօրեայ երկիւզը, գողերի եւ աւաղակների յարձակումների յաճախ կրկնութիւնը ստիպել էին կանգնել տան շրջապարիսպը, որքան կարելի է, բարձր եւ հաստ պատերով, որոնք անձրեւից եւ խոնաւութիւնից ստացել էին մոյգկանաչ գոյն: Ժամանակի աւերող ձեռքը կիսով չափ մաշել էր շրջապարսպի վերին մասը, բայց նա տակաւին այնքան բարձրութիւն ունէր, որ կարող էր ընդդիմադրել ամենայանդուզն յարձակման: Պատերի քայքայված ձեղքերից բուսել էին մացառներ փշոտ ոստերով եւ մանրիկ տերեւներով, որոնց միջից կանաչ մողէսները շատ

անգամ դուրս էին նայում իրանց նենգաւոր  
աչիկներով: Բայց ես մողէսներից չէի վախենում,  
երբեմն ձեռքով բռնում էի նրանց. ես վախե-  
նում էի միայն օձերից, թէեւ նրանք այնքան  
ընտելացած էին մեզ հետ, որ երբէք չէին կծում:  
Քեռուս տան մէջ այդ օձերի մասին պահւած  
էին խիստ հետաքրքիր աւանդութիւններ. պատ-  
մում էին, թէ նրանք թագաւոր եւ թագուհի  
ունեն, թէ երկուսի գլուխներն էլ զարդարած են  
ոսկի պսակներով, որոնք կրում են իրանց վրայ  
աշխարհի ամենաթանկագին գոհարները: Ասում  
էին թէ իմ մեծ քեռին շատ անգամ տեսել էր  
նրանց, բայց չէր կամեցել խել նրանց պսակ-  
ները, որովհետեւ այդ օձերի հետ մի գիւթական  
կապով կապւած էր նրա տան բախտաւորութիւնը:


Քլխաւոր դուռը ներս էր տանում գէպի  
բաւական ընդարձակ բակը, որ հովանաւորւած  
էր դարեւոր թթենիներով եւ կեռասենիներով:  
Բակի մէկ ճակատում արեւելեան ճաշակով շին-  
ված էին մի քանի մեծ եւ փոքրիկ սենեակներ,  
հնացած, քայքայված, եւ միայն իրանց ծերու-  
թեան մէջ պահպանած հնութեան պատկառանքը:  
Այս տունը շինված էր այն ժամանակ, երբ քե-  
ռուս պապը քաղաքի նշանաւոր եւ հարուստ  
բնակիչներից մէկն էր. հարիւրաւոր տարիներից  
յետոյ նա տակաւին պահպանել էր վաղեմի վայ-  
եչութիւնը: Ծառերի հետ փաթաթած խաղողի  
որթերը համարեա թէ գրկում էին իրանց ծոցի  
մէջ այդ կիսանահապետական բնակարանը, որի  
նմանը անտառներում, կամ լեռների խուլ ձո-

քերի մէջ միայն կարելի էր տեսնել Փողոցից հոսող վտակից բաժանված էր մի առուակ, որ անցնում էր բակի միջով եւ ուղղում էր ոչ միայն պարտէզը, այլ պահպանում էր մի մշտական զովութիւն, որ ազատում էր բնակիչներին ամառնային տոթերից:

Առհասարակ այդ հնացած եւ մաշված տունը իր ընդարձակութեամբ դարձեալ մեծ յարմարութիւն ունէր քեռու հոյակապ ընտանիքի համար, որ կազմված էր բազմաթիւ անդամներից: Մեծ քեռիս, այսինքն մօրս հայրը, դեռ կենդանի էր. նրան բոլորը ~~Գ~~ (հայր) էին կոչում: Նա հինգ որդի ունէր, բոլորը ամուսնացած, բոլորը բազմաթիւ չափահաս եւ անչափահաս զաւակների տէր էին: Մայրս իր եղբայրների միակ քոյրն էր: Առհասարակ մի հատիկ քոյրը միշտ սիրելի է լինում իր եղբայրներին, բայց մօրս վերաբերութեամբ ընդհակառակն էր պատահել: Մայրս այն հազուագիւտ բնաւորութիւններից էր, որին անկարելի էր չը սիրել: Բայց ինչ էր պատճառը, որ նրա եւ իր ազգատոհմի մէջ տիրում էր մի տեսակ խուլ սառնասրտութիւն, մի տեսակ ծածուկ անհամակրութիւն, որը իսկոյն աչքի էր զարկում: Այստեղ մի գաղտնիք կար, որ ինձ համար այն ժամանակ անհասկանալի էր, թէ եւ ես չէի կարող չը նկատել, որ քեռիներս խիստ անտարբերութեամբ ընդունեցին իրանց քրոջ ամուսնի մահուան ցաւալի բօթը. եւ կարծես, ուրախ լինէին, որ Աստուծոյ արգար գատաստանը վերջապէս պատժեց նրան:

Այդ էր պատճառը, որ մեզ պատահած դժբախտութիւնից յետոյ մայրս խիտ դժուարութեամբ յանձն առաւ իր եղբայրներէ մօտ բնակիլ, եւ եթէ անճարութիւնն ու աղքատութիւնը չստիպէր նրան, գուցէ այդ ծանր զիջողութիւնը չէր անի:

Քեռուս տան այն մասը, ուր տեղաւորեցին մեզ, բոլորովին զուրկ էր ծառերից: Այստեղ գտնվում էր ակոռատունը, որի բակի մէջ կար փոքրիկ խրճիթ, բազկացած մի սենեակից եւ նախասենեակից, որ շինված էր ծառաների համար: Եւ որովհետեւ այժմ քեռիս ծառանք չունէր, խրճիթը մնացել էր բոլորովին անբնակ. այնտեղ պահում էին տան կտորատված եւ անպիտանացած կարասիքը: Այդ մթերքներին փոխարինեցինք մենք, որ մեր վիճակով շատ չէինք տարբերվում նրանցից: Այսուամենայնիւ, մենք գոհ մնացինք մեր բախտից, մաքրեցինք խրճիթը իր հին ապականութիւնից, շինեցինք եւ սարքեցինք նրան, թէեւ քայքայված առատազրը եւ խարխուլ պատերը բոլորովին անզօր էին անձրեւի հոտանքի առաջն առնելու, կամ պահպանելու մեզ վատ եղանակից:



Հ Ի Ն Մ Ե Ղ Ք Ը

Աշունը մօտենում էր իր վախճանին:

Այդ առաջին աշունն էր, որին հանդիպում էինք մենք, քեռուս տունը տեղափոխվելուց յետոյ: Գաշտերը ստանում էին տըխուր եւ գունաթափ կերպարանք. կանաչ մարգագետինները, օրըստօրէ դեղնելով, մեռելային դէմք էին կրում: Անխղճաբար փչում էր սառը քամին եւ թափում էր մերկ ծառերի մնացած տերեւները: Երկնքի խոժոռ եւ մոխրագոյն դէմքի վրայ գլորվում էին մթին ամպերի ահագին բեկորներ եւ արգելում էին արեւի թոյլ ճառագայթները: Խիստ տխուր եղանակով լսելի էր լինում կռուներին խուլ կռնչիւնը, որոնք բարձր եթերքի միջով, եռանկիւնի շարքերով, գիմում էին դէպի օտար աշխարհ: Ծիծեռնակներ ամենեւին չէին երեւում, նրանք վաղուց էին գալթել: Միայն մրջիւնները խիստ եռանդով կրում էին դէպի

իրանց ամբարները ընդեղէնների զանազան տեսակներ: Ամեն արարած պատրաստվում էր ընդունել ձմեռը—իր անախորժ հիւրը:

Այս օրերը սակաւ հոգսեր չը պատճառեցին մօրս: Ձմեռը, աղբատների թշնամին, մեզ պատժելու համար էր գալիս:

Մայրս իր հօր տունը տեղափոխուելուց մի քանի օրից յետոյ հրաժարվեցաւ կերակուրները ընդունել նրանց սեղանից եւ ապրում էր իր անկախ աշխատանքով: Նա շուտով հաշտվեցաւ իր նոր վիճակի հետ, չը կամենալով ծանրութիւն պատճառել իր եղբայրներին, որոնց շատ հաճելի չէր իրանց գերդաստանի վրայ ընդունած նոր բեռը: Մայրս աղբատութիւն շատ էր կրած, բայց երբէք իր տան չբաւորութիւնը օտարներին յայտնած չէր, թէ ինչպէս է ապրում, կամ ինչ միջոցներով է պահում իր երեխաներին: Նա բաւական հպարտ կին էր: Նա ամեն յոյս դրած էր իր աշխատող ձեռքերի եւ Աստուծոյ վրայ: Բայց Աստուած շատ անգամ թոյլ է տալիս, որ դժբախտութիւնը մինչեւ վերջին ծայր տանջէ մարդուն: Այդ անում է նա, որպէս ասում են, արարածների համբերութիւնը փորձելու համար: Մօրս համբերութիւնը երկաթի ամրութիւն ունէր: Բայց երկաթն էլ փշրվում է, երկաթն էլ խորտակվում է . . .

Ես երբէք չեմ կարող մոռանալ մօրս արտասուալի աչքերը, երբ առաջին անգամ, ինձ եւ երկու քոյրերիս իր հետ առնելով, գնացինք դաշտը, հնձած արտերից թափված հասկերը

Հաւաքելու: Դա մտաբանութեան առաջին քայլն է, որին ենթարկում է պատուաւոր աղքատը: Մենք մի ժամանակ արտեր ունէինք, հունձք ունէինք, եւ մեր հունձքը հաւաքելուց յետոյ խուրձերից ընկած հասկերը թողնում էինք Աստուծոյ աղքատներին եւ երկնքի թռչուններին: Բողոքը կորցրինք, եւ այժմ ստիպված էինք ուրիշի արտերից հասկառալ\*) անել . . . Արտերի կարճ խուզած տափարակի վրայ, մխաթների նման վեր ցցված ձողերի սուր ծայրերը ծակծկում էին խմ եւ քոյրերիս բոլորովին մերկ ոտները: Բայց մենք ցաւ չէինք զգում: Մենք շատ ուրախ էինք եւ խիստ եռանդով կպանք գործին: Մարիամը եւ Մագթաղը իրանց մանրիկ ձեռներով հաւաքում էին ընկած հասկերը եւ ինձ վրայ ծիծաղում էին, որովհետեւ ես ծոյլ էի նրանք փունջեր էին կապում հասկերից, եւ երկու քոյրեր մրցութիւն էին անում, թէ որը շատ կը հաւաքէ: Խեղճ երեխաներ, կարծես, զգում էին, թէ ձմեռը քաղցած կը մնան, եթէ այժմ պաշար չը պատրաստեն: Մայրս նայում էր նրանց վրայ եւ լաց էր լինում . . .

Երեկոյեան ժամուն մեզանից ամեն մէկը իր հաւաքածը կապեց շալակին, գարձանք տուն:

\*) Մոխէս օրէնքով հրամայած էր արտերի եզերքը չը հնձել եւ թողնել Աստուծոյ աղքատներին: Հայերի մէջ այդ սովորութիւնը նուիրագործուած է ժողովրդական աւանդութեամբ: Դա կոչվում է հաւաքալ, Իսկ հաւաքալ, այսինքն այգիների ձիւերի հաւաքումը, նոյնպէս աղքատներին է պատկանում:

Մարիամը եւ Մագթաղը իրանց բեռներով մի առանձին հսկարտութեամբ հանդիպեցին քեռու երեխաներին, որպէս անխոնջ մշակներ, որ դառնում էին դաշտից:

Այսպէս ամեն օր, վաղ-առաւօտեան գնում էինք դաշտը հասնող անելու եւ երեկոյեան վերադառնում էինք: Մեր խրճիթի դռան առջեւ կազմվեցաւ մի փոքրիկ դէղ հաւաքած հասկերից: Այնուհետեւ սկսեցինք մեր կայք կասել: Բայց նա այնքան մեծ չէր, որ հարկաւոր լինէր կասել ջուր: Մայրս սկսեց իր ձեռքով մանրել հասկերը մի հաստ փայտով, որը այնքան ծանր էր, որ ես դժուարութեամբ կարողանում էի բարձրացնել: Երբ յարդը քամուն տուեցինք, մաքուր ցորեանը հաւաքեցինք թաղարների մէջ: Զմեռվայ մեր հացի պաշարը արդէն պատրաստ էր:

Գեռ մնում էր ամենահարկաւորը—վառելիքը: Մեր խարխուլ բնակարանի համար պէտք էր բաւական տարութիւն, մանաւանդ, որ ձմեռը այս կողմերում խիստ սաստիկ է լինում: Մայրս այնքան զբաղուած էր, որ ամենեւին ժամանակ չունէր հոգ տանելու վառելիքի մասին. այդ պատճառով, այդ հոգսը մնաց իմ եւ քոյրերիս վրայ: Մայրս իր ձեռքով հլուսեց երեք փոքրիկ կթոցներ, մէկը ինձ համար, երկուսը Մարիամի եւ Մագթաղի համար: Տեսնելու էր, թէ որպիսի ուրախութեամբ մենք այդ կթոցներն առնում էինք մեր ուսերի վրայ եւ ամեն օր գրնում էինք դաշտը. այնտեղ հաւաքում էինք քաղորներ, ծառերից թափված տերեւներ, փուշ եւ

մացառներ, եւ բերում էինք ձմեռը մեր խրճիթը տարացնելու համար: Ա՛խ, որքան լաւ բան է եղել աշխատութիւնը: Ես այնուհետեւ միշտ յարգանքով էի նայում այն բակորների կոյտի վրայ, որ ինքս էի հաւարել, եւ բարկանում էի, թէ ինչու խնայողութեամբ չէին գործ անում, թէ եւ մօրս խնայողութիւնը հասնում էր ժլատութեան:

Ձմեռվայ մեր ապրուստը բաւական ապահովված կը լինէր, եթէ մի մեծ դժուարութիւն դեռ մնացած չը լինէր: Մայրս պէտք է վճարէր հարկերի վերջին վեցամսեակը: Թէեւ մենք այժմ ոչ տուն ունէինք եւ ոչ տեղ, ոչ հող ունէինք եւ ոչ ցանք, բայց հարկը դարձեալ պահանջում էին: Պահանջում էին գլխաւորապէս հօրս գըլխահարկը: Մայրս ցոյց էր տալիս այն նամակը, որ ստացել էր հօրս մահուան մատին, եւ ասում էր, որ մեռելի համար հարկ չեն վճարում: Բայց նրան չէին լսում, պատասխանում էին, թէ դուք խորամանկութեամբ հնարել էք այդ նամակը, որ հարկ չը տաք, թէ նա դեռ կենդանի է: Մայրս աղաչում էր, որ փոքր ինչ ժամանակ տան, մինչեւ կարողանայ փող վաստակել եւ նրանց պահանջը լրացնել: Թէեւ ընդունվեցաւ խընդիրը, բայց շատ թանգ նստեց այն մի ամիս ժամանակը, որ շնորհեցին մեզ, որովհետեւ առանց կաշառքի չէր կարելի գրաւել հարկապահանջների բարերարութիւնը: Այնուհետեւ մայրս գիշեր ու ցերեկ հանգստութիւն չունէր. ասեղը, ջահրէն եւ թէչին անդադար գործում էին:

Բայց ինչ կարող էր լինել մօրս աշխա-

տանքը, մանաւանդ մի այնպիսի երկրում, ուր տիրում էր ընդհանուր ազգատութիւն, ուր ամեն մարդ ինքն էր կատարում իր տան գործերը: Նա ընդունում էր երբեմն ապսպարանքներ հրէա մանրավաճառներից, որոնք մի շապիկ կամ մի արխալուզ կարելու համար վճարում էին խիստ չնչին վարձատրութիւն: Այդ նրա ցերեկվայ պարապմունքն էր: Իսկ գիշերների մեծ մասը անց էր կացնում նա իր ջահրէտի, կամ բամբակից թել էր պատրաստում եւ մանածը վաճառում էր ջուհակներին, եւ կամ թէշիտի բուրթ էր մանում շալ գործողների համար: Ծրագլուսի ծախսը դուրս գալուց յետոյ, մնում էր այնքան վաստակ, որ հազիւ բաւական էր լինում շարսթը մի անգամ, այսինքն տօն օրերում, միս գնելու եւ տաք կերակուր ուտելու: Մնացած օրերը ապրում էինք համարեա ցամաք հացով:

Մեզ շնորհված մի ամիս ժամանակն անցաւ ստուերի պէտ: Մայրս չը կարողացաւ մի ամսում պատրաստել պահանջված գումարը: Հարկահանները ծախեցին մեր կայքից ամեն բան, որ կարող էր փոքր ի շատէ գին բերել, եւ նրանց թւում վաճառվեցաւ ցորենի մթերքը, որ հաւաքված էր իմ: Մարիամի եւ Մագթաղի ձեռքով: Երեւակայեցէք մեր արտասուքը եւ մեր դրութիւնը այնուհետեւ: Աղքատութիւնը հասցրեց իր վերջին հարուածը, եւ շատ զգալի էր . . .

Այդ բոլորը կատարվեցաւ իմ մեծ քեռու եւ իմ մօր հինգ եղբայրների աչքի առջեւ: Բայց նրանք այնքան աղքատ չէին, որ չը կարողանա-

յին օգնել մեզ, որ չը կարողանային ազատել  
մեզ մեր անտանելի թշուառութիւնից:

Ես յետոյ, շատ յետոյ, հասկացայ այն սառ-  
նասրտութեան պատճառը, որ տիրում էր իմ մօր  
և նրա ազգատոհմի մէջ և որը արդէն ատե-  
լութեան կերպարանք էր ստացել: Մայրս որպէս  
վերելում յիշեցի, իր եղբայրների միակ քոյրն էր,  
նա իր աղջիկ ժամանակը շատ սիրված էր թէ  
եղբայրներից և թէ հօրից: Ամեն կողմից խնդ-  
րում էին մօրս ձեռքը, ոչ այն պատճառով միայն,  
որ նա շատ գեղեցիկ էր, այլ ամեն երիտասարդ-  
մի առանձին թախտաւորութիւն էր համարում  
լինել փեսայ այն ընտանիքի, որ ամբողջ գաւա-  
ռի մէջ վայելում էր մեծ յարգանք: Փեսաների  
թիւը այնքան շատ էր, որ չը գիտէին, թէ որին  
պէտք էր ընտրել, կամ որին պէտք էր մերժել:  
Վերջապէս ընտրեցին Մահլամ գիւղի մէլիքի որ-  
դուն, ի հարկէ, առանց հարցնելու իմ մօր կամքը  
և առանց ստանալու նրա հաճութիւնը: Երբ  
կատարվում էր հարսանիքի հանդէսը, հէնց այն  
գիշերը, երբ նորահարսին և փեսային պէտք է  
եկեղեցին տանէին, յանկարծ գտան նորահարսին  
անյայտացած հօր տնից: Խայտառակութիւնը չափ  
և սահման չունէր: Չար լիզուները սկսեցին զա-  
նազան կերպով բացատրել նրա պատճառը. ոմանք  
ասում էին՝ թուրքերը գողացել են նորահարսին:  
ոմանք ասում էին՝ իրան սպանել է, ոմանք ասում  
էին՝ որ նա ծածուկ սիրում էր մի ուրիշին և  
նրա հետ փախել է: Այդ կարծիքներից արդեւոր  
որն էր ուղիղ, — այն ժամանակ դժուար էր ստու-

գել, իսկ ինչ որ ճշմարիտ էր, այն էր, որ իմ մայրը կորաւ եւ կորաւ:

Անցան տարիներ, իմ մօր մասին տեղեկութիւն չկար: Նրա մայրը կսկիծից մեռաւ. նա չը կարողացաւ տանել իր աղջկայ ցաւը: Միւսները բոլորովին մոռացան նրան:

Յանկարծ յայտնվեցաւ նա իր ամուսնի եւ երեք զաւակների հետ: Այն ժամանակ միայն ստուգվեցաւ, որ վերջին ենթադրութիւնը ուղիղ էր. արդարեւ, մայրս փախել էր իր սիրած տղամարդի հետ: Հասարակական կարծիքը սկսեց դատապարտել նրան: Նրան շներեցին հարազատ եղբայրները եւ մինչեւ անգամ հայրը, չնայելով, որ նա արդէն ամուսին էր եւ երեք զաւակներէ մայր: Բայց ինչու էր մեղաւոր հին յանցաւորը, ինչու էին մեղաւոր նրա զաւակները. մի՞թէ ծնողների յանցանքը տարածվում է որդիներէ վրայ . . .

Իմ քեռիները զայրացան աւելի այն պատճառով, երբ տեսան, որ իրանց քոյրը ամուսնացել է մի տղամարդի հետ, որին ատում էին, որի ազգատոհմի հետ ժառանգական թշնամութիւն ունէին, եւ որ աւելի գլխաւորն է՝—աղքատ էր: Այսպիսի ամուսնութիւնները մոռանալ են տալիս հին ռիսկալութիւնը եւ բառնում են հին վրէժխնդրութիւնը երկու տոհմերի միջից: Բայց մայրս չը կարողացաւ քաւել այդ մեղքը. նրա ամուսնութիւնը չը կարողացաւ կապել թշնամի տոհմերին միմեանց հետ: Մօրս հայրը անիծեց նրան եւ այնուհետեւ չը հա-

մարձակվեցաւ ոտք կոխել ծնողական տան շէմ-  
քի վրայ, մինչեւ այն օրը, որ հօրս մահը մի փոքր  
մեղմացրեց նրանց խտասրտութիւնը:

Այժմ պիտի խօսեմ այդ ցաւալի մահուան  
մասին: Հայրս դիմելով դէպի պանդխտութիւն,  
նպատակ ունէր Վ. Պօլիս գնալ, ուր այն ժամա-  
նակ լինում էին հայ գաղթականները: Նա պէտք  
է անցկենար Էրզրոմից: Այտեղ, մի օր փողո-  
ցից անցկենալու ժամանակ, յանկարծ մի թուրք  
յարձակվում է նրա վրայ, եւ իր դաշոյնի մի հա-  
րուածով կտրում է նրա պարանոցը, եւ գլուխը  
մի կողմ գլորելով, ուրախութեամբ գոչում է.  
«ես տարայ . . . ես տարայ» . . . Թուրքերի բազմու-  
թիւնը հաւաքվում է նրա շուրջը, հետաքրքրու-  
թեամբ հարցնում են, թէ ի՞նչը տարաւ:— «Ըն-  
կերիս հետ վիճում էինք, պատասխանում է եղեւ-  
նագործը,—նա ասում էր, թէ իմ դաշոյնը ա-  
ւելի սուր է, իսկ ես ասում էի, թէ իմն աւելի  
սուր: Վճռեցինք փորձել այդ գաւուրի պարա-  
նոցի վրայ, գրազ գալով, թէ մեղանից ով որ  
մի հարուածով կը կտրէ պարանոցը, միւսը պէտք  
է պարտաւորվի իր հաշուով հիւրասիրել նրան  
մի ֆինջան քաղցր զահվէտով եւ նարգիլէյով:  
Այժմ ես տարայ»: Բազմութիւնը գովաբանում  
է սրիկայի քաջութիւնը, ասելով «մաշալլա . . .  
մաշալլա» . . . եւ հեռանում է: Իսկ սրիկան, իր  
ընկերի ձեռքից բռնելով, քարշ է տալիս դէպի  
զահվէտուն, որ ստանայ խոստացած մրցանակը:  
Մի ամբողջ օր հօրս դիակը մնում է հրապա-  
րակի վրայ: Մուսուլմանները ծաղրելով են անց-

Նու՛մ նրա մօտից, թէ՛ ի՛րքան թոյլ է եղել շա-  
ւուրի՜ս պարանոցը, որ մի հարուածից կտրուել է  
իսկ ոմանք զարմանում էին սրիկայի բազկի զօ-  
րութեան եւ նրա գաշոյնի սրութեան վրայ: Բայց  
տեղային հայերը, երկիւղից չէին համարձակվել  
ցերեկով մօտենալ նրան, եւ միայն գիշերով վեր  
էին առել դիակը ու թաղել:

Այդ սարսափելի եղեռնագործութեան լուրը  
խիտ սառնասրտութեամբ ընդունվեցաւ մեր կող-  
մերում, որպէս թէ, սոլորական անցքերի կար-  
գից գուրս մի բան չը լինէր: Մեր թշնամիները  
ուրախացան, իսկ մեր բարեկամները աւելորդ  
համարեցին տրտմել: Աւելի հասկացող մարդիկ  
այսպէս էին բացատրում, թէ Աստուած նրա ճա-  
կատին այնպէս էր գրած, սէտք է այս տեսակ  
մահով վախճանվէր: Իսկ իմ քեռիները ասում  
էին, թէ Աստուած պատժեց նրան, որովհետեւ  
նա գողացել էր նրանց քրոջը հօր տանից, եւ  
մի այսպիսի մարդ չէր կարող բախտաւոր լինել:  
Մի սիրող սիրտ միայն խորին կերպով խոցված  
էր, — դա իմ մօր սիրտն էր: Այդ ողորմելին  
մինչեւ մահ չը կարողացաւ մոռանալ թշուառ-  
ամուսնի կսկիծը: Ես եւ իմ քոյրերս ոչինչ չէինք  
հասկանում. մենք միայն անգիտակցաբար լաց  
էինք լինում, երբ տեսնում էինք, որ մեր մայրը  
լաց էր լինում: Բայց երբ ես մեծացայ, այն ժա-  
մանակ միայն հասկացայ բոլորը, եւ դառն վրէժ-  
խնդրութիւնը, իմ հասակի հետ, սկսեց փոքր  
առ փոքր աճել . . .

Դրանից աւել այլ եւս ի՛նչ կարող էր լինել:

որ ազգէր որդու սրտի վրայ, որ զուրկ չէր զգացմունքից, որ սկսել էր հասկանալ, թէ ինչ բան է բարբարոսութիւնը: Իմ հօր պարանոցի վրայ կատարուել էր մի սոսկալի փորձ, որը եթէ գործ դրված լինէր մի հաւի, մի այծի եւ մինչեւ անգամ մի շան պարանոցի վրայ, անտարակոյս, անպատիժ չէր մնալու չարագործը: Բայց հայ մարդը - գաւուրը - աւելի ստոր էր այդ անասուններից: Նա տէր չունէր, նա գին չունէր. նրա հետ կարելի էր անել ամեն բան եւ անպատիժ մնալ . . .

Իմ քեռիները արհեստով զինագործ էին. այդ արհեստը ժառանգաբար անցել էր նրանց տոհմի մէջ, եւ հարիւրաւոր տարիների ընթացքում զարգացել եւ բաւական կատարելագործւել էր: Պարսկաստանում, ինչպէս եւ Տաճկաստանում, առհասարակ բոլոր զինագործները հայեր էին. նրանք զէնք էին պատրաստում իրանց թշնամիների համար, որոնք, թէեւ շինելը չէին իմանում, բայց գործ ածելու մէջ շատ հմուտ էին: Ես միշտ մի առանձին բարկութեամբ էի մտածում այն ազէտալի անցրի մասին, թէ անպատճառ մի հայ արհեստաւորի ձեռքով պէտք է շինված լինէին այն դաշոյնները, որոնցմով փորձ փորձեցին իմ հօր պարանոցի վրայ:

Իմ քեռիները մեր գաւառի նշանաւոր զինագործներն էին, այդ պատճառով նրանց արհեստանոցը ամբողջ տարի միշտ գործ եւ աշխատութիւն ունէր: Արհեստանոցը զետեղված էր տան գլխաւոր մուտքի գաւթում եւ բաժանվում

էր կանանոցից առանձին բակով: Այստեղ միշտ կարելի էր տեսնել մի խառնիճազանջ բազմութիւն, բաշկացած պարսիկներից, թուրքերից եւ քրդերից, որոնք բերել էին իրանց զէնքերը շինել տալու: Հետեւ կամ օտար երկրներից եկողները այնտեղ մնում էին օրերով եւ շաբաթներով, մինչեւ կը պատրաստուէին նրանց զէնքերը: Այս վերջիններից շատերը կերակրւում էին քեռիներիս սեղանից եւ մինչեւ անգամ փող չէին վճարում նրանց աշխատութեան համար: Ես փոքր ժամանակս չէի կարողանում հասկանալ, թէ ինչ նշանակութիւն ունէր այդ նահապետական հիւրասիրութիւնը՝ համ ձրի աշխատել, համ կերակրել, համ փող չստանալ: Յետոյ հասկացայ, որ այդ հիւրասիրութիւնը ցոյց էին տալիս ոչ բոլորին, այլ նշանաւոր անձնաւորութիւններին միայն: Խաների, բէկերի, սէիդների, շէյխերի եւ զանազան քորդ ցեղապետների համար աշխատում էին ձրի: Գրանք մահճակական ժողովրդի առաջնորդներն էին, գրանց պէտք էր քաղաքավարի կերպով կաշառել, գրանց բարեսրտութիւնը պէտք էր գրաւել, որպէս զի կարելի լինէր գրանց շնորհիւ հասարակ մահկանացուներից վարձատրութիւն ստանալ: Հակառակ դէպքում, անհնար էր գործել, առաջնորդները կարող էին հրամայել, որ բոլորովին ձրի աշխատեցնեն արհեստաւորներին կամ զանազան շառեր կը սարքէին: Իսկ այժմ ոչ մի թուրք, ոչ մի պարսիկ, եւ ոչ մի քորդ չէր համարձակւում իր վճարը չը հատուցանել, որովհետեւ դի-


տէր, որ պետերը յարգում են, պաշտպանում են  
վարպետ Բարային, այսպէս էր իմ մեծ քեռու  
անունը:

Կար եւ մի ուրիշ բան: Մեր գաւառում  
քնակիւղ զանազան մահմեդական ցեղերը, մա-  
նաւանդ քրդերը, անհաստատաբնակ ժողովուրդ  
էին. գարնան սկզբից սկսած մինչեւ աշնան վերջը  
իրանց հօտերով եւ վրաններով թափառում էին  
լեռնային ամառանոցներում, եւ ձմեռը միայն  
վերադառնում էին իրանց տները: Թափառում-  
ների ժամանակ ամեն մի խումբ պէտք է իր հետ  
զինագործ ունենար. որովհետեւ զէնքը նրանց  
ամենահարկաւոր գործիքն էր: Եւ այս մտքով  
ման էին ածում իրանց հետ զինագործի շար-  
ժական արհեստանոցներ: Իմ մեծ քեռու հինգ  
որդիներից չորսը մի-մի քուրդ ցեղի վարպետներ  
էին եւ իրանց աշակերտներով շրջում էին նրանց  
հետ: Նրանք վերադառնում էին տուն ձմեռը,  
բերելով իրանց հետ բեռներով խղ, պանիր, բուրթ  
եւ մեծ քանակութեամբ ոչխարներ, կովեր, եզ-  
ներ եւ այլն: Քրդերը վճարում էին այն միջերբ-  
ներով, որ ստանում էին իրանց անասուններից:

Միւս որդիների բացակայութեան ժամանակ  
մեծ քեռուս մօտ մնում էր միայն կրտսեր որ-  
դին: Ես, կարծես, հէնց այս բոպէիս տեսնում  
եմ իմ աչքի առջեւ ծերունի արհեստաւորին,  
նստած զնդանի առջեւ, կաշեայ գոգնոցով, ան-  
դադար ուղղում է քթի վրայ դրած ահագին ակ-  
նոցները, եւ երկաթի կտորը ունելիքով բռնած,  
կամ խառտում է, կամ յղկում է եւ կամ փո-

բրիկ մութնով ծեծում է: Նրա շուրջը լսելի են լինում ահագին կռանների դաշնակաւոր ձայները, փութերը գուռում են, շեկացրած երկաթը դուրս են բերում բուրայի միջից, գնում են զնդանի վրայ եւ մեծ-մեծ կռաններով կռում են, — իւրաքանչիւր հարուածի հետ դուրս է ցայտում կայծերի մի ամբողջ հեղեղ: Չը գիտեմ, թէ ինչու այդ կայծերը իմ ամենափոքր հասակից միշտ մի առանձին կախարդական ազդեցութիւն ունէին իմ վրայ. ես տեսնում էի նրանց մէջ մի անբացատրելի խորհուրդ, մի գաղանխք, որը հասկանալ չէի կարող: Երկաթի մէջ թագնւած կայծերը դուրս էին ցայտում այն ժամանակ միայն, երբ սառն երկաթը սաստիկ ջերմացնում էին, եւ երբ սկսում էին ծեծել, հարուածել նրան: Երկաթի հանգիստ եւ խաղաղ դրութեան ժամանակ կայծերը, կարծես, քնած էին լինում: Հէնց որ տաքացնում էին երկաթը, հէնց որ զարկում էր առաջին կռանը, իսկոյն շանթերի կոտորակների նման նրանք դուրս էին ցայտում եւ սփռւում էին դէպի ամեն կողմեր, . . . Աւրիշ երեխաներ կարող էին վախենալ, բայց ես միշտ մի առանձին զուարճութեամբ էի նայում այդ հրեղէն տարափի վրայ: Ես մինչեւ անգամ սիրում էի մրրիկը, երբ երկինքը սարսափելի կերպով որոտում էր, երբ օդի մէջ տիրում էր մի սոսկալի ալեկոծութիւն եւ երբ կայծակը դուրս էր շողում մթին ամպերի միջից: Ենձ երեւում էր, թէ այնտեղ, երկնքի բարձրութեան մէջ, կատարւում է մի սաստիկ պատերազմ, հսկաները

ահագին կռաններով փշրում էին ամպերը, ես  
լսում էի նրանց հարուածների ձայնը եւ տես-  
նում էի, թէ որպէս կայծերը հրեղէն օձերի նման  
գուրս էին ցայտում ամպերի միջից: Ի՞նչու օդի  
խաղաղ ժամանակը չէին յայտնւում նրանք,  
բայց երբ սկսւում էր փոթորիկը, երբ սկսւում  
էր տարերքի միմեանց հետ ընդհարումը, մի-  
մեանց հետ զարկիւելը, — այն ժամանակ միայն  
յայտնւում էին երկնքի կայծերը: Ինձ թւում էր,  
թէ այնտեղ կատարւում էր մի եւ նոյնը, ինչ որ  
կատարւում էր իմ քեռու գարբնոցի մէջ . . .



## Ո Ր Ս Ո Ր Դ Ը

Անցան մի քանի ամիսներ այն օրից, երբ հարկապահանջները ծախեցին մեր տան կայքը, —անցան մի քանի դառն եւ մահաբեր ամիսներ...

Մեր շուրջը տիրում էր անդէն ձմեռ, որ սառն ձեռքով խլեց գաշտերի եւ լեռների բոլոր գեղեցկութիւնները: Յուրտը օրըստօրէ սաստկանում էր կէ մոյգ-մոխրագոյն երկնքի երեսը աւելի եւ աւելի խոժոռ կերպոյրանք էր ստանում: Արեգակը, կարծես, խռովել էր երկրից եւ չէր ուզում իր գէմքը ցոյց տալ: Աերջապէս եկաւ ձիւնը եւ թանձր պատանը տարածեց երկրի վրայ:

Մութ փոթորկային գիշեր էր: Գրտում քամին կատաղի կերպով մանչում էր եւ նորեկ ձիւնի փխրուն տարափը ահագին քանակութեամբ տարուբերում էր մի տեղից միւս տեղ: Մեր խորճիթը գողգողում էր սարսափելի մրրիկից: Մտածում էինք, ահա Խո-ջանը հիմքից կը խլէ նրան, եւ խառնելով ձնային լեռների հետ, կը տանէ հեռու եւ հեռու, եւ կը փշրէ գաշտերի մէջ:

Մայրս նստած էր իւղային ճրագի մօտ, կարում էր մի բան: Նա այնքան խորին կերպով ընկղմված էր իր մտածութիւնների մէջ, որ ամենեւին չէր զգում, թէ ինչ էր կատարվում դրսումը: Մարիամը եւ Մագթաղը երկար լաց եղան, որ մի բան ուտեն, եւ երբ ոչինչ չըգտան, այնպէս քաղցած քնեցին: Նս նստած էի վառարանի մօտ եւ շուտ-շուտ դնում էի նրա մէջ ցամաք տերեւներ եւ չոր մացառներ, որ քոյրերիս հետ հաւաքել էինք այգիներից: Նրանք յանկարծ բռնկում էին, բոցավառվում էին եւ քանի բոպէից յետոյ կրկին հանգչում, մոխիր էին գառնում: Այդ խաղը պատճառում էր ինձ աւելի զուարճութիւն, քան խրճիթի մէջ որ եւ իցէ տաքութիւն:

Դուռը սաստիկ զարկեցին: Մայրս չը լսեցես գնացի բաց արի: Ներս վաղեց սպիտակ գնտակի նման մի բան. երբ անցաւ շէմքից, կատուի պէս թափ տուեց մարմինը եւ ձիւնը բամբակի գլուջների նման թափվեց ցած:

— Տօ, Մարօ, գետինը մտնես, որտեղից եկար, հարցրի ես:

Փոքրիկ աղջիկը ոչինչ չը պատասխանեց եւ իմ վրայ ուշադրութիւն անգամ չը դարձրեց, միայն գցելով մօրս մօտ թաշկինակի մէջ կապած մի բան, վաղեց գէպի վառարանը եւ սկսեց իր լրջացած ձեռքերը տաքացնել արդէն մտրած կրակով: Երբ նկատեց, որ ջերմութիւն չը կայ, գնաց մօրս մօտ, եւ գրկելով նրա պարանոցը, կպաւկուրծ քին:

— Հայրս ուղարկեց, ասաց նա, ցոյց տալով  
կապոցը:

Յետոյ դարձաւ դէպի ինձ, կարծես, նա չէր  
կարող համբերել, որ իմ կոշտ հարցմունքը թո-  
ղեց առանց պատասխանի.

— Ես քեզ նման պառաւ տատիկ չեմ, որ  
կրակի մօտը նստեմ, ու անից դուրս չը գամ:

Մօրս տխուր դէմքի վրայ երեւաց մի ան-  
սովոր ժպիտ, նա դրեց Մարօի սառած ձեռքե-  
րը իր ծոցի մէջ, եւ գրկելով նրան, սկսեց տա-  
քացնել: Նրա լեզուն բացվեցաւ:

— Հարսի, ասաց նա մօրս մի առանձին ուրա-  
խութեամբ, — սյնքան ձիւն է եկել, սյնքան ձիւն  
է եկել, ուղիղ մի արշին, — տես սյնքան (նա  
ձեռքով չափեց իր ոտքից մինչեւ գլուխը): —  
Փարհատ, դարձաւ նա դէպի ինձ, — առաւօտեան  
ձնագնդի կը խաղանք, այնպէս չէ: — Ա՞ր է Մա-  
րիամը, խօսքը փոխեց նա, — թո՛ղ լուսանայ, ես  
նրա աչքը կը հանեմ . . . Մագթալին ձիւնով չեմ  
խփի, նա լաւ աղջիկ է: Բայց այդ սատկած Մա-  
րիամը, բերնումը ինչ որ գալիս է, դուրս է տա-  
լիս . . . Թո՛ղ լուսանայ . . .

— Ես ինքս կը ծեծեմ Մարիամին, կը պատ-  
ուիրեմ, որ քեզ վատ բան չասէ, հանգստա-  
ցնում էր նրան մայրս:

— Լեզուն կտրէ, որ սուս կենայ:

— Կը կտրեմ. . . պատասխանեց մայրս ժպտալով:  
Մարօն տեսնելով, որ պատիժը աւելի սաս-  
տիկ պէտք է լինէր, քան այն վիրաւորանքը, որ  
Մարիամը հասցրել էր նրան, յետ առեց իր խօսքը:

— Զէ, մի կտրէ, ասա, որ ինձ վատ բան չասի, թէ չէ, ծամերը մէկ մէկ կը փետեմ . . .

— Մայրս սեղմեց նրան իր կուրծքին եւ համբուրեց:

— Հարսի, առաջ տարաւ շատախօս Մարօն, — ի՞նչ լաւ է ձեռք . . . վազում ես, վազում, չես կըշտանում . . . ընկնում ես, այնքան փախուկ է, որ կողքդ չէ ցաւում . . . — Հարսի, երբ կը սառչի մեր լիճը:

Մարօի վերջին հարցմունքը մեր տան մօտ գտնված փոքրիկ լճակի մասին էր, որը ձմեռը սառչելու, մեծ զուարճութիւն էր պատճառում խաղասէր երեխաներին: Մայրս այդ մասին ոչինչ չը պատասխանեց, միայն հարցրուց, արդեօք չը վախեցան. նա, որ այնպիսի մթին եւ վատ եղանակում մեր տունը եկաւ:

— Ինչից պիտի վախենամ, ասաց նա մի առանձին հպարտութեամբ, — գայլ չը կայ, սատանայ չը կայ, բոլորը ցրտից փախել, մտել են իրանց ծակերը: Ես իս Մարիամը չեմ, որ վախենամ: — Ա՛հ, սատկած, հիմա կը քնեն: Տես, ի՞նչ պէս քնել է, մտիկ տուր, Փարհատ, մտիկ տուր, հարսի . . .

Վերջին խօսքերի միջոցին Մարօն այնպիսի մի հեգնական ծամածռութիւն գործեց իր սեւուկ դէմքի վրայ, որ չէր կարելի առանց ծիծաղելու նրա երեսին նայել: Բայց յանկարծ նրա մեծ եւ գեղեցիկ աչքերը վառվեցան, նա: դուրս թռաւ մօրս գրկից եւ վազեց մահճի մօտ, ուր քնած էին քոյրերս: Նա խոնարհվեցաւ, համբուրեց Մագ-

Թագի երեսը, բայց Մարիամի մազերից այնպէս սաստիկ ձիգ տուաւ, որ խեղճ աղջիկը ծւաց, սարսափելով քնած տեղից վեր թռաւ, եւ տեսնելով իր ոխերիմը կշտին նստած, գոչեց վրդուովիւմ ձայնով.

— Տօ, սեւ սատանայ, այստեղ ի՞նչ ես շինում:

Դեռ քնաթաթախ Մարիամը ջանք արեց, որ նրան բռնէ, վրէժը առնէ, բայց վայրենի Մարօի ճարպիկ մատները պինդ սեղմվեցան նրա կոկորդին եւ շնչասպառ աղջիկը գլորվեցաւ բարձի վրայ: Ես մօտ վազեցի, որ ազատեմ քրոջս: Նոյն միջոցին Մարօն կատուի արագութեամբ դուրս թռաւ, եւ աներեւութացաւ գիշերային խաւարի մէջ: Մայրս չը գիտէր՝ ծիծաղել, թէ բարկանալ. նա ասաց ինձ, որ գնամ եւ այն «գեւի ծնունդին» հասցնեմ իրանց տունը, չիցէ թէ ճանապարհին փորձանքի հանգիստի: Ես դուրս վազեցի, նա արդէն անհետացել էր, միայն փողոցում տեսայ մի ահագին կերպարանք, որին մօտեցաւ Մարօն: Դա նրա հայրն էր:

— Մի՛թէ կարելի է թողնել փոքրիկ աղջկան այս խաւարում, այս ձնբրի մէջ, տնից դուրս գալ, հարցրի նրանից:

— Թո՛ղ սովորէ . . . պատասխանեց հայրը եւ հեռացաւ:

Այդ սառն եւ խտտափրտ պատասխանը ինձ խիստ օտարոտի երեւաց: Ի՞նչ պիտի սովորէր փոքրիկ աղջիկը.— Գիշերային փոթորիկի ժամանակ, ձիւնի եւ սառնամանիքի մէջ միայնակ ման գար: Ես չէի հասկանում գրանում ինչ միտք

կամ նպատակ կարող էր լինել: Այդ ինչ տարապայման կրթութիւն էր, որ խստասիրտ հայրը ցանկանում էր տալ մանկահասակ աղջկան: Մարօն առանց դրան եւս վայրենի բնաւորութիւն ունէր: Ամեն անգամ, երբ մեր տունն էր գալիս, առանց մէկին կծելու, առանց միւսին ճանկռելու, չէր հեռանայ: Նա անպատճառ մէկ շաւիւղալ սկսէր է տարբէր: Այս պատճառով վերջին անկարգութիւնը մեզ երեւոյց բոլորովին սովորական: Նա խիտ չար աղջիկ էր, բայց մենք ամենքս սիրում էինք այդ կեանքով լի եւ միշտ ուրախ փոքրիկին: Նակ Մարիամի հետ նրա ռիսկալութիւնը ունէր իր պատմական պատճառները. չը գիտեմ մի տարի առաջ, թէ երբ, միանգամ Մարիամը նրան կոչել էր «բօշայ». այդ վիրաւորանքը Մարօն երբէք չէր կարող մոռանալ, թէ եւ քրոջս խօսքը բոլորովին հեռու չէր ճշմարտութիւնից, որովհետեւ Մարօի մէջ կար շատ ինչ բօշայական: Մարօն չէր կարող համբերել, երբ նրան յիշեցնում էին, թէ նրա երեսը սեւուկ գոյն ունի, թէ նրա մեծ, կրակոտ աչքերը «ֆալ բացողի» (կախարգի) աչքեր էին, թէ նրա մանր գանգուրներով թուխ ծամերը միայն արարները կարող էին ունենալ: Հակաւոր չէր ուղղակի նկատողութիւնը, բաւական էր ասել, թէ Մարիամի երեսը ճերմակ է, կամ նրա մազերը շէկ սսկու գոյն ունին, — այն ժամանակ Մարօն իրանք հասկանում էր: Նա մինչեւ անգամ նախանձ վում էր, որ Մարիամը մի եւ նոյն անունն է կրբում, ինչ որ ինքն ունէր, եւ այս պատճառով

ամենեւին չէր բարկանում, երբ նրան կրճատած կերպով Մարօ էին կոչում: գրանով գոնէ իր անունը զօնազանխում էր:

Ինձ հետ Մարօի յարաբերութիւնները նոյնպէս բարեկամական չէին. երբ ես բարկացնում էի, նա պատրաստ էր պատառոտել ինձ, բայց զգալով իր ուժի անհաւատարութիւնը, միշտ սպառնում էր, թէ «գիշերը իմ քնած ժամանակը, նա կը գայ եւ կը խեղդէ ինձ»: Մարօն հաշտ էր միայն Մագթաղի հետ, որովհետեւ չափազանց փոփոխ բնավորութիւն ունեցող Մագթաղը թեքվում էր նրա առջեւ եւ համարեա բոլորովին ենթարկված էր նրա ազդեցութեանը: Այդ պատճառով Մագթաղի նոյնպէս ձերմակ երեսը եւ շէկ մազերը չէին բարկացնում նրան, եւ չէին յիշեցնում, թէ ինքը բոշայի դէմք ունի:

Մարօի այն գիշեր բերած կապոցը այնպիսի սովորական բան էր, որ մենք առանց բաց անելու, գիտէինք, նրա միջում ինչ կար: Դա որսի խորոված միս էր հացի հետ, որ երբեմն ուղարկում էր նրա հայրը, չը նայելով, որ ինքն էլ ոչ սակաւ աղքատութեան մէջ էր ապրում: Երբ Մարիամին հրախրեցին ուտելու, նա հրաժարվեցաւ, ասելով, թէ ինքը քաղցած կը մեռնի, եւ այն «սեւ սատանայի» բերած ողորմութեանը չի մօտենայ: Բայց մայրս միշտ գոհութեամբ էր ընդունում բարերար ձեռքի օժանդակութիւնը, այն մարդից, որի հետ ամենեւին ծանօթութիւն չունէր, որը միանգամ եւս ստորը ներս դրած չէր մեր շէմքից, թէ եւ մեր ամենամօտ դրացին էր: Միայն

Մարօն, որ յաճախ գտնուում էր մեր խրճիթում, պատմել էր իր հօրը մեր թշուառ դրութիւնը, եւ նա համարեա ամեն գիշեր չէր դադարում ուղարկել իր տնում գտնուածից մեր բաժինը, եւ այնպէս ծածուկ, որ ոչ ոք չէր հասկանում:

Մարօի հօրը կոչում էին Ալօ—նրա իսկական անունը ես չը գիտէի—նա ահագին բարձրութեամբ մի վիթխարի տղամարդ էր, որ պարագիւրում էր որսորդութիւնով: Ալօն մեր քաղաքի բնիկներից չէր, բայց մի քանի տարի առաջ, մի սաստիկ ձմեռնային եղանակում, նա յայտնուեցաւ մեր քաղաքում, բոլորովին միայնակ, որպէս մի փախստական: Յետոյ փոքր առ փոքր կազմվեցաւ նրա ընտանիքը: Այդ ընտանիքը շատ մեծ չէր,—ինքը որսորդը իր միակ զաւակի՝ Մարօի հետ—ահա բոլորը: Իրանց թըւում գտնուում էին՝ մի մշտական ծառայ Մըհեանունով, մի անակալուչ կին, որին կոչում էին Խաթուն եւ մի պատանի, որին կոչում էին Հասօ: Այս վերջինը որսորդի որդեգիրն էր: Ո՞վքեր էին դրանք եւ որտեղից եկան,—յայտնի չէր: Միայն մեր քաղաքում սրսորդի մասին խօսուում էին շատ զարմանալի պատմութիւններ, իբր թէ նա տաճկական Հայաստանի արեւելեան կողմերիցն էր, թէ նա իր հայենիքում մի նշանաւոր մարդ է եղել, թէ նա շատ կախներ է ունեցել քրդերի հետ եւ իր գլխի մազերի համբարքով մարդիկ է սպանել եւ այլն: Ո՞րքան ստոյգ էին այդ զրոյցները, մենք չը գիտէինք, մեզ այսքանը միայն յայտնի էր, որ Ալօն մի բարի մարդ էր եւ մեր

ամենալաւ գրացին, թէ եւ ամենքը ատում էին նրան եւ խորշում էին նրանից, որպէս մի սարսափելի եղեռնագործից:

Նշմարիտ է, որ Ալօն իր միշտ լուռ, միշտ տխուր եւ ծածկամիտ բնաւորութեամբ մնաց ամենի համար որպէս մի մթին հանելուկ: Նրա ճակատի վրայ գրած խոր սպին իր ահաւորութեամբ մի առանձին արտայայտութիւն էր տալիս դէմքի խոշոր, միեւնոյն ժամանակ աւազակային գծագրութեանը, որ յարուցանում էր նայողի մէջ ակամայ երկիւղ եւ կատկած: Այսու ամենայնիւ, նա շատ բարեսիրտ մարդ էր. ես, Մարիամը եւ Մագթաղը ամենեւին չէինք վախենում նրանից: Երբ գնում էինք նրա տունը, նա առնում էր մեզ իր երկայն եւ ահագին ծրնկների վրայ, օրօրում էր եւ պոչը կտրած մկանս — «քօստ այծի» հէրիաթներն էր պատմում, մենք թուլանում էինք ծիծաղելուց: Մարօն չէր կաքողանում համբերել, երբ տեսնում էր, որ իր հայրը Մարիամին նոյնքան սիրում էր, որքան Մագթաղին եւ ինձ: — «Նա էլ քօ քոյրն է» ասում էր հայրը եւ խրատում էր նրան նախանձոտ չը լինել: Ամեն անգամ, երբ մենք գնում էինք որսորդի տունը, նա անսահման զուարճութիւն էր պարգեւում մեզ: Ալօն տալիս էր մեզ իր որսած թռչուններից որը դեռ կենդանի էր մնացած, մենք կապում էինք նրա ոտը թելով եւ օրերով խաղ էինք անում նրա հետ:

— Փարհատ, ասաց ինձ միանգամ որսորդը,  
— դու շատ ես չարչարում թռչուններին, եթէ

այսպէս կը վարվես, ես միւսանգամ քեզ ոչինչ չեմ տայ:

Ես, սկսեալ փոքր հասակիցս, խօսքի ետեւից մանեկազնեքից չէի. իսկոյն պատասխանեցի.

— Ես խօս չեմ սպանում, բայց դու սպանում ես թռչուններին ու ինձ ասում, թէ ինչու ես չարչարում:

— Սպանելու եւ տանջելու մէջ մեծ զանազանութիւն կայ, ասաց նա ժպտելով. — վերջինը աւելի վատ է:

Ամեն անգամ, երբ մեր թաղի մէջ ձայն էր տարածուում, թէ Այօի ծուղակի մէջ գայլ, արջ, կամ մի ուրիշ գազան է ընկել, ամբողջ թաղը թափվում էր այնտեղ տեսնելու: Նա իր ծուղակը կազմել էր քաղաքից դուրս, որ շատ հեռու չէր մեր բնակարանից: Դա մի բոլորակ վիրապ էր, բաւական ճարտարութեամբ գետնի մէջ փորած, եւ քսան արշինի չափ խորութիւն, հինգ արշինի չափ լայնութիւն ունէր: Երեւակայեցէք ձեզ մի սամօլար, որի ջուր լցնելու տեղը գաւառակ է, իսկ կրակ լցնելու տեղը ամբողջ է. — վիրապը մի այսպիսի ձեւ ունէր: Վիրապի մէջ տեղում, ուր մի հաստ սիւնի նման պինդ գետին էր բարձրանում, նրա վրայ ամեն գիշեր դրվում էր մի գէշ, իսկ սիւնի չորս կողմի գատարկութիւնը ծածկվում էր եղէգներով, այնքան թոյլ կերպով, որ եթէ մի հաւ անցնելու լինէր ծածկոցի վրայ, իր ծանրութեամբ կարող էր իսկոյն ցած գլորվել: Գազանները գէշի հասը առ-

նելով, մօտենում էին նրան, բայց դեռ գէշի  
չբ հասած, ընկնում էին վիրապի մէջ:

Վաղ-առաւօտեան յայտնվում էր որսորդը  
Մըհէի հետ: Բազմութիւնը հետաքրքրութեամբ  
սպասում էր, թէ ինչպէս պէտք է գուրս բերեն  
գազանին. որը կատաղած, զայրացած, եւ ան-  
հանգիստ կերպով պտըտվում էր վիրապի մէջ,  
մռնչում էր, զարհուրելի ձայներ էր արձակում  
եւ փորձեր էր փորձում գուրս գալ, բայց չէր  
կարողանում: Այդ միջոցին վիթխարի Մըհէն,  
աջ ձեռքում մի ահագին երկաթէ մահակ բռ-  
նած, խկ ձախ ձեռքում բռնելով շղթաներով  
ամրացրած «*ալալէն*»), իջնում էր վիրապի մէջ:  
Բազմութիւնը սարսափում էր կիսախելագար որ-  
սորդի աներկիւղութեան վրայ: Լինէր այնտեղ  
գայլ, արջ, վագր, ինծ, մի երկչոտ աղուէս,—  
մի եւ նոյն էր Մըհէի համար. նա բոլոր գազան-  
ների վրայ նայում էր, որպէս ոչխարների վրայ:

Վիրապի մէջ սկսվում էր գազանի եւ Մըհէի  
ստորերկրեայ կռիւր: Մենք ոչինչ չէինք տես-  
նում, միայն լսում էինք գազանի բարկացող  
մռնչիւնը, շղթայի ձայնը եւ երբեմն երկաթէ  
մահակի ծանր հարուածները: Երբ գազանը յաղ-  
թված էր, Մըհէն մի առանձին փաղաքշական եղա-  
նակով ասում էր նրան. «հանգստացիր, գառ-  
նուկս, ես քեզ երկար այստեղ չեմ թողնի»: Եւ

\*) Քալափէ մի տեսակ երկաթից շինած գործիք  
է, որ անց են կացնում գազանների բերանը, նրանց զբ-  
պելու համար, այդ գործիքը մեր լեզուում կոչվում է  
«գալ»:

իրաւ, մի քանի բոսպէից յետոյ յայտնուամ էր ՄըՏէն, իր հետ դուրս քաշելով գազանին, որի գլուխը եւ բերանը կաշկանդված էին լինում ասորի մէջ, եւ այնքան ամուր կերպով, որ ոչ որին վնասել չէր կարող:

Իհաս սակաւ անգամ էր պատահում, որ ՄըՏէն դուրս գար վիրապից, երեսը արիւնաթաթախ, ծւատված, կամ մարմնի մի այլ մասը վիրաւորված: Բայց երբէք չէր պատահում, որ նա չը կարողանար զսպել գազանին: Ես մինչեւ այսօր յիշում եմ, թէ որպիսի անհոգութեամբ այդ երկաթէ մարդը ձեռքով սրբում էր իր երեսից արիւնը, կարծես թէ, քրտինք էր սրբում:

Այօրի պարապմունքի մէջ ՄըՏէն օգնում էր նրան, աւելի քան նրա բոլոր որսորդական շները եւ բարակները: Նա զարմանալի ճարպկութիւններ եւ հասկացողութիւն ունէր որսորդութեան մէջ: Անասունների բնաւորութիւնը եւ նրանց սովորութիւնները նա այն աստիճան ուսումնասիրած էր, որ բաւական էր տեսնել նրանց թաթերի ձիւնի վրայ տպաւորված հետքերը, այնուհետեւ նա գիտէր, թէ ինչ անասուն էր անցել, որտեղ կարելի էր գտնել նրան, կամ ինչ հնարքով պէտք էր որսալ:

Այօն ուրիշ պարապմունք չունէր, նա սուրբում էր որսորդութիւնով միայն: Մազոտ գազանների մորթերի գործածութիւնը մահմեդականների համար պիղծ համարվելով, թուրքերը, պարսիկները եւ քրդերը նրանց որսորդութիւնով չէին պարապում, եւ այս պատճառով, ասպա-

րէզը մնացել էր միայն Ալօին: Նրա տունը մի կատարեալ գաղանանոց էր: Ամեն անգամ, ես այնտեղ գնալիս, գտնում էի նրան զբաղված կամ գաղանները կերակրելով եւ կամ աղուէսի, կուղի, գայլի, արջի, վագրի եւ այլ այստեսակ անասունների մորթիքը չորացնելով: Հրէայ եւ Հայ վաճառականները իրանք գալիս էին, եւ գնելով մորթիքը, տանում էին Հեռու երկրներ վաճառելու:


Մարօն այն աստիճան ընտելացած էր գաղանների հետ, որ ամենեւին նրանցից չէր վախենում: Միանգամ նա ցոյց տուեց ինձ մի ամեհի վագր ասելով.

— Տես, Փարհատ, ի՞նչ գեղեցիկ բծեր ունի:

Ես սարսափեցայ, երբ փոքրիկ աղջիկը մօտեցաւ եւ սկսեց փայփայել գաղանի ահագին գլուխը:

— Ի՞նչու ես վախենում, ասաց նա ծիծաղելով, — դա մի մեծ կատու է, եւ աւելի ոչինչ:

Այդ վագրին մանուկ հասակից որսացել էր նրա հայրը. որովհետեւ Մարօն շատ սիրում էր նրան, այս պատճառով պահել, մեծացրել էին: Ինձ թւում էր, որ Մարօն էլ այն գաղանների ձագերից մէկը պէտք է լինէր, որովհետեւ նրանցից չէր վախենում եւ նրանց շատ սիրում էր:



Ե.

ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՒ ՔԱԶԱՆԱՅ

Մայրս իմ փոքր հասակից հոգս էր տանում, որ գիր-կարգալ սովորեմ եւ «լաւ մարդ» դառնամ: Տասն տարեկան էի, երբ նա ինձ մեր թաղի քահանայի մօտ տարաւ: Այն օրը հոգեգալստեան տօնն էր:— «Հոգեգալուստը լաւ օր է, ասում էր մայրս,— եթէ երեխան այս օրը վարժատուն մտնէ, շատ բան կըսովորի, նրա համար որ, Հոգին սուրբ այսօր առաքեալներին լեզու տուեց»:

Ես մինչեւ այսօր չեմ մոռացել այն խօսքերը, որ մայրս ինձ վարժասպետին յանձնելու ժամանակ ասաց.— «Տէր հայր, ծառայ լինիմ սուրբ աջիգ, որդիս քեզ համար զուլ (ճորտ) եմ բերել, միտը քեզ, ոսկորն ինձ. ինչ ուզում ես, արա, միայն թէ երեխաս մի բան սովորի» . . .

Ես բոլորովին չը հասկացայ, թէ ինչ էին նշանակում մօրս խօսքերը, միայն լսեցի, որ տէրտէրը խոստացաւ ինձ լաւ ուսում տալ, բոլոր գրքերը կարդացնել, աւելացնելով, թէ «հանգու-

ցեալ հայրս» իր լաւ բարեկամն է եղել, եւ «նրա խաթրու» ինձ վրայ առանձին ուշադրութիւն կը դարձնէ եւ այլն:

Տէր Թօղիկը—այսպէս էր վարժապետիս անունը—իւր ուսումը ստացել էր Աղթամարայ անասպատումը: Թէ ինչու համար նա թողեց վանքը, —այդ ես չը գիտեմ, միայն ասում էին, որ նա բերեց իր հետ գիտութեան խիստ ահագին պաշար: Տէր Թօղիկը մեծ համարում ունէր, ոչ միայն մեր քաղաքի մէջ, այլ մեր ամբողջ գաւառում հռչակուած էր նրա իմաստութիւնը: Այլ որ մի երազ էր տեսել, նրա մօտն էր վազում եւ նրանից բացատրութիւն խնդրում: Աւել երեխան հիւանդ էր, նրան նարեկ կամ Աւետարան էր կարդալ տալիս, որ առողջանայ: Այլ որ մի գործ էր կամենում սկսել, նրա «Տէր-ողորմեայի» վրայ էր փորձում իր բախտը: Մի խօսքով, նա մեր գաւառի մարգարէն էր. ամեն մարդ նրա խորհրդին էր դիմում, ամեն մարդ նրանից խրատ էր ընդունում . . .

Աստուած իմ, ինչեր չէին պատմում նրա մասին . . . Ասում էին, տէր հայրը իր եղունգի վրայ մի բան է գրում, եւ այն գրի զօրութեամբ կնիկները իրանց առջեւ ծով են տեսնում եւ խկոյն տկորովում են . . . Ասում էին, թէ նա մի ազօթք է կարդում, եւ գարու հատիկները մըրջեմի նման բարձրանում են դէպի տան սիւնը, եւ ընդհակառակն, նրա խօսքով արագաշարժ կարիճը քարացած կանգնում է եւ ընաւ չէ շարժվում: Ասում էին, ծտերի բերանը ազօթքով կա-

պում է եւ նրանք չեն կարողանում արտերի ցորեանք ուտել: Ասում էին դեւերին, սատանաներին բռնում է, յցնում է ապակեայ սրուակների մէջ եւ այնպէս պահում է, որ մարդկանց մնաս չը տան:—Այսպիսի շատ բաներ խօսում էին նրա մասին, ես բոլորին, բոլորին հաւատում էի: Ակզբում իմ վրայ սարսափ էին բերում այս խօսքերը, բայց յետոյ այնքան ընտելացայ, որ մտածում էի.— «Տէր Աստուած, երբ կը լինի, որ ես էլ այդ ամենը սովորեմ եւ իմաստուն մարդ դառնամ» . . .

Ի՞նչպէս չը հաւատայի, երբ ամեն օր տեսնում էի նրա տունը լիքն էր հայի, թուրքի, ջհուդի եւ զանազան ազգերի կնիկներով: Որը տէր հօր համար ընծայ էր բերել մի քանի հատ ձու, որը մի աքաղաղ, որը մի շիշ արաղ, որը մի զոյգ գուլպայ, — վերջապէս ոչ մի մարդ դատարկաձեռն ոտք չէր կոխում նրա շէմքի վրայ: Ի՞նչ էր նրանց դարգը: Մէկը չբերք էր. տէր հայրը նրա համար մի բան էր գրում, որ երեխայ ունենայ, Միւսի տղամարդը ուրիշին էր սիրում. տէր հայրը իր «Աեցհաղարեակի» շնորհիւ նրա սէրը սառեցնում էր օտար կնիկանից եւ իր կնոջն էր սիրել տալիս: Մէկ ուրիշը ուզում էր մարդի գնալ. տէր հայրը իր «Թիլիամանների» զօրութեամբ նրա բախտը բաց էր անում:—Այսպիսի շատ բաներ անում էր նա, եւ ասում էին, որ բոլորը կատարվում է . . .


Իր եկեղեցական պաշտօնի մէջ տէր Թօղիկը նոյնպէս իր ժողովրդի թէ հոգեւոր, թէ բարո-

յական մխիթարութիւնն էր: Ամեն մարդ նա-  
յում էր նրան, որպէս մի սրբութեան վրայ: Երբ  
սկսում էր մեծ սաօր, մեր թաղեցիքը սփորու-  
թիւն ունէին կէսաւուր ժամից առաջ հաւար-  
վել եկեղեցու բակում մի խուցի մէջ: Վար-  
ժապետս գնում էր այնտեղ, նրանց համար կար-  
գում էր եւ մեկնում էր մի գիրք: Ես մինչեւ  
այսօր չեմ մոռացել այն ահագին մեծ գիրքը.  
Նրան կոչում էին «Այսմաւուրք»: Նա այնքան  
ծանր էր, որ հոգիս դուրս էր գալիս, մինչեւ  
տանում էի եկեղեցու խուցը: Թէ ի՞նչ էր գրած  
նրա մէջ, ես չը գիտէի, բայց շատ անգամ գիր-  
քը տանելու ժամանակ մտածում էի. — «Ա՛խ,  
Աստուած ջան, ի՞նչ կը լինի, որ այդ գրքի բո-  
լոր գրուածները իմ գլխումը լցնես»: Յետոյ ինձ  
ու ինձ ծիծաղում էի. — «Լաւ, ասում էի, իմ  
պատիկ գլուխը ո՞նց կարող է այս ամեն բաները  
իր մէջ տանել»: Յետոյ էլի մտածում էի. — «Վար-  
ժապետիս գլուխը խօ իմից մեծ չէ, բա՛ ի՞նչու  
նա ամենը իմանում է»:

Թաղի ծերունիները հաւարված էին լինում  
եկեղեցու խուցի մէջ, սպասում էին տէր հօր  
գալտեանը: Ես տանում էի գիրքը, գնում էի  
փոքրիկ գրակալի վրայ, եւ ձեռքերս կուրծքիս  
վրայ դրած, կանգնում էի այնտեղ: Նա գալիս  
էր: Ա՛խ, ինչպէ՞ս պատուով ընդունում էին  
նրան, մարդ չէր մ'նում, որ սուրբ աջը չը համ-  
բուրէ եւ նրա օրհնութիւնը շառնէ: Նա նրս-  
տում էր գրակալի մօտ, բայց էր անում գիրքը,  
կարգում էր եւ պատմում էր նրա միտքը: Ես

մինչև. այսօր չեմ մտապել մի քանի բաներ, որ այն ժամանակ սփորեցայ սուրբերի, ճգնաւորների, արեղանների հրաշագործութիւնների մասին, թէ ինչպէս նրանք խորոված աղաւնիներ էին թռչնում, ինչպէս հրեշտակների հետ էին խօսում, ինչպէս դուերին բռնում էին եւ իրանց սպասաւորութիւն էին անել տալիս, կամ ինչպէս շարաթներով ոչինչ չէին ուտում, բայց Աստուած նրանց համար երկնքից մանանայ էր ուղարկում:—Ո՞վ է իմանում, հազար ու մէկ այսպիսի բաներ էի լսում, որոնք լցնում էին իմ սիրտը մի սրբազան ջերմեռանդութեամբ, եւ ես մտածում էի. — «Թող տամ այս փուչ աշխարհը, գնամ սարերը, մտնեմ քարերի մէջ, ճգնաւոր դառնամ, որ ես էլ հրեշտակների հետ խօսեմ, որ ես էլ երկնքի մանանայով կերակրվեմ» . . .

Երբեմն ծերունիներից ոմանք առաջարկում էին վարժապետիս խորին աստուածաբանական հարցեր: Նա բոլորի պատասխանը խիստ խելացի կերպով տալիս էր . . .



Մեր գպրոցը տէր Թօղիկի աւելորդ սե-  
նեակներից մէկն էր, անասունների ախոռին շատ  
մօտ եւ համարեա կպած նրա հետ: Այն նեղ  
եւ խեղդոված խուցի մէջ լցոված էին թւով մինչեւ  
քառասուն աշակերտներ. բացի աշակերտներից,  
այնտեղ կպած էին տէր հօր նորածին հորթե-  
րից երեքը: Զմեռը շատ լաւ էր այնտեղ, թէեւ  
վառելիք չունէինք, բայց ախոռից դասատան մէջ  
ծածկված պատուհանները բաց էինք անում եւ  
ջերմ գոլը մառախուղի պէս ներս էր թափւում,  
մեր դասատունը դառնում էր տաք, որպէս բազ-  
նիք: Արբան ուրախանում էինք մենք . . . Թէեւ  
անասունների շնչառութիւնից գոլորշիացած ջեր-  
մութիւնը խեղդելու չափ ծանր էր: Ամառը շատ  
վատ էր այնտեղ, որովհետեւ ախոռի մէջ գրտ-  
նված անմաքրութիւնների խմորվելուց՝ մի կող-  
մից վչում էր անախորժ գարշահոտութիւն, միւս  
կողմից գոյանում էին զանազան տեսակ զեռուն-  
ներ, որոնք լուերի հետ խումբեր կազմելով, ահա-

գին թաղմութեամբ արշաւանք էին գործում դէպի մեր դասատունը: Նրանք այնքան մանր էին, որ աչքը հազիւ էր տեսնում, բայց ճրպէս սարսափելի կերպով խայթում էին, — այդ միայն Աստուած գիտէ:

Ամբողջ դպրոցը բաղկացած էր մէկ դասատնից. նրա միջումն էին աւանգւում թէ բարձր եւ թէ տարրական գիտութիւնները, սկսեալ այբբենարանից, մինչեւ այն ահագին գիրքը, որ ես հազիւ էի կարողանում մինչեւ ժամատան խուցը տանել: Մեր դասատունը, թուրքի մէջիդի նման, բոլորովին մերկ էր. նստարան, աթոռ, սեղան կոչված բաները այնտեղ չը կային: Աշակերտները ծալապատիկ նստում էին խոնաւ յատակի վրայ, առանց տախտակամածի, որ միայն պատած էր ճահնային բոյսերից հիւսած հասիրներով: Վարժապետը միայն իր տակին փռած ունէր այծի մորթի եւ մի քանի հարուստների որդիները նոյնպէս ունէին փոքրիկ օթոցներ, որ բերել էին իրանց տներից: Միակ առարկաները, որոնք յիշեցնում էին, թէ այն մթին եւ գերեզմանի պէս խոնաւ սենեակը դպրոց էր, — էին՝ ֆալսէլան եւ մի խուրձ գալար ճիւղոտներ նրա մօտ դրած . . .

Ա՛խ, քանի՛ քանի՛ անգամ մենք գողացանք, քանի՛ անգամ կոտրեցինք այն անիծված ֆալսէլան, դարձեալ չը կարողացանք ազատվել նրանից: Նա միշտ կար եւ կար . . . Նա միշտ անպակաս մնաց մեր դպրոցից . . . Երբ ես շատ ուշ, վերջին ժամանակներում, կարդացի ինկվիզիցիայի հնարած գործիքների նկարագրութիւնը եւ նը-

րանց անսակները, զարմացայ, թէ ինչպէս էր պատահել, որ կաթողիկ եկեղեցու հանձարը, որ այնքան զօրաւոր էր տանջանքի մեքենաներ ստեղծելու մէջ, բոլորովին ի նկատի չէր առել ֆալսիսկան—այդ, աշակերտի հոգին եւ մարմինը մաշող գործիքը. . . Աշակերտի մերկ սաները դընել այդ պատժական մեքենայի մէջ, պտրտացնելով վեր բարձրացնել, յետոյ դալար ճիւղտներով այնքան հարուածել, մինչեւ ոգորմելի զօհը բոլորովին թուլանայ, ուշաթափ լինի, — ահա այդ էր ֆալսիսկայի նշանակութիւնը: Ամենամատանելին այն էր, որ պատժվող աշակերտին ծեծել էին տալիս նրա քարեկամի, կամ ամենասիրելի ընկերի ձեռքով: Եթէ այդ վերջինը հարուաները թուլացնում էր, կամ հրաժարվում էր ծեծելուց, նրան եւս ենթարկում էին մի եւնոյն գանահարութեանը:

Վաղ-առաւօտեան սկսվում էր դասառութիւնը: Վարժապետը մի անկիւնում նստած էր լինում, որպէս քուրմը իր խորին սրբազնութեան մէջ: Նրա առջեւ դրած էր փոքրիկ գրակալը, — այդ նրա ամբիօնն էր: Աշակերտները հերթով մօտենում էին, վարժապետի աջը համբուրում էին, չորում էին նրա առջեւ եւ գասագրքերը դնելով գրակալի վրայ, սկսում էին «համար տալ» (դասը ասել): Սովորաբար ամեն մի սխալի համար խրաքանչիւրը ընդունում էր «խլալ» մի-մի սաստիկ զարկ իր ափի մէջ: Եսկ եթէ դասը բոլորովին սերտած չէր, նրա համար պատրաստ էր անհիժված ֆալսիսկան . . .

Այդ «խրատ» կոչվածը Աստուծոյ մի առանձին պատիժն էր. նա շինված էր ամենամաուր փայտից եւ փոքրիկ թխակի ձեւ ունէր: Հին գրքերի մէջ գտնված բոլոր ասացուածքները, որոնք վերաբերում էին ծեծելու, գանահարութեան, փորագրված էին նրա վրայ: Սրինակ, այսպիսի խօսքեր, «Ար ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ» — «Ծառայ, որ ոչ գիտիցէ զկամս տեառն եւ արժան ինչ գանի գործիցէ, արբցէ գան սակաւ, իսկ որ գիտիցէ եւ մեղիցէ, արբցէ գան բազում» — «Կառն է ծառ խրատու, իսկ պտուղ նորա քաղցր» . . . Խրատելու այդ գործիքը առանձնապէս պատրաստուում էր վարժապետների համար, եւ տէր Թօղիկը իր ունեցածը, որպէս պատմում էր, ընծայ էր ստացել իր վարժապետից, որպէս յիշատակ եւ որպէս նշան իր մեծաքայլ յառաջադիմութեան:

Պատիժների մէջ մինչեւ այսօր չեմ մտացել մէկը, որը որքան ծիծաղելի, այնքան էլ սարսափելի էր: Աշակերտին կանգնեցնում էին ոտքի վրայ եւ երկու ձեռքով բռնել էին տալիս մի աղիւս, կամ ահագին Այսմաուրքը: Նա ժամերով, հնդկական Փագիրի նման, այդ ծանր գիրքը պէտք է պահէր գլխից բարձր, երկու ատիերի մէջ: Թեւքերը յոգնում էին, ջղերը թուլանում էին, բայց այդ ոչինչ: Գլխաւոր տանջանքը նրանումն էր, որ յանցաւորը պէտք է կանգնէր մէկ ոտքի վրայ. միւս ոտքը գետին դնելու համարձակութիւն չուներ: Ատիրաբար ընտրում էին ձախ ոտքը, իսկ ամբ պէտք է վեր բարձ-

բացած պահէր: Մի աշակերտ մտրակը ձեռին, կանգնած նրա մօտ, հսկում էր այդ անտաննիւի մարմնամարգութեան վրայ: Երբ պատահում էր յանցաւորին ոտքը գետին դնել, նա խփոյն մըտրակով զարկում էր ոտին: Այդ սատանայական պատժին ես այն աստիճան սովորած էի, որ երկար կարողանում էի սագի նման մէկ ոտքի վրայ կանգնած մնալ:

Մեր դպրոցը ունէր իր ուրիշ խստութիւնները: Վաղ-առաւօտեան պէտք է դասատուն գայինք բոլորովին անօթի, առանց մի պատառ. հաց անգամ բերան դնելու: Թէյի կամ սուրճի գործածութիւնը այն ժամանակ դեռ մեր երկրում մտած չէր: Իսկ եթէ մեր տներում գտնված թանից կամ մածունից նախաճաշիկ անէինք, դրա համար սաստիկ պատիժներ էին նշանակված: Վարժապետը ասում էր. «կուշտ փորով չէ կարելի դաս սովորել, երբ մարդ մի բան ուտում է, խելքը պակսում է»: Եւ նա օրինակ էր բերում ճգնաւորներին, վարժապետներին, որոնք ոչինչ չէին ուտում, բայց իրանցից գրքեր էին շարագրում:

Յիշեալ պատուէրը մենք կատարում էինք ամենայն ճշտութեամբ. զեղծումներ անել նրա դէմ անկարելի էր, որովհետեւ վարժապետը սատանայի պէս իմանում էր, երբ աշակերտը մի բան կերած էր լինում: Ահա ինչպէս էր իմանում, նախ քան ուսման սկսիլը, վարժապետը որ աշակերտի վրայ կասկած ունէր, սկսում էր նրա լեզուն քննել, որ տեսնէ, արդեօք նա իր

ծումը լուծել էր, թէ ոչ Յայտնի բան է, անսուաղ մարդու լեզուն աւելի սպիտակ գոյն է ունենում, նրա մակերեւոյթի վրայ ճերմակ փառ է նստած լինում. իսկ երբ մի բան ուտում կամ խմում է, լեզուն մաքրվում է եւ աւելի կարմիր գոյն է ստանում: Այդ պատճառով մենք ամեն առաւօտ ոչ միայն ոչինչ չէինք ուտում, այլ մինչեւ անգամ վախենում էինք երեսներս լուանալու ժամանակ բերաններս մաքրել ջրով, որ չիցէ թէ մեր լեզուի ճերմակութիւնը սրբվի, եւ վարժապետը ասէ, թէ ծումը լուծել ենք . . . Եւ այսպէս, մինչեւ կէսօր մենք պարապում էինք բոլորովին սոված փորով. գլուխներս պտտվում էր, աչքներիս առջեւ սեւանում էր քաղցածութիւնից, դարձեալ ոչինչ չէինք կարողանում սովորել:

Մեր ժամացոյցը պատի ստուերն էր, որք գետնի վրայ մինչեւ մի նշանակեալ խաղ հասնելը, գիտէինք, թէ արդէն կէսօր է: Այն ժամանակ միայն թոյլտութիւն էինք ստանում ճաշելու: Բայց իբրև անհամբերութեամբ սպասում էինք, մինչեւ ստուերը հասնում էր խաղին . . . Կարծես, արեւն էլ մեր վարժապետի նման սիրտ չունէր. նա միշտ դանդաղ եւ դանդաղ էր գնում, եւ ստուերը խիստ թոյլ կերպով էր տարածվում. . .

Ճաշը ուտում էինք դասատան մէջ: Աշակերտները իրանց հետ էին բերում բոլոր պաշարը եւ անուշ պատառներից բաժին էին հանում տէր հօր համար, այնպէս որ, նրա մասը աւելի ճոխ էր լինում եւ բազմատեսակ, մինչեւ անգամ երեցկիներն ու նրա որդիքն էլ կերակր-

վում էին տէր հօր սեղանից:

Ճաշից յետոյ, թէեւ մենք ունէինք մի քանի հանգստութեան ժամեր, բայց սաստիկ արգելված էին խաղերը: Խաղը համարվում էր մեզ համար մի տեսակ չարութիւն, որ բնդդէմ էր համեստութեան եւ հանդարտութեան կանոններին: Աշակերտը պէտք է լինէր լուռ, անշարժ, ամօթխած եւ խոնարհ: Այդ պատճառով սաստիկ պատժվում էր աշակերտը, երբ նրան նկատում էին խաղալիս, աւելի վատթար, երբ նրա մօտ գտնում էին խաղալիկներ: Այդ մասին երբեմն դպրոցում անակնկալ խուզարկութիւններ էին լինում, աշակերտների գրպանները որոնում էին:

Հարուստների որդիքը բացառութիւն էին կազմում դպրոցի խիստ կարգապահութեան մէջ. նրանց շատ բան ներվում էր. դասատան մէջ առաջին տեղումն էին նստացնում, իսկ դրսում նրանք անպատիժ էին մնում, երբ ծեծում էին իրանց աղքատ ընկերներին: Այսպիսիներից մէկն էր Ալօ անուշով մի տղայ, որ մեր քաղաքի առաջին հարստի որդին էր. նրա հայրը արքունի փողերանոցի կապալառու էր: Այն ժամանակ Պարսկաստանի գլխաւոր քաղաքներում դրամներ էին կտրում եւ կտրելու իրաւունքը կառավարութիւնը կապալտով տալիս էր մասնաւոր անձինքների: Ալօի հայրը Խոյ քաղաքի փողերանոցի պետն էր եւ այդ արտօնութիւնը սերունդից սերունդ, որպէս մի առանձնաշնորհութիւն, տուած էր նրանց տոհմին: Այս պատճառով այդ տոհմը կոչում էին «ղաւարիներ»:

Ալօն մեր ամենամանկիտան աշակերտներից մէկն էր, ոչ որ չէր սիրում նրան, բացի վարժապետից: Երբ պատահում էր աշակերտներից մէկին պատժել, Ալօն առաջինն էր լինում, որ խնդրում էր վարժապետից իրան թոյլ տալ կատարելու դահճի պաշտօնը: Ծեծել իր ընկերներին, նահատակել նրանց, — դա զուարճութիւն էր պատճառում անսիրտ Ալօին, եւ մեր վարժապետը երբէք չէր զրկում նրան այդ ուրախութիւնից. . . Ամեն օր կը գար նա դպրոց, մի նոր գիրք իր հետ բերելով, ցոյց կը տար վարժապետին ու կատէր. «Հայրս ասաց, որ այս գրքից դաս տաք»: — «Լաւ», կը պատասխանէր վարժապետը — «գրա վրայ կարդա»:

Միանգամ ես չը կարողացայ համբերել, ասեցի Ալօին.

— Գու մի կանոն Սպանոսը դեռ հեգելով ես կարդում, այդ մեծ գիրքը ո՞նց պիտի կարդաս:

— Իմ հայրն էլ մեծ մարդ է, պատասխանեց նա մի առանձին հպարտութեամբ:

— Քո հայրը մեծ մարդ է, այդ ես իմանում եմ, բայց որդին մեծ գիրք կարդալու համար պէտք է դեռ եւս մի բանի տարի սովորէ:

— Ի՞նչ պիտի սովորեմ. . . հայրս ասաց, տար այդ գիրքը կարդա, որ դպրոցի մէջ առաջին աշակերտը լինես:

— Որպէս ինքը քաղաքի մէջ առաջին մարդն է, պատասխանեցի ես ծիծաղելով:

Այդ միջոցին զգացի ապտակի մի սաստիկ հարուած երեսիս վրայ: Ես էլ պատասխանեցի

Նրան իմ զօրեղ մուշտիով: Անպիտանը իսկոյն վաղեց վարժապետի մօտ եւ ինձ վրայ գանգատվեց: Ձեզ եմ թողնում երեւակայել այն անտանելի պատիժը, որ ես ստացայ իմ յանդգնութեան համար, ես համարձակվել էի իմ մուշտիով պատասխանել արքունի փողերանոցի գլխաւորի որդուն . . . այդ անկարելի բան էր: Բայց այն օրից իմ մէջ ծագեց մի սաստիկ ատելութիւն դէպի ամեն ինչ, որ արքունական էր եւ դէպի ամեն մարդ, որ հարստացել էր արքունիքի շնորհիւ . . .

Հարուսաների որդիների նախապատուութիւնը դպրոցի մէջ առանց պատճառի չէր. նրանք տօն օրերում վարժապետի համար ընծաներ էին բերում գինի, արաղ, իւղ, պանիր եւ դրանց նրման բաներ: Նրանց հայրերը վարժապետին «խալաթ» էին տալիս, երբ որդիները մի գրքի կարգալը վերջացնում էին եւ սկսում էին միւսը: Բայց ես աղքատ էի. մայրս դժուարութեամբ կարողանում էր վճարել իմ ամսականը, իսկ ընծաների փոխարէն ես կատարում էի վարժապետիս տնային գործերը: Առաւօտից մինչեւ երեկոյ հանգստութիւն չունէի. աղբիւրից խմելու ջուր էի բերում, կովերի համար ուտելու խոտ էի քաղում դաշտից, հորթերը բռնում էի, մինչեւ երէցկիներ կովերը կթում էր, եւ եթէ ուրիշ գործ չէր լինում, ճաշից յետոյ նստում էի վարժապետիս կողքին, ճանճեր էի բշտում, որ նրա անուշ քունը տանի . . .

Պատահում էր, մեր թաղում մկրտութիւն էր լինում կամ թաղում: այն օրը վարժապե-

տիս համար հարսանիք էր, իսկ մեզ համար մահ։ Աշակերտներից մի քանիսը, որոնք մեծ էին հասակով եւ տիրացութիւն անել գիտէին, վեր էին առնում տէր հօր փիւնը, մաշտոցը, բուրվառը եւ քահանայական այլ սպասները։ Նրանք գրնում էին խորհրդի տեղը։ Այսպիսի դէպքերում, երբ կարող էինք մի փոքր ազատ շունչ քաշել, աւելի դառն էր լինում մեր վիճակը։ Վարժապետը մտածելով, որ իր բացակայութեան ժամանակ մենք անկարգութիւններ կանենք, հնարել էր մի սատանայական միջոց մեզ հանգիստ պահելու համար։ Նա մեզ նստացնում էր միմեանցից հեռու, մեր հագուստի լայն փէշերը տարածում էր գետնի վրայ, նրանց վրայ ածում էր մանր աւազ, յետոյ աւազը դրոշմում էր փայտեայ կնիքով, որ յատկապէս դրա համար պատրաստված էր։ Երեւակայեցէք մեր դրութիւնը. ամբողջ ժամերով պէտք է մեխած մնաս գետնի վրայ, մի շարժում անգամ անել կարող չես, որովհետեւ իսկոյն աւազը կը խառնվի, կնիքը կը լուծվի, եւ վարժապետը այդ տեսնելով, հոգիդ կառնէ . . .

Այսպիսի պատիժներին խիստ յաճախ ենթարկվում էի եւս Բարերար Աստուած, ինչ պէտք է անէի, խօս մեռել չէի, որ անշարժ մնայի։ Պատահում էր, կամ լուռ էր կծում, կամ ճանճն էր նեղացնում, կամ վերջապէս մի ուրիշ հարկաւորութիւն ունէի . . . Վարժապետը դառնում էր տուն մի փոքր տաքացած գլխով, նա գտնում էր կնիքը լուծված, այն ժամանակ պատրաստ էր

ինձ համար կամ անիծված ֆալսեղան, կամ մերկ ծնկներով չորել աղիւսի մանրած կտորների եւ կամ սխմինդրի հատիկների վրայ—Պարձեալ պէտք է անշարժ մնայի . . .

Լինում էին օրեր, որ պատիժը ընդհանուր էր դառնում. աշակերտները բոլորը միասին պատրժվում էին: Տարվայ մէջ մի քանի անգամ մենք ունենում էինք արձակուրդներ: Մեծ արձակուրդները լինում էին զատկի եւ ծննդեան տօների ժամանակ, իւրաքանչիւր տօնին մի-մի շաբաթ: Երբ տօներից յետոյ աշակերտները կրկին հաւաքվում էին դպրոցը, մեր վարժապետը առանց խտրութեան աշակերտների ստները դընում էր ֆալսիկայի մէջ եւ բոլորին հաւասարապէս ծեծում էր: Ի՞նչու համար:—Այդ նրա համար էր, գուցէ աշակերտները արձակուրդի ժամանակ իրանց տներում, կամ դրսում որ եւ իցէ անկարգութիւն արած լինէին, ի հօրկէ, այդ կարծեցեալ անկարգութիւնը ստուգել անհնարին էր, ուրեմն, պէտք էր թէ մեղաւորին եւ թէ անմեղին հաւասարապէս տատփել . . . Այս բարբարոսութեան մէջ մի ուրիշ միտք եւս կար: Ինչպէս լաւ ձիաւորները, ձիու վրայ նստածին պէս, տալիս են նրան մի քանի մտրակի դարկ, որ թմրած անասունը զգաստանայ, գրգռվի,—այնպէս էլ մեր վարժապետը հանգստի օրերից յետոյ լաբում էր մեր մտաւոր ուժերը ձիպոտներով, որ սթափվինք, որ վայրենացած կեանքից կրկին ընտելանանք դպրոցական տաժանակիր կեանքին . . .

Մեր վարժապետը չարասիրտ մարդ չէր, ընդ-

Հակառակն, նա շատ բարի էր: Այս բոլոր խըստութիւնները, այս բոլոր անգթութիւնները առաջ էին գալիս նրա մանկաւարժական հասկացողութիւնից: Նա համոզված էր, որ առանց ծեծի, առանց տանջանքի աշակերաը ոչինչ չի սովորի: Նա այնքան հաւատում էր իր ֆուլիւլայն, որքան հաւատում էր իր թիլիամաններին եւ կախարդական արարողութիւններին, որոնցմով հրաշքներ էր գործում . . .

Երբ պատմում էի մօրս դպրոցում կրած իմ տանջանքները, նա էլ մի եւ նոյնն էր հաստատում եւ սովորաբար պատասխանում էր. — Վրդի, մինչեւ ծեծ չուտես, մինչեւ նեղութիւն չը բաշես, բան չես սովորի: Ապա ինչու այնքան ծեծ էի ուտում, այնքան տանջւում էի, դարձեալ ոչինչ չէի կարողանում սովորել:

Ես յիմար տղայ չէի, ես շատ սրամիտ էի, երբ տատս մի հեքիաթ էր պատմում, ես միանգամից բոլորը սովորում էի. երբ մեր քաղաքում աշուղ էր գալիս, երգ էր երգում, վէպ էր պատմում, ես իսկոյն սովորում էի: Ըսկ դպրոցում ինչու այնքան բթամտացայ, որտեղ կորաւ իմ սրամտութիւնը . . .

Տատիս հեքիաթը, աշուղի երգը ես հասկանում էի, դրա համար շուտ էի սովորում, բայց վարժապետիս դաս տուած բաներից ոչինչ չէի հասկանում: Ինձ երեւում էր, որպէս թէ նրանք հայերէն չը լինէին: Գիշեր ու ցերեկ դասս սերտում էի ու սերտում, գլխումս մի բան չէր մտնում: Հէնց որ վարժապետիս աչքը ընկնում

էր աչքիս, ես սարսափում էի, միտքս շփոթվում էր, գիտցածս մոռանում էի . . .

Ես մինչեւ այն աստիճան ընկած էի թէ մտքով եւ թէ հոգով, մինչեւ այն աստիճան սպանուած էին իմ մէջ մանկական ուժերը, որ բոլորովին հաւատում էի, երբ վարժապետս բարկանալով ասում էր. — «Սատանայի լակոտ, քեզանից մի օրինաւոր բան չի դուրս գայ» . . .

Առաջին անգամ վարժապետս ինձ տուեց սովորել այբբենարանը: Վարժես, այս բոպէիս էլ իմ աչքի առջեւն է այն փոքրիկ տետրակը, տըպած խոշոր տառերով: Նրա ճակատին նկարած էր մի մեծ խաչ, որի ներքեւ կային այս խօսքերը. «Խաչ օգնէ» : Մի քանի ամբողջ ամիսներ, երեսո խաչակնքելով կրկնում էի այդ երեք բառերը: Վարժապետս ասում էր, եթէ ամեն դասի սկզբում խաչից օգնութիւն չը խնդրես, ոչինչ չես կարող սովորել: Բայց երեւում էր, որ խաչն էլ խռովել էր իմ գլխին, նա ինձ խելք ու միտք տալու նպատակ չունէր . . .

Ես մինչեւ այսօր չեմ կարող հեռացնել այն ծանր եւ անախորժ տպաւորութիւնը, որ թողել է իմ վրայ այբ-բենը . . . նրա ամեն մի տառը, կարճես թէ ուզում էր վիշապի նման ինձ կուլ տալ . . . գիշերներն անգամ հանգիստ քուն չունէի . . . երազների մէջ նոյնքան տանջվում էի, որքան դպրոցում . . . Ինձ երեւում էր, որպէս թէ Նոն, մէյմունի նման առջեւս բրբրզած, իր զգուելի ուխտը ծռմուխով, ուզում էր վախեցնել ինձ . . . Ես, մի մեծ մողէս դարձած, վազում էր, որ

ծոցս մտնի . . . Ամենից աւելի ես ատում էի ճէշ,  
նա միշտ երեւում էր ինձ վիզը ծռած ուղտի  
պէս . . . ես շատ էի վախենում ուղտից: Բայց մի  
տառ, որին ես շատ սիրում էի, էր օ՞. ես նրան  
խիստ շուտ ճանաչեցի, որովհետեւ նա նման էր  
գեղեցիկ Սօնայի բուրակ աչքերին . . .

Նազելի՛ Սօնա, քո անունը յիշելու ժամա-  
նակ ես բողբոբ, բողբոբ մոռանում եմ, ինչ որ  
կրեցի այն գժողրի մէջ . . . դու էիր իմ մխիթա-  
բութիւնը . . . դու էիր քաղցրացնում իմ տխուր  
ժամերի դառնութիւնը . . .

Սօնան վարժապետիս աղջիկն էր: Ես իմ  
կեանքում չեմ տեսել մի այնպիսի բարի եւ ան-  
մեղ քնաւորութիւն: Պատահում էր, երբ վար-  
ժապետս ծեծում էր ինձ, Սօնան մի թաքուն  
տեղ նստած, լաց էր լինում: Խեղճ աղջիկ, ինչու  
էր լաց լինում նա:



Է.

ՄԻՐՈՑ ԱՌԱՋԻՆ ԶԳԱՑՄՈՒՆԻՔԸ

Վարժապետիս ընտանիքը կազմում էին երեք հոգի՝ կինը, որդին եւ փոքրիկ Սօնան:

Նրա կնոջը կոչում էին Գիւլ-ժհան, չքնայելով իր գեղեցիկ անուանը, որ նշանակում է աշխարհի վարդը, երէցկիներ աշխարհի ամենաայլանդակ արարածներից մէկն էր: Այսուամենայնիւ, տէր հայրը, եթէ չասենք սիրում էր, բայց բաւականին յարգում էր նրան, թէեւ պատահած ժամանակ մանր հայհոյանքներ տալիս էր, բայց շատ սակաւ էր պատահում, որ ծեծէր նրան: Դա ունէր իր առանձին պատճառները, որպէս մարգարէի առաջին երկրպագուն լինում է իր կինը, այսպէս էլ «աշխարհի վարդը» տէր հօր ամենամոլեռանդ պաշտողներիցն էր: Նա էր հռչակում կանանց հասարակութեան մէջ, թէ որպիսի հրաշալի ներգործութիւններ էին անում իր ամուսնի կախարդական թղթերը: Նա էր տարածում լուրեր, թէ այս ինչ եւ այն ինչ տիկիներ որպիսի բախտի հասաւ տէր հօր կախար-

գութիւնների շնորհիւ: Այսպիսով աւելանում էր վարժապետիս յաճախորդների թիւը:

Որդին—Ստեփանը—վարժապետիս երեխաների անդրանիկն էր. դա մի սիրուն տղայ էր, որ ամենեւին նման չէր մօրը: Միշտ լուսւ, միշտ մունջ, գունաթափ գէմքով եւ մարած աչքերով Ստեփանը մի ապուշ երեխայ էր: Չէր կարելի առանց խղճալու նայել նրա երկչոտ երեսին: Նրա հետ խօսելու ժամանակ ես միշտ նկատում էի, որ առանց պատճառի ժպտում էր, ծիծաղում էր, արձակում էր մի քանի անմիտ, անկապ խօսքեր եւ իսկոյն գժի նման փախչում էր, վախենալով, չիցէ թէ իրան ծեծեն: Խեղճը ցնորված էր: Երբեմն ամբողջ գիշերներ անցուցանում էր նա անհանգիստ զառանցութեան մէջ, շատ անգամ քնած տեղից վեր էր թռչում, եւ անգիտակցաբար գնում էր, ուր որ հանդիպում էր: Այս պատճառով նրան կապում էին: Հօր բոլոր կախարդական հնարները, որոնք ուրիշների վրայ հրաշալի կերպով ազդում էին, բոլորովին անզօր մնացին գեղեցիկ Ստեփանի առողջութիւնը վերականգնելու, խեղճը մնաց միշտ խելագար: Որքան ճիշտ էր, ես չր գիտեմ, միայն պատմում էին, թէ նրա թելագրութեան պատճառը եղել էր նոյն իսկ հայրը: Ստեփանը ինձ նման չար եւ անհանգիստ տղայ էր. մի օր հայրը բարկանալով նրա վրայ, կամեցել էր «խրատել» եւ այս պատճառով կախ էր տւել ջրհորի մէջ,—ասում էին, այն օրից խեղճ Ստեփանին պատահել էր սյգ գժբախտութիւնը: Պատմում էին, որ գեւերը այնտեղ զար-

կել էին Ստեփանին, որովհետեւ ջրհորը միշտ լիքն է լինում դեւերով: Բայց լինում էին օրեր, որ Ստեփանի խելքը գլխին էր գալիս, նա խիտ քաղցր եւ բարի երեխայ էր դառնում: մենք ամենքս ուրախանում էինք եւ սիրում էինք նրան:

Աղջիկը — Սօնան — նոյնպէս լուռ երեխայ էր, եւ չը նայելով իր փոքրիկ հասակին, կատարում էր տնային շատ գործեր: Սօնան կրում էր եղբոր հեզ, հանդարտ եւ մոյգ-երկնագոյն աչքերը, այն զանազանութեամբ միայն, որ քրոջ աչքերը աւելի պայծառ եւ կենդանի էին, մինչդեռ եղբորը՝ բոլորովին կորցրել էին իրանց կենդանի փայլը: Սօնայի ծամերը նոյնպէս աւելի մոյգ-գոյն ունէին, քան եղբոր շէկ, մետաքսանման մազերը, եւ աւելի խիտ էին, քան թէ նրանք: Զօրմանալին այն էր, որ այդ երկու երեխաներից ոչ մէկը նմանութիւն չուներ ոչ հօր հետ, որի կերպարանքի մէջ կային մի քանի որոշ մոնգոլական գծեր, եւ ոչ նման էին մօրը, որի դէմքը վախեցնելու չափ տգեղ էր:

Զընայելով, որ տէր Թօգիկը 700 ընտանիքից բաղկացած մի ամբողջ թաղի աւագ քահանան էր, չը նայելով, որ բացի դրանից նա միջակաւոր առաջնորդի գործակալի պաշտօն էր կատարում, եւ այդ բոլորից առատ արգիւնք էր ստանում (էլ չեմ խօսում դպրոցի մասին) — այնուամենայնիւ, նրա ապրուստը, նրա կեցութիւնը խիտ չքաւոր էր: Մի քանի մթին սենեակներ, ձեփած սպիտակ կաւով, նեղ բակ ցածրիկ չըջապարիսպով, — այդ բոլորը կացուցանում էին

Նրա անշուք բնակարանը, ուր տիրում էր մշտական փոշի, աղտ, խորին տխրութեան հետ: Գրացիները տէր հօր այսպիսի չքաւոր կեցութիւնը վերաբերում էին նրա անսխառասիրութեանը եւ նրա՝ աշխարհի վայելչութիւններին չը ցանկացող՝ բնաւորութեանը: Կա մասամբ իրաւացի կը լինէր, եթէ ազահներն էլ այսպիսի յատկութիւններ չունենային: Ժլատները նոյնպէս անապատի մէջ են ապրում, որպէս տէր Թօգիկը իր մերկ ճգնարանում: Գէրվիշութիւնը առհասարակ գրաւիչ է լինում եւ հրապուրում է ռամկի մնահաւատութիւնը, թէ եւ գէրվիշի բրբրված վերարկուի տակ շատ անգամ ծածկվում է մի շահասէր եւ հարստահարիչ ոգի . . .

Վերջին տարիներում, մայրս չը կարողանալով վարժապետի ամսականը վճարել, ինձ բոլորովին ծանրաբեռնեցին տնային գործերով, այնպէս որ, ժամանակ չէի գտնում դասերս պատրաստելու: Ամբողջ ցերեկը հոգիս դուրս էր գալիս կամ երէցկնոջ, կամ տէր հօր պատուէրները կատարելով: Մնում էր պարապվել միայն գիշերով, իսկ այդ եւս շատ անգամ չէր յաջողվում, որովհետեւ ճրագ եւ լոյս չունենալու համար, միշտ ստիպված էինք քնել շատ վաղ: Քեռուս տան հետ աւելի յարաբերութիւններ չունէինք. մայրս իր եղբայրներից ոչինչ օժանդակութիւն չէր ստանում, եւ եթէ հնար լինէր, նա կը թողնէր այն խեղդված խրճիթը, որ քեռիներս շնորհել էին մեզ բնակութեան համար: Մեր յոյսը մնացել էր մեր բարերարի՝ որսորդ Ալօի վրայ: Նա էլ

գայրոցի վերաբերութեամբ ինձ չէր օգնում, եւ մինչեւ անգամ խիստ անախորժ էր թւում նրան, որ ես այնտեղ ուսում էի առնումս Ես դեռ չեմ մտազցել այն խօսքը, որ մի օր հայրական բարեսրտութեամբ որսորդը սասց ինձ.

— Պարհատ, դուրս եկ այդ գոգոքից, դու թուրովին կը բթանաս այնտեղ:

— Դուրս գամ ինչ անեմ, ինչ սովորեմ, հարցրի ես:

— Մտիր քեռիներիդ արհեստանոցը, զէնք շինել սովորիր, պատասխանեց նա:

— Միթէ ուսումը վատ է:

— Այդ ուսում չէ, որ դու սովորում ես:

Յետոյ նա սկսում էր երկար ու երկար բացատրել ինձ, թէ ինչ բան է ճշմարիտ ուսումը, բայց ես այն ժամանակ չէի հասկանում, միայն զարմանում էի, թէ ինչպէս այդ կոշտ, կոպիտ մարդը, որ անդադար գազանների հետ պատերազմելով, գազանի բնաւորութիւն էր ստացել, — այնքան լաւ, այնքան հիմնաւոր կերպով խօսում էր ուսման վրայ . . .

Որսորդը շատ մօտ բարեկամ էր իմ քեռիներից մէկի հետ, որին կոչում էին Մինաս. դա թուրովին ձրի շինում էր, նորոգում էր որսորդի զէնքերը, երբ նրանց որ եւ իցէ մասը խանգարված էր լինումս Այդ Մինասի հետ խօսել էր որսորդը, համոզել էր նրան, որ ինձ վեր առնեն իրանց արհեստանոցը որպէս աշակերտ: Ես սիրում էի այդ արհեստը, իմ սիրտը գողգողում էր ուրախութիւնից, երբ քեռիներխ արհեստա-

նոցն էի մտնում, եւ ամբողջ ժամեր նստած այն տեղ, խորին հոգեզմայլութեամբ նայում էի գեղեցիկ, փայլուն զէնքերին, որ դուրս էին գալիս քեռիներիս ճարտար ձեռքից: Բայց մայրս սատանայի նման հակառակ եղաւ եւ չը թողեց, որ ես այդ արհեստը սովորէի: Նա ատելով քեռիներիս, ստում էր եւ նրանց արհեստը: Նա կրկնում էր մի եւ նոյն խօսքերը, որ ես շատ անգամ լսել էի վարժապետիցս, թէ բոլոր զինագործները մեղաւոր մարդիկ են, բոլորն էլ դժոգքը կը գնան:

— Ի՞նչու, միանգամ հարցրի ես:

— Նրա համար որ, թուր, սուր, հրացաններ են պատրաստում եւ այդ զէնքերով մարդիկ միմեանց կոտորում են, պատասխանեց նա:

Թէ այսպէս, թէ այնպէս քեռիներիս արհեստանոցը մտնելը ինձ չը յաջողվեցաւ. ես դարձեալ մնացի այն «գժոգքի» մէջ, որպէս կոչում էր նրան որսերդը:

Բայց նոյն «գժոգքի» մէջ ես ունէի մի մխիթարիչ հրեշտակ, որ թեթեւացնում էր իմ կրած վշտերի դառնութիւնը: Պա Սօնան էր — վարժապետիս աղջիկը: Թէ ինչ զգացմունք էր այն, որ կապել էր իմ սիրտը այդ նազելի արարածի հետ, — ճշմարիտ, ես էլ չը գիտէի եւ մինչեւ այսօր չեմ կարողացել հասկանալ:

Սօնան ինձ շատ էր օգնում, առաւել այն աշխատութիւնների մէջ, որ ես պէտք է կատարէի վարժապետիս տնտեսութեան մէջ: Երբ միասին գնում էինք այգին կովերի համար խոտ քաղելու, նա ասում էր ինձ.

— Ճարհատ, դու նստիր, դասդ սերտիր, ես կը քաղեմ խտոր:

— Դու մենակ չես կարող բոլորը քաղել, դու կը յոգնես, ասում էի նրան:

Նա ժպտում էր եւ իր հրեշտակային անմեղ րարեսրտութեամբ ասում էր ինձ.

— Ձէ, կարող եմ, ես չեմ յոգնի: Դու սովորիր, որ հայրս չը ծեծէ քեզ:

Թէեւ Սօնան շատ էր ցանկանում միշտ օգնել ինձ, որ ես ժամանակ գտնէի դասերս պատրաստելու, բայց չէր կարողանում, որովհետեւ, վերջին օրերում նրան արգելեցին մօտենալ ինձ. եւ ես այնուհետեւ միայնակ էի գնում այգուց խոտ քաղելու, եւ միշտ տխուր էի լինում, երբ նա ինձ հետ չէր:

Այսպէս անցուցի ես եօթն բոլորակ տարիներ. — մի խորհրդաւոր թիւ, որի մէջ թագնւում են իմ մանկութեան սկզբնական տանջանքները . . . Այս եօթն տարվայ ընթացքում ես անցայ գիտութեան բոլոր աստիճանները, այսինքն, սովորեցայ այնքան, որքան կարող էր սովորել այն ժամանակ մի բարձր ուսում ստացող աշակերտ. նս կարգացել էի բոլոր գրքերը, որ յայտնի էին մեր երկրում, — Սաղմոս, Ժամագիրք, Աւետարան, Հին-Վտակարսն, Նարեկ եւ մինչեւ անգամ այն ահագին գիրքը, որ ես փոքր հասակումս դըժուարութեամբ կարողանում էի վեր առնել: Նս կարողանում էի գրել եւ գրածս կարգալ, ես գիտէի եւ մի քանի կանոններ հայոց հին լեզուի քերականութիւնից: Բայց մի բան, որ չը կարողացայ

ձեռք բերել ես, — դա էր վարժապետիս խորին գիտութիւնը ոգիներէ եւ կախարդութիւններէ մասին, այդ գիտութիւնը վարժապետս պահում էր իր մօտ որպէս մի գաղտնիք, որին մասնակից լինելու համար պէտք էր տասն — քսան տարի ծառայել նրան:

Նրա դպրոցում աշակերտները երկար տարիներով անշարժ մնում եւ ծերանում էին: Մօրուքաւոր, անմօրուք, չափահաս, անչափահաս, երեխայ եւ երիտասարդ, բոլորը խառնված էին միմեանց: Տասն տարեկան էի ես, երբ մտայ այդ դպրոցը. այն, օրից անցել էր աւելի քան տասն եւ երկու տարի. դա փոքր ժամանակ չէ. այժմ ես բոլորովին հասուն պատանի էի: Բայց չը նայելով իմ հասակին, վարժապետս վարվում էր ինձ հետ, որպէս մի երեխայի հետ. — դարձեալ նոյն ֆւլթիմն, դարձեալ նոյն «իւրաքէ» հարւածները ասիերիս մէջ, դարձեալ նոյն մերկ ոտներով չօրելը աղիւտի կտորտանքի վրայ, . . . մի խօսքով, պատիժների թւից ոչինչ չէր պակասել: Բայց զարմանալին այն էր, որ ես այն աստիճան սովորած էի այդ պատիժներին, այն աստիճան մեռած էր իմ մէջ պատուի, հպարտութեան եւ անձնասիրութեան զգացմունքը, որ ես անտրտունջ կերպով համբերում էի բոլորին, որպէս էշը, եզր, ձին համբերում են իրանց տիրոջ անգութ հարուածներին: Բայց միանգամ ընդհակառակն պատահեց:

Մեծ զատկի տօնն էր. աշակերտներից ոչ մէկը չըկարողացաւ պատրաստել «Բանիէլի գլխքը»

եկեղեցում կարդալու համար: Այդ գիրքը կարգում էին սովորաբար հարուստների որդիքը եւ նրանց ծնողները մի նշանակեալ նուէր էին տալիս եկեղեցուն: Իսկ այն տօնին վարժապետը իր աշակերտների յառաջագիմութիւնը ժողովրդին ցոյց տալու համար, պահանջում էր, որ այդ գիրքը կարդային անգիր: Բայց հարուստների որդիների մէջ որտեղից էր այնքան ընդունակութիւն, որ կարողանային ամբողջ «Վանիէլին» անգիր պատրաստել: Մեծ պասի սկզբից նրանք ամեն օր սերտում էին ու սերտում, բայց հէնց որ մօտեցաւ զատիկը, վարժապետը որից որ հարցրեց, չը կարողացաւ կարդալ: Եւ ուրիշ ճար չը կար. վարժապետը տոխալած, ինձ յանձնեց պատրաստել «Վանիէլին»: Այն օրը մեծ պասի վերջին աւագ ուրբաթ օրն էր—Յիսուս Քրիստոսի խաչելութեան եւ չարչարանքի օրը . . . մի այնքան չարչարանք պէտք էր մի օրվայ մէջ «Վանիէլին» պատրաստելու համար: Աւագ շաբթի կէսօրին վարժապետը հարցրեց, ես կարողացայ կարգալ երեք քառօրդ մասը միայն: Գուցէ մինչեւ երեկոյեան պատարագի սկսիլը, ես կարող կը լինէի մնացածն էլ սերտել, բայց նա համբերել չը կարողացաւ, սաստիկ բարկացաւ եւ նախատեց ինձ ամենակեղտոտ հայհոյանքներով: Ես էլ համբերել չը կարողացայ, պատասխանեցի նրան մի քանի կոպտութիւններով.— «Սատանայի լսկոտ, ես քո հէրը կանիծեմ» . . . գոռաց նա կատաղելով, եւ որովհետեւ աւելի ժամանակ չունէր, բանտարկեց ինձ ախոռատան մէջ, եւ հրամայեց

այնտեղ փակված պահել, մինչեւ ինքը ճրագա-  
լոյցի երեկոյեան պատարագը կը վերջացնէր, եւ  
եկեղեցուց վերագառնալով, իմ հոգին կառնէր . . .

Աչինչ ինձ այնքան չէր տանջում, որքան  
այն զգացմունքը, որ ամբողջ յիսուն օր ծով  
ու պաս էի պահել, առաւօտեան, կէսօրին եւ  
երեկոյեան ժամ էի գնացել, աղօթք էի արել,  
իսկ այս գիշեր, որ զատկի ճրագալոյցի գիշերն  
էր, նոյնպէս պիտի եկեղեցի գնայի, պատարագ  
տեսնէի եւ «Սուրբ-Սուրբը» երգելու ժամանակ  
պէտք է մօրս տուած կարմիր ձուն տաճարին  
ցոյց տայի, ու այնուհետեւ պասս բաց անէի,—  
այս բոլոր ջերմեւտոնք ցանկութիւններս անկա-  
տար մնացին, բոլորից զրկվեցայ . . . Կրօնական  
զգացմունքը վառ էր իմ մէջ, իմ հոգին լի էր  
ջերմ հաւատքով։ Եկեղեցու ամեն մի ծէսը, ամեն  
մի արարողութիւնը, ամեն մի պաշտամունքը ինձ  
համար սրբազան նշանակութիւն ունէր, եւ այս  
պատճառով, մեծ ցաւ էի զգում, որ այն օր զուրկ  
մնացի եկեղեցուց։ Միւս կողմից, ինձ տանջում  
էր մի սարսափելի նախանձ. ես մեր դպրոցի  
առաջին աշակերտն էի, իսկ ինձանից հարիւր  
անգամ ստոր ընկերներս այն գիշիր պէտք է  
եկեղեցում «փոխ» ասէին, «գիրք» կարգային,  
շարականներ երգէին եւ իրանց ծնողներին ու-  
րախացնէին,— իսկ իմ խեղճ մայրը պէտք է իր  
որդու ձայնը չը լսէր . . . Այս բոլոր մտածութիւն-  
ները այն աստիճան պաշարել էին ինձ, որ ես  
բոլորովին մոռացել էի վարժապետիս սպառնալի  
պատիժը, որ սպասում էր ինձ մի քանի ժամից

յետոյ: Զարմանալի՛ հակասութիւն: Նա պիտի պատժէր ինձ, նա պիտի բարբարոսի նման նահատակէր ինձ, այն խօսքերից յետոյ, որ այսօր Աստուծոյ սուրբ սեղանից, իբրեւ քահանայ, պիտի աւետէր աշխարհին. «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Իսկ իմ բանտը . . . ես իմ անձնամտաւորութեան մէջ դեռ նրան ուշագրութեան չէի առել: Զը նայելով, որ ապրիլ ամիսն էր, բայց շոգերը սկսվել էին արդէն: Քոմբ, ուր բանտարկուած էի ես, լիքն էր զանազան միջատներով, որոնք իրանց սուր խայթոցները խրում ու խրում էին մարմնիս մէջ: Մի կողմից անասունների հոտած աղբի արտաշնչութիւնը խեղդում էր ինձ, միւս կողմից, սիրտս թուլանում էր քաղցածութիւնից: Ազդումս Աստուած, ինչ անէի, փախչել չէի կարող. դուռը ամուր կերպով փակած էր. իսկ համբերել այն տարտարոսի մէջ, — մահուան չափ սպանիչ էր . . .

Սրերը վաղուց արդէն մտել էր, խաւարը աւելի եւ աւելի թանձրանում էր գոմի մէջ: Ես բոլորովին կատաղեցայ, ինձ տիրեց մի տեսակ խելագարութիւն. երկաթէ վանդակի մէջ նոր բռնված գազանի նման, ես այս կողմ եւ այն կողմ էի թռչում, աշխտտում էի մատներով քանդել պատերը, խորտակել սիւները, ծակել առաստաղը, կոտրել դուռը, լայնացնել նեղ լուսամուտները, որ մի հնար գտնեմ ազատվելու: Այդ կռիւր տեւեց մի քանի ժամ, մինչեւ ես բոլորո-


վին յոգնեցայ, թուլացայ եւ վէր ընկայ յատակի  
վրայ: Այդ միջոցին ինձ տիրեց երեւակայութեան  
բորբորումը եւ հրէշաւոր ցնորքների խառնա-  
վնթորութիւնը: Տատիս հեքիաթների մէջ լսած  
եօթն գլխանի վիշապները, եղջիւրաւոր գեւերը,  
պոչաւոր սատանաները, ահագին խումբերով գա-  
լիս ու գնում էին աչքիս առջեւ: Մտածում էի,  
ահա խաւարը բոլորովին կը պատէ, եւ դրանք  
կը խեղդեն ինձ . . .

Թէ քանի՜ ժամ ես մնացի այդ տենդային  
դրութեան մէջ, — չը գիտեմ. միայն լսեցի, յան-  
կարծ դուռը ճռաց: Ես ամբողջ մարմնով սար-  
սափեցայ: Բայց սոսկումը անցաւ շուտով: Տես-  
նում եմ, ներս է մտնում Սօհան, մի այցելու  
հրեշտակի նման, ձեռքում բռնած իւզային ճը-  
րագը: Նա վեր բարձրացրեց ինձ ընկած տեղիցս,  
եւ նրա քնքոյշ ձայնը բոլորովին սթափեց ինձ:

— Փախիր, Փարհատ, ասաց նա, — փախիր,  
բանի հայրս տանը չէ . . .

Ես կամեցայ գրկել, համբուրել իմ ազատ-  
վին, բայց նա ոգիների նման անբեւոյթ եղաւ:

Ես դուրս եկայ իմ բանտից, ես թողեցի  
դպրոցը — իմ մանկութեան, իմ տանջանքների  
«դժոխքը» — եւ միւսանգամ չը վերադարձայ այն-  
տեղ . . .



## Հ Ի Ն Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր

Աղատովելով իմ բանտից, ես վճռեցի միւս անգամ չը վերագառնալ այնտեղ, եւ ոչ մեր տունը գնացի, որովհետեւ գիտէի, որ մայրս առաւօտեան կրկին ինձ կը տանէր տէրտէրի մօտ, եւ յանձնելով նրան, կասէր.— «Միսը քեզ, ոսկորն ինձ» . . . Բայց ես այժմ հասկացել էի այդ սարսափելի խօսքի նշանակութիւնը, որ մայրս առաջին անգամ ինձ դպրոց տալու ժամանակ տեսց վարժապետիս:

Գիշեր էր, երբ ես դուրս եկայ բանտից, չը գիտէի, թէ ուր գնամ: Յուսահատութիւնը մինչ այն աստիճան տիրել էր ինձ, որ մտածում էի. «էլ ուրիշ ճար չը կայ, գնամ գետը ընկնեմ, գուցէ աղատվեմ» . . .

Խորին վրդովմունքի մէջ ես անցայ մեր ամբողջ թաղը, փողոցների մէջ ոչ ոք չէր երեւում: գէպի ամեն կողմ տիրում էր խուլ լռութիւն: Ամեն ընտանիք, եկեղեցուց տուն դառնալով, ուրախ, զուարթ, բոլորել էր զատկական սեղանի

շուրջը եւ ընթրիք էր վայելում: Բայց ես, որպէս փախստական, որպէս մի թշուառ դատապարտեալ, տեղ եւ օթեւան չունէի այս գիշեր: Տներից բուրում էր խնկի եւ կնդրուկի անուշահոտութիւնը. ամբողջ օդը լցված էր այդ սրբազան բուրմունքով: Երբեմն իմ ականջին զարկում էին ուրախ բացականչութիւններ. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» . . . Այո, յարեալ սիրոյ եւ խաղաղութեան Աստուածը. . . Բայց որտեղ էր սէրը, որտեղ էր խաղաղութիւնը, որտեղ էր եղբայրութիւնը, — ես իմ կեանքի մէջ այդ բաները ոչ մի տեղ չէի տեսել . . .

Իմ խռովութիւնը այժմ հասնում էր մինչեւ խելագարութեան. ես այժմ ոչինչ չէի լուսւմ, ոչինչ չէի զգում: Ինձ մինչեւ անգամ անհասկանալի էին բազմաթիւ տաղերգութիւնները, որ հնչում էին այս եւ այն տան լուսամուտներից: Կարծես, ամբողջ աշխարհը խլացել էր ինձ համար: Թէ ինչպէս յայտնվեցայ գետի ափի մօտ, — մինչեւ այսօր չը գիտեմ, միայն յիշում եմ, երբ ես պատրաստվում էի ընկնել գետի գարնան հեղեղներից յորդացած ալիքների մէջ, ինձ կանգնեցրեց մի ձայն.

— Ե՛յ, ի՞նչ ես անում:

Մի կողմից գիշերային մթութիւնը, միւս կողմից իմ խռովութիւնը, թոյլ չը տուին խկոյն ճանաչել նրան, բայց ինձ երեւաց, որ ձայնը բոլորովին անձանօթ չէր:

— Ֆարհատ, չե՞ս ճանաչում ինձ . . .

— Ա՛խ, Կարօ, սիրելի՛ ընկեր, մի՛թէ դու

ես . . . Չէ, չէ, դու Կարօն չես . . . — Որտեղից  
եկար . . . ո՛ւր էիր . . . Քեզ համար ասում էին . . .

Այսպէս, իմ շփոթութեան մէջ, սկսեցի  
հարցնել հին բարեկամիս, որ գրկելով ինձ, խուլ  
ձայնով պատասխանեց.

— Ես եմ . . . ես Կարօն եմ . . .

Իմ ուրախութեանը չափ չը կար. ես երե-  
խայի նման քարշ ընկայ նրա պարանոցից, համ-  
բուրում էի կարօտալի աչքերը, համբուրում էի  
երեսը, ձեռքերը եւ երկար չէի բաժանվում նը-  
բանից: Ես պատմեցի այն աւուր անցքը, իմ  
բանտարկութիւնը, իմ փախուստը եւ յայտնեցի,  
թէ որպիսի դիտաւորութիւն բերեց ինձ գետի  
ափի մօտ: Նա սկսեց ծիծաղել իմ միամտու-  
թեան վրայ, ասելով.

— Խելքդ կորցրել ես, ի՞նչ է:

— Ապա ի՞նչ անեմ, հարցրի ես:

— Գցիր գետը այդ սատանայի կըծիկը: —  
Պրծաւ, գնաց . . .

Նա ցոյց տուեց Գանիէլի գրքի վրայ, որը,  
չը գիտեմ, ինչպէս էր պատահել, առել էի ինձ  
հետ: Ես առանց մտածելու, գիրքը նետեցի գե-  
տի մէջ, ինձ այնպէս երեւաց, թէ նրա հետ  
սրտիս բոլոր տանջանքները խորասուզիեցան սա-  
ռքն ալիքների մէջ . . .

— Դէ, շատ լաւ, ասաց նա: — Հիմա գնանք:

Ես հետեւեցի նրան, ամենեւին չը հարցնե-  
լով, թէ ուր է տանում ինձ:

Լուսնի եղծիւրը երեւեցաւ հօրիզոնի ծայ-  
րից եւ գիշերի թանձր խաւարը փոքր ինչ պարզ-

վեցաւ: Օգը իր հովասուն սառնութեամբ բաւականին կաղզուրեց իմ բորբոքված գլուխը: Ես սկսեցի ազատ շունչ քաշել: Այժմ ինձ այնքան լաւ էի զգում, կարծես, ոչինչ չէր պատահել ինձ հետ:

Կարօն տասն եւ երկու տարի առաջ թողեց մեր դպրոցը եւ այնուհետեւ անյայտացաւ . . . Նա դուրս եկաւ մեր դպրոցից, առանց մի այբի կտոր անգամ իր հետ տանելու: Իսկ այդ տասն եւ երկու տարվայ ընթացքում իբրև փոխվել էր նա: Լղարիկ, փոքրիկ, վատառուջ Կարօն այժմ աճել, հասունացել, հսկայական ձեւ էր ստացել: Նրա համարձակ ընթացքը, յանդուգն կերպարանքը արտայայտում էին վեհութիւն, ուժ եւ անձնապատահութիւն: Կարօն չորս տարով միայն մեծ էր ինձանից, բայց ես, թէեւ բաւական բարձր էի հասակով, դարձեալ իմ գլուխը հազիւ հասնում էր նրա ուսերին: Իմ երեսի վրայ մազերի հետքեր անգամ չը կային, իսկ նրա վերելի շրթունքը դեռ նոր սկսել էր սեւին տալ թուխ ընչացքով: Արեւից այրված երեսը ստացել էր մոյգ, դեղնապղնձի գոյն, բայց սեւ այբերը դեռ վառվում էին նոյն բոցով, որպէս տեսել էի առաջ, ինձ երեւում էր, թէ այն գեղեցիկ այբերը աւելի խոշորացել էին, եւ կարծես, մի կիսավայրենի բնաւորութիւն էին ստացել:

Նանապարհին նա խիստ սակաւ խօսեց ինձ հետ. միանգամ միայն հարցրեց, «Մի՞թէ դեռ կենդանի է այն հրէշը» . . . Այդ հարցմունքը մեր վարժապետի, տէր Թօղիկի, մասին էր: Երբ ես

սկսեցին նկարագրել դպրոցի դրութիւնը, նա ինձ չէր լսում, իմ պատմութիւնը նրան չէր հետաքրքրում, կարծես, նա բոլորը գիտէր: Եւ իրաւ, ինչ էր փոխուել տասն եւ երկու տարւայ ընթացքում, որ նրան հետաքրքիր լինէր, — բոլորը նոյն էր . . .

Ինձ հանդիպելը, որ սկզբում այնքան ուրախութիւն ազդեց Կարօի մէջ, երեւում էր, յետոյ պատճառ տուեց խորին տխրութեան: Նրա մտայոյզ լութիւնն ինձ առիթ էր տալիս այսպէս կարծել: Բայց ո՛չ, ես սխալվում էի, Կարօն նոյն ժամուն բոլորովին ուրիշ բանի վրայ էր մտածում եւ իմ ներկայութիւնը, կարծես թէ, նրան նկատելի չէր: Նա մոռացաւ ինձ . . . Ինձ խիստ անախօրժ թւեց այդ սառնասրտութիւնը նրա կողմից, եւ ես չը կարողանալով համբերել, հարցրի.

— Ո՞ր ենք գնում:

— Ա՛յո, մոռացայ ասել . . . քեզ հիմա կը տանեմ մի տեղ, ուր կը տեսնես քո երկու հին ընկերներին:— Դու խօ չես մոռացել Ասլանին եւ Սագօին:

— Ասլանին եւ Սագօին . . . բացականչեցի ես, չը կարողանալով զսպել իմ ուրախութիւնը, որ այնքան օտարտի էր երեւում, համեմատելով իմ ուղեկցի սառնասրտութեան հետ:— Ո՞րտեղ են նրանք, շուտով կը տեսնեմ:

— Շուտով, պատասխանեց նա, շարունակելով իր ընթացքը:

Գիշերը լուսնկայ էր: Ես պարզ որոշում էի շրջապատող առարկաները, քաղաքը բաւական

Հեռու մնացել էր մեր ետեւից: Խոսքովիոյ այգիները, գիշերային մառախուղի մէջ, երեւում էին ծածկված արծաթի քողով, որպէս թէ մրախում էին խորին անշարժութեամբ: Խիստ ախորժ կերպով լսելի էր լինում առուակների խոխոջմունքը, որոնք հոսում էին կանաչ արտերի մօտով: Օդը, տոգորված բուսականների անուշահոտութեամբ, ծաւալվում էր իր թարմ, խոնաւ արտաշնչութեան մէջ:

Մենք շարունակում էինք ճանապարհը մի եւ նոյն ուղղութեամբ: Ինձ տակաւին յայտնի չէր, թէ ուր էինք գնում: Յանկարծ կարօն ընդհատեց մեր մէջ տիրող լռութիւնը եւ դարձաւ դէպի ինձ այս խօսքերով.

— Փարհատ, գիտես ինչ կայ, ես չէի ցանկանայ, որ իմ ծանօթներից մէկը տեսնէր ինձ, բայց դէպքը այնպէս բերեց, որ մենք հանդիպեցինք մէկմէկու. ես յուսով եմ, որ մեր հանդիպումը կը մնայ որպէս գաղտնիք:

— Ես չի՛ պիտի գիտենամ պատճառը:

— Այժմ ոչ, յետոյ ինքզ կը հասկանաս . . .  
մի քանի օրից յետոյ . . .

— Ես Չարբարիայի նման մուշկ կը մնամ, երբ այդ ցանկանում ես դու:

— Հա, այդպէս, ինձ հարկաւոր է առ ժամանակ ծածուկ մնալ . . .

Նա կրկին խորատուգլեցաւ իր մտածութիւնների մէջ:

Կարօի զգուշացուցիչ պատուէրը չափազանց զարմացրեց ինձ: Մի մարդ, որ ամբողջ տասն եւ

երկու տարի հեռացել էր հայրենի երկրից, որին ամենքը կորած էին համարում, որը այժմ մի հրաշքով կրկին յայտնվել էր, ցանկանում էր գարձեալ ծածուկ մնալ, ցանկանում էր իր ծանօթներին, բարեկամներին չը հանդիպել: Ի՞նչ էր գաղտնիքը, — այս հարցը սկսեց տանջել իմ միտքը:

Անցնելով աւելի քան կէս մղոն ճանապարհ, անապատի միջով, մենք հասանք այն տեղը, ուր անյիշելի ժամանակներից մնացել էին հին աւերակներ, որոնց մասին տատա պատմել էր ինձ այնքան շատ զարմանալի գրոյցներ: Փլատակների մէջ մի մինարէթ միայն մնացել էր ամբողջ եւ լուսնեակի լուսով նա աւելի գեղեցիկ էր, քան թէ ցերեկով: Նրա կապտագոյն մօզտիկները այժմ փայլում էին կախարդիչ հրապոյրներով: Ենձ երեւում էր, որ այդ մինարէթը, որպէս մի վիթխարի հսկայ, փառաւոր կերպով վեր բարձրացած փլատակների միջից, լի ռխակալութեամբ՝ սպանում էր ժամանակներին. «Վուք ոչնչացրիք իմ շրջակայքում բոլորը, ինչ որ ստեղծել էր արհեսար եւ ճարտարութիւնը, բայց ես կը մնամ, դեռ երկար կը մնամ եւ կը պատերազմեմ ձեզ հետ» . . .

Բայց ոչ, այսպիսի մտածութիւններ չէին զբաղեցնում իմ միտքը . . . այլ այն բոպէում, երբ հասանք աւերակների մօտ, ինձ տիրեց մի սարսափելի խռովութիւն: Երեխայութիւնից լսածներս այն հին, խորհրդաւոր աւերակների մասին, մինչ այն աստիճան գրգռել էին իմ սնահաւա-

տութիւնը, որ ես լոյս-ցերեկով երբէք չէի համարձակվում մօտենալ նրանց, իսկ այժմ, գիշերով, — դա զարհուրելի յանդգնութիւն էր: Այդ պատճառով ես իմ մտքում խիստ դժգոհ մընացի Կարօից, երբ նկատեցի, որ ինձ այնտեղ է տանում:

Մօտենալով մինարէթին, Կարօն շրւացրեց: Մինարէթի միջից պատասխանեցին նոյն զիլ եւ ձգական ձայնով: Ես խորին անխտաճութեամբ ոտք կոխեցի նրա շէմքի վրայ, երբ Կարօն հրաւիրեց ներս մտնել:

Մինարէթի ներսը լուսաւորված էր փայտակոյտ խարոյկով, որ վառվում էր յատակի մէջտեղում, տարածելով իր կարմիր-ծիրանի լոյսը խուլ գմբէթների մէջ: Կրակի մօտ երկու հոգի միս էին խօրովում, որ շարած էր հրացանի սումբաների վրայ. նրանցից ոչ այնքան հեռու գրած էր հաց եւ գինի: Երեք հոգի եւս, մի կողմ քաշված, պառկած էին մերկ գետնի վրայ: Տեսնելով Կարօին, նրանք մօտեցան, եւ հեռանալով գէպի մինարէթի մթին կողմը, սկսեցին անլսելի ձայնով խօսել: Այդ տեւեց աւելի քան տասն բողէ: Ես մնացի աննկատելի. ոչ որ ինձ վրայ ուշադրութիւն չէր դարձնում: Այդ բաւական վիրաւորեց իմ անձնասիրութիւնը: Ես ոչինչ չը հասկացայ նրանց խօսակցութիւնից, միայն ինձ երեւաց, որ Կարօի հաղորդածը շատ ուրախալի պէտք է չը լինէր իմ ընկերներին, որովհետեւ իսկոյն նկատեցի նրանց գէմքի վրայ մի խորհրդաւոր տխրութիւն: Ես կարծում էի, թէ խօսակ-

ցութիւնը իմ մասին էր:

Երբ վերջացրին, նրանցից գլորիկ հասակով, արագաշարժ մէկը դարձաւ դէպի ինձ, եւ շիւժաւումուն աչքերը ուղղելով իմ երեսին, ասաց.

— Օ— հօ . . . դու սրտեղից դուրս ընկար:

Ինձ խիստ անախորժ երեւաց այդ կուպիտ հարցմունքը եւ ես վրդովմունքից այնքան շփոթվեցայ, որ ոչինչ չը գտայ պատասխանելու: Կարօն, կարծես, այժմ մտաբերեց ինձ եւ իմ փոխարէն պատասխանեց.

— Չես ճանաչում, Սագօ: Յետոյ դառնալով դէպի միւսներն ասաց.— Ա՛խ, ես մոռացայ ներկայացնել, տեսէք, ի՞նչ լաւ հիւր եմ բերել ձեզ համար:

Նա ցոյց տուեց իմ վրայ եւ նրա խօսքերից երեւաց, որ գաղտնի խօսակցութիւնը իմ մասին էր:

— Ես չեմ աօրի թէ ով է, շարունակեց Կարօն.— Տեսնեմ, կը ճանաչէք:

— Ես նրան ձրի միջում կը ճանաչէի, խօսեց դարձեալ շիւ աչքերով պատանին, մօտենալով ինձ.— Փարհատը չէ:— Բո տունը չը քանդվի, Փարհատ, ի՞նչքան փոխվել ես դու, ի՞նչ լաւ տղայ ես դարձել:

Այս լսելով, միւս ընկերը, որ հետաքրքրութեամբ նստում էր իմ վրայ, գրկեց ինձ, եւ ուրախանալով, ասաց.

— Ա՛խ, Փարհատն է, ի՞նչպէս չը ճանաչեցի ես:

Կարօն ինձ ճանապարհին յայտնել էր, թէ

ես կը տեսնեմ իմ երկու ընկերներին՝ Ասլանին եւ Սագօին, այդ պատճառով, դժուար չէր ձանաչել, որ ինձ այնքան սիրով գրկող պատանին Ասլանն էր, իսկ միւս շիւ աչքերովը—Սագօն։ Երկուսն էլ իմ հին աշակերտակիցներն էին, որոնք փախան մեր դպրոցից ճիշտ այն ժամանակ, երբ Կարօն անյայտացաւ։ Բայց մի բան, որ դժուարացրեց սկզբից ձանաչել նրանց, այն էր, որ թէ Կարօն եւ թէ միւս ընկերներս, բոլորն էլ հագուստները փախած էին. նրանք չէին հագնւած այն ձեւով, որպէս անհասարակ հագնւում են Պարսկաստանի հայերը, այլ կրում էին մի տեսակ զգեստ, որ յատուկ է Մշու կամ Բաղէշի կողմերի լեռնաբնակ հայերին, որը շատ չէ զանազանւում քորդ էշիրաթների հագուստից։

Սագօի իսկական անունը Սարգիս էր, բացի դրանից, մեր դպրոցում նրան կոչում էին «սատանայի եղունգ», այդ անունը ստացել էր նա իր չափազանց խորամանկութեան, ճարպկութիւնների եւ անհանգիստ բնաւորութեան պատճառով։

Ինձ երեւաց, թէ այժմ նա աւելի փոքրացել էր եւ համարեա գունդի ձեւ էր ստացել, թէեւ առաջ նոյնպէս բաւական կարճահասակ սղայ էր։ Նրա դէմքը բոլորովին կատուի կերպարանք էր կրում. անփոփոխ էին մնացել միայն շիւ աչքերը, այն վաղեմի դիւական աչքերը, որ միշտ արտայայտում էին եռանդ եւ մի առանձին կենդանութիւն։

Ասլանը շատ չէր փոխվել. նոյն խաղաղ

գէմքը իր բոլոր քնքշութեամբ, նոյն երկնագոյն հեղ աչքերը, հովանաւորած խիտ թերթերունքներով, նոյն անմեղ ժպիտը, — բոլորը նոյնն էր: Միայն նրա շէկ մազերը այժմ աւելի մայգ գոյն էին ստացել եւ երեսի ձերմակ կաշին կորցրել էր իր վաղեմի սպիտակութիւնը: Մարմնի կազմը ւաճքը մնացել էր նոյնպէս նուրբ, որպէս առաջ, միայն այժմ փոքր ինչ կոլտլիել էր նա եւ հասակը աւելի գեղեցիկ եւ վայելուչ ձեւ էր ստացել:

Ասլանը միակ աշակերտն էր, որին ես շատ էի սիրում. նա միշտ բարի էր դէպի ինձ եւ քիչ չէր պատահում, որ ամբողջ ժամերով պարապուում էր ինձ հետ. նա մեր դպրոցի ընդունակ եւ յառաջագէմ աշակերտներէից մէկն էր: Եւ նա պատճառով նա թողեց մեր դպրոցը, — ես հիմա էլ չը գիտեմ, միայն նա թողեց մեծ ամսոսանքով, կարծես, մի բան կապած լինէր նրա սիրտը այն «գոփաբի» հետ . . .

Մեր դպրոցում ես, Կարօն, Ասլանը եւ Սագօն, այնպէս սերտ կերպով կապուած էինք միմեանց հետ, որ համարեա կազմում էինք մի անբաժան չորրորդութիւն: Բայց երբ նրանք միասին անյայտացան. մեր քաղաքից, ամենեւին չը յայտնեցին ինձ իրանց նպատակը, երեսի նրա համար, որ ինձ անյարմար գտան իրանց ընկերութեանը, որովհետեւ ես նրանցից հասակով շատ փոքր էի եւ բոլորովին անփորձ: Այնուհետեւ նրանց մասին ամենեւին ստոյգ տեղեկութիւններ չը կային, միայն երբեմն խօսուում էին զանազան օտարոտի տեղեկութիւններ, լսուում

էին զանազան սարսափիլի համբաւներ, որոնց  
ես երբէք չէի հաւատում: Իսկ այժմ ինչ բախտ  
էր, որ մեզ կրկին հանգիպեցրեց միմեանց տասն  
եւ երկու տարւոյ անժատումից յետոյ . . .

Երկու միւս անձանօթները, որոնք խարոյկի  
մօտ խորոված էին պատրաստում, ամենեւին չը  
շարժւեցան իրանց տեղից, միայն երբեմն կաս-  
կածաւոր աչքերով նայում էին ինձ վրայ: Եւ  
Վարօն չասեց, թէ նրանք ուրիշ են:

— Երեւի, ուղիղ դպրոցից այստեղ, հարց-  
րեց Ասլանը ժպտելով:

Մինչեւ իմ պատասխանելը, Սաքօն մէջ մտաւ.

— Չե՞ս տեսնում, Ասլան, չե՞ս տեսնում, որ  
բոլորովին բացախել է այբուբենի մէջ:— Խեղճ  
տղայ, հէնց որ նայում ես երեսին, այնտեղ կար-  
դում ես՝ «այբ-ժէ-ճէ-ռա», — խա՛... խա՛... խա՛...  
Այսպէս չէ՛, Փարհատ:— Ա՛խ, ինչպէս ազատ-  
վեցայ ես . . . Տասն եւ երկու տարի է, ինչ որ  
մեր թոնրում այրեցի այն անիծած գիրքը . . .  
Թո՛ղ սատանայի փայ լինի . . . խա՛... խա՛... խա՛...:

Սաքօի կծու եւ դառն կատակները ամե-  
նեւին չը վերաւորեցին ինձ, միայն յիշեցրին մեր  
աննախանձելի դպրոցական կեանքը, երբ այբ-  
ժէ-ճէ-ռան մեր հոգին հանում էր, այնքան  
արտասուքի եւ տանջանքի պատճառ էր դառնում  
մեզ . . .

Այդ միջոցին լսելի եղաւ Վարօի ձայնը.

— Տղերք, ուր քաղցած է, թող մօտ գայ:

Նատախօս Սաքօն վազեց դէպի ընթրիքի  
սեղանը. ես եւ Ասլանը մնացինք մենակ:

— Ի՞նչպէս է «նա» . . . Հարցրեց Աւրանը գող-  
գողուն ձայնով:

Իսկոյն Հասկացայ, որ Սօնայի մասին էր  
հարցնում:

— Այնպէս, որպէս էր առաջ, ժպտում է,  
կարմրում է հետը խօսելիս . . . փախչում է, երբ  
ուզում ես գրկել . . . լաց է լինում, երբ իր հայրը  
տիրաժ աշակերտին ծեծում է . . . Ամենը էլի  
այնպէս է, որպէս տեսել ես Քլիսաւոր փոփոխու-  
թիւնը, որ եղել է բո ժամանակից յետոյ, այն է,  
որ հիմա աւելի գեղեցկացել է եւ աւելի հասու-  
նացել է . . .

Աւրանը ոչինչ չը պատասխանեց, բայց եւս  
նկատեցի, որ նրա միջին գէմքը աւելի մռայլե-  
ցաւ:

— Քնանք մի բան ուտենք, դու երեւի քաղ-  
ցած ես, ասաց նա բոպէական խոռովութիւնից  
յետոյ:

Խորոյկից ոչ այնքան հեռու պատրաստված  
էր ընթրիքի սեղանը. ի՞նչ սեղան, մերկ գետնի  
վրայ տարածել էին սիւռոցի փոխարէն մի փալա-  
տի կտոր եւ նրա վրայ դրած էր հաց, պանիր,  
տոխ եւ աւելի ոչինչ: Տղերքը բոլորել էին այդ-  
նահապետական սեղանի շուրջը, ամեն մէկը իր  
վերարկուն օթոցի փոխարէն իր տակը ձգած ու-  
նելով: Խորովածը հրացանի սումբաներից, — որ  
շամփուրի տեղ էին գործ ածում, — տաք-տաք  
քարշում էին լաւաշների վրայ եւ այնպէս արիւ-  
նաթաթաթախ ուտում էին: Մի կողմում թաւալ-  
ված էր մի ահագին եղջերու, որից յօշոտում

էին խորովածացու միսը: Նրա մօտ պառկած էր գինով լիքը տկճորը: Գաւաթի տեղ գործ էին ածում մի մեծ դըտումի կտրած կէսը, որի ներսոյքը դուրս էին տուած: Նոյն գաւաթից ամենքը խմում էին հերթով:

— Ինձ մօտ, Փարհատ, ասաց Կարօն:

Ես նստեցի նրա մօտ Այն օրվայ բոլոր անցքերը, սկսեալ հայր Թօղիկի բանտից մինչեւ խորհրդաւոր մինարէթը, իրանց ուրախ եւ տըխուր տպաւորութիւններով մինչ այն աստիճան գրգռել էին իմ ջղերը, որ ես ամենեւին ախորժակ չունէի մի բան ուտելու, թէեւ ամբողջ օրը քաղցած էի մնացել: Տասն եւ երկու բոլորակ տարիներէից յետոյ, սիրելի ընկերներիս հետ կրկին հանդիպելը, թէեւ շատ ուրախալի էր ինձ, — բայց այն օրից, երբ նրանք անյայտացան, այնքան անհաւատալի դրոյցներ լսած էի նրանց մասին, որ բոլորովին չէի կարողանում ցրվել հին նախապաշարմունքը: Այդ մանկահասակ, ծըպտեալ, կերպարանափոխ եղած փախտակամները երեւում էին ինձ կասկածաւոր մարդիկ, մանաւանդ երբ նկատում էի, որ նրանք եւս ոչ բոլորովին հաւատարմութեամբ էին մերաբերվում դէպ ինձ: Ես տեսնում էի նրանց մէջ մի առանձին ծածկամտութիւն, խիստ զգուշաւոր խորհրդապահութիւն, որպէս թէ, մի բանից քաշվում էին, կամ վախենում էին: Խնջու չէին կարող անկեղծ լինել ինձ հետ: Խնջն էր ստիպում նրանց, որ մերադառնալով հեռաւոր երկրներից, փոխանակ իրանց բարեկամների եւ

ազգականների մօտ գնալու, նրանք բնտրել էին այդ անմարդարնակ աւերակները: Չէ՛ որ, քաղաքը շատ հեռու չէր այնտեղից, այն քաղաքը, ուր նրանք ծնվել էին, ուր մի քանիսի ծնողները դեռ կենդանի էին: Խնչու չուրախացնել կարօտալի ծնողներին, մանաւանդ զատկական մեծ տօնի ժամանակ, երբ հայրը, մայրը, գրկելով նրանց, «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»-ի փոխարէն պիտի ասէին. — «Մեր որդին կորած էր, գտնվեցաւ. մեր որդին մեռած էր կենդանացաւ»...

Իմ մտաւանջութիւնը, իմ նոյն ժամուն տխրամած դէմքը չէր կարող աննշմարելի մնալ ընկերներիցս, մանաւանդ Սագօի արծուի տեսութիւնից, որ դարձաւ դէպ ինձ այս խօսքերով.

— Կեր, սիրտդ բաց արա՛, ի՛նչ ես ռեխդ թթուացրել ձմեռւոյ երկնքի պէս: Չը լինի՛ թէ մտածում ես, հիմա մայրս սպասում կը լինի ինձ, հիմա նա ասում կը լինի. — «Ա՛խ, ի՛նչ եղաւ, չեկաւ որդիս, փլաւը սառեց, անի, չեկաւ որ ուտէ»... Իմ խեղճ մայրն էլ այս խօսքերը ասելով մեռաւ, բայց սիրելի որդու երեսը չը տեսաւ... խա՛... խա՛... խա՛... — Դու էլ, Յարհատ, միւսանգամ մօրդ եփած փլաւը չե՛ս ուտի . . .

Նա սկսեց դարձեալ ծիծաղել: Զատկական փլաւը աղբատ ընտանիքի աղբատ զաւակի համար մի այնպիսի բարիք էր, որ նա երբէք մոռանալ չէր կարող: Արեւելեան կերակուրների այդ թագուհին, որ հարուստները վայելում են համարեա ամեն գիշեր, աղքատի տանը մուտք է գործում տարին միանգամ միայն, այն է՝ զատ-

կական տօնի օրը: Բայց իմ ցաւը փլաւը չէր, ես գիտէի, որ մեր տանը այն գիշեր փլաւ չէր լինի եւ ոչ որ եւ իցէ զատիկվայ կերակուր, որով մայրս եւ քոյրերս կարողանային իրանց յիսուն օրվայ պասը բաց անել: Ինձ միայն գիւր չեկաւ Սագօի վայրենի զգացմունքը գէպի մայրական գուժը. ես երեսս շուռ տուի նրանից եւ դարձայ գէպի Կարօն, որ գինով լիքը ահագին գաւաթը մեկնեց ինձ, ասելով.

— Խմիր:

— Այսքանը չեմ կարող խմել, պատասխանեցի ես հրաժարովելով:

— Խմիր, կը սովորես . . . ասաց նա ժպտելով: Ես դարձեալ հրաժարվեցայ:

— Ես էլ առաջ գինու հօտը առնելիս հարփում էի, մէջ մտաւ Սագօն, — բայց հիմա . . .

— Հիմա ուրիշները քո հօտը առնելիս հարփում են . . . վրայ բերեց երկու անձանօթ երիտասարդներից մէկը, որ բոլոր ժամանակ լուռ էր:

Ես ընդունեցի Կարօի ձեռքից գինու գաւաթը եւ դատարկեցի մինչեւ կէսը. այդ առաջինն էր մինչեւ այնօր, որ միանգամից այնքան խմեցի:

Խօտակցութիւնը գնալով աւելի կենդանանում էր, գինու գաւաթը արագութեամբ պտրտւում էր. լուռ էր միայն Սալանը, թէ եւ նա եւս ընդունած բաժակը մինչեւ վերջին կաթիլը ցամաքեցնում էր:

Ինձ բոլորովին անձանօթ մնացին երկու երիտասարդները, որոնց մէկին կոչում էին Մու-


բազ, իսկ միւսին Ձալլադ: Ո՞վքեր էին նրանք, կամ հրտեղացի, — ես չը կարողացայ գիտենալ. միայն ինձ երեւում էր, որ Չէյթունի կողմերից պէտք է լինէին, եւ նրանց թէ հագուստի ձեւերը եւ թէ բարբառը հաստատում էին իմ կարծիքը: Չըգիտեմ, թէ ինչու ես այնպէս հակակրութեամբ էի վերաբերւում դէպի այդ երկու վիթխարի տղամարդիկը, որոնց թէ խօսակցութիւնը, թէ վարմունքը եւ թէ դէմքերը արտայայտում էին կատաղի վայրենութիւն:

Ընթրիքը վերջացաւ, երբ տկճորից գինին սպառւիցաւ: Խարոյկի վրայ աւելացրին փայտ եւ կրկին մինարէթի մթին կամարները սկսեցին փայլել ծիրանի լուսով:

Այդ միջոցին նրանք սկսեցին խօսել ինձ բոլորովին անհասկանալի մի լեզուով: Խօսակցութիւնը, որ սկզբում մեղմ էր, հետզհետէ սաստկանալով, հասաւ տաք վիճարանութեան: Ասլանը նոյնպէս սառն եւ հանդարտ կերպով վիճում էր, որպէս ընթրիքի ժամանակ խմում էր: Սազօն չէր դադարում անընդհատ շատախօսելուց. նրա կատուի դէմքը բարկութիւնից բոլորովին լրջացել եւ ձակնդեղի գոյն էր ստացել: Պարօն հանդարտ էր, որպէս միշտ, բայց նրա ձակատի երակները հաստացել եւ դէմքը աւելի խոշոր գծագրութիւն էր ստացել, ոչ այնքան շատ խմելուց, որքան ներքին վրդովմունքից: Երկու երիտասարդները, կարծես, չէին խօսում, այլ արձակում էին մի տեսակ վայրենի հնչիւններ, որ աւելի նման էին գազանների մունչիւնին: Ես

սարսափում էի եւ միշտ սպասում էի, թէ ահա վեր կը կենան եւ միմեանց կը կոտորեն:

Ես ոչինչ հասկանալ չը կարողացայ, թէ ի՞նչ առարկայի վրայ էր վիճարանութիւնը, միայն նկատեցի, որ Կարօի հեղինակութիւնը յաղթեց բոլորին: Այժմ խօսակցութիւնը սկսեց մեղմանալ եւ կրկին բոլորը հանգստացան: Չշմարիտ ասած, այդ աղմկալի տեսարանը, այդ տաք, կրակոտ վիճմունքները ոչինչ բաւականութիւն չը ստանառեցին իմ մէջ, եւ ես երկար նրանց լսել չը կարողացայ: Մի տեսակ տխուր ձանձրոյթ տիրեց իմ սրտին, անսովոր խմելուց գլուխս սկսեց պտոյտովիլ եւ շուտով իմ աչքերը ծանրացան ընտով . . .



Թ.

### ԿԱՐՕԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Այստեղ ես ստիպված եմ մի փոքր կանգ առնել, թողնել ընկերներիս խորհրդաւոր մինարէթի մէջ եւ դառնալ դէպի Կարօն։ Այդ անձնաւորութիւնը, որ գլխաւոր դերերից մէկը պիտի խաղայ իմ պատմութեան մէջ, արժանի է առանձին ուշադրութեան։

Կարօի իսկական անունը ես չը գիտեմ, գուցէ նա ինքն էլ չը գիտէր, միայն յայտնի էր, որ դա մի մականունն է նրա ծագումը եւ ազգատոհմը թագցնելու համար։ Նա մեր քաղաքի բնիկներից չէր, որտեղացի էր, — ոչ ոք չը գիտէր, միայն ասում էին, միանգամ յայտնվեցաւ մեր քաղաքում մի անծանօթ կին ու բերեց իր հետ փոքրիկ Կարօին, որին կոչում էր իրա թոռը։ Զումրուդը — այսպէս էր կնոջ անունը — հմուտ էր ժողովրդական բժշկութեան, այդ արհեստով փող էր վաստակում, ապրում էր ինքն ու սնուցանում էր իր որբ թոռնիկին։

Կարօի հետ ես ծանօթացայ մեր դպրոցում։  
այնտեղ բոլորը բացի վարժապետից, սիրում էին  
Նրան, թէեւ նա խիստ չար եւ անհանգիստ երե-  
խայ էր։ Զը գիտեմ, որպիսի զգացմունք կապեց  
իմ սիրտը այդ վայրենի վագրի ձագի հետ, որից  
ամեն օր մի փորձանք պակաս չէր լինում։ Եւ  
ճշմարիտ, միշտ մի վէրք կարելի էր տեսնել Նրա  
մարմնի վրայ. կամ ձեռքը վիրաւորված էր լի-  
նում, կամ գլուխը կտրած, կամ երեսը ճանկ-  
ռած, վերջապէս միշտ անդամներից մէկը վա-  
թաթված էր լինում։

Թէեւ նա խիստ բարի սիրտ ունէր, բայց  
անկարելի էր բոլորովին մտերիմ լինել Նրա հետ։  
Կարօն այն գազաններից էր, որին դժուար էր  
ընտելացնել։ Այդ պատճառով, աշակերտների ակ-  
նածուծիւնը դէպի նա ծագում էր աւելի եր-  
կիւղից, որ ունենում են տկարները դէպի իրան-  
ցից հզօրները։ Եւ տրդարեւ, Կարօն համարվում  
էր մեր դպրոցի մէջ խիստ սրտոտ, համարձակ  
եւ աներկիւղ աշակերտ։

Նա խիստ վատ էր սովորում. թէեւ ընդու-  
նակ եւ բնական ձիրքերով հարուստ տղայ էր։  
Նրա անհամբեր, անհնազանդ բնաւորութիւնը  
շատ անգամ առիթ էր տալիս զիջումներ գոր-  
ծել դպրոցի խիստ կարգապահութիւնների դէմ։  
Շատ անգամ եւս նա պատճառ էր գառնում  
ազմկալի խռովութիւնների։ Գրգռելով աշակերտ-  
ներին, յարուցանում էր նա ընդհանուր ամա-  
տամբութիւն վարժապետի դէմ։ Այսպիսի դէպ-  
քերում Նրան շատ օգնում էին Ասլանը եւ Սա-

գօն. առաջինը իր խելքով եւ խոհեմութեամբ, իսկ երկրորդը՝ իր խորամանկութեամբ, որ սատանայի պէս մտնում էր աշակերտների դամարը եւ նրանց շուռ էր տալիս, որպէս եւ ցանկանում էր:

Նս մինչեւ այսօր չեմ կարող երեւակայել Վարօի բնաւորութեան զօրութիւնը, թէ ինչպէս նրան յաջողւում էր ազդել այն ապուշ, վարժապետի ճնշումներից հոգով եւ սրտով սպանուած, աշակերտների վրայ, որոնց երեսից երկիւղը երբէք պակաս չէր լինում, որոնց վախկոտ աչքերի մէջ միշտ կարելի էր նշմարել կոյր հնազանդութիւն եւ ստրկութիւն: Բայց մարդկային ուժը իր մէջ աստուածային զօրութիւն ունի, որ ստիպում է տկարներին խոնարհւել իր առջեւ, որ իր անձը պաշտելի է կացուցանում: Վարօն ունէր այդ յատկութիւնները:

Վարժես, երեխաների հասակում կատարւում է նոյնը, ինչ որ կատարվել է ընդհանուր մարդկութեան տղայական հասակում: Աղքերի դիւցազունները, որոնց պաշտել է ամբոխը, որոնց անմահների կարգումն է դասել, եղել են նոյն ազգի քաջ եւ հզօր տղամարդիկը, որոնք պատերազմում էին վիշապների եւ ամեհի գազանների հետ: Վարօն թէեւ այսպիսի քաջագործութիւններ չէր կատարում, բայց նա անում էր այն, որ մեր, երեխաներիս աչքերում աւելի մեծ նշանակութիւն ունէր:

Պատահում էին այսպիսի դէպքեր եւ այդ դէպքերը կրկնւում էին խիստ յաճախ: Ամեն

երեկոյ, երբ աշակերտները դպրոցից վերադառնում էին իրանց տները, մահմեդականների փողոցներից անց կենալու ժամանակ, հաւաքվում էին թուրքերի, պարսիկների երեխաները եւ ծեծում էի հայ երեխաներին: Ես մինչեւ այսօր չեմ մոռացել մի երգ, որ հնարել էին նրանք եւ մեզ տեսնելու ժամանակ հրգում էին: Նրա բովանդակութիւնը մօտաւորապէս այս էր. «Հայը աղբի ջրաղաց է, պէտք է գցել նրան տօպրակի մէջ եւ խփել պատին, որ երկու աչքերն էլ միասին կուրանան» . . . Մենք ուրախ էինք լինում, երբ մեր վիրաւորանքը վերջանում էր այդ նախատական խօսքերով: Բայց նրանք ծեծում էին մեզ: Աշակերտները գանգատվում էին իրանց ծնողներին, բայց ինչ կարող էին անել ծնողները: Մեծերը ծեծվում էին մեծերից, իսկ փոքրերը՝ փոքրերից . . .

Միանգամ Կարօն ասաց մեզ.

— Գիտէ՞ք ինչ կայ, տղերք, այդ թուրքի լակոտները մեզ միշտ կը ծեծեն, բանի որ մենք նրանց առջեւից կը փախչենք: Պէտք է մենք էլ ցոյց տանք նրանց մեր ձեռքի զօրութիւնը:

Աշակերտներից շատերը հակառակեցին, թէ դա անկարելի բան է, թէ ինչպէս կարելի է թուրքի, պարսիկ երեխայի վրայ ձեռք բարձրացնել:

— Ես չեմ ասում, որ մենք յարձակվենք նրանց վրայ, բայց երբ որ մեզ վրայ յարձակվելու լինեն, պէտք է պաշտպանվենք:

— Ի՞նչով, հարցրեց մէկը:

— Առաջ մեր մուշտիներով, ասաց Կարօն, — իսկ երբ այդ չի օգնի, սկսեցէք քարերով:

Դարձեալ աշակերտներից շատերը չը համաձայնակեցան. տասն հոգի միայն ընդունեցին Կարօի առաջարկութիւնը, որոց թւում գտնվում էինք՝ ես, Ասլանը եւ Սագօն:

Կարօն կազմակերպեց իր փոքրիկ գունդը, ինքը առաջ ընկաւ, Ասլանին եւ Սագօին կարգեց վերջապահ, իսկ ինձ կանգնեցրեց մէջտեղում, որովհետեւ ամենից փոքրն էի: Մեր գրքապանները լիքն էին քարերի գնդակներով: Այսպէս սկսեցինք առաջ գնալ: Մեր ընկերներից մի քանիսը, որ չը միացան մեզ հետ, հեռուից հետեւում էին մեզ, որ տեսնեն, թէ ինչով կը վերջանայ այդ «յիմարութիւնը» . . .

Թուրքերի փողոցի մէջտեղումն էինք, երբ մի խումբ մահճեգական երեխաներ, մեզ տեսնելով, սկսեցին իրանց սովորական երգը.— Դա կախի հրաւէրքն էր:

— Տղերք, ասաց Կարօն, — չը վախենաք, հէնց որ նշան կը տամ, սկսեցէք . . .

Մահճեգական երեխաների խումբը մօտեցաւ, մեր ճանապարհը կտրեց:

— Թողէք, որ անցնենք, ասաց Կարօն:

— Չենք թողնի, մինչեւ ձեզ մօտ գտնված օպիտակ թղթերը մեզ չը տաք, ասաց նրանցից մէկը:

— Ոչինչ չէք ստանայ, պատասխանեց Կարօն:

Մահճեգական երեխաները սովորութիւն ունէին մեր ձեռքից խլել մեր գրեւու թղթերը եւ երբեմն յափշտակում էին մեր գրքերը. թէեւ այս վերջինները նրանց պէտք չէին, բայց քանի

օրից յետոյ դարձնում էին, փոխարէնը ստանալով փող կամ մի ուրիշ բան: Միանգամ իմ նոր կտակարանը, որ գերի էր ընկած մի թուրք երեխայի ձեռքում, ես կարողացայ ազատել, նրան տալով իմ զմելին: Ո՞վ էր սուրբացրել նրանց, թէ նրանք իրաւունք ունէին յափշտակելու հայ երեխաների իրեղէնները . . .

Իսկ այս անգամ նրանց պահանջը հանդիպեց սաստիկ ընդդիմադրութեան: Երբ Կարօն պատասխանեց, թէ «ոչինչ չէք ստանայ», այդ միջոցին մահճեղականներից մէկը վրապրծաւ եւ խլեց նրա գգակը: Կարօն մի հարուածով ցած գլորեց անդգամին եւ խլեց գգակը: Առաջին անգամն էր, որ մահճեղական երեխաները տեսան «գաւուրի» հարուածը եւ այդ յանդգնութիւնը սաստիկ բարկացրեց նրանց:

— Սպանեցէք . . . ձայն տուեցին միմեանց:

— Սկսեցէք . . . ասաց մեզ Կարօն:

Ես երբէք չեմ մոռանայ այն փոքրիկ, երեխայական կռիւը, որ սկսվեցաւ մեր եւ նրանց մէջ: Սկզբում մահճեղականները փոքր էին թւով, բայց մի այնպիսի վայրենի ճիչ եւ աղաղակ բարձրացրին, որ նրանց ձայնից, մի քանի բազէի մէջ հաւաքվեցաւ այնքան բազմութիւն, որի թիւը մեր կրկնապատիկը եղաւ: Բայց ես չը գիտեմ, ինչ էր պատճառը, որ կռիւի մէջ մեզ տիրեց մի այնպիսի կատաղութիւն, որ բոլորովին մոռացանք, թէ մենք հայի զաւակներ ենք, թէ մեր բազուկները կապված են, թէ մենք համարձակութիւն չի պիտի ունենանք մահճեղականի

վրայ բարձրացնելու մեր «պիղծ» եւ միշտ ան-  
գործութեան դատապարտված ձեռքը: Կարծն  
մի սարսափելի փոթորիկի նման, գէպի որ կողմը  
եւ դառնում էր, իր առջեւից ցած էր գլորում  
թուրքի երեխաներին: Նրա օրինակը մեզ սիրտ  
եւ խրախոյս տուեց: Ասլանը, «ասլանի»\*) ձագի  
նման, իր զօրեղ ճանկերով բռնում էր նրանց,  
եւ ձեռքը կոկորդաներին դնելով, կիսախեղդ էր  
անում: Փոքրիկ Սափօն իմ աչքում աւելի աճել  
եւ աւելի մեծացած էր երեւում: Նա գելի նման  
կուում էր իր մարմնի բոլոր անդամներով. ձեռ-  
քով մուշտի էր խփում, ոտքով քացի էր տալիս,  
գլխով նաղդայ էր գալիս\*\*), ատամներով կծում  
էր, եղունգներով ճանկում էր: Ոչ սակաւ քա-  
ջութեամբ հանդիսացան եւ մեր միւս ընկերնե-  
րը, որոնց ճարպկութիւնները մի առ մի նկարա-  
գրելը շատ երկար կը լինէր: Միայն այսքանը  
կասեմ, որ բոլորից թոյլը, բոլորից անվարժը  
կռիւի մէջ էի ես . . . Ես այս բոպէիս էլ առանց  
ծիծաղի չեմ կարող գրել այս տողերը, թէ ինչով  
էի օգնում ընկերներին. — ես միայն գեանից ա-  
փերով հող էի վերառնում, ցրվում էի թուրք  
երեխաների երեսի վրայ, որ նրանց աչքերը լըց-  
նեմ հողով, որ նրանց կուրացնեմ, որ ոչինչ  
չը տեսնեն, եւ այսպիսով հեշտացնեմ ընկերնե-  
րիս ջարդել նրանց:

\*) Ասլան թուրքերէն նշ. առիւծ:

\*\*) Նաղդայ ինչ նշ. խոյի, գոմէշի, եզան եւ այլ  
եղջիւրաւոր անասունների գլխով զարկելը:

Չը նայելով, որ մահամեղական երեսաները մեզանից կրկնապատիկ թւով աւելի էին, այսուամենայնիւ, նրանք խոյս տուեցին կռիւի դաշտից եւ սկսեցին հեռուից մեզ վրայ քարեր արձակել:

— Դուք էլ քարերով . . . ձայն տուեց կարօն:

Մենք կատարեցինք նրա հրամանը: Այդ միջոցին վրահասան մի քանի չափահաս մահամեղական պատանիներ, եւ մենք ստիպված էինք փախչել:

Մեր ընկերներից մի քանիսը մնաստեցան. մի տղայ թեւքի վրայ դանակի վէրք ստացաւ, մի ուրիշի ատամները ջարդվեցան քարի հարուածքից, իսկ իմ գլխի փոքրիկ սպին, որի նշանը մնացել է մինչեւ այսօր, այն օրվանից ստացված է:

Վերագառնալով տուն, մայրս սաստիկ բարկացաւ, երբ լսեց մեր «յիմարութիւնը»: Նա պատրաստվում էր ինձ ծեծել, որ խրատվեմ, որ թուրք երեսաների հետ գործ չունենամ, բայց գլխիցս հոսող արիւնը մի փոքր մեղմացրեց նրա բարկութիւնը: Նա չէր մեղադրում նրանց, որ իմ գլուխը պատառել էին, այլ մեղադրում էր ինձ, թէ ինչու ես մամուկեցեցի կռիւի մէջ: Այդ պատճառով սկսեց սաստիկ անիծել ինձ.

«Գետինը մտնես . . . գրողը տանէ քեզ . . . չար սատանայ . . . պատանդ կարեմ . . . անիծված . . . նաչդ տեսնեմ» . . . եւ այլ այսպիսի խօսքեր:

Միւս օրը ես դպրոց գնալ չը կարողացայ, որովհետեւ մի ամբողջ շաբաթ տանը հիւանդ պառկած էի: Այդ հիւանդութիւնը ազատեց ինձ

մեր վարժապետի պատժից: Ինչ պատմեցին,  
թէ բոլոր աշակերտները, որոնք մասնակցել էին  
կռիւին՝ սաստիկ ծեծ կերան: Նրանք ծեծ կերան,  
նրա համար միայն, որ թոյլ չը տուեցին մահմե-  
դական երեխաներին իրանց ծեծել . . . Միթէ ինքը,  
դպրոցը, չէր պատրաստում մեզ ծեծվելու հա-  
մար . . . միթէ նա չէր մտցնում մեր մէջ ստը-  
կութիւնը . . .

Թէեւ խիստ թանգ նստեց մեր կատարած  
անկարգութիւնը, բայց նրա հետեւանքը բաւա-  
կան օգտաւէտ եղաւ մեզ համար: Այնուհետեւ  
մահմեդական երեխաները սկսեցին վախենալ մե-  
զանից եւ աւելի յարգանքով վարվել: Եւ շատ  
սակաւ էր պատահում, որ նրանց փողոցներից  
անց կենալու ժամանակ մեր ընկերները ծեծվէին,  
մանաւանդ երբ խումբերով էին անցկենում եւ  
պատրաստ էին ընդդիմադրել:

Այդ անցքից յետոյ Կարօն նշանակութիւն  
ստացաւ իր ընկերների մէջ, եւ համարեա բոլոր-  
ին պաշտելի գարձաւ: Ամեն մէկը խոնարհվում  
էր նրա հեղինակութեան առջեւ:

— Տեսնա՞ք, ասաց մեզ Կարօն մի քանի օրից  
յետոյ, — «չանը մինչեւ չը ծեծես, չի բարեկա-  
մանայ» . . .

Այդ բոլոր «անկարգութիւնների խմորը» (տէր  
Թօզիկի լեզուով) Կարօն էր: Վարժապետը վա-  
ղուց արտաքսած կը լինէր այդ խռովարարին իր  
հիմնարկութիւնից, եթէ մի քանի պատճառներ  
արգելք չը լինէին: Որպէս վերհուում ասեցի, Կա-  
րօի տասը հմուտ էր ժողովրդական բժշկութեան

մէջ. իր արհեստով նա վայելում էր քաղաքի ոչ իրայն հայ հասարակութեան յարգանքը, այլ եւ մահճակահանների մէջ մեծ պատիւ ունէր: Նրա պատուի համար Կարօին ներում էին: Բացի դրանից, Զումրուդը իր բժշկական հնարներով ոչ սակաւ օգնում էր միշտ հիւանդ տէրտէրակնօքը եւ ամենեւին վարձատրութիւն չէր պահանջում:

Մի գէպի պատճառով ինքը Կարօն հեռացաւ տէր Թօղիկի գալրոցից:

Մեր գալրոցը ունէր մի վերակացու, որին կոչում էին Խալֆայ—Թաթոս: Այդ Գոլիաթը կը լինէր եռեսուն տարեկան, այսինքն հասակով տասն եւ հինգ տարի մեծ Կարօից: Նա վախենում էր կարիճից, վախենում էր ամեն տեսակ պողոճներից եւ մինչեւ անգամ ճանճերից: Միակ արարածները, որոնցից չէր վախենում Խալֆայ—Թաթոսը, էին աշակերտները: Նրեխայութիւնից այդ տիտանը ձրի ծառայում էր, սպասաւորութիւն էր անում տէր Թօղիկի մօտ որպէս զինւորա շնորքից, նրա գիտութիւնից մի մասն ստանայ, որ ինքն էլ կարողանայ բահանայական փրկունք գցել ուսին եւ վարժապետական աստիճանին արժանանալ: Բայց խղճալին իր կեանքում միանգամ միայն կարողացել էր եկեղեցում «Լոյս զուարթ» երգել եւ այն օրից միշտ պարճանքով էր յիշում այդ փառքը: Աշակերտները նրան կոչում էին «գալրոցի շուն», այն պատճառով, որ ամեն օր ճաշից յետոյ, իւրաքանչիւր աշակերտի սեղանից աւելցած փշրանքը Խալֆայ-Թաթոսի կերակուրն էր: Բայց այնքան բազմաթիւ աշակերտ-

ներից աւելցած պաշարը դարձեալ չէր բաւականանում կշտացնելու շատակեր Խալֆայի անյագ որկորը, որ պատմական Շարայի հետ կարող էր ազատ մրցութիւն անել: Նա, բացի դրանից, ստանում էր կաշառքներ խեղճ աշակերտներից, որոնք ծածուկ տալիս էին նրան մի ամբողջ լաւաշ, որ չը ծեծէր, կամ ի զուր չը պատժէր նրանց:

Խալֆայ—Քաթոսը կոչւում էր «Գուրդի շաւ» առաւել այն պատճառով, որ «Գուրդի շաւ» էր, «Գուրդի շաւ» հաւան էր, աշակերտները հանգստութիւն չունէին այդ բարբարոսի ձեռքից: Կարօն աստիկ ատում էր նրան, որ չէր անցնում, որ մի խայտառակութիւն չը սարքէր նրա գլխին: Տեսնում ես, հանգստի ժամանակ նա ման է գալիս դպրոցի բակումը կարգ պահպանելու համար, աշակերտները երկիւղածութեամբ նայում են նրա վրայ, Կարօն դուրի նման ծածուկ մօտենում է, քարշ է տալիս Խալֆայի ետեւից մի աղուէտի պոչ: Նա ոչինչ չէ նկատում, շարունակում է ման գալ եւ աշակերտներին սպառնալ, որ հանգիստ լինեն, մինչդեռ աշակերտների մէջ տիրում է ընդհանուր ծիծաղ եւ հռհռոց . . .

Միանգամ կէսօրից յետոյ վարժապետը գնացել էր ընելու այդ ժամանակ, ամենաուր սօվորութեան համեմատ, մեզ հաւաքում էին եւ ածում դասատան մէջ, որ լուռ մնանք, շարժում չը գործենք, որպէս զի, վարժապետի քունը չը խանգարուի, որովհետեւ նրա սենեակը կից էր մեր դասատանը: Մենք քարէ արձանների

նման նստած էինք: Խալիան երկար ճիպտոր  
ձեռին, փառաւոր կերպով անցուղարձ էր անում  
դասատան մէջ, որպէս սուլթանը իր պալատում:  
Տիրում էր գերեզմանական լուսթիւն. ճանճի  
թռչելն անգամ լսելի էր լինում: Կարօն նայեց  
նրա վրայ, եւ իմ կողքին խթելով, ասաց.

— Տես, Փարհատ, այդ աւանակի ականջները  
եթէ կտրես, մի ջուխտ լաւ տրեխ դուրս կը գայ:

Վերակացուն, իհարկէ ոչինչ չըսեց, միայն  
Կարօի սրահսօսութիւնը Խալիայ-Քաթոսի ահա-  
գին ականջների մասին այնքան ճիշտ էր, որ ես  
չըկարողացայ իմ ծիծաղը զսպել, որով դարձրի  
իմ վրայ ամբողջ դասատան ուշադրութիւնը:

— Չօրիր, գոռաց Խալիան, ցոյց տալով ան-  
կիւնը:

Ես պատրաստվեցայ կատարել հրամանը:

— Գու չե՛ս չօրի, Փարհատ, ասաց Կարօն:

— Ի՞նչու, հարցրեց վերակացուն, աւելի բար-  
կանալով:

— Նրա համար, որ ես ծիծաղեցրի նրան,  
նա մեզ չունի, պատասխանեց Կարօն:

— Արեմն, երկուսդ էլ չօրեցէք, ասաց վե-  
րակացուն, կրկին անկիւնը ցոյց տալով:

— Ոչ ես կը չօրեմ, ոչ նա, պատասխանեց Կար-  
օն վրդովված ձայնով:

Ես նկատեցի, Կարօն գունաթափվեցաւ, նրա  
ձեռքերը սկսեցին դողդողալ եւ աչքերը լցվեցան  
արիւնով. — գրանք նրա կատարութեան նշաններն  
էին: Չը գիտեմ, վերակացուն այլ եւս ինչ խօսեց,  
միայն այն տեսայ, որպէս վագրը թռչում է փղի


պարանոցի վրայ եւ իր սուր ճանկերով բռնում է նրա կոկորդից, նոյնպէս եւ Կարօն բռնեց վերակացուի վզից, եւ մի քանի պտոյտներից յետոյ, ահագին Գուլիաթը գլորվեցաւ գետին . . . Կարօի երկաթի մատները սեղմվեցան նրա կոկորդի վրայ եւ ողորմելին սկսեց խռխռալ . . .

Յետոյ թռչելով շնչասպառ Խալֆայի կուրծքի վրայ, Կարօն առաց.

— Տես, ես այստեղ կը չոքեմ . . .

Ամբողջ դասատունը հաւաքվելով, հագիւ կարողացան ազատել թշուառ Խալֆային Կարօի ճանկերից, որը այնուհետեւ մինչեւ կէս ժամ ուշաթափ մնաց:

Կարօն առանց մի խօսք խօսելու, նոյն բռնակում թողեց գպրոցը եւ կրկին չը վերադարձաւ այնտեղ . . .



Ժ.

Զ Է Ն Ք Ե Ր

Թողնելով դպրոցը, այնուհետեւ Կարօն վարում էր լի փորձանքներով թափառական կեանք: Շատերը նրան համարում էին ցնորված: Լինում էր շատ անգամ Կարօի տատը, բոլորովին յուսահատ, բոլորովին շուարած, մութ գիշերային պահուն, գալիս էր ինձ մօտ.— «Փարհատ, էլի չէ երեւում նա» . . . ասում էր խեղճ պառաւր եւ թափում էր աչքերից ջերմ արտասուքը:

Ես գնում էի որոնելու նրան: Ո՞րտեղ ասես, չէի պտուում, եւ գտնում էի՝ շատ անգամ պառկած բարձր, սարսափելի քարաժայռի վրայ, եւ կամ լուռ մտախոհութեան մէջ, նստած հեղեղատի ափի մօտ, յափշտակված էր լինում, Աստուած գիտէ, որպիսի ցնորքներով . . .

Ի՞նչ էր նրա դարգը, ի՞նչ էր, որ դուրս էր հալածում անբախտ պատանուն մարդկային բնակութիւնից.— Ես չը գիտէի, միայն նկատում էի, որ նա տանջվում էր ներքին, հոգեկան անհան-

գատութեամբ, եւ կարծես, իր վշտերը մոռացութեան տալու համար փախչում էր գէպի սարերը, դաշտերը, անտառները, — առանձնութիւն եւ ամայութիւն էր որոնում:

Ես նրանից չէի հարցնում պատճառը, որովհետեւ գէտէի նրա բնաւորութիւնը, մի բան որ նա ինքը յայտնել չէր ուզում, եթէ հարցնէիր, իսկոյն կսկսէր բարկանալ: Ես հարցրի Ասլանից: Նա Ասլանին ինձանից աւելի խելացի էր համարում եւ շատ բաների մէջ նրա հետ խորհուրդ էր անում: Բայց Ասլանի հաղորդած տեղեկութիւնները այնքան մթին էին, որ կարօտ էին առանձին բացատրութեան:

— Ես էլ չը գիտեմ, ասաց Ասլանը, — թէ ինչ սատանայ է մտել նրա սրտի մէջ. սիրահարված լինել նա չէ կարող, որովհետեւ այդ հասակում սէրը ջահիլ տղին չէ գժուացնում:

Յետոյ նա պատմեց, թէ սուրբ Յովհաննու մատուռի տօնախմբութեան օրը (մի ամիս անցել էր այն օրից) Կարօն էլ ուխտաւորների թւումն էր: Այնտեղ հաւաքվել էին Սալմաստայ ամբողջ գաւառից ոչ միայն հայեր, այլ բազմաթիւ օտարադպիսներ եւս: Տօների սուրբական հանդէսների համեմատ կատարվեցան զանազան խաղեր: Բոլոր մրցութիւնների մէջ, որ տղամարդիկ իրանց շքնորքը ցոյց տալու համար կատարում են այստեսակ հանդէսներում, Կարօն նշանաւոր գտնվեցաւ: Չհարշաւների մէջ նա բոլորին յաղթեց. ըմբիշների մէջ իր հասակակիցներից մէկը չը գտնվեցաւ, որ նրա կողքը գետնին խփէր. մուշտէ-

կառուի մէջ բոլորը փախչում էին նրա առջեւից, վազ տալու մէջ, նա եղջերուից աւելի արագավազ էր, մի խօսքով, բոլոր խաղերի մէջ նա ցոյց տուեց զարմանալի ճարակութիւններ: Վարօի այդ արհուլթիւնները նրա վրայ դարձրին հանգիստ կանններից մէկի, որսորդ Այօի ուշադրութիւնը, որ համբուրեց նրա ճակատը եւ հրաւիրեց իր մօտ ճաշ ուտելու: Այնտեղ հաւաքված էին մի քանի անձանօթ, կասկածաւոր մարդիկ: Կարօն նրանց մէջ չափազանց ուրախ էր, անդադար երգում էր, մինչեւ անգամ սրար էր գալիս: Նա մնաց որսորդի մօտ ամբողջ գիշերը, բոլորովին մոռանալով Ասլանին, որի հետ միասին Սուբր Յովհաննէս ուխտ էին գնացած:— Ահա բոլորը, ինչ որ կարողացաւ հաղորդել ինձ Ասլանը, եւ աւելացրեց.

— Այն օրից, երբ Կարօն յարաբերութիւններ սկսեց որսորդի հետ, նրա մէջ նկատվում են շատ փոփոխութիւններ:

— Երկնի ժամանակ է, որ նա ծանօթութիւն աւնի որսորդի հետ, հարցրի ես:

— Իպրոցը թողնելուց յետոյ, պատասխանեց Ասլանը.— Եւ այդ ծանօթութիւնը բոլորովին խելքից հանեց Կարօին:

Ես այն ժամանակ չէի կարողանում հասկանալ, թէ ինչով որսորդը կարող էր Կարօին խելքից հանել: Որսորդը մեր գրացին էր եւ ամենալաւ գրացին, ես երեխայութիւնից ճանաչում էի նրան. նա մի այնպիսի մթին, լուռ, խորամիտ մարդ էր, որ հազիւ թէ կը բացվէր

մէկի հետ, ուր մնաց Կարօի նման անփորձ պատանու հետ: Նրանից անկարելի էր մի բան հասկանալ: Ես այսքանը միայն գիտէի, որ նա շատ բարի մարդ էր, թէեւ ուրիշները նրան վատ էին համարում, եւ մի այսպիսի բարի մարդը ոչ ոքին խելքից չէր հանի, ոչ ոքին չար ճանապարհի վրայ չէր տանի:

Ինքս էլ էի նկատում, որ Կարօն խիստ յաճախ անգամ գնում էր որսորդի խրճիթը, երբեմն ես էլ նրա հետ էի լինում, երբ օրը կիւրակէ էր եւ դպրոցից ազատ էի: Որսորդը տալիս էր մեզ վառօդ, որպէս երեխաներ, խաղ անելու համար. մենք նրանից շինում էինք ֆշանքներ եւ թռչնում էինք օդի մէջ. այդ մեծ զուարճութիւն էր պատճառում մեզ: Երբեմն իր հրացանն էր տալիս, մեզ վարժեցնում էր, թէ որպէս պէտք էր լցնել, որպէս պէտք էր արձակել, կամ որպէս պէտք էր նպատակին դիպցնել:— «Սովորեցէք, ասում էր նա, մի օր ձեզ հարկաւոր կը լինի հրացանը» . . . Շատ անգամ Կարօին տանում էր իր հետ որսի, երբ մօտ տեղ էր գնում, բայց ինձ ամենեւին չէր տանում, որովհետեւ ես շուտով յոգնում էի:

Ես սաստիկ սէր ունէի դէպի հրացան գործիքները. վառօդի խեղդող ծուխն անգամ ախորժ էր թւում ինձ: Բայց մենք այնքան ազբատ էինք, որ ես չէի կարող գնել երկաթից շինված հրացան զէնքեր, ես այսպիսի զէնքերը ինքս էի պատրաստում եղան կամ ոչխարի ոտքերի ոսկրներից: Կտրելով ոսկրի մի ծայրը, եւ

միւս ծայրում մի ծակ բաց անելով, իմ թւանգի խողովակը արգէն պատրաստ էր. յետոյ խիստ ճարտարութեամբ հագցնում էի նրան մի կտոր փայտի մէջ, որը ծառայում էր կոթի տեղ եւ պինդ կապում էի թելով: Մինչեւ այսօր իմ աջ յօնքի ծայրին մնացել է փոքրիկ սպի, տեսնողը կը մտածէ, թէ խենջարով ծակած են, բայց ոչ, իմ ոսկրեայ հրացանը երբ պայթեց, նա թողեց երեսիս վրայ այդ նշանը: Մայրս սաստիկ բարկացաւ, երբ պատահեց ինձ այդ վէրքը. — Երճըլ տանէ քեզ, ասաց նա, — դու վերջը վառօղով պիտի մեռնես . . . եւ արգելեց զէնքերի հետ խաղալ: Այդ պատճառով, երբ իմ քեռի Մինասը ընծայեց ինձ մի փոքրիկ հրացան, ես մօրս երկիւղից մեր տունը չը բերեցի, այլ ծածուկ պահում էի Վարօննց տանը, եւ գնում էի այնտեղ, միասին բանեցնում էինք:

Ես չեմ կարող ճշտութեամբ բացատրել, արդեօք ինչից էր, որ ես սիրում էի զէնքեր. արդեօք նրա համար, որ քեռիներիս արհեստանոցում միշտ զէնքեր էի տեսնում. արդեօք նրա համար, որ որսորդը միշտ հրապուրում էր ինձ իր վառօղով եւ հրացանով, թէ նրա համար, որ իմ ընկեր Վարօն նոյնպէս սիրում էր զէնքեր: — Ոչ այս եւ ոչ միւսը, այլ ես կարծում եմ, որ ամեն երեխայի բնութեան մէջ կայ այդ սէրը, նախ բան մարդ լինելը, նա ձգտում է զինուոր լինել. եւ եթէ վերջը հանգչում է նրա մէջ այդ զգացմունքը, դրա պատճառն է կեանքը եւ տարապայման կրթութիւնը . . .

Երբ վարժապետս առաջին անգամ տուեց իմ ձեռքը փետուրէ գրիչը, իմ մէջ ծագեց մի ծիծաղելի միտք. — «Ի՞նչ լաւ կը լինէր, որ այդ գրիչը փոքր ինչ հաստ ու պինդ լինէր, ես նրբանից հրացան կը շինէի, կօթ էլ չէր ուզենայ» . . . Իմ մտածութիւնը թէեւ երեխայական էր, բայց համեմատութիւնը սխալ չէր, որովհետեւ փետուրէ գրիչն էլ հրացանի խողովակի ձեւ ունի: Իսկ փայտից խէնջար, թուր, սուր, աղեղն, նետ, նիզակ եւ այլ զէնքեր շինելու մէջ ես կատարեալ վարպետ էի. այդ էր պատճառը, որ որսորդը աշխատում էր համոզել մօրս, որ նա յանձնէր ինձ քեռիններիս արհեստանոցը, զէնք շինել սովորէի: Բայց մայրս չէր համաձայնիւմ: Նա մինչեւ անգամ մեղք էր համարում սովորելը այն արհեստի, որ պատրաստում է մարգիկ կտորեկու գործիքների: Տէր Թօղիկն էլ մի եւ նոյնն էր կրկնում:

Բայց Կարօն ինձանից աւելի ազատ եւ աւելի բախտաւոր էր. նա ոչ մայր ունէր, ոչ հայր եւ ոչ էլ վարժապետ. ոչ ոք նրան չէր արգելում հետեւել բնութեան ձայնին. տատը չէր ճնշում նրան, եւ որսորդի ազգեցութեան ներքոյ նա դարձաւ բոլորովին ուրիշ տղայ, բան թէ էին նրա բոլոր ընկերները: Այն օրից, որ թողեց դպրոցը, ես ինքս մեծ փոփոխութիւն էի տեսնում նրա մէջ: Ես լսում էի նրանից ինձ համար շատ անհասկանալի խօսքեր. մի անգամ սասաց նա.

— Ֆարհատ, մեր գիւղացիները շատ աղ-

քատ են, կան ընտանիքներ, որ հաց չունեն ուտելու:

— Դու ի՞նչ գիտես, հարցրի ես:

— Արսորդի հետ երէկ ման եկանք մի քանի գիւղեր. նա ինձ ներս տարաւ գիւղացիների խորճիթները, ես տեսայ սարսափելի չքաւորութիւն:

— Ի՞նչ է պատճառը:


— Այդ մահամեղականները մեր գիւղացիների արիւնը ծծում են. Այդ խաները, բեգերը նրանց կեանքը բոլորովին մաշում են. Արսորդը ինձ բացատրում էր, թէ ինչ պէտք է արած, որ գիւղացիները աւելի հանգիստ եւ աւելի կուշտ լինեն:

Ես ոչինչ չը պատասխանեցի, նա շարունակեց.

— Փարհատ, քանի որ առաջ տեսայ, մի գիւղացու կապած, ծեծում էին նրա համար, որ չէր գնացել խանի համար ձրի բանելու. Խեղճը իր ընտանիքի միակ աշխատող մարդն է, եթէ նա միշտ խանի համար ձրի բանէ, էլ ո՛վ կը կերակրէ նրա երեխաները: Փարհատ, հէնց որ տեսայ, սիրտս այրվեց, էլ չը կարողացայ արտասուքս պահել . . .

Ահա այսպէս, միշտ գիւղացիներ, միշտ գիւղացիներ, միշտ գիւղացիների մասին էր խօսում նա. Ես մտածում էի, թէ խեղճ տղան ցնորվել է, նրան ի՞նչ փոյթ, որ գիւղացիները ուտելու հաց չունեն, կամ նրանց տանջում են. Լաւ չէ՛, ասում էի, որ իր փորի համար մտածէ. ինքը աւելի բախտաւոր չէ՛ այն թշուառներից, որոնք գիշերները սոված են պառկում:

Ի հարկ է, այդ մեծ փոփոխութիւն էր Կարօի բնաւորութեան մէջ: Նա առաջ սովորութիւն ունէր խօսել Քօրօղլիի, Բուստամի, Զալի եւ դրանց նման հերոսների մասին, որոնց պատմութիւնը լսել էր աշուղների վէպերի մէջ, — կամ խօսում էր գեղեցիկ աղջիկների վրայ եւ ծաղրում էր նրանց այս եւ այն թուլութիւնները: Յանկարծ քոչորը մոռացաւ նա, սկսեց գիւղացիների մասին խօսել, նրանց վրայ մտածել: Ո՞վ մտցրեց նրա մէջ այդ ցնորքը: — Ես չը գիտէի, միայն Ասլանը վերաբերում էր որսորդ Ալօին:



## ԺԱ.

### ՂԱՐԱՄԷԼԻՔՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Մի անգամ Կարօն ինձ ասաց. — Ֆարհատ, տատս շատ հիւանդ է, ես մենակ եմ, գընանք մեր տուն, այս գիշեր մեզ մօտ կացիր:

Ես գնացի: Կարօնց բնակարանը շատ հեռու չէր մեր տնից: Ես գտայ Զումրուգին, արգարեւ, ծանր հիւանդութեան մէջ. խեղճ կնոջ միայն մորթն ու ոսկորն էր մնացել. շունչը հաղիւ ելումուտ էր անում: Երբ մեզ տեսաւ նա, փոքր ինչ հոգի առաւ, խնդրեց՝ գլուխը վեր բարձրացնել եւ բարձերը նեցուկ տալ մէջքին, որ կարողանայ նստել: Կարօն կատարեց նրա ցանկութիւնը: Հնոցի մէջ վառվում էին մի քանի կտոր փայտեր, եւ կարմիր լոյսը ծաւալվելով փոքրիկ խրճիթի մէջ, լուսաւորում էր հիւանդի մաշված, դալկացած դէմքը:

Հիւանդը կանչեց Կարօին, նստեցրեց իր մօտ, եւ նրա ձեռքը առնելով իր ոսկրացած ափի մէջ, ասաց թոյլ եւ դողդոջուն ձայնով.

— Ես մեռնում եմ, Կարօ, քանի որ բերանս

փակված չէ, թող լեզուս բաց անէ քեզ այն գաղտնիքը, որ այսքան տարի ծածուկ էր պահւած:

Նա պատմեց, թէ ինքը Կարօի ոչ տառն է, ոչ նրա ազգականը, այլ սկզբում Կարօի հօր տան աղախինն է եղել, իսկ յետոյ դարձաւ նրա դայեակը: Նա պատմեց, թէ Կարօի հայրը կոչուած էր Միր-Մարտօ, նա պատկանում էր Ղարա-Մէլիքների ընտանիքին, որ սերված էր հայոց մի հին իշխանական տոհմից: Գարեբի ընթացքում այդ տոհմի բախտը նոյնքան փոփոխութեան է ենթարկվել, որքան փոփոխական, յեղեղուկ է եղել Հայաստանի դրութիւնը: Նա բարձրացել եւ խոնարհվել է իշխանութեան, աստիճանի բոլոր ելեւէջների մէջ, երբեմն տիրող իշխան, երբեմն հասարակ տանուտէր, երբեմն տաժանակիր հողագործ, — բայց երբէք չէ կորցրել իր ազնուապետական ոգին: Պարսից մարզպանների ժամանակ այդ տոհմը գեռ պահպանել էր հզօր նախարարի արտօնութիւնները, բայց արաբացոց արշաւանքների ժամանակ նա բաւական ընկաւ, երբ այդ ցեղի նշանաւոր իշխանները բռնվելով, տարվեցան Գամասկոս եւ այնտեղ գլխատուեցան: Նրա մի ճիւղը բոլորովին ոչնչացաւ յունաց կիւրապաղատների օրերում: Մօնգօլական արշաւանքների ժամանակ այդ ցեղից մի տղամարդ, որ իր թուխ դէմքի պատճառով ստացել էր թաթարների խանից «Ղարա-Մէլիք» կոչումը, կրկին ղօրացաւ: Նրա անունով այդ տոհմի ներկայացուցիչները սկսվեցան կոչվիլ Ղարա-մէլիքներ:

Հայաստանի յեղաշրջումների փոթորիկների

մէջ, այդ տոհմը, անդադար արմատախիչ լինելու  
լով հայրենի երկրից, տարուբերվել է երբեմն Արա-  
րատ, երբեմն Վասպուրական, երբեմն Ատրպա-  
տական եւ երբեմն Փոքր-Հայքի կողմերը: Իսկ  
վերջին դարերում, երբ Վասպուրականի մէջ զօ-  
րացան քրդերը, Աարա-մէլիքներից մէկը, Մա-  
րաշի կողմերից փախստական գալով, հաստատ-  
վեցաւ Վանայ ծովակի հարաւային ափերի մօտ:  
Քուրդ ցեղապետների հետ դաշնակցելով, նա  
հետզհետէ ընդարձակեց իր իշխանութիւնը եւ  
տիրում էր ամբողջ Ռշտունեաց գաւառի վրայ:—  
Իսկ էր Աարօի հայրը՝ Միր—Մարտօն, «Միր» տիտ-  
ղոսը ստացաւ նա քրդերից, որ նշանակում է  
տէր, իշխան, պետ: Նրա հզօր ամբողջ գաղն-  
վում էր Ոստանի մօտ, մի լեռան անմատչելի  
բարձրաւանդակի վրայ, մի կողմից ծփում էր  
ծովակը, միւս կողմից, շրջապատած էր սարերի  
պարսպաձեւ շղթաներով:

Միր-Մարտօն, որպէս տեղային հայերի պե-  
տը, էր մի եւ նոյն ժամանակ ամենահարուստ  
մարդը ամբողջ գաւառի մէջ: Նա ունէր մի ա-  
ռանձին սնահաւատութիւն դէպի Էօֆնէակ թիւր  
եւ այդ պատճառով իր բոլոր հարստութիւնը  
բաժանած էր Էօթն մասների վրայ: Նա ունէր՝  
Էօթն ջրաղաց, Էօթն ձիթհան, Էօթն այգի, Էօթն  
անտառ: Նրա տնից դուրս էր գալիս Էօթն գու-  
թան, որ մշակում էին Էօթն անգամ Էօթանա-  
սուն օրալար հող: Նրա սեպհական արօտատե-  
ղերում արածում էին Էօթն հօտ ոչխարներ, իւ-  
րաբանչիւր հօտը միագոյն, մէկը ձերմակ, միւսը

սեւ, երրորդը շիկագոյն, չորրորդը խայտաճամուկ, հինգերրորդը մոխրագոյն եւ այլն: Նոյն խորհրդաւոր թիւն ունէին նրա ձիերի, կովերի, գոմէշների երամակները: Այդ բոլորը պիտի մնար որպէս ժառանգութիւն նրա եօթն որդիներին, որոնցից ամենակրտսերն էր Կարօն:

Միր-Մարտօի օրըստ օրէ զօրանալը, նրա յաջողութիւնները մշտական կռիւների մէջ, գրգռեց մի հարեւան քուրդ ցեղապետի նախանձը: Նա չը կարողանալով բացարձակ կերպով վնասել նրան, սկսեց դիմել խորամանկութեան. բարեկամութիւն, հաստատեց Միրի հետ, ձեւացրեց իրան նրա ամենամտերիմ դաշնակիցը: Եւ մի անգամ, խաբէութեամբ Միրին իր մօտ հիւր կանչելով, ընթրիքի ժամանակ հրամայեց նրան ցած գլորել իր բերգի բարձրութիւնից . . .

Կարօի հայրը այսպէս նենգութեամբ սպանվելէն յետոյ, նրա ամբողջ ընտանիքը զոհ եղաւ քուրդ բռնակալի բարբարոսութեանը, բոլորը սրից անցան. ողջ մնաց միայն փոքրիկ Կարօն, որին իր դայեակը—Ձումրուդը—փախցնելով, թազցրեց մի ասօրու տան մէջ:

Հիւանդը վերջացրեց իր պատմութիւնը այս խօսքերով.

—Այն սարսափելի կոտորածի միջոցին, քո մայրը, Կարօ, կուրծքի խէնջարով խոցված, մի ձեռքով բռնել էր վէրքը, միւս ձեռքով քեզ յանձնեց ինձ, ասելով. «Ա՛ռ, Ձումրուդ, եթէ Աստուած կը յաջողէ ազատել երեխայիս, սովորեցնուր նրան վրէժխնդիր լինել»... Այդ խօսքերի հետ

նագելի տիկինը աւանդեց հոգին:

Բոլոր պատմութեան ժամանակ Կարօն հանգիստ էր. նրա դէմքի վրայ ես նկատում էի մի տեսակ զարմացում, մի տեսակ ապշութիւն, որ առաջ էին գալիս անագան ինքնաճանաչութեան զգացմունքից: Անտէր, անտուն, թափառաշրջիկ պատանին յանկարծ զգում էր իր երակների մէջ իշխանական արեան հոսումը: Բայց երբ նա լսեց պառաւի վերջին խօսքերը, նրա դէմքի արտայայտութիւնը իսկոյն փոխվեցաւ. շրթունքը սկսեց դողդողալ, աչքերի մէջ փայլեց կատաղի բարկութիւն, Կարծես, այն լուռ, զայրացած դէմքի վրայ ես կարգում լինէի, «Երգվում եմ իմ մօր սուրբ յիշատակով, որ ես անպատճառ վրէժխնդիր կը լինեմ» . . .

— Ես չը կարողացայ աւելի վաղ յայտնել քեզ, Կարօ, մօրդ կտակը, շարունակեց պառաւը, — որովհետեւ դու շատ փոքր էիր: Սպասում էի, մինչեւ մեծանաս, մինչեւ աւելի հասունանաս — ես ոչինչ չը կարողացայ սովորացնել քեզ: Բայց քո հօր պատմութիւնը բաւական է վրէժխնդրութեան դաս լինելու համար: Ես մեռնում եմ հանգիստ սրտով, որովհետեւ գիտեմ, ինձանից յետոյ մի աւելի հմուտ, աւելի փորձուած ձեռք քեզ պիտի առնէ իր պաշտպանութեան ներքոյ: Լսիր նրա խրատները եւ ոգեւորութեամբ ընդունիր, ինչ որ կը ներշնչէ նա քո մէջ: Այդ ազնիւ մարդը քո հօր բարեկամն է եւ. նրա գաւառի հինգ տանուտէրներից մէկը: Նա եւս ենթարկվեցաւ մի եւ նոյն բարբարոսութիւններին, քո

Հօր տունը բնաջինջ լինելուց յետոյ: Այդ պատմութիւնը գուցէ նա ինքը կը հաղորդէ քեզ:

Պառաւի վերջին խօսքերը որսորդ Ալօի մասին էին: Ուրեմն նա հասարակ մարդ չէր. որսորդի ծպտեալ դիմակի տակ ծածկւիւած էր մի խորհրդաւոր անձնաւորութիւն: Այդ բոլորից ես հասկացայ նրա առանձին ուշադրութեան գաղտնիքը, որ ունէր դէպի Կարօն:

— Այժմ փակիր իմ աչքերը, շարունակեց հիւանդը, գլուխը ցած թողնելով բարձի վրայ. — Եթէ կուզես կրկին ձեռք բերել քո Հօր իշխանութիւնը, դու կը գտնես այն փոքրիկ սնդուկի մէջ բոլորը, ինչ որ քեզ հարկաւոր է . . .

Նա աշխատեց ձեռքը մեկնել դէպի պատուհանը, ուր դրած էր փոքրիկ սնդուկը, բայց ձեռքը թուլացաւ, ընկաւ վերմակի վրայ:

Նրա աչքերը կրկին բացվեցան, եւ անշարժ նայում էին դէպի երկինքը: Կարծես այնտեղ, վերին երկնակամարի այն կողմը, նրա առջեւ բացված լինէր Յաիտենականի աթոռը եւ նա շնորհ, զօրութիւն, յաջողութիւն էր մաղթում այն էակի համար, որին իր ձեռքով էր սնուցել, իր բազուկների վրայ էր մեծացրել:

Նրա ալեւոր գլուխը թեքվեցաւ, երեսի վրայ երեւացին մի բանի ցնցումներ, աչքերը դարձեալ փակուեցան . . .

— Նա մեռաւ . . . բացականչեց Կարօն, առանց մի կաթիլ արտասուք անգամ աչքից թափելու:

Ես զարմանում էի նրա քարասրտութեան վրայ: Ո՞րպէս սառնութեամբ լսեց այդ բոլորը:

Վարժես, նա ամենը գիտէր, կարճես, դայեակի պատմածները նրա համար նոր բաներ չը լինէին: Բայց նա ոչինչ չը գիտէր իր ծագումի մասին. նա իրան միշտ համարում էր պառաւ Զում-բուդի թոռը:

Ես սխալվում էի: Կարօն բոլորովին հանգիստ չէր: Նրա կերպարանքի գունաթափ, մի եւ նոյն ժամանակ խաղաղ կեղեւի տակ բորբոքվում էր մի սարսափելի կրակ, որ նմանում էր ծածկված հրաբուխի: Նրա սիրտը փոթորկվում էր կատաղի խռովութեան մէջ: Ես այն ժամանակ չէի կարող հասկանալ նրա բնաւորութեան բոլոր զօրութիւնը, թէ որքան զգացմունք, որքան կամքի ուժ կար այն չափահաս պատանու մէջ, իսկ այժմ բոլորը հասկանում եմ: Նա ծածկեց մեռանող կնոջ երեսը, եւ մի քանի բոպէ լուռ ու անշարժ նստած էր նրա մօտ:

Ես բաց արի փոքրիկ արկղիկը, որը հիւանդը ցոյց տուեց իր հոգեվարքի միջոցին: Նա լիքն էր զանազան հին, ցեց կերած թերթերով, որոնք գրված էին պարսից, արաբացոց, յունաց, թուրքաց եւ հայոց լեզուներով: Նրանց վրայ դրոշմված էին մեծ եւ փոքր կնիքներ: Մագաղաթի գրվածքը դարերի ընթացքում բոլորովին գունատվել եւ մոյզ-դեղին գոյն էր ստացել: Կարօն խլեց իմ ձեռքից հրովարտանիները եւ բոլորը միասին նետեց հնոցի մէջ: Կրակը բորբոքվեց եւ Ղարա-մէլիքների աւելի բուն հազար տարվայ տոհմային վկայականները մոխիր դարձան . . .

— Ինձ պէտք չէ արտօնական իշխանութիւնը,

որ իբրեւ ողորմութիւն շնորհիւմ է եղել իմ պապերին, ասաց Կարօն խորին վրդովմունքով: — Ես պիտի աշխատեմ չք ստօրել մութացեալութիւն: Եթէ կը յաջողի ինձ կրկին ձեռք բերել այն, ինչ որ կորցրել են իմ նախնիքը, այդպէտք է լինի իմ սեպհական ջանքով: Սրով, բռնի ուժով խլածը պէտք է սրով վերագործնել: Բայց ինչ որ ամենաթանկագինն է ինձ համար, — դա է իմ ծնողների արիւնը: — Ահա ամենագլխաւոր պահանջը, որ պիտի տուժել տամ մեր թշնամիներին . . .

Այդ խօսքերը զարթեցրին իմ յիմար գրլխում մի միտք, որ մինչեւ այն բոպէն մնացել էր խուլ, անշարժ, անկերպարան: Միթէ իմ հօր արիւնը նոյնպէս չէր բողոքում արգարութեան ատեանի առջիւ, միթէ նա գերեզմանից չէր կոչում որդուն վրէժխնդիր լինել: Թուրքը թուրքի հետ գրազ եկաւ եւ իր սրի զօրութիւնը փորձելու համար, մի հարուածով կտրեց իմ հօր պարանոցը եւ ստացաւ մի Ֆինջան զահվէ . . . Ո՛րքան նախատինք, ո՛րքան ցածութիւն էր այդ, իր կեանքով լինել առարկայ մի այդպիսի բարբարոսական կատակի . . .

Հնոցի մէջ մագաղաթը դեռ այրւում էր կապտագոյն բոցերը դեռ պլպլում էին:

— Տես, այլ եւս ի՞նչ կայ այնտեղ, հարցրեց Կարօն, ցոյց տալով սնդուկը:

Յատակի վրայ մնացել էր փղոսկրեայ մի տուփ: Ես բաց արի տուփը. նրա մէջ գրած էր մի փոքրիկ մեղալիօն, ոսկուց շինած եւ աղամանդնե-

բով զարգարած, որի վրայ Հմուտ ճարտարութեամբ նկարված էր մի գեղեցիկ կանացի գլուխ: Այդ Կարօի մօր պատկերն էր: Նա առեց իմ ձեռքից մեղալիօնը, մի քանի վայրկեան նայեց նրա վրայ յետոյ թագցրեց իր ծոցում: Այն ժամանակ միայն նկատեցի, նրա աչքերից գլորվեցան մի քանի կաթիլ արտասուք գունաթափ, տխուր գէմքի վրայ:


Նա խկոյն սրբեց արտասուքը, որ ես չը տեսնեմ, դարձաւ դէպ ինձ, ասելով.

— Երգվիր, Փարհատ, որ այդ բոլորը, ինչ որ լսեցիր, ինչ որ տեսար այստեղ, կը մնան քեզ մօտ որպէս գաղտնիք:

Ես երգուեցայ:

Այդ անցքից երեք օր յետոյ Զումբուզին թաղեցին: Ամբողջ քաղաքը ցաւեց նրա համար: Նա իրրեւ բժիշկ, այնքան բարի էր, որ չը կար մի աղքատ, որ նրա օգնութիւնը վայելած չը լինէր:

Նրա թաղումից յետոյ Կարօն այլ եւս չերեւաց: Կարօի Հետ անյայտացան մեր քաղաքից երեք հոգի՝— որսորդ Ալօն, Ասլանը եւ Սագօն: Ո՞ւր գնացին, — ոչ ոք չը գիտէր . . .



Ժ. Բ.

Մ Թ Ի Ն Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

Մառնանք դէպի մեր պատմութիւնը:  
 Վաղ-առաւօտեան, դեռ արեւը չը ծագած,  
 ես զարթեցայ: Ես ինձ գտայ խորհրդաւոր  
 մինարէթում, պառկած ցամաք տերեւներից կազ-  
 միված անկողնի վրայ: Գլխիս տակին, բարձի փո-  
 խարէն, գրած էր մի խորձ խոտ: Վարօի վե-  
 բարկուն ծածկում էր ինձ վերմակի տեղ: Երե-  
 ւում էր, ընկերներս խնամք էին տարել իմ  
 հանգստութեան համար, որովհետեւ դեռ չէի  
 սովորած բացօթեայ կեանքի խստութիւններին:

Երկու զէյթունցիները չը կային: Միւսները  
 — Վարօն, Ասլանը, Սադօն — դեռ քնած էին մերկ  
 գետնի վրայ, առանց ծածկոցների: Նրանց քունը  
 ծանր էր եւ խորին: Ինձ երեւում էր, թէ ամ-  
 բողջ գիշերը արթուն էին մնացած. երեւում էր,  
 հէնց նոր գարձել էին մի հեռու տեղից . . . որով-  
 հետեւ նրանց տրեխների ցեխը դեռ թաց էր:  
 Նրանք պառկել էին առանց հանվելու, իրանց  
 հագուստով, մինչեւ անգամ ոտնամաններով:  
 Նրանք կրած ունէին եւ ղէնքեր, բայց գիշերը,

Թէ ընթրիլի ժամանակ, թէ վիճարանութեան միջոցին, նրանց վրայ դէնքեր չը տեսայ, բացի մի-մի դաշոյնից: Աւրեմն նրանք գիշերը այստեղ չէին մնացած, մտածում էի ես, ուրեմն ինձ հարկեցրին, քնացրին, որ չիմանամ, թէ դէպի որ կողմն են արշաւանք գործում . . .

Բայց որտեղ կորան այն երկու ծածկամիտ զէյթունցիները, ինչու չը մնացին այստեղ, ինչու Կարօն չը ծանօթացրեց ինձ նրանց հետ եւ ոչ ասաց թէ նրանք ուրքեր են . . . միթէ նա չէ հաւատում ինձ: Ահա այդ հարցերը զբաղեցրին իմ միտքը, երբ առաւօտեան զարթեցայ խորհրդաւոր մինարէթի մէջ:

Ինձ թւում էր, թէ ես ընկած եմ մի կախարդված ամբողջ աւերակների մէջ, թէ մի դիւթական ձեռք ինձ բերեց այդ դիւաբնակ աւերակներում, թէ Կարօն, Ասլանը, Սազօն, — այդ բոլորը առաջօք եւ խօսքէական պատկերներ էին: — «Չէ, մտածում էի ես, թողնեմ, փախչեմ եւ հեռանամ այստեղից, գնամ մօրս մօտ, հնազանդ գլուխս խոնարհեցնեմ նրա առջեւ եւ ասեմ. «ես քեզանից չեմ հեռանայ, միշտ կաշխատեմ քեզ համար եւ քոյրերիս համար, միայն ինձ վարժատուն մի ուղարկիր»:

Իսկ երբ վարժապետիս սարսափելի պատկերը աչքիս առջեւն էր գալիս, իսկոյն սթափվում էի, կրկին լուծվում էր դիւթական թիլիսմանը, եւ ես զգում էի, թէ իրականութեան մէջ եմ գտնվում, թէ այս բոլորը, ինչ որ տեսնում էի, երեւակայութեան ցնորքներ չէին: Իսկոյն

փոխում էի միտքս. — «Չէ, ասում էի, երազ չէ  
իմ տեսածը եւ ոչ կախարդութիւն. դրանք իմ  
լաւ ընկերներն են. Ասլանը հրեշտակի սիրտ ու-  
նի, Կարօն հէնց վարժատնում եղած ժամանակ  
սիրում էր ինձ, Սագօն նոյնպէս բարի տղայ է,  
նրա սիրտը այն չէ, ինչ որ լեզուն է: Չէ, կը  
մնամ այստեղ, դրանցից չեմ բաժանուի»: . . .

Մինչ ես այսպիսի խորհրդածութիւնների մէջ  
էի, աչքս ընկաւ պառկած ընկերներին վրայ. չը  
գիտեմ, ինչու ես յիշեցի մի զրոյց, որ շատ ան-  
գամ լսել էի տատիս հեքեաթներէ մէջ: Ինձ  
երեւաց, որպէս թէ, այդ երեք երիտասարդները  
երեք հսկաների ձագեր լինէին, որոնց մայրը  
կաթի փոխարէն կերակրում էր ադամորդու ա-  
րիւնով . . . Ո՞րտեղից ծագեց իմ մտքում մի այդ-  
պիսի օտարօտի համեմատութիւն . . .

Կարօի քունը անհանգիստ էր. երեւում էր,  
նա գտանդում է երազների սարսափելի խռովու-  
թեան մէջ. — «կը սպանեմ, թէ չը տաս» — «ո՛ր  
ես փախչում» — «իմ գնդակը աւելի սրնթաց է  
քան քո ոտները» — «Ասլան, սատկեցրու նրան»  
— «Սագօ, զգո՛յշ, մարդ չը տեսնէ» — «նրանք այս  
կողմից փախան» . . . Ահա այսպիսի անկապ խօս-  
քեր էին լսվում նրա բերանից, նա խօսում էր  
խառն, զանազան արեւելեան լեզուներով:

Ասլանի քունը հանգիստ էր, որպէս երե-  
խայի քուն: Երբեմն նրա գեղեցիկ շրթունքը  
ցնցվում էին թեթեւ ժպիտով, նա լուռ էր: Մի-  
անգամ միայն նա արտասանեց անունը «Սօնա»:  
— Խեղճ տղայ, մտածում էի ես, նա ինձանից

առաջ սիրում էր նրան . . . գուցէ այժմ տակաւին սիրում է . . .

Սագօն իր երազների մէջ նայնպէս ծիծաղելի էր, որպէս արթուն ժամանակը. մէկին ջիգրացնում է նա: Նրա գէմքի վրայ նկատուում էին հեզնական ծամածռութիւններ:

Արշալոյսը սկսել էր շառագունիլ: Ամեն կողմից լսելի էին լինում թռչունների ուրախ, ծըլվըլուն երգերը: Մինարէթի վերի յարկերում բոյն դրած վայրենի աղաւնիները այս կողմ եւ այն կողմ էին թռչոտում եւ նրանց թեքերի թափ տալուց աշտարակի կամարները թնդում էին խուլ որոտմունքով:

Ես ձանձրացայ երկար պառկելուց, վերկացայ, մօտեցայ Կարօին, եւ նրա վերարկուն իր վրան ծածկելով, կանգնեցայ նրա մօտ: Նա տարածված էր գետնի վրայ, որպէս մի ահագին պղնձէ արձան, մթին, հսկայատիպ կերպարանքով: Նրա լայն կուրծքը անհանգիստ կերպով բարձրանում եւ ցածանում էր: Երկար ես խորին պատկառանքով նայում էի այդ վեհախառ պատկերի վրայ, մինչեւ իմ սիրտը լցվեցաւ մի ջերմ, եղբայրական զգացմունքով. ես խոնարհվեցայ եւ մի համբոյր բաղեցի այն շրթունքներից, որոնցից շատ անգամ լսել էի այդ խօսքերը. «Ճարհատ, ես քեզ շատ եմ սիրում»:

Նա մի թեթեւ շարժում գործեց եւ կրկին խորասուզվեցաւ ծանր քնի մէջ: Ես հեռացայ:

Ինչ երեխայութեանս ժամանակից, այն աւերակները, որոնցմով շրջապատված էի, այն մի-

Նարէթը որի մէջ այժմ գտնւում էի, միշտ մի առանձին դիւթական տպաւորութիւն էին գործում ինձ վրայ: Ես լսել էի նրանց մասին շատ առասպելական զրոյցներ: Բայց առաջին անգամն էր որ գտնւում էի այնտեղ, թէեւ այդ աւերակները ունէին մեր քաղաքից հազիւ քառորդ մղոն հեռաւորութիւն: Մարդիկ, մի առանձին սնահաւատութեամբ, վախենում էին մօտենալ նրանց: Բայց նոյն ժամուն ինձ եւս անհասկանալի մի հետաքրքրութիւն քարշում էր իմ սիրտը դէպի վեր, դէպի այն հսկայական շինուածքի գագաթը. այնտեղից ես զանկանում էի նայել դէպի Աստուծոյ գեղեցիկ աշխարհը:

Խորին երկիւղածութեամբ ես ոտք կոխեցի առաջին սանդուղքի վրայ, սկսեցի բարձրանալ: Ամեն տեղ տիրում էր դառարկութիւն. ամեն տեղ ոչ այնքան ժամանակը, որքան կոյր խանիճաղանձի մոլեռանդութիւնը աւերակ էր դարձրել ճարտարութեան այն հրաշալի գործը, համարելով նրան մի կախարդված մնացորդ «ջինների» թագուհու ամբոցից: Ես բոլորովին յոգնեցայ, մինչեւ հասայ մինարէթի գագաթը: Այն, որքան բարձր էր նա: Ամբողջ Սարմատը, լուսաւորված արեգակի առաջին ճառագայթներով, դրած էր իմ առջեւ, որպէս մի գեղեցիկ պատկեր, նկարած զանազան գոյներով: Գիւղերը, այգիները, ձեռատունկ անտառները, լաւ մշակված դաշտերը, բոլորը միախառնվելով հանդիսացնում էին ամբողջ հովիտը իր կանաչազարդ, գեղազրական տարածութեան մէջ: Ես ջոկում էի

բոլոր ինձ ծանօթ տեսարանները:

Հեռու, բարձր ապառաժի վրայ, տեսնում էի  
ես Ղարնի-Նարուղի աւերակները, աւերակները  
այն առասպելական ամրօցի, ուր թափվել էր այն-  
քան արիւն, այնքան արտասուք եւ սէր . . . ուր  
անօրէն թուրք իշխանի ձեռքը խլում էր ամուսնի  
գրկից կնիկների ամենագեղեցիկը . . . ուր տար-  
վում էին ամենաընտիր աղջիկները ամբողջ գա-  
ւառից եւ անբախտ զոհերի արտասուքը, ըն-  
տանիքի սրբութիւնը, ծնողների աղաչանքը չէին  
կարողանում ամօքել բռնակալի կրքերը . . . Իէպի  
աջ նայելով, ես տեսնում էի սուրբ Յովհաննու  
մատուռը, միայնակ կանգնած բլուրի գագաթին,  
որը մի ահագին շաքարի գլխի նման վեր էր  
բարձրացել ընդարձակ դաշտի միջից: Արքան  
բաղցր զգացմունքներով կապված էր այդ սրբ-  
բարանը իմ յիշողութեան հետ: Այնտեղ, օտ-  
նական հանգէսների ժամանակ, ուխտաւորների  
աշխարհային զուարճութիւնները, ախտերը եւ  
կրքերը եփ էին գալիս, բորբոքվում էին, միա-  
խառնվելով կրօնական ջերմեւանդութեան հետ . . .

Աերջապէս իմ աչքին ընկաւ քաղաքը. նա  
թագնւած էր ծառաղարդ այգիների մէջ, որոնք  
ձեւացնում էին մթին, բոլորակ տարածութիւն:  
Նս որոշեցի մեր թաղը. այնտեղ ես երկար եւ  
երկար որոնում էի «մէկին» . . . կարծում էի, թէ  
կը տեսնեմ նրան . . . Ձր գիտեմ ինչու նոյն բո-  
պէում իմ աչքերը լցվեցան արտասուքով, ես  
այլ եւս չը կարողաղայ նայել . . .

Նս սկսեցի իջնել ցած, կրկին նոյն ոլորմա-

լոր սանդուղքներով: Այն ժամանակ միայն նկատեցի, որ աշտարակը ունէր մի քանի գաղտնի պահեստներ եւ խորին մթերանոցներ: Հետաքրքրութիւնը հրապուրեց ինձ մտնել նրանցից մէկի մէջ: Նեղ պատուհանից ներս ցոլացած լուսով հազիւ կարողացայ որոշել հետեւեալ իրեղէնները. — զէնքերի զանազան տեսակներ, ձիաների թամբեր իրանց պարագաներով, խուրճիւններ լիքը զանազան բաներով, որոնք այնքան ծանր էին, կարծես, ամբողջապէս լցլած լինէին մետալներով: Ես ձեռքս տարայ մէկի մէջ, տեսայ, որիչ ոչինչ չը կար, բայց միայն հրացանի փամփուշաներ, գնտակների կապոցներ եւ վառօդ: Այս մթերքը, անտարակոյս, պատկանում էր այն երեք հոգուն, որ պառկած էին աշտարակի ներքին յարկում: Բայց թիչ նպատակի համար էր այդ բոլոր պատրաստութիւնը: — Այդ միտքը սկսեց տանջել ինձ: Այնտեղ կար պատրաստութիւն աւելի քան յիսուն հոգու համար: Բայց որտեղ էին այդ մարդիկը: Ես ոչինչ հասկանալ չէի կարողանում: Երկիւղը եւ կասկածը տիրեցին իմ սրբտին: Այստեղ երեւում էր ինչ-որ խորհրդաւոր ծածկապահութիւն . . .

Ես չուզեցի կասկածանքի պատճառ տալ ընկերներիս, եւ առանց միւս բաներին նայելու, իջայ ցած: Տղերքը տակաւին բնած էին նոյն դրութեան մէջ, որպէս թողել էի: Ես չը կամեցայ խանգարել նրանց հանգստութիւնը, դուրս եկայ մինարէթից մի փոքր թարմ օդ ծծելու համար:

## Ժ. Գ.

### Վ Ն Ո Ւ Կ Ը

Արեգակը բաւական բարձրացել էր հօրիզոնից։ Վաղորդեան ցօղը գոյնզգոյն գոհարների նրման շողշողում էր նորաբոյս խոտերի, թփերի տերեւների վրայ։ Օդի մէջ տիրում էր գարնանային առաւօտի մեղմ զովութիւնը, թէեւ գեռ գարուն չէր։

Իմ սիրտը զգաց անսահման բերկրութիւն։ Ի՞նչու։— Ինքս էլ չը գիտէի։ Գուցէ նրա համար, որ այստեղ ազատ էի. ոչ ոք չէր նեղացնում ինձ, ոչ մօրից, ոչ վարժապետից երկիւղ չունէի։

Փոքր ինչ հեռանալով աշտարակից, ես սկսեցի գիմել գէպի աւերակները։ Կիսակործան պարիսպների, խորտակած սիւների, մամռապատ կամարների բեկորները մեծ մասամբ կորած էին վայրենի բոյսերի մէջ, որ ճոխութեամբ աճել էին այնտեղ։ Ոգնին, ահագին կրիաները, երկչոտ չախկալները համարձակ կերպով վաղվում էին փլատակների մէջ։

Իմ ականջին զարկեց բուի ձայնը։ Աւերակ-

ների այդ թագուհին իմ մանկութեան հասակից գրգռել էր իմ սնահաւատութիւնը: Ես համոզված էի, թէ նա էր այդ բոլոր կործանումների պատճառը: Կուացայ, գետնից մի քար վեր առի, նայում էի չորս կողմն, որ գտնեմ, որ սպանեմ նրան: Բուն չէր երեւում: Ես քարը նետեցի ուղիղ այն կողմը, որտեղից լսելի եղաւ նրա ձայնը: Բարձրացաւ մի ձիւ, որ նման էր աղամորդու հառաչանքի: Ես սոսկացի: Փլանակների մէջ կրճկուել էր մի պառաւ կին, փաթաթված հին մոյգկապտագոյն սիւնիների մէջ: Ինձ երեւաց, որպէս թէ, աւերակների մէջ բնակվող ոգիներից մէկը լինէր նա, կամ այն կախարդը, որ հօկում էր այդ անմարդաբնակ անապատի վրայ:

Նրա երկար, կիսով չափ կուացած հասակը բոլորովին նման էր մի այլանդակ կմախքի, որի ցամաք կազմուածքի մէջ մնացել էին ոսկորները միայն: Միակ կենդանութեան նշոյլը, որ նկատվում էր թուխ դէմքի վրայ, էին զոյգ կրակոտ աչքերը, որոնք վառվում էին դիւական խորամանկութեամբ:

Նա խիստ մտերմադէս մօտեցաւ ինձ:

— Ո՞վ ես դու, հարցրի ես:

— Դու կարօն չե՞ս . . . ասաց նա, առանց իմ հարցին պատասխանելու:

Նա խօսեց աղաւտղված թուրքերէն լեզուով, բայց արտասանութիւնից իսկոյն երեւաց, որ ինքը բօշայ է, թէեւ նա չէր պատկանում բօշաների այն ցեղերին, որ ես յաճախ տեսել էի մեր կողմերում:

Երեւում էր, պառաւր գործով եկած էր  
Վարօի մօտ եւ սխալմամբ ինձ նրա տեղ էր ըն-  
գունում, որովհետեւ աչքերի տեսութիւնը սաս-  
տիկ թուլացած էր: Ես կամեցայ Վարօին զար-  
թեցնել. յետոյ մտածեցի, ի՞նչ վնաս, առժա-  
մանակ ձեւանալ, որպէս թէ ես Վարօն եմ: Իմ  
վարմունքը երեխայական անմիտ հետաքրքրու-  
թիւն էր, եւ աւելի ոչինչ:

— Հա, իմ անունս Վարօ է, պատասխանեցի  
ես: — Բայց ի՞նչպէս են կոչում քեզ:

Բօշան զարմանալով նայեց իմ վրայ, կարծես,  
չէր հաւատում իր աչքերին, եւ պատասխանեց  
պարսկերէն լեզուով:

— Վարօն ի՞նչու էր հարցնում իր ազանի  
անունը: Վարօն գիտէ, որ մարդիկ Սուլան են  
կոչում նրան: Վարօն բոլորը գիտէ . . . — Երբ Գին-  
բուլի խանը կողոպտեց, կոտորեց մեր ցեղը, Սու-  
սանը կապեց իր բամակին Վարօի էլէէն եւ մենակ  
անցաւ Հերաթի անապատներից . . . — Ա՛խ, Սու-  
սանի աչքերի լոյսը . . . Այն անցքից յետոյ Սու-  
սանը վատ է տեսնում . . .

Այդ անկապ խօսքերը այն աստիճան մթին  
երեւացին ինձ, որ ես ոչինչ չը հասկացայ, մա-  
նաւանդ որ, բօշան խօսում էր երրորդ դէմքով:  
— «Վարօի երեխան» . . . Մի՛թէ Վարօն երեխայ ու-  
նի. որտեղ է նա: — Հերաթի անապատներից ա-  
զատել է նրան բօշան . . .

Այս բոլորը ինձ համար հանելուկներ էին:  
Միայն այսքանը հասկացայ, որ Վարօն եւ խոր-  
հրդաւոր պառաւր նախածանօթներ են եղել:

Միջին Ասիայի խորքերում, Աւղանիստանում, նրա  
բանք ունեցել են յարարերութիւններս Բայց ինչ  
գէպքով, ինչ առիթով։—Այդ մասին չը հարցրի  
պառաւից, զգուշանալով, բոլորովին չը մերկաց-  
նել ինձ, թէ ես Կարօն չեմ։

Ես աշխատեցի ուղղել իմ անտեղի հարց-  
մունքի սխալը, ասելով.

—Ես բոլորը գիտեմ, Սուսան, դու այն ասա,  
թէ ինչ լուր ունես։

Պառաւը որպէս թէ ինքն իր հետ խօսելով,  
ասաց.

—Սուսանը կասէ, Սուսանը նրա համար եկաւ,  
որ ասէ։ Սուսանը չը կարողացաւ իր արտասուքը  
պահել, երբ տեսաւ խեղճ աղջկան . . . Նա աղա-  
չում էր. — «Ասա Կարօն, որ ինձ այստեղ չը թող-  
նէ. ես կը մեռնեմ ցաւից» . . . — Խեղճ երեխայ,  
որքան մաշվել էր նա . . . Կը մեռնի, անպատճառ  
կը մեռնի՛ նա, եթէ երկար այնտեղ կը մնայ . . .  
Երեսին գոյն չես տեսնի, օրինակ քեզ՝ կտա . . .  
Ա՛խ, Սուսանն էլ շատ չի ապրի, թէ շնորհ գլխին  
մի փորձանք կը գայ . . .

Պառաւը այլ եւս չը կարողացաւ խօսքը շա-  
րունակել, սկսեց դառն կերպով լաց լինել։ Ար-  
տասուքը աւելի նսեմացրեց նրա աչքերի լոյսը։  
Ես աշխատեցի մխիթարել նրան. Երբ մի փոքր  
հանգստացաւ, հարցրի, ինձ բաւական մտեցած  
համարելով գաղտնիքի խկուժեանք.

—Ի՞նչպէս դու մտար շնորհ մօտ։

—Ի՞նչպէս մտար . . . կրկնեց պառաւը հէգ-  
նական կերպով եւ նրա ցամաք գէպքի վրայ վա-

զեց մի վայրենի ծիծաղ:— Սուսանի ճանապարհը  
նվ կարող է կտրել: Սուսանը ամեն տեղ մուտք  
ունի: Թէ խանի ամրոցի, թէ աղբատի խրճիթի  
դռները նրա առջեւ բաց են: Սուսանը կարգում է  
մարդերի ճակատագիրը. Սուսանը գուշակում է  
նրանց չարն ու բարին:— Տո՛ւր ինձ ձեռքդ, գու-  
շակեմ քեզ համար . . .

Կարծես, նա մոռացաւ առաջին տխուր զգաց-  
մունքը «խեղճ աղճկայ» մասին. կարծես, նա  
մոռացաւ, որ Կարօի հետ էր խօսում: Այժմ  
տիրեց նրան այն, ինչ որ բոշայական էր, ինչ որ  
վայրենի էր: Նրա առաջին արտասուքը եւ վեր-  
ջին ծիծաղը մի բոպէում այնպէս փոփոխակի  
կերպով յաջորդեցին միմեանց, որ սարդ երեւաց,  
թէ ողորմելի կինը ցնորված էր:

— Լաւ, այդ յետոյ, թող մնայ գուշակելը,  
պատասխանեցի ես:— Դու այն ասա, թէ երբ  
տեսար ընրան . . .

— Սուսանը մտաւ աճրոջը, երբ առաւօտեան  
ցօղը դեռ չէր բարձրացել խոտերից. աղախին-  
ները վազեցին նրա առջեւ «եկ, մեզ համար  
գուշակիր, Սուսան», ասացին. յետոյ տարան . . .

Պառաւր չաւարտեց իր խօսքը: Սոյն միջոցին  
մինարէթի դռնից երեւաց Կարօի գիշերային ան-  
քնութիւնից գունաթափված գէմքը: Պառաւր մի  
խոժոռ հայեացք գցելով իմ վրայ, իսկոյն թողեց  
ինձ, ասելով.

— Դու Կարօն չես. դու խարեցիր Սուսանին . . .  
Նրա խռովեալ ձայնի մէջ կար եւ սպառ-  
նալիք եւ բարկութիւն:

—Մի եւ նոյն է, նա իմ եղբայրն է, Սուսան,  
հանգստացրեց Վարօն, մօտենալով պառաւին:

Նրանք առանձնացան մի կիսաւեր պատի  
ետեւի կողմը, երկար կանգնած խօսում էին  
ինձ անլսելի ձայնով: Պատի վրայ բուսած մա-  
ցառների խտութիւնը դեռ չէր արգելում նրանց  
իմ տեսութիւնից: Վարօն գլուխը քարշ գցած  
լսում էր: Պառաւը ինչ որ պատմում էր նրան, ես  
այժմ մասամբ հասկանում էի, թէ ինչ առար-  
կայի վրայ էր խօսակցութիւնը: Սուսանի մի բույժ-  
առաջ ինձ հաղորդած տեղեկութիւնները, որքան  
եւ մթին, որքան եւ կցկտուր լինէին, այսուա-  
մենայնիւ, ես նրանցից դուրս բերեցի հետեւեալ  
եղբակացութիւնները.— մի աղջկայ, կամ մի կը-  
նոջ կեանքը վտանգի մէջ էր, նրա եւ Վարօի մէջ  
կային գաղտնի կապեր. Վարօն աշխատում էր  
ազատել նրան. խորամանկ պառաւը ծառայում  
էր այս ձեռնարկութեան մէջ որպէս գործիք.  
աղջիկը, կամ կինը գտնվում էր «ամբողջ» մէջ:  
Ո՞ր ամբողջում, ի՞նչ էր պատկանում ամբողջը:—  
Ահա այստեղ էր գլխաւոր գաղտնիքը:

Ես երկար նայում էի կիսախելագար Սուսանի  
վրայ: Երբ նա իր պատմութիւնը վերջացրեց, յան-  
կարծ մի տեսակ ձայն արձակեց, որ ճիշտ նման  
էր մի եւ նոյն բուռի ձայնին, որ լսել էի քանի  
բույժ առաջ: Միահաւատութիւնը կրկին տիրեց  
ինձ: Ես նկատեցի, մի փոքրիկ աղջիկ, խայտա-  
ճամուկ եւ ֆանտաստիկական հագուստներով,  
դուրս վազեց աւերակների միջից, մօտեցաւ եր-  
կու խօսակիցներին: Վարօն գրկեց եւ համբուրեց

Նրան Յետոյ պառաւը փոքրիկ աղջկայ հետ ան-  
յայտացան: Այս երեւոյթը այնքան յանկարծակի  
կերպով կատարվեցաւ, որ ես բոլորովին ապշած  
մնացի: Ինձ թւում էր, թէ փոքրիկ աղջիկը այն  
ողիններից մէկը պէտք է լինի, որ պառաւ կա-  
խարդը պահում էր իր հրամանի ներքոյ, ման էր  
ածում իր հետ եւ ծառայեցնում էր իր հմայք-  
ների մէջ: Բայց ո՞րքան գեղեցիկ էր այդ նազելի  
արարածը: Ես նրա գէմքը տեսայ մի սքնթաց  
փայլակի նման, որ խկոյն չբացաւ, բայց թողեց  
իմ սրտում անջնջելի տպաւորութիւն . . . Բայց  
Վարօն ինչու համբուրեց նրան, ո՞վ էր նա . . .

Ես կարծում էի, թէ Վարօն չի թագցնի,  
կասէ ինձ բոլորը, թէ ով էր այդ անծանօթ պա-  
ռաւը, թէ ով էր այն փոքրիկ աղջիկը, որ յայտ-  
նվեցաւ փլատախների միջից: Ես վճռեցի մինչեւ  
անգամ հարցնել նրանից, բայց չը համարձակ-  
վեցայ, երբ նկատեցի նրա սարսափելի կերպով  
վրդուվլած գէմքը: Երեւում էր, պառաւի հաղոր-  
գած տեղեկութիւնները խռովութեան մէջ էին  
գցել նրան:

— Այն պառաւը ցնորված էր, հարցրի ես,  
երբ նա մօտեցաւ ինձ:

— Ոչ... միայն եթէ միւսանգամ կը պատահի  
քեզ հանդիպել նրան, ինդրեմ, չը յիշեցնել ի՞ր  
անցեալը . . .

Յետոյ խօսքը փոխելով, ասաց նա.

— Մենք պէտք է հեռանանք այստեղից, Զար-  
հատ:

— Ո՞ւր, հարցրի ես:

— Ինքս էլ չը գիտեմ: Մենք այն թուշտանե-  
րից ենք, որ միշտ մի եւ նոյն ճիւղի վրայ չեն  
նստում:

Ես ոչինչ չը պատասխանեցի:

— Կու երեկվանից միտքդ չե՞ս փոխել, հարց-  
րեց նա, իմ ձեռքից բռնելով եւ մի կողմ առ-  
նելով, որպէս զի խօսակցութիւնը իմ եւ նրա  
մէջ առանձին լինէր:

Ես գժուարացայ պատասխանելու:

— Ի՞նչու չես խօսում:

— Ի՞նչ խօսեմ:

— Մենք պէտք է հեռանանք այստեղից: Կու  
չե՞ս ցանկանում գառնալ քո մօր մօտ:

— Ես ցանկանում եմ ձեզ մօտ մնալ:

— Թող առբ մեզ, Ծարհատ, գնա՛ մօրդ մօտ,  
մխիթարէ՛ նրա անբախտութիւնը: Հեռացիր մե-  
զանից: Մենք գլխից ձեռք վեր առած մարդիկ  
ենք . . . Մեր նաք գեռ մրրիկների մէջ է գնում.  
ո՛վ է իմանում, ի՞նչ կը լինի նրա վերջը . . . Քեզ  
վիճակված է բախտի աւելի խաղաղ բաժինը,  
Ծարհատ, գնա՛, պտակվիր Սօնայի հետ, նա քեզ  
սիրում է, նրա հետ ուրախ կերթայ ձեր կեանքը:  
Սօնան լաւ աղջիկ է:

Վերջին խօսքերը շարժեցին իմ սիրտը եւ  
ակամայ արտասուքը թափվեցաւ իմ աչքերից:  
Կարօն այնպէս ձեւացրեց, թէ չէ տեսնում եւ  
շարունակեց իր խրատները:

— Յիշում ե՞ս, Ծարհատ, երբ մենք գեռ վար-  
ժատան մէջն էինք, շատ անգամ ասում էինք  
միմեանց, «մենք եղբայրներ ենք, մենք պէտք է

միասին աշխատենք եւ միասին վայելենք մեր վաստակը: Ես ունեմ այժմ մի փոքրիկ գումար, ահա այս քսակի մէջն է, առ քեզ եմ տալիս, նա ինձ պէտք չէ: Այս գումարով դու կը գնես քեզ համար մի կտոր հող, կը սարքես մի արօր, քո ձեռքով կը մշակես քո հողը: Քանցը է վաստակը, երբ մարդ ստանում է իր սեպհական հողից: Ես յետ մղեցի քսակը, պատասխանելով.

— Յիշում եմ քոյորը, ինչ որ ուխտեցինք դեռ դպրոցում եղած ժամանակ: Բայց դու, երեւի, մոռացել ես մի բան, մենք երգուեցինք եւ օգնել միմեանց ամեն փորձանքների մէջ մեր կեանքում: Այժմ ես ինչպէս կարող եմ հեռանալ քեզանից, երբ դու ինքդ ասում ես, թէ «ձեր նաւը մրրիկների մէջ է գնում» . . .

— Այդ ուղիղ է: Բայց ես ինչ իրաւունքով կարող եմ քեզ բարշտալ այն փորձանքների մէջ, որոնց ես ինքս պատրաստել եմ ինձ համար . . .

— Ինձ համար մի եւ նոյն է, թէ ով է պատրաստել:

— Բայց դու գիտես, որ ես այս աշխարհում կորցնելու ոչինչ չունեմ: Իսկ քեզ կարօտ են՝ մայրդ, քոյրերդ եւ վերջապէս Սօնան: Դու չես մտածում ազատել նրան. չէ որ, նա գերի է իր հօր, այն վայրենի հօր ձեռքում:

— Ես մտածում եմ . . . ես մինչեւ անգամ խոստացել եմ ազատել նրան . . . Բայց ես նրան կազատեմ, քեզանից չը բաժանվելով:

— Լաւ, առայ նա խռովեալ ձայնով: — Այսուամենայնիւ, դու պէտք է ընդունես այս քսակը.

ուղարկիր մօրդ, թող նա քաղցած չը մնայ, գուցէ դու երկար բաժանուած կը մնաս նրանից . . .

Ես հրաժարվեցայ, խնդրելով, որ նա ինքը կարգադրէ որպէս ցանկանում է:

Կարօն համաձայնութեամբ Բայց ես նկատեցի, թէ որպէս վառվում էլն նրա լի վրդովմունքով աչքերը եւ ինչպէս անհանգիստ կերպով բարախում էր նրա կուրծքը: Երեւում էր, խիստ ծանր էր նրա այն համաձայնութիւնը, որ տուեց ինձ իր մօտ պահելու համար . . .

— Դու պիտի ընդունես մի քանի պայմաններ, Ծարհատ:

— Ամեն բանի յօժար եմ ես:

— Լսիր.— քո աչքերը իբր թէ ոչինչ չեն տեսում, թէ եւ շատ բաներ պիտի տեսնես:

— Ես ինձ կոյր կը ձեւացնեմ:

— Քո ականջները իբր թէ ոչինչ չեն լսում, թէ եւ շատ բաներ պիտի լսես:

— Ես ինձ խուլ կը ձեւացնեմ:

— Քո լեզուն ոչինչ չը պիտի խօսէ, թէ եւ շատ բաներ պիտի գիտենաս:

— Ես ինձ մունջ կը ձեւացնեմ:

— Դու սեպհական կամքի տէր չը պիտի լինես:

— Ես ամեն բանում կը հնազանդվեմ քո կամքին:

— Եւ իմ ընկերների կամքին:

— Եւ քո ընկերների կամքին:

— Բաւական է, տուր ինձ ձեռքդ:

Ես ձեռք տուեցի, նա սեղմեց ինձ իր կուրծքի վրայ եւ համբուրեց: Այդ եղբայրական

Համբոյրը կնքեց մեր ուխտը . . .

Ես խոստացայ խուլ լինել, մունջ լինել,  
խոստացայ կոյր գործիք լինել . . . Ես խոստացայ  
անսիրտ, առանց կամքի մեքենայ լինել . . .

Ես կատարեցի իմ խոստմունքը:

Պարսկաստանում այն ժամանակ գեռ նոր  
էր կազմվել մի գաղտնի Հիմնարկութիւն, որ կոչ-  
վում էր «Փարսո-չիանայ», այսինքն մոռացու-  
թեան տուն: Այս տան մէջ ընդունվելու գլխա-  
ւոր պայմանն այն էր, որ իւրաքանչիւր անդամ  
այնտեղից գուրս գալուց յետոյ պէտք է մոռա-  
ցութեան տար բոլորը, ինչ որ տեսել, ինչ որ  
լսել էր այնտեղ: Այսինքն պէտք է պահպանէր  
սաստիկ ծածկամտութիւն: Թէ ինչ նպատակ ու-  
նէր այդ գաղտնի Հիմնարկութիւնը, — ես չը գի-  
տեմ, որպէս չը գիտէին նրա իւրաքանչիւր ան-  
դամները, թէ ինչ է գործում իրանից բարձր աս-  
տիճանի վրայ գտնվող անդամը: Արտսեր անդամը  
աւագի հլու գործիքն էր, պէտք է անպայման  
կերպով հնազանդվէր նրան, պէտք է կատարէր  
ամեն բան, ինչ որ կը հրամայէր նա, առանց գի-  
տենալու, թէ ինչ նպատակով էր գործում: Հիմ-  
նարկութեան բուն խորհուրդը պահվում էր նրա  
գլխաւորների մօտ: Միւսները անգիտակցական  
մեքենաներ էին միայն: Անդամների իւրաքան-  
չիւրը առանձին նշաններից կարող էր ճանաչել  
միւսին, առանց գիտենալու նրա անունը, նրա  
ով կամ ինչ տեղացի լինելը: Միայն որոշ խմբեր  
իրանց մէջ գաղտնիք չունէին, իսկ ամեն մի  
խումբ առանձին վեր առած, միմեանց գործու-

նէութիւնից տեղեկութիւն չունէին:

Կարծես, մի այսպիսի հասարակութեան մէջ էի ընկել ես: Ինձանից էլ խոստում առին, որ ամեն բան, ինչ որ կը տեսնեմ, ինչ որ կը լսեմ, մոռացութեան տամ: Ես կատարեցի իմ խոստմունքը: Իսկ այս տողերը որ գրում եմ այժմ, — գրում եմ ուղիղ յիսուն տարուց յետոյ, երբ այն անձինքը այլ եւս աշխարհի երեսին չեն մնացած, երբ նրանց գործունէութիւնը յայանդեցաւ եւ անհետացաւ մի կարճատեւ փոթորիկի նման . . .



## ԺԴ.

Զ Ի

Դեռ երեխայութիւնից ես ձի նստելու սաստիկ սէր ունէի. այն ժամանակ այս ցանկութիւնը լցուցանում էի, հեծնելով փայտեայ երկայն ձողի վրայ, եւ ամբողջ ժամերով վազեցնում էի մեր բակում: Յետոյ, երբ փոքր ինչ մեծացայ, իմ փայտեայ նժոյգին փոխարինեցին կենդանի արարածներ: Մեր հորթերը հանգստութիւն չունէին ինձանից, եւ մինչեւ անգամ ահագին գայլանման Մըրօն — մեր շունը — երբեմն ստիպված էր ծառայել իմ զուարճութիւններին: Ես բռնում էի նրա երկայն ականջներից, թռչում էի մէջքի վրայ, եւ խեղճ շունը բարեսրտութեամբ ներում էր իմ յիմարութիւններին, գնում էր դէպի այն կողմը, ուր որ ես շուռ էի տալիս:

Երբ տասն տարեկան էի, ամեն երեկոյ անհամբերութեամբ սպասում էի տաւարների նախիրի արօտից վերադառնալուն: Հէնց որ հեռուից նկատում էի մեծ ճանապարհի վրայ փոշու ամպերի բարձրանալը, վազում էի նախիրի առ-

ջիւ, բռնում էի աւանակներից մէկին, նստում էի նրա մէջքի վրայ: Ա՛խ, որքան ուրախանում էի ես, երբ իմ Պեգասը վազում էր հեռու եւ հեռու դաշտերի մէջ . . . Իսկ յետոյ աւանակներին փոխարինեցին մատակ ձիաները: Առանց սարսափելու չէր կարելի նայել ինձ վրայ, երբ ես դեռի նման բռնած վայրենի մատակի բաշից, մրրկի պէս ստրտեցնում էի մերկ եւ առանց սանձի ձիուն: Հովիւները բարկանում էին, զգուշացնում էին ինձ, բայց ի՞նչ ուշադրութիւն կը դարձնէր նրանց խօսքերին յանդուգն եւ զբւարձասէր մանուկը . . .

Բայց որքան անգամ վեր ընկայ ես . . . որքան անգամ ձեռքս, ոտքս կտարեցի . . . որքան անգամ երեսս ջարդված, արիւնթաթախ տուն են բերել ինձ . . . Մայրս լաց էր լինում, ասում էր «որ ես աղամորդու դարմ չեմ», թէ ես «սատանայի ծնունդ եմ», թէ ես «մի փորձանքով պիտի մեռնեմ», կամ գետի մէջ կը խեղդվեմ, կամ ծառից, կամ ժայռից վեր կընկնեմ եւ կամ դաշտի գազանները կուտեն ինձ . . . Մայրս գնում էր, վաժապետիս պատմում էր իմ անկարգութիւնները, բայց ոչ նրա «ֆալախկան», ոչ նրա «խրատը» եւ ոչ «աղխսի կտորտանքը» — ոչ մէկը չը կարողացան զսպել ինձ մանկական խաղերից, որոնք այնպէս սաստիկ կերպով արգելված էին աշակերտներին:

Նոյնպիսի սէր ունէի ես դէպի հրացան գործիչները: Երեւակայեցէք այն ուրախութիւնը, երբ իմ մանկական երկու ամենագլխաւոր բաղձանքները

իրագործվեցան. — Ես այժմ ունէի ձի եւ զէնքեր:

Նոյն աւուր երեկոյեան այսօր, որի առաւօտեան ժամանակ ես աւերակների մէջ հանդիպեցի բոշայ կնոջ հետ, կրկին յայտնուեցան երկու զէյթունցիները, որոնց մէկին կոչում էին Մուրադ, միւսին Ջալլադ: Նրանք բերեցին իրանց հետ չորս գեղեցիկ ձիաներ: Երեւում էր, այգձիաները մեզանից փոքր ինչ հեռու գտնված լեռների մէջ պահում էին, որովհետեւ աւերակների մօտ արօտ չը կար: Կարօն ինձ իր մօտ կանչեց, եւ յանձնելով ձիերից մէկի սանձը, ասաց.

— Ահա քո ձին, ես գիտեմ, որ դու անվարժ չես լինի դրան զսպելու մէջ:

Յետոյ, տալով ինձ մի հրացան, մի զոյգ ատրճանակ եւ մի թուր, աւերացրեց.

— Ահա քո զէնքերը, դրանց բանեցնելու մէջ դու նոյնպէս անվարժ չես մնայ:

Ես ուրախութիւնից այն աստիճան շփոթվեցայ, որ մի խօսք անգամ չը գտայ շնորհակալութիւնս յայտնելու, միայն երեխայի նման փաթաթվեցայ նրա վզովը եւ սկսեցի համբուրել: Ես երեւակայում էի, թէ աշխարհի բոլոր թագաորութիւնները ինձ են տուած:

Կարօն տուեց ինձ եւ մի ձեռք շոր, պատւիրեց հազուտոս փոխել: Իմ նոր հազուտաի մէջ ոչ թէ մայրս, ոչ թէ տէր Թօզիկը, այլ սատանան եւս չէր կարող ձանաչել ինձ: Ես այժմ իմ հազուտոսով բոլորովին նման էի ընկերներին:

— Իէ, նախ, ասաց Կարօն, ինքն նոյնպէս իր ձին հեծնելով:

Ասլանը եւ Սագօն արդէն ձիաւորված էին: Մենք ճանապարհ ընկանք: Երկու զէյթունցիները մնացին մինարէթի մէջ, երեւի, այն պատերազմական մթերքը պահելու համար, որը ես ցերեկով տեսել էի աշտարակի վերին յարկում:

Արեգակի վերջին շառաւիղները գեռ խաղ էին անում մինարէթի կապոյտ մօզաիկների հետ, երբ մենք բաժանվեցանք այդ հսկայ շինուածքից: Ես իմ ստացած նոր ընծաներով այնքան գրաված էի, մինչեւ անգամ ընկերներիցս չը հարցրի, թէ ո՛ր ենք գնում: Իմ գեղեցիկ նժոյգը ընթանում էր արագ, որպէս մարդու միտքը. իմ ղէնքերը շողշողում էին փառաւոր, սպառնական լուսով:

Կարօն չը սխալվեցաւ իր կարծիքի մէջ, այն, ես այնքան հմուտ էի ղէնքերի գործածութեան մէջ, որքան ձի հեծնելում: Նստալիք էր պատահում, որ իմ գնդակը շեղվէր նպատակից, որովհետեւ ես որսորդ Ալօի թէեւ փոքրիկ, բայց լաւ աշակերան էի, աշակերտը այն մարդու, որի անուան հետ կապուած էին այնքան սարսափելի պատմութիւններ . . . Բայց նա մնաց միշտ բարի գէպի ինձ եւ գէպի մեր ընտանիքը: Նրա տնում միշտ գտնվում էր իմ համար մի աւելորդ հրացան, որով ես փորձեր էի անում: Առաջին փորձը արեցի մեր հաւերի վրայ. մայրս ինձ շատ անիծեց, երբ տեսաւ, իր սիրելի վառեկներից մէկը թաւալվում էր մեր բակի մէջ: Նա իսկոյն վազեց վարժապետի մօտ բողոքելու . . .

Իսկ երբ որսորդը իր ընտանիքով թողեց մեր

քաղաքը, մայրս մասամբ ուրախ էր, որ ազատ-  
վեցաւ մի այսպիսի դրացուց, որը, նրա կարծի-  
քով, իր որդուն փչացնում էր, խելքից հանում  
էր: Բայց ես երկար չէի կարող մոռանալ բարե-  
սիրտ Ալօին, որի պատմութիւնները իր սրտո-  
ղական կեանքից այնքան հետաքրքրում էին, այն-  
քան ոգեւորում էին ինձ . . .

Բայց սրբան մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ  
ձանապարհին Սագօն դարձաւ ինձ այս խօսքերով.

— Դիտե՛ս, ուր ենք գնում, Փարհատ:

— Ինձ ոչինչ չէ ասել կարօն, պատասխանեցի ես:

— Դու յիշո՞ւմ ես սրտող Ալօին, այն լուռ,  
միշտ խոժոռ մարդուն, որ մի ժամանակ ձեր  
դրացին էր, — մենք գնում ենք նրա տունը, Տէս,  
այն սարերի մէջն է բնակւում նա:

Սագօն ձեռքը մեկնեց գէպի արեւմուտք,  
կարծես ես գիշերային խաւարի մէջ կարող էի  
տեսնել նրա ցոյց տուած տեղը:

— Յիշում եմ, պատասխանեցի ես մի առան-  
ձին բաւականութեամբ: — Հիմա բոլորովին ծե-  
րացած կըլինի Ալօն. տասերկու տարի է, որ  
չեմ տեսել նրան:

— Հին վիշապները շուտ չեն պառաւում  
Դու կը տեսնես նրան շատ քիչ փոխված, ասաց  
Սագօն իր սովորական հեգնական եղանակով: —  
Բայց միտդ է, Փարհատ, Ալօի որդեգիրը՝ Հասօն,  
որին մենք գալրոցում կոչում էինք «էշի փալան»:

— Որին մեր վարժապետը կոչում էր «սատ-  
կած», աւելացրի ես, — որը ոչինչ չէր սովորում  
եւ շուտ յոգնում էր, երբ ման գալու էինք գնում:

աշակերտները շատ անգամ ստիպված էին շա-  
լակիլ նրան եւ յետ բերել դաշտից:

— Հէնց նա, գտար. բայց հիմա որ տեսնես,  
չես ձանաչի, այնքան հաստացել է, սարի արջ է  
դարձել. երեւի վրայ եկաւ լեւնային օդը:

— Ի՞նչ է շինում:

— Քրողը տանի նրան, հիմա տուն ու տեղի  
տէր է դարձել, վար է վարում, ցանք է անում.  
կնիկ ունի, ամեն տարի երկու հատ ծնվում են.  
տունը լիքն է երեխաներով. ձանձերի նման վրժ-  
վրժում են:

— Էլի այնպէս մաղձոտ է, որպէս առաջ:

— Հիմա օրինաւոր մարդ է դարձել. իտակ  
հոգի է տալիս, երբ նրա տունն ես մտնում. ու-  
ղում է՝ ինչ որ ունէ, ինչ որ չունէ, քեզ ուտացնէ  
ու այնպէս ձանապարհ դնէ:

— Աւրեմն հարուստ է:

— Գոթան ունի, անասուններ ունի. հէնց  
ես ու դուն մնացինք առանց ոչնչի, Ծարհատ:

Ինձ ամենից աւելի հետաքրքրում էր Մարօն,  
որսորդի ազդիկը, ցանկանում էի նախ քան տես-  
նելս նրա մասին որ եւ իցէ տեղեկութիւն ստանալ:

— Բայց Մարօն, հարցրի ես:

— Մարօն . . . կրկնեց Սագօն մի առանձին  
ոգեւորութեամբ. — այժմ այդ սեւ զեւիկը իր  
թուխ աչքերով բոլորովին խելքից հանում է  
մարդուն . . . Ստանան տանի նրան, էլի այնպէս  
կծում է . . . էլի այնպէս ձանկաւում է, որպէս  
առաջ . . .

— Նա միշտ կատուի բնաւորութիւն ունէր:

Չը գիտեմ ինչու Սագօն ընկաւ խորին տրտմութեան մէջ, երբ Մարօի անունը մէջ մտաւ։ Նա վառեց իր ծխաբարչը, սկսեց ծխել։ Յետոյ, երեւի, առաջին խօսակցութիւնը մոռացութեան տալու համար, առաջարկեց ինձ ծխաբարչը, ասելով.

— Առ, ծխիր այդ «սատանայի բուրլառը»։  
Ես յայտնեցի, թէ ծխելու սովորութիւն չունեմ։

— «Ղարաչիները օրաներում ճգնաւորութիւն չեն անում» . . . պատասխանեց նա ծիծաղելով։

Ես չը հասկացայ, թէ ինչ էր ուզում ասել։

— Շատ հասկանալի է, ասաց նա. — սոփիները, որ սկզբում չեն ծխում, յետոյ սկսում են ծխախոտ ծամել, աւելացնում են դրա վրայ եւ աֆիօն ուտելը։ Այսպէս է լինում ամեն պահեցողիների վերջը։

Ես ընդունեցի նրա ձեռքից ծխաբարչը, ճըլմարիտ, նա դիւր եկաւ ինձ, թէ եւ առաջին անգամն էր, որ ծխում էի։

— Հա, այդպէս, ասաց նա մի առանձին հաճութեամբ, — օրինաւոր բան տեսար, մարդուն էլ է դիւր գալիս, նրա Ստեղծողին էլ։

Սագօն իր ծխաբարչը ընծայեց ինձ, ասելով, թէ ինքը երկու հատ ունի, եւ խնդրեց, իջեւանը հասնելու ժամանակ նրան յիշեցնեմ, որ ինձ ծխախոտ տայ։ Նա հաւատացնում էր, որ առանց ծխախոտի, առանց արաղի ճանապարհորդութիւնը կեանք չունի։ Այդ պատճառով, ես չը դժուարացայ ընդունել նրա ձեռքից արաղի

շիշը, որ մի փոքր խուրճինի մէջ դրած, քարշ էր տուել իր ձիու թամբի գաշից: Թէեւ իմ կեանքում ամենեւին արագ խմած չէի, բայց մի քանի կաթիլ կուլ տալով, շիշը յետ տուեցի. ինձ երեւաց, թէ բերանս կրակով այրեցին: Սագօն բաւական խմեց:

— Տաքացնում է, ասաց նա, — այնտեղ, այն սարերի բարձրաւանդակների վրայ, ցուրտ կը լինի:

Եւ իրաւ, քանի վեր էինք բարձրանում գէպի լերան զառիվերը, գիշերային հովութիւնը այնքան զգալի էր դառնում: Մեր փոքրիկ բարաւանը առաջ էր գնում ամենայն եռանդով: Զիերր այն աստիճան սովորած էին լեռնային անցքերին, որոնց միջով վայրենի այծերը դըժլարութեամբ կարող էին անց կենալ: Մեր ճանապարհը ընկած էր նեղ կիրճերի միջով, ուր անհաւասար, ալիքաւոր դարուփոսերի եւ սարսափելի ել եւ էջների պատճառով, երբեմն ստիպված էինք ցած իջնել ձիերից: Այդ սաստիկ յոգնեցրեց ինձ: Բայց Սագօն յոգնութիւն չէր զգում. կարծես, ժայռերը, ապառաժները իրանց սոսկալի պտոյտներով աւելի ոգեւորում էին նրան: Կարօն եւ Ասլանը գնում էին մեզանից մի քանի քայլ առաջ. նրանք ինչ-որ բանի մասին տաքտաք խօսում էին: Քամին, որ սկսեց փչել բարձրաւանդակների վրայ, չէր թողնում, որ նրանց ձայնը լսելի լինէր: Սագօն խօսում էր ինձ հետ, առանց լռելու, զանազան խառն եւ անկասկածաւոր կաններ իրայ: Բայց որքան եւ աշխատեցի նրանից որ եւ իցէ տեղեկութիւն դուրս քաշել

իրանց անցեալ կեանքի մասին օտար երկրներում,—նա մնաց միշտ զգոյշ եւ ոչինչ չը հազորդեց ինձ:

Բայց որքան գիւթական ազգեցութիւն ունի լեռը, այն եւս հայկական ահաւոր, սքանչելի լեռը: Այդ ազգեցութեան ոգեւորութիւնը ես խկոյն նկատեցի Սագօի մէջ, երբ նա սկսեց իր գեղեցիկ ձայնով եղանակել մի փոքրիկ երգ:



## Ո Ր Ս Ո Ր Դ Ի Տ Ն Ա Կ Ը

Գիշերը մօտենում էր իր վախճանին, երբ հասանք Կ . . . գիւղը, որ գտնվում էր Գուշմանայ լեռների մէջ: Անդադար յարձակումները այդ լեռներից Սալմաստ գաւառի վրայ՝ առիթ էր տուել տեղացիներին այսպէս կոչել նրանց: Գուշմանայ լեռներ նշանակում է թշնամու լեռներ:

Գիւղից դուրս, բլուրի վրայ, միայնակ կանգնած էր փոքրիկ տնակ, որի պատուհաններից մէկը այն ուշգիշերային պահուն, լուսաւորված էր մուայլ լուստի Աղօտ լոյսը քաշեց մեր քարաւանը դէպի իր կողմը: Մենք կանգնեցանք մի քանի քայլ հեռու, միայն Կարօն մօտեցաւ տնակին: Չը գիտեմ նա ինչ խօսեց, ինչ ասաց, միայն այն տեսայ, քանի բոպէից յետոյ բակի դռները բացվեցան, շէմքի վրայ յայտնվեցաւ մի ահագին կերպարանք ճրագր ձեռին: Որքան եւ նսեմացած լինէր իմ յիշողութիւնը, գարձեալ ես այն կերպարանքի մէջ ձանաչեցի որսորդ Ալօին:

Կարօն նշան արեց իր ընկերներին, բոլորը մօտեցան: Մեր առաջին հոգար եղաւ հանգստացնել ձիաները: Ախոռատան քնաթաթախ սպասարին, երեւի, շատ հաճելի չեղաւ տարածամ հիւրերի այցելութիւնը. նա մրթմրթալով դուրս եկաւ իր դարանից: — «Ո՞ր սափանան էս վախտը դուրս կը գայ իր ըունից» — խօսեց քնթի տակից եւ սկսեց ձիաները ներս քաշել դէպի փարախը: Գա իմ նախածանօթ Մըհէն էր, որ առաջ աջակցում էր Ալօին նրա որսորդութիւնների մէջ, իսկ այժմ մի աստիճան եւս բարձրացել էր իր պաշտօնի մէջ, դառնալով անասունների վերակացու: Տղերքը այն աստիճան սովորած էին նրան, որ ամենեւին ուշագրութիւն չը դարձրին նրա դժգոհութեանը եւ պատուիրեցին շատ գարի եւ գարման տայ ձիաներին:

— Մըհէն գիտէ, ասել պէտք չէ, քսան տարի է, Մըհէն ձիաների հետ գործ ունի, պատասխանեց նա խռպոտ ձայնով եւ դիմեց դէպի մարագը:

Որսորդի տնակը, բացի ախոռատանից, բազկանում էր մի քանի փոքրիկ սենեակներից, որոնցից մէկը պատրաստված էր հիւրերի համար. երբ ճրագ վառեցին, ամենքը հուսարկեցան այնտեղ: Եուտով յայտնվեցաւ եւ տանուտէրը, որ բակում կարօի հետ մեղ անլսելի ձայնով խօսում էր:

— Դէ, շուտ, Ալօ, տղերքը ուտել են ուղում, դարձաւ դէպի նա կարօն:

— Գայլի նման, վրայ բերեց Աագօն, — չնչ «հո-

գու բաժինն ունես, ամենը բեր:

— «Տարածամ հիւրը իր բախտից պէտք է գանգատի», պատասխանեց որսորդը թուրքերէն առածով: — Աստուծոյ տուածից ինչ ունեմ, կը բերեմ:

— Ա՛ր են, ոչ մէկը չէ երեւում, հարցրեց Ասլանը:

— Հասօն դաշտումն է, նա իր անասուններն է պահում. անիծված քրդերը խտակ կատաղել են, հէնց որ աչքդ հեռացնում ես, էլ ապրանքիդ տէրը չես: — Մարօն քնած է, ես նրան կը զարթեցնեմ:

Նա դուրս գնաց ընթրիք պատրաստել տալու: Ես մնացի աննկատելի: Ընկերներիցս ոչ ոք չը խօսեց որսորդի հետ իմ մասին. իսկ ես ամաչում էի, որ մօտենամ, նրա ձեռքը համբուրեմ ու ասեմ՝ ես քո Պարհատն եմ, դու միշտ սիրել ես ինձ:

Բայց ի՛նչու ես այնքան ուրախացայ, երբ նա խոստացաւ զարթեցնել Մարօին, ի՛նչու իմ աչքերը այնպէս անհամբերութեամբ նայում էին դէպի դուռը, որտեղից նա պէտք է ներս մտնէր: Ա՛խ, որքան սիրելի է լինում մանկութեան ընկերը, մանկութեան անմեղ բարեկամը:

Տղերքը մի կողմ գրեցին իրանց զէնքերը, նստեցին բուրթից գործած թանձր օթոցներէ վրայ, որոնցմով ծածկված էր սենեակի յատակը: Շատ չանցաւ, ներս մտաւ մի աղջիկ, որ ձեռքով երկու կողմից բռնած, բերում էր մի մեծ պղնձէ սինի, որի վրայ դրած էին՝ լաւաշ, պանիր, եղ-

ջերուի սառը միս, մածուն, կարագ եւ լեռնա-  
յին զանազան բանջարներ: Նա լուռ մօտեցաւ,  
դրեց սինին հիւրերի առջեւ եւ նոյնպէս լու-  
թեամբ հեռացաւ, առանց սչքերը այս կողմ  
կամ այն կողմ գարձնելու: Տղերքը բարեւեցին  
նրան մի քանի սրախօսութիւններով, բայց նա  
ոչ մէկին չը պատասխանեց:

Նա Մարօն էր:

Ամբողջ տասերկու տարի էր, որ չէի տեսել  
նրան: Ո՛րքան մեծացել էր նա, որպիսի ծանր  
կերպարանք էր ստացել այն մշտադուարթ, պայ-  
ծառ դէմքը, որից մանկական ժպիտը երբէք  
պակաս չէր լինում: Տարիները փոխել էին նրան,  
փոխել էին դէպի աւելի գեղեցիկը եւ աւելի  
սքանչելին:

Մարօն կրկին վերադարձաւ. այս անգամ  
բերեց մի ահագին խեցեղէն ամանով գինի: Նրա  
աչքերը հանդիպեցան իմ աչքերին եւ խաղաղ  
դէմքի վրայ երեւաց խռովութեան նման մի բան:  
Նա խօսոյն դուրս վազեց, երեւի, հօրը իմացում  
տալու իմ մասին:

Իմ ընկերները գեռ ինձ «մարգի» տեղ չէին  
դնում եւ այս պատճառով նրանցից ոչ մէկը  
չը մտածեց ներկայացնել ինձ: Իսկ որսորդը այն  
ստտիճան զբաղուած էր իր հիւրերով, որ կամ  
չը նկատեց ինձ, կամ տեսաւ եւ չը ձանաչեց:  
Վերջինը աւելի հաւանական էր:

— Ո՛ր է, ձայն տուեց նա, շփոթված ներս  
մտնելով: — Ո՛ր է Ֆարհատը:

Ես մօտեցայ նրան:

— Ծարհատ ջան, դժն ես, քո հոգուն մատաղ, բացականչեց նա ինձ գրկելով, եւ ուրախութեան արտասուքը ցողվեցաւ արեխառն մօրուքի վրայ.— Տղան, Աստուծոյ աչքը վրադ վնի, որքան մեծացել ես դու... Ի՛նչ շնորհալի տղայ ես դարձել . . . — Աբօ, որտեղից գտար դրան: Անչէի ճանաչելու եթէ Մարօն չստէր:

Աբօն կարճ կերպով պատմեց, թէ որտեղ եւ ինչ դրութեան մէջ գտաւ ինձ: Որսորդը սկսեց ծիծաղել:

— Ես այդ սպասում էի, որ դու կը փախչես այն անպիտանի մօտից, ասաց նա, — քայց ախսո՛ս, որ երկար մնացիր այն «դժոխքի» մէջ:

Դժոխք կոչում էր որսորդը տէր Թօղկիկի դպրոցին: Այդ խօսքը կրկին յիշեցրեց ինձ վաղեմի տանջանքները, որ առժամանակ մոռացութեան էի տուել:

Գեղեցիկ Մարօն հեռուից նայում էր հօր գգուանքին, կարծես, նա էլ ուզում էր մօտենալ ինձ, կարծես, նրա փակված շրթունքի մէջ պահված էին ինձ համար մի քանի քաղցրիկ խօսքեր. — «Ես էլ ուրախ եմ, Ծարհատ, շատ ուրախ, քեզ տեսնելու համար» . . . Բայց ոչ, հայ աղջկայ ամօթխածութիւնը երկաթի փականք էր դրել նրա լեզուին, ես այս խօսքերը կարդում էի նրա, ուրախութիւնից պայծառացած երեսի վրայ:

Որսորդը սկսեց այնուհետեւ հարցնել մօրս մասին, քոյրերիս մասին, թէ որպէս ապրում են նրանք, ինչ վիճակի մէջ են գտնվում, ով է հօգտանում նրանց անբախտութեանը: Քաջալիբեց

ինձ, թէ ես կարող էի օգնել նրանց, մխիթարել մօրս եւ մտածել քոյրերիս բախտաւորութեան մասին: Եւ աւելացրեց, թէ շատ ուրախ է, տեսնելով, որ ես ընկել եմ Կարօի. հասարակութեան մէջ, եւ թէ այդ ընկերութիւնը կարող էր օգտաւէտ վախճանի հասցնել ինձ: Յետոյ նա դարձաւ դէպի Մարօն.

— Գու ինչու մօտ չես գալիս, չես հարցնում Մարիամի, Մագթաղի մասին. չէ՞ որ նրանք քո հին քոյրիկներն էին. ամէն օր մէկ մէկու ծամեր էիք փետտում, մէկ մէկու երես էիք ծւտում, էլի բարիշում էիք: Այդպէս չէ՞, իմ կատուիկ, մոռացել ե՞ս, հա:

Ես յիշեցի այն գիշերը, այն ձմեռնային սարսափելի գիշերը, երբ մորիկը դբում կատաղաբար մռնչում էր եւ ձիւնը առատօրէն մաղվում էր երկնքից: Մենք նստած էինք գերեզմանի պէս ցուրտ խրճիթի մէջ: Մայրս կարում էր, ես վառարանի մօտ քրքրում էի հանգած կրակը: Մարիամը եւ Մագթաղը քնած էին: Աշտանակի վրայ իւղը սպառված ճրագը պլպլում էր, որպէս մի շնչաւոր, որ հոգեվարքի մէջ է գտնվում: Յանկարծ դուի նման ներս վազեց Մարօն, ճարպիկ, աշխուժով լի մի երեխայ, որի անմեղ չարութիւններն անգամ սիրելի էին մեզ: Ես յիշեցի, թէ որպէս քարշ ընկած մօրս պարանոցէն, յիմար-յիմար շատախօսում էր նա եւ տաք-տաք համբուրում էր մօրս երեսը: Նա ուրախանում էր, որ ձիւն է գալիս, եւ մի առանձին երեխայական ոգեւորութեամբ ասում էր, վաղառուօ-

տեան կը վազվզէ նրա մէջ: Ես յիշեցի, թէ որպէս նա յարձակվեցաւ քնած Մարիամի վրայ, իր փոքրիկ ճանկերով բռնեց նրա կոկորդից, եւ կրկին կայծակի արագութեամբ դուրս փախաւ մեր խրճիթից:

Կրկին տեսնում էի այն կեանքով լի, վայրենի երեխային, այժմ հասուն, վայելուչ կազմուածքով, ւանգնած էր իմ առջեւ որպէս մի լեռնային հրեշտակ: Նոյն հրեղէն աչքերը եւ այժմ վառվում էին լի գեղեցիկ վրդովմուքով, նոյն սեւուկ երեսը իր գիււական ժպիտով եւ այժմ կախարդիչ էր:

Չը նայելով հօր խօսքերին, Մարօն չը մօտեցաւ ինձ. միայն ծիծաղեց եւ սննեակից դուրս գնաց, հիւրերի համար մի նոր բան բերելու Ամօթխածութիւնը աւելի իմ կողմից էր, թէ նրա կողմից, — չեմ յիշում, միայն հրկուսիս լեզուն էլ պապանձված էր: Ես չը գիտէի, ինչ խօսել նրա հետ, դրա համար շատ ուրախացայ, երբ Մարօն իր հեռանալով դուրս բերեց ինձ իմ նեղ դրութիւնից: Ես այն ժամանակ միայն զգացի իմ անշնորհքութիւնը, թէ ո՞ր աստիճան անկիրթ էի, թէ որքան կոշտ եւ կոպիտ պատրաստել էր ինձ դպրոցը:

Տղերքն հաւարվեցան ընթրիքի սեղանի շուրջը: Այօն նոյնպէս նստեց մեզ մօտ: Մարօն սպասաւորութիւն էր անում, անդադար ուտելիքներ եւ ըմպելիքներ ներս բերելով եւ դուրս տանելով: Երեւում էր, տանուտէրը առաջուց գիտէր իր հիւրերի գալուստը եւ կանխապէս պատրաստութիւններ էր տեսել նրանց համար: Գիւ-

դական ամեն տեսակ բարիքներից, ինչ որ կարող է մատակարարել երկրագործի եւ խաշնարածի տնտեսութիւնը, գտանվում էր սեղանի վրայ:

Ընթրիքի ժամանակ ես գեռ նոր զննեցի ծերունի որսորդի խորշումներով պատած դէմքը, նրա գլխի եւ մօրուքի ալեւորած մազերը, որոնք առաջ, իմ տեսած ժամանակը, բոլորովին թուխ էին, իսկ այժմ այն երկաթի մարդը ծերացել, շատ եւ շատ փոխվել էր: Նա պահպանել էր միայն իր վաղեմի աշխոյժը, եռանդի կենդանութիւնը եւ հոգու ազնուութիւնը, որպէս մի բոյս, որ թառամած, ցամաքած գրութեան մէջ եւս պահպանում է իր անուշահոտութիւնը:

— Փարհատ, ասաց նա ինձ, — երբ առաւօտեան լոյսը կը ծագի, կասեմ Վարօին քեզ տանէ մեր լեռների վրայ ման ածէ, եւ դու կը տեսնես թէ որքան գեղեցիկ են մեր լեռները:

Իմ սիրտը թնդաց ուրախութիւնից, ես շատ էի սիրում լեռը. որպէս դաշտային երկրի բնակիչ, լեռը միշտ ինձ վրայ մի առանձին դիւթական տպաւորութիւն էր գործում: Բայց իմ ուրախութիւնը կրկնապատիկ եղաւ, երբ մտածում էի, թէ Վարօն պիտի առաջնորդէ ինձ իմ լեռնային զբօսանքի ժամանակ: Ա՛խ, ե՛րբ պիտի լուսանար այդ գեղեցիկ առաւօտը: Համոզված էի, որ Վարօն երկար պիտի խօսէր ինձ հետ, շատ բաներ պիտի հարցնէր քոյրերիս մասին, մօրս մասին, իր բոլոր հին ծանօթների մասին: Բայց դեռ բաւական ժամանակ կար մինչեւ առաւօտը. սրբազանները դեռ նոր էին սկսել երկրորդ անգամ կանչել:

4. գիւղը, ուր բնակվում էր ծերունի որսորդը, գտանվում էր Գուշմանայ լեռների վերայ, որոնք կալմում էին մի շղթայ, որ բաժանում էր Սալմասուրը Հաղբակից: Վասպուրականի սարոտ գաւառներից մէկն է Հաղբակը, որ իր երկարատեւ ձմեռով եւ հովասուն ամառով, թէեւ աւելի յարմարութիւն չունի երկրագործութեան, բայց իր խոտաւէտ արօտներով խիստ նպաստաւոր է անասնապահութեան, որը ժողովրդի գլխաւոր պարապմունքն է: Ամենաջերմ ամառները միայն կարող են հալել մշտական ձիւնը սարերի գագաթից. օդը տոգորված է կազդուրիչ խոնաւութեամբ, եւ ձորերի միջով վազող վտակները եւ աղբիւրները երբէք չեն ցամաքում:

Հաղբակայ սարերի վրայ եւ ձորերի մէջ ցրված են հայոց բազմաթիւ գիւղեր, սրոնք ներկայացնում են մարդու կեցութեան խորին-նախնական դրութիւնը: Գետնափոր տները՝ զանազան ոլոր-մոլոր ուղղութեամբ՝ տարված են հողի տակով եւ ձեւսցնում են կատարեալ լարիւրինթոս, նրանց մէջ իրանց անասունների հետ բնակվում են մարդիկ պարզ, խաղաղական կեանքով: Ամենափորձեալ աչքն անգամ չէ կարող որոշել գետնափոր խրճիթները հողի տափարակ մակերեւոյթից, միայն վաղորդեան ծուխը, երթիկների ծակերից գուրս հոսվող ծուխը յիշեցնում է՝ թէ այն ստորերկրեայ խորշերի մէջ ապրում են մարդիկ . . .

Գարնան սկզբից բնակիչները իրանց հօտերի հետ գաղթում են գէպի հեռաւոր սարերի արօտ-

ները, այնտեղ ապրում են վրոնների տակ մինչեւ  
աշնան վերջը: Գիւղերը համարեա թէ դադարկ-  
վում են տղամարդերից, գերդաստանի ծերունիքը  
միայն մնում են հսկելու տներին, որ աղատ սր-  
հեն նրանց չար ձեռքերի հրդեհելուց:

Բացի հայերից Հաղբակայ սարերի վրայ թա-  
փառում են քրդերի զանազան խաշնարած ցե-  
ղեր, որոնք չունեն հաստատ բնակութիւն, այլ  
տարուայ տաք ամիսները անցուցանում են բաց  
օդի տակ, իսկ ձմեռը զետեղվում են հայերի գիւ-  
ղերում, եւ ամեն մի հայ ընտանիք պարտաւոր-  
ված է պահել մի քանի քուրդ գերդաստան նրանց  
անասունների հետ: Ծանրութիւնը եւ նեղու-  
թիւնը, որ կրում են հայերը այդ ինքնակոչ հիւ-  
րերից, հասնում է վերին աստիճանի անախոր-  
ժութեան: Թողնենք այն, որ տանուտիրոջ կա-  
ցարանն իր համար եւս նեղ եւ անբաւական է,  
ուր մնաց որ նա աւելորդ մարդիկ ընդունէր իր  
խրճի մէջ: Բայց անտանելին այն է, որ շատ  
անգամ ձմեռը տեւում է աւելի երկար քան թէ  
սովորականը, բուրգը սպառում է իր պաշարը,  
այն ժամանակ հիւրնկալը պարտաւոր է խնա-  
մել նրան եւ նրա անասուններին, մինչեւ սա-  
րերից ձիւնը բարձրանայ, խոտերը բուսնեն, եւ  
նա կարողանայ այնուհետեւ ապրել Աստուծոյ  
սեղանից: Տանուտիրոջ մի վաքը ընդդիմադրու-  
թիւնը կարող է նրա կեանքը վտանգի մէջ քցել  
հիւրի կողմից, որի ղէնքերը մարմնի անբաժան  
մասն են կազմում, եւ նրանց իր կրքերին հա-  
մաձայն գործ ածելը՝ չէ արգելում ոչ մի օրէնք:

եւ ոչ մի իրաւունք:

Այս կիսափայրենի ազգը, որ կառավարւում է իր բէկերով եւ շէյխերով, պահպանել է բոլոր քարբարոսական յատկութիւնները մի ժողովրդի, որ չէ խոնարհւում ոչ մի իշխանութեան, եւ իր ազատութիւնը գտնում է իր սրի եւ իր կոպիտ բռնակալական ուժի մէջ: Իսկ նոյն բռնութեան անբախտ զոհն է մի ազգ, որ վաղուց կորցրել է իր սուրբ, որի մէջ վաղուց սպանվել է ազատութեան եւ ինքնապաշտպանութեան ոգին, որ իր գլուխը ամենայն հնազանդութեամբ խոնարհեցնում է ամեն մի անիրաւ ձեռքի ներքոյ . . .

---

## Ժ. 2.

### Ս Ի Ր Ա Հ Ա Ր Ի Գ Ե Ր Ե Ջ Մ Ա Ն Ը

Միւս օրը ես դարձեցայ խիստ ուշ: Նանապարհի յոգնածութիւնը, որ առաջին անգամն էր իմ կեանքում, բաշխել էր ինձ հանգիստ եւ երկարատեւ քուն: Ընկերներիցս ոչ մէկը չը կար այնտեղ, ես մենակ էի մնացել քնարանում: Իսկոյն հագնւեցայ եւ դուրս եկայ, որ տեսնեմ ո՞ր են գնացել նրանք:

Գեղեցիկ էր լեռնային առաւօտը. ճնճողւկները տակաւին չըկչրկում էին վարսագեղ ուռիների վրայ, որոցմով հովանաւորված էր Որսորդի տնակը, եւ արեւի առաջին ճառագայթներով լուսաւորված բակում հաւերն ակորժանօք քաղում էին գետնից հունդերի հատիկները, որ ցրվում էր Մարօն:

Դուրս գալով իմ սենեակից, ես առաջին անգամ նկատեցի, որ Ալօի տնակը թէ իր շինուածքով եւ թէ մաքրութեամբ համարեա մի սպալատ էր, գիւղի միւս խրճիթների հետ համեմատելով: Նա կանգնած էր գետնի մակերեւոյ-

Թից բաւականին բարձր. պարունակում էր իր մէջ մի քանի փոքրիկ սենեակներ, նեղ պատուհաններով, ուր ապազու փոխարէն լուսամուտները պատած էին թղթով: Պատերը թէ ներսից եւ թէ դրսից ծեփած էին սպիտակ կաւով, որոնք շատ կոկելուց մի առանձին փայլ էին ստացել: Խրճթի մէկ մասը բաժանած էր անասունների համար, այնտեղ զետեղված էին՝ ախոռը, մարագը եւ ոչխարների գոմը:

Մարօն ինձ տեսնելով, մօտ վազեց եւ հեզնական ժպիտը երեսին ասաց.

— Տես, նրանք գնացին, քեզ այստեղ թողեցին. ի՞նչ տղայ ես, այսքան էլ կը քնե՛ն. կասես թէ, շատ ճանապարհ է եկել, — մի օր եւ կէս, այն էլ ձիով, — դրա համար յոգնել է . . . ԾճՂ — Ես ոտով մինչեւ Բարդուղիմէոս գնացի, ինչքան պապան ասաց, ձին չը նստեցի, ուխտ էի արած: Երբ այնտեղ հասա՛ք, չես հաւատայ, Պարհատ, ողջ գիշերը չը քնեցի. հէնց պար էի գալիս եւ թռչկոտում . . . Ա՛խ, ի՛նչ լաւ էր այն գիշերը. ափա՛ս այնտեղ չէիր, Պարհատ: Ախտաւորները հէնց աժում էին, աժում, «ջան գիւլում» ասում, ու խաղում էին մինչեւ լոյս . . .

Որքան ինձ անտրտեղի էր լսել Մարօից նրա ուխտագնացութեան ուրախալի, մի եւ նոյն ժամանակ անկապ պատմութիւնը, այսուամենայնիւ, ես անհամբերութեամբ նրա խօսքը կտրեցի, հարցնելով, թէ ո՛ւր գնացին տղերքը եւ ի՛նչու ինձ թողեցին:

Նա ասաց, թէ տղերքը տեսնելով, ես քնած

եմ, թողեցին հանգստանալ, իրանք գնացին որսորդութեան, թէ նրանք պատուիրեցին Մարօին յայտնել ինձ՝ եթէ ես ցանկութիւն կունենայի մասնակցիլ որսորդութեանը, կարող էի գտնել նրանց Խանա-Սօրի ձորի մէջ:

— Կուզես ասեմ, որ Մըհէն քո ձին թամբէ, հարցրուց Մարօն:— Գու մի բան չես ուտի, ճանապարհը հեռու է, մինչեւ Խանա-Սօրի ձորը, շատ հեռու է, կը քաղցես: Ես հիմա կաթը տաքացրի, սերը քեզ համար պահեցի: Կուտնս բերեմ:

«Քեզ համար պահեցի» . . . այս խօսքերը հընչեցին իմ ականջին, որպէս քրոջ խօսքեր իրանց բոլոր անուշահոտութեամբ: Նա գեռ մտերիմ էր ինձ հետ, որպէս առաջ, երբ գեռ երեխայ էր, երբ իրանց տանից կերակուր էր բերում մեզ, որը բարի Որսորդը բաժանում էր իր աղքատ գրացու հետ:

— Բեր, կուտեմ, պատասխանեցի ես:— Խնչու հէնց «ինձ համար» սերը, հարցրի յետոյ:

— «Լաւ է նոր սատանան, քան հին քահանան», ասաց նա ծիծաղելով:— Կարօն եւ Ասլանն էլ այնքան երեսի տեղ չունեն, Սագօն իսօ զահայ է տանում. ես նրան համբերել չեմ կարող: Բայց մենք վաղուայ ընկերներ ենք, այդպէս չէ՛, Փարհատ:

— Ես այդպէս չէի մտածում, ես մտածում էի՛ երբ Մարօն ինձ տեսնէ, կասէ՛՝ գու իմ ընկերը չես, գու ինձ ծեծում էիք, երբ երեխայ էի:

— Խնչ անենք, ես էլ Մարիամին ծեծում էի, մի օր երեսը ճանկուտեցի, արիւն գարս եկաւ.

Հիմա այնքան ուզում եմ, այնքան ուզում եմ որ նրան տեսնեմ, նա Հիմա ինձ չի կանչի «բոջայ», նա Հիմա խելօքացել է. չէ՛, Փարհատ:

— Աւելի քան Մագթաղը: Բայց դու Մագթաղին շատ էիր սիրում:

— Մագթաղը խեղճ՝ երեխայ էր, Մարիամը գազան էր. անի, Սստուած, մէկ օր չէր անցնի, որ մենք մէկ մէկու պատահելիս՝ չը կուլենք: Ի՛նչքան յիմարներ էինք մենք . . .

Վաղեմի յիշողութիւնները զարթեցրին նրա մէջ տխուր զգացմունքներ, եւ ուրախ աղջկայ պայծառ երեսը մռայլվեցաւ սեւ թախիժներով:

— Ա՛խ, ի՛նչ լաւ էր Սալմաստը, Փարհատ, այն այգիները, այն պարտէզները . . . Այտտեղ, այս սարերի մէջ մանր թռչիկներից աւելի ոչինչ չես տեսնի: Ա՛խ, ի՛նչ լաւ էր այնտեղ:

— Օ՛հ, ես խտակ մտացայ քո նախաձաշիկը . . . ասաց նա եւ վաղեց դէպի մերձակայ սենեակը:

Ես մտայ քնարանը, որ մի եւ նոյն ժամանակ տանուտիրոջ Հիւրանոցն էր: Բաթունը, ծերունի որսորդի տնակալուչ պառաւը, արդէն հաւաքել էր իմ քնաշորերը եւ սենեակը սարքել էր: Պառաւի հնացած աչքերը չը կարողացան ճանաչել ինձ. նա խիստ կարճատես կերպով նայեց իմ երեսին, ինչ որ փնթփնթաց քնթի տակից, եւ գողգողուն քայլերով դուրս գնաց:

Քանի բոսկէից յետոյ, փոքրիկ փայտեայ մատուցարանի վրայ դրած, Մարօն ներս բերաւ իմ նախաձաշիկը, որ բաղկանում էր սերից խառն

մեղրի հետ. ես սկսեցի ուտել սպիտակ լաւաշ-ներով: Մարօն կանգնած էր իմ մօտ եւ պտրտեցնում էր իւր «թէշին»: Կարծես, այն գեղեցիկ մատները չէին սովորել անգործ մնալ:

— Փարհատ, գու շուտով չես գնայ մեր տանից, այդպէս չէ, հարցրեց նա շարունակելով «թէշին» պտրտացնելը:— Ի՞նչ վատ բուրթ է, սատանան տանէ, որքան աշխատում ես բարակ մանեկ, գլուխ չէ գալիս:

— Գու ուզում եմ, ձեզ մօտ մնամ:

— Ի՞նչու չեմ ուզում: Բայց այստեղ լաւ չէ գիւղումը, ես պապային կասեմ, մեզ տանէ «օրան», այնտեղ լաւ է, շատ լաւ է չադրների մէջ: Առաւօտեան վեր ես կենում, մտիկ ես տալիս չորս կողմդ, ամեն տեղ կանաչ է, ծաղիկները վառվում են ուլունքների նման, գառները, ոչխարները թռթռում են դէպի արօտները . . .

Սոյն միջոցին յայտնվեցաւ Մըհէի վիթխարի կերպարանքը, նա կիսով չափ կուանալով, անցաւ դռնից, եւ կանգնելով շէմքի մօտ, ասաց.

— Զին հաղիր է, եւ ծուռ կերպով նայելով Մարօի երեսին, գուրս գնաց:

Ես հրացանս բաշ տալով ուսիցս, պատրաստվեցայ ճանապարհ ընկնել:

— Գու ճանապարհն իմանում եմ, հարցրուց Մարօն:

— Զեմ իմանում, բայց կը գտնեմ:

— Գթուար է: Ես բեզ կը հասցնեմ մինչեւ «Ծակ-քարը», այնտեղից ուղիղ ճանապարհ կայ մինչեւ Խանա-Սօրի ձորը:

— Յետոյ գու կարճը ես մեծակ յետ դեռնալ:

— Ես գիշերն էլ չեմ վախենում, երբ սարերի վրայ մեծակ ման եմ գալիս, պատասխանեց նա ժպտալով:

— Բայց ինձ այն աստ, նրանք ձիւով գնացին:

— Չէ, ոտով:

— Ես ինչու չեմ գնում ոտով:— Մըհէ, ինձ պէտք չէ:

— Ձիւն պէտք չէ . . . կրկնեց փիթխարին, դժգոհութեամբ իմ երեսին նայելով:— Եգ պէտք էր առաջ փիբր անել եւ սատանայի տանջանք չը տալ մարդուն . . .

— Նա գիժ է, ինչ է, հարցրի Մարօից, երբ ծառան հեռացաւ:

— Նա շատ լաւ մարդ է, բայց կը արաքլի, թէ մի բանի վրայ չը խօսայ, երբ նրան գիւր չէ գալիս:

Մի նեղ շաւիղ, որ տանում էր գէպի Ծակքարը, ոլոր-մոլոր պտոյաներով անցնում էր բլուրների միջով, անգագար գէպի վեր բարձրանալով, եւ գէպի վայր իջնելով: Մարօն հագած ունէր մի պարզ, խայտաճամուկ զգեստ, որը կարելի էր տեսնել քիւրդ հովուհիւների հագին: Նրա սեւ գանգուրները գեղեցիկ կերպով ծածանվում էին բարակ քամուց, որ փչում էր ծովակից: Ամենահամարձակ այժեամն այնպէս թեթեւ, այնպէս յանդուգն չէր կարող թռչել այն քարաժայռերի միջով, որպէս Մարօն: Լեռնային օդը եւ բշտապ ճանապարհորդութիւնը ազդեցին մանուկ օրիորդի երեսի վրայ, եւ նրա արե-

«ից այրված թուխ-թաւիշեայ թշերը ստացան մոյգ-վարդագոյն պայծառութիւն»

Ես բոլորովին հիացած էի այն կիսավայրենի չեռնականի սիրուն եւ վայելուչ կազմվածքով, որ այնքան առաձգական էր եւ թերունւոյն Ես երբէք երեւակայել չեմ կարող այնպիսի գեղեցիկ աչքեր, մեծ սեւորակ աչքեր, հովանաւորված խիտ թերթերունքով, այնպիսի գեղազրական յօնքեր, որոնք միանում էին խոտորնակի գծերով։ Արքան ինքնախտահութիւն կար նրա համարձակ շարժումներին մէջ. որքան կեանք կար այն ընտելեան ազատ եւ հաւատարիմ զուակի մէջ . . . Ես իմ մտքում նրան համեմատում էի գեղեցիկ Սօնայի հետ, որի ամեն մի գծերից արտայայտվում էր ընտանեկան բռնութիւնից ճշնշուած եւ տանջված աղջկայ երկչոտ-ամօթխածութիւնը . . . Մեծ տարբերութիւն . . .

Մի տեղ ճանապարհի կողքին կուտակված էր փոքրիկ բլուր, որ բաղկանում էր քարերի մանր կտորներից. համեմտելով այնտեղ, Մարօն առեց գետնից մի քար եւ նետեց նոյն բլուրի վրայ։ Ես հարցրի այս խորհրդական գործողութեան պատճառը։ Նա պատասխանեց, թէ այս բլուրին ասում են «սիրահարի գերեզման» եւ պատմեց մի հին աւանդութիւն, որպէս թէ, մի տղայ եւ մի աղջիկ միմեանց շատ սիրելիս են եղել, հայրը չէ ուղեցել իր աղջկան այն տղային՝ տալ. նրանք միարձանվում են, եւ տղան մի գիշեր փախցնում է իր սիրուհին։ Հայրն իմանում է, աղջկայ ետնէն է ընկնում, եւ այս ձորի մէջ բռնելով, ա-

աւանց մի խօսք տեսլու, իր խէնջարը խրում է նրա սիրտը եւ սպանում է: Տղան այս տեսնելով, չէ կարողանում համբերել իր կակիժին, եւ մի ժայռի գլխից իրան վայր է գցում եւ մեռնում է:—Մարօն ցոյց տուեց բարձր ժայռը, որի մօտ նոյնպէս կուտակված էին մանր քարերի կտորտանք:—Աղջկան թաղում են այնտեղ, ուր թափվել էր նրա արիւնը, իսկ տղային այնտեղ, ուր ընկած էր նա ժայռից: Այն օրից նզովք էր դրուել, որ ամեն մի ճանապարհորդ, այնտեղից անցնելով, մի քար գցում է նրանց գերեզմանի վրայ, ի նշան այն նախատինքի, որով այն աղջիկը մրոտեց իր հօր եւ մօր անունը:

—Դու էլ այն աղջկան վատ ես համարում, որ քարկոծում ես խեղճի գերեզմանը, հարցրի ես,

—Սէկ աղջիկ, որ ուրիշ տղայի ետնէն է ընկնում.—այդ վատ չէ, հարցրեց նա պինդ ձայնով:

—Ապա ի՞նչ պէտք է անէ, երբ սիրում է տղային: Սիրելն ի՞նչով է վատ:

Նա սկսեց ծիծաղել, սրպէս թէ լսում էր ինձանից մի յիմար խօսք:

—Աղջիկն ի՞նչպէս կարող է սիրել տղային, երբ հէրն ու մէրը ատում են: Հա թող սիրէ, այդ ոչինչ, նրա կամքով իսօ չէ, որ օտար տղայի ետեւից թրեւ է գալիս: Ամօթ չէ:

Ես ուզեցի հերքել նրա ասածը, բայց նա իմ խօսքը կտրեց, եւ մի կծու խոժոռմունք գործելով իւր գեղեցիկ երեսի վրայ, ասաց.

—Է՛հ, դարտակ բաներ մի խօսի, գլուխս

տանում ես . . .

Նա վազեց առաջ:

Ճանապարհը Մարօի համար սովորական լինելով, չէր զգում նրա երկարութիւնը: Եւ համարեա թէ յոգնեցայ: Բարձրանալով բլուրի գագաթին, նա կանչեց.

— Դիբօ, Դիբօ:

Նրա դիլ եւ ձգական ձայնը արժաթի հընչիւններով տարածվեցաւ հեռու սարերի մէջ:

Հանդիպակաց բլուրի ետեւից յայտնվեցան մի քանի փոքրիկ կերպարանքներ, որոնք թրուցկոտելով, եւ ճիշտ բարձրացնելով, վազեցին Մարօի առաջ: Դրանք երեք կիսամերկ աղջիկներ էին, այնտեղ արածացնում էին Կ. գիւղի ուլերը եւ գառները: Մարօն բաժանեց նրանց հաց եւ պանիր, որ բերել էր իր հետ: Փոքրիկ հոլուհիքն ուրախութեամբ ընդունեցին առատ նուէրը բարերար ձեռքից եւ խփոյն սկսեցին ուտել:

— Ես խօսեցրի մէկին, որին Մարօն կոչում էր Դիբօ:

— Ի՞նչ կանես, եթէ գայլը քո գառներից մէկը գողանայ:

— Սօրօն չի թողնի, պատասխանեց փոքրիկ հոլուհին, խժռած աչքերով նայելով իմ երեսին:

— Ո՞վ է Սօրօն:

Նա փոխանակ պատասխանելու, երեսը շուռ տուեց, եւ մատները բերնին գնելով, շվացրուց: Ժայռերի ետեւից յայտնվեցաւ կապտագոյն շուն, որ մազոտ սոյր թափ տալով, վազեց Դիբօի մօտ, եւ խօրին մտերմութեամբ սպասում էր նրա հը-

բամանին:

Տեսնելով գազանին, ես յետ քաշվեցայ:

—Մի վախիր, քաջալերեց ինձ Գիրօն:—Սօրօին կասեմ՝ քեզ չը կծէ:


—Ես ծիծաղեցայ: Մարօն գրկեց Գիրօն, համբուրեց նրա այրված թշերը:

—Այստեղից մենք կը բաժանվենք, գարձայ ես դէպի Մարօն:

—Կուզե՞ս, քեզ կը տանեմ մինչեւ Խանա-Սօրի ձորը, ասաց նա ուրախ դէմքով:—Վախում եմ ճանապարհը կորցնես:

Ես պատասխանեցի, թէ այդ խիստ դժուար կը լինէր նրա համար, որովհետեւ արեգակն արդէն սկսել էր այրել եւ խնդրեցի միայն ցոյց տալ, թէ ո՞ր կողմից պէտք է գնալ: Նա այնպիսի ճշտութեամբ նկարագրեց ճանապարհի ընթացքը, մինչ ես մտածում էի, թէ աչքերս խփած կարող եմ գնալ: Երեւում էր, այն լեռների բոլոր շաւիղները, իրանց պտոյտներով, իրանց ելեւէջներով նրան ծանօթ էին: Նա գիտէր իւրաքանչիւր ժայռերը, ալբիւրնները, առուակները: Նա ճանաչում էր մինչեւ անգամ նշանաւոր թուփերը:

Ես հեռացայ: Մարօն երկար կանգնած շփոթութեամբ գլխին, հետազօտում էր իմ գնացքը, մինչեւ բլուրները թաքցրին իմ տեսութիւնից նազելի գէմքը:



## ԺԷ.

ԵՐԿՈՒ ՈՐՍ ՄԻԱՍԻՆ

Արեգակն արդէն բարձրացել էր իւր կէսօրեայ տեղը, նրա այրող ճառագայթները, հանդիպելով սարերի հովութեանը, թուլանում էին, կորցնում էին իրանց կրակոտ զօրութիւնը: Քաղցր էր շնչել լեռնային օդը, տոգորված ծաղիկների անուշահոտութեամբ: Անցնելով ամեն մի բլուրից, ամեն մի հովիտից, իմ առջեւ բացվում էր մի նոր տեսարան, այնքան հիանալի, այնքան յափշտակիչ, որպէս մի գեղեցիկ պատկեր իր հրաշալի արհեստագործութեամբ: Ուր եւ նայում ես, լեռնային երկրի կանաչ մակերեւոյթը ծածկած է բարձր եւ գալար խոտերով, նրանց միջից վառվում են ծաղիկների հազարաւոր տեսակներն իրանց հրապուրիչ պայծառութեամբ: Տեղ-տեղ խուլ մրմուռնջով վազում են վտակներ, ամօթխածաբար թագնված խոտերի մէջ. երբեմն նրանք նազելով ցոյց են տալիս իրանց արծաթափայլ երեսիկները, եւ կրկին ժլպտելով ծածկվում են խիտ եղեգնաբոյսերի մէջ:

Փոքրիկ ջրային ծտերը միայն ուրախ-ուրախ սա-  
լառնում են նոյն վտակների վրայ, եւ անդա-  
դար վերուվայր թռչկոտելով, դիպցնում են իրանց  
կուրծքը բիւրեղային մակերեւոյթին, խլելով ալիք-  
ների միջից մի անբախտ միջատ, որ տարվում  
էր անխնայ հոսանքի հետ . . .

Այք ես դարձնում դէպի Գուշմանայ ձորը,  
եւ ահա մերկ քարաժայռի գագաթին դեռ կանգ-  
նած են կիսակործան աշտարակները մի հին ամ-  
րոցի: Աշտարակներից մէկի ատամնաւոր վեր-  
նապարտի գլխին միայնակ նստած է ահագին  
սեւ արծիւը եւ լուռ մտախոհութեամբ նայում  
է դէպի խորին անդունդը, որ բացված է նրա  
առջեւ: Նա նստած է անշարժ եւ վեհափառ  
կերպով, եւ նրա սրատես աչքերը որոնում են  
ձորի մթին խորութեան մէջ ցանկալի որսը . . .

Եւ ականայ յիշում ես հին աւանդութիւնը՝  
արդեօք նա չէր մի ժամանակ այդ աւերակներին  
տիրապետող հսկան, որ չար կախարդի դիւթե-  
լով արծուի կերպարանք ստացաւ, որ ծնշում էր  
իր բռնութեան ներքոյ ամեն կենդանութիւն,  
որ ուր եւ գնում էր, իր ետեւից թողնում էր  
անապատ եւ ամառութիւն . . . Նոյն աշտարակի  
բարձրութիւնից, ուր այժմ նստած էր արծիւը,  
ամեն առաւօտ մի զոհ գլորվում էր դէպի խո-  
րին անդունդը . . . մի զոհ, որից նոյն գիշեր խլել  
էր ամրոցի իշխանը նրա կուսական անմեղու-  
թիւնը . . .

Այսպէս, յափշտակված երբեմն բնութեան գե-  
ղեցկութիւններով եւ երբեմն հին աւանդութիւն-

ների յիշողութեամբ, շարունակում էի իմ գընացքը: Իսկ բոլոր տպաւորութիւնները հետզհետէ անյայտանում էին, ես ընկնում էի մի կախարդական ինքնամոռացութեան մէջ: Բայց մի բան մոռանալ կարող չէի, մի տպաւորութիւն մնում էր իմ մտքում անջնջելի,—այն էր Մարօի գեղեցիկ պատկերը:

Բայց միթէ նրա մէջ սիրո՞ կար, ջերմ եւ սիրող սիրտ, միթէ նա զգում էր, թէ ի՞նչ բան է սէրը . . . Ոչ, նա այդ չէր զգում: Նրա հոգու սրբարանի մէջ երբէք չէր վառւիել այդ կրակը, եթէ ոչ, նա այնպէս անգութ կերպով չէր քարկոծի «սիրահարի գերեզմանը» . . .

Մարօն մի տեսակ ստրուկ էր, որպէս Սօնանս նա ճնշուած էր ծնողաց բռնակալութեան ներքոյ, իսկ Մարօն վաղիմի նախապաշարմունքների բայց վերջինն աւելի սարսափելի կերպով խեղզում է ամեն մի հոգեկան թարմ եւ ընդարոյս զգացմունք . . .

«Հա՛ թող սիրէ, ասում էր նա, այդ ոչինչ . . . ազդկայ կամքով խօ չէ» . . .

Եւ իրաւ, միթէ հայ ազօրիկը կամք ունի. միթէ նա զգացմունքների տէրն է:

Ճարտերսիւնով այսպիսի մոռախոհութեանց մէջ, ես բոլորովին մոռացել էի Մարօի պատուէրը ճանապարհի ուղղութեան մասին: Ես հասկացայ որ մոլորված եմ միայն այն ժամանակ, երբ իմ առջեւ բացվեցաւ մի ահագին կիրճ, որից անցնել անհնարին էր: Յետ դառնալ եկած ճանապարհով չէի կարող, որովհետեւ ամենեւին չէի յի-

շում, թէ որպէս յայտնվեցայ այնտեղ, իսկ յառաջ գնալ անկարելի էր:

Ես բոլորովին շփոթվեցայ:

Արեւն արդէն սկսել էր թեքվել դէպի գիշերային մութը, երեկոյեան ցուրտը հեազհետէ գառնում էր անտանելի: Մի կողմից ես զգում էի յոգնածութիւն, միւս կողմից, քաղցը նեղում էր ինձ: Արքան երկար պէտք է թափառած լինէի ես, որ անցուցել էի այնքան ժամանակ իսկ Մարօն ասում էր, թէ կը հասնեմ սրտորգութեան տեղը ոչ յետոյ քան կէսօրից երկու ժամ անցած: Իսկ այժմ երեկոյ էր: Արեւի թեքված ճառագայթները լուսաւորում էին սարերի գագաթները միայն, որոնց ստուերը գնալով՝ ընդարձակ եւ հսկայական տարածութիւն էր ստանում:

Ես յիշեցի, Մարօն ինձ ճանապարհ գցելու ժամանակ դրեց իմ որսորդական մախաղի մէջ մի շիշ, դուրս բերեցի, նա լիքն էր գինով: Մախաղիս մէջ գտայ եւ լաւաշում փաթաթած սառն միս: Իմ ճաշն արդէն պատրաստ էր: Նստելով փափուկ խոտերի վրայ, ես յագեցրի իմ քաղցը, սպասված ուժերս կրկին վերագարձան, ես բոլորովին հանգստացայ: Այժմ ինչ պէտք է անել, դէպի որ կողմ գնալ, — կրկին զարթեցաւ իմ մէջ անհանգստութիւնը:

Աչք ածելով իմ չորեք կողմը, ես յարմար համարեցի վեր ելնել մերձաւոր սարի բարձրութիւնը, եւ այնտեղից դիտել, թէ դէպի որ կողմը կարելի է գնալ: Այդ տեսեց քառորդ ժամ:

Բարձրաւանդակից ես տեսայ՝ սարի միւս կողմում դէպի աջ տարածվում էր մի նեղ տափարակ, որի վրայ տեղ-տեղ նկատելի էին լինում սեւ եւ շարժուն կէտեր, որոնց ամբողջ հաւաքածուն նմանութիւն էր բերում արածող անասունների նախիրին: Այդ տեսարանը խիստ ուրախութիւն սլատճառեց ինձ, ես մտածում էի՝ եթէ նրանք հօտեր են, ուրեմն, կունենան իրանց մօտ եւ հովիւներ, որոնք ցոյց կը տան ինձ ճանապարհը գտնեալ յետ դառնալ և. գիւղը: Այս նպատակով ես սկսեցի վայր իջնել դէպի տափարակը, եւ բաւականին յառաջ գնալով, նկատեցի, որ իմ երեւակայութիւնն խաբել էր ինձ, շարժուն կէտերն անասուններ չէին, այլ թուփեր, որոնք տեղ-տեղ ծածկում էին անապատի անհարթ երեսը, որը հեռուից երեւում էր որպէս տափարակ:

Այժմ ինչ պէտք էր անել: Ես բոլորովին ընկայ յուսահատութեան մէջ: Ես երկիւղ չունէի, որ գիշերը բացօթեայ կը մնամ լեռների մէջ, ես երկիւղ չունէի ոչ ցրտից եւ ոչ գազաններից: Ես միայն ամօթ էի կրում, իմ հպարտութիւնը տանջում էր ինձ: Ես ամօթ էի կրում Մարօից, որ այնպէս յիմարաբար վարվեցայ նրա ուղեցուցութեան հետ: Ես ամօթ էի կրում ընկերներիցս, որոնք առաջին քայլից կը նկատէին իմ թուլութիւնները եւ իմ անընդունակութիւնը . . .

Յանկարծ լսելի եղաւ մի խուլ որոտմունք, որի արձագանքը կրկնվեցաւ հեռուոր լեռների

մէջ, նորան հետեւեց երկրորդը եւ երրորդը: Այժմ պարզ որոշեցի, թէ հրացանի ձայներ էին: Բայց ուրքեր էին նետողները: Անկերներս չէին կարող լինել, որովհետեւ իմ գանձած տեղը շատ հեռու էր Խանա-Սօրի ձորից: Ուրեմն, մտածում էի ես, կամ ուրիշ որսորդներ պէտք է լինեն, կամ աւազակներ, որոնք թաղանուժ էին ոչխարների հօտեր: Բայց ինձ համար մի եւ նոյն էր, ուրքեր եւ լինէին, ես միայն ուրախ էի, որ կը հանդիպեմ մարգիկներին:

Ես սկսեցի գիտել գէպի այն կողմը, ուսկից լսելի եղան ձայները, եւ որքան մօտենում էի, այնքան պարզ լսելի էր լինում շների խառնաձայն աղաղակը: Այժմ անտարակոյս էի, որ կը հանդիպեմ որսորդների: Բայց մինչեւ նրանց մօտ հասնելը, պէտք էր անցնել մէկ բլուրի վրայով: Գեւ նրա բարձրութեան կէտին չը հասած, որտաց մի կռնչիւն, եւ ես տեսայ՝ ինձանից քսան քայլ հեռու վազում էր ահագին դարան (վարազ): Հրացանս ուսիցս վեր բերելը եւ նրան արձակելը երկու վայրկենի գործ եղաւ: Գնդակը թէեւ դիպաւ իւր նպատակին, բայց հարուածը մահաբեր չեղաւ. նա անցաւ դարանի աջ ոտքի աղբրից: Հրէշաւոր կենդանին, ամենեւին չը զգայով իւր վերքի ցաւը, դարձաւ գէպի ինձ: Յարձակմունքը այնքան շուտափոյթ եղաւ, որ նա ամենեւին միջոց չը տուեց կրկին լցնել հրացանը: ձգնաժամը վճռական էր: Կատաղի գազանը, բարկացած, հրաբորբոք աչքերով արդէն մօտեցել էր ինձ . . . Ես մի կողմ ձգեցի հրացանը եւ պատ-

բօնը, որ ձեռքիս ունէի, իմ պաշտպանութեան միակ զէնքը մնաց խէնջարս, որ նոյն ակնթարթում խրվեցաւ դարանի կողքում: Նա արձակեց մի սարսափելի հառաչանք, բայց դարձեալ չը կորցրուց իր զօրութիւնը: Նա փորձ փորձեց գործ դնել իր դուրս ցցուած ժանիքները, բայց հարուածն անցաւ անյաջող, որովհետեւ ես կայծակի արագութեամբ մի սաստիկ թռչչը գործեցի դէպի գաղանի գաւակը, եւ նոյն բռնութեամբ խէնջարիս երկրորդ զարկը խիստ խորին կերպով անցաւ նորա փորի մէջ: Նա դեռ սարսափելի ընդդիմադրութեամբ պատերազմում էր: Այդ մահու եւ կեանքի զարհուրելի տագնապի միջոցին, ինձանից ոչ այնքան հեռու, որտաց մի հրացան. գնդակը անցաւ ուղղակի որսի գլխի մէջ. վիթխարին մի քանի անգոր շարժումներ գործեց եւ գլորվեցաւ գետին . . .

Ես յետ նայեցայ, տեսնում եմ՝ Մարօն, հրացանը ձեռին, հեռու կանգնած, ժպտում էր . . .


Ո՛ր կարող էր պատմել իմ ուրախութիւնը: Ես բոլորովին թաթախված արեան մէջ, վազեցի նրա մօտ, եւ գրկելով իմ ազատիչը, պի՛նդ ճնշեցի քաջագնական կուրծքը իմ սրտի վրայ . . .

Մարօն պատմեց, թէ բաժանվելով ինձանից, նա իսկոյն չը դարձաւ դէպի գիւղը, այլ բարձրանալով «Ծակ-քարի» գլխին, այն տեղից հետագօտում էր իմ ուղեւորութիւնը: Նա տեսաւ, դեռ ճանապարհի կէսը չը հասած, ես խոտորվեցայ ուղիղ շաւիղից, որ տանում էր դէպի Խանա-Սօրի ձորը: Նա իսկոյն վազեց իմ

ետեւից, մի գուցէ ես բոլորովին մոլորակէի լեռ-  
ների մէջ: Մի քանի ժամ նա կորցրուց ինձ իր  
տեսութիւնից, եւ երկար որոնելով, կարողացաւ  
գտնել այնտեղ, ուր յայտնվեցաւ զարանը: Նա  
շատ անգամ կանչեց ինձ, զգուշացրեց, բայց  
ես տաքացած լինելով պատերազմի խռովութեան  
մէջ, չը կարողացայ լսել նրա ձայնը: Եւ իմ  
առաջին անյաջող նետումից յետոյ, երբ ես մի  
կողմ ձգեցի հրացանը եւ պատրօնը, նա օգուտ  
բաղեց այդ գէպից, իսկոյն լեցրուց հրացանը  
նոյն պատրօնով, իսկ հետեւանքը՝ — արդէն յայ-  
տնի էր:

Այս խօսակցութեան միջոցին մենք չէինք  
նկատում, որ չորս հոգի կանգնած բլուրի գա-  
գաթին, դիտում էին այն տեսարանը, որ հան-  
դիսացաւ քանի ըստէ առաջ. նրանք մօտեցան  
մեզ. մէկը որսորդ Ալօն էր, միւս երեքը՝ իմ  
ընկերներն էին: Ծերունին առեց իւր գրկի մէջ  
ինձ եւ իր գուտորը, համբուրելով ասաց.

— Դուք երկուսդ էլ արժան էք որսորդ Ալօի  
որդիք կոչվելու . . .



## ԺԸ.

ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԽՆՁՈՐԸ

Լեռների մերկ գագաթները պատեց երեկոյեան ստուերը, իսկ ձորերի մէջ լոյսը հետզհետէ աղօտ գոյն էր ստանում, միայն ոսկեգոյն ամպերը, որոնք ահագին բեկորներով գլորվում էին օդի բարձրութեան մէջ, դեռ արտափայլում էին հանգչող արեգակի վերջին ճառագայթների ծիրանի շառաւիղներով:

Գեղեցիկ երեկոյ էր, լեռնային երեկոյների այն ժամը, երբ քաղցր հնչում են հովիւների երգերը, երբ ախորժ է լսել արօտից դարձող ոչխարների խառնաձայն բառաչմունքը եւ ձիերի երամակների ուրախ խրխինջը, որոնք կայտաբերով վազում են դէպի իրանց գիշերային օթեւանը: Նոյն ժամուն թեթեւ քամին նազելով քրքրվում է քո երեսին եւ բարակ, մելօդական հնչումներով մրմնջում է՝ «չնչիր լի կուրծքով անուշահոտութիւնը, որ ես խլել եմ հազարաւոր ծաղիկներից»:

Բայց ինձ զգալի չէին այս ձայները, ես չէի

լսում ոչ զեփիւռի մեղեաին եւ ոչ հօլուի երգը, ինձ գրաւել էր միայն Մարօն, միշտ նրան էլ տեսնում եւ նրա ձայնը լսում, թէ եւ նա ամենեւին չէր խօսում:

Մեր վերադարձը գէպի Կ. . . գիւղը տեւեց բաւականին երկար, որովհետեւ այժմ բոլորովին այլ ճանապարհով էինք գնում: Մութը վաղուց պատել էր եւ ամառնային գիշերի աստղերը վառվում էին հիանալի փայլողութեամբ:

Խօսակցութեան առարկան նոյն աւուր որ սորգութիւնն էր. ծերունի Ալօն հանաքներով ծաղրում էր Ասլանի եւ Սագօի անճշգրտութիւնը որոնց երկուսի նետումները զաբանը սպանելու համար անցել էին իղուր: Սագօն աշխատում էր իւրեան արդարացնել զանազան պատճառներով իսկ Ասլանը ոչինչ չէր պատասխանում, նա ընկած էր, որպէս երեւում էր, խիստ տխուր մտատանջութեան մէջ: Սովորականից ուրախ էր Կարօն. նա խորին եղբայրական բարեսրտութեամբ ձեռք դրեց իմ ուսին, ասելով.

— Դու առանց սրտի չես, Ֆարհատ, քեզանից մի բան կը գորս գայ . . .

Մարօն գնում էր մեզանից առաջ իւր հօր հետ: Նա բոլորովին լուռ էր. կարծես, նրա հրպարտութեանը ընդգէմ էր լսել այն գովեստները, որոնք թափում էին նրա վրայ. եւ կամ նա չէր ուզում յիշեցնել, թէ որպիսի զժուար գրութիւնից ազատեց ինձ. նա աշխատում էր որ այդ գէպի վրայ խօսացվի որքան կարելի է սակաւ:

Ես բաւականին յետ մնացի իմ  
բից, խօսում էի Մարօի հետ Սագօ՛ն  
մեզ, եւ առանց որ եւ իցէ առթի մեր  
որպէս ինքն իրան խոսելով, ասաց.

— Զարմանալի է այդ բախտ ասած  
ասում են, նա մի հրէշաւոր կնիկ է, երկու  
ուռի, մինը առջեւից միւսը ետեւից: Առջև  
երեսը թարմ եւ գեղեցիկ է՝ միշտ ժպտող աչքե-  
րով, նրանցով նայում է իր սիրելիներին միայն:  
Ետեւի երեսը հնացած է, լի խորշոմներով, որ-  
պէս մի զզուելի պառաւի գէմք. մի հատիկ աչք  
միայն ուռի մռայլոտ ճակտի վրայ, այն եւս  
կոյր. . . Նա միշտ դարձնում է գէպի ինձ այդ  
չարանենդ գէմքը իր սարսափելի խորշոմներով,  
եւ ես միշտ լսում եմ նրա ցամաք եւ գունա-  
թափ շրթուներին միջից այդ խօսքերը՝ «Իմ  
ինձանից ոչ մի բարիք մի սպասիր» . . .

Նա բոպէական լռութիւնից յետոյ շարու-  
նակեց, իսկ այժմ աւելի խռովեալ ձայնով.

— Ասում են՝ մեր ժամանակներում հրաշք-  
ներ չեն լինում, հրաշք չէ՛, բա ի՞նչ զահրուանք  
է՛ մի անգամից — երկու որս . . .

Այժմ հասկացայ, որ կիտախելագար Սագօ  
խօսքերը կծու ակնարկութիւններ էին գէպի ինձ  
եւ գէպի Մարօն:

— Ի՞նչ ես ուզում ասել, հարցրի ես:

Նա պատասխանեց աւելի վրդովված կերպով.

— Հա՛, երկու որս, մինը դարանը, միւսը՝

Մարօի սիրտը . . .

Նա արտասանեց այս խօսքերը այնպիսի մ/

խկոյն գրգռեց իմ բարկութիւնը:  
ուշագրութիւն դարձնելու շարու-

Ախար Մարօն էլ փոքր դարան չէ . . . նրան

— ահա այդ է քաջութիւնը:

— Եթէ դու կը շարունակես այսպիսի յի-  
րութիւններ դուրս տալ, դու կը դառնաս  
երրորդ որսը . . . ասեցի ես եւ արդէն մերկա-  
ցրած խէնջարը իմ ձեռքումն էր:

— Միթէ արժէ կռուել այն վայրենի կա-  
տուի համար, մէջ մտաւ Ասլանը, որ նոյն բո-  
ւալէին մօտեցաւ մեզ:

— Ան, երեւի քեզ էլ է ճանկուտել . . . դար-  
ձայ ես դէպի Ասլանը աւելի բարկութեամբ:

Նա ոչինչ չը պատասխանեց:

— Պէտք է կատուի հետ կատու լինել եւ  
նրա ճանկերից ազատ մնալ . . . պատասխանեց  
Սագօն բոլորովին վրդովված կերպով:

— Եթէ ոչ, շան հետ մնում է նա միշտ  
անհաշտ . . .

— Ամօթ է, տղերք, ձայն տուեց Վարօն եւ կայ-  
ծակի արագութեամբ խլեց իմ ձեռքից խէնջարը:

Ասլանը ամենեւին չը շարժվեցաւ իւր տե-  
ղից եւ ոչ ձեռքը տարաւ դէպի իր սուրը, նրա  
մի այսպիսի արհամարհանքը աւելի վիրաւորեց  
ինձ: Իսկ Սագօն, հեռու կանգնած, ծիծաղում  
էր: Նա բռնեց Ասլանի ձեռքից, եւ մի կողմ  
քաշելով, ասաց:

— Գնանք, չարժէ երեխայի հետ գործ ու-  
նենալ . . .

Ես եւ Կարօն մնացինք մենակ: Ծերունի որսորդը, իւր դասեր հետ, մեզանից շատ առաջ լինելով, չք հասկացաւ թէ ինչ անցաւ մեր մէջ:

Կարօն սկսեց խօսել, թէ իմ վրդովմունքը բոլորովին անտեղի էր. ես իզուր վիրաւորեցի իմ ամենալաւ ընկերներին, որոնք այնքան սիրում էին ինձ, որքան ինքը Կարօն: Նա ասաց, որ ես ոչ միայն Ասլանին յաղթել կարող չէի, այլ նոյն իսկ փոքրիկ Սագօն այնպէս ճարպիկ էր կռիւի մէջ, որ անտատճառ ինձ կսպանէր, միայն նրանք խնայեցին ինձ: Եւ երկար խրատներ կարգալուց յետոյ, նա աւելացրուց, թէ Սագօն մեզ չունէր, որովհետեւ մի քանի տարի է, որ նա սիրահարուած է Մարօի վերայ թէեւ օրիորդը չէ համակրում նրան:

Ահա, այսքանը հասկացայ ես Կարօի խօսքերից, որոնց մեծ մասն իմ նոյն բոպէի խռովութեան մէջ բոլորովին անըմբռնելի էին: Ես ամբողջ մարմնով դեռ դողում էի, իմ լեզուն, կարծես, կապուած էր, ես ոչինչ պատասխանել չը կարողացայ:

— Իու դեռ ջաշիլ ես, Ծարհատ, քեզ ես չեմ մեղադրում, աւելացրուց նա: — Քո ընկերները լաւ մարդիկ են, նրանք դարձեալ կը սփրենք քեզ եւ կը ներեն:

Գառնալով դէպի Կ. . . գիւղը, մեր ճանապարհն ընկաւ այն կողմից, ուր գտնվում էր ծերունի որսորդի որդեգիր՝ Հասօի ագարակը: Գիշերից բաւական անցել էր, երբ հասանք այնտեղ: Տղերքը վճռեցին գիշերել Հասօի ագարա-

կում: Այնտեղ ծերունի որսորդի որդին շինել էր ճիւղերից հլւսած մի տաղաւար, որ խիստ յարմար օթեւան էր գարնան գիշերների համար:

— Մնացէք այստեղ ու քէփ արէք, ասաց ծերունին: Յետոյ աւելացրուց.

— Իմ հին ոսկորներն էլ չեն դիմանում գիշերվայ ցրտին, ես կերթամ տուն ձեզ համար գինի ու հաց կուղարկեմ, խորովածի համար միս ունէք. իմ կենացն էլ կըխմէք, խօսք չը կայ: Հասօ, լաւ պատվիր հիւրերիդ: — Գնանք, Մարօ:

Նրանք դեռ չէին բաժանվել մեղանից, երբ Մարօն մտեցաւ ինձ եւ հազիւ լսելի ձայնով շշնջաց իմ ականջին.

— Գու կը մրսես, Պարհատ, այստեղ ցուրտ է վիճում: Ես տանից քեզ համար քնելու շորեր կուղարկեմ:

Գիշերային մթութեան մէջ ոչ ոք չը նկատեց մեր խօսակցութիւնը, ես շնորհակալութիւն արեցի օրիորդին նրա բարեսրտութեան համար, եւ յայտնեցի, թէ ես փոքր ինչ սովորած եմ առանց ծածկոցի եւս քնել, որովհետեւ մեր տանը երբէք անկողին չեմ ունեցել, իմ վերմակը եղել է հօրս մաշկած վերարկուն, իսկ դօշակս՝ սառն հասիրը:

— Գու դօշաղ տղայ ես, Պարհատ, դու չես մրսի, ասաց նա ուրախ ձայնով, եւ իր ձեռքով մի թեթեւ զարկ տալով իմ ուսին, փախաւ ինձանից, երբ երկրորդ անգամ խաւարի միջից լսելի եղաւ ծերունի որսորդի ձայնը.

— Ո՛ւր ես, Մարօ, գնանք, բալաս:

Հասօն իսկոյն վառեց ահագին խարոյկ տա-  
ղաւարի առջեւ, չոր փայտերը բորբոքվեցան եւ  
լոյսը տարածվեցաւ հեռու մեր շրջակայքում:  
Այն ժամանակ միայն կարողացայ լաւ տես-  
նել վաղեմի ընկերիս—Հասօի—վերանորոգված  
կերպարանքը, որ վարժատան կեանքից յետոյ  
այնքան շատ փոփոխութիւնների էր ենթարկվել:  
Մաշված եւ ուժից ընկած «էշի փալանը»—որ-  
պէս կոչում էին նրան—այժմ առողջ եւ խիստ  
ժիր տղայ էր դարձել: Ահա ի՛նչ է նշանակում  
տէրտէրի այր—բնը եւ երկրագործութիւնը . . .  
առաջինը մաշեց, արորեց նրա մանկութիւնը,  
առանց որ եւ իցէ մտաւոր մնունդ տալու նրա  
գլխին . . . իսկ վերջինը վերանորոգեց նրա սպառ-  
ված ուժերը եւ լեցրուց ծերունի հօր տունը  
հացով . . .

Իսկ այս կոշտ-կոպիտ մշակի մէջ չէին երե-  
ւում ոչ հօր բարեսրտութիւնը եւ ոչ քրոջ աշ-  
խուժութիւնը: Հասօն եթէ կարելի է այսպէս  
կոչել, խտասիրտ եւ մռայլոտ արարածներից  
մէկն էր: Բոլոր ժամանակը նա մի քանի անգամ  
միայն խօսեց ինձ հետ, եւ նրա խօսքերը խիստ  
կարճ եւ անգոյն էին: Սագօն խիստ ճշդութեամբ  
նկատեց՝ թէ «Հասօն քաղցրախօս է միայն իր  
եղնների հետ, որոնք նրա արօրը քաշում են»:  
Այսուամենայնիւ, ես միշտ համակրութեամբ էի  
վարվում նրա հետ, որովհետեւ նա Մարօի եղ-  
բայրն էր . . .

Քիւղը շատ հեռու չէր ազարակից, մենք  
շուտով տոացանք ծերունի որսորդի խոտացած

պաշարը՝ առատ գինի եւ հաց։ Ղարանի մտից պատրաստված խորովածները արդէն եփված էին, իսկոյն կազմիւեցաւ ընթրիքի սեղանը։ Տղերքը չափազանց սոված լինելով, նստեցին ուտելու. ես հրաժարուեցայ սեղանից, յայտնելով, թէ ախորժակ չունիմ եւ ինձ ոչ այնքան առողջ եմ զգում։ Եւ իրաւ, գլուխս սաստիկ ցաւում էր, եւ ճանապարհի անախորժ անցքից յետոյ, ես գտնուում էի մի տենդային գրգռման մէջ, որ գնալով, աւելի եւ աւելի վրդովում էր ինձ, քանի մտաբերում էի իմ անպատշաճ վարմունքը Ասլանի եւ Սագօի հետ։ Իսկ նրանք, կարծես թէ, մոռացել էին բոլորը, եւ ոչ մի կերպով, եւ ոչ մի թեթեւ ակնարկութեամբ անգամ չէին յիշեցնում անցածը, այլ ընդհակառակն, պատմում էին Հասօին՝ իմ եւ Վարօի կռիւը զարանի հետ, եւ գովասանում էին մեր քաջասրտութիւնը։ Իսկ նրանց մի այսպիսի ներողամտութիւնը աւելի ծանրը էր ինձ համար. ինձ բոլորովին վիրաւորական էր թւում վշտացնել մէկին, եւ առանց փոխադարձ բաւականութիւն տալու, վայելել նրա ներողամտութիւնը։ Այդ մի տեսակ ողորմութիւն էր, իսկ ողորմութիւն խնդրել ես չէի ուզում։

Ընթրիքի սեղանը կազմիւել էր տաղաւարի մէջ, տղերքը հաւաքիւել էին այնտեղ. ես պառկել էի տաղաւարից դուրս խոտերի վրայ, մի քանի քայլով միայն հեռու նրանցից, այնպէս որ, նրանց խօսակցութիւնը լսելի էր ինձ։

— Ենթարիտ, հիւանդ է նա, հարցրուց Հասօն։

— Չէ, նա ուրիշ փորացաւ ունի . . . պատաս-

խանեց Սագօն եւ մօտեցաւ ինձ, գինով լիքը երկու բաժակներ ձեռին, եւ երգելով մի գեղեցիկ երգ: Տաղաւարի միջից միաձայն հնչեցին ամբողջ խօրով նրա շարունակութիւնը:

Գիշերային լռութեան պահուն, երկրագործի մենաւոր տաղաւարի մէջ, մանկահասակ պատանիների ջերմ եւ անկեղծ սրտերից դուրս բլրախած հնչիւնները այնքան հոգեշարժ եւ ոգեւորիչ էին, որ ներգործեցին իմ վրայ ընկերսիրութեան բոլոր սուրբ եւ կենագործող զօրութեամբ: Իմ սիրտը լցուեց մի սրբազան խաղաղութեամբ եւ դադարեց մրրկիլը, որ այնպէս սաստիկ կերպով խռովում էր ինձ: Ես չը կարողացայ պահել իմ արտասուքը, եւ ընդունելով Սագօի ձեռքից բաժակը, միասին մօտեցանք խմրին: Նրանք նոյնպէս մի—մի բաժակ ձեռքերին, կանգնած բոլորել էին սեղանի շուրջը: Արօն խիստ հանդարտ եւ ծանր եղանակով կարդաց մի փոքրիկ ձառ: Բայց նրա խօսքերը, որոնք այնպէս ազդու եւ զօրեղ կերպով դուրս էին հոսում, մինչ այն աստիճան ներգործեցին իմ վրայ, որ ես մինչեւ այսօր չեմ մոռացել, թէ եւ այն օրից անցել է յիսուն տարի, այն, յիսուն տարի, դա քիչ չէ . . .

«Սիրելի ընկերներ, մենք այն ազգի որդիքն ենք, որ զրկվելով հայրենական հողից, ցրված է աշխարհի զանազան անկիւններում: Մենք մի այնպիսի ժողովրդի ծնունդ ենք, որ ապրում է մի երկրում, ուր նրա խրճիթի օջախը շատ քիչ անգամ տաքանում է կրակով, որովհետեւ նա վառելիք չունի, որի տան մէջ լոյս չը կայ արեւը

մտնելէն յետոյ, որովհետեւ նրա ճրագի իւզը վաղուց սպառվել է, որի որդիքը գիշերը բաղցած են քնում, որովհետեւ նա տանը հաց չունի։ Արեւն այրում է նրա զաւակների մարմինը, ցուրտը սառեցնում է, անձրեւը թրջում է, որովհետեւ նրանց հագուստներն այնքան քրքրված են, որ չեն կարողանում պահպանել անբախտներին եղանակների խստութիւնից։

«Իսկ այդ ժողովուրդը ծոյլ չէ. նա անդադար աշխատում է, նա աշխատում է աւելի քան թէ կը ներէր մարդի ուժը։ Նրա կինը, նրա աղջիկը, նրա փոքրիկ երեխաներն անգամ գործակից են լինում գերդատտանի հօր աշխատութեանը։ Դուք տեսել էք կանայք, որոնք հընձում են արտերը, եւ իրանց հունձը, իրանք շալակած, բերում են կալը ծեծելու համար։ Դուք տեսել էք աղջիկներ, որոնք մեծ եռանդով մաքրում են մշակութեան ցանքերը աւելորդ խոտաբոյսերից։ Դուք տեսել էք երեխաներ, որոնք արօրի լծերի վերայ նստած, քշում են եզները եւ օգնում են հօր գործին։

«Այո՛, այդ ժողովուրդը ծոյլ չէ, նա աշխատում է, նա ամբողջ տարին հանգստութիւն չունի, բայց դարձեալ ապրում է աղքատութեան մէջ, դա՛ռն, ցաւալի՛ աղքատութեան մէջ . . .

«Ի՞նչ է պատճառը։

«Հողը, որի վրայ նա ապրում է, թէ եւ մի ժամանակ իր նախնիքներին էր պատկանում, բայց այժմ դարձել է օտար ազաների սեպհականութիւն։ Նա մշակում է օտարի հողը։ Իսկ ա-

ղայի պայմանները մշակի հետ այնքան ծանր են եւ անշահաւէտ, որ նրա երկրագործութեան բերքը եւ նրա վաստակը մեծ մասամբ վայելում է կալուածատէրը. մշակի համար մնում է այնքան, որով չէ կարողանում իւր կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքներին անգամ բաւականութիւն տալ:

«Գիւղացու կեցութեան միւս պայմաններն եւս գրա նման են. նրա խրճիթը դրած է աղայի հողի վերայ, նրա համար հարկ է վճարում: Նրա անասուններն արածում են աղայի արօտներում, նրանց համար հարկ է վճարում: Ինքը գիւղացին, նրա ընտանիքը ապրում են աղայի հողի վրայ, այնտեղ ման են գալիս, նրա ջուրն են խմում, եւ իրանց գլուխներն պահպանելու համար հարկ են վճարում: Մի խօսքով, գիւղացին բացի իր աշխատող ձեռքերից ուրիշ ոչինչ չունի, նրան շրջապատող ամբողջ բնութիւնը պատկանում է աղային, եւ նրա մէջ գործելու համար՝ նա պէտք է զոհէ իր աշխատութեան ամենամեծ մասը:

«Ահա, այդ է պատճառը, սիրելի ընկերներ, որ մեր ժողովուրդը, հայրենի հողի վրայ սնունդ չը գտնելով, գաղթում է, անգաղար գաղթում է եւ օտար երկիրներում բախտ է որոնում: Բայց գառնում են գաղթականները:—Ոչ, Գուք գիտէք, քանի հազարաւոր ընտանիքներ մնացել են առանց տղամարդերի, քանի հազարաւոր օջախների կրակը հանգել է, որովհետեւ տղամարդիկը մեռել են պանդխտութեան մէջ . . .

«Մենք, որ բոլորել ենք այս սեղանի շուրջը, դուրս ենք եկել նոյնպիսի բնտանիքներից. մեր մեծ մասը հայր, մայր, տուն, ազգականներ չունի,—բոլորը կորած են անյայտութեան մէջ: Ուրեմն, մեզ աւելի հասկանալի է, թէ ինչ է կրում այս երկրում մշակ մարդը, որովհետեւ մենք երեխայութիւնից փորձել ենք այն ամեն դառնութիւնները, որովհետեւ մեր ամեն մէկի սրտում դեռ մնացել են անբժշկելի այն վէրքերը, որ ստացել ենք բռնութեան կոպիտ ձեռքից:

«Ընտանիքը չը կարողացաւ մեզ, իւր որդիներին, այնպէս դաստիարակել, այնպիսի մի ուղղութիւն տալ, որ ձգէինք մեր վզից «չայ» լուծը, եւ ազատ մնայինք նրա հարստահարութիւններից: Նա չը կարողացաւ մեզ սովորացնել կեանքի եւ ապրուստի հաստատ պայմանները, որ մեզ համար աշխատէինք, մեզ համար գործէինք, եւ մեր վաստակը «սուրը չը խլէր մեր ձեռքից: Ընտանիքը չը կարողացաւ այդ անել, որովհետեւ ինքը ստրկացած էր, եւ աւելի ցաւալին այն է, որ ստրկութիւնը դարձել էր նրա մէջ բնաւորութիւն: Նա չէր բողոքում բռնութեան դէմ: Նա մտածում էր՝ թէ Աստուած հէնց այսպէս ստեղծել էր նրան, թէ նա գոհ պէտք է լինի իր վիճակից, որովհետեւ ճակատագրից մի տառանգամ փոխել կարող չէ . . .

«Քարոցը, որի աշակերտներն ենք այստեղ կանգնածներս, աւելի հաստատեց մեր մէջ ստրկութիւնը. դպրոցը սպանեց մեր մէջ ինքնագործունէութեան ուժերը: Քահանայ վարժապետը

մտցրուց մեր մէջ կոյր հնազանդութիւն, —խոնարհիւն եւ հպատակել ամեն իշխանութիւնների, որքան ծանր եւ անտանելի լինէր նրանց մեզ վերայ դրած լուծը: Որովհետեւ ինքը վարժապետը նոյնպէս էր վարվում մեզ հետ: Նա ասում էր մեզ — թէ այս աշխարհի կեանքն ունայն եւ անցաւոր է. որքան ցաւալի լինի նա, որքան ճոխ լինի նա տանջանքներով, այնքան աւելի վարձատրութիւն կը գտնէ մարդ միւս կեանքում, որ սպասում է գերեզմանը մտնելուց յետոյ . . .

«Բայց գտնվեցաւ Տէ Եւստ, որ խլեց եւ գուրք բերեց մեզ գարոցի բարոյապէս եւ մտաւորապէս փանցնող մթնոլորտից: Նա կանգնեցրուց մեզ ուղիղ ճանապարհի վրայ: Նա սովորեցրուց մեզ կեանքի այն պայմանները, որոցմով կարող է մարդ հանգիստ եւ ապահով ապրել: Նա սովորեցրուց մեզ օգնել եւ մեզ նման անբախտներին, որ նրանց կեանքն էլ հանգիստ լինէր, որ նրանց ապրուստն էլ ապահոված լինէր:— Եւ մենք նուիրեցինք մեզ ժողովուրդի բարօրութեան գործին . . .

«Եւ մենք, եղբայրներ, այն հարդար կենացը, որ մտցրուց մեր մէջ այդ ոգին, խմենք այն գլուխէ յաջողութեան համար, որը մեր սուրբ ուխտն է:»

Բաժակները զարկվեցան մէկ մէկու եւ խմեցին որսորդ Ալօի կենացը, բոլորը միաձայն գոչելով «կեցցէ բարի գործը» . . .



ԺԹ.

Ե Ր Ա Ձ

Բարձեալ նոյն հին երգը, մտածում էի  
ես Կարօի ճառը լսելու միջոցին, — նոյն երգը, որ  
նա երազում էր տասն եւ երկու տարի առաջ  
գիւղացիների եւ նրանց ազբատութեան մասին:

Կարօի եւ նրա կուսակիցների նպատակը  
թւում էր ինձ ոչ միայն անգործագրելի, այլ  
որպէս ցնորք, որպէս հիւանդոտ երեւակայու-  
թեան զառանցութիւն: Միթէ կարելի է գիւ-  
ղացուն հանգստութիւն տալ, ազատել նրան  
աղայի ճանկերից, որի մէջ կայ այնքան ուժ,  
որը վայելում է այնքան արտօնութիւններ: Եւ  
ինչու, որպէս սպահովել մշակի ապրուստը, երբ  
ոչ մի օրէնք չէր սահմանափակում աղայի կամա-  
յականութիւնը. երբ կառավարութեան ֆիրման-  
ներն եւս մնում էին անզօր եւ չէին կարողա-  
նում աղաների բռնութեան առաջն առնել, ես  
գիտէի հարիւրաւոր օրինակներ, որ ժողովրդի  
քարօրութեան մասին շնորհած արքունի ֆիր-

մանները մնում էին անգործագրելի, խաները եւ բէկերը Բարձրագոյն Գրան հրովարտակը ստիպեցնում էին բերողին ծամել եւ կուլ տալ, կամ պատուելով եւ ծեծելով բերողին, այնպէս ճանապարհ էին դնում նրան, ասելով՝ «գնա, թագաւորիդ խաբար տար»։ Եւ այսպիսի գազանները, որոնք ժողովրդի արիւնն էին ծծում, առանց խոնարհւելու որ եւ իցէ իշխանութեան, մնում էին միշտ անպատիժ։

Այժմ Կարօն, ոգեւորված մի մոլի եռանդով, իւր անձնազօհ ընկերների հետ, աշխատում էին յեղափոխել հին գրութիւնը, աշխատում էին փշրել ստրկութեան շղթաները, որոնք դարբնվել էին այնքան շատ դարերով։ Եւ ինչու, որպէս . . .

Ինքը Կարօն խիստ ճիշդ նկատեց իր ճառի մէջ՝ թէ՛ ստրկութիւնը դարձել է ժողովրդի մէջ բնաւորութիւն։ Միթէ հեշտ է փոխել բնաւորութիւնը, դարերով ամբոխի հոգու մէջ արմատացած բնաւորութիւնը։ Ի՞նչ օգուտ, երբ մի քանի եռանդոտ անձինք դարթել էին, հասկանում էին ժողովրդի չարն ու բարին, եւ աշխատում էին դարման տանել նրա խղճութիւններին, — երբ այդ մի քանի անձանց բոլոր ջանքը կորչելու, ոչնչանալու է ընդհանուր անտարբերութեան մէջ, նրանց բարբառը վիճելու էր անպատում հնչող ձայն, եւ նրանց գործակցութիւնը, որպէս մի համերաշխութիւն գերեզմանատան բնակիչների հետ, չէր հասնելու որ եւ իցէ օգտաւէտ վախճանի։ Կարօն ինքը շատ լա-

գիտէր այդ, որ ամբոխը գտնւում էր այն վիճակի մէջ, ինչ վիճակում լինում են խելագարները կամ հարփածները. նրանք ընկնում են ցեխերի մէջ եւ ամենեւին չեն նկատում իրանց կեղտոտութիւնը, նրանք իրանց գլուխը պատերին են զարկում եւ ամենեւին ցաւ չեն զգում, թէ եւ ճակատից արիւն էր հոսում. նրանք փողոցներում թաւալված ժամանակ՝ ամեն անցնող երեխան ոտքով խփում է, թքում է նրանց վրայ. բայց նրանք հանգիստ պառկած են եւ վիրաւորանք չեն զգում: Կարօն գիտէր այդ բոլորը՝ Նա գիտէր, որ ժողովուրդը տանջւում էր նիւթապէս, ուտելու հաց չունէր եւ հագնելու հագուստ, բայց համբերում էր: Նա գիտէր, որ ժողովուրդը տանջւում էր բարոյապէս. շատ անգամ նրա կինը, աղջիկը, տղան զոհւում էին աղայի կրքերին, բայց նա համբերում էր . . . Համբերում էր, որովհետեւ իր թշուառութիւնը, իր անպատուութիւնը չէր համարում կարգից դուրս բաներ, այլ մտածում էր՝ թէ այլ կերպ լինել կարող չէր, թէ ինքը հպատակ է, թէ աղան ինչ որ ուզէ, այն պէտք է անէ . . .

Ե՛կ, դու փոխի՛ր դարեւոր նախապաշարմունքը: Ի՛նչ կարող ես անել, երբ ամբոխը ինքը չէ բողոքում իր թշուառութիւնների համար, երբ ամեն անբախտութիւններ տանում է նա համբերութեամբ, եւ, — որպէս Կարօն յիշեց իր ճառի մէջ, — տալիս է նրանց մի վերին եւ Աստուծոյ նախասահմանութեամբ կարգադրած օրէնքի նշանակութիւն: Ի՛նչ պէտք է անես . . .

Միթէ այսպէս էին իմ դատողութիւններն այն ժամանակ. միթէ այդպէս էի մտածում ես... Ո՛չ, ես ինքս շատ հեռու չէի նոյն նախապաշարմունքներից, որոնք տիրել էին ժողովրդին, որովհետեւ նրա հաւատարիմ զաւակն էի. ես միայն ծիծաղում էի Կարօի ցնորքների վրայ, որպէս տասն եւ երկու տարի առաջ, երբ նա դեռ նոր էր փախել հայր Թօղլիկի ուսումնարանից եւ աշակերտում էր մի նոր դպրոցի— որսորդ Ալօի—վարդապետութեանը, վարդապետութեանը այն խորհրդաւոր մարդու, որի ծագումը, հայրենիքը յայտնի չէր, որ ծածկված էր հասարակ որսորդի դիմակով, որը ներշնչեց կրահոտ պատանիների մէջ նոր հոգի եւ նոր միտք . . .

Ընթրիքը թէեւ վերջացաւ խիստ զուարճալի կերպով, բայց ես ամենեւին ուրախ լինել չք կարողացայ, այդ պատճառով շատ գոհ եղայ, երբ տղերքը շուտով պառկեցին քնելու. Բայց ես քնել չք կարողացայ, եւ դուրս գալով տաղաւարից, երկար թափառում էի գիշերային մթութեան մէջ, Կարծես, հազար ու մէկ սատանաներ պտոյտ էին գալիս իմ գլխում. երբեմն մտածում էի՝ գնամ Ասլանին ու Սագօին խեղդեմ իրանց քնած տեղում: Յետոյ ինձ ու ինձ փօշմանում էի, ասելով՝ «չէ՛ որ նրանք մոռացան բոլորը, նրանք ներեցին ինձ»: Բայց ես կարո՞ղ էի ներել նրանց, որ այնպէս անվայելուչ կերպով խօսում էին Մարօի մասին . . . Այսպիսի խառն մտածմունքներով լցված էր իմ յիմար գլուխը, երբ ես կրկին դարձայ տաղաւարի մօտ եւ պառկեցի նրանցից փոքր

ինչ հեռու խոտերի վրայ:

Յետ ընկած լուսինը կամաց-կամաց վեր բարձրացաւ սարի ետեւից եւ լեռները լցուեցան արծաթի լուսով: Գեղեցիկ տեսարանը ամենեւին չազգեց իմ վրայ: Իմ գլուխը դեռ լիքն էր սեւ մտածմունքներով. իմ սիրտը դեռ հանգիստ խրառովութեան մէջ էր: Չը գիտեմ, ինչու այնպէս վրդովված էի ես. չը գիտեմ ինչ էր, որ այնպէս տանջում էր ինձ: Միայն այսքանն եմ յիշում, որ շուտով իմ աչքերը լցուեցան ջերմ արտասուքով, ես սկսեցի լաց լինել, երկնի լաց լինել . . .

Գիշերն ես անցուցի տենդային ջերմութեան մէջ: Առաւօտեան լուսաբացի պահուն ինձ տիրեց մի թմրութիւն. այն ժամանակ եւս խառն երազները սկսեցին անհանգիստ անել: Ողորմած Աստուած, ինչեր չէին գնում եւ գալիս իմ աչքերի առջեւ, — սատանաներ, հրեշտակներ, դրժոխք, արքայութիւն, — մի խօսքով, հարիւրաւոր տխուր եւ ուրախալի պատկերներ մինը միւսից յետոյ կամ զուարճացնում էին ինձ եւ կամ սարսափեցնում. . . Բայց երբ զարթեցայ, բոլորը մոռացայ, մի երազ միայն մնացել էր իմ մըտքում, նրան յիշում եմ եւ այսօր:

Ինձ երեւում էր, թէ Սօլայի հեղեղատը յորդացել էր, որպէս ամեն տարի գարնան ժամանակ բարձրանում էին նրա ջրերը: Իսկ այժմ շատ էր բազմացել ջուրը, խիստ շատ: Կատաղած գետը գոռում էր, փրփրում էր, եւ հսկայական վիշապի նման սարսափելի պտոյտներ էր գործում: Նրա սկոտոր յորձանքները տանում

էին իրանց հետ ամենը, ինչ որ հանդիպում էր: Ես տեսնում էի, թէ ինչպէս ալիքների մէջ լող էին տալիս տնային կարասիք, տեսնում էի խեղդոված մարդերի դիակներ, այլ եւ երեխաներ, կապած օրօրոցների մէջ. . . մտածում էի՝ որքան տղաներ պէտք է քանդած լինի, որքան ընտանիքներ պէտք է ոչնչացրած լինի սարսափելի հեղեղատը. . . Անբախտ զոհերն երբեմն բարձրանում էին ալիքների հետ, երբեմն կորչում էին նրա պոռոյտների մէջ, երբեմն մտնում էին գետի եզերքին. — ձեռք մեկնիր եւ ահա կազատես, մտածում էի ես:

Ես տեսնում էի՝ Կարօին, Ասլանին եւ Սազօին, նրանք այնպէս փոքրիկներ էին, որպէս անաջ, երբ դեռ երեխայ էին, երբ հեղեղատի ջուրը նստելու ժամանակը գնում էինք միասին նրա ավերից հաւաքում էինք զանազան հնութիւններ, որոնց նա բերել էր իր հետ, քանդելով Քօհնա-շհարի աւերակները, Լսկ այն երազ չէր:

Իսկ այժմ տեսնում էի ընկերներիս նոյն հասակում, որոնք ցոյց էին տալիս խեղդւոյ մարդիկներին եւ ասում էին ինձ՝ «տես, Փարհատ, ինչպէս տարւում են այդ անբախտները հոսանքի հետ, գնանք, ազատենք նրանց»:

Երբ աչքս կրկին դարձրի գէպի գետը, ալիքների մէջ տեսայ մի քանի ինձ ծանօթ երեսներ՝ — Մարիամին, Մագթաղին, իմ հօրը, իմ մօրը, — իմ աչքերի առջեւ մթնեցաւ, վազեցի գէպի ավը, որ օգնութիւն հասցնեմ: Յանկարծ գետի խարխուլ եզրը փուլ եկաւ, ես գլորվեցայ ցած. . .

Քննալէս մի թեթեւ փետուր ես տարւում էի պըղտոր հոսանքի հետ . . . կատաղի ալիքները շատ անգամ խորասոյզ էին անում ինձ դէպի յատակը, շատ անգամ դուրս հանում . . . կրկին տեսնում էի սիրելի պատկերները սարսափած եւ գունաթափ երեսներով . . . Աշխատում էի ավին մտնել, հնարք չէր լինում, իմ թեքերի ուժը հետզհետէ թուլանում էր, եւ ես խեղդվելու մտ էի . . . Ես կանչում էի Կարօին, Ասլանին եւ Սաքօին, որ նրանք ազատեն ինձ. բայց երբ աչքս գարձրի դէպի հոսանքի ընթացքը, տեսայ, նրանք էլ տարուբերւում էին ալիքների մէջ . . .

Յանկարծ յայտնվեցան երկու կերպարանքներ, որոնք ձեռքները մեկնած, աշխատում էին ազատել ինձ, նրանցից մէկը տխուր էր դէմքով եւ աչքերումը արտասուք կար, միւսն ուրախ եւ պայծառ էր երեսով եւ հրեղէն աչքեր ունէր: Ինձ երեւաց թէ նրանք երկու հրեշտակներ էին, որոնք իջան երկնքից. իսկ յետոյ ճանաչեցի՝ մէկը Սօնան էր, միւսը՝ Մարօն. յետոյ, երբ ես թաղվեցայ ջրի տակ եւ միւսանգամ դուրս չեկայ . . .

Երբ ես զարթեցայ Կարօն կանգնած էր իմ մօտ.

— Գու. հիւանդ ես, ծարհատ, ասաց նա խռոված կերպով:— Քո երեսը մեռելի գոյն է ստացել, գու ախպէս սարսափելի բաներ էիր խօսում ըընդիդ մէջ . . .


Ես պատասխանեցի, թէ քունս անհանգիստ էր, եւ ես ոչ բողորովին առողջ եմ զգում ինձ. գլուխս սաստիկ ցաւում է, անդամներս ջարդ-

վում են, որպէս թէ ամբողջ մարմինս սանդի  
մէջ ծեծած լինէին:

Կարօն յայտնեց ինձ, թէ իրանք պէտք է  
գնան Բարդուղիմէոս առաքելոյ վանքը «մի գոր-  
ծի» համար եւ կը վերադառնան միւս օրը երե-  
կոյեան, եւ խորհուրդ տուեց ինձ մնալ ծերու-  
նի որսորդի տանը, աւելացնելով, թէ գիշերը  
տաղաւարից դուրս բացօթեայ քնելով, մրտած կը  
լինեմ, պատուիրեց տաք բան խմել եւ քրտնել,  
որով շուտով կանցնէր տկարութիւնը:

Երբ նրանք նստեցին ձիաները, կամենում  
էին հեռանալ, Սագօն մօտեցաւ ինձ, եւ խուլ  
ձայնով ասաց.

— Գնա՛ տուն, բախտաւոր, գեղեցիկ Մարօն  
կը բժշկէ բեզ. . .



Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ե Ի Հ Ո Ղ

Արեւը նոր սկսեց ծագել:

Հասօն տաղաւարում չէր. աղերքը գնալուց յետոյ ես մենակ մնացի այնտեղ. Ի՞նչ անեմ, ո՞ր գնամ: Գնամ տուն, հին բարեկամիս տունը, այնտեղ «Մարօն կը բժշկէ ինձ» . . . Ձէ, չեմ գնայ, Մարօն թող չը ասեսնէ, որ իմ առողջութիւնը վատ է, նա փափուկ սիրտ ունի, նա լաց կը լինի . . . Ձէ, գնամ մի փոքր ման գալու, գուցէ վաղորդեան օդը կը կազդուրէր ինձ:

Առաւօտեան ցօղը դեռ չէր բարձրացել խոտերից, եւ արեգակի առաջին ճառագայթները խաղալով մարգարտեայ կաթիլների հետ, արտափայլում էին ծիածանի գոյներով: Օդը տոգորված փափուկ խոնաւութեամբ, հովացնում էր իմ բորբոքված երեսը: Հեռաւոր լեռները դեռ պատած էին ճերմակ ու թափանցիկ մշուշով:

Իմ թուլացած անգամները բաւականին զուարթացան վաղորդեան հովութիւնից, բայց տակաւին սիրտս խռովութեան մէջ էր: Ես գնում

էի լուռ եւ մտախոհ կերպով. ո՛ւր էի գնում,  
ինքս չէի իմանում, միայն մի բան ինձ քաշում  
էր հեռու մարդկային բնակութիւնից: Գիշերուայ  
երազն ամենեւին դուրս չէր գալիս իմ մտքից.  
նոյն զարհուրելի տեսարանները ներկայանում էին  
իմ երեւակայութեան մէջ: Ի՞նչ էր նշանակում  
այն սարսափելի հեղեղատը: Ի՞նչ էր նշանա-  
կում պղտոր ալիքների այնպէս փրփրելով, գո-  
ռալով, կատաղի հոսանքը, որ տանում էր իր  
հետ այնքան անբախտ զոհեր, որոնց թւում  
գտնվում էին եւ այն անձինքը, որոնք այնքան  
մօտ եւ սիրելի էին իմ սրտին . . . Վերջապէս ի՞նչ  
էր նշանակում Սօնայի եւ Մարօի իմ օգնութեանը  
հասնելը. մի՞թէ նրանց ձեռքումն էր իմ փրկու-  
թիւնը, մի՞թէ նրանք կարողացան ազատել ինձ:  
— Այ, մինչեւ նրանց հասնելը, ես արդէն ջրի  
խորքումն էի, այն սառն եւ թաց գերեզմանի մէջ  
թաղված . . .

Մի՞թէ մեր կեանքը մի այսպիսի երազ չէր. . .  
մի՞թէ մեզ եւս իր հետ չէր տանում աշխարհային  
հասնելը իր կատաղի ալեկոծութեան մէջ . . .

Ես գնում էի մի հովիտի միջով, ուր մշակ-  
ված գաշտերը խոստանում էին առատ հունձք.  
մի տեղ դեռ նոր էին վարում հողը, մի տեղ  
ցանում էին, միւս տեղ արածացնում էին ոչ-  
խարների հօտերը, մի խօսքով, որ կողմ եւ նայ-  
ում էի, եփ էր գալիս աշխատութիւն, ամեն  
ինչ շարժողութեան մէջ էր, ամեն տեղ երեւում  
էր կեանք եւ գործունէութիւն: Այո, «ծոյլ չէ  
այդ ժողովուրդը» . . . յիշեցի Վարօի խօսքերը, եւ

մի այդպիսի ժողովուրդը անբանատ է . . .

Յանկարծ իմ ականջին զարկեց մի երգի ձայն, նա խիստ քաղցր եղանակով հնչում էր առաւօտեան հովութեան մէջ, ես պարզ որոշում էի հետեւեալ խօսքերը.

«Ահա ծագեց կարմիր արեւ,

Տաք եւ պայծառ է օրը,

«Դէ, քաշեցէք, սիրուն եղներ,

Յառանջ տարէք արօրը,

«Վարը վարենք, ակօս փորենք,

Խո՞ր ակօսներ հողի մէջ.

«Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,

Յորեան դիզենք կալի մէջ:

«Կը գայ ձմեռ — մենք վախ չունենք —

Աւրախ կանցնի մեր օրը,

«Ուտելու միշտ պաշար ունենք,

Լի եւ կուշտ է մեր փորը:

«Դէ, քաշեցէք, սիրուն եղներ,

Նուտով վարենք արտերը,

«Թող չասեն մեր դրացիքը՝

Ծոյլ են չասօի եղները:»

Երգողը չասօն էր, որ փոքր ինչ հեռու վարում էր իր արտը: Ես մօտեցայ նրան եւ տեղային սովորութեան յարմար ասեցի.

— Բարի յաջողութիւն:

Նա ընդունեց իմ ողջոյնը եւ շարունակեց իր գործը: Ես հարցրի՝ արդեօք նրա երգի պարունակութիւնը համապատասխանում էր իր դրութեանը, նա ձմեռը հաց կունենանք ուտելու, եւ իր անասունները կարող էին կուշտ ապրել: Նա

պատասխանեց, թէ մենք միշտ երգում ենք այն,  
ինչ որ խսկապէս չունենք կամ քնաւ չենք ու-  
նեցել . . . եւ աւելացրուց՝ թէ լաւ է աշխատել  
առանց վաստակի, քան թէ անգործ մնալ. ան-  
գործունէութիւնը մեռելներին է պատկանում:

— Այս արտը աղայի մուրք չէ, ասաց նա:

— Բն սումն է:

Նա ասաց, թէ իր հայրը գնել էր այդ հողը  
մի քիւրդ բէկի այրի կնոջից, որը փողի սաստիկ  
կարօտութեան մէջ լինելով, ստիպվեցաւ վաճա-  
ռել իր կալուածքը, եւ իրրեւ իրանց սեպհակա-  
նութիւն, նա ազատ էր ազայական տուրքերից:  
Իմ կարծիքին, թէ լաւ կը լինէր, որ ամեն գիւ-  
ղացի իր սեպհական հողն ունենար, Հասօն պա-  
տասխանեց՝ — լաւ կը լինէր, եթէ թողնէին . . . եւ  
աւելացրուց, — թէ գիւղացիք փող չունեն հող  
գնելու համար, եւ եթէ գնէին եւս, աղաները  
նրանց հետ թշնամանում են, սկսում են նեղա-  
ցնել, կամ ջուր չեն տալիս, կամ սովորացնում են  
իրանց մարդիկներին նրանց ցանքերը փչացնում  
են, կայր կամ հունձքի դէզերը հրդեհում են,  
վերջապէս, ամեն միջոցներ գործ են դնում, որ  
գիւղացին չը վստահանայ կալուածատէր լինելու,  
այլ միշտ մնայ այն կարծիքի մէջ, թէ ինքը  
առանց աղայի օգնութեան, առանց նորա հո-  
վանաւորութեան, որ եւ իցէ միջոցով ապրուստ  
ձարել կարող չէ:

— Քո բարի աչքերով տեսնում ես, շարու-  
նակեց նա, — հորէս գօտկումն խրած են մի ջուխտ  
թախանչայ. այնտեղ լծան վրայ կապած է թուան-

գր. ինչու համար են դրանք. ես այստեղ վար եմ վարում, ո՞ւմ հետ կռիւ ունեմ. բայց էլի հարկաւոր են. թշնամին ամեն ժամ մեր վզի ետեւէն կանգնած է: Մէկ էլ տեսար, երկու քրդի ձիաւոր մղրախները ձեռներին, լճ — լճ կանչելով, ձորի միջէն դուրս եկան, եղները կարձակեն եւ կը տանեն. աչքերդ բաց-բաց պէտք է կանգնես եւ մտիկ տաս. շատ-շատ կսկսես քո գլուխը թակել, որ տարան սիրուն եղներդ, էգուց արօրը վարող չես ունենայ . . . Բայց քանի սրանք իմ մօտ են, — նա ձեռքը գրեց ատրճանակների վրայ — ինքը սատանան չի կարայ մօտենալ Հասօի եղներին . . . .

— Մի եւ նոյնը կարող է պատահել եւ այն մշակիների հետ, որոնք վարում են աղայի արտերը:

— Չէ, աղաներն իրանք են թալանում իրանց բանւորներին, բայց թող չեն տալիս ուրիշները մօտենան իրանց խոնարհ ծառաներին: Ամեն գաղան իր որսը պահպանում է մէկէլ գաղաններից:

— Այդ մի եւ նոյն է, թէ իրանք եւ թէ օտարները, երկու դէպքում եւս մշակը կողոպտւում է:

— Մի եւ նոյնը չէ: Դու խօսուես այն հաւի առակը, որ ամեն օր մի-մի ոսկի հաւկիթ էր ածում իր տիրոջ համար: Մշակը մի այնպիսի հաւ է աղայի համար, աղան մէկ անգամից չէ սպանում հաւին (մշակին) որ նրա փորից խաղինայ (գանձ) դուրս բերէ. նա թողնում է, որ նա ապրէ, որ ոսկի հաւկիթը շարունակ ստանայ: Բայց աւազակները նրա կեանքին չեն օփ-

ստում, ուզում են մէկ անգամից հարստանալ  
և սպանում են. . .

— Քանի օրումը կը վերջացնես այս արտի  
վարելը, հարցրի ես, կամենալով փոխել խօսակ-  
ցութիւնը, որ խիստ տխուր տպաւորութիւն  
գործեց իմ վրայ, երբ մտածում էի, թէ ի՞նչով է  
ապահովված երկրագործը, որ միշտ իր զէնքով  
պէտք է պահպանէ իր անասունները եւ իր մը-  
շակութեան բերքը աւազակների յարձակմունք-  
ներից: Բայց մի՞թէ խրաքանչիւր մշակ կարող է  
որտորդ Ալօի որդին լինել եւ զէնք բանեցնել. . .  
Ինչ կարող է լինել այն խեղճերի դրութիւնը,  
որոնք մի հասարակ դանակ եւս չունեն իրանց  
գրպանում:

Հասօն չը լսեց իմ հարցմունքը եւ ես միւ-  
սանգամ կրկնեցի, թէ քանի օրում նա կարող է  
վարել իր արտը:

— Եթէ Տէրը յաջողութիւն կը տայ, ինչ  
մեծ բան է նրա վարելը: — Դէպի աջ, Մարալ,  
դու այսօր հէնց թէ խելքումդ չես, այս ասելով  
նա բղեց կարմիր եղան կողքը: — Տես «Գութանը»  
այնտեղ էր կանգնած, — նա իր վարոցով ցոյց  
տուեց երկինքը, — իստակ այնտեղ, երբ ես լծեցի  
արօրը. հիմա Աստուծու օգնութիւնով, տեսնում  
ես որքան վարել եմ: Ապշուայ գործը օրհնած է,  
թէ չէ, երբ արեւը բարձրացաւ, այն ժամա-  
նակ ոչ մեզաւոր մարդուն, այլ անբան անա-  
սուններին էլ մեղք է բանացնելը, իստակ էրում  
է արեւը, չես կարող շունչ քաշել: — Դէպի կորդ,  
Ջէյրան, ինչ ես հոգիդ տալիս, — այս անգամին

նա բղեց մոխրագոյն եզան կողքը:

Կարծես նրա եղները — Մարալը եւ Զէյրանը — հասկանում էին իրանց տիրոջ նկատողութիւնները եւ այնպէս խելացի կերպով տանում էին գործը: Բայց Հասօն տեսնելով, ես երկար դրազեցնում եմ նրան իմ հարցումս, ուզեց ինձ որպէս ասում են «իր գլխիցը ռազ անել», եւ այս մտքով ասաց.

— Գու սիրում ես, Յարհատ, առաւօտեան խիար (վարունգ) ուտելը, դա սրտի համար լաւ է, գնահ, այն խոտերի մէջ մի քանի հատ թագցրել եմ, որ սառն մնան, կտրէ ու կեր. թէ դանակ չունես, ես կըտամ:

Ես շնորհակալութիւն արեցի, յայտնելով, թէ սովորութիւն չունեմ անօթի որ եւ իցէ միրգ ուտել, եւ մնաք բարեաւ ասելով, հեռացայ աշխատասէր մշակից:

Կրկին զարթեցան իմ մէջ նոր եւ նոր մրտածմունքներ, երբ ես յիշեցի Հասօի խօսքը՝ «լաւ է աշխատել առանց վաստակի, քան թէ անգործ մնալ, անգործունէութիւնը մեռելներին է սլատկանում»: Ես այն ժամանակ չը կարողացայ հասկանալ, իսկ այժմ հասկանում եմ այս խօսքերի իմաստը: Աշխատութիւնը, որքան եւ անշահաւէտ լինէր գործողի համար, վաղ թէ ուշ կարող էր վարձատրութիւն գտնել, օգուտ բերել, նա ունէր իր փառաւոր ապագան: Իսկ անգործունէութիւնը, իրաւ որ, մեռելութիւն է, նրա սկիզբը եւ վախճանը մահ է: Որքան եւ իզուր թափված լինէր մշակի քրտինքը, որքան

եւ յուսահատական լինէր նրա գրութիւնը, դարձեալ նա կենդանի մարդ է, նա գործում է, նա պատերազմում է իր գոյութիւնը ոչնչացնող դժուարութիւնների հետ. նրա մէջ մեռած չէ ինքնապահպանութեան զօրութիւնը: Եւ այս՝ կեանքի եւ մահու կռիւի մէջ՝ նա իրան պատրաստում է մի օրուայ համար, երբ կը տիրեն իրաւունքը եւ արդարութիւնը, երբ կազատվի ազաների հարստահարութիւնից: Այն ժամանակ կը գայ մշակ մարդու արքայութիւնը, այն մարդու, որ գործունի արդար եւ հաւատարիմ բնութեան հետ, որ չէ մտածում իր նման մարդերի քրտինքից իր համար ապրուստ քամել . . .

Այն, այս ճշմարտութիւնն անհասկանալի էր ինձ այն ժամանակ. ես, ես միայն էի անգործ արարածը այն ընդարձակ տարածութեան մէջ, ուր ամեն մարդ զբաղված էր իր աշխատանքով: Այլ գցեց ինձ այն մոլութեան մէջ, ո՞վ սպանեց իմ մէջ աշխատասիրութեան եռանդը: Ես մտաբերեցի հայր Թօդիկի վարդապետութիւնը, որ նա մեկնում էր իր աշակերտներին իր բուն բառացի իմաստով, «մարդը պէտք է երկնքի թըռչունների նման ապրէ, որոնք ոչ վարում են, ոչ ցանում են եւ ոչ հնձում են, բայց միշտ կուշտ են, եւ Աստուած հասցնում է նրանց կերակուրը»: Այդ խօսքերը նա իր գլխից չէր գուրտ տալիս, գրանք գրքից առած խօսքեր էին: Հիմնվելով յիշեալ բնաբանի վրայ, տէր-հայրը ընդարձակում էր այն միտքը, «թէ պէտք չէ հոգ տանել այս աշխարհի կեանքի համար, նա ունայն


եւ անցաւ որ է, թէ իրաքանչիւր մարդու համար Աստուած նշանակել է նրա օրական պարէնը (ապրուստը) մէկին շատ, մէկին քիչ, նոյնը կը հասցնէ նա անընդհատ կերպով եւ չի թողնի իր արարածը քաղցած մնայ: Մարդից, իրանից, ոչինչ կախուած չէ, որքան եւ ջանք գործ դնէր, դարձեալ նա չէ կարող մի մազաչափ աւելացնել, կամ պակասացնել սպրուստի այն չափից, որ նշանակել է նրա համար Աստուած:

Քահանայի վարդապետութիւնը եւ Հասօի խօսքը ծնուցին իմ մէջ երկու միմեանց հակառակ գաղափարներ. մէկը՝ անհոգութիւն եւ յոյս դնել Աստուծոյ նախատահմանութեան վրայ. միւրը՝ — գործունէութիւն եւ յոյս դնել իր աշխատող ձեռքերի վրայ: Ո՞րն էր դրանցից ճշմարիտը. ես որոշել կարող չէի, միայն մտածում էի թէ քահանայի ասածը պէտք է որ ուղիղ լինի, որովհետեւ տեսնում էի՝ մարդիկ այնքան աշխատում էին, կաշուց դուրս էին գալիս, դարձեալ մնում էին աղքատ: Երեւի, ասում էի ես, նրանց ապրուստը այնպէս քիչ է նշանակած, որ նրանք երբէք չեն կարող լինել ապահոված: Իսկ ազան կը մնայ միշտ ազան, որովհետեւ նա ոչ վարում է, ոչ ցանում է, ոչ հնձում է, եւ նրա սեղանը միշտ լի է եւ ճոխ . . .

Հիմնովելով վերոյիշեալ մտախոհութիւնների վրայ, Կարօի եւ իր ընկերների նպատակը լինձ երեւում էր բոլորովին երեւակայական, եւ ես խիստ ափսոսում էի, որ նրանք ընկած էին այնպիսի անեղանելի մոլորութեանց մէջ . . .

Ես միայն չէի, որ այսպէս էի մտածում, բո-  
լոր ժողովուրդը այսպէս էր մտածում, որովհետեւ  
նրանք նոյնպիսի տէր Թօղիկների աշակերտներ  
էին որպէս ես:

Եւ Կարօն աշխատում էր մի այսպիսի նախա-  
պաշարված ժողովրդի բարօրութեան համար . . .



## ԻՆՑ.

Ն Ա Խ Ա Գ Ո Ի Շ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Արեգակն սկսել էր արդէն այրել. կէս օրուայ տօթից դժուարանում էր մարդի շնչառութիւնը: Բաժանակելով Հասօից, ես գնում էի նեղ շաւիղով, որ տանում էր գէպի փոքրիկ փտակը ձորի մէջ. այնտեղ արծաթափայլ ջրի կանաչ ափերը հովանաւորում էին մի խումբ ծառեր, որոնք տարածել էին իրանց ստուերը մետաքսի պէս փափուկ խոտերի վրայ: Ես շտապեցի այնտեղ փոքր ինչ ազատ շունչ քաշել: Ծառերը նուիրական էին մի փոքրիկ մատուռի, որի կիսաւեր փլատակները դեռ վայելում էին իրանց սրբազնական յարգանքը բարեպաշտ ժողովրդից: Մատուռի մի քանի օղջ մնացած կամարները, որոնք ազատվել էին ժամանակի մաշող ձեռքից, թագնվել էին, միմեանց հետ խիտ փաթաթված, թուփերի եւ մացառների մէջ. իսկ նուիրական ծառերը, բարձր տարածելով իրանց ազատ ճիւղերը, գրկել էին իրանց ծոցում այն հինաւորց սրբարանը:

Ծառերից մի բանիսի ճիւղերի վրայ փաթաթ-  
ված էին գոյնզգոյն թելեր եւ շորերի կտոր-  
տանքներ: Տասս վաղուց մեկնել էր ինձ այս-  
պիսի ծառերի նշանակութիւնը. նա ասում էր՝  
«երբ սուրբ ծառի ճիւղին մարդ կապում է իր  
հագուստից մի կտոր, իր բոլոր ցաւերը անցնում  
են այն ծառի վրայ»: Իմ սիրան էլ լի էր ցաւե-  
րով . . . ես էլ տանջւում էի տխուր եւ հոգեմաշ  
զգացմունքներով . . . չը թեթեւացնել արդեօք այս  
անախորժ բեռը . . . Ես դուրս քաշեցի իմ ար-  
խալուղի գարվածքից մի թել եւ գողգոջուն ձեռ-  
քերով կապեցի նուիրական ծառի ճիւղին:

— Այս բաւական չէ, լսելի եղաւ մի ձայն:

Ես սոսկացի. տեսնում եմ՝ նոյն ծառի բունի  
ետեւ կծկվել է մի կին: Սատանան իր բոլոր հրէ-  
շաւոր այլանդակութեամբ չէր կարող այնքան  
զարհուրելի լինել, որպէս այն մուսլուտ կերպա-  
բանը:

— Թէ ուղում ես լաւը, Սուսանը կը տայ քեզ  
մի թիլիսման, այն ժամանակ ամենը կերթայ՝  
ինչպէս եղն ու մեղր . . .

— Ա՛խ, Սուսան, դձուն ես, կրկնեցի ես ու-  
րախանալով: — Այստեղ ի՛նչ ես շինում, ռ՛բքան  
փախեցայ ես, Սուսան, ասա, տեսա՞ր «նրան»,  
թէ չէ . . .

— Գուն Կարօն չես, պատասխանեց բօշան,  
ամենեւին չը շարժվելով իր տեղից: — Գուն Սու-  
սանին էլ չես կարող խաբել . . .

Բօշան գեռ չէր մոռացել իմ խորամանկու-  
թիւնը, որ գործ դրի նրա հետ արարական մի-

նարէթի մօտ. բայց ես կամենալով փոքր ինչ մեղմել իմ նրա վրայ թողած վատ տպաւորութիւնը, պատասխանեցի.

— Ի՞նչ խօսքիտես, որ ես Կարօի ընկերն եմ, նրա լաւ ընկերը, Կարօն ինքն ասաց ընդ—Մոռացել ես, Սուսան:

— Սուսանը չէ մոռացել, նա այդ գիտէ:

Ես խիստ մերձ նստեցի խորհրդական կնոջ մօտ, որ այն նուիրական ծառերի հովանոյ տակ ինձ երեւում էր որպէս գերբնական արարածներից մէկը, որոնք միշտ կերպարանափոխ են լինում: Եւ իրաւ, Սուսանը այսօր այն չէր, որ տեսել էի առաջին անգամ արաբական աւերակներում. նա ինձ այժմ չէր երեւում այն չոր ու ցամաք, այլանդակված պառաւը, որի վրայ չէր կարելի նայել առանց զարհուրանքի: Այլ ընդհակառակն, այսօր նրա աղօտ կերպարանքի մէջ ես նշմարում էի հետքերը վաղօրով թառամած գեղեցկութեան: Նրա մաշված երեսը դեռ պահպանել էր իր ազգու, համակրական արտայայտութիւնը, եւ սեւորակ աչքերը նայում էին խորին տխրութեամբ, որպէս հայելիներ, որոնց մէջ արտափայլում էին կոտորած եւ վշտահար սրտի բոլոր տանջանքները:

— Ի՞նչ այն օրից յետոյ տեսել ես Կարօին, Սուսան, հարցրի ես, մտերմաբար նրա երեսին նայելով:

— Այսօր դեռ մարդիկը ճաշ չէին կերած, Սուսանը տեսաւ Կարօին:

— Բայց «նրա», այն աղջկայ մասին, որ ամ-

բոցումն է . . . ինչ խաբար տուիր Կարօին:

— Այդ մի հարցրու. Սուսանը չի ասի քեզ:

— Դու գիտես, որ Կարօն ինձանից ծածուկ ոչինչ չունի:

— Թող նա ասէ քեզ:

Ես տեսայ, անկարելի էր այդ գաղտնիքը դուրս քաշել ծածկամիտ կնոջից, թողեցի հարցուփորձը: Նոյն ժամուն Սուսանը իր նորրբ, շագանակի կեղեւի գոյն ունեցող, շրթունքներից դուրս հնչեց մի օտարոտի ձայն, որ աւելի նման էր թռչունների ճլիլոցին, եւ իսկոյն ոչ այնքան հեռու գանլաճ թուփերի միջից լսելի եղաւ նոյնպիսի ձայն: Բոպէ չէր անցել, երբ այնտեղից դուրս վազեց փոքրիկ երեխայ, որ գալով Սուսանի մօտ, կպաւ նրա կուրծքին, եւ իր արեւից այրված մերկ թեւքերով գրկելով նրա պարանոցը, սկսաւ համբուրել նրան:

Այս տեսարանը խիստ հոգեշարժ էր եւ իմ սնահաւատութեան վրայ ազդեց մի դիւթական զօրութեամբ. ես մտածում էի՝ փոքրիկ երեխան չէ՛ արդեօք այն ոգիներից մինը, որի միջնորդութեամբ Սուսանը կատարում է իր կախարդական արարողութիւնները: Իմ կարծիքին աւելի ուժ էր տալիս այն դիւթական հագուստը, որ խիստ սազ էր գալիս նրա վայելուչ կազմուածքին, որի իւրաքանչիւր գծերից երեւում էր վայրենի գեղեցկութիւնը իր պարզ եւ անկեղծ հրապուրանքով: Դա նոյն երեխան էր, որ մի անգամ եւս երեւցել էր ինձ արաբական աւերակներում, երբ առաջին անգամ տեսայ Սուսանին:

Երբ նա տեսաւ ինձ, թողեց Սուսանին եւ ժպտելով վազեց իմ մօտ, կարծես, ես նրա վազեմի ծանօթը լինէի:

— Գնիր, պարօն, այս թիլիսամանը, Հիւրքին իր ձեռքովն է շինել, ասաց ինձ:

Նա կրկին ժպտեց եւ սեւ փայլուն աչքերով սխտեց նայել իմ երեսին, տալով ինձ սաթից շինած մի տափակ-քառանկիւնի բան: Այն մի հմայեակ էր նախշած զանազան նշանագրերով, որի նմանը շատ անգամ տեսել էի կանանց պարանոցէն քարշ ընկած: Ես տուեցի իմ մօտ գտնված միակ արծաթի դրամը եւ գնեցի փոքրիկ կախարդից թիլիսամանը: Նա գլուխ տուեց եւ կրկին վազեց Սուսանի մօտ:

— Հիւրքի երգիր մի բան պարօնի համար՝ նա քեզ աւելի փող տուեց, քան թէ կարժէր քո թիլիսամանը, ասաց նրան պառաւը:

Փոքրիկ աղջիկը, առանց քաշվելու, խիստ համարձակ կերպով եղանակեց մի թեթեւ երգ ինձ բոլորովին անհասկանալի լեզուով. միայն նրա ձայնը իր թարմ եւ քաղցր հնչիւններով քառականին ախորժ տպաւորութիւն գործեց իմ յիշատակ: Աերջացնելով իր երգը, նա կրկին վազեց իմ մօտ:

— Տո՛ւք ձեռքդ, թող Հիւրքին գուշակէ քեզ համար, ասաց նա, իմ աջը բռնելով իր փոքրիկ ձեռքերով:

Ես թոյլ տուեցի: Նա նստեց ինձ մօտ: Ես մինչեւ այսօր չեմ կարող մոռանալ, թէ որպիսի խորհրդ ական ծանրութեամբ փոքրիկ մարգա-

քէուհին սկսեց իր գուշակութիւնները, իմ աջ  
ափի գծերի մէջ կարգալով իմ ճակատագիրը:  
Նրա խօսքերը թէեւ անկապ էին, որպէս քրմու-  
հու առեղծուածներ, բայց զուրկ չէին իմաստից.  
ես կարող եմ կազմակերպել այսպէս.

«Քո կեանքի ճանապարհը փուշերով է ծածկ-  
ված. ամեն մի քայլում դրած են քո առջեւ որո-  
գայթներ. դու կրնկնես նրանց մէջ, դարձեալ  
դուրս կը գաս, միշտ քաջութեամբ յաղթելով բո-  
լոր դժուարութիւններին: Այդ կռիւը քո կեանքի  
մէջ կը տեւէ երկար, մինչեւ քո գլխի սեւ մա-  
զերը ճերմակ գոյն կըստանան. այն ժամանակ կը  
զարկէ քեզ համար խաղաղութեան ժամը, եւ  
քո բախտի արեւը, որ այժմ ծածկված է սեւ  
ամպերով, կրկին կը ծագէ իր բոլոր պայծառու-  
թեամբ:»

Նա կանգ առեց եւ րոպէական լռութիւնից  
յետոյ շարունակեց. «դու սիրում ես երկուսին,  
երկուսն էլ գեղեցիկ են, որպէս դրախտի ան-  
մահ աղօթիկներ. նրանք խիստ տաք օրտով կապ-  
ված են քեզ հետ. բայց նրանցից եւ ոչ մէկը» . . .

— Բաւական է, կտրեցի ես նրա խօսքը. —  
գիտեմ ինչ պէտք է ասես . . .

Նա տխուր կերպով նայեց իմ երեսին եւ  
թողեց ձեռքս, երեւի վիրաւորվեցաւ, որ ես ար-  
համարհեցի նրա արհեստը, ասելով.

— Հիւրքի, դու խօս ամենի համար այսպէս  
ես գուշակում:

Նա բաւականին հպարտ անձնասիրութեամբ  
պատասխանեց.

— Հիւրքրին սուտ չի աօի. Հիւրքրին խօսում է այն, ինչ որ յայտնում է նրան «գերագոյն ոգին»:

Մեր խօսակցութիւնը բոլոր ժամանակ, թէ Սուսանի եւ թէ մանուկ գուշակողի հետ պարսկերէն էր: Բայց նրանց կանոնաւոր արտասանութիւնից երեւում էր, որ նրանք չէին պատկանում բօշաների այն ցեղերին, որոնց շատ անգամ հանդիպել էի ես Պարսկաստանում: Նրանց երեսների թէ գծագրութեան նրբութիւնը, թէ կաշու գոյնը, որ աւելի սեւ չէր, թէ բնաւորութեան մեղմութիւնը, որ զուրկ չէր նոյն ցեղին յատուկ կրքոտ աշխուժութիւնից, — բոլորը ցոյց էին տալիս նրանց բօշաների մի աւելի ազնիւ եւ առանձին ցեղին պատկանելը: Բայց ինձ զարմացնում էր փոքրիկ աղջիկը: Սուսանը նրա մայրը լինելու համար բաւականին հասակաւոր էր. ուրեմն ո՞վ պէտք է լինէր նա: Ես հարցրի պառաւից. մինչեւ նա իր բերանը բացելը, Հիւրքրին պատասխանեց զարմանալի արագախօսութեամբ.

— Հիւրքրին Սուսանի թոռն է, Հիւրքրին անբախտ աղջիկ է. նրա մայրը կորած է. Հիւրքրին պտուում է իր մօրը. եւ նրա հայրը . . . .

Պառաւը չը թողեց նրան վերջացնել իր խօսքը եւ ինձ անձանօթ մի լեզուով սաստիկ բարկացաւ. նրա վրայ. խեղճ աղջիկը խսկոյն սուսկացաւ: Ես չը հասկացայ թէ ինչ ասաց Սուսանը, միայն նրա խօսքերից որոշեցի պարսկերէնին շատ մօտ բառը «լռէ»:

Երեւում էր, Հիւրքրի անդգուշութիւնը սաստիկ խռովութիւն պատճառեց պառաւի մէջ.

նա վեր կացաւ, եւ նոյն լեզուով մրմրեաց աղօր-  
կան մի քանի խօսքեր. երկուսը միասին ճանա-  
պարհ ընկան: Սուսանը ամենեւին չը նայեց ինձ  
եւ ոչինչ չտեսաց, միայն Հիւրբին մի քանի քայլ  
հեռանալով կրկին դարձաւ, եւ վայլուն այբերը  
իմ երեսին ձգելով, ժպտեց եւ գլուխը թափ-  
տալով, շարունակեց իր թեթեւ քայլերը խոր-  
հրդական պառաւի հետ: Քանի բոլորէից յետոյ  
նրանք աներեւոյթացան մերձակայ լեռների մէջ:

«Հիւրբին անբախտ աղջիկ է . . . նրա մայրը  
կորած է . . . Հիւրբին պառում է իր մօրը, եւ նրա  
հայրը» . . . Ո՞վ էր նրա հայրը, — այդ խօսքը խո-  
րամանկ պառաւը չը թողեց գեղեցիկ երեխային  
վերջացնել: Երեւի, մի աղօտ գաղտնիքով վարու-  
գորոված էր փոքրիկ գուշակողի ծագումը, որը  
նա անզգուշութեամբ պէտք է երեւան հանել, բ-  
եթէ ոչ, ինչու պէտք է Սուսանը այնպէս վեր-  
դովիէր, ինչու իսկոյն պէտք է հեռանար ինձա-  
նից: Նա վախեցաւ՝ չիցէ թէ երեխան մի նոր  
անզգուշ խօսք գորս թռցնէ իր բերնից, եւ  
հեռացրեց նրան: Անպատճառ այստեղ մի գաղտ-  
նիք կար, որ պէտք էր գիտենալ, բայց սրպէս  
գիտենալ: Խորամանկ պառաւը գնաց, կորաւ ան-  
յայտ ուրուականի պէտ: Ո՞րտեղ կարելի էր տես-  
նել նրան միւսանգամ: Բայց ինչ է նշանակում  
նրա ստէպ տեսակցութիւնները Վարօի հետ: Վա-  
րօն ինչ գործ ունի այն մոլորչրջիկ թափառա-  
կանի հետ. եւ նրանց յարաբերութիւնների հետ  
կապ ունի մի երրորդ անձնաւորութիւն՝ — ւամ-  
բոցի աղջիկը» — ահա գաղտնիքի գլխաւոր մասը,

որ ծածկված էր խաւարի մէջ . . .

Բայց իմ մտքից չէր դուրս գալիս փոքրիկ գուշակողի պատկերը, ես առաջին անգամ տեսնում էի այնպիսի սիրուն երեխայ, որի մէջ կար այնքան համարձակ անմեղութիւն, որի սիրտը այնքան տաք եւ զգայուն էր: Ես հաւատում էի նրա խօսքերին, որոնցմով նա կարգաց իմ անբախտ ապագան. ես հաւատում էի, որովհետեւ «գերագոյն ոգին» այնպիսի անկեղծ արարածներին միայն կը յայտնէ մարդկանց ճակատագրի գաղտնիքները: Ահա, ասում էի ես, հաւատարիմ դստերք բնութեան, որոնք ապրում են երկնքի թռչունների նման. «ոչ վարում են, ոչ ցանում են եւ ոչ հնձում են», բայց նրանք էլ աղքատ են եւ ապրում են ողորմութիւնով . . .

Կրկին տիրեցին ինձ սեւ մտածութիւնները, կրկին իմ սիրտը ընկաւ անհանգիստ խռովութեան մէջ: Ես պառկած էի սրբազան ծառերի հովանու ներքոյ, բայց չուշացաւ քունը, նա վերջ տուեց իմ անհանգստութեանը:



## Ի Բ .

Ն Ա Խ Ա Ջ Գ Ո Ի Շ Ո Ի Թ Ի Ի Ն

Երբ զարթեցայ, գիշեր էր: Ո՞րքան ժամանակ անցել էր օրից, քանի՞ ժամ քնել էի, ես չը կարողացայ գիտենալ: Փափուկ եւ տաք գիշեր էր: Ո՞րքան գեղեցիկ վառվում էր ամառնային՝ երկինքը իր վայլուն գոհարներով. ո՞րքան մեղմ եւ մտախոհ կերպով սահում էր կիսալուսինը պարզ եթերքի միջով:

Ես պառկած էի դալար խոտերի վրայ, եւ խիստ ախորժ ծուլութեամբ թաւալվում էի մի կողքից դէպի միւսը: Ականջ էի դնում: Ամեն տեղ ախորում էր խորին լռութիւն, բո՛լորը հանգստանում էին: Արթուն էր միայն վտակը, որի ափի մօտ պառկած էի. ես լսում էի նրա խուլ-մեղմամղձական խոխոջմունքը, նա անդադար վազում էր եւ վազում, նա քուն եւ հանգստութիւն չունէր: Ահա, հովասուն զեփիւռը փափուկ թեւքը քսեց իմ երեսին, եւ շփացնելով անցաւ. կարծես, ուզում էր ասել «տես, ես էլ արթուն եմ»:

Աչքս դարձրի դէպի աստղազարդ երկինքը:

Նայում եմ: Այ՛ո՛, գեղեցիկ են Աստուծոյ լուսա-  
ւորները: Արժնում եմ նրանց մէջ իմ աստղը,  
երկա՛ր որժնում եմ, բայց չեմ գտնուամ Ահա՛ եր-  
կու աստղեր. նրանք ծանօթ են ինձ. ես շատ  
անգամ տեսել եմ նրանց, համբուրել եմ. . . շատ  
անգամ նրանք նայել են ինձ վրայ ջերմ քնքշու-  
թեամբ. . . Ես ճանաչում եմ ձեզ, սիրուն աստղեր,  
գուք նմանում էք Սօնայի տխուր եւ արտա-  
սուալի աչքերին, որպէս այն վերջին գիշերը,  
երբ նա բաց արաւ իմ բանտի գուռը եւ ասաց՝  
«փախիր, Փարհատ»: Ահա՛, երկու աստղեր եւս.  
Ինչպէս հպարտ եւ ինքնահաւան կերպով փայ-  
լում են նրանք. նմանում են նրանք Մարօի լի  
կրակով աչքերին, երբ նա հրացանը ձեռին կանգ-  
նած, ժպտում էր այն սարսափելի բոպէում, երբ  
ես շողախլած էի դաբանի արիւնով:

Սիրճում եմ ձեզ գեղեցիկ աստղեր: Ահա՛ ան-  
ցաւ մի սեւ ամպ եւ ծածկեց իմ տեսութիւնից  
Նազելի աչիկները. . . .

— Ա՛խ, Սօնա . . . ա՛խ, Մարօ . . .

— Ի՞նչ է, լսելի եղաւ մի ձայն եւ իմ առ-  
ջեւ նկարվեցաւ մի պատկեր, որպէս կերպա-  
րանքը գիշերային ուրուականի:

Մի սառսուռ վազեց բոլոր մարմնիս մէջ:

— Ես եմ, Փարհատ:

— Ա՛խ, Մարօ . . .

Երեւակայեցէք իմ ուրախութիւնը, ուրա-  
խութիւնը լի վառված կրքերով մի պատանիի,  
որ գիշերային լուսթեան մէջ, հեռու մարդկային  
բնակութիւնից, գտնում է նրան, որին սիրում է:

Մարօն նստեց իմ մօտ, իմ ձեռքը առեց իր երկու ափերի մէջ, եւ դրեց իր ծնկի վրայ: Նա ուրախ, որպէս միշտ, սկսեց պատմել թէ առաւօտեան իր հօրից իմացաւ, որ իմ առողջութիւնը վատ էր. նա վազեց դէպի եղբօր ագարակը, տեսաւ, ես այնտեղ չը կայի: Այնտեղից շտապեց դէպի արտը Հասօի մօտ. եղբօրից այսքանը իմացաւ, թէ նա տեսել էր ինձ կէսօրից առաջ, բայց չը գիտէր՝ ո՛ւր կամ ո՛ր կողմը գնացի: Նա երկար որոնեց ինձ, մինչեւ արեւը մտաւ եւ օրը մթնեց. յետոյ նրան հանդիպեց մի բօշայ կին, որն ասաց, թէ տեսել էր ինձ «քանդուած մատուռի մօտ»:

— Դու ճանաչում ես այն կնկան, հարցրի ես:

— Երկրորդ անգամն է, որ տեսնում եմ նրան, պատասխանեց Մարօն:

— Առաջին անգամն էրք էր:

— Երկու տարի առաջ: Ես տեսայ նրան միեւնոյն հագուստով, որպէս այսօր, էլի այն փոքրիկ երեխան իր հետն էր, որին այսօր տեսայ: Ի՛նչ լաւ երեխայ է, Ծարհատ, այնքան սիրտս սիրեց նրան, որ բռնեցի երեսը պաշ արի: Ախար մե՛զք է անօրէնի երեսը պաշ անելը. նրա ճակատին մեռածն չէ քսած. բայց ես նրան պաշ արի. նա այնպէս լաւ երեխայ էր:

— Ո՞րտեղ դու տեսար նրան երկու տարի առաջ:

Մարօն նկատելով, իր պատմութիւնը հետաքրքրում էր ինձ, շարունակեց.

— Ես տեսայ նրան այս ձորի մէջ, այս մատուռի մօտ. նա խօսում էր Վարօի հետ, ի՛նչ էր

խօսում, ես չիմացայ, նրա համար որ, նրանց լեզուն չէի հասկանում: Քանի օրից յետոյ Կարօն անյայտացաւ մեր տանից, մենք չիմացանք թէ ուր գնաց: Քանի տարի էր նրանից ոչինչ լուր չունէինք: Կարօի գնալուց յետոյ, այն կինն էլ չերեւաց: Այս անգամին, երբ Կարօն կրկին լուսընկաւ, Բօշան էլի ման է գալիս մեր կողմերում:

— Այն ժամանակ Ասլանը եւ Սադօն Կարօի հետ էին:

— Չէ, նրանք չը կային: Այս անգամ յետ դարձան միասին: Երկու շաբաթ է, ինչոր եկել են:

— Գու այսօր Կարօին չե՞ս տեսել:

— Ես քեզ ասեցի, որ տանից դուրս եմ եկել առաւօտեան, մինչեւ հիմա էլ սար, ձոր չեմ թողել, քո ետնէն ման եմ եկել: Հիմա ի՞նչպէս է քէվդ, դու ողջ օրը հաց չես կերել, ի՞նչ գիժտղայ ես Ֆարհատ:

— Կարօն լաւ տղայ է, այսպէս չէ:

— Լաւ տղայ է, բայց . . .

Նա կտրեց իր խօսքը, եւ բուպէական լռութիւնից յետոյ շարունակեց.

— Գիտե՛ս, Ֆարհատ, քանի օրից յետոյ Կարօն իր ընկերների հետ գնալու են Տէ Կէզ, դու նրանց հետ չը գնաս:

— Ի՞նչու չը պէտք է գնամ:

— Այնպէս . . . մի գնա . . . ես չեմ կարող ասել . . . հայրս ինձ կը սպանէ թէ ասեմ . . . Աղաչում եմ, Ֆարհատ, մի գնա նրանց հետ:

Այդ խօսքերի միջոցին բարեսիրտ օրիորդի

այբերը լցուեցան արտասուքով. նա պինդ կպած իմ կուրծքին, գրկել էր ինձ, երկար եւ երկար աղաչում էր, որ ես չը մասնակցեմ Կարօի եւ նրա ընկերների արշաւանքին: Բայց ինչ արշաւանք էր այդ, դէպի ո՞ր կողմը եւ ինչ նպատակով, — գրանց մասին ծածկամիտ Մարօն ոչինչ չը յայտնեց:

— Ա՛խ, Կարօն... նա սիրտ չունի... նա գազան է, մարդ չէ . . . նրա համար մի ազամորդուն սպանելը այնպէս է, ինչպէս խեղճ հաւի վիզը կտրելը . . . Ես սուտ չեմ ասում, Փարհատ, ես իմ աչքով եմ տեսել . . . Ա՛խ, հեռու կանց այս մարդից, Փարհատ, չը բարկացնես նրան . . . նա Աստուած չունի . . . նա բարեկամ, ընկեր, — այս բաները չէ իմանում . . .

Այսպէս խօսում էր Մարօն արտասուախառն հեկեկանքով, բայց ինձ բոլորովին անհաւատալի էր երեւում, մտածել Կարօի մէջ մի այնպիսի վայրենութիւն, որպէս նկարագրեց նրան Մարօն: Մի այնպիսի տղամարդ, որ բոլոր սրտով նուիրել էր իրան մարգասիրութեան գործին, չէր կարող գազան լինել: Ես Կարօին լաւ էի ճանաչում, ճանաչում էի նրան երեսայութիւնից, բայց միթէ փոխվել էր նա:

— Ես չեմ հաւատում, Մարօ, Կարօն այդպէս չէ, կտրեցի ես օրիորդի խօսքը: — Ես նրանից չեմ բաժանվի, ուր որ գնայ, ես էլ կը գնամ նրա հետ:

Մարօն յայտնեց, թէ սոպէս նա մի գիշեր սպանեց իր ամենալաւ ընկերներից մէկին, մի հնդկացի հայ երիտասարդի, որի վրայ փոքր ինչ

կասկած ունէր, թէ կը յայտնէ իր գաղտնիքը. եւ աւելացրուց, թէ կարող էր մինչեւ անգամ նրա գիտիլը ցոյց տալ ինձ, որովհետեւ այս անցքը պատահել էր մի քանի օր առաջ: Միայն ինքը, Մարօն, չէր կարող ամեն ինչ համարձակ ասել ինձ, որովհետեւ վախում էր իր հօրից:

— Ես միշտ հաւատարիմ կը մնամ Կարօին, ես դաւածանութիւն չեմ գործի նրա դէմ, ասեցի ես:

— Հա՛, սիրելիս, նրա հետ պէտք է այսպէս լինել, պատասխանեց Մարօն, փոքր ինչ հանգըստանայով:— Ես չեմ ասում նա վատ տղայ է. նա վատ է միայն վատերի հետ, ով որ նրան հակառակ է: Բայց նրա քարէ սիրտը յանկարծ փափկանում է, երբ մի խեղճ մարդ է տեսնում. քանի՛ անգամ ես տեսել եմ նրան, որ մտել է աղքատ գիւղացիների խրճիթը եւ նրանց փող է բաշխել, նա իր բերանի պատառը ուրիշին է տալիս, երբ տեսնում է, որ նա քաղցած է:

— Բայց Ատանը եւ Սագօն ինչպէս են:

— Ատանը լաւ տղայ է, բայց Սագօին չեմ սիրում, նա լաւ տղայ չէ: Գիտե՛ս, Փարհատ, մի օր նա ինչ ասաց ինձ. մեր բակումը նրա հետ մենակ կանգնած էինք. խօսում էինք մեր գիւղի աղջիկների վրայ. մէկ էլ տեսնեմ, այն աղուէսը — ախար նրա երեսը աղուէսի նման է, — Հա՛, Սագօն ձեռքը գցեց իմ վզովն ու ասաց. «Թո՛ղ, Մարօ, պաշ անեմ քեզ»: Ես յետ քաշվեցայ, մի լաւ աստակ՝ շրթը խկ նրա երեսին. քիչ էր մնացել խեղճի շիւ աչքերը քօռանային:

— Իսկ եթէ ես ասեմ՝ ինձ մի պաշ տուր,  
ինձ էլ ապտակ կը տաս:

Նա սկսեց ծիծաղել եւ ոչինչ չը պատաս-  
խանեց:

Ես գլուխս խոնարհեցրի նրա կուրծքի վրայ,  
երկար մեր շրթունքները չէին հեռանում մի-  
մեանցից: Մենք ոչինչ չուխտեցինք մէկ մէկու-  
հետ. մենք չը խոստացանք միմեանց մշտական  
սէր, հաւատարմութիւն. — այսպիսի բացատրու-  
թիւններ չեղան մեր մէջ: Միայն սրտի խուլ լե-  
զուն խոստացաւ շատ եւ շատ, այն որ ամենա-  
սրբազանն է եւ աստուածային, այն որ միայն  
սիրտը կարող է հասկանալ:

— Գնանք, ձայն տուեց օրիորդը, որպէս թէ  
զարթնելով խորին հոգեզմայլութիւնից:

— Գիշերի ո՞ր ժամանակն է, հարցրի ես

Նա նայեց դէպի երկինքը եւ պատասխանեց.

— Տես, «բազումքը» երբ այն աստղի մօտ է  
հասնում, գիշերը կէս է լինում: — Աւղիղ կէս գի-  
շեր է: Մենք վեր կացանք:

Մենք գնում էինք զանազան ոլոր-մոլոր ճա-  
նապարհներով. թէ ի՞նչպէս էի անցել ես այդ լա-  
բիրինթոսը, ամենեւին չէի յիշում: Ի՞նչ կը լինէր  
իմ վախճանը, մտածում էի ես, եթէ Մարօն ինձ  
չը գտնէր. ես ոչ միայն գիշերով, այլ լոյս ցե-  
րեկով եւս չէի կարող գտնել Հասօի ագարակը:

Մարօն կպած էր իմ կողքին եւ մանկահասակ  
աղջկայ դարսը եւ թեքուն հասակի ամեն մի շարժ-  
մունքը ելեքտրապէս ազդում էր իմ վրայ: Բոլոր  
ժամանակը նա առանց լռելու խօսում էր, թըռ-

չելով մէկ մտքից դէպի միւսը. երբեմն նա ասում էր՝ թէ որքան լաց կըլինէր, եթէ ինձ չը գտնէր, թէ նա բոլոր գիշերը կը պտռէր ինձ, միշտ կը պտռէր: Յայտնում էր՝ թէ իմ պառկած տեղը շատ վատ տեղ է, եւ նա ուրախ է, որ վտանգ չէ պատահել ինձ. ասում էր՝ թէ այն ձորը կոչվում է դանլի-դարա (արիւնոտ ձոր), որովհետեւ քիչ չէ պատահում, այնտեղ գտնում են սպանված մարդերի գիակներու Բացի դրանից, աւելացնում էր նա, այնտեղ գազանները շատ անգամ պատառոտում են մարդկանց, երբ նրանք պաշտպանվելու զէնք չունէին իրանց հետ: Յանդիմանում էր իմ անհոգութիւնը, թէ ինչու ես զէնք չէի կրում, թէ գոնեա պէտք էր ունենալ իր մօտ մի ջուխտ ատրճանակ եւ խէնջար:

— Ապա դու ինչպէս առանց զէնքի չը վախեցար այն ձորը մտնել, հարցրի ես:

— Միթէ գիշերն առանց զէնքի ման եմ գալիս, պատասխանեց նա ծիծաղելով իմ պարզմտութեան վրայ, եւ ցոյց տուեց մի ջուխտ ատրճանակներ, որ թագցրած ունէր իր գօտիի մէջ:

Եթէ ցերեկ լինէր, Մարօն կը նկատէր, թէ յորպէս կարմրեցայ ես ամօթից . . .

## Ի Գ.

Ն Ե Ր Ք Ի Ն Կ Ռ Ի Ի

Հասնելով ծերունի որսորդի տունը, մենք գտանք բոլորին քնած: Մըհէն, որ բաց արեց դուռը, յայտնեց՝ թէ իր աղան տանը չէր եւ ոչ նրա հիւրերը դարձել էին իրանց «գնացած տեղից»: Ես մտածեցի, անպատճառ մէկ արգելք պէտք է պատահած լինի, որովհետեւ Կարօն եւ նրա ընկերները խոստացան, թէ մինչեւ երեկոյ կը վերադառնան: Հասօն իր ազարակումն էր. նա տան երես չէր տեսնում, քանի իր մշակութեան գործերը վերջացած չէին դաշտերից. ձմեռուայ ձիւները միայն մի քանի ամիս նրան բշուժ էին դէպի տուն:

Մարօի առաջին հոգսը եղաւ պատրաստել ինձ համար մի բան ուտելու: Ընթրիքից յետոյ նա գցեց իմ քնելու շորերը, եւ ցանկանալով ինձ բարի գիշեր, ինքն եւս գնաց հանգստանալու:

Առաւօտեան ես զարթեցայ խիստ ուշ. երկար բռնը բաւականին կազդուրել էր իմ առողջութիւնը. ես զգում էի ինձ զուարթ եւ նորոգ-

ված ուժերով: Սիրտս էլ սուխորականից աւելի ուրախ եւ հանգիստ էր, որպէս թէ, ես գտնուում էի մի անսահման բաւականութեան մէջ, լոյս աշխարհում ոչինչ պակաս չէր մնացել ինձ, բոլորը, բոլորը լրացրել էր այն արարածը, որին սիրում էի ես, որը սիրում էր ինձ:

«Քեղեցիկ Մարօն կը բժշկէ քեզ» . . . ասաց Սագօն. նրա խօսքը ճշմարիտ էր, թէեւ նա արտասանեց այնպիսի դառն, հեզնական ժպիտով:

Ես կրկին գլուխս դրեցի բարձի վրայ եւ նայում էի պատուհանից ներս ծագած շողին, որի մէջ խաղում էին միլիօնաւոր մանրիկ փոշիներ գոյնզգոյն փայլումներով: Ահա ինչ է նշանակում լոյսը, մտածում էի ես, չէ՛ որ այս սենեակի ամբողջ բովանդակութիւնը պարունակում է իր մէջ այսպիսի փոշիների մի ծովակ՝ բայց նրանք չեն երեւում օդի աղօտութեան մէջ, իսկ լոյսի այս նեղ ժապաւէնի մէջ բոլորը երեւում են: Բայց եթէ խաւար լինէր, — ես ոչինչ չէի տեսնելու, մինչեւ անգամ ամենախոշոր առարկաները: Ա՛խ, ի՛նչ լաւ բան է լոյսը, որպէս բայ է անում նա մարդի աչքերը եւ զօրութիւն է տալիս նրա տեսութեանը: Չէ՛ որ մի եւ նոյն է լինում եւ կեանքի մէջ, — մի ժողովրդի, մի ազգի եւ ամբողջ աշխարհի կեանքի մէջ: Երբ որ տիրում է մտաւոր խաւարը, մարդիկ չեն տեսնում իրանց ամենախոշոր թերութիւնները. նրանք չեն նշմարում այն ճանապարհի ուղղութիւնը կամ ծռութիւնը, որով գնում են. նրանք չեն նկատում այն խոչնդոտները, որ ամեն անգամ նրանց

տարին է դիպում եւ ճակատի վրայ վայր է գր-  
ցում.— Նրանք ոչինչ չեն տեսնում, միայն խար-  
խափում են մոլորութեան մէջ. . .

Յիշեալ մտախոհութիւնները ինձ հասցնում  
էին այն եղրակացութեանը, թէ բոլորովին ան-  
յաջող կանցնէր Արօի ձեռնարկութիւնը. նա չէր  
կարող մի ժողովուրդ, որ ապրում էր խաւար մթ-  
նոյրտի մէջ, կանգնեցնել շիտակ ճանապարհի  
վրայ եւ նրա ընթացքին անմոլոր ուղղութիւն տալ:  
Պէտք էր նախ եւ առաջ փարատել խաւարը, եւ  
ժողովուրդն ինքն իրան կը գտնէր իր ճանա-  
պարհը. . .

Արդեօք այսպէս էի մտածում ես. մի՞թէ  
այս ճշմարտութիւններն էի կարգում արեւի այն  
լուսաւոր ժապուէնի մէջ, որ ներս էր շողացել  
իմ քնարանի պատուհանից:— Ա՛յ, ես ոչինչ չէի  
տեսնում նրա մէջ բացի փոքրիկ փոշիներից.  
Նրանք եւս շուտով ձանձրացրին ինձ: Երեսս շուռ  
տուի, իմ ուշադրութիւնը գրաւեց ախտաբոր-  
բոք ճնճղուկը, որ իր զոյգի հետ պատուհանից  
ներս թռան սենեակի մէջ: Նրանք մի քանի շր-  
ջաններ գծեցին իմ դատարկ քնարանում, յի-  
տոյ նստեցին միմեանց մօտ սկսեցին քաղցր սի-  
րախօսութիւններ անել: Մինչ այն զուարճութեան  
մէջ էին, ներս թռաւ մի այլ ճնճղուկ— արու,  
նա մօտեցաւ նախկին հերոսի սիրուհուն. նո-  
րեկի կողմից մի այսպիսի լրբութիւնը շարժեց  
սիրահարի նախանձը: Առիւը սկսեց: Մի փոքր  
խեղդեցին մէկմէկու, մի փոքր քաշեցին միմեանց  
փետուրները: Մինչ նրանք այս պատերազմի մէջ

էին, էզը օգուտ քաղեց խռովութիւնից եւ դորս  
փախաւ: Կաւոյները թողեցին մենամարտութիւ-  
նը, վազեցին իրանց երկպառակութեան առար-  
կայի ետեւից:

Միթէ մի եւ նոյնը չը պատահեց իմ եւ  
Սագօի մէջ: Չէ, մտածում էի ես, նրա փոքրիկ  
գլուխը կը ջարդեմ, եթէ միւսանգամ նա կը  
համարձակվի Մարօի անունը յիշել. ես աւելի  
թոյլ չը պէտք է լինեմ, քան այն ճնճղուկը, որ  
իր կեանքով պաշտպանում էր սիրոյ գաղափարը:

Նոյն բողբոջն, կարծես, ես լսում էի մի հե-  
կեկանք, կարծես, մի դառն լացելու ձայն զար-  
կում էր իմ ականջներին: Խնձ թւում էր, թէ  
ես դպրոցումն էի, տէր Թօգիկը չոքեցրել էր  
ինձ մանրած աղիւսի կտորտանքի վրայ. ես տես-  
նում էի Սօնային (դասատան պատուհանից երե-  
ւում էր նա) մի եւ նոյն ծառի ստուերի ներքոյ,  
ուր միշտ նստում էր, եւ այժմ նստած էր: Նա  
գլուխը քարշ էր գցել իր ծնկների վրայ եւ ձեռ-  
քով բռնել էր իր աչքերը, լաց էր լինում, եւ  
ես լսում էի նրա ցաւալի հեկեկանքը: Խնջու  
էր լաց լինում նա, ո՞ւմ համար էր լաց լի-  
նում, ի՞նչու միշտ լաց էր լինում նա այն ժա-  
մանակ, երբ նրա հայրն ինձ ծեծում էր, կամ  
գետնի վրայ չոքեցնում էր, իսկ միւս ժամանակ-  
ներում միշտ ուրախ էր: Խեղճ աղջիկ, որքան լաց  
կը լինես դու, եթէ հիմա, հիմա տեսնես ինձ. . .

Այս կիսաքուն կիսարթուն երազների մէջ  
էի ես, յանկարծ լսելի եղաւ մի սաստիկ դղր-  
դոց. որպէս թէ մի ծանր բան վայր ընկաւ գե-

տին, Աչբս բայ արի, տեսնեմ՝ իմ մահճի մտ  
կանգնած էր վիթխարի Մըհէն եւ ինքն իրան  
մըրթմըրթում էր.

— Հազար անգամ ասել եմ, էսպիսի յիմար  
բաներ մի տուէք իմ ձեռքը. ինքը սատանան  
կը մոլորվի. էնքան թեթեւ է, հէնց շունչ ես  
քաշում, թռչում է ձեռքիցդ:

Վայր ընկած բանը փոքրիկ փայտեայ մա-  
տուցարանն էր, որի վրայ Մըհէն ինձ համար  
նախաճաշիկ էր բերում. նրա կարծիքով, իւր կո-  
պիտ ձեռքերի համար անպատճառ մէկ ծանր  
բան պէտք է լինէր, որ կարողանար տանել: Նա  
թողեց թափված ամաններն առանց հաւաքելու  
եւ ուզում էր դուրս գնալ, երբ Մարօն ներս մտաւ:

— Ո՛հ, բռնանամ ես, այդ ինչ արեցիր,  
սարսաղ, դարձաւ նա դէպի ապշած սպասաւորը,  
եւ սկսեց հաւաքել թափված ամանները: — Ե՞րբ  
պէտք է դու մի բան սոլորես:

— Ես ոչ մի ժամանակ չեմ սոլորի այսպիսի  
սատանայական բաները, թող կնիկներն անեն,  
պատասխանեց նա կոշտ կերպով. — Նիր իմ շա-  
լակին մէկ եզան բեռը ցորեն, ասա, Մըհէ, տար  
ջաղացը, կը տանեմ, մի հաս էլ չը թափվի: Երբ  
սայլը թաղվում է ցեխի մէջ, գոմէշները կաշուց  
դուրս են գալիս, չեն կարացի տեղից շարժել,  
ասա, Մըհէ, դուրս քաշէ սայլը ցեխից, — Մըհէն  
կանէ այդ, բայց սատանայական բաների նա գը-  
լուի չունի . . .

— Լաւ, լաւ, Մըհէ, քո հոգուն մատաղ, ես  
այս գիտեմ, ես չէի ուզում քեզ բարկացնել,

ասաց Մարօն, իւղեւոյ կատաղած ծառայի գը-  
լուխը:— Գո՛ւ գէ՛տէ՛ս, որ Խաթունը տանը չէր,  
դրա համար բեզ նեղութիւն տուի:

— Էդ ուրիշ բան է. . . ասաց նա եւ դուրս  
գնաց:

Մարօն երկար ծիծաղում էր նրա գնալուց  
յետոյ. նա պատմեց ինձ մի բանի յատկութիւններ  
Մըհէի բնասորութիւնից.

— Զարմանալի բնասորութիւններ ունի այդ  
անասունը. նրան ասա՛՛ «Մըհէ Դո՛ւ գէ՛տէ՛ս», որ  
այն ինչ մարդուն պէտք է սպանել», նա իսկոյն  
կըսպանէ. նրան ասա՛՛ «Մըհէ, Դո՛ւ գէ՛տէ՛ս», որ այն  
ինչ մարդու երեսին մի ապտակ պէտք է տալ»,  
նա իսկոյն կը կատարէ բո՛ կամբք. մի խօսքով  
ամեն գործ պատրաստ է նա կատարել, երբ ա-  
սես «դու գիտես»: Միայն գործը պէտք է բա-  
ւականին ծանր լինի եւ խոշոր, թեթեւ բանի  
համար գլուխ չունի Մըհէն:

Մարօն աւելայրուց, թէ Մըհէն իր ամա-  
կանը ստանալու միջոցին երբէք չէ կարող ըն-  
դունել արծաթի կամ ոսկի դրամներ, ասելով,  
թէ նրանք շատ մանր են, եւ նա չէ սիրում  
թեթեւ դրամներ, այլ միշտ պահանջում է պը-  
ղընձէ մեծ դրամներ, թեւեւ իւրաքանչիւր ոս-  
կու փոխարէն կը տային նրան մի մի հատ պը-  
ղինձ: Այսուամենայնիւ, կիսախելագար Մըհէն  
շատ հաւատարիմ էր եւ ունէր օտարոտի բարե-  
սրտութիւններ: Նա ծեծում էր իր կնոջը, երբ  
նա իր երեխային զարկել կամ լացացրել էր.  
Ծեծում էր եւ երեխային, երբ մօրը բարկա-

ցեում էր: Բայց նա միակ մարդն էր, որ սիրում էր Հասօի եղները, այնպէս, որպէս նրանց աէրը: Այդ պատճառով Հասօն միշտ գոհ էր նրանից եւ փորախի լիակատար իշխանութիւնը տուել էր նրան, ուր նա, անասունների հետ միտօին, բնակվում էր իր ընտանիքով:

Բացի Սըհէից ծերունի որսորդի տան սպասաւորների թւում էր պառաւ Խաթունը. գեռ նրա մանկութեան ժամանակ, երբ նա տասն եւ հինգ տարեկան էր, Ալօն գնեց նրան դաջարի սարվազներից, երբ շատ հայ կանանց հետ Խաթունին գերի էին բերում Վասպուրականի կողմերից: Այնուհետեւ թէեւ Որսորդը ազատութիւն չնորհեց նրան եւ շատ անգամ առաջարկեց դառնալ իր հայրենիքը, բայց Խաթունը չուզեց հեռանալ այն տնից, ուր այնքան սիրում եւ պատվում էին նրան: Բացի գրանից, վերջին ժամանակները նա իմացաւ, որ հայրենիքում իր ազգականներից եւ ոչ մէկը չէր մնացել. մեծ մասը նոյն գերութեան դարում սղանվել էին պարսիկներից, մնացածները ոչնչացրել էր խօլերան:

Մարօն գեռ երեխայութեան ժամանակ որբ մնալով մօրից, փոխարինեց նրան բարեսիրտ Խաթունը, որ խնամք էր տանում փոքրիկ աղջկան մայրական բոլոր գթասրտութեամբ: Բայց գանը վելով աւելի հօր ազդեցութեան տակ, Խաթունի աշակերտուհին չընդունեց նրա դաստիարակութեան այն հոգին, որ ունէր աւելի ջերմեւանգ եւ կրօնական բնաւորութիւն. «Սո որսորդ

եմ, ասում էր Ալօն, իմ աղջիկը եթէ որսորդ  
եւս չը լինի, գոնեա պէտք է սիրէ արիւն եւ հրա-  
ցան: Այդ պատճառով Մարօի խիստ վաղ ման-  
կութիւնից սկսեցաւ նրա եւ Խաթունի մէջ  
մի խուլ հակառակութիւն: Մարօն շատ ան-  
գամ ծիծաղում էր, երբ մոլեռանդ Խաթունը  
իր ձեռն ընկած բոլոր փողերը հաւաքում էր  
եւ տէրտէրներին էր տալիս, եւ բացի պարտա-  
դիր պասերը աւելորդ պասեր էր պահում, եւ  
Սուրբ Սարգսի շարաթում երեք օր ոչ ուտում էր  
եւ ոչ խմում: Իր գերութիւնից յետոյ, կարծես,  
մի ծանր ապաշաւանք էր նստած նրա խղճմը-  
տանքի վրայ, որը միշտ աշխատում էր քաւել  
կրօնքի եւ քահանայի միջնորդութեամբ . . .

Հասօի կնոջը ես մի քանի անգամ միայն  
տեսայ, այն եւս ծածկված երեսով. իր երկրի սո-  
վորութեանը հետեւելով, նա չը խօսեց ինձ հետ  
եւ ոչ մի բառ. առհասարակ նա խիստ հազիւ էր  
երեւում, աւելի զբաղված էր իր երեխաներով,  
որոնց թիւը, ընտանիքի միւս անդամների հա-  
մեմատութեամբ բազմութիւն էր կազմում: Մի  
բարի բախտով, աղջիկները, գեռ հարս չը գար-  
ձած, վայելում էին այն արտօնութիւնը, որ կա-  
րող էին երեսները առանց ծածկոցի ման գալ  
եւ տղամարդերի հետ խօսել, եթէ ոչ, մի եւ նոյնը  
կը պատահէր իմ եւ Մարօի հետ, ինչ որ պատա-  
հեց Հասօի կնոջ վերաբերութեամբ:

Ինչ որ աւելի աչքի էր ընկնում ծերունի որ-  
սորդի դրութեան մէջ, այն էր, որ նա այժմ  
չէր երեւում այնպէս աղքատ, որպէս էր Սալ-

մաստում բնակված ժամանակ: Արօտների մէջ արածում էին աւելի քան հարիւր ոչխար, տասը հատ ընտիր կովեր ամեն օր քշում էին գէպի նախիրը, արօրը իր ամբողջ պարագայքով գործում էր սեպհական արտերի մէջ, տունը լի էր Աստուծոյ ամեն բարութիւնով: Հասօի խօրշումած ձեռքերը վաստակեցին այս բոլորը: «Այն ժամանակ միայն մշակը կարող է կուշտ փորով հաց ուտել, երբ նրա բրտինքը թափվում է իր սեպհական հողի վրայ», այսպէս էր խօսում ծերունի որսորդը:

Որսորդ Ալօն, որպէս նկատեցի ես, Հաղբակայ ժողովրդի կողմից վայելում էր մեծ յարգանք. նա էր միանգամայն այն երկրի խաղաղութեան ոգին, նրա մի խօսքը վարատում էր շատ վիճելի երկպառակտ թիւնները գիւղացիների մէջ: Նրա վրայ նայում էին գիւղացիները, որպէս իրանց նահապետի կամ պատրիարքի վրայ: Թէեւ Ալօն այժմ պաշտօնապէս ստացել էր «միր» տիտղոսը եւ համարվում էր տեղային հայերի գլուխ կամ ներկայացուցիչ, եւ շէյխերի մէջլիսում ծնկի տեղ ունէր, այսուամենայնիւ, նա չէր թողել իր պարզ, անփառասէր յարաբերութեան ձեւը հասարակ ժողովրդի հետ: Նա իր վարուցողութեան մէջ ոչ մի բանով չէր ցոյց տալիս, թէ ինքը պաշտօնական մարդ է, թէ նա մի բանով բարձր է քան հասարակ ամբօխը, այլ նայում էր ժողովրդին, որպէս գերդաստանի հայրը իր ընտանիքին: Նա մինչեւ անգամ չէր թողել իր հին սովորութիւնները, իր հին պարապմունքը. շու-

բաթը մի քանի անգամ, հրացանը ուսից քարշ  
գցած, նա կերթար որսորդութեան. եւ այդ  
անում էր նա ոչ թէ զուարճութեան համար,  
այլ իր սիրելի արհեստը պատուելու համար:

Այժմ այս երկրում եւս գաղթական էր, որ-  
պէս Սալմաստում, ինչո՞ւ էր թողել իր բնիկ հայ-  
րենիքը, կամ ճրտեղացի էր նա, — այդ մի գաղտ-  
նիք էր, որ սաստիկ կերպով պահւում էր նրա  
ընտանիքի մէջ: Բայց շատ անգամ ծերունի որ-  
սորդի թաւամազ յօնքերը խոժռւում էին, շատ  
անգամ նրա բարի գէմքը պատում էր տխրու-  
թեան մռայլը, երբ հարցնում էին նրա անցեա-  
լից, երբ խօսք էր բացւում նրա հայրենիքի մա-  
սին: Երեւում էր, նրա անցեալը թողել էր խիստ  
տխուր յիշողութիւններ, որոնց մտաբերելը ոչ  
միայն անախորժ էր թւում, այլ մինչեւ անգամ  
սարսափ էր ազդում այդ անբախտ մարդու վըշ-  
տահար սրտին . . .



## Ի Գ.

Մ Ի Փ Ո Ւ Ր Ի Կ Յ Ո Յ Յ

Մերունի որսորդը դարձաւ տուն միւս տուր  
ճրեկոյեան պահօն: Կարօն եւ իր ընկերները չը  
յայտնուեցան: Նա ասաց, թէ մի անակնկալ  
դէպք առիթ տուեց տղերքին մի օրով յետ  
ընկնել այն գործէջ, որի պատճառով պէտք է  
գնային մի տեղ: Կ'նչ գործ, որտեղ,—այդ մա-  
սին նա ոչինչ չը խօսեց: Ես խնդրեցի նրանից  
պատմել դէպքը: Նա ասաց, որ շատ յոգնած է,  
պահանջեց մի բան ուտելու եւ խոստացաւ ընթ-  
րիքից յետոյ պատմել բոլորը: Մարօն մի քանի բո-  
պէում կատարեց հօր պատուէրը. ես չը մօտե-  
ցայ սեղանին, սրովհետեւ ամենեւին ախորժակ  
չունէի: Ես միայն նայում էի Մարօին, որ նըս-  
տած հօր մօտ, մատների աննշմարելի արագու-  
թեամբ գործում էր գուլբաներ, եւ առանց լռե-  
լու խօսում էր, թէ ինչ դրութեան մէջ նա գտաւ  
ինձ «քանդված մատուռի» մօտ, թէ մտածում էր  
նա «իմ գլխին մի օյին խաղալ», ամենեւին չը  
ցոյց տալ, թէ ինքը Մարօն է, եւ կողոպտել ինձ:

որովհետեւ ես քնած էի, շատ անզգայ կերպով քնած էի, այն դրութեան մէջ նա կարող էր իմ ձեռքերը, ոտքերը կապել եւ միանգամայն «պոկել» ինձ: Յետոյ նա իր ճարպկութիւնը կը յայտնէր Պարօին եւ ինձ կամաչացնէր նրա ընկերների մօտ, եւ այլն: Ինձ թէեւ շատ ակորժ չէր լսել այս բոլորը, որով վիրաւորում էր նա իմ հպարտութիւնը, բայց դարձեալ ես չէի կարողանում զսպել իմ ծիծաղը, երբ նա խիստ հեգնական սրախօսութիւններ էր անում իր պատմութեան մէջ: Հայրը նոյնպէս ժպտում էր, եւ շոյելով դստեր մազերը, ասում էր՝ «փոքրիկ աւազակ»: Բայց Մարօն ծռւից դէպի իմ ականջը՝ կամաց ասաց.

— Գու խօ չե՛ս բարկանայ իմ հանաքներով, Փարհատ:

Ընթրիքից յետոյ որսորդը գանձում էր հագու լաւ տրամագրութեան մէջ, նա սովորականից աւելի ուրախ էր, եւ ծխելով իր չիբուխը, անզագար խօսում էր այն անցքի վրայ, որ այնօր պատահել էր: Ահա նրա պարունակութիւնը.

Պարօի խումբը ծերունի որսորդի առաջնորդութեամբ գնում էին Բարթուղիմէոս առաքելոյ վանքը, ուր վանահօր հետ պէտք էր մի քանի հարկեր էլէրէ մասին խորհրդակցել: Նրանք անցնում են Հասրտանու սարերով, ուր արածում էին հօտերը մի հոյարնակ գիւղի, որ շատ հեռու չէր աւօտաանդից: Յանկարծ լսում են աղմուկ, աղաղակ, եւ հովիւները կոտրած գլուխներով, արիւնաշաղախ, վազում են նրանց մօտ,

յայտնում են՝ թէ քրդերը թալնեցին հօտերը, եւ խնդրում են օգնութեան հասնել: Կարօն իր ընկերների հետ շտապում են դէպի այն կողմը, որ ցոյց են տալիս հովիւները: Բայց դեռ հօտերին չը հասած, տեսնում են՝ գիւղացիք յետ են դառնում, բոլորովին յուսահատած եւ իրանց կայքը կորցրած: Նրանք յայտնում են՝ թէ ամենայն ջանք ի զուր էր, որովհետեւ աւաղակներն իրանց աւարով արդէն անցել էին այս եւ այն սարը, որոնցից միս կողմը հեամուտ լինել անկարելի էր, որովհետեւ նրանք արդէն գտնվում էին իրանց սահմանի մէջ, որ բոլորովին անմասշելի էր: Կարօն հովիւներից տեղեկացած լինելով, թէ որ ժամին սկսվեց թալանը, յայտնում է ոչխարների տէրերին, թէ դեռ եւս յոյս կայ աւարը յետ դարձնելու, որովհետեւ աւաղակները ոչխարների գանդաղ քայլերով չէին կարող անցնել այժման ճանապարհ, մի այնպիսի կարճ միջոցում: Եւ աւելացնում է, թէ իրան, Կարօն լաւ ծանօթ էր այն սարերի դիրքը, նա գիտէր մինչեւ անգամ ամենաաննշան շաւիղները, եւ խոստանում էր տանել նրանց կարճ ու կտրուկ ճանապարհով, համոզում էր գիւղացիներին իր հետ գալ: Իսկ այգպիսի դէպքեր խեղճ գիւղացիների կեանքում առաջին անգամը չը լինելով, նրանք չեն համոզվում եւ արտասուալի աչքերով դիմում են դէպի իրանց տները:

— Ես չեմ մեղադրում աւաղակներին, որոնք կողոպտել են ձեզ, նրանք հաւատարիմ են մընում իրանց արհեստին, ասում է Կարօն վրդով-

վելով: — Ես մեղադրում եմ ձեզ, որ դուք չը գիտէք պահպանել ձեր կայքը: Նառ ուղիղ է ասում քուրդը, թէ «հայը մի կոյր հաւի սիրտ չունի» . . .

— Տղերք, դառնում է գէպի իր ընկերները, — գնանք մենք եւ ցոյց տանք բրդերին, թէ ամեն հայ այնպէս չէ, որպէս նրանք կարծում են:

Կարօն յայտնում է իր ընկերներին, թէ աւազակները մինչեւ իրանց տեղը հասնելը, անպատճառ պէտք է անցնէին այն ինչ կիրճը. թէ նրանք ոչխարների յամրաշարժ ընթացքով հազիւ թէ մինչեւ կէսօր կը հասնէին այնտեղ, ուրեմն ժամանակ դեռ շատ կար: Արանք կարող էին մի ուրիշ, աւելի կարճ ճանապարհով, կէսօրից կէս ժամ առաջ հասնել յիշեալ կիրճի մօտ եւ փակել անցքը. այդ կը լինէր մի եւ նոյնը, որպէս փակել որսը որոգայթի մէջ:

Եւ իրաւ, Կարօի տարած ճանապարհը լինում է եւ աւելի կտրուկ, թէեւ նա անցնում էր ամենալուտանգաւոր սարաւանդների եւ դժուարին քարաժայռերի միջով: Այն ճանապարհով անհնար էր ձիաւոր մարդուն անցնել, ուր մնաց աւազակներին իրանց աւարով, այդ պատճառով նրանք զանց էին արել մօտաւոր ուղին:

Ճիշտ Կարօի նշանակած ժամին տղերքը հասնում են յիշեալ կիրճի մօտ. նա լինում է մի նեղ փապար, որի միջով հազիւ կարող էր անցկենալ մի ձիաւոր: Փապարի մի կողմում բարձրանում էր ապառաժեայ ահագին սլառ, միւս կողմում ընկած էր խորին անդունդ, մի սխալ քայլ բաւական էր գլորելու ճանապարհորդին:

գէպի այն վիճը: Աւազակները թւով աւելի քան յիսուն ձիաւոր հասնում են այնտեղ: Կարօն իր խումբը բաժանում է երկու մասն, ինքը Ասլանի հետ կապում են կիրճի մուտքը, իսկ ծերունի որսորդը Սագօի հետ բռնում են նրա ելքը: Կարօն պատվիրում է իր ընկերներին սպանութիւն չը գործել, միայն երկիւղ տալ աւազակներին, որ նրանք թողնեն աւարը: Արտիհետեւ սպանութիւնը կարող էր ենթարկել խեղճ գիւղացիներին աւազակների վրէժխնդրութեանը:

Եւ այսպէս էլ լինում է:

Կարօն իր գարանից ձայն է տալիս աւազակների գլխաւորին, որ թողնեն աւարը, եթէ ցանկանում էին կենդանի անցկենալ կիրճից: Նա պատասխանում է արհամարհանքով եւ հրամայում է քշել հօտերը:

Կարօն կրկին ձայն է տալիս՝ թէ նա դեռ եւս խնայում է պարօն աւազակապետի գոռոզ գլխին եւ փորձում է իր գնդակի գորութիւնը նրա գդակի վրայ: Այդ խօսքերի հետ Կարօի հրացանը որոտում է եւ աւազակապետի գդակը թռչում է գլխից:

Նա դարձեալ մնում է իր յամառութեան մէջ:

Կարօն միւս անգամ ձայն է տալիս՝ երեւի պարօն աւազակապետի գդակը մեծ կորուստ չէր իր համար, բայց նա դարձեալ խնայում է նրա անձին, եւ այս անգամին իր գնդակը դիպցնում է նրա ձիու աջ ականջին: Հրացանը երկրորդ անգամ որոտում է եւ աւազակապետի ձին Գլորվում է գետին, իր տիրոջն եւս իր տակովն:

առնելով:

Կարօի օրինակին հետեւում են նրա եւ միւս ընկերները. Ասլանը իր հրացանի գնդակին նպատակ է ընտրում մէկի մտրակը, որ վայր է գըցում առանց տիրոջ ձեռքը վնասելու: Աագօն խփում է մէկի ձիու թամբի դաշին: Մերունի որսորդը խիստ ճարպիկ կերպով թռչնում է մէկի նիզակի ծայրը:

Աւազակների կողմից ամենայն ջանք անցնում է իզուր, որովհետեւ Կարօն իր ընկերների հետ պատասպարիած են լինում ժայռերի ետեւում, որոնք բարձր կանգնած էին կիրճի վրայ: Գախը տեսնում է կէս ժամ: Աւազակները գեռչեն կամենում անձնատուր լինել:

— Տղերք, ասում է Կարօն, պէտք է մի փոքր ձանկատել գրանց . . .

Եւ սկսում են այնուհետեւ իրանց գնդակները գիպցնել մէկի ձեռքին, միւսի ոտին, երրորդի ափանջին, մի խօսքով, մարմնի այն մասներին, որոնց վէրքը մահացուցիչ չէր կարող լինել:

Աւազակները ստիպւում են թողնել աւարը:

Կարօն յայտնում է՝ թէ նրանք պէտք է թողնեն իրանց ձիերից չորսը, որովհետեւ ինքը իր ընկերների հետ ոտով եկած են եւ բաւականին յոգնած են, եւ թէ, ոչխարները իրանց տէրերին հասցնելէն յետոյ, ինքը Կարօն խոստանում է յետ դարձնել նրանց ձիերը, որոնց կը գտնեն այն ինչ տեղում, որ նշանակում է Կարօն: Աւազակները յօժարվում են եւ այդ առաջարկութեանը:

Այնուհետեւ Կարօն յայտնում է՝ թէ աւազակները պէտք է այնքան ժամանակ մնան կիրճի մէջ, մինչեւ իր ընկերները հօտերը կը դարձնէին եւ բաւականին կը հեռացնէին այնտեղից: Աւազակները ընդունում են եւ վերջին պայմանը:

Կարօն ծերունի որսորդի հետ մնում են պահելու կիրճի ելքը, իսկ Ասլանը Սագօսի հետ հեծնում են աւազակների թողած ձիաները եւ դարձնում են հօտերը: Երբ նրանք բաւականին հեռացած են լինում, Կարօն բաց է թողնում աւազակներին:

Հօտերը հասցնում են գիւղը այն ժամանակ, երբ բոլորովին մթնած է լինում: Գիւղացիք անպատմելի ուրախութեամբ վազում են նրանց առջ եւ զանազան օրհնութիւններով յայտնում են իրանց շնորհակալութիւնը: Կնիկները համբուրում են նրանց զէնքերը, ասելով.

— Ձեր ոտքերի հողը թող մեր տղամարդերի գլխին լինի . . .

Որքան խնդրում են, որ տղերքը այն գիշերը մնան գիւղում, հիւր լինեն, նրանք չեն ընդունում, միայն Կարօն պատուիրում է, որ առաւօտեան իրանց նստած ձիերը տանեն եւ կապեն այն ինչ տեղում, որովհետեւ ձիերը պատկանում են աւազակներին:

Աւարտելով իր պատմութիւնը, ծերունի որսորդը աւելացրուց.

— Տեսնում ես, որդի, «մարդ կայ, որ հազար մարդու արժէ. հազար մարդ կայ, որ մի մարդ չարժէ»: Կարօն, Ասլանը եւ Սագօն էլ մար-

դիկ են, այն գիւղացիքն էլ մարդիկ են: Բայց ինչպէս Երկուսի մէջ այնքան զանազանութիւն կայ, որքան առիւծի եւ կատուի մէջ: Հայ գիւղացին մի քուրդ տեսնելիս փախչում է, իր տունն է մտնում, դռները փակում է, որ գոնեա իր դուռին ազատէ, ապրանքը թողնում է դրսում, թշնամին թաղնում ու տանում է: Իսկ Կարօն իր երկու ընկերների հետ ապրանքը յետ են իլում: Այդ ինչից է: Չէ՞ որ երկուսն էլ մի հօր զաւակներ են. չէ՞ որ երկուսի գամարներումը մի եւ նոյն արիւնն է վազում:

— Ասում են, այստեղ միզաւոր է ստրկութիւնը, յառաջ տարաւ որսորդը:— Ա՛յ կարող է մարդից իլել նրա ազատութիւնը, ս՛լ կարող է ստրկացնել նրան, եթէ ինքը, մարդը, ցանկութիւն չունի, եթէ նա չէ պատրաստել իրան մի այսպիսի անբախտ վիճակի համար: Մարդն ինքն է թոյլ տալիս ուրիշներին նստել իր շինքի վրայ: Եւ այդ շատ ձեռնտու է բռնաւորի համար. նա էլ այդ է ցանկանում: Այ՛ն, մարդն ինքն է պատրաստում իր համար ստրկութիւնը եւ նրա արմատը դրած է ընտանիքի մէջ: Այն օրից, երբ երեխան աչք է բացում, նրա ձեռքը, ոտքը կապում են եւ դնում օրօրոցի մէջ, — այդ ստրկութեան սկիզբն է: Առաջին խօսքերը, որ մայրը խանձում է օրօրոցի երգերի մէջ, լինում են հոգին թուլացնող, եռանդը մաշող, կամքը եւ միտքը սղանող, եւ նախապաշարմունքներով լի խօսքեր, — դա ստրկութեան առաջին դասն է: Յետոյ մեծանում է մանուկը, նա միշտ ընդունում է

ճնտղների ապտախը, միշտ զգում է նրանց կոպիտ  
վարմունքը, միշտ լսում է նրանցից սպառնալիք,  
սարսափեցնող, բխամտացնող եւ մանուկի ուժը,  
զօրութիւնը խլող խօսքերու Դպրոցի մասին եւ  
լեւ խօսում, որովհետեւ այդ դու ինքդ փորձել  
ես, սիրելի որդիւ Բայց աւելի քան դպրոցը, մեծ  
չարիք է գործում քահանան, այն եւս Աստուծոյ  
անունով: Ի՞նչ մեղ ունի խեղճ գիւղացին, նրան  
սովորեցնում են լինել սարուկ: Նա ամեն օր տէր-  
տէրից այդ խօսքերն է լսում — «ոյ որ բեզ կը  
մեծէ, դու նրան խոնարհութիւն արա. ոյ որ քօ  
վերարկուն կը խլէ, դուն շապիկդ էլ տուր. եթէ  
ձախ երեսիդ զարկեն, աջն էլ գարձու. ամե-  
նեին սուր չը բանեցնես, որովհետեւ սուր բա-  
նեցնոյր սրով կը մեռնի, գրա համար էլ մեր  
Տէրը Պետրոսի ձեռքից սուրը խլեց»: Այլ է իմա-  
նում, հազար ու մէկ այսպիսի յիմարութիւննե-  
րով լեցնում են խեղճ մարդու գլուխը, եւ նա  
դառնում է ոչ թէ մարդ, այլ «կոյր հաւ», որ-  
պէս քուրդն է ասում:

— Իսկ մեր կարգացուորններն այդ յիմարու-  
թիւնները կոչում են կրթութիւն, գաստիարա-  
կութիւն . . .

— Բայց քուրդը, պարսիկը, թուրքը, որոնք մեր  
հացը մեր ձեռքից խլում են, որոնք մեր արիւնք  
ծծում են, նրանք բոլորովին ուրիշ եղանակով  
են գաստիարակում: Ընտանիքի մէջ աճում, զար-  
գանում են նրանք, ինչպէս վայրենի ծառը մայր-  
հողի վրայ արմատ է գցում, ազատ, արձակ ճիւ-  
ղեր է բարձրացնում, եւ ոչինչ չէ ճնշում, ոչինչ

չէ նուազեցնում նրա անելութիւնը: Պարոյցի մէջ նրանց կարգացած գրքերը մեր Այսմաւուրքը եւ Նարեկը չեն. նրանք սուրբում են իրանց ազգի հերոսների պատմութիւնը, ոգեւորվում են իրանց բանաստեղծութիւնով, որը մեծ մասամբ նուիրված է զանազան հսկանների, փէհլիվանների քաջագործութիւններին: Նրանց կրօնքը եւ կրօնական գրքերը մինչեւ անգամ բանաստեղծութիւն են, որոնց մէջ շնչում է պատերազմական ոգին: Արովհետեւ սկսեալ Մուհամմէդից մինչեւ խալիֆաները, խմամները եւ այլն, — բոլորը պատերազմող մարդիկ էին: Լսիր, ի՞նչ է քարոզում մահմեդականի մօլլան՝ «ոյ որ քեզ կը ծեծէ, դու էլ նրան ծեծիր. նա որ քեզանից չէ, նրա ապրանքը քեզ հալալ է. կռիւ տուր թշնամուդ հետ, այն կռիւի մէջ թէ սպանես, դրախտը կերթաս, թէ սպանվես, դարձեալ դրախտը կերթաս»: — Բոլորովին հակառակն է խօսում նա, ինչ որ ասում է հայի տէրաէրը մեզ:

— Մուհամմէդը տուեց իր ժողովրդին սուր, բայց Քրիստոս՝ — խաչը. ահա զանազանութիւնը մեր եւ մահմեդականների մէջ:

— Արիւն թափելը, ուրիշի ապրանք խլելը՝ վատ բաներ են. բայց շատ հաճելի էլ չէ, որ մարդ թոյլ տայ իր արիւնը թափեն, իր ապրանքը խլեն, իր զաւակները հացից զրկեն: Ամբողջ աշխարհը մէկ կռիւի դաշտ է, ուր զօրեղն անզօրին կանում է, ոչնչացնում է, թէ ուղում ես ուրիշի կերակուր չըգառնաս, պէտք է բոգլոխը պահելու ճարը գիտենաս: Մի՞թէ գայլի

հետ կարելի է գառն գառնալ.—գազանի հետ պէտք է գազան լինել, որ կարողանաս գլուխդ պահել Ծունը, որ շուն է, երբ նրան փոքր ինչ նեղացնում ես, կծում է և Կատուն, որ կատու է, թէ նեղացնես, կը ճանկուտէ, նրա համար որ, նրանց հայրն ու մայրը, նրանց վարժապետները լին սովորեցրել համբերել: Բայց մեր գիւղացիներին այսքան նեղացնում են, կաշին մաշկում են, հոգին հանում են, նրանք դարձեալ համբերում են, որովհետեւ երկխայութիւնից սովորել են համբերել . . .

—Բայց Կարօն եւ իր ընկերներն ուրիշ տեսակ մարդիկ են, իստակ այնպիսի մարդիկ, որպէս պէտք է լինի մարդը: Նրանք հօրից եւ մօրից որք են մնացել, այդ պատճառով ընտանիքը չէ փլացրել նրանց: Քահանայ-վարժապետից շուտ հեռացան, եւ դպրոցը չը կարողացաւ բոլորովին մեռցնել նրանց մէջ մանկութեան կենդանութիւնը: Ընկնելով այլ շրջանի մէջ, օրինաւոր մարդկանց ազդեցութեան տակ, տարուբերուելով աշխարհի փոթորիկների մէջ, նրանք ստացան բոլորովին այլ բնաւորութիւն: Եթէ հայոց դասակների գոնեա մի փոքր մասը այնպէս լինէր, որպէս Կարօն եւ նրա ընկերները, այդ ազգը շատ բախտաւոր կը լինէր . . .

—Հայերը այս երկրի ազգաբնակիչութեան մէջ բազմութիւն են կազմում: Բայց քուրդը, որ աւելի սակաւ է թւով, տուն-տեղ չունեցող, թափառական քուրդը տիրում է հային, նրա վրայ

«...»-ընէ և անուս: Ի՞նչ է պատճառը, — այն, որ քուրդը կենդանի մարդ է, իսկ հայը մեռած: Բանը շատութեան ու քչութեան մէջը չէ, գլխաւոր բանը սրտի մէջն է. ի՞նչ կարող է շինել մի մարդ, երբ որ սիրտ չունի: Այսօր ես իմ այբով տեսայ, թէ որպէս երեք հոգի հայ տղերք կռուեցան աւելի քան յիսուն ձիաւորի հետ. բայց ես այն աւազակներին ճանաչում եմ, նրանց գլխաւորը Մուրադ-բէկն էր, որ իր խումբով մի ամբողջ երկիր կարող է թալանել:

— Հիմա լսիր, որդի, ծերունի որսորդը խօսքը դարձրուց դէպի ինձ. — թէ ուզում ես այս աշխարհում ապրել, պէտք է գայլի հետ գայլ դառնաս, գառան հետ՝ գառն. գլուխդ մի խոնարհեցրու, թէ չէ ծեծողներ շատ կը գտնուին, ողորմած եղիր դէպի քեզանից տկարները, բայց թշնամուդ մի խնայիր. սրբիր անբախտի արտասուքը, մխիթարէ նրան, եթէ այդ կը պահանջէր մինչեւ անգամ քո կեանքը, քո արիւնը:

Ծերունի որսորդի այս երկար քարոզի միջոցին ես ոչ այնքան լսում էի նրա խօսքերը, որքան նայում էի Մարօի վրայ. իմ բոլոր ուշադրութիւնը գրաւել էր նրա երեսը իր շարժուն եւ զգայուն բացատրութիւններով: Հօր խօսքերը, երեւում էր, թափանցում էին նրա սրտի խորքի մէջ, որպէս բարեբեր սերմը պատրաստված հողի մէջ: Նրա աչքերն աւելի եւ աւելի վառվում էին, բարակ շրթուքները դողում էին. թշերի կարմրութիւնը, բոլորովին թռաւ, մնաց միայն մոյգ-գեղնութիւնը, որ տալիս էր նրա դէմքին պղնձի

գոյն: Ի՞նչ էր, որ այնպէս վրդովեց կիսավայ-  
րենի աղջկայ սիրտը: Մի՞թէ նրան եւս տանջում  
էր հայի թշուառութիւնը . . .



Ի՞նչ է ՔՈՒՐԴԸ ԵՒ Ի՞նչ է ԹՈՒՐԿԸ

Մերունի որսորդի վարպետութիւնն որքան եւ անմարդասիրական լինէր, որքան եւ ունենար վայրենի, անխաղաղասէր բնաւորութիւն, գարձեալ նա մի բողոք էր իր ժամանակի բարբարոսութեան եւ հարստահարութեան դէմ: Մի մարդ, որպէս էր ծերունի որսորդը, բռնութեան կոպիտ ձեռքից այնքան դառն հարուածներ կրած մարդ, չէր կարող այլապէս մտածել: Ինքը կեանքը, իրան շրջապատող հանգամանքները մտցրել էին նրա մէջ այն սարսափելի վրէժխնդրութիւնը դէպի ամեն անարդարութիւն, որ խլում է խաղաղասէր երկրագործի բարին, որ զրկում է նրան օրական ապրուստից, եւ մինչեւ անգամ սրբապղծում է նրա ընտանեկան պատիւը:

Մերունի որսորդի տնակը կանգնած էր այն լեռնագօտիի վրայ, որ կաղմում էր բնական սահման, բաժանելով Տաճկաստանը Պարսկաստանից: Իւրաքանչիւր բաժինը պարունակում էր իր մէջ երկրի ընդարձակ տարածութիւն, բնակեցրած

մեծ մասամբ հայերով: Պարսկաստանի մասնում գտնվում էր Ատրպատական նահանգը իր զանազան գաւառներով. իսկ Տաճկաստանի մասնում՝ Վասպուրականի, Տարօնի եւ Արզրուտի նահանգներն իրանց գաւառներով: Ես կը գրեմ իւրաքանչիւրի մասին որքան յիշում եմ, որքան վերաբերում է իմ պատմութեանը:

Սարսափելի էին այն ժամանակները . . .

Այդ այն ժամանակն էր, երբ Տարօնը եւ Վասպուրականը թէեւ Տաճկաստանի մի մասն էին կազմում, բայց քրդերի զանազան ցեղերը, օգուտ քաղելով սուլթանի պետութեան թուլութիւնից, տիրում էին Հայաստանի այդ երկու ամենամեծ նահանգներին, սկսեալ Սեւ ծովի հարաւարեւելեան եզերքից, Եփրատ գետից, մինչեւ Միջագետի եւ Պարսկաստանի սահմանները:

Յիշեալ նահանգները պարունակում էին իրանց մէջ հետեւեալ գաւառները՝ Հաբարի, Բայազէդ, Հաղբակ, Վան, Բաղէշ (Բիթլիս), Մուշ, Շատախ, Սասուն, Խիզան, Մոզաց երկիր, Չարսանջակ, Բեղու եւ այլն—այդ գաւառներին տիրում էին քրդերը:

Մնացեալ աղգարնակութիւնները, բացի քրդերից, էին՝ հայեր, ասորիներ, հրէաներ, թուրքեր, եազիզիներ, եւ զանազան թափառաշրջիկ ցեղեր: Հայերը իրանց թւով բազմութիւն էին կազմում, եւ համարեա, բաղկացնում էին ամբողջ աղգարնակութեան կէսից աւելի մասը:

Որպէս զի գիտենալ, թէ ինչ դրութեան մէջ էին այն ժամանակ հայերը, պէտք է նախ ծանօ-

Թանալ տիրող ազգի՝ քրդերի բնաւորութեան եւ նրանց քաղաքական կազմակերպութեան հետ:

Քրդերը բաժանուած էին զանազան ցեղերի, որոնց գլուխներն էին՝ Մուքուրի, Թակուրի, Միլանցի, Հայտարանլի, Շաւի, Չալալի, Ռաւանդ, Բիլբաստ, Մամըքանի, Հարթօշի, Շիկակ, Հարքի, Նզիդի: Դրանք շատ քիչ էին զանազանուած յատկութիւններով եւ սովորութիւնով. խօսում էին մեզական լեզուով, որ իւրաքանչիւր ցեղի մէջ որոշւում էր բարբառների առանձնութեամբ: Կրօնով մահմեդական էին սուննի աղանդից: Եազիդիները միայն բաժանուած էին կրօնով, որոնք պաշտում էին չար եւ բարի ոգիները, երկրպագութիւն էին տալիս տնային օջախին: Դրանք գուցէ մնացորդներ էին Արամազդի եւ Արհմնի հին երկրպագուներից, որոնց մէջ մինչեւ այսօր երեւում են մոգական ծէսեր:

Քրդերը չունէին գիր եւ գրականութիւն. շէյխերը (ղենպետները) միայն գիտէին արաբերէն կարգալ, որով աւանդում էին ժողովրդին իրանց կրօնի հրահանգները, որոնք բովանդակւում էին մի քանի պարզ եւ թեթեւ, արտաքին ծիսակատարութիւնների մէջ: Միակ բանը, որ գիտէր ամեն քուրդ իր հաւատքի հանգանակից, էր նամազը, որը նա մեքենաբար եւ ճիշտ կերպով կատարում էր նշանակեալ ժամերում, առանց հասկանալու, թէ ինչ էին նշանակում, իր այնքան ջերմեռանդութեամբ արտասանած արաբական բառերը: Բացի դրանից, քուրդը գիտէր մեծ մարգարէի—Մուհամմէդի անունը, եւ նրա նախ-

կին խալիֆաների՝ Օմարի Օմանի, Աբու-Բաքրի  
անունները, եւ աւելի ոչինչ։

Բայց ժողովրդական անգիր բանաստեղծու-  
թիւնը կենդանի էր քրդերի մէջ. նա ծագելով  
ամբօխի իսկական կեանքից, ունէր նոյն բնաւո-  
րութիւնը եւ ոգին, որով ապրում էր ինքը ամ-  
բօխը։ Հովերգութիւնը եւ քաջազնական հագ-  
ներգութիւնը գլխաւոր տեղն էին բռնում նրանց  
բանաստեղծութեան մէջ, առաջինը, որպէս մի  
խաշնարած ցեղի կեանքի առշնչութիւն, երկ-  
րորդը, որպէս նրա պատերազմական ոգու ար-  
տայայտութիւն։ Հովական երգերը տխուր էին  
եւ մեղամողձոտ, նրանք խիստ մեղմ կերպով ներ-  
գաշնակվում էին հովիւի սրինգի խուլ եւ ձգական  
հնչիւնների հետ։ Իսկ պատերազմական երգերը  
կրակոտ, փառվառեն եւ խրոխտ էին, նրանք լիա-  
հնչիւն համարձակութեամբ որոտում էին թըմ-  
բուկների ձայնի հետ։

Ոչ մի նշանաւոր երեւոյթ չէր կորցնում իր  
հետքը քուրդի կեանքի մէջ. ժողովրդական ոգին  
իր տաղերով կամ փառարանում էր մէկի քաջա-  
գործութիւնը, կամ պարսաւում էր միւսի թու-  
լարտութիւնը։ Մածկվեցաւ մէկը թշնամուց,  
կամ խոյս տուեց նա կռիւի դաշտից, միւս օր  
կանայքը եւ աղջիկները յօրինում էին նրա մա-  
սին զանազան կծու պարսաւներ, եւ երգը արագ-  
թաչում էր ամեն երեխայի, ամեն չափահասի  
բերանից։

Թուրք, մի ջուխտ ատրճանակ, փահանը եւ  
նիզակը քրդի մարմնի անդամներ են, որոնք

միշտ մնում են նրանից անբաժան. հրացանը նա գործ է ածում մեծ կռիւների մէջ, Թամբաժ ձին, որ միշտ պատրաստ է նրա չափրի առջեւ, քրդի հաւատարիմ ընկերն է. նրան սիրում է տէրը աւելի քան իր կնոջից, աւելի քան իր որդիներէն, Քուրդը իր չափրի մէջ հիւրասէր է որպէս Աբրահամ, բայց նա չի խնայելու կողոսպօել նոյն հիւրին, եթէ նա կը հանգիպէր մէկ միջոն հեռու իր չափրից: Արեան վրէժխնդրութիւնը, որպէս ամեն կիսաւայրենի ցեղերի մէջ, նոյնպէս քրդի մէջ, անցնում է սերունդից սերունդ: Սպանւածը հանգիստ չէ իր գերեզմանի մէջ, քանի որ նրա արեան փոխարէնը չէր առնուել սպանողից, կամ նրա մօտ ազգակիաններից: Սպանողը այն ժամանակ միայն ազատ է մնում վրէժխնդրութիւնից, երբ գնում է իր ոսոխի տունը, իր սուրբ գրում է նրա ոտքի տակ, եւ ներողութիւն է խնդրում: Բայց հազիւ կը գտնուէր մի քուրդ, որ խոնարհվէր մինչ այս աստիճան ստորութեան: Քուրդը քինախնդիր է եւ ոխերիմ. նա մինչեւ մահ չէ մոռանում վիրաւորանքը կամ անպատուութիւնը, քանի որ դեռ լիակատար բաւականութիւն չէր ստացել: Նա մի եւ նոյն ժամանակ շատ հանգամանքներում—հպարտ է եւ ազնիւ: Քուրդը դադարեցնում է իր կռիւը, երբ հակառակ կողմից միջամտութիւն են գործում կանայք: Նա իրան չէ ստորայնում, պատերազմելով իրանից թոյլ արարածների հետ. թէեւ քրդի կինը կռիւի ասպարէզում նոյնքան կատաղի է եւ քաջասիրտ, որքան իր ամուսինը:

Արկին անգամ ամուսնանալը, մեռած կամ սպանված տղամարդից յետոյ, քուրդ կնոջ համար համարվում է նախատինք: Նա մնում է միշտ այրի, մխիթարում է իրան այն քաղցր յիշողութիւններով, թէ իր այրը մի «լաւ աւագակ» էր, թէ նա մնաց միշտ մաքուր երկչոտութեան արատից, թէ նա երբէք իր թիկունքը չը դարձրուց թշնամու դէմ, թէ նա սիրում էր իր ամուսնին, որքան սիրում էր իր արարական նրժոյգին, եւ երբէք նրա սիրտը չը գրաւեց ամենագեղեցիկը իր ցեղի աղջիկներէց: Եւ մայրն երեսխայւթիւնից սրտամում էր իր զաւակներին հօր գործքերը, խրատում էր հետեւող լինել նրան եւ կրկին բարձրացնել հանգուցեալի յիշատակը խոր գերեզմանից:

Մանկութիւնից քուրդը կրթվում է ձիան սանձ կառավարելու, դէնք գործածելու, մարմնամարզութեան եւ այլ ճարպկութիւնների մէջ: Նա քաջագործութիւն է համարում գողանալ, յափշտակել ամեն ինչ, որ պէտք էր իր տպրուտի համար: Նա մինչեւ անգամ գողանում է իր հարսնացուին: Բախտաւոր է համարվում ամուսնութիւնը, երբ տղամարդ-հերոսը առեւանգել էր իր սիրուհին հօր ընտանիքից: Այնը այսպիսի դէպքերում մի առանձին հստատութեամբ է նայում իր ընկերուհիների վրայ:

Քրդի ամենամեծ երգումը Բալախէ վրայ է լինում. նա առնում է մի բար եւ նետում է, ասելով «Թող իմ թալախն այս քարի պէս գցած լինի, եթէ այսպէս, կամ այնպէս անեմ»: Թա-

լախը նրա ամուսնական կապն է, նա լուծված է համարվում, երբ նրանով երգում ուտողը երգմանազանց է լինում: Այսպիսի երգումները պահանջվում են, երբ պէտք էր որ եւ իցէ գործի մէջ ամենահաստատ գրաւական մի մարդու հաւատարմութեան մասին: Եւ այդ լինում է այն ժամանակ, երբ գործը վերաբերում էր ընդհանրութեան ամենակարեւոր մէկ հարցին:

Որպէս բնութեան ազատ որդի, նուիրելով իրան անհոգ եւ պարզ կեանքի, քուրդը բաւականանում է իր անասուններով: Նա հովիւ է: Նա չունի տուն եւ հաստատ բնակութիւն. նրա օթեւանը իր շագրն է, որը կազմում է այնտեղ, ուր կարող է իր անասունների համար ճարակ գտնել: Զմեռնային ձիւները միայն բշում են քուրդին իր սիրելի սարերից, այն ժամանակ եւս մի հայի տուն միշտ պատրաստ է ընդունել ինքնակոչ հիւրին: Այնտեղ քուրդն իր անասունների հետ անցուցանում է ձմեռը, մինչեւ գարունը կրկին կոչում է նրան որպի լեռների գիրկը:

Քրդի կերակուրն է՝ իր անասունների կաթը, մածունը, պանիրը, սերը, կարագը եւ իւղը. նա չէ դիպչում նրանց մսին: Քրդի հագուստն, ոտքից մինչեւ գլուխ, կազմված է իր անասունների բուրթից եւ կաշուց. իսկ այդ բոլորը պատրաստում է նրա կինը: Տղամարդը տնտեսութեան մէջ աւելի չէ խառնվում. նա պատերազմական մարդ է: Երկրագործութիւնը, արհեստը քրդի համար ստոր պարապմունքներ են, որոնց նա արհամարհում է, համարելով ուշադրութիւն չգարծ: Վաճա-

գականութիւնը նրա մէջ գեռ պահպանել է իր  
հին, նահապետական ձեւը: Նա տալիս է, օրի-  
նակ, քսան ոչխար եւ գնում է մի ձի. նա փո-  
խում է իր իւղը, պանիրը, բուրժը երկրագործի  
աղիւրի հետ, կամ արհեստաւորի շինած այս եւ  
այն գործիքի հետ: Եւ այս բոլորը կատարում է  
նա չափազանց միամտութեամբ. ամեն առեւտուրի  
մէջ խաբւում է նա, ամեն փոխարինութեան մէջ  
որսում է նրանից հայ կամ հրէա մանրալաճառը  
իր շահերը: Արուհետեւ այսպիսի յարաբերու-  
թիւնների մէջ քորդը գործ չէ գնում իր սուրբ  
եւ մարմնական ուժը, որ նրա մէջ շատ զարգա-  
ցած են. այլ նա բանեցնում է իր հմտութիւնը եւ  
խելքը, որոնք նրա մէջ խիստ թոյլ են:

Քորդը խաբեբայ չէ. նա հաւատարիմ է իր  
խոստմունքը կատարելու մէջ: Նա մնում է միշտ  
ձիշտ իր պարտքը վճարելու մէջ: Վճարել այն,  
ինչ որ պարտքով էր առած, եւ կողոպտել ուրիշի  
սեպհականութիւնը — երկուսն էլ մի օրինակ սուրբ  
են նրա համար: Առաջինի մէջ նա պահպանում է  
իր պատիւը եւ խօսքը, իսկ երկրորդի մէջ — իրա-  
ւունքը եւ արդարութիւնը: Արուհետեւ քորդի  
համար ոչինչ ընդդէմ չէ իրաւունքի եւ արդա-  
րութեան, երբ նա սեպհականացուցած էր սրի  
եւ յաղթութեան ուժով: Սուրբ եւ յաղթութիւնը  
արդարութեան կշիռն է նրա եւ իր հակառա-  
կորդի մէջ:

Այսպէս է վարվում ամեն մի աւազակ. այս-  
պէս է վարվում ամեն մի հասարակութիւն, որ  
նոյն բնաւորութիւնն ունի այսպէս է վարվում

մի ամբողջ պետութիւն, որ աւազակի գեր է  
խաղում . . .

Այսքանը բաւական համարելով քրդի բնա-  
ւորութեան եւ ընտանեկան կենցաղավարութեան  
մասին, գառնանք այժմ դէպի նրա քաղաքական  
կեանքի կազմակերպութիւնը:

Քրդերի ցեղերը կառավարվում էին իրանց  
էշ-ազասիների (ցեղապետների) եւ շէյխերի (գեն-  
պետների) գլխաւորութեամբ:

Յեղապետը, որ կոչվում է «միր» (տէր), չէ  
նշանակվում ընտրողական սկիզբներով. նա, որ-  
պէս ցեղի նահապետը, սերունդից սերունդ, տի-  
րում է ժառանգաբար: Ամբողջ ցեղը հպատա-  
կում է նրա իշխանութեանը խոնարհ, որդիա-  
կան հնազանդութեամբ. նրա սուրը, նրա ձեռքը,  
նրա կեանքը միշտ պատրաստ են ծառայելու  
պետի կամքին եւ հաճոյքին, որքան եւ չար կամ  
բարբարոտական լինէին նրանք: Յեղապետն է վը-  
ճում իր ժողովրդի վէճերը, նա է բաժանում  
աւարը յափշտակողների մէջ, նա է առաջնոր-  
դում իր ցեղին կռիւի ժամանակ, նա է ուղար-  
կում խումբերը աւարառութեան համար: Յեղա-  
պետը ամեն առաւօտ իր չադրի մէջ նստած, ըն-  
դունում է ցեղի նշանաւոր տղամարդերին, որոնք  
իրանց զինուորական ամբողջ կազմուածքով, ներ-  
կայանում են նրան, լսելու պետի պատուէրները,  
Այնտեղ ծխում են հիւրասիրութեան չիբուխը:  
Խանում են մի-մի ֆինջան դառն դահլէ: Մի այս-  
պիսի «սալամը» կատարվում է ամեն առաւօտ իր  
բոլոր ճշտութեամբ:

Իսկ շէյխերը նշանակվում են գլխաւոր գենպետից, նրանք ունեն իրանց մուֆթիները եւ զազիները: Շէյխերը կատարում են ցեղի կրօնական պահանջները, որպիսի են՝ ամուսնութիւն, թրլփատութիւն եւ հրապարակական նամազ: Իսկ կռիւների մէջ նրանք մասնակցում են որպէս զինուոր, բայց աւարառութեանց մէջ՝ — որպէս աւազակապետ: Այսուամենայնիւ, նրանք վայելում են ցեղի համակրութիւնը նոյն չափով, որքան ջերմ էր կրօնական զգացմունքը մի պարզ եւ կիսալայրենի ժողովրդի մէջ, որպէս էր քուրդը:

Տարօնի եւ Վասպուրականի ամբողջ նահանգները բաժանված էին քրդերի զանազան ցեղերի մէջ: Իսկ իւրաքանչիւր ցեղի մէջ երկրի բաժանմունքը ամենախոշոր մասներից հասնում էր իր ամենափոքր մանրերորդին: Այսինքն, սկսեալ մի գաւառից, մի փոքրիկ վիճակից, եւ մինչեւ անգամ մի գիւղից, եւ մի ընտանիքից, իւրաքանչիւրն առանձին-առանձին տէրեր ունէին, եւ իւրաքանչիւր բաժինը հաւասարվում էր տիրոջի զօրութեան բարձր կամ ստոր աստիճաններին:

Ուայան — հպատակը վճարում էր այլ եւ այլ հարկեր հողի մշակութեան համար, իր անասունների համար, իր արհեստի համար, իր ընտանիքեան տեղի համար, իր գլխի համար, մի խօսքով, ամեն բանի համար, որ վերաբերում էին նրա կեանքի եւ ապրուստի անհրաժեշտութիւններին: Հարկերի չափը եւ նրանց քանակութիւնը ոչ կշիռ ունէին եւ ոչ սահման. գա կախ-

ված էր առնողի խղճմտանքից: Ռայայի տէր լինելու եւ հարկեր պահանջելու արտօնութիւն վայելողները կոչուում էին Խֆէր կամ Կարէէն: Դրանք ցեղի մէջ որ եւ իցէ նշանակութիւն ունեցող ազնուական մարդիկն էին: Օրինակ, գրխաւոր ցեղապետը ունի իր ազգակիցները, կամ պաշտօնակալները, նրանց ապրուստի համար տալիս է մի կամ աւելի գիւղեր, որոնց հասոյթով պէտք է կառավարվեն նրանք. այսպիսիները ստանում են խաֆիրութեան իրաւունք: Նոյն իսկ պաշտօնակալները, կամ ցեղապետի ազգակիցները ունեն ծառաներ կամ սպասաւորներ. նրանց ռոճիկի փոխարէն տալիս են իրանց ստացած գիւղերից մի կամ շատ ընտանիքներ որպէս ծախ, եւ այն ծառան վարվում է նոյն ընտանիքների հետ, որպէս իր սեպհականութեան կամ հպատակների հետ: Ահա պատճառը, որ երկրի բաժանմունքը, սկսեալ ամենախոշոր կտորներից, հասնում էր մի ընտանիքի:

Որպէս իշխանութիւնը, սկսեալ ցեղապետից, աստիճանաբար իջնում էր մինչեւ վերջին սպասաւորը, նոյնպէս եւ սեպհականութեան իրաւունքը, սկսեալ երկրի խոշոր կտորներից, հասնում էր նրա ամենափոքր մասին:

Բայց երկիրը աղաների (խալիֆաների) տոհմային կամ կալուածական ժառանգութիւնը չէր, այլ նա սեպհականացուցած էր սրի ուժով. այս պատճառով, նա անդադար անցնում էր մի տիրապետողից դէպի միւսը, որի սուրն աւելի զօրութիւն էր ստանում:

եւ այսպէ՛ս, պատերազմը տիրողների մէջ  
գառնում էր մշտական, անընդհատելի:

Պատերազմների ժամանակ, իւրաքանչիւր հա-  
կառակ կողմերի, թէ յաղթութեան եւ թէ յաղթ-  
վելու միջոցին, բնակիչների վիճակը սարսափելի  
էր: Սրինակ, մի ցեղ կամենում է խլել միւս ցե-  
ղի ձեռքից երկրի այս կամ այն մասը. նա կամ  
յաղթելով տիրում է, կամ աւար առնելով, թա-  
լանելով ամեն հանգիստաճը, յետ է գառնում:  
Այսպիսի դէպքերում ժողովուրդը թողնում է  
իր տունը, տեղը, մշակութեան գաշտերը, եւ իր  
գլուխը միայն ազատելու համար, պատսպար-  
վում է լեռների անմառաչելի տեղերում: Առիք  
տեսում է երկար: Անասունները, անտէր մնալով,  
թշնամին կոզոպտում է. հունձքը, անխնամ մը-  
նալով, չորանում է, ոչնչանում է. եւ կռիւներից  
յետոյ վրայ է հասնում մի նոր, ամենասարսա-  
փելի թշնամի — սովը:

Ժողովուրդը միշտ գտնւում էր անվերջ եր-  
կիւղի եւ յուսահատութեան մէջ: Նա չը գիտէր,  
թէ էգուց կարո՞ղ է հանգիստ լինել, որովհետեւ  
թշնամին միշտ կանգնած էր, որպէ՛ս ասում են՝  
նրա քամակին: Առիւների փոթորիկների մէջ եթէ  
միանգամ զրկվեցան նրա մշակութիւնները բեր-  
քից, միւս օրը նա ուտելու հաց չունէր: Որով-  
հետեւ նա ապագայի համար պաշար չէ պահում,  
նախ, որ ապահով տեղ չունի պահելու, երկրորդ,  
աւելորդ ծանրութիւնը միշտ արգելում է նրա  
փախուստը թշնամու ձեռքից, երբ նա աշխա-  
տում է ազատել իր գլուխը միայն:

Կռիւնները, ժողովրդի անդադար անցնելը մէկ տիրապետողից դէպի միւսը, սպառում էին բնակիչների կեանքը սրով, կրակով եւ սովով:

Յանկարծ երկրի նախկին տիրապետողն իրան յաղթուած է համարում. որպէս զի նա յաղթողի համար շահվելու ոչինչ չը թողնէ, հրդեհում է ամբողջ գիւղօրայք, աւերում է քաղաքները, կրակ է տալիս հասունացած հունձքերին, եւ բոլորովին անապատ դարձնելով երկիրը, որ պատկանում էր իրան, այնպէս թողնում է եւ հեռանում Սյսպիսի հանգամանքներում քուրդը կորցնելու ոչինչ չունէր, սրովհետեւ նա մի ժամանակաւոր հիւր էր. իսկ այն բոլոր կրակի նիւթ դարձած շինութիւնները պատկանում են հայ կամ օտարազգի բնակիչներին. այն բոլոր մշակութեանց արդիւնարբերութիւնը նրանց ձեռքերի վաստակն է: Նոյն բարբարոսութեամբ վարվում էր եւ յարձակվողը, երբ տեսնում էր, թէ տիրելու անկարող է: Նա խոյս էր տալիս կռիւի դաշտից, իր յետքից թողնելով աւերակներ եւ ամայութիւն:

Ժողովուրդը միշտ գտնւում էր նոյն դրութեան մէջ, որպէս մի թռչուն, որի բոյնը բանդված էր չար երեխայի ձեռքով. նա նստած է միշտ օրօրվող տերեւի վրայ եւ չը գիտէ ի՞նչ անէ: Բնակիչը սիրտ չունէր կրկին նորոգելու իր խրճիթը, որովհետեւ մտածում էր՝ արդեօք երկանր կարող է բնակվել նրա մէջ. սիրտ չունէր միւսանգամ ցանել իր արտը, որովհետեւ յոյս չունէր թէ կը յաջողվի իրան քաղել իր հունձքը: Նրա տան շարժական իրեղէնները միշտ թաղված էին

հողի մէջ, կամ նրանց համար յատուկ շինված ստորերկրեայ պահարաններում, որպէս զի, փախուստների ժամանակ թշնամու ձեռքը չընկնեն, Բայց յաջողվում էր նրան միւսանգամ գուրս բերել իր կայքը գերեզմանից, — խիստ հազիւ, որովհետեւ շատ անգամ թագցնողը, հանդիպելով թշնամուն, զրկվում էր կեանքից եւ իր պահարանի գաղտնիքը տանում էր դէպի միւս աշխարհը: Այս է պատճառը, որ Հայաստանում մինչեւ այսօր գետինը փորելու ժամանակ գրտնվում են այնքան շատ պղնձէ, երկաթէ իրեղէններ, կանանց զարդեր, դրանք պատերազմների միջոցներում թագցրած կայքեր են, որոնց տէրերն իրանց հետ իջել էին գերեզման:

Այսպէս էր այն ժամանակ հայի վիճակը ճարօնի եւ Վասպուրականի մէջ, նրա դժբախտութիւնն աւելի նրանումն էր կայանում, որ տիրող բռնաւորը — բուրգը — երկրի տէրը չէր, այլ զանազան թափառական ցեղերից բաղկացած մի սմբոխ, որ կատալի մրրիկի նման, տարուբերվում էր երկրի մի կողմից դէպի միւսը, ոչնչացնելով ամեն կենդանութիւն, ամեն ինչ, որ արգիւնարերել էր արհեստը եւ մարդու աշխատասէր ձեռքը:

Քուրդը պիտական փառասիրութիւն չունէր, եւ ոչ հասկանալի էր նրան աշխարհակալութեան հպարտութիւնը: Նա նայում էր իր նուաճած ժողովրդի վրայ, որպէս այն սարերի խոտերի վրայ, ուր արածում էին նրա անատունները: Մէկը — ժողովուրդը — մատակարարում էր

իրա՛ քրդի պիտոյքները, միւսը — սարերի խոտերը ճարակ էին տալիս նրա հօտերին. որպէս վերջինի աճեցնելու եւ մշակելու համար նա հող չէր տանում, նոյնպէս եւ ժողովուրդը խնամելու մասին նա չէր մտածում: Քուրդը վստահ էր, թէ աշխարհի մէջ ամեն տեղ բաց է նրա ասպարէզը, ամեն տեղ կարող է գտնել այս տեսակ արօտներ, քանի իր սուրը կտրում է, քանի իր թեւքը շարժւում է:

Վասպուրականի եւ Տարօնի նահանգներում: Բացի ներքին խռովութիւնները քրդերի կողմից՝ վրնում էին եւ յարձակումներ արտաքին թշնամիներին: Քիչ չէր պատահում, պարսիկներն արշաւանքներ էին գործում եւ բազմաթիւ բախտախնդիր հրօսակներով թափւում էին այն երկիրների վրայ: Պատերազմը վերջանում էր կրակով, արիւնով, գերեզարութեամբ եւ աւարառութեամբ: Այսպիսի դէպքերում վտանգը հասնում էր դարձեալ բնիկ ժողովրդին, որովհետեւ քրդերը, եթէ թշնամուն ընդդիմանալու կարողութիւն չունէին, թողնում էին երկիրը, բաշխում էին դէպի լեռների անմատչելի տեղերը, եւ սպասում էին մինչեւ թշնամու հեռանալը:

Քիչ չէր պատահում, եւ Օսմանեան պիտութիւնը ուղարկում էր զօրքեր խաղաղացնելու իր տէրութեան սահմանագլուխները եւ նուաճելու ապստամբ քրդերին: Եւ տաճկի ասկէրը վարւում էր նոյն բարբարոսութեամբ, որպէս պարսիկները: Արովհետեւ տաճկի տիրապետելը կամ իսպառ չէր յաջողւում, կամ եթէ յաջողւում էր,

լինում էր ժամանակաւոր, եւ ասկէրը, դատարկաձեռն յետ չը դառնալու համար, յափշտակում էր ամեն հանդիպածը:

Ահա, այսպիսի դրութեան մէջ էին այն ժամանակ՝—Արզրումի, Բայազէդի, Հաղբակայ, Վանի, Բաղէշի, Մուշի, Շատախու, Սասնոյ, Խիզանու, Մոկաց, Չարսանջախու, Քեղուայ—գաւառները, իրանց բազմաթիւ հայ բնակիչներով: Նրանց տիրում էր մի աւազակ ցեղ, որի աջ ձեռքը—իւր սուրն էր, որի ոտքերը—իւր նժոյգն էր, որի տունը—իւր թեթեւ չաղրը, որի հայրենիքը—ամեն տեղ, որի հունձքը—թշուառ մարդկութիւնը, որի օրէնքը եւ իրաւունքը—իւր կամքը, որի կեանքի նպատակը—փշրել, խորտակել եւ ոչնչացնել, որի գործող ոգին—իւր երկաթի սիրտը, վայրենի կատաղութիւնը եւ գաղանական յանդգնութիւնը . . .

---

## ԻՆՉ Է ՊԱՐՍԻԿԸ

Այսքանը բաւական է Վասպուրականի եւ Տարօնի մասին, գառնանք այժմ գէպի Ատրպատականը, այսինքն Պարսկաստանի մասը:

Ես կը յիշեմ Ատրպատական նահանգի այն գաւառները միայն, ուր հայեր էին բնակւում: Գրանք էին՝ Սալմաստ, Խոյ, Մագու, Գունէյիստան, Մարանդ, Ուրմի, Սուլդուզ, Սօլուխըուլախ, Գուխարդան, Մարաղա, Թաբրիզ, Ղարաղաղ, Արգարիլ: Բացի հայերից յիշեալ գաւառներում բնակւում էին Ղրղըբաշ կոչւած թուրքերը, որոնք կազմում էին ժողովրդի մեծ մասը, եւ այստեղ ու այնտեղ ցրւած էին՝ հրէաներ, ասորիներ, քրդեր, բոշաներ:

Տիրող ազգը — պարսիկն էր, որոնց մէջ նոյնպէս կային ցեղեր, որպէս էին՝ լաքերը, աւշարները, թաթերը եւ Ղարաղաղի զանազան էլաթները, որոնք ընդհանրապէս խիստ հազիւ էին որոշւում միմեանցից, թէ տիպոսով, թէ սովո-

բութիւններով եւ թէ բարբառներով: Խօսում էին  
թուրքերէն լեզուով, որ շատ տարբերվում է օս-  
մանեան տաճկերէնից. կրօնքով մահմեդական-  
ներ էին եւ պատկանում էին շէա տղանդին  
կրօնքի հոգեւոր ներկայացուցիչներն էին մօլլա-  
ները, չափազանց խորամանկ, փառասէր եւ կեղ-  
ծաւոր մի հասարակութիւն, որ արտաքին բա-  
րեպաշտութեամբ, ծածկված աւելի ճգնաւորա-  
կան դիմակով, գրաւել էին ժողովրդի խորին յար-  
գանքը, մի եւ նոյն ժամանակ մտցրել էին նրա մէջ  
կոյր սնահաւատութիւն եւ խաւար մղեւանդու-  
թիւն: Նախապաշարմունքները մուսուլմանների  
մէջ, մահմեդականութեան չը պատկանող ազ-  
գերի վերաբերութեամբ, հասնում էին խելագա-  
րութեան: Ինչ ազգ չէր հետեւում իւրամին, նա  
համարվում էր պիղծ, զրկված թէ այս աշխարհի  
եւ թէ հանդերձեալ կեանքի երանութիւններից,  
որոնց պատրաստել էր Ալլահը միմիայն Մուհամ-  
մէդի շիաների համար: Այս պատճառով, մահ-  
մեդականը, ոչ միայն ատելութեամբ էր նայում  
դէպի այլակրօնները, այլ իրան մեղք էր համար-  
ում սերտ յարաբերութիւններ ունենալ նրանց  
հետ: Մահմեդականը չէր ուտում կերակուրը,  
որ պատրաստված էր այլակրօնի ձեռքով, նա չէր  
հագնում հագուստը, որ գործված էր այլակրօնի  
ձեռքով, նա իր տան մէջ չէր բանեցնում կարա-  
սիք, որոնց արհեստագործել էր այլակրօն մարդը:  
մի խօսքով, նա պիղծ էր համարում բոլոր ար-  
դիւնաբերութիւնը, որ դուրս էր գալիս մահմե-  
դականութեան չը պատկանող ազգերի ձեռքից:

Նա պիղծ էր համարում եւ այլակրօնների անձը. օրինակ, մի հայ, մի հրէայ, մի ասորի անձրեւային օրերում, թաց հագուստով չէին կարող քսվել մահճեղականին. այս համարվում էր սրբապղծութիւն եւ անզգոյշ յանցաւորը կրում էր իր պատիժը: Ահա այսպիսի եւ դրանց նման շատ խտրութիւններ, որոնց դրել էր մահճեղականութիւնը մուսուլմանների մէջ, ոչ միայն քրիստոնեաներին եւ հրէաներին ենթարկում էին իսլամի հալածանքին, այլեւ զրկում էին նրանց շահվել իրանց արդիւնաբերութիւնից, եւ վնասում էին իրանց անտեսութեանը: Քա էր գլխաւոր պատճառը հայերի, հրէաների եւ ասորիների աղքատութեան:

Մօլլաները, բացի իրանց ժողովրդին հոգեւոր ուղղութիւն տալուց, կատարում էին եւ շառիաթի գործադրութիւնը. այսինքն, նրանց ձեռքումն էր օրէնքը եւ արդարութիւնը, որ աւանդել էր Ալլահը Մուհամմէդի միջնորդութեամբ: Ամեն գործ, թէ քրէական, թէ քաղաքական վճռվում էր նրանց ձեռքով: Այստեղ եւս այլադաւանները զրկվում էին շատ իրաւունքներից, որ վայելում էին մահճեղականները: Օրինակ, մի քրիստոնեայ ունէ դատաստանական գործ մահճեղականի հետ. գործը քննում է մօլլան. քրիստոնեան իր իրաւունքը հաստատելու համար չէր կարող ներկայացնել վկաներ իր հաւատակիցներից, որովհետեւ քրիստոնեայի վկայութիւնն ընդունելի էր դատարանում այն ժամանակ միայն, երբ նա տուած կը լինէր յօգուտ մահճեղա-

կանի, իսկ ընդդէմ մահմեդականի վկայելու նա իրաւունք չունէր: Այսպիսի դէպքերում պահանջուում էր քրիստոնեայից մահմեդական վկաներ. բայց ոչ մի մահմեդական չէր ցանկանայ քրիստոնեայի օգտի մասին վկայել, որովհետեւ այդ կը համարէր իր համար մեղք: Ուրեմն թէ առաջին եւ թէ վերջին դէպքերում քրիստոնեան զրկւում էր վկաներ ներկայացնելուց, եւ ի հարկէ, տարւում էր գործը, մի այնպիսի դատարանում, ուր գործերը վճռւում էին ըստ մեծի մասին հիմնւելով վկաների ցուցմունքների վրայ:

Նատարաններում փաստաբան լինելու իրաւունք ունէին միայն մահմեդականները: Իսկ մահմեդական փաստաբանը չէր կարող պաշտպանել քրիստոնեայի գործը, երբ հակառակ կողմը մահմեդական էր: Քրիստոնեան ստիպւած էր ինքը խօսել իր գործի մասին, մի այնպիսի դատարանում, որի օրէնքները բոլորովին անձանօթ էին նրան: Այս դէպքում եւս նա զրկւում էր իր իրաւունքը պաշտպանելուց եւ հետեւանքը լինում էր գործը տարւելը:

Ես չեմ ուզում մանրամասնաբար գրել, թէ որպէս խորամանկ շառիաթը սահմանափակում էր իսլամը չր դաւանող ազգերի իրաւունքները եւ զրկում էր նրանց բարոյական եւ նիւթական բաւականութիւնից, միայն այն կասեմ, թէ որպիսի որոգայթներ էր լարում նա ուրիշ ազգութիւններից որսալ դէպի մահմեդականութիւնց Աղջիկներ, տղաներ գողանալ, յափշտակել նրան: Եւ բռնութեամբ մահմեդականութիւն ընդունել

տալ, — դա ամենօրեայ եւ սուլորական գործ էր: Բայց կային եւ այլ հնարներ, որոնք գրաւում էին քրիստոնեայի հաճութիւնը թողնել իր կրօնը: Մահճեղականութիւն ընդունող քրիստոնեան, բացի նրանից, որ բաւականին օժանդակութիւն էր ստանում իր նոր հաւատակիցներից, բացի նրանից, որ նա գրաւում էր նրանց յարգանքը, եւ վրէժխնդիր էր լինում իր հին կրօնակիցներից, եթէ ունէր մէկի հետ ոխ կամ թշնամութիւն, այլ եւ, նա տէր էր լինում բոլոր՝ թէ շարժական եւ թէ անշարժ ժառանգութեանը, որ պատկանում էր նրա ազգակիցներին: Այլ խօսքով, որ եւ իցէ գերդաստանի անդամներից մէկը, մահճեղականութիւն ընդունելով, իրաւունք էր ստանում տիրել բոլոր կայքերին, ինչ որ պատկանում էր նոյն գերդաստանին: Մի այսպիսի արտօնութիւնը կարող էր գրաւել շատ անբարեխիղճ քրիստոնեաների շահասիրութիւնը, մանաւանդ երբ նրանք ընտանեկան անբաւականութիւններ ունէին միմեանց հետ: Եւ օրինակներ պատահում էին ոչ սակաւ:

Բացի յիշեալ աշխարհային արտօնութիւններից, որ ստանում էր նոր մահճեղականութիւն ընդունող քրիստոնեան, նա օրէնքով վայելում էր մի աւելի մեծ արտօնութիւն միւս աշխարհում: — Նրա որդիքը մինչեւ եօթն սերունդ երկնքի դատատանի առջեւ ազատ էին մնում ամենայն պատասխանատուութիւնից իրանց մեղքերի մասին. որպիսի եւ յանցանք գործած լինէին նրանք, նրանցից հարցուփորձ չէր լինելու . . .

Քրիստոնեաների կրօնական արարողութիւնները իրանց կատակի եւ ծաղրածութեան առարկայ դարձնելը մահմեդականների գլխաւոր զուարճութիւններից մէկն էր: Քիչ չէր պատահում, երբ խաները հարսանիք ունէին, կամ իրանց տոների ժամանակ, ուրիշ շատ կատակերգութեանց թուժ, բերել էին տալիս եւ հայոց քահանաներ իրանց եկեղեցական սպասուի, ստիպում էին պատարագ մատուցանել, կամ այլ ծէսեր կատարել: Ես երբէք չեմ կարող մոռանալ, երբ այսպիսի հանդէսներից մէկի մէջ, խանը հրամայեց քահանային սաղաւարտը դնել իր շան գլխին, շուրջաւր գցել նրա վրայ, եւ ստիպեց տէրտէրին իր բուրլառով խնկարկել շանը: Տէրտէրը ի հարկէ չը կատարեց հրամանը: Ողորմելի քահանային շան հետ միասին գցեցին մի տոպրակի մէջ, բերանը կապեցին եւ սկսեցին բազմութեան առջեւ փայտով ծեծել: Քահանայի հառաչանքը, շան կնձկնձոցը, միախառնելով միմեանց, դարձեալ զուարճութիւն էին պատճառում անգութ բարբարոսներին:

Մահմեդականները չունէին զօրանոցներ: Հայոց վանքերը եւ եկեղեցիները միշտ ունեցել են եւ ունէին օթեւաններ, պատերազմների ժամանակ նրանք դառնում էին մահմեդական զինուորների բնակարաններ. իսկ սուրբ տաճարը, որովհետեւ աւելի ընդարձակ էր, գործ էին գրնում որպէս ախոռ ձիաների համար: Ի հարկէ, մի եւ նոյն ժամանակ կողոպտում էին ինչ որ գտնվում էր տաճարի մէջ: Շատ անգամ եւս վան-

քերը եւ եկեղեցիները ծառայեցնում էին որպէս ոչխարների ձմեռանոցներ: Ի՞նչ հայ կարող էր ընդգլխմանալ, ո՞վ կարող էր մի խօսք ասել, նրա լեզուն իսկոյն կը կտրէին:

Քանզւիւմ վանքերը, եկեղեցիները կրկին նորոգելու կամ կարկտելու իրաւունք չը կար: Շատ անգամ պատահում էր, տաճարի կտուրը ծակւում էր, կամ ձեղքւում էր. ձիւնը, անձրեւը ցած էր թափւում: Որմնագիր հրաւիրել անկարելի էր: Վարդապետները, քահանաները, եթէ միջոց էին գտնում, շինում էին գաղտնի, այն եւս գիշերով: Ծանր էր մի այսպիսի յանցանքը, եթէ յայտնվէր նա. պատիժը վերջանում էր ամենասարսափելի կերպով: Նոր վանքեր կամ եկեղեցիներ շինելու թայտութիւն չը կար. այդ կարող էր յաջողվել այն ժամանակ միայն, երբ մի մեծ գումարով քրիստոնեաները կը գնէին այս եւ այն իշխանի հաճութիւնը: Իսկ զանգակի ձայն ամենեւին չէինք լսում. զանգահարութիւնը արգելւած էր:

Մահմեդականների հալածատիրութիւնը ոչ միայն բռնաբարում էր քրիստոնեաների կրօնական ազատութիւնը, ոչ միայն սրբապղծում էր ամեն ինչ, որ նրանց համար նուիրական եւ աստուածային էր, այլ եւ արատաւորում էր նրանց բնտանեկան պատիւը: Ես գիտեմ հարիւրաւոր եւ հազարաւոր օրինակներ, թէ որպէս հայ կինը, հայ աղջիկը զոհվում էր մահմեդականի անբարոյական կրքերին: Ես երբէք չեմ կարող մոռանալ, — այս պատահեց մեր քաղաքում — երբ խանի

սպասաւորները եկան իրանց տիրոջ համար տանելու մի աղջիկ, հայրն երկար ազատում էր, որ չը խլեն իր աղջիկը: Երբ հօր արտասուքը չը կարողացաւ շարժել նրանց գութը, նա առեց մի դանակ, եւ խրելով իր դասեր կուրծքի մէջ, ասաց՝ «հիմա տարէք այս դիակը»: Նոյն օրը խեղճի տունը հրդեհեցին եւ ինքը մեռաւ բանտի մէջ: Ես գիտեմ մի օրիորդ, որին խանի որդին դաշտումը հանդիպելով, ասել էր՝ «աղջիկ, ինչ լաւ ենք աչքերը»: Միւս օրը երբ եկան նոյն աղջկան տանելու խանի որդու համար, գտան երկու աչքով եւս կոյր: Օրիորդն ինքն էր կուրացրել իր աչքերը, գուցէ դրանով կարողանայ ազատել իր պատիւը: Իսկ այսպիսի օրիորդ եւ այնպիսի հայր շատ քիչ էին գտնւում. մեծ մասը ենթարկւում էր կատաղի բռնաբարութեան . . . Կորուստը մեծ էր, որովհետեւ միանգամ մահ մեղականի հարէմխանայում ներս տարած հայ կնոջը, էլ այնտեղից դուրս չէին թողնում: Խանը իր հաճութիւնը կատարելուց յետոյ ամուսնացնում էր նրան իր սպասաւորներից մէկի հետ, ինչպէս նա իր հնացած հագուստը պարգեւում էր այս եւ այն ծառային որպէս խաւ:

Թէ բռնի եւ թէ կամաւոր կերպով, մի անգամ մահ մեղականութիւն ընդունող մարդը, շառխաթի օրէնքով, կրկին վերադառնալ դէպի իր նախկին կրօնքը չէր կարող: Եթէ տղամարդ էր նա, ամեն մի մահ մեղական նրան հանդիպելիս, իրաւունք ունէր սպանելու. իսկ եթէ կին էր, պէտք է դնէին նրան բանտում եւ այնքան տան-

ջէին, մինչեւ կրկին խոստովանվէր, թէ ընդու  
նում է իսլամը:

Ազրբայժութիւնը ազգային գրականութիւն չունէին, բայց արաբական եւ պարսկացի գրութիւնը շատ ծաղկած էր նրանց մէջ: Գիւղերը եւ քաղաքները լիքն էին մզկիթներով, եւ իւրաքանչիւր մզկիթին կից կար մի վարժատուն: Բացի մուլաներից, աշխարհական մտղը դասատուութիւն անելու իրաւունք չունէր. այս պատճառով ուսումը եւ դաստիարակութիւնը ժողովրդի մէջ ընդունել էր կրօնական բնուորութիւն: Հին սերունդը մտլված էր կրօնքի ֆանատիկոսութեան մէջ, այն կրօնքի, որ բացի իրանից չէր համբերում ուրիշ դաւանութիւններին: Նոր սերունդը ընթանում էր նոյն ուղղութեամբ, որովհետեւ առաջնորդող անձինքը մուլաներն էին: Այստեղից հասկանալի է թուրքերի եւ պարսիկների հալածասիրութիւնը այլադաւանների վերաբերութեամբ:

Հալածանքներին վիճակակից էին բացի հայերից եւ ասորիները, հրէաները եւ բոշաները:

Բացի մուլաներից կային եւ «էէրնէր» նրանք համարվում էին մեծ մարգարէի որդիներ: Ժողովրդի այս դատարկապօրտ, ծոյլ եւ անգործ դասը ապրում էր տասանորդներով, որ ամեն մի մահմեդականի պարտաւորութիւնն էր վճարել նրանց: Այ մի օրէնք չէր սահմանափակում նրանց բռնութիւնները, որովհետեւ նրանք օրէնք տուողի — Մուհամէդի — անմեղանչական որդիքն էին: Այ միայն այլադաւանները, այլ իրանք մահ-

մեղականները չափազանց նեղված էին սէիգ-  
ներից, որոնք գործում էին, ինչ որ կամենում  
էին Աշխարհի դատարանները պատժի ենթար-  
կել նրանց չէին կարող. ստոր մահկանացուն  
իրաւունք չունէր դատել երկնքի որդիներին.  
Եւ դրա համար սէիգներն անձնատուր էին եղած  
իրանց անսանձ կամայականութեանը: Այս բո-  
ւրէիս էլ սարսափում եմ ես, երբ մտաբերում  
եմ այն բոլոր չարագործութիւնները, որ անում  
էին այդ անիրաւները. սրբան աւերմունքի, սր-  
բան արեան, սրբան ընտանիքների այբառու-  
թեան պատճառ էին դառնում նրանք . . .

Ատրպատականը Պարսկաստանի մէկ մասն  
էր, բայց նա իրրեւ ֆէօդալական երկիր (մլուքը  
թաւաիֆ), բաժանված էր զանազան խաների,  
բէկերի, շահզադաների եւ այլ ազնուական տնե-  
րի մէջ: Նրանք կոչվում էին աղաներ: Աղաները  
համարվում էին բարձրագոյն դրան, կամ շահի  
լուսնի: Բացի աղաներից կալուածական բա-  
ժիններ ունէին մեծ մօլլաները, որպէս հոգեւ-  
որականութեան ներկայացուցիչներ, եւ սէյիգ-  
ները, որպէս մեծ մարգարէի որդիներ: Վասալ-  
ները երբեմն վճարում էին շահին իրանց կա-  
լուածների հասոյթից մասնաւոր տուրք, պատե-  
րազմի ժամանակ օգնում էին նրան. իսկ շատ  
անգամ ապստամբվելով, ոչ առաջին պարտա-  
ւորութիւնն էին կատարում եւ ոչ վերջինը: Քիչ  
չէր պատահում, որ նոյն իսկ խաները, բէկերը,  
շահզադաները միմեանց դէմ պատերազմ էին  
յարուցանում, յարձակվում էին միմեանց երկրի

վրայ, աւերում էին, հրդեհում էին, թաղնում էին եւ գերիներ էին տանում: Գերիէ նրանց համար նոյնպէս մի ապրանք էր, որպէս տնային կայքը, որովհետեւ յետոյ վերագարձնում էին, նրա փոխարէն փրկանք ստանալով: Այս պատճառով կռիւր եւ թշնամական յարաբերութիւնը ֆէոգալական իշխանների մէջ մնում էին անխզելի:

Եւ այսպէս, բոլոր գիւղօրայքը բաժանված էին աղաների մէջ. շատ տեղ մի գիւղը ունէր մի քանի աղաներ: Բայց թէ կառավարութեան ձեւը, թէ աղաների յարաբերութիւնները կամ նրանց պայմանները գիւղացիների հետ այստեղ այնպէս չէին, ինչպէս որ էր Աստուրականի եւ Տարօնի նահանգներում, ուր տիրապետում էին քրդերը: Ատրպատականում աղան համարվում էր կալուածատէր: Հողը — մի ժամանակ նրան շահից շնորհուած, որպէս աղբիւր իր վասալի ապրուստը բաւականացնելու, սերունդից սերունդ անցնելով, եւ պատմական փոփոխութիւնների պատճառով, — դարձել էր նրա սեպհականութիւն: Նա իրաւունք ունէր գրաւ դնելու իր հողը, վաճառելու եւ ամեն կերպ նրանից շահվելու: Բայց քրդերը կալուածատէրներ չէին. նրանց մէջ աղաներից մէկը սեպհականացնում էր սրի ուժով մի կտոր հող, միւս աղան, աւելի զօրեղ գտնուելով, խլում էր նրա ձեռքից, եւ այսպէս հողը անգաղար անցնում էր մի աղայից դէպի միւսը:

Աղայի յարաբերութիւնները եւ նրա պայմանները, հողի մշակութեան մասին, ռայաթի (հոյատակի) հետ, ամեն տեղ միակերպ չէին: Իւ-

բաքանչիւր գիւղ ունէր իր առանձին օրէնքները եւ պայմանները: Մշակութեան բերքերից ստացվելու տասանորդները մի տեղ գիւղացիք վճարում էին հարիւրին տասն, միւս տեղ տասն եւ հինգ, այլ տեղ քսան, երեսուն, քառասուն: Շատ տեղերում աղան կէս էր կիսում բերքը, մի մասն ինքն էր վերառնում, միւս մասը տալիս էր գիւղացուն: Ոմանք աղաներից բերքի երեք քառորդ մասն իրանք էին ստանում, մի քառորդը միայն տալիս էին մշակին: Ընտանի անասունների ամեն տեսակների համար հարկ էր վճարվում: Հարկից ազատ էին միայն այն անասունները, որոնք գործում էին մշակութեան դաշտի մէջ, օրինակ, եզր, արու գոմէշը, որձ ձին. էգերը բոլորը հարկ էին վճարում: Ազատ չէր հարկից ինքը մշակը. նա աւելի անբախտ էր, քան իր եզր: Հարկեր վրձարվում էր եւ թռչունների համար. տասն հաւ ունեցողը հինգ հատը տալիս էր աղային. նա պարտաւոր էր ամեն տարի տալ եւ մի քանի տասնեակ ձուեր իր հաւերի բերքից: Տուրքերի տեսակներն այնքան շատ էին, որ երկար, շատ երկար կը լինէր մի ըստ միոջէ թուել. միայն այսքանը կասեմ, որ գիւղացու ամեն մի աշխատութիւնը, ամեն մի պարտավունքը, թէ արհեստ, թէ երկրագործութիւն, թէ վաճառակաւնութիւն, բոլորը, բոլորը ենթարկուած էին հարկերի տակ: Եւ հարկերի ծանրութիւնը կամ թեթեւութիւնը զանազանվում էր այլ եւ այլ տեղերում այն չափով, որքան տարբերվում էին միմեանցից աղաներն իրանց լաւ կամ վատ յատ-

Կութիւններով:

Բացի Հարկերից աւելի անտանելի էին դանազան տեսակ մաքսերը: Իւրաքանչիւր բերք, որ ստացվում էր հողից, մի եւ նոյն երկրի մէջ վաճառվելու ժամանակ մաքս էր վճարում: Արհեստաւորների ամեն մի արգիւնաբերութիւնը, օրինակ, ջուհակի գործած կտաւը, կօշկակարի կօշիկները, դարբինի ձեռագործը եւ այլն, ազատ չէին մաքսերից: Մաքս էին վճարում եւ զանազան գործարանները, որպիսիքն էին ներկարարութեան, կաշեգործութեան, չիթ շինելու, արաղ քաշելու, գինեգործութեան, ձիթահանութեան եւ այլն:

Բացի աղաների բաժինը, որ ստացվում էր մշակութեան բերքից, բացի Հարկերից, որ վճարվում էր աղաներին, բացի մաքսերից, կային եւ արքունի տուրքեր, որ ստանում էին տէրութիւնից գաւառներում նշանակված կուսակալները: Արքունի տուրքը կառավարութիւնից որոշված էր ամեն մի գիւղի վրայ նշանակեալ գումար: Տայց կուսակալները, ուշադրութիւն չը դարձնելով կառավարութեան կարգադրութեանը, առնում էին որքան եւ ցանկանում էին: Պատճառն է՛նչ էր: Կառավարութիւնը գաւառների ամբողջ տուրքը տալիս էր կուսակալներին կապալով, կուսակալները իրանց կողմից գաւառի այս եւ այն մասը, այս եւ այն գիւղը նոյնպէս կապալով տալիս էին ուրիշներին. եւ այսպէս կապալաութիւնը ձեռքից ձեռք անցնելով, աւելի եւ աւելի թանգանում էր, իսկ շահը գուրս էր գալիս:

գարձեալ գիւղացու քսակից: Այդ էր պատճառը, որ գիւղացիին վճարում էր աւելի հարկ, քան այն գումարը, որ կառավարութիւնից նշանակված էր նրա գիւղի վրայ որպէս արքունի տուրք:

Գիւղերի ազաները իրաւունք ունէին դատել գիւղացիներին, ենթարկել նրանց, պատիժների եւ տուգանքների, բանտարկել նրանց վրձնել նրանց մէջ ծագած վէճերը, մի խօսքով, վարվել նրանց հետ, որպէս իրանց ամենախոնարհ եւ հնազանդ հպատակների հետ: Եւ այս բոլորի մէջ կառավարող ոգին չէր օրէնքը, իրաւունքը, կամ ճշմարտութիւնը, այլ — ազայի կամքը եւ նրա հաճոյքը: Իսկ բարձրագոյն կառավարութիւնը, որքան եւ ցանկանում էր, բայց չունէր այնքան ուժ ազանների, — այսինքն խանների, բէկերի, շահադաւանների, մուլանների, սէիզների, — բռնակալութեանց սահման գնելու:

Ահա այս դրութեան մէջ էին այն ժամանակ՝ Սալմաստայ, Խոյի, Մագուայ, Գունէյստանի, Մարանգի, Ուրմիի, Սուլդուզի, Սօլուխբուլախի, Գուխարղանու, Մարաղայի, Թարրիզի, Ղարազաղի, Արդաբիլի — բազմաթիւ գիւղերի բնակիչների վիճակը:

Եւ այսպէս, Պարսկաստանում Ատրպատականի բնակիչների կեանքը, իսկ Տաճկաստանում Տարօնի ու Վասպուրականի բնակիչների կեանքը, ներկայացնում են երկու միմեանց շատ հակառակ պատկերներ: Պարսկաստանի մասնում՝ տիրում են պարսիկները, զրգըլբաշթուբքերը, իսկ Տաճկաստանի մասնում՝ քուրդերը: Պարսիկ ազան, որպէս

Ֆէօդալական կառուածատէր, սեպհականել է հողը, եւ իր կառավարութեան բոլոր խորամանկութեամբ, շարունակ կերպով քամում է գիւղացու ձեռքի վաստակը: Քուրդը յափշտակել է հողը եւ ժամանակաւոր կերպով միայն շահւում է նրանից: Պարսիկը, որպէս կրօնական նախանձով ոգեւորված ազգ, լի մոլեռանդութեամբ հալածում է այլադաւաններին, չէ համբերում ուրիշ կրօնքների, եւ ամեն միջոցներ գործ է դնում իր հրեւտակ ազգերին մտցնել մահմեդական մզկիթը: Քուրդը, բնութեան ազատ որդին, դեռ վարակված չէ կրօնական նախանձով: Պարսիկը նենգաւոր է, խարդախ է, կեղծաւոր է, նա խայթում է օձի պէս, գետնի վրայ սողալով: Քուրդը վայրենի հերոս է. նա որպէս գաղան չէ մեղանչում իր բնութեան դէմ. նա գործում է առանց նենգութեան. նա իր զոհերի վրայ նայում է, որպէս իր կերակուրի վրայ: Պարսիկը, որպէս մշտական երաշտութիւն, յաջորդաբար ցամաքեցնում է, չորացնում է ամեն կենդանութիւն, մինչեւ անապատ է դարձնում երկիրը: Քուրդը անցնում է կատաղի հեղեղատի պէս, ոչնչացնում է բոլոր հանդիպածը, բայց կրկին ցամաքում է գետինը եւ հողը յետ է ստանում իր ուժը, այն ժամանակ կրկին բուսեցնում է բոլոր սերմերը, որ դրած էին նրա արգանդի մէջ:

Մէկը խորամանկ հարստահարող է. միւրը մեծասիրտ աւազակ: Իսկ երկու դէպքում եւս տանջվում է, սպառվում է անբաղդ գիւղացու կեանքը . . .

Կարօն բացատրում էր ինձ այս բոլորը, նա ասում էր՝ թէ գիւղացու վիճակը կարող է աւելի բարւոք լինել, եթէ հասարակութիւնը ուրիշ ձեւով կազմակերպված կը լինի: Նա ասում էր, թէ այն ժամանակ չարութիւն չի լինի, բոլոր մարդիկը բարի կը լինեն, ամենի ապրուստը ապահովված կը լինի, — աղաների դարը կանցնէ, կը փրէ միայն արգարութիւնը եւ իրաւունքը: Նա երկար ու երկար մեկնում էր, թէ ինչ ձեւով պէտք է հասարակութիւնը կազմակերպել, որ զօրեղն անզօրին չը ճնշէ, որ մշակ մարդու աշխատութեան վաստակը չը խլեն, եւ նա միշտ իր տանը ուտելու հաց ունենայ, եւ ամենի վրայ տիրէ հաւասարութիւնը . . .

Կարօն ուրիշ շատ բաներ ասում էր ինձ, բայց ես յիմար էի, շատ յիմար, նրա խօսքերը իմ գլխումը չէին մտնում, ես ոչինչ չէի հասկանում եւ սկսում էի նրա մտքերի դէմ հակառակել: Ես միայն ասում էի՝ այս բոլորը Աստուծոյ կամքովն է լինում. մարդը չէ կարող իր տիրոջ կամքին հակառակել. եթէ Աստուած ուզենայ, ինքը ժողովրդին հանգստութիւն կուղարկէ, ինքը կուզէ նրա ճանապարհը: Երեւի, Աստուած չէ կամենում, որ ժողովուրդը իր անբախտ դրութիւնից դուրս գայ, որովհետեւ այս նրա պատիժն է:

Կարօն շատ էր տխրում, երբ ես այսպիսի մտքեր էի յայտնում: Բայց ես յետոյ հասկացայ, որ նա իր դատողութիւնների մէջ ուղիղ էր, Հասկացայ, բայց խիստ ուշ . . .

## ԻԷ.

### Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս Է Ր Ը

Բայց ի՞նչ էր, որ կապում էր հայերին մի այնպիսի երկրի հետ, ուր նրա կեանքը հանապազօրեայ փոանգի մէջ էր, ուր նրա կայքը ապահովված չէր, ուր նրա ապրուստը խառն էր արեան ու քրտինքի մէջ, ուր նրա ընտանեկան սրբութիւնը արատաւորվում էր, ուր նրա կրօնքը, եւ ամեն ինչ որ նուիրական էր նրա համար, սրբապղծվում էր: Ի՞նչ էր, որ կապում էր հայերին այսպիսի երկրի հետ. — Հայրենիքի սէրը:

Հայրենիքը լի էր անթիւ յիշատակարաններով, որոնք ասում էին հային՝ «դա քո երկիրն է, այստեղ էին ապրում քո նախնիքը, եւ այստեղ մեռան նրանք, դու էլ պէտք է այստեղ մեռնես, եւ քո ոսկերքը խառնես նրանց ոսկերքի հետ»:

Վանայ բերդի պարսպաքարերի վրայ եւ Վասպուրականի մէջ՝ ըլուրների գագաթին՝ հայը տեսնում էր անթիւ արձանագրութիւններ, իրանց սեպաձեւ բեւեռագրներով, որոնք հազարաւոր

տարիներ պատերազմելով ժամանակի հետ, պահել էին հայոց հին, շատ հին թագաւորների յիշատակարանները: Այն անբարբառ եւ խուլ նշանագրների մէջ հայը կարգում էր իր վաղեմի մեծութիւնը:

Նոյն երկրում հայը դեռ չէր մոռացել իր հին աստուածներին, որոնց հետ այնքան շատ դարեր ապրել էր նա միշտ հաշտ կերպով, որոնց նուիրել էր իր զոհերը, որոնցից խորհուրդներ եւ պատգամներ էր հարցրել իր գործերի մասին:

Դեռ Աստղիկը, Աշտիշատի գեղեցիկ դիցուհին, իր վաղեմի սովորութեան համեմատ, ամեն օր վաղ-առաւօտեան, լեղանում էր Մուրադ գետի (Եփրատի) ալիքների մէջ:

Նոյն ժամուն հայոց երիտասարդ գիւցազունները հաւաքվում էին Տաղօնաց սարի գլխին, այնտեղից գաղտնագողի կերպով դիտելու գեղեցիկ աստուածուհու մարմինը: Բայց Աստղիկը Մշու դաշտի ամբողջ երեսը եւ նրա լեռները պատում էր թանձր մշուշով, եւ անթափանցիկ օգեղէն վարագոյրները անտեսանելի էին կացուցանում նրա լողարանը անհամեստ աչքերից: Դեռ Արշակայ ծովակի մէջ բնակվում էին հայոց ջրային յաւերժահարսունքը: Եւ հայ պատանին, լի ակտարորբք կրքերով, լուսնկայ գիշերներում թափառում էր լճի ափերի մօտ, «հրեղէն աղջիկներ» որսալու համար: Դեռ հայոց ամենահին եւ ծերունի աստուածը — Արեգը — հրային-լուսափայլ ճաճանջներով, ամեն գիշեր հանգստանում էր Վանայ ծովակի մէջ, որի յատակի վրայ գրած էր նրա

ուկեղէն անկողինը: Այնտեղ ջրային կոյսեր իրանց գողտրիկ երգերով անուշցնում էին ցերեկուայ յոգնած լուսատուի բունը, Գեռ Լեզք կոչված բլուրի վրայ ապրում էին Յարալէզ գիք, որոնք լիզելով կեանք էին շնորհում պատերազմի դաշտում ընկած հայոց քաջերին:

Այն երկրում, Հայոց ձորով անցնելու ժամանակ, հայը միշտ յիշում էր իր նախահօր— Հայկ գիւլցաղնի, այն մեծ հսկայի կռիւը տիտանների հետ: Յոյց էր տալիս իր զաւակներին Նամբութայ սարը, ուր մեր Հայկ պապը վեր հանեց Ներբրովթի գիակը, նրան սպանելէն յետոյ: Եւ իր աշխարհին ցոյց տալու համար գռռոզ վիթխարիի ամբարտաւանութիւնը, նոյն սարի բարձրութեան վրայ մեխեց նրա գիակը եւ յետոյ այրեց նրան: Մինչեւ այսօր մնում են նոյն սարի մօտ Ներբրովթայ քարաւանի ուղտերը, երկար, քարացած շորքերով, որոնք նրա զինուորների համար պաշար էին կրում եւ հայոց աստուծոյ հրամանով քար գարձան: Եւ հայը միշտ պարծենալով է յիշում իր նախահօր— Հայկ գիւլցաղնի յաղթութիւնը, եւ հպարտանում է, որ ինքը մի այնպիսի մեծ մարդու սերունդ է, որ շառաւիղում էր աստուածների արիւնից:

Այն երկրում դեռ չէին ցամաքել չորս գետերը, որոնք բխում էին Աստուծոյ գրախտից, եւ Բինգեօյի ծաղկաւէտ դաշտին նայելով, հայը ասում էր իր որդուն՝ «տես, տես, այստեղ էր մեր նախահօր եւ նախամօր բնագաւառը»: Նա ցոյց էր տալիս «Պայէնի ծառերը», որոնց հո-

ժանու տակ հանգստանում էր առաջին երկրա-  
գործը: Նա ցոյց էր տալիս «Ղամեքայ բերդը»—  
այն քաջ որսորդի ամրոցը, որը սպանեց Ադամի  
անգրանիկ, բայց դատապարտեալ որդուն: Նա  
ցոյց էր տալիս դաշտերը, ուր առաջին խաշնա-  
րած Աբէլը արածացնում էր իր ոչխարները: Իսկ  
Մարանդի մէջ գտնում էր նա Նոյի կնոջ Նոյեմ-  
զարի գերեզմանը:

Հայի որդին տեսնում էր, որ առաջին հօր  
եւ առաջին մօր ժամանակից, ինքն անբաժան է  
մնացել այն երկրից, ուր բնակվում էր մարգկու-  
թեան նախաստեղծ զոյգը:

Զրհեղեղը մինչեւ անգամ իր աշխարհաւեր  
տատանմունքով չը կարողացաւ դուրս մղել հային  
հայրենի երկրից: Գրգուռ սարին նայելով, նա  
միշտ յիշում էր այն աւանդութիւնը, թէ Նոյի  
տապանը այս սարին քալելով, անցաւ դէպի Սի-  
փան լեռը, խնդրեց նրանից ընդունել իրան իր  
գազաթի վրայ: Սիփանը համեստութեամբ պա-  
տասխանեց, թէ ինքը հայոց լեռների ամենա-  
կրտսերն է, եւ ցոյց տուաւ դէպի իր անդրա-  
նիկ եղբայրը—հսկայ Արարատը, ասելով՝ «զնա՛  
ի Մասիս, որ բարձր է քան զիս»:

Ահա այսպիսի պատմական յիշատակներով էր  
կապված հայի սրտի հետ հայրենիքը, ուր սկսեալ  
ամենախորին հեթանոսական դարերից, ժողո-  
վրդի մէջ կենդանի մնացած աւանդութիւն-  
ները՝ յիշեցնում էին նրան իր հին առասպելա-  
վիպական անցեալը:

Այս յիշատակները պահպանել էին հսկայա-

կան լեռները, որոնք ստեղծուել էին ժամանակի հետ եւ ապրում էին քանի որ նա կար: Այս յիշատակները պահպանել էին ահագին գետերը, ծովակները եւ լճերը, որոց կեանքը տեւում է անթուելի դարերով: Այս յիշատակները պահպանել էր վերջապէս ժողովրդի ոգին, որ երբէք չէ մեռնում:

Հայր չէր ուզում բաժանուել հայրենիքից: Հայրենիքը նրա սրբութիւնն էր: Այնտեղ ամեն մի քար, ամեն մի աւերակ յիշեցնում էին նրան իր վաղեմի մեծութիւնը: Դեռ բոլորովին չէին անհետացել բերդերի, ամրոցների փլատակները, ուսկից մի ժամանակ նրա ազգի պետերը տարածում էին իրանց իշխանութիւնը: Դեռ մնում էին հին քաղաքների աւերակները, որոց փրշրանքի մէջ երեւում էր հայ մարդու արհեստը եւ ճարտարութիւնը, որոնք քարոզում էին, թէ որքան հանգիստ էր քաղաքացու կեանքը, որքան զարգացած էր նրա մէջ գիտութիւնը: Դեռ բոլորովին չէին անհետացել հետքերը բազմաթիւ ջրանցքների, ստորերկրեայ խողովակների, որոնք ցանցատեսակ հիւսվածքով տարածվել էին ընդարձակ դաշտերի վրայ, անցնում էին ամենագոյն լեռների եւ բլուրների միջով, որոնք ցոյց էին տալիս, թէ որքան ծաղկած էր մշակմարդու գործը, որքան նա սերտ կերպով կպած էր բնութեան եւ երկրի հետ:

Իսկ այժմ տիրում էր անապատ եւ ամայութիւն . . .

Մի բան, որ մնացել էր անջնջելի թէ ժո-

զովրդի սրտի մէջ եւ թէ երկրի վրայ, դա էր կրօնքը եւ նրան արտայայտող յիշատակարանները: Ամեն տեղ, անմարդաբնակ եւ խուլ ձորերի մէջ հանդիպում էին հսկայակապ վանքեր, ուր տօնական հանդէսների ժամանակ միայն հաւաքւում էր ուխտաւորների բազմութիւնը, իսկ այնուհետեւ նրա շէմքը չէր կոխում ազօթողի սոքը: Միայն միաբան արեղաները ամենայն ջերմեռանդութեամբ կատարում էին սովորական ժամերգութիւնները: Բլուրների վրայ, լեռների խորին ծոցերում, զրլած էին անթիւ մատուռներ, որոնք կրում էին իրանց մէջ այս եւ այն ճրգնաւորի մարմնի փշրանքը: Սարբերի անմատչելի տեղերում տեսնւում էին մթին քարանձաւներ, ուր միայնակեացները, հեռանալով աշխարհի աղմուկից, նուիրել էին իրանց Աստուծոյն: Այս քարանձաւները, երեւի, մի ժամանակ նախնական մարդիկների բնակարաններ էին, որ յետոյ դարձան ճգնաւորների ապաստանարան: Քիչ չէր այն յիշատակարանների թիւը, որոնք կոչւում էին «խաչքար» կամ «թուխմանուկներ»: դրանք կանգնած էին զանազան բարձրաւանդակների վրայ, ուր մի մի նահատակ թափել էր իր արիւնը հաւառքի համար, կրօնական հալածանքների ժամանակ: Ժողովուրդը ջերմեռանդութեամբ յարգում էր սուրբի յիշատակը եւ ծխում էր այնտեղ իր խունկը: Ըսկ եկեղեցիները ոչ թիւ ունէին եւ ոչ համար: Եւրաքանչիւր գիւղ, որ բաղկանում էր մի քանի գետնափոր խրճիթներից, ունէր մի փառաւոր եկեղեցի: Ըսկ այն հոյակապ տաճարը

շատ հին ժամանակների գործ էր, երբ գիւղի  
ժողովուրդը բազմաթիւ էր եւ հարուստ, եւ ոչ  
այնպէս աղքատ եւ փոքրաթիւ որպէս այժմ:

Ես մոռացել եմ բոլոր վանքերի անունները,  
որոնք գտնվում էին իմ նկարագրած գաւառնե-  
րում, բայց մի քանիսը դեռ յիշում եմ: Մագուայ  
գաւառումն էր սուրբ Թադէոս առաքելոյ վանքը,  
որը մեր Արգար Թագաւորի խնդրելով, ուղարկվե-  
ցաւ Հայաստան եւ այստեղ նահատակվեցաւ:  
Նոյն գաւառումն էր եւ սուրբ Ստեփաննոս նա-  
խավկայի վանքը: Այստեղ էր պատմական Ար-  
տաղը, Աւարայրն, Տղմուտը, ուր հայոց քաջերը  
այնպէս եռանդով պատերազմեցին Յազկերտի եւ  
նրա մոզքի հետ կրօնքի ու հայրենիքի պաշտ-  
պանութեան համար: Վանայ ծովակի կղզիներ-  
րումն էին՝ Լիւմ, Կուուց եւ Աղթամար անապատ-  
ները իրանց խտտակեաց արեղաներով: Հաղա-  
կումն էր սուրբ Բարդուղիմէոս առաքելոյ վանքը,  
որը սուրբ Թադէոսից յետոյ Հայաստան եկաւ  
եւ այնտեղ նահատակվեցաւ:

Վանքերը, ոչ միայն իրրեւ կենդրոն հայերի  
կրօնական կեանքի, պահպանում էին իրանց մէջ  
ազգի սրբութիւնները, այլ եւ անվտուրմ էին  
իրանց մէջ նախնեաց մտաւոր վաստակները, հին  
մագաղաթների վրայ, ժամանակից դեղնած եւ  
գունատված տառերով: Վանքերի մէջ գրած էին  
եւ շիրիմները հայոց մեծ մարգերի: Օրինակ՝—  
Աշտիշատայ եկեղեցին Մուշի մէջ կրում էր Սա-  
հակ պարթեւի գերեզմանը, այն մեծ քահանայա-  
պետի, որ այնքան երկար տարիներ պատերազ-

մելով պարսից արքունիքի եւ Բիւզանդիոնի խո-  
րանանգ քաղաքականութեան հետ, պահպանեց  
Արշակունիների այն ժամանակ խարխուլ գահը:  
Սուրբ Ղազարու կամ Առաքելոց վանքը, Մուշի  
մէջ, ունէր Մովսէս Խորենացու գերեզմանը, որը  
մտցրուց Հայաստան յունական գիտութիւնը, որ  
տուեց հայերին իրանց նախնեաց պատմութիւնը,  
որպէս Եհովայի Մովսէսը տուեց Իսրայէլին Հին  
Պատկարանը: Նոյն վանքումն էր Դաւթի, «ան-  
յաղթ» փիլիսոփայի գերեզմանը, Խորենացու աշա-  
կերտակցի, որ նոյնպէս Աթէնքից բերաւ Հայաս-  
տան յունաց դպրութիւնը եւ սովորեցրուց հային  
խմաստասիրութիւն եւ առողջ մտածութիւն: Այն-  
տեղ էին եւ Յովհանն եւ Ղազար թարգմանիչների  
գերեզմանները: Վանքն Ոստանայ, Ռշտունեաց  
երկրում, ունէր Եղիշէի գերեզմանը, այն ոգելից  
բանաստեղծի, որ այնքան եղերական կերպով եր-  
գեց հայոց քաջերի նահատակութիւնը Աւարայրի  
դաշտում: Վանքն Նարեկայ ունէր Գրիգոր Նա-  
րեկացու գերեզմանը, որի գիրքը իւրաքանչիւր  
հայ մարդու սրտի սրբազան բուրյառն է, որով  
ծխում է նա իր ջերմ օրհներգութիւնը դէպի  
Յախտեճականի աթոռը: Հոգւոց վանքը, Անձեւա-  
ցեաց երկրում, ունէր Տրդատ Մեծի գերեզմանը,  
այն հզօր թագաւորի, որ մտցրուց Հայաստանում  
Աւետարանի լոյսը: Վարազայ վանքը, Վանի մօտ,  
ունէր Սենեբերիմ Արծրունու գերեզմանը. այն-  
տեղ էին դրած եւ Խոշոշ թագուհու եւ Պետրոս  
Գետադարձի գերեզմանները: Վանքն Կոփայ, Մուշի  
մօտ, ունէր Դանիէլ երջանիկի, Լուսաւորչի թո-

ուան շիրիմը: Վանքն բասենու կամ Հասանկալէի՝—Քրիգոր Մագիստրոսի գերեզմանը: Վանքն Խեկայ՝ Հայոց ձորում՝—Աբրահամ խոստովանողի գերեզմանը: Տարօնի սուրբ Կարապետի վանքը՝—Մուշեղ եւ գայլ Վահանի գերեզմանները: Իշխանագամ գիւղի եկեղեցին՝—Վարդ Պատրիկի գերեզմանը:

Բայց կային վանքեր եւ եկեղեցիներ, որոնք պահում էին զանազան սուրբերի մարմնի փըշրանքները, ամփոփած ոսկու եւ արծաթի մէջ: Օրինակ—Վանայ սուրբ Վարդան եկեղեցումն էր Մամիկոնեան Վարդանի մէկ մատը: Մշոյ սուրբ Կարապետայ վանքումն էր սուրբ Աւետիգայ մասունքները: Կային վանքերում եւ այլ սրբութիւններ, որպէս Սստանայ վանքը պահում էր իր մէջ այն խաչը, որ Սահակ պարթեւը տուեց իր թոռին—Վարդանին, եւ Քրիստոսի այդ խաչակիր զինուորը, Աւարայրի դաշտում ընկած ժամանակ, արձակեց իր պարանոցէն պապենական նուէրը, եւ Եղիշէին տալով, ասաց՝ «Այս եմ թողնում քեզ իմ վերջին յիշատակ, առ թող պարսկի ձեռքը չը դիպչէ դրան» . . .

Վանքերը եւ եկեղեցիները շատ ունէին այսպիսի սրբութիւններ, որոնք ամփոփում էին իրանց մէջ այս եւ այն ճգնաւորի, առաքեալի, մարտիրոսի եւ եկեղեցոյ հարց մարմնի մասունքները: Նրանք պատած էին արծաթով եւ ոսկով, զարդարած էին թանկագին քարերով, եւ պահւում էին նոյնպէս թանկագին արկղների մէջ: Եթէ աւելացնենք դրանց վրայ արծաթի բուրվառները,

սկիհները, աշտանակները, արծաթակազմ Աւետարանները, եւ ազնիւ մետաղներից կազմված այլ եկեղեցական անօթները, կարելի է ասել, որ ազգի հարստութիւնը կենտրոնացած էր այդ ժամանակ եկեղեցիների եւ վանքերի մէջ: Այդ հարստութիւնները շատ անգամ գրաւում էին մահմեդական աւարաւուների շահասիրութիւնը, եւ թիչ չէր պատահում, որ վանքերի սրբութիւնները գերի էին ընկնում: Քուրդերը յարգում էին իրանց ձեռքը ընկած սրբութիւնները եւ չէին ոչնչացնում նրանց: Քուրդի համար քրիստոնէական տաճարի սրբութիւնը նոյն նշանակութիւնն ունէր, որպէս իր շէյխի տուած թիլիսմանը, որը նա կապում էր աջ թելին թշնամու ղէնքերից անխոցելի մնալու համար: Քուրդը դարձնում էր սրբազան կողոպուտը, միայն ծանրագին փրկանք ստանալէն յետոյ: Պարսիկները եւ թուրքերը այն ակնածութիւնը չունէին դէպի քրիստոնէական սրբութիւնները. նրանք կը ոչնչացնէին, եթէ տեսնէին, որ նրանցից գոյացած ոսկին ու արծաթը կարող էր աւելի գին բերել, քան թէ այն գումարը, որ ստանալու էին իբրեւ փրկանք: Իսկ փրկանքը լինում էր միշտ աւելի բարձր, քան սրբութեան արժէքը: Օրինակի համար ես կը յիշեմ մի դէպք, որը պատահեց իմ ժամանակում: Բարդուղիմէոս առաքելոյ աջը, որ գտնվում էր Հաղբակայ նոյն անունով վանքում, գերի ընկաւ պարսիկների ձեռքում: Ժողովուրդը վճարեց սուրբ աջի ծանրութեան չափով տասն անգամ ոսկի եւ փրկկեց գերին: Ամբողջ գաւառի կանայքը զրկվե-

ցան իրանց ոսկի եւ արծաթի զարդերից, նրանք իրանց մատանիները, քամարները, գլխի պաճուճանքը եւ պարանոցի մանեակները թափում էին վանահօր մօտ, որպէս զի հայոց առաքեալի սուրբ աջը, «իրանց երկրի պաշտպանը» գերի չը մնայ «անօրէնների եւ անհաւատների» ձեռքում:

Ես մինչեւ այսօր յիշում եմ նոյն սուրբ աջը, նա մի հսկայական բազուկի մեծութիւն ունէր, տասն անգամ նրա ծանրութեամբ ոսկին — այդ սարսափելի քանակութիւն էր ազբատ ժողովրդի համար: Բայց նա զոհեց բոլորը, միայն թէ իր սրբութիւնից չը զրկվէր, որովհետեւ նրանից կախված էր իր ներկայ եւ հանդերձեալ կեանքի բախտաորութիւնը, — իր հոգու եւ մարմնի փրկութիւնը . . .

Ես դեռ չեմ մոռացել, երբ երաշտութիւն էր լինում, կամ մարախ էր գալիս, ժողովուրդը դիմում էր վանահօրը, որ «անդաստան» անէ: Վանահայրն առնում էր սուրբ աջը, եւ խաչերով, խաչվառներով, բոլոր եկեղեցական սպասով դիմում էին դէպի դաշտերը: Եւ սուրբ թափօրը, ժողովրդի անհուն բազմութեան հետ, հանդարտ եւ դանդաղ ընթացքով շրջում էին մշակութեան դաշտերում, եւ իրանց արտասուքով, խնկարկութեամբ, ողբալի շարականներով ազերտում էին երկնքի հաշտութիւնը, միջնորդ ունելով սուրբ աջը, որ ամբոխը տանում էր իր առջեւից, որպէս Իսրայէլը «տապանակ ուխտին»:

Եւ այսպէս, վանքերի եւ եկեղեցիների ամեն մի սրբութիւնը ունէր իր հրաշագործ յատկու-

թիւնները: Մէկը նշանաւոր էր՝ որպէս գիւհա-  
հարներին ազատող, միւսը հռչակված էր՝ որ-  
պէս անդամալոյժները բժշկող, երրորդը՝ որպէս  
ջերմախտի փրկարար եւ այլն: Եւ ժողովուրդն  
ամենայն ջերմեռանդութեամբ գիմում էր դէպի  
սրբութիւնները իր հիւանդութիւններից բժշկու-  
թիւն գտնելու համար: Հրաշագործ էին եւ զա-  
նազան Աւետարաններ, Նարեկներ, որոնք գրված  
էին սուրբ մարգերի գրիչով: Այս մագաղաթեայ  
գրքերը, ոսկենկար պատկերներով, զարդարած  
թանգագին կազմով, սլահվում էին փաթաթած  
մետաքսեայ եւ զառ թաշկինակների մէջ, եւ բո-  
լորովին անմերձենալի էին ժողովրդին: Նրանց  
բաց էր անում միայն շատ անհրաժեշտ դէպքե-  
րում վանահայրը, երբ հարկաւոր էր նոյն գրք-  
երով մի գլուխ աւետարան կարդալ որ եւ իցէ  
հիւանդի վրայ:

Ես բոլորովին անօրէն եւ անհաւատ էի հա-  
մարում Կարօին, երբ նա ասում էր ինձ, թէ  
վանքերի սրբութիւնները մեր ազգի տունը քան-  
դեցին, թէ նրանք մի պատրաստի առարկայ էին  
դարձել մեր թշնամիների եւ նոյն իսկ մեր վար-  
դապետների շահասիրութեանը: Նա ասում էր,  
եթէ հնար լինէր, ինքը պատրաստ էր բոլորը  
ոչնչացնել, որովհետեւ նրանց վրայ գտնված ոսկին  
եւ արծաթը իր համար շատ հարկաւոր էին . . .

Կարօի անպատկառ խօսքերը մինչեւ այն աս-  
տիճան գրգռում էին իմ բարկութիւնը, որ մի օր  
մտածեցի՝ խէնջարս խրեմ՝ նրա սրտի մէջ, ուր  
ամենեւին չը կար ոչ Աստուծոյ երկիւղը եւ ոչ

ակնածութիւն գէպի եկեղեցու սրբութիւնները։ Բայց ես ո՛ւշ հասկացայ, շատ տարիներից յետոյ, որ իմ կարծիքը Կարօի մասին բոլորովին սխալ էր.— հասկացայ, որ մի շատ բարի նպատակի համար Կարօն ցանկանում էր գործ դնել վանքերի ոսկին եւ արծաթը . . .

Թէեւ վանքերը եւ եկեղեցիները ունէին գաղտնի պահեստներ, ուր խռովութեան միջոցներում թագցնում էին սուրբ տաճարների հարստութիւնները, բայց շատ անգամ վանահայրը, կամ եկեղեցու աւագ քահանան, չը դիմանալով աւարառուների տուած չարչարանքին, յայտնում էին պահեստի տեղը։ Քանիւմ էին եկեղեցականներից եւ այնպիսիները, որոնք աւելի հեշտութեամբ աւանդում էին իրանց հոգին, քան թէ պահեստի գաղտնիքը։

Վանքերի եւ եկեղեցիների սրբազան սպասները, արգարեւ, որպէս Կարօն ասում էր, գարձել էին շահասիրութեան առարկայ։ Թողեալ այն, որ վարդապետները նրանց շնորհիւ բաւականին արծաթ էին քանում ժողովրդի աղքատ քսակից, թողեալ այն, որ ժողովուրդը շատ անգամ ստիպված էր վրկել իր սրբութիւնները գերութիւնից, պատահում էր, որ երկրի իշխանը—ի հարկէ չընչին պատճառի համար—վանքը, եկեղեցին, կամ ամբողջ հայոց գիւղօրայքը տուգանքի էր ենթարկում։ Պատճառները հնարում էին իրանք իշխանները։ Օրինակ, լուր էին տարածում, թէ հայոց քահանաները մի մահճեղական երեխայ գողացել եւ մկրտել են, կամ գցում էին վանքի

գաւիթումը մի մահճեղականի սպանված դիակ։ Այս բաւական էր գրգռելու մահճեղականների կատաղութիւնը. նրանք կամ կողոպտում էին քրիստոնեաների գիւղերը, եւ կամ սպանվածի արեան փոխարէն նշանակում էին մի մեծ տուգանք։ Ժողովուրդը պատրաստի փող չունէր. նա ստիպված էր վեր առնել պարտքով։ Եւ այնպիսի ծանր տոկոսներով վաշխառուն միշտ պատրաստ էր փող տալ, մանաւանդ որ նա ստանալու էր խիստ ապահով գրաւական, — այսինքն վանքի սրբութիւնները։ Հրէա կամ մահճեղական վաշխառուն գիտէր, որ իր պարտականը եթէ կինը, աղջիկը, տղան գրաւ դնէ, եթէ ժամանակին չը կարողանայ վճարել, կասէ՝ տիրէ գրաւներիդ, իսկ իր եկեղեցական սրբութիւնը նա երբէք չի թողնի օտարի ձեռքում։

Երբեմն այսպիսի դժբախտութեանց պատճառ դառնում էին վանահայր արեղաները, կամ վիճակաւոր առաջնորդները։ Նրանցից շատերը կաշառքներով իրանց կողմն էին գրում ըուրդ, թուրք կամ պարսիկ իշխաններին եւ նրանց օգնութեամբ խլում էին միմեանցից վանքեր, տիրում էին թեմերի։ Այսպիսի յափշտակութիւնները խիստ թանգ էին նստում։ Վանահայրը կամ առաջնորդը գրաւ էր դնում վանքի սրբութիւնները, պարտք էր անում իր խոտուացած կաշառքը վճարելու համար։ Բայց ո՞վ էր թափում գրաւները։ — Գարձեալ ժողովուրդը։

Ես յիշում եմ մի այսպիսի դէպք, որ պատահեց իմ ժամանակում։ Վանայ ծովակի կղզիներ-

րից մէկում գտնւում էր Աղթամարայ անապատը. այնտեղ նստում էին կաթողիկոսներ, որոց մէկը իր կողմը ձգելով Շատախու, միւսը Սասնոյ կիսաւայրենի հայ-լեռնականներին, անգաղար միմեանց ձեռքից խլում էին հայրապետական աթոռը: Այսպիսով ծագել էր ժողովրդի մէջ երկու կուսակցութիւններ, եւ խռովութիւնը հասաւ մինչեւ արիւնհեղութեան: Աթողիկոսներից մէկը տարաւ յալթութիւնը բուրդ իշխանի օգնութեամբ: Պաշտպանութիւնը արժեց նրան մի քանի տասնեակ «քիսայ» արծաթի, որը նա պարտք առաւ, ի հարկէ, ամենաապահով գրաւականով — վանքի սրբազան սպասներով: Հաստատւելով իր աթոռի վրայ, նորին վեհափառութիւնը ուղեց թափել գրաւականները, եւ այս նպատակով սխարաստեց նա նուիրակների մի խումբ, որ գնացին թեմերից ժողովք անելու: Միաբաններից մի ծերունի արեղայ առաջարկեց, թէ նա կարող էր նոյն իսկ վանքից գոյացնել ցանկացած գումարը, եթէ նորին վեհափառութիւնը կրնգունէր իր տուած խորհուրդը: Աթողիկոսը մի օր բոլոր արեղաներին կանչեց իր մօտ ճաշի, հացկերոյթը վերջանալէն յետոյ, հրամայեց փակել նրանց նոյն իսկ սեղանատան մէջ: Յետոյ ինքը վեհափառը, մտնելով արեղաների խուցերը, բաց անել տուաւ «աշխարհից հրաժարված» արեղաների փոքրիկ արկղիկները, եւ յիրաւի, յայտնվեցան աւելի քան կաթողիկոսի ցանկացած գումարը ոսկի եւ արծաթ: Այլ կը կարծէր, որ աշխարհի հարստութիւնից հրաժարված ճգնաւոր-


ներք, — որոնք իրանց վանքում կին ուխտաւորներ  
էին ընդունում, որոնք հազնում էին կոշտ մա-  
զից զգեստներ, որոնք մերկ ոտքերով էին ման-  
գալիս, որոնք աղ ու հացով էին կերակրու-  
մ, որոնք արծաթից այնպէս էին վախենում որպէս  
դելից, — ունենային իրանց սնդուկների մէջ այն-  
քան ոսկու եւ արծաթի մթերք:

Ծերունի արեղայի հնարագիտութիւնը, որ  
երեւան հանեց այս գաղտնիքը, վարձատրվեցաւ  
նրանով, որ քանի օրից յետոյ գտան նրա խեղդ-  
ված դիակը ծովակի ափում . . .

Զը նայելով, որ վանքերում այսպիսի եղեւ-  
նագործութիւններ էին պատահում, դարձեալ  
ժողովրդի ջերմեռանդութիւնը գէպի իր սուրբ  
աթոռները մնում էր տաք եւ իր բոլոր բարե-  
պաշտական ոգեւորութեան մէջ: Նա ինքը, ժո-  
ղովուրդը, իր տանը հաց չունէր ուտելու, նրա  
որդիքը նօթի եւ կիսամերկ էին, նա իր աղքատ  
գրութեան մէջ դարձեալ հազցնում էր եւ կե-  
րակրում էր իր հոգեւոր հայրերին, որպէս իր  
վանքերի պաշտօնեաներին, որպէս Աստուծոյ տան  
սպասաւորներին, որոնց ազօթքովն էր ապրում  
ինքը, որոնք հաշտեցուցիչ կապ էին իր եւ երկնքի  
մէջ . . . Ժողովուրդն իր հունձքից մասն էր հանում  
արեղաների համար, իր անատունների իւղից եւ  
պանրից նրանց բաժին էր տալիս, ինքը եւ իր  
արօրը ձրի աշխատում էին վանքապատկան կա-  
լուածների մէջ, մի խօսքով, նա վճարում էր իր  
արեղաներին աւելի քան թէ իր կարողութիւնը  
ներում էր:

Ահա ինչ էր, որ կանուամ էր հային իր հայրենիքի հետ:

Բայց Կարօն ասում էր, թէ վարդապետները նոյնպիսի հարստահարողներ են, որպէս քուրդեւ թուրք աղաները: Ես բարկանում էի . . .



## ԻՐ.

Ն Շ Ո Յ Լ Ն Ե Ր Ը Ե Ր Ե Ի Ո Ի Մ Ե Ն

Թէ եւ ծերունի որսորդը միշտ ցաւակցական արհամարհանքով էր խօսում հայերի մասին, ասելով թէ նրանք հոգով եւ մարմնով բոլորովին ընկած եւ սպանուած ժողովուրդ են, բայց ես նրա նկատողութիւնը իրաւացի էի գտնում միայն Պարսկաստանի հայերի վերաբերութեամբ, այսինքն նրանց, որ բնակվում էին Ատրպատական նահանգում: Ընդհակառակն, Տաճկաստանի հայերը—Տարօնի եւ Վասպուրականի մէջ—համեմատելով իրանց ատրպատականցի համազգայիների հետ, բաւականին աշխոյժ եւ կենդանի մարդիկ էին:

Դա ունէր իր տեղական եւ կլիմայական պատճառները:

Ատրպատականի գաւառները, բացի լեռնային եւ անտառապատ Ղարաբաղից, մնացածները տափակ երկիրներ էին եւ աւելի տաք կլիմայով: Երկրագործութիւնը, որ միակ ազբիւրն էր ժողովուրդի ապրուստի, խիստ պինդ կեր-

սոյ կապել էր բնակիչներին հողի հետ, եւ հետեւաբար շատ նեղ կերպով սեղմել էր նրանց հողատիրոջ՝ — ազանների ճանկերի մէջ:

Ազանների ճնշումն էր յաջորդաբար եւ տեւողական: Մի այսպիսի կեցութեան մէջ մարդը կորցնում էր իր ազատութիւնը եւ նրա հետ իր մտաւոր եւ հոգեկան կենդանութիւնը: Նա դառնում է կրաւորական էակ: Արձակ դաշտը, տափակ երկիրը շինում է նրան աւելի ընտանեկան, աւելի խաղաղասէր, մի եւ նոյն ժամանակ երկշտու: Մինչդեռ լեռը, անտառը պահպանում են մարդու մէջ նրա սկզբնական վայրենութիւնը եւ հետեւապէս նրա օրտի ամբուսութիւնը եւ քաջութիւնը:

Ստրկութիւնը սկսել է եւ շարունակել տափակ երկիրների վրայ եւ աւելի տաք կլիմայի մէջ: Տափակ երկիրը տալիս է մարդուն տափակ բնաւորութիւն, զարգացնում է նրա մէջ թեքվելու ընդունակութիւնը: Բայց լեռնային երկրի բնակիչը նոյնպէս ուղղաձիգ, նոյնպէս բարձրագիտակ է, որպէս իր շրջապատող սեպածեւ ժայռերը: Հարթ-հաւասար անապատը չէ տալիս փախուստի միջոց եւ պաստպարան իր նեղեալներին: Մինչդեռ սարերը եւ անտառները միշտ ունեն իրանց ծոցի մէջ ապահով ապաստանարան ապաւինողի համար:

Ատրպատականի գաւառները, բոլորած լեռների շղթաներով, ընդարձակ հովիտներ էին հարթ-հաւասար մակերեսով: Ժողովուրդը խիստ խորին կերպով արմատ էր գցել երկրի մէջ:

Նա ունէր հաստատ տղւն եւ բնակութիւն. նա ունէր այգիներ, պարտէզներ եւ կայք: Ուր եւ քշում էին նրան, որքան եւ հալածում էին, նա դարձեալ չէր բաժանուի իր բնակութեան տեղից: Նա կանգնած էր մի եւ նոյն կէտի վրայ եւ համբերում էր իր վիճակի թշուառութեանը: Նա համբերում էր, որովհետեւ նրան գժուար էր բաժանուիլ մի երկրից, ուր պէտք է թողնէր իր շատ տարիների աշխատութեան պտուղը: Նա մեխում էր գետնի հետ, որպէս իր տնկած ծառերը, իր շինած տունը եւ իր ցանած բոյսերը, որովհետեւ նրանց գոյութեան հետ կապված էր իր կեանքը: Թէ եւ այստեղ ժողովուրդը աշխատում էր մեծ մասամբ աղաների համար, բայց նրանք թողնում էին այնքան, որ մշակը կարողանար շարունակել իր կենդանութիւնը, որ նրա ձեռքերը կարողանային գործել: Բայց խստա խրվել մշակից կեանքը, դա աղայի համար ձեռնտու չէր, որպէս ձեռնտու չէր նրան սպանել իր աշխատող անասուններին:

Ատրպատականի հայը միշտ երեւում էր զինւորված իր երկրագործական գործիքներով. նրա ձեռքում միշտ տեսնուում էր բահ, բրիչ, մանգաղ եւ անասունները քշելու խարազան: Արիւն թափող եւ անձնապաշտպանութեան անօթների մասին նա գաղափար անգամ չունէր: Նա այնքան վախեցնում էր արիւնից, որքան գելից եւ սատանայից: Տաք կլիման թուլացրել էր նրա ուղեղը, նրա կենսական ուժը: Տափակ երկիրը շինել էր նրան մի անփախչելի որս աղայի ձեռ-

բում: Իսկ Հողագործութիւնը պահպանում էր նրա մէջ անասնական բխանութիւնը եւ եղի համբերութիւնը:

Տարօնը եւ Վասպուրականը աւելի լեռնոտ եւ սառն երկիրներ էին: Շատ տեղ սարերը ծածկված էին անտառներով: Երկարատեւ ձմեռը, անդադար անձրեւները, իսկ տարուայ ջերմ եղանակներում երաշտութիւնը՝ կացուցանում էին Հողը անյարմար ցանքերի համար: Ի բաց առեալ Վանայ ծովակի շրջակայ ցած երկիրները, եւ Ասորեստանի սահմանակից հարաւային կողմերը, մնացեալ գաւառները լեռնային բարձրաւանդակներ էին, որոնք միայն տալիս էին ճոխ մարգեր խաշնարածութեան համար: Այս պատճառով բնակիչների գլխաւոր պարապմունքը անասնապահութիւնն էր:

Հայերը առաւելապէս բռնել էին այն տեղերը, ուր կարելի էր եւ վարուցանքով պարապվել. իսկ այդ չէր կացուցանում նրանց ապրուստի գլխաւոր աղբիւրը, նրանք մի եւ նոյն ժամանակ եւ երկրագործ եւ հովիւներ էին. ձմեռը անցուցանում էին նրանք գետնափոր խրճիթներում, իրանց գիւղերի մէջ, իսկ տարուայ մնացած ամիսները չաղբներում, լեռների բարձրաւանդակի վրայ:

Այստեղ հայերի մի այսպիսի կիսա-չուական եւ կիսա-հաստատարնակ կեցութիւնը տուել էր նրանց բնաւորութեանը երկակենցաղ կենդանիների յատկութիւններ: Նրանց գետնափոր խրճիթներն, իրանց ստորերկրեայ ոլոր-մուրը խոր-

շիրով, աւելի նման էին սողունների որջին. եւ դա մտցրել էր բնակիչների մէջ օձի նենգութիւնը եւ նրա ռիսերիմ չարամտութիւնը. նա պատրաստ էր խայթել, եթէ յարմար միջոց գտնէր: Նրանց հովուական չաղրները, կազմված լեռների բարձրաւանդակների վրայ, բազմազոյ ջրվէժների մօտ, շրջապատած հսկայական ժայռերով, որտեղ եւ կայծակի ահեղ սպառնալեաց ներքոյ,—տուել էին նրանց բնաւորութեանը աւելի կիսավայրենի եւ կիսագազանային յատկութիւններ:

Հովուական կեանքը իր նահապետական պարզութեան հետ ունի եւ իր վայրենի կատաղութիւնը: Մշակական կեանքը իր աշխատասէր հոգու հետ պահպանում է թուլասրտութիւն եւ երկչոտութիւն:

Հայր իր հայրենի լեռների, թէ եւ հարազատ, բայց փչացած որդին էր: Քուրդը նրա մտերիմ որդեգիրն էր: Հայը ոչ կատարեալ երկրագործ էր եւ ոչ կատարեալ հովիւ: Քուրդը հաւատարիմ էր մնացել իր պարապմունքին. նա հոգով եւ սրտով հովիւ էր, այդ բառի բուն նշանակութեամբ: Այս պատճառով նա տիրում էր:

Հովիւները միշտ տիրում են, որպէս իրանց հօտերին, նոյնպէս եւ մերձաւոր ժողովուրդներին: Մարդկութեան առաջին տիրապետողներն եղել են հովիւները: Մեր Հայկ նահապետը նոյնպէս մի քաջ հովիւ էր:

Տարօնի եւ Վասպուրականի հայր եւ հովիւ էր եւ երկրագործ. նա վարում էր որպէս չուական, նոյնպէս եւ հաստատարնակ կեանք:

Իր գիւղերում, գետնափոր խրճիթների մէջ, նա ապրում էր որպէս գազանը իր որջում. իր արտերի մէջ նա զինուորված էր բաճով եւ մանգաղով. իր լեռների արօտներում նա զինուորված էր հրացանով եւ թրով: Այսպիսի երկակենցաղ ապրուստը տուել էր նրան երկերեսանի քնաւորութիւն, — նա մի եւ նոյն ժամանակ նուաճեալ ժողովուրդ էր հպատակի բոլոր համբերութեամբ, եւ մի եւ նոյն ժամանակ կատաղի ապստամբ էր, եթէ միջոցները կը նպաստէին նրան:

Այս էր պատճառը, որ Կարօն շատ անգամ ասում էր՝ այս ժողովրդից կարելի է մի բան սպասել. նա բոլորովին մեռած չէ. նա մի օր կը գցէ իր պարանոցէն քրդի լուծը:

Կարօի գուշակութիւնը անհիմն չէր: Շատախի, Սասնոյ եւ Մոկաց երկրի հայերը, որոնք իրանց կենդանաւարութեամբ չէին զանազանվում քրդերից, բոլորովին ազատ էին եւ ինքնակալ: Երանք շատ անգամ միանալով քրդերի հետ, թալանում էին այս եւ այն երկրները. եւ զարմանալին այն է, որ չէին խնայում մինչեւ անգամ իրանց ազգայիններին: Սասնոյ հայը երբէք իր պատեանը չէ դնում մերկացուցած խէնջարը առանց նրան թաթախելու հակառակորդի արեան մէջ: Նա շատ դժուարութեամբ է գործաշում իր սուրը. իսկ երբ սուրը մերկացաւ պատեանից, գործը վճռուած է. նա պէտք է կոտորէ:

Այս երկրում, որքան ես նկատում էի, իւրա-

քանիւր հայի սիրալը նմանում էր կիսահանգած  
օջախի, որքան բրբրում ես մոխիրը, նոր եւ նոր  
կայծեր են յայտնւում: մի փոքր վառելու նիւթ,  
մի բորբոք—եւ ահա բռնկեց կրակը . . .

Վէրքն այնքան փտանգաւոր չէ, երբ վիրա-  
ւորը զգում է նրա ցարք.— դա կենդանութեան  
նշան է: Տարօնի եւ Վասպուրականի հայը իսպառ  
թմրած չէր, նա իր սրտի մէջ զգում էր վէրքերը,  
հասցրած նրան բռնութեան կոպիտ ձեռքից:  
Այս պատճառով նա միշտ անուցանում էր իր  
սրտի մէջ վրէժխնդրութեան դառն թոյնը: Ոչ  
այնքան հայրենասիրութիւնը, ոչ այնքան անձ-  
նասիրութիւնը դրգում էր նրան դէպի մի այս-  
պիսի միտք, որքան իր եկեղեցու, իր սրբութիւն-  
ների հալածանքը մահմեդական աղգբերից: Հայը  
ամեն բանի համբերում է, ամեն թշուառութիւն  
տանում է, բայց նա համբերել չէ կարող, երբ  
բռնաբարւում է նրա եկեղեցին, նրա միակ սրբ-  
բարանը: Եկեղեցին հայի կեանքի նպատակն է  
եւ նրա բարձրագոյն իդէալը:

Կարօն լաւ էր հասկացել հայի սրտի այս  
ամենազգալի կողմը, եւ նրա տեսութիւնը Բար-  
դուղիմէոս առաքելոյ վանքի վանահօր հետ ու-  
նէր մի գաղանի խորհուրդ, որ կապված էր իր  
նպատակների հետ: Ես այս չէի գիտեմնալ, եթէ  
մի գէպը առիթ չը տար ինձ կիսով չափ տեղե-  
կանալ նրա դիտաւորութեանը:

Կարօն, որպէս յայտնի է մեր ընթերցողին,  
իր ընկերների հետ գնաց Բարդուղիմէոս առա-  
քելոյ վանքը, խոստանալով, թէ կը վերանդառնայ

ոչ աւելի քան մի օրից յետոյ, Բայց ահա մի  
շարաթ անցաւ այն օրից, նրանից ոչինչ լուր  
չը կայ Յերունի որսորդը այս մասին խիստ ան-  
հանգստութեան մէջ էր, չը գիտէր ինչ բան ար-  
գելք եղաւ նրանց վերագարձին: Մի գիշեր դեռ  
նոր էր պատել մութը, յայտնվեցաւ մի գրաբեր,  
բոլորովին քրդի ձեւով հագնված, նա տուեց  
ծերունի որսորդին մի նամակ: Ես այն ժամանակ  
հասկացայ, թէ նա գիտէր կարգալ: Իմանալով  
որ նամակը կարօրցն է, նա անհամբեր կերպով  
սկսեց կարգալ: Ես նստած էի նրա մօտ: Նա-  
մակի պարունակութեան մասին նա ինձ ոչինչ  
չը յայտնեց, կարծես, բոլորովին մոռացաւ իմ  
գոյութեան մասին: Միայն վերջացնելով ընթեր-  
ցումը, նա խոյն հրամայեց Սըհէին իր ձին  
թամբել, եւ ասաց Մարօին շուտով իր զէնքերը  
բերէ: Այսպիսի երեւոյթները ծերունի որսորդի  
տնակում սովորական լինելով, Մարօն ամենայն  
հանգարտութեամբ գնաց հօր զէնքերը բերեց,  
եւ մինչեւ անգամ չը հարցրուց՝ հայր, ո՞ւր ես  
գնում, երբ նա նստեց ձին եւ բակից դուրս էր  
գնում: Այդ ժամանակ միայն ծերունին տեսաւ ինձ  
եւ ասաց.

— Ես կը վերագառնամ մի քանի օրից յետոյ:  
Գրաբերը գնաց որսորդի հետ:

Երբ ես մտայ սենեակը, Մարօն սովորական  
ժպիտը երեսին ինձ ասաց.

— Մենք էլի՛ մնացինք մենակ . . .

Բայց ես այնքան խռովված էի ծերունու անա-  
կնկալ հեռանալով, որ ոչինչ չը պատասխանեցի:

Մարօի ուրախ ժպիտին: Նա, երեւի, վիրաւոր-  
վեցաւ իմ սառնասրտութեամբ, եւ մի գեղեցիկ  
խոփու գործելով իր սիրուն երեսի վրայ, ասաց.

— Դու չտր մարդ ես, Յարհատ:

Մարօն էլ չը նայեց իմ վրայ, ծիծաղելով  
սենեակից դուրս վազեց: Ես մնացի միայնակ,  
Իմ խառվութիւնը հետզհետէ սաստկանում էր:  
Ծերունի որսորդի վարմունքը չափազանց տան-  
ջում էր ինձ, որ նա արժան չը համարեց հաղոր-  
դել եւ ոչ մի բառ Վարօի նամակի պարունակու-  
թիւնից, լաւ գիտցած լինելով, որ ամենայն տե-  
ղեկութիւն նրա մասին որքան իր համար, նոյն-  
քան եւ իմ համար ուրախալի էր: Ի՞նչու նա  
գրկեց ինձ այդ ուրախութիւնից: Ի՞նչու չը գի-  
տենալ ինձ թէ ո՞ւր մնաց այն մարդը, որին ոչ  
միայն յարգում էի ես, այլ եւ սիրում էի:

Մինչ ես այս վրդովմունքի մէջ էի, աչքս  
գարձրի դէպի այն կողմը, ուր նստած էր ծերունի  
որսորդը. տեսայ մի թուղթ ընկած էր այնտեղ.  
Վտանում եմ, — նոյն նամակը:

Ծերունին սաստիկ շտապելով, մոռացել էր  
իր հետ վեր առնել նամակը: Իմ ուրախութեանը  
սահման չը կար. ես մի քանի բոպէ միայն երե-  
խայի հրճուանքով շրջում ու շրջում էի ձեռ-  
քումս երկծալ թերթը, սրի չորս երեսների վրայ  
սպիտակ տեղ չէր մնացել: Ամբողջապէս գրը-  
ված էր:

Վարօն տէր Թօդիկի դպրոցից փախչելու ժա-  
մանակ այնքան չէր սովորած, որ գրել գիտենար:  
Իսկ այնուհետեւ սրտեղ ուսել էր նա: Ես առաջ

էի կարգում նամակը, միայն նայում էի նրա վրայ: Երեւում էր, գրիչը խիստ ճարպիկ եւ համարձակ կերպով վազել էր առդերի վրայ, ուր տառերի իւրաքանչիւր գծերից երեւում էր մի հաստատուն ձևը: Ի մտքի ամբողջում, որ գիտէ տիրապետել գրչին, որպէս իր սրին:

Որքան կարգում էի նամակը, այնքան աւելի գրգռւում էր իմ հետաքրքրութիւնը: Կարօն նոյն էր մնացել իր գրութեան մէջ, ինչ որ էր իր խօսակցութեան ժամանակ: Նա խօսում էր խիստ պարզ, առանց գեղարանութեան եւ հասարակ լեզուով: Նրա պարբերութիւնները շատ կարճ էին, մի եւ նոյն ժամանակ հասկանալի եւ խորախորհուրդ: Իր նամակի մէջ մնացել էր նա մի եւ նոյն ոճով: Ինձ առաջին անգամ պատահում էր տեսնել, որ մարդը գրում է այնպէս, որպէս խօսում է: Բայց ինչու իմ վարժապետը չէր գրում այնպէս, որպէս մարդիկ խօսում են: Նրա գրածն ինձ համար մնում էր միշտ հանելուկ, չէր կարելի հասկանալ, կարելի էր միայն գուշակել, թէ ինչ էր ուղում ասել:

Կարօի նամակի մէջ եւս մի քանի տեղեր մնացին ինձ անբացատրելի. նրանց միջին այլարանական ձեւը, որպէս երեւում էր, պարունակում էր իր մէջ մի գաղտնիք, որ յայտնի էր միայն այն մարդուն, որի անունով ուղարկված էր նամակը:

Ես կը բերեմ մի քանի կտորներ նոյն նամակից, որ մինչեւ այսօր չեմ մոռացել, որ եւ երբէք մոռանալու չեմ:

Բարդուղիմէոս առաքելոյ վանահօր հետ տեսնուեցայ: Ես գտայ նրան այնպէս, որպէս յոյս ունէի: Ամեն ինչ պատրաստ էր: Այն արեղային կարելի է կոչել մարդ, որ իր խօսքի տէրն է, եւ ոչ վարդապետ: Հազուագիւտ բացառութիւն: Մի ամիս առաջ նա սկսել էր ծախել վանքի աւելորդութիւնքը, որպէս պատուիրել էի ես, եւ գոյացած գումարը բաւականացել էր գնելու Գրքիւն: Խեղճ գիւղացիներից շատերը սոխ կտորելու դանակ անգամ չունէին իրանց տանում: այժմ նրա վիճակի մէջ ամեն տղամարդ գէնքեր ունէ: Բոլորը վանահօր շնորհիւն է: Վանքը կը լինի գլխաւոր ամրոցը. նրա գիւղքը եւ ամբութիւնը յարմարութիւն ունեն այդ կոչմանը: Ինքը վանահայրը կառավորող է իր վիճակի հաղորակեցիներին: Հասրիստանու կախում նա արդէն ցոյց տուեց, թէ ինքը ընդունակ է այս գործին:

Հասրիստան կոչում էր Բարդուղիմէոս առաքելոյ վանքի մօտ մի դաշտ, ուր քանի տարի առաջ պատահեց մի արիւնահեղ կռիւ հայերի եւ քրդերի մէջ արօտամարդերի սահմանների պատճառով: Քրդերի մի նոր ցեղ, որ գաղթել էր այստեղ Մարգաւառի կողմերէց, չէր թողնում հայերին արածացնել իրանց հօտերը Հասրիստանում, որ սկզբանէ հայերի սեպհականութիւն էր: Աճճը վճռուեցաւ սրով, եւ յաղթութիւնը մնաց հայերի կողմը:

Մի քանի տողերից յետոյ Վարօն շարունակում էր.

«Վանահօր հետ—դարձեալ Բարդուղիմէոս  
առաքելոյ—մեր խորհրդակցութիւնից երեւցաւ,  
որ հակառակ կողմի ուժը աւելի զօրաւոր է, քան  
թէ մենք կարծում էինք: Երկու եղբայրներ՝ Օմար  
եւ Սաման աղաները, որոնցից իրաքանչիւրը ջա-  
լալիների շեղի գլխաւորութիւնը յափշտակելու  
պատճառով թշնամացել էին, կրկին հաշտուել  
են: Զալալիների բաժանված կուսակցութիւնները  
միացել են: Շիկակների Մահմուդ աղան, իր աղ-  
ջիկը հարսնութեան տալով Ռափանդների Ղադիր  
աղայի որդուն, երկու զեղերի մէջ բարեկամա-  
կան յարաբերութիւնները նորից սկսել են: Միւս  
կողմից, Մուքրիների եւ Մամրքանների մէջ հին  
թշնամութիւնը նորոգվել է: Ռաշիդ աղայի կինը,  
երկար սպասելով, թէ իր սպանված ամուսնի եղ-  
բայրները չը կամէին առնել նրա արեան վրէժը,  
քանի որ առաջ ծպտեալ հագուստով հանդի-  
պում է իր տղամարդի սպանողին, եւ ինքը կինը  
վրէժխնդիր է լինում: Գու գիտես, որ այդ երկու  
ստրկները յիշեալ երկու զեղերի գլխաւորներն են:»

Ես զարմանում էի, թէ Կարօն ինչու է  
ուրախանում քրդերի զանազան զեղերի մի-  
մեանց հետ թշնամական յարաբերութիւններ ու-  
նենալու մասին, եւ կամ ինչու է տխրում, երբ  
նրանք հաշտվում են: Բայց վերջին դէպքի մա-  
նրամասնութիւններն իմացայ ես յետոյ: Ռա-  
շիդ աղան Մամրքանների զեղապետի որդին էր:  
Նրա իսկական անունն էր Կրպօ. կոչվեցաւ Ռա-  
շիդ (քաջ) իր զարմանալի քաջագործութիւնների  
համար: Նա սպանվեցաւ Մուքրիների զեղապետի

որդու նենգութեամբ: Ռաշիդի կինը ուխտել էր չը վեր առնել իր երեսից սգաւորի սեւ քօղը, մինչեւ իր ամուսնի գերեզմանը չը հանգստացնէ: Կանչանակում է քրդի լեզվում՝ մինչեւ սպանվածի արեան վրէժը չառնվի: Այս նպատակով նա սրնուցանում էր իր տասներկու տարեկան որդուն, որ առնէ հօր վրէժը եւ կատարէ մօր ուխտը: Որդին մեռնում է կարճատեւ հիւանդութիւնից յետոյ: Մայրը մի քանի օր անհետանում է իր չաղրից: Նրան գտնում են իր տղամարդի գերեզմանի մօտ այն ժամանակ, երբ իջնում է իր ձիուց, եւ ոտիսի կտրած գլուխը դնելով ամուսնի շիրիմի վրայ, ասում է՝ «այժմ թող հանգստանան քո սկերքը» . . .

«Աերջին օրերումս Ուշնիի մէջ պատահած անցքը բաւականին հրաշխաւորում է ասորոց կաթողիկոսի գաշնագրութիւնը մեզ հետ, — շարունակում էր նամակագիրը:— Այնտեղի շէյխը քանդել է տուել մի հին ասորոց վանք, նրա քարերը իր բաղնիքի շինտածքի համար գործ ածելու: Այդ այն վանքն է, ուր նեստորականները վաղեմի ժամանակներից սովորութիւն ունէին իրանց եպիսկոպոսների մարմինները թաղելու: Կաթողիկոսը, որպէս լսում եմ, բոլորովին կատաղած է այս բարբարոսութեան պատճառով: Այսօր նրա սուրհանգակը ինձ մօտ եկաւ: Կաթողիկոսը կանչում է ինձ: Առաջտեան ճանապարհ կընկնեմ գէպի Զօլամէրիկ: Յարմար առիթ . . . պէտք է օգուտ քաղել գրանից» . . .

Ասորոց Կաթողիկոսը նստում էր ձօլամէրիկի

Կօճանիս կոչված գիւղում, որ սահմանակից էր  
Հաղարակին: Ասորոց մի ցեղ, որ կոչվում էր Զօլօ,  
անյիշելի ժամանակներից, պատսպարվելով ձօ-  
լամէրկի լեռների մէջ, պահպանել էր իր ան-  
կախութիւնը, որպէս լազգիները Կաղստանում:  
Վաթողիկոսը, որ կոչվում էր Մար-Շիմօն, էր  
իր ցեղի քահանայապետը, մի եւ նոյն ժամանակ  
նրա մարմնաւոր իշխանը: Նա ունէր մինչեւ  
երեսուն հազար զէնք բռնող տղամարդիկ, մի  
խօսքով, նրա ժողովուրդը բոլորը պատերազմող-  
ներ էին: Վաթողիկոսը ինքը սուր էր կրում ձօ-  
լամէրկը, զետեղված Կորդուաց լեռների մէջ, մի  
փոքրիկ, փակեալ Զինաստան էր, որի մուտքը կապ-  
ված էր օտարների համար: Այնտեղ բնակվում  
էին միայն Զօլօներ եւ հայեր: Եթէ ուրիշ մարդ  
այնտեղ մտնէր, առանց կաթողիկոսից թուղթ  
ունենալու իր ձեռքում, ամեն պատահող Զուլօն  
պատրաստ էր նրան սպանելու: Բոլոր ժողովուրդը  
անասնապահներ էին. նրանց կեանքի պէտքերը  
գոյանում էին իրանց հօտերից: Զօլօներն ամե-  
նեւին յարաբերութիւններ չունէին դրսի հետ.  
Նրանք կենտրոնացած էին իրանց երկրի մէջ: Զօ-  
լօն յայտնի է իր դիւրագրգիռ, բարկացոտ եւ  
յանդուզն բնաւորութեամբ. նա մի եւ նոյն ժա-  
մանակ բաջ եւ բարի մարդ է: Բայց Կարօն ինչ  
գործ ունէր միանալու այդ վայրենիների հետ.  
Ինչ դաշնադրութիւն էր, որ նա կապում էր ա-  
սորոց պատրիարքի հետ . . .

«Այստեղ (Բարդուղիմէոս առաքելոյ վան-  
քում) ես ստացայ մի քանի նամակներ: Ն. Կ. Վ.

գրում է Վարազայ վանքից, թէ գործերը այստեղ վատ են. քրդերի մի նոր արշաւանք թալանեց Հայոց-Ձորը: Արտամէտ գիւղը իր ընդդիմադրութեան համար մոխիր դարձաւ: Հրձիգութիւնը թշնամիների կողմից պատահել է գիշերով: Աւելի քան հարիւր հոգի — ծերունիներ, երեխաներ, փախչելու կարողութիւն չունեցող մարդիկ, — այրվել են կրակի մէջ: Այս թէեւ խիստ տխուր, լուրը ինձ ուրախութիւն պատճառեց: Հայոց-Ձորը գոնեա այժմ կը զգայ իր սխալը. . . նա երկար չէր ուզում մասնակից լինել ընդհանուր փոշին . . . Բժշկութեան մասին մտածում են այն ժամանակ, երբ հիւանդն ընկած է. . .

Վերջին տողերը կարգալու ժամանակ ես սարսափեցայ: Կարօի խտասրտութիւնն անցնում էր չափից: Աւելի քան հարիւր ծերեր, երեխաներ այրվում են հրդեհի բոցերի մէջ, նա ուրախանում է, որովհետեւ այս դէպքից կարող էր նա օգուտ քաղել իր դիւակաճ նպատակների համար: Իսկ նպատակը, — դեռ ինձ յայտնի չէր:

«Մուշի եւ Բաղէշի կողմերից ոչինչ լուր չը կայ: Գատվանի ռայխը (տանուտէրը) գրում է՝ «այստեղ ամեն ինչ պատրաստ է»: Շատախում նոր վրդովմունք է ծագել Ժողովրդի մէջ: Հոգեոց վանքի վարդապետը չէ գազարում իր վաղեմի նենգութիւններից: Ի՞նչ պէտք է անել այդ Վասակի հետ. ուղարկեցէք այնտեղ Մըհէին, իմ կարծիքով նրա գործն է հանգուցնել սեւագլուխ սատանային» . . .

Մըհէն, ծերունի որսորդի գնացած գիշերի

միւս առաւօտը, էլ չհրեւցաւ: Քանի որից յետոյ մենք լսեցինք՝ Հոգւոց վանքի վարդապետին իր խուցի մէջ սպանել են: Երկու օր չանցաւ, այս լուրը մեզ հասնելէն, կրկին յայտնվեցաւ Մըհէն:

«Ստանին ուղարկեցի Բազէշի եւ Մուշի կողմերը այնտեղի գրութիւնը իմանալու համար: Սագօն կանցնի Խնուսից դէպի Արզրում, Բայազէզ, եւ կը վերագառնայ Խոյի ճանապարհով: Զաւլաղը եւ Մուրաղը գնացին Մոկաց եւ Սանայ կողմերը: Իւրօքանչիւրի համար նշանակվել է մի ամիս ժամանակ, իրանց ճանապարհորդութիւնը, հետազօտութիւնները եւ կարգադրութիւնները վերջացնելու համար: Ամեն մէկին ես տուել եմ հարկաւոր հրահանգները: Այսօր յուլիսի քսանն է, կը նշանակէ, մինչեւ օգոստոսի քսանը ըլլորը կրկին կը հաւաքվին Բարդուղիմէոս առաքելոյ վանքումը, իրանց գործունէութեան համարը տալու:»

Զաւլաղը եւ Մուրաղը այն երկու քրդստանցի տղամարդիկն էին, որոնց ես առաջին անգամ տեսայ արարական մինարէթում: Գրանք այն օրից անցայտացած էին, իսկ այժմ երեւում էր, որ դարձեալ խառն էին Կարօի գործերի մէջ:

«Իսկ դու, ծերունի ընկեր, այս նախկը քեզ հասածին պէս, կը գնաս Եզիզների ցեղապետ Միր-Մասումի մօտ, դա քո հին բարեկամն է, այս պատճառով որոշվեցաւ, որ դու կապես նրա հետ հարկաւորած պայմանները: «Անտառը կտորորդ կացինի կոթը փայտից են շինում: Քուրդը քրդէ դէմ— մի լաւ գործիք է մեր ձեռքում: . . .

Եզիզները, եթէ ընթերցողը յիշում է, բոլոր-  
գերի այն ցեղն էին, որ կրօնքով տարբեր էին  
իրանց մահմեդական ազգայիններից, եւ միշտ  
հալածված նրանցից: Այդ միակ ցեղն էր, որ  
հաշտ էր հայերի հետ եւ աւելի բարեկամ, թէեւ  
նա ունէր իր ազգի բոլոր աւազակային յատկու-  
թիւնները: Մահմեդական բրդերը համարում էին  
եզիզներին հեթանոսներ եւ խիստ ատելու-  
թեամբ էին վարվում նրանց հետ: Եզիզները  
ներկայացնում էին մարական ցեղի սկզբնական  
տիպը, մնացած իր մոգական սովորութիւննե-  
րով: Կարգալով Կարօի գրածները եզիզների մա-  
սին, ես այժմ գիտէի ծերունի որսորդի ճանա-  
պարհորդութեան նպատակը:

Մի քանի տողեր նամակի մէջ վերաբերում  
էին ինձ:

«Փարհասի մասին անհանգիստ եմ. ես նրան  
թողեցի հիւանդ, չըգիտեմ ինչպէս է այժմ  
նրա առողջութիւնը: Ի հարկէ, նրա մասին ինձ  
տեղեկութիւն կը տաք: Խնամեցէք այդ մանուկ  
վագրին, նրա մէջ շատ հարուստ, բայց գեւ չը  
մշակված ուժեր կան» . . .

Ալերջին տողերը կարգալու ժամանակ ար-  
տասուքը սկսեց թափվել իմ աչքերից, ես չը կա-  
րողացայ շարունակել ընթերցումը:

## ԻԹ.

### Մ Ը Զ Է Ի Ա Ր Շ Ա Ի Ա Ն Ք Ը

Կարօի իսկական նպատակը դարձեալ մնում էր ինձ համար մթութեան մէջ: Ես չը գիտէի՝ ինչ էր կամենում անել նա. ինձ հասկանալի չէր՝ ինչու համար նա իր ընկերներին այս կողմ եւ այն կողմ էր ուղարկում: Եւ իր՝ Կարօի ասորոց կաթողիկոսի—այն կիսաօլայրենի զինուորի եւ քահանայապետի—մօտ գնալը արդեօք ինչ խորհուրդ ունէր: Կարօն այն մարդերից չէր, որ օգի մէջ ամբողջ կառուցանէ, կամ գարտակ ցնորքների ետեւից ընկնէ: Նա կը ցանէր այնտեղ, որտեղից հաստատ գիտէր, թէ հնձել կարող է: Իսկ այդքոյոր զգուշաւոր եւ գաղտնաճածուկ նախապատրաստութիւններից ինչ օգուտ պէտք է քաղէր նա:

Ահա մտքեր, որոնք ինձ պաշարեցին նամակի ընթերցումից յետոյ:

Կարօին ես ճանաչում էի այն ժամանակ, երբ նա մի լուռ, մտախոհ, մի եւ նոյն ժամանակ դէպի ամեն վատութիւն ռիսերիմ պատանի էր:

Երբ նա մեր դպրոցից անյայտացաւ, այնուհետեւ նրա մասին ոչինչ չը գիտէի, թէ ո՞ւր գնաց նա, ինչով էր պարապում այնքան ժամանակ եւ ինչ առիթով կրկին վերագարձաւ: Միայն հասարակական կարծիքը նրա մասին լաւ չէր խօսում. նրան համարում էին մի համարձակ սրիկայ եւ աւելի ոչինչ:

Բայց մի մարդ, որ միշտ անբախտի եւ թշուառի բարօրութեան համար էր մտածում, մի մարդ, որ աշխատում էր նեղեալի հանգստութեան համար, կարո՞ղ էր սրիկայ լինել:

Ներքին ձայնը պատասխանում էր՝ — ոչ:

Իսկ մի եւ նոյն ժամանակ Կարօի անսահման բարեմտութեան հետ խառն նկատվում էին արարմունքներ, որոնք բարի մարդու գործեր չէին: Մարօի յայտնած գաղտնիքը՝ շքանդուած մատուռի մօտ, Աւանլի-Վարայի մէջ, այն նուիրական ծառերի հովանու տակ, — թէ որպէս Կարօն սպանել էր իր ընկերներից մէկին, մի հընդկացի երիտասարդի, ամենափոքր կասկածանքի պատճառով, — այս սարսափելի եղեռնագործութիւնը ես տակաւին մոռացել չէի: Իսկ այժմ իր նամակի մէջ նա ծերունի որսորդին առաջարկում էր մի ուրիշ չարագործութիւն՝ — «հանգուցնէ՛:» Հողուոց վանքի վարդապետին, կտրել մի օճեալ գլուխ, եւ կիսախելագար Մըհէն պէտք է կատարէր դահճի պաշտօնը:

Բայց կը մասնակցէ՞ ծերունի որսորդը մի այսպիսի արիւնոտ գործին, մտածում էի ես:

Ներս մտաւ Մարօն ծիծաղելով, նա ձեռքը

սեղմել էր իր կուրծքի վրայ, կարծես, աշխատում էր պահել իր ծիծաղը, թեքթեքվում էր, ուզում էր խօսել, բայց դարձեալ զսպել իր ծիծաղը չէր կարողանում, այնպէս ծիծաղելով ընկաւ օթոցի վրայ, համարեա թէ մտքեցաւ:

— Ի՞նչ է պատահել, հարցրի ես:

Նա չը կարողացաւ պատասխանել:

Յանկարծ դռները շառաչմամբ յետ գնացին, լսելի եղաւ Մըհէի ձայնը.

— Ո՞ր սատանան տարաւ իմ տրեխները:

Վիթխարի կերպարանքը յայտնվեցաւ սենեակի մէջ, որպէս մարմնացած կատաղութիւն: Նա իր ձեռքում բռնած ունէր մի ահագին լախտ, որի գնդաձեւ գլխի վրայ մեխել էր, իր կեանքի մէջ գտած, բոլոր բեւեռները:

Մարօն սկսեց հաւատացնել Մըհէին, թէ ինքը նրա տրեխների կորուստի մէջ յանցաւոր չէ, թէ նա շատ ցաւում է, որ այսպէս էր պատահել: Եւ աւելացրուց, տրեխները բոլորովին հում կաշուց շինված լինելով, եւ որովհետեւ ինքը Մըհէն չէր հագնում նրանց, այլ քաշ տալով ախոռի պատից, պահում էր դատիկ օրուայ համար, տրեխները բոլորովին չորացել եւ կծկուել էին: Երբ Մըհէն գրեց նրանց ջրի մէջ, որ փափկեն, լայնանան, որ կարողանայ հագնել, անխիճված շունը օգուտ քաղելով Մըհէի բացահայտութիւնից, գողացաւ տրեխները, եւ ինքը Մարօն այս բոպէխ տեսաւ, որ նա բակի մէկ անկիւնում նստած, դեռ վայելում էր իր անուշ ընթրիքը:

Մարօն այս բոլորը պատմեց մի այնպիսի

հեղինական ոճով, որ աւելի շարժեց Մըհէի կատաղութիւնը, եւ աւելացրուց.

— Դու խօս գիտես, Մըհէ, որքան ես սիրում եմ քեզ: Ես այնպէս բան կանեմ քո տրեխների հետ:

— Ես գիտեմ . . . քրթմնջաց վիթխարին, եւ իր վայրենի աչքերը ուղղելով սիրուն օրիորդի երեսին, դուրս գնաց սենեակից:

— Իմանում ես, Փարհատ, ախար այդ յիմարը սիրահարված է իմ վրայ, դարձաւ Մարօն գէպի ինձ:

— Չէ կարելի քեզ տեսնել ու չը սիրահարվել: Նա որպէս թէ չը լսեց իմ խօսքը:

— Խեղճ տղայ, նա մինչեւ այսօր պահում է իր ծոցի մէջ իմ հին գուլբաների մի հատը: Քանի տարի է: Շատ անգամ տեսել եմ, ինչպէս հանում է նա ծոցէն, մտիկ է անում, ուրախանում է ու սեղմում է շրթունքի վրայ: Մի անգամ հիւանդ էի ես. ձմեռ էր, խեղճը նստում էր իմ սենեակի դրանը, ամբողջ գիշերը չէր քրնում: Պրան ճեղքից ականջ էր դնում, թէ ինչպէս շունչ եմ քաշում ես, որպէս հոգւոց եմ հանում: Շատ անգամ ես լսում էի, նա լաց էր լինում. մի այնպիսի գազանը լաց էր լինում: Դու գիտես, Փարհատ, իմ սենեակի դուռը բացվում է ուղիղ բակի մէջ. նա նստում էր ձիւնի եւ սառի տակ:

— Երեւի, նա երբեմն քաղցրիկ խօսքեր է ասում քեզ:

— Այ, չէ ասում: Նա միայն մտիկ է անում իմ երեսին, խորին կերպով մտիկ է անում, ու-

բախանում է, երբ ես նրան ուշունց եմ տալիս:

— Երեւի, դա նրան զուարճութիւն է պատ-  
ճառում:

— Հա՛, մի այդպիսի բան: Լսիր, մի անգամ  
նա ինձ ասաց՝ «Մարօ, բեր, ձեռքս քսեմ քո  
մազերին»:

— Դու բարկացա՞ր:

— Չը բարկացայ: Եթէ մի այսպիսի խօսք Սա-  
գօն ասէր, ես կը բարկանայի: Բայց Մըհէն ինչ  
որ ասէ, ես չեմ բարկանայ. նրա սիրտը խտակ  
է, նա չէ հասկանում ինչ բան է սէրը:

— Դու հասկանում ե՞ս:

Մարօն ոչինչ չը պատասխանեց, որովհետեւ  
նոյն բոպէում լսելի եղաւ շան խորին կնձկըն-  
ձոցը եւ խկոյն լռեց գիշերային մթութեան մէջ:

— Վա՛հ, այս ի՞նչ արեց, երեւի, այն յի-  
մարը շանը սպանեց, ձայն տուեց Մարօն եւ ճը-  
րագը խլեց, գուրս թռաւ:

Ես էլ գնացի նրա հետ: Եւ իրաւ, շունը ան-  
մուռնջ կերպով ընկած էր բակի մէջ. ճրագի լու-  
սով մենք տեսանք՝ նրա գլուխը Մըհէի լախտի  
մի հարուածից բոլորովին փշրվել էր եւ ուղեղը  
գուրս թափել:

— Թաղե՛մ քո սարսաղ գլուխը, ի՛նչու սպա-  
նեցիր շունը, ասաց Մարօն ցաւալի կերպով:

Մըհէն, որ դեռ կանգնած էր իր գոհի մօտ,  
ոչինչ չը պատասխանեց, մօտեցաւ բակի դրանը,  
ոտքով մի կողմ գլորեց ահագին քարը, որ դրած  
էր դրան ետեւը փականքի տեղ, եւ լախտը իր  
ուսին զննելով, լուռ ու մունջ գուրս գնաց:

— Ո՞ր է գնում նա, հարցրի ես Մարտից:

— Աստուած ոչ գիտէ նրա գլուխը: Նա երբ որ իր մահակը վերառաւ, տրեխները հագաւ, կը նշանակէ, հեռու տեղ ունէ գնալու: Թէ չէ, որջ տարին նա բորչիկ ոտքերով է ման գալիս. ոտնամանը մի ծանրութիւն է նրա համար:

— Նա հիմա էլ ոտնաման չունէր:

— Նրա համար որ, շունը կերաւ: Փակիր դուռը Ծարհատ:

Ես մօտեցայ դրանը. այն քարը, որ Մըհէն մէկ ոտքով հեռու գլորեց որպէս թեթեւ տաշեղ, ես հազիւ կարողացայ երկու ձեռքով իր տեղը դնել: Մարօն տեսնելով այդ սկսեց ծիծաղել:

— Այնպէս խօս ես էլ կարող էի մօտ մղել քարը:

— Դէ, փորձիր:

Եւ իրաւ, Մարօն աւելի թեթեւ կերպով քան թէ ես, վերառաւ ահագին քարը եւ բարձրացրուց գետնից:

— Դու ուժեղ ես, Մարօ, դրա համար էլ Մըհէն քեզ սիրում է, որ իր պէս ուժեղ ես:

— Սատկի՛ Մըհէն, ես նրան էլ չը պէտք է սիրեմ, պատասխանեց նա, երբ կրկին տեսաւ սպանլած շանը, որի ահագին գիակը պառկած էր բակի մէջ:

Միւս շները հաւաքովի էին եւ լիզում էին իրանց բարեկամի վէրքը: Կարծես, ուզում էին բժշկել նրան:

Մենք գնացինք սենեակը:

— Ես գիտեմ Մըհէն ուր գնաց, Մարօ:

— Ո՞ր գնաց:

— Չեմ ասի, վախում եմ ուրիշին ասելու:

— Ես խօսեցիս քեզ:

Ես յայտնեցի Մարօին, ինչ որ գիտէի ՄըՏէ/ճանապարհորդութեան նպատակի մասին: Նրա դէմքն ընդունեց խիտ աղօտ արտայայտութիւն եւ խօսեց բարկացող, դողդոջուն ձայնով.

— Ես հաւատում եմ, նա կանէ, նա պատրաստ է ամեն բան անել, երբ հայրս հրամայում է նրան: Ա՛խ, հայրս . . .

Նա խեղդեց իր ձայնը եւ չը շարունակեց խօսքը:

Բողբական լռութիւնից յետոյ նա ասաց.

— Գու գիտե՛ս, Ֆարհատ, ՄըՏէն մարդասպան է:

— Ո՞րպէս:

Մարօն պատմեց, թէ ՄըՏէն հաղբակեցի չէ, ինչ որ երկրից է, որի անունը մտացել է, բայց այն երկիրը շատ հեռու է: Թէ նա, ՄըՏէն, ունեցել է մի քոյր, որպէս ինքն է ասում, գեղեցիկ աղջիկ: Նրանց գիւղի աղայի տղան աչք է ունեցել ՄըՏէի քրոջ վրայ: Քոյրը յայտնել է եղբորը Աղայի տղան հայ չէ լինում, «անօրէն» պարսիկ է լինում: Մի օր քոյրը մեծակ գնում է գաշտից խոտ քաղելու, աղայի տղան նրան բռնում է, շարչարում է . . . ՄըՏէն վրայ է հասնում եւ իր դանակով նրա վիզը կտրում է, ու յետոյ թողնում է այն երկիրը, փախչում է:

Ես Մարօին պատասխանեցի, թէ այս գործի մէջ ՄըՏէն շատ յանցաւոր չէ, թէ ես ինքս այն-

պէս կը վարուէի, եթէ մէկը համարձակվէր անպատուել իմ քրոջը:

— Ես ինքս կը սպանէի մի այնպիսի տղին, եւ չէի թողնիլ, որ եղբայրս մէջ մտնէր, պատասխանեց Մարօն: — Բայց Մըհէն այստեղ էլ շատ բաներ է արել . . .

— Ի՞նչ բաներ:

— Չեմ կարող ասել, մի հարցում Հայրս պատուիրել է, որ ոչ մի մարդու չասեմ:

— Ի՞նչ էլ:

— Քեզ էլ:

Ես տեսայ, որ անկարելի էր Մարօից խօսք դուրս քաշել այս գաղանփի մասին, որովհետեւ Մարօն միամիտ աղջիկներից չէր: Ես հարցրի.

— Ի՞նչու հայրդ պահում է իր մօտ մի այսպիսի մարդասպանին:

— Նրա համար որ, նա մարդասպան է:

— Լա՛ւ է մարդ սպանելը:

— Վատ մարդուն, ի հարկէ:

Ուրեմն դու ի՞նչու Մըհէի վրայ բարկանում ես:

— Նրա համար, որ նա սպանեց շանը:

— Ետե՛ր մարդից լա՛ւ է:

— Եստ մարդերից, որոնք լծաւ են, ինչպէս քրդերը: Ետե՛ր մեր տունը պահում էր, բայց քրդերը մեր տունը քանդում են:

«Իսկ եւ իսկ հօր կասրն է» . . . անցի ես իմ մտքում:

— Վրտես, Ծարհատ, ճրքան գող են քրդերը, նրանց երեխաներն էլ գող են, հենց որ օրօրո-

ցից դուրս են թռչում, գողութիւնն են անում: Անցեալ տարի մեր հաւերի ճուտերից ամեն օր մէկը պակսում էր. էնպէս որ, տասներկու ճուտից մնաց երեքը: Ո՞վ է տանում, տէր Աստուած, Հայրս ասում էր՝ քօրքօրան (ուրուրը) է տանում: Մըհէն ասում էր՝ աղուէսն է գողանում: Ես բակի ըսոր ծակերը բռնեցի, որ աղուէսը ներս չը մտնէ. մի ծակ միայն բաց թողի, որ գալու ժամանակ բռնեմ նրան: Գիշերը նստում եմ, մտիկ եմ անում, մտիկ եմ անում, աղուէսը չը կայ: Յերեկոյ մտիկ եմ անում, ագռաուն էլ չէ թռչում մեր կուտրի վրայոյ: Բն ո՞վ է տանում ճուտերը: Մի օր տեսնեմ, մեր հարեւան քրդի աղջիկը: Գիւլին, մեր տան դռնիցը անց կացաւ, մըտաւ մարագը, կանչեց՝ ճճ. ճճ. ճուտերը նրա ձայնին սովորած էին, խկոյն դուրս վազեցին: Նա կուտ գցելով, ճուտերին հեռացրուց, տարաւ մինչեւ մեր տան մօտի խրամը, իջաւ փոսի մէջ: Խնչ սատանայ է: Ես վրայ հասայ, տեսնեմ՝ ճուտերից մէկը բռնել է, ուզում է տանել: «Տօ, սատկած Գիւլի, ո՞ւր ես տանում մեր ճուտը», ասում եմ ես ու բռնում նրա ծամերից: Նա մատները գցեց ուզում էր իմ երեսը ճանկուտել: Ես բռնեցի բողազից (շնչափողից), դրի տակս, խեղդում եմ, խեղդում, մինչեւ աչքերը դուրս թրուան: Ափսո՞ս որ, Հասօն եկաւ, ձեռքիցս առեց՝

— Մեծ էր այն աղջիկը:

— Տես, այսքան բարձր էր ինձանից: — Նա ձեռքը տարաւ դէպի գլուխը եւ կէս արշինի չափ վեր բռնեց:— Մինչեւ այսօր էլ Գիւլին ինձ հետ

որս ունի, ասում է՝ քեզ մի օր պէտք է սպանեմ:  
Հոգեմ նրա սարսաղ գլուխը, լաւ մարդու է  
սպանում. . . Ի՛նչ նրա ատամների խարջն եմ. . .

Վերջին խօսքերը Մարօն արտասանեց մի  
առանձին հպարտութեամբ: Նա շարունակեց.

— Ախար, քրդերը ամենն այսպէս են, հէնց  
որ նրանցից վախենում ես, գլխիդ նստում են:  
Մի անգամ ձեռքիդ ուժը ցոյց տուեցիր, էլ մօտ  
չեն գայ: Այն օրից մեր հաւերից եւ ոչ մէկը չի  
կորել:— Ե՛հ, ինչքան խօսեցի ես . . . հիմա դու  
կասես՝ կոտրած ջաղացի պէս չքիչքիւկում է . . .


— Չէ, ես այսպէս չեմ ասի. ես կասեմ՝ դու  
շատ լաւ աղջիկ ես:

— Իրո՞ւստ:

— Քո արեւը գիտենայ:

— Բաս բէր, ականջիդ մի բան ասեմ:

Ես ականջս մօտ տարայ նրա բերնին, նա  
ինչ որ փսփսաց, եւ ես զգացի, որ նրա ջերմ  
շրթնուկները կպան իմ երեսին . . .



# I.

## Ք Ր Գ Ո Ւ Հ Ի Ն Ե Ի Հ Ա Յ Ո Ւ Հ Ի Ն

Առաւօտեան ես զարթեցայ խիստ վաղ:

Իմ սենեակի պատուհանից տեսայ, կովերը բակումը կանգնած էին, Մարօն կթում էր նրանց: Նրա շապիկի թեւքերը ծալած էին, եւ ձեռքերի բազուկները մինչեւ արմուկը մերկ էին: Ի՞նչ գեղեցիկ էին այն լիքը, գլորիկ բազուկները: Ես ազատ աչքերով մտիկ էի անում: Գողճոցը կապած չէր, եւ շապիկի օձիքի ճեղքից երբեմն գուրս էր նայում սիրուն կուրծքը: Նա վարսակալի նման մի սեւ բան կապել էր բաց գլխին եւ նրա տակից խիտ ծամերը փռւում էին առաւօտեան հովի հետ: Մարօն երբէք չէր երեւացել ինձ այնքան հրապուրիչ, որպէս այն առաւօտ: Նա իր կարմիր շապիկի մէջ, որ իջնում էր մինչեւ ոտքերը, ներկայացնում էր հովուական կեանքի մարմնացած անմեղութիւնը:

Նա վերջացրեց իր գործը եւ սկսեց կովերը քշել գէպի նախիրը:

Խաթունը — ծերունի որսորդի անակալու

պառաւր, — զբաղած էր թոնրի վառելով: Հասօի կինը, որսորդի հարսը, ծածկեալ ուրուականի նրման, լուռ եւ մունջ, պտըտում էր թոնրի շուրջը, պառաւի գանաղան պատուէրները կատարելով: Այնքան ժամանակ ես չը կարողացայ տեսնել այս կնոջ երեսը, կամ լսել նրա բերանից մի խօսք: Նա ոչ ոքի հետ չէր խօսում, բացի Մարօից եւ բացի իր ամուսնից, այն եւս այն ժամանակ, երբ երկուքը միասին էին, եւ երրորդ անձն չը կար նրանց մօտ:

Տանեցիներից ուրիշ մարդ չէր երեւում:

Միայն Հասօի երեխաները բաշ ընկած մօր փեշերից, ճըլ-վըջում էին, պահանջում էին մի բան ուտելու: Մայրը խփում էր նրանց գլխին, պատուիրում էր, որ սուս կենան եւ համբերեն:

Ես նկատեցի, Մարօի խօսքը բոլորովին ուղիղ էր, որ նա ասաց ինձ իր հօրը ճանապարհ գնելէն յետոյ՝ «մեհր էլի մնացինք մենակ» . . .

Եւ իրաւ, ծերունի որսորդը գնաց Եգիպտոսների ցեղապետի մօտ: Մըհէն սատանայի պէս անյայտացաւ: Հասօն իր ագարակից տուն չէր գառնում: Նա պարապված էր իր գաշտային գործերով: Պառաւ Խաթունը թոնիրը վառելէն եւ կերակուրները եփելէն յետոյ, նստում էր չարգախի տակ, այն հօլ տեղում բուրգ էր մանուում: Հասօի կինը հանգստութիւն չունէր իր երեխաների ձեռքից: Էլ ո՛վ էր մնում, — ես ու Մարօն, որ բաւականին ազատ ժամեր ունէինք, խօսիր, ծիծաղիր, որքան բէֆդ է: Մարօն շուտ գարձաւ նախիրից: Նա մօտեցաւ, իմ սենեակի պա-

տուհանից նայեց, որ իմանայ, ես զարթնել եմ,  
թէ ոչ, երբ տեսաւ ինձ հագնիւած, ներս մտաւ  
Նրա դէմքը բաւականին տխուր էր:

— Գիտես, Ֆարհատ, ասաց նա, — երբ կովերը  
հասցրի նախիրին, յետ դառնալու ժամանակ  
անցայ գիւղի միջով: Ամեն տներից գալիս էր գա-  
թայի ու նազուքի հոտը, ամեն տեղ հալվայ էին  
շինում: Բոլորը պատրաստուած են ուխտ գնալու:

— Ո՞րտեղ:

— Չե՞ս իմանում: Այսօր հինգշաբթի է, էգուց  
ուրբաթ, միւս օրը . . .

— Շարաթ:

— Հնչո Շարաթ օր սուրբ Աստուածածնի ուխ-  
տի օրն է: Ողջ Հաղբակը այնտեղ կը լինի:

— Սալմաստն էլ այնտեղ կը լինի, պատաս-  
խանեցի ես:

Իրաւ որ, նրա տօնին այնտեղ հաւաքուած  
էր մեծ բազմութիւն սալմաստեցի եւ հաղբա-  
կեցի ուխտաւորների: Չը գիտեմ ինչու Աստուա-  
ծածնի անունը յիշեցրեց իմ մանկութիւնը: Այն-  
տեղ ամեն տարի տանում էր ինձ մայրս, քոյ-  
րերիս հետ, տօնական հանդէսների ժամանակ:

— Բն, ամենը գնան, ես մնամ, հարցրուց  
Մարօն:

— Դու էլ գնայ:

— Ո՞ւմ հետ: Հայրս տանը չէ: Մըհէն կորաւ:  
Եղբայրս այսպիսի բաների գլուխ չունի: Ո՞վ կը  
տանէ ինձ:

— Ես:

— Դու հանաք ես անում, Ֆարհատ:

Ես հաւատացրի Մարօին, որ իմ խոստմունքը կատակ չէր, թէ ես բոլորովին մոռացել էի, որ այս շարաթ Աստուածածնի տօնն է, հիմա որ իմացայ, ես ինքս մեծ ցանկութիւն ունեմ այնտեղ գնալու, որովհետեւ գիտեմ, ուխտաւորների թւում կը լինեն մեր բաղաբացիներից շատերը, գուցէ նրանց մէջ կը գտնեմ իմ բարեկամներին, որոնցից այնքան ժամանակ բաժանված էի:

— Կարելի է, տեսնես մօրդ եւ քոյրերիդ:

— Շատ կարելի է:

— Լաւ: Հիմա ինչ եմ ուզում անել, Պարհատ, շարունակեց Մարօն ծանր կերպով: — Առանց եղբօրս կամքին ես չեմ կարայ գնալ, դու պէտք է խնդրես Հասօից, որ ինձ թող տայ քեզ հետ գալու: Գու ասա նրան, թէ ինքդ ուզում ես ուխտ գնալ, ինձ էլ տանում ես քեզ հետ Հասօն քո խաթրը շատ ունի, քո խօսքը չի կտորի:— Այսպէս կասես, հա՛:

— Հա՛, այդպէս: Ես այս բոպէիս կերթամ Հասօի մօտ, քեզ համար հրաման կառնեմ:

Մարօն փաթաթվեցաւ ինձ որպէս երեխայ, որին խոստանում են բազարից քիչմիշ բերելու: Նա թողեց ինձ եւ դուրս վազեց, ասելով:

— Սպասիր, մի քիչ կաթ բերեմ խմիր, քաղցած մի գնա:

Նա շուտով բերեց մի մեծ թասով կաթ եւ մի կտոր հաց: Նախաձաշիկս անելէն յետոյ, ես գիմեցի դէպի Հասօի արտը:

Հասօն սկզբում շատ դժուարացաւ մեր ուխտ

գնալու մասին, ասելով, թէ տունը բոլորովին  
կը մնայ անտէր, թէ տունը առանց տղամարդի  
հսկողութեան թողնել չէ կարելի, որովհետեւ  
ամեն գիշեր գողութիւններ են պատահում. թէ  
նա, Հասօն, պէտք է ստիպուած լինի թողնել դաշ-  
տը եւ գնալ տանը պառկելու. այն ժամանակ նրա  
ցանքերը կը մնան առանց հսկողութեան. նա  
աւելացրուց, թէ անիծած քրդերն իստակ բար-  
բարոսներ են, որքան կարողանում են վերաւնել  
գողանում են, իսկ մնացածը փչացնում են եւ  
այնպէս հեռանում: Եւ նա այս սպառնալով ամ-  
բողջ գիշերը չէ քնում, հենց հրացանը գողին  
դրած, նստում է եւ բաց աչքերով հսկում է.  
աչքդ խփեցիր, բոլորը կը տանեն: Եւ վերջացրուց,  
թէ իր հայրը—ծերունի որսորդը—կամ Սըհէն  
եթէ հեռացան, նրանք յոյս ունէին իմ վրայ, հի-  
մա որ ես էլ գնամ, գիշերները տանը ո՛վ պէտք է  
նայէ եւ այլն:

Ես պատասխանեցի, թէ մեր գնալ եւ գալը  
կը տեսէ ոչ աւելի քան թէ մի շարաթ, եւ այս  
միջոցում դժուար չէր լինի մի մարդ վարձել եւ  
դնել տանը որպէս պահապան:

Այնուհետեւ Հասօն շատ խուլ կերպով ակ-  
նարկեց, թէ հասարակութեան կարծիքը վատ  
բացատրութիւն կը տար մի այսպիսի նոր, եւ  
իրանց երկրում դեռ օրինակը չը տեսնուած, երե-  
ւոյթի մասին, երբ մի չափահաս աղջիկ մի քանի  
օրով ուխտ է գնում, իր մօտ աղգականը չեղող,  
օտար տղամարդի հետ:

Հասօի ակնարկութիւնը թէեւ բոլորովին

ծիշդ էր, բայց ես կամեցայ հերքել, ասելով՝ թէ Մարօն ինձ համար նոյն նշանակութիւնն ունի, որպէս իրան, Հասօի համար, նա մեր երկուսիս քոյրն է: Մենք ամենքս երեխայութիւնից մեծացել ենք միասին, որպէս մի եւ նոյն գերդաստանի զաւակներ:

— Գրուտ է քո ասածը, Փարհատ, պատասխանեց նա:— Բայց գու տեսել ես, որ մեր երկուսմ մի քոյր իր եղբօր հետ հեռու տեղ ուխտ գնաց:

— Չեմ տեսել:

— Էլ ինչ ես խօսում: Կուրք կովի մօտ են կապում, հորթը հորթի մօտ, եզր՝ եզան մօտ: Այսպէս էլ են մարդիկը, Հասօն սովորութիւն ունէր իր խօսակցութեան մէջ ամեն օրինակները վերառնել անասուններից: Դասաւորել տեսակը տեսակի հետ— դա նրա համար օրէնք էր:

— Ես կը գնամ մենակ, առանց Մարօին իմ հետ տանելու:

Նա ոչինչ չը պատասխանեց, մտածութեան մէջ ընկաւ:

— Ես գու, է կրկին չեմ վերադառնայ, աւելացրի ես:

Հասօն նկատեց, թէ որպիսի վիրաւորական յանգույլ յայտնեցի իմ վերջին եւ վճռական խօսքը, որ դրեց նրան խիստ դժուար դրութեան մէջ: Նա գիտէր, որ իր հայրը ցանկանում էր ինձ իր մօտ պահել. այժմ հօր բացակայութեան ժամանակ առիթ տալ ինձ հեռանալու, դա գցում էր Հասօին պատասխանատուութեան ներքոյ:

Հասօն անկեղծ էր. նա չունէր խորամանկ մարդու ձեւերը: Նա յայտնեց, թէ Պարօն ինձ յանձնել էր նրա հօրը, իսկ հայրը գնալու ժամանակ պատուիրեց Հասօին, որ վարուէր իմ հետ եղբայրաբար, որպէս զի որսորդի տունը ինձ ձանձրալի չը լինէր, եւ աւելացրուց, մի փոքր հանաքի ձեւ տալով իր խօսքերին.

— Դու երեխայութիւնից իրասածի (յամառ) տղայ էիր, Ֆարհատ: Ես գիտեմ, եթէ քեզ կարողանամ հանգստացնել, Մարօին ամենեւին չեմ կարող, նա աւելի կապը-կտրած է: Քնացէք, ինչպէս ուզում էք, այնպէս արեցէք, ես էս գործիցը ձեռքերս լուանում եմ . . .

— Մարօն ուզում է, որ քո կամքովն լինի:

— Ուրեմն, թող Խաթունին էլ իր հետ վերաանէ:

— Պարձեալ չկուլը կուլի հետ . . .

Հասօն ծիծաղեց: Ծիծաղը նրա բարի երեսօի վրայ փոխվեցաւ ժպիտի, եւ նա ասաց.

— Քոյրս քեզ շատ է սիրում, Ֆարհատ:

— Ի՞նչ գիտես:

— Նա ինքն ասաց ինձ:

— Թող սիրէ, աւելի լաւ:

— Բայց դ՞ու՛ր:

— Ե՞ս . . . Մենք սիրում էինք մէկ մէկու, երբ դեռ երեխայ էինք:

— Այն սէրն ուրիշ էր:

— Սէրը միշտ սէր է. նա չէ փոխվում:

— Դու կարգացողի գլուխ ունես, Ֆարհատ, քեզ հետ դժուար է խօսելը, ասաց Հասօն, եւ

քարձրացրուց իր խարազանը, սկսեց քշել արօրին լծած եղները:

Ես հեռացայ:

Ջարմանալին այն էր, որ մի քանի շարականներ ստորած լինելով, այն ժամանակ ես ուսումնական էի համարվում: Ի հարկէ Հասօի աչքում ամեն տիրացուն կշիռ ունէր. թէեւ ես ինքս այժմ ծիծաղում եմ իմ այն ժամանակուայ գիտութեան վրայ:

Հասօի արտը բուականին հեռու էր գիւղից, Ես շտապում էի շուտ տուն հասնել, յայտնել Մարօին եղբօր համաձայնութիւնը, այդ պատճառով ընտրեցի թէեւ դժուարին, բայց աւելի կտրուկ եւ կարճ ճանապարհը: Հարկաւոր էր միայն իջնել ձորը, անցնել մի քանի բլուրներ, վերջին բլուրի վրայ արգէն կանգնած էր ծերունի որսորդի տունը:

Արեգակը թէեւ մի ժամ առաջ ծագել էր, բայց չէր երեւում: Օրը մարախլապատ էր, եւ մնայլոտ ձորի խութիւնը տալիս էր նրան գերեզմանի նմանութիւն: Այստեղ մի հազիւ նըշմարելի շաւիղ ոլոր-մոլոր գնում էր ձորի միջով, տեղ-տեղ թագնւում էր խոտերի մէջ, իսկ երբեմն ծածկվում էր փուլ եկած ժայռերի բեկորներով: Այս զառխայր եւ զառխիբ ճանապարհով կարող էին շրջել միայն եղջերուները:

Խորասուզված մտածութիւնների մէջ, համարեա աննկատելի էր ինձ ճանապարհի դժուարութիւնը: Ինձ պաշարել էր Աստուածածնի ուխտագնացութեան ուրախութիւնը: Մտածում էի,

այնտեղ ուխտաւորների թւում կը տեսնեմ մեր քաղաքացիներից շատերին. գուցէ մայրս, Մարիամը եւ Մագթազը նոյնպէս նրանց հետ կը լինեն: Մայրս ամեն տարի կատարում էր Աստուածածնայ ուխտը: Ա՛րքան կուրախանայ նա, ս՛րքան կուրախանան քոյրերս, երբ որ ինձ կը տեսնեն: Երեւի, նրանք իմ մասին շատ տխուր են, ինձ բոլորովին կորած են համարում . . .

Եւ վերջ ի վերջոյ ես մտածում էի, գուցէ կը տեսնեմ եւ Սօնային. նրա հայրն որպէս քահանայ կը գայ զիւղացիների հետ (նրա հունձի օրն է) Սօնային եւս կը բերէ իր հետ: Ի՞նչ կասէ Սօնան, երբ կը տեսնէ ինձ:

Ծերունի որսորդի տունը գալէն յետոյ, առաջին անգամ ջերմ կարօտով ես յիշեցի մեր խորճիթը, հայրենական երկիրը եւ այն մարդիկներին, որոնց ճանաչում էի, որոնց հետ սնուել ու մեծացել էի:

Երեւեցաւ մի բարակ վտակ, որ խաչաձեւ կը տրելով իմ ուղին, թափւում էր փոքր ինչ հեռու ձորի խորութեան մէջ: Նա այնքան յստակ էր, որպէս բիւրեղ: Երբ թեքվեցայ ջրիցը խմելու, տեսնում եմ, վտակը բերում էր իր հետ խիստ մանր աւաղներ, որ անկարելի էր խմել: Ես դիմեցի դէպի ջրի աղբիւրը, որ երեւում էր շատ հեռու չը պէտք է լինի: Ար աղօտ բան անորոշ կերպով խլրտւում էր, թէեւ մօտ էր նա, բայց վաղորդեան մառախուղը թոյլ չէր տալիս պարզ տեսնել: Երբեմն կձկվում էր նա, երբեմն բաժանւում էր, եւ ամեն մի մասը տնկվելով գետնի՛

վրայ, մարդու մնայլ կերպարանք էր ընդունում։  
Նրանք դարձեալ միացան եւ կազմեցին մի սեւ  
շարժուն գունդ։ Ի՞նչ պէտք է լինի։ Մօտենում  
եմ երկու արարած, միմեանց փաթաթված, աշ-  
խատում էին մինը միւսին տակով անել։ Նրանք  
կանայք էին։ Մէկի ձեռքում փայլեց գանակը։  
Ես մօտ հասայ։ Մարօն տարածել է գետնի վրայ  
մի աղջկայ, եւ նրա բազուկը պինդ բռնած, աշ-  
խատում էր ձեռքիցը խել գանակը։ Սարսափելի  
մի տեսարան էր այդ։ Երկու կատաղած առիւծու-  
հիք մենամարտում էին։ Մարօի հակառակորդը  
քրդուհի էր։ Ես վրահասայ եւ բաժանեցի նրանց։

— Ես քեզ դարձեալ կը սատկեցնեմ, դու իմ  
ձեռքից չե՛ս պրծնի, ասաց քրդուհին, որի գե-  
ղեցիկ, սեւորակ աչքերը նոյն բոպէում ընդունեչ  
էին գազանի աչքերի նմանութիւն։

Մարօն ոչինչ չասաց, նա այնքան վրդով-  
ված էր, որ խօսել չէր կարողանում։ Նա պա-  
տասխանեց իր արհամարհական նայուածքով։

Քրդուհին աւելի գեղեցիկ է իր կատաղու-  
թեան բոպէում. նրա հոգին եւ արտաքին կեր-  
պարանքը կազմակերպում են այն ժամանակ մի  
ամբողջ պատկեր, որի մէջ նա երեւում է իր բո-  
լոր քաջազնական բնաւորութեամբ։

Ես չէի կարող առանց համակրութեան նայեչ  
լեռների այն ազատ դասեր վրայ, թէ եւ մի բոպէ  
առաջ նա ուզում էր սպանել Մարօին։

— Ի՞նչու էիր սպանում այս աղջկան, հար-  
ցրի ես քրդուհուց։

— Դու չը գիտես, աղա,— նա ինձ համա-

քում էր թուրք, — ի՛նչպէս սատանայ է այս ազ-  
ջիկը, կասես թէ ֆրւայ (հայի նախատական կո-  
չումը քրդի լեզուում) չը լինի. նա համարձակ-  
ւում է ձեռքը բարձրացնել իմ վրայ. մի օր ու-  
զում էր խեղդել ինձ: Ա՞ր հայը այսպէս կանէ:  
— Հայը ի՛նչ է, որ չը կարողանայ այսպէս  
անել:

— Հայը շո՛ւն է, հենց որ հաչէ, գլխին խը-  
փիր, ձէ՛նը կը կտրէ . . .

Արիւնը վազեց դէպի իմ գլուխը, ձեռքերս  
դողացին: Բայց ի՛նչ մեղ ունէր քրդուհին, երբ  
անարգում էր մի ազգութիւն, որ ինքն իր ստո-  
բութեամբ առիթ էր տուել իր մասին կազմել  
մի այսպիսի վատ կարծիք . . .

Բայց Մարօն համբերել չը կարողացաւ. նա  
կրկին յարձակվեցաւ քրդուհու վրայ եւ մի հա-  
րուածով գլորեց նրան գետին: Ես դժուարու-  
թեամբ կարողացայ ազատել նրա ճանկերից ոչ  
սակաւ կատաղած զոհը:

— Թո՛ղ տուր խեղդեմ դրան, ասում էր  
Մարօն:

— Շո՛ւն, գոռում էր քրդուհին:

Այն ժամանակ միայն նկատեցի, որ Մարօի  
ձեռքից արիւն էր հոսում: Երբ առաջին անգամ  
քրդուհու բազուկը բռնած, նա աշխատում էր  
խլել նրանից դանակը, մատը վիրաւորել էր, եւ  
իբր խռովութեան մէջ, չէր զգում ցաւը: Ես ու-  
ղեցի փաթաթել վէրքը, բայց նա թող չը տուեց,  
ասելով, թէ ինքն եւս կարող է փաթաթել: Նա  
մօտեցաւ ազրիւրին, սկսեց սառն ջրով լուանալ

արիւնը:

Քրդուհին գցեց իր ուսին մի տոպրակ, որի մէջ դրած էր մի գառն, եւ իր քայլերը ուղղեց դէպի գիւղը:

— Ո՞ր ես տանում այս գառը, հարցրի նրանից:

— Տանում եմ «Աստուծոյ մարդու» համար, պատասխանեց նա հանգարտ կերպով:

— Ո՞վ է «Աստուծոյ մարդը»:

— Նա գրում է թիլիսմաններ, եւ որ տղային սիրում է աղջիկը, նրան բերում է այն աղջկայ համար:

— Ուրեմն դու սիրում ես մէկին:

— Ահմէի որդի Սաֆօին: Նա մի քաջ որսորդ է:

— Իսկ այդ գառը քո հօր հօտինն է:

— Ես նրան գողացայ ճանապարհին գալու ժամանակ:

— Երեւի, հայերի ոչխարներից: Այդպէս չէ:

— Բա՛ն որտեղից: Քրդի գառը ես չեմ գողանայ:

— Հեռու է քո հօր չադրը:

— Խանա-Սօրի այն կողմը: Ես այնտեղից գուրս եկայ, երբ լոյսը դեռ չէր ծագել: Հայրս չիմացաւ:

Աւելի քան երեք միտն ճանապարհ էր եկել քրդուհին: Նա նայեց դէպի վեր, տեսնելու թէ արեւը որտեղ էր կանգնած, եւ շարունակեց իր ճանապարհը, ասելով.

— Ես հեռու պէտք է գնամ. «Աստուծոյ

մարդը՝ կենում է այստեղից շատ հեռու. տես այն կապոյտ սարերի մէջ: Թէ մի օր կը պատահէ քեզ անցնել Խանա-Սօրի ձորով, հարցրու այնտեղ Վիւլիի հօր չադրըրը, նրան կոչում են Ռահմանի որդի Ռահիմ: Նա Բիլբասների ցեղապետն է: Վիւլին շատ սիրեց քեզ, դու օգնեցիր նրան: Քո աչքերը նմանում են նրա Սաֆօի սուրմայած աչքերին: Վիւլին հանգստութիւն կը տայ քեզ իր հօր չադրում, մի ամսական գառը կը մորթէ քեզ համար:

Ես կամեցայ գեղեցիկ քրդուհու քաղցրախօսութեանը պատասխանել նոյն ոճով եւ ասեցի.

— Բայց Վիւլին նմանում է քեաֆար գիւլի (մոյգ ծիրանի գոյն ունեցող վարդի):

Քրդուհի օրիորդի գորշ, բայց սիրուն դէմքի վրայ վայլեց մի ժպիտ, նա երեսը շուռ տուեց, շարունակեց իր ճանապարհը, ասելով.

— Աստուած կը տայ ինձ մի օր, որ կը սպանեմ այն սատանայի քածին . . .

Նա ցոյց տուեց Մարօի վրայ եւ հեռացաւ:

Մարօն լուացել եւ փաթաթել էր իր վէրքը՝ երբ ես մօտեցայ նրան:

— Դիտես ով էր այն աղջիկը, հարցրուց նա:

— Վիւլին, Այդ աղջիկը գնում էր կախարդի մօտ, որ նրա թիլիսմաններով գրաւէ իր սիրականին:

— Ո՞վ ասաց քեզ: Դու արդէն նրա անունն էլ գիտես . . .

— Նա ինքն ասաց:

— Բայց դու, Պարհատ, բաւականին սիլի

Քիլի արեցիր նրա հետ . . . Նաւ խորամանկ ես . . .

— Դրուստն ասեմ, ինձ շատ դուր եկաւ  
Քիլին:

— Նրա համար, որ իմ մատը կտրեց: Հա՛:

Մարօի աչքերում ցոլաց նախանձի կայծը:

— Դրա համար չէ: Նա սիրուն աղջիկ է:

— Սարսաղ . . .

— Ես քեզ ուզեցի բարկացնել, Մարօ:

— Առանց դրան էլ բարկացած եմ:

— Ի՞նչ վրայ:

— Հա՛: Ի՞նչու չը թողեցիր սատկեցնէի նրան:

— Գիտե՛ս ինչ կանէին քեզ քրդերը:

— Կը սպանէին: Թող սպանէին: Մի օր պիտի  
մեռնեմ. բոլորը մէկ է:

— Յետոյ ես կը մնայի առանց Մարօի:

Նա ոչինչ չը պատասխանեց եւ բոպէական  
լուսթիւնից յետոյ հարցրուց.

— Հասօն ի՞նչ ասաց:

Ես պատասխանեցի, թէ Հասօն համաձայն-  
վեցաւ մեր ուխտագնացութեան համար, միայն  
ատաց, որ Խաթունին պէտք է մեզ հետ տանենք: Ես  
հարցրի, արդեօք ձեռքի վէրքն արգելք չէր լինի:

— Այդ ոչինչ, կտրածը շատ չէ, պատասխա-  
նեց նա: — Որտեղից պատահեց այն անիծածը:  
Գիշերը վատ երազ էի տեսել, հիմա կատարվեց:

— Նա գնում էր կախարդի մօտ իր սիրա-  
կանի համար թիլիսման գրել տալու:

— Հո՞ղը նրա գլխին, նրա հայրը քրդերի մե-  
ծաւորն է, բայց ինքը սիրում է մի աղքատ որ-  
սորդի, նրա համար միայն, որ այն աղան լա-

խաղ է ասում եւ սիրուն աչքեր ունի:

— Ի՞նչպէս եղաւ, որ դու եկար այստեղ եւ հանդիպեցար նրան:

Մարօն ասաց, ինքը անհամբերութեամբ սպասում էր, թէ ինչ լուր կը բերեմ ես Հասօից, եւ այս ճանապարհով եկաւ իմ առաջ, լսելու եղբօր խօսքը: Գիւլին նստած էր աղբիւրի մօտ հանգստանալու համար, հէնց որ տեսաւ իրան, դանակը հանեց եւ յարձակվեցաւ:

— Բայց ի՞նչու է նա քեզ հետ թշնամացել, հարցրի ես:

— Դա հին բան է, պատասխանեց Մարօն, — մի տարի Գիւլիի հօր ցեղը եկաւ մեր գիւղում ձմերելու: Գիւլին մեր տան մօտն էր կենում: Ամեն օր մենք տեսնում էինք, որ մեր հաւերից մէկը պակասում էր, ո՞վ էր տանում, չէինք իմանում: Հայրս ասաց, կարելի է, աղուէսն է գողանում: Ես մի օր նստեցի մարագի դրանը, հսկում էի, որ աղուէսը գայ, եւ նրան բռնեմ, հաւերի վրէժն առնեմ: Տեսնում եմ Գիւլին գելի պէս յայտնվեցաւ: Նա կուղէ-կուղ մօտեցաւ, մարագի դուռը բաց արաւ: Ես թագնված էի, նա ինձ չը տեսաւ: Զայն չը հանեցի, մինչեւ մտաւ մարագը: Հաւերից երկուսը բռնեց, հէնց որ դուրս էր գալիս, բռնեցի ծամերիցը, գցեցի գետին, խեղդում էի, բայց այդ միջոցին Մըհէն վրայ հասաւ, չը թողեց: Հիմա այն օրից ինձ հետ թշնամութիւն ունի:

— Դու այս օր էլ նրան կը խեղդէիր, եթէ ես վրայ չը հասնէի: Բայց Գիւլիի պատմութիւնը մի անգամ էլ քեզանից լսած եմ:


— Բայց դու ոչորին չասես այսօրուայ անցքը,  
Յարհատ:

— Իսկ քո ձեռքի վէրքը:

— Ես կասեմ՝ ինքս վիրաւորեցի, երբ դանա-  
կով սոխ էի կոտորում:

— Լաւ:

— Դէ՛, գնանք:



## ԼԱ.

### Ո Ւ Խ Տ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Մարօի ձեռքի վերքն այնքան թեթեւ չէր, որքան նա կամենում էր ցոյց տալ. դանակը կըտրել էր բթամատի պտղուցը կէս եղունգի հետ: Քայց նա դրա վրայ ուշադրութիւն չէր դարձնում եւ ողջ օրը զբաղված էր ուխտագնացութեան պատրաստութիւններով: Ես տեսնում էի, թէ որպէս նա մի ձեռքով հունցում էր խմորը նազուրներ եւ իւղով հացեր թխելու համար, որպէս եռանդով պատրաստում էր մեղրալի հալվանները:

Պառաւ Խաթունը նոյնպէս ոչ սակաւ զբաղմանց մէջ էր. նա ինքը վազեց խունկ ու մոմ գնելու գիւղի մանրավաճառից իր սեպհական արծաթով, որ յետ էր գցել այսպիսի հոգեշահ բաների համար: Նա աշխատում էր վերջացնել իր գործած գուլբանների երկրորդ ջուխտը, որ պատրաստել էր վանահօրն ընծայելու, որպէս զի նա իրան յիշէ իր ազօթքների մէջ:

Սյգ բոլորը կատարվում էր խիստ ջերմ եւ

բարեպաշտական ոգեւորութեամբ:

Տխուր էր միայն մարգարիտը,—այդպէս էր  
Հասօի կնոջ անունը,—նա չէր կարողանում համ-  
բերել, որ Մարօն եւ Խաթունը ուխտ էին գնում,  
իսկ ինքը մնում էր: Ինչու չէին թողնում նրան,  
մի՞թէ նա հոգի չունէր, մի՞թէ նա չէր ուզի  
վանքի սրբութիւնները համբուրել: Վերջապէս  
նրան եւս պէտք էր որսորդի փակված խրճիթից  
դուրս գալ եւ արձակ աշխարհ տեսնել: Մարօն  
կապը կտրած հորթի նման, ուր որ ասես, գնում  
էր, բայց ինքը պէտք է տանից դուրս չը գար,  
նրա համար որ, Մարօն դեռ աղջիկ էր, իսկ ինքը  
հարս . . . Երեւի, այսպէս էր մտածում Մարգա-  
րիտը, երեւի, այսպէս էր բողբոմ նրա լուս-  
թեան դատապարտված լեզուն իր սրտի խորքում:

Եւ իրաւ, հայ ընտանիքի մէջ խիստ տար-  
բեր էր հարսի եւ դեռ չամուսնացած աղջկայ  
վիճակը: Աղջիկը վայելում էր բաւականին ազա-  
տութիւն: Նա, ում հետ ուզում էր, խօսում էր,  
նա կարող էր ոտքը շատ հեռու դուրս դնել  
հօր տան շէմքից, գնալ դրացիների տները,  
գնալ արտը, գաշտը, ուր որ ուզում էր ման գալ,  
ի հարկէ, պահպանելով համեստութեան բոլոր  
պատշաճը: Նրա երեսը ծածկված չէր քողով եւ  
լեզուն արձակ էր: Իսկ այն օրից, երբ նա նշան-  
վեցաւ մէկի հետ, նա իր բոլոր յարաբերութիւն-  
ները կտրում էր դրսի աշխարհի հետ. նա դառ-  
նում էր իր տղամարդի սեպհականութիւն. նրա  
աշխարհը լինում էր ամուսնի տան չորս պատերը:  
Նրա բերանը փակվում էր, ոչ զքի հետ խօսե-

լու իրաւունք չունէր. նրա երեսը ծածկվում էր  
թանձր քողով, ոչ ոքին ցոյց ապու իրաւունք  
չունէր: Նա ապրում էր իր ամուսնի համար,  
որպէս նրա ծածկեալ եւ վարագուրված սրբու-  
թիւնը, որի ներքը նայելու օտար որ կարող չէր:  
Այս վիճակի մէջն էր գտնվում խեղճ Մար-  
գարիտը:

Իր փակված գրութիւնը յարուցել էր նրա  
մէջ նախանձի նման մի բան գէպի ուրիշներէ  
ազատութիւնը, գէպի Մարօն, որ դեռ մանուկ  
աղջիկ էր, եւ գէպի պառաւ Խաթունը, որ կեանքի  
համար անպիտանացած էր: Մանկութիւն եւ զա-  
ռամութիւն—երկու հակառակ ծայրեր, որոնք  
աւելի չէին ենթարկվում ընտանեկան խտու-  
թիւնների պահանջներին:

Նոյն աւուր երկիոյեան պահն էր, որի միւս  
տաւաօտը մենք պէտք է ճանապարհ ընկնէինք  
գէպի վանքը եւ գնացել էի ախոռատունը ձիւ  
նայելու եւ պատանի Ատօին—դա Մըհէի օգնա-  
կանն էր—պատուիրելու, որ Մարօի եւ Խաթունի  
նստելու ձիաների սարքը պատրաստէր, վաղ-  
առաւօտեան գարին տար, որ հոյով ճանապարհ  
ընկնէինք: Դարձայ իմ սենեակը, մութը բաւ-  
կանին թանձրացել էր: Մարօն ամեն օր այս ժա-  
մուն ճրագ էր ներս բերում. այսօր, երեւի, այն-  
քան զբաղված էր, որ մոռացել էր, թէ ես նրա-  
տած եմ խաւարի մէջ: Մեծ եղաւ իմ զարմանքը,  
երբ տեսայ փոխանակ Մարօին յայտնվեցաւ Մար-  
գարիտը ճրագը ձեռին: Մօր փեշից բռնած, ներս  
մտաւ եւ փորրիկ Սալբին—Հասօի անդրանիկը—եւ

մի այնպիսի վախկոտ երես էր շինել չորս տարեկան երեխան, կարծես, երկիւղ ունէր՝ չիցէ թէ մօրը խլին իր ձեռքից:

Մարգարիտը ձգած ունէր կարմիր քօլը գրլխին, որ առջեւից ծածկում էր նրա երեսը մինչեւ գօտին, իսկ ետեւից՝ բոլոր մէջքը: Նա առանց քօլը բարձրացնելու, լուռ գլուխ տուեց եւ դրոնց ճրագն իր տեղում: Ինձ երեւաց, որ նա չէր ուզում հեռանալ, որպէս ստում են՝ ոտքը քաշ գցեց, կարծես, ուզում էր մի բան ասել ինձ: Նա կանգնեց ինձանից փոքր ինչ հեռու դրան մօտ, իսկ Մալբին տնկվեց մօր առջեւը: Մայրը խթեց դստեր կողքը, դուստրն իր փայլուն աչքերը դարձրուց դէպի նա եւ հարցրուց:

— Ի՞նչ աշեմ:

Մայրը թեքվեցաւ, Սալբիի ականջին փոխրուաց մի խօսք.

— Աշն, ախրէր, ախար եշ էլ խեղճ եմ...

Սալբին շփոթվեցաւ, նա մտռացաւ մօր ասած պարբերութեան կէսը: Մայրը կրկին խթեց նրա կողքին եւ փսփաց այս անգամ փոքր ինչ լսելի ձայնով.

— Խորած, էսպէս չեն ասի:

Թարգմանը կրկնեց նրա խօսքերը.

— Խորած, էշպէշ ցեն աշի:

Մայրը բարկանալով անհմուտ թարգմանի ազխութեան վրայ, այս անգամին աւելի սաստիկ խթեց նրա կողքին: Սալբին օրօրվեցաւ, ուզում էր ընկնել գետին, բայց հաղիւ կարողանալով պահել իրան փոքրիկ ոտները վրայ, տհա-

ճութեամբ Հարցրուց.

— Բն, ինչպէշ աշեմ:

— Գլուխդ թաղեմ, գիժ սատանայ, տես, էգպէս ասն— ախպէր, բն ես խեղճ չեմ, ամենը գնում են ուխտ, ես մնում եմ տանը:

Սալբին Հաղորդեց ինձ.

— Գլուխդ թաղեմ, գիղ շատանայ . . .

Մայրը բամիեց դստեր գլխին, փոքրիկ թարգմանը լաց եղաւ, եւ ձգելով իր անխորժ պաշտօնը, դուրս փախաւ:

— Ես Հասկացայ, քոյրս, ասեցի Մարգարիտին:

Նա անշարժ եւ լուռ մնաց իր տեղում, սպասելով իմ վերջին խօսքին:

— Դու ուղում ես Մարօի հետ ուխտ գնալ, այգպէս չէ:

Նա գլուխը շարժեց Հաւանական եղանակով:

— Ի՞նչու Հասօն չէ ուղարկում եւ քեզ:

Նա այժմ շարժեց ուսերը, որ նշանակում էր, թէ ինքն էլ չը գիտէ:

— Դու ցանկանում ես, որ ես խնդրեմ Հասօից:

Նա գլուխ տուեց, իբր թէ շնորհակալ կը լինի:

Նոյն միջոցին ներս մտաւ Մարօն: Նրա երեսի վրայ երեւեցաւ զարմացման նման մի բան:

— Դ՞ու այստեղ ինչ ես շինում, Հարցրուց Մարգարիտից:

Հարսը ձեռքով ցոյց տուեց ճրագը, իբր թէ ճրագն էր բերել:

Մարգարիան ուզում է գալ մեզ հետ,  
ասեցի ես Մարօին:

— Թող գայ, աւելի լաւ: Բայց Հասօն ի՞նչ  
կասէ:

— Ես Հասօից կը խնդրեմ:

Մարօն ուրախացաւ, եւ դառնալով դէպի  
Մարգարիտը, ձեռքը տարաւ դէպի նրա քօղը,  
բարձրացնելով ասաց.

— Աւից ես երեսդ ծածկում, Ֆարհատից,  
ինչո՞ւ չես խօսում, քոյրն եղբօր հետ չի՞ խօսի:  
Ֆարհատը ինչպէս իմ, այնպէս էլ քո եղբայրն է:

Մարգարիտը թէեւ շուտով քօղը քաշեց երե-  
սին, բայց ես կարողացայ տեսնել նրա դէմքը.  
Նա նմանում էր մի խամրած, դալկացած ծաղկի,  
որ երկար սլազիվել էր ծածկոցի տակ:

Մարօն կրկին ձեռքը տարաւ դէպի նրա քօղը:  
Մարգարիտը չը կարողանալով դիմանալ նրա հա-  
նաքներին, մի բան ասաց Մարօի ականջին եւ  
դուրս վազեց: Մարօն սկսեց ծիծաղել:

— Ի՞նչ ասաց նա:

— Ասաց՝ «մեզք չէ՞, որ դու ասում ես՝ Ֆար-  
հատն իմ եղբայրն է»:

— Ի՞նչու է մեզք:

— Տղան ու աղջիկը երբ մէկմէկու հետ քոյր  
ու եղբայր են դառնում, նրանք էլ . . .

— Չեն պսակվում:

— Հա՛: Մեր գիւղում մի տղայ ու աղջիկ  
կային, Խաչ-Աւետարան համբուրեցին, քոյր-եղ-  
բայր դարձան. յետոյ նրանց հէրն ու մէրն ու-  
զեցին պսակել նրանց. նրանք չը պսակվեցան,

տսեցին՝ մեղք է: թէեւ մինչեւ հիմա էլ սիրում են մէկմէկու:

— Պսակիկու ժամանակ էլ Խաչ Աւետարան են համբուրում:

— Բայց քոյր-եղբայր չեն դառնում:

— Բա՞ ի՞նչ են դառնում:

— Է՛հ, դու չե՛ս իմանում . . .

— Իմանում եմ: Իու շատ չար աղջիկ ես, Մարօ, ի՞նչու այնպէս արեցիր, երեւի, Մարգարիտը բարկացաւ, որ նրա երեսը ինձ ցոյց տուեցիր:

— Նա չի բարկանայ: Մարգարիտը լաւ սիրտ ունի. նա քեզ շատ է սիրում. երբ գնանք Աստուածածին, ես ձանապարհին նրան քեզ հետ կը խօսացնեմ: Այնտեղ քոյր-եղբայր դարձէք, Յարհատ: Յետոյ նա քեզ հետ միշտ կը խօսի, երեսը չի թագցնի. քոյց հիմա կարգ չէ, ամաչում է:

— Իու երբ որ հարս կը դառնաս, դու էլ երեսը կը ծածկես, մարդու հետ չե՛ս խօսի:

— Բա ի՞նչպէս. դրա համար են հարս դառնում:

— Այդ բլբլացող լեզուդ ի՞նչպէս պէտք է լուռ պահես:

— Կը սովորեմ: Ախար տղամարդը կը ծեծէ, երբ կնիկը իր երեսը ուրիշին նշանց տալու լինի:

— Ես չեմ ծեծի . . .

Մարօն ծիծաղեց:

— Ուրիշներն ի՞նչ կասեն. չե՛ն ասի՝ անամօթ հարս է:

— Ներս մտաւ Հասօն: Նա իմանալով, որ մենք դադարաւորապէս պէտք է գնանք, եկել էր ամս

Համար կարգադրութիւններ անելու:

Թէեւ խիստ դժուարութեամբ, այնուամենայնիւ, ես կարողացայ Հասօին Համոզել, որ Մարգարիտին եւս մեզ հետ ուղարկէ: Այժմ՝ դժուարութիւնը մնում էր մի ուրիշ բանում: Աւիտաւորների թւի վրայ երկու հոգի եւս աւելացաւ.— Մարգարիտը եւ փոքրիկ Սալբին, որ լըսելով մօր գնալը, լաց եղաւ, թէ ինքն էլ է ուզում սուրբ Աստուածածինը տեսնել: Աւրեմն մեր ամբողջ քարաւանը կազմվում էր հինգ հոգուց: Նրանց թւի Համեմատ գրաստները չորս հատ էին.— իմ եւ Հասօի նժոյգները, մի մատակ ձի եւ մի աւանակ: Աւանակը որոշված էր մեր պաշարները բառնալու համար. խեղճի բեռան վրայ աւելացրին եւ Սալբին: Հասօի նժոյգը եւ մատակ ձին Մարօի եւ Մարգարիտի մէջ բաժանելով, պառաւ Խաթունը մնում էր առանց երկվարի: Գիւղից գրաստ վարձել անկարելի էր, որովհետեւ գիւղացիներից եւ ոչ մէկը, բացի ծերունի որսորդից, ձիաներ եւ աւանակներ չունէին: Այս խնդիրը վճռեց ինքը Խաթունը. նա ասաց՝ եթէ գրաստ եւս գտնվէր, ինքը դարձեալ ոտով կը գնար, նրա համար որ, ուխտ է դրել՝ եթէ անգամ հետիոտս սուրբ Աստուածածին գնալ, վեցը կատարել է, մնում է մէկը: Թէեւ խիստ դժուար էր պառաւի համար երեք օրուայ ճանապարհը անցնել ոտով, բայց նա հաւատացրուց, թէ կը կատարէ առանց նեղացնելու իրան եւ ընկերների: Մենք մեր կողմից խոստացանք՝ երբեմն վայր իջնել մեր երկվարներից եւ տալ պառաւին, որ

Նստէ հանգստանալու համար:

Ոչ սակաւ տեւեց վէճը Մարգարիտի եւ Մարօի մէջ, նրանցից իւրաքանչիւրն ուզում էր հեծնել Հասօի նժոյգը. յաղթութիւնը տարաւ ի հարկէ Մարօն. մատակ ձին որոշվեցաւ Մարգարիտի համար:

Մարօն ունէր իր փոքրիկ փառասիրութիւնը. նա ուզում էր յայտնվել ուխտաւորների մէջ, նստած գեղեցիկ նժոյգի վրայ, եւ ցոյց տալ Հաղբակայ աղջիկներին, թէ ինքը նրանց երկրի «միրի» գուստրն է: Տղամարդերի մասին չէր մտածում. նա կամենում էր գրգռել իր ընկերուհիների նախանձը եւ նրանց ուշադրութիւնը գրաւել:

«Միրը» մեծ նշանակութիւն ունէր հասարակութեան մէջ. նա ժողովրդի գլխաւոր եւ ներկայացուցիչն էր: Հաղբակայ հայերի «միրի» պաշտօնը վարում էր Մարօի հայրը: Ամենքը կը ճանաչէին նրան, որպէս գուստր այն մարդու, որ հասարակական դրութեան մէջ բռնել էր բարձր տեղ: Այդ պատճառով Մարօն աշխատում էր իր արտաքին փայլը հաւասարացնել իր հօր կոչման հետ: «Միրի» աղջիկ, մեծ բան էր Հաղբակում: Նա ոչ սակաւ հոգ էր տանում եւ իր հագուստի ու պաճուճանքի մասին: Նրա զարգարանքները բաղկանում էին գոյնզգոյն յուլունքներից, քթի եւ ականջների օղիւրից, մատանիներից, պարանոցի մանեակից, գլխի արախչիներից, նախշածոսկի եւ արծաթի դրամներով, եւ արծաթեայ քամարից: Վերջինը խիստ գեղեցիկ կերպով սաղ էր գալիս բարակ մէջքին:

Նա մտածում էր եւ իմ մասին: Երեւի, չէր ուզում, որ ես յայտնվէի ամբոխի մէջ իմ արդէն հնացած հագուստով: Այն օրից, որ ես փախայ տէր Թօգիկի դպրոցէն, ես չէի փոխել իմ հագուստը, որովհետեւ ուրիշը չունէին: Գիշերից բաւական անցել էր, երբ Մարօն, բոլորովին յոգնած, իմ մօտ եկաւ: Նա յայտնեց, թէ ինքը չէ ցանկանում, որ ես երեւնայի ուխտաւորների մէջ հնացած շորերով, առաց, որ իր եղբայրը ունէ մի ձեռք հագուստ բոլորովին նոր, որոնց ամենեւին չէ հագել եւ ընծայեց ինձ հագնելու համար:

— Լասօի շորերը իմ վրայ չեն կարող նստել, պատասխանեցի ես:— Լասօն աւելի հաստ է եւ հասակով կարճ. ես նրանից բարակ եմ եւ երկայն:

— Ես չեմ քնի, այս գիշեր կը նստեմ, բոլորը կը դրստեմ քո հասակի համեմատ: Նա չափեց իմ հասակը եւ հեռացաւ:

Հաղբակեցի կինը իր տան դերձակն է: Նրանց հագուստներն այնպէս էին ձեւված, որ մեծից փոքրի համար եւ փոքրից մեծի համար փոփոխելու միշտ հնար կար:

Հայերի համար շատ թանգ էր նստում ուխտագնացութիւնը: Մի քանի գիւղի բնակիչները հաւաքվում էին միասին, կազմում էին ամբողջ քարաւան, շատ անգամ բաղկացած հարիւր-երկուհարիւր հոգուց: Մի այսքան բազմութիւն դարձեալ չէր կարող առանց վտանգի կատարել իր ձանապարհորդութիւնը. նրանք վարձում էին քրդի ձիաւորներ, որ իրանց պաշտպանեն աւազակների յարձակումներէն, եւ մարդագլուխ

վճարում էին մի նշանակեալ արծաթ: Բայց քիչ չէր պատահում, որ նոյն իսկ պահապան քրդերի անյայտ ընկերները յարձակվում էին եւ կողոպտում էին ուխտաւորների քարաւանը: Պահապանները թէեւ ընդդիմութիւն էին գործում, բայց միայն ցոյց տալու համար, թէ իրանք աւազակների հետ առաջուց յարաբերութիւն չունէին:

Աւրբաթ օրը մեկը ճանապարհ ընկանք, վաղառաւօտեան, առանց բուրդ ձիաւորների պահպանութեան, եւ ոչ խառնվեցանք գիւղացիների հետ: Մի այսպիսի համարձակութիւնը թէեւ յանդգնութիւն էր մեր կողմից, բայց նախ, իմ սնափառութիւնը չէր ներում ապաւինել քրդերի պահպանութեանը, երկրորդ, ծերունի որսորդի անունը, որ այնքան յարգված էր Հաղբակայ մէջ, բաւական էր նրա ընտանիքը քրդերի յարձակմունքից զերծ պահելու համար:

Քուրդը գիտէ պատուել մեծութիւնը. նա ժողովրդի պետի վրայ նայում է որպէս Աստուծոյ ձեռքին, որը հովանաւորում է ժողովրդին: Ծերունի որսորդը Հաղբակայ հայ ժողովրդեան գլուխն էր:



ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՕՐ ՎԱՆՔԻ ՏՕՆԱԽԲՈՒ-  
ԹԻՒՆԸ

Շարաթ աւուր երեկոյեան պահուն մենք հասանք վանքը:

Իմ առաջին հոգսն եղաւ մեր վրանը կազմել մի յարմար տեղում, որ ուխտաւորները հանգստանան: Մարգարիտն եւ Խաթունը շատ յոգնած էին, նրանք հենց որ տեղ հասան, դիակի պէս վայր ընկան: Մարօի հպարտութիւնը թոյլ չէր տալիս ցոյց տալ իր յոգնածութիւնը, նա օգնում էր ինձ վրանը կանգնելու միջոցին եւ ծիծաղում էր Մարգարիտի վրայ: Փոքրիկ Սալբին իր աւանակից իջնելուն պէս, վաղեց դէպի վանքը, ասելով.

— Եշ գնում եմ Աշուածաճինը տեղնեմ:

Համաձայն Մարօի ցանկութեան ես վրանը կազմեցի մի երեւելի տեղում: Քառորդ ժամից յետոյ ամեն ինչ տարբերած էր:

Սուրբ Տիրամօր վանքը գտնվում է Վանայ ծովակի ափին, Լիմ անապատի հանդէպ, Կորգուաց լեռների մէջ: Հայաստանի վանքերից հա-

մարեա ամեն մէկը սեպհականել է մի առանձին հրաշագործ զօրութիւն, եւ ժողովրդի մէջ հրաշակված է որպէս այս եւ այն բժշկութիւնների մասնագէտ: Կորդուաց երկրի սուրբ Աստուածամայրը նշանաւոր էր որպէս բորոտութեան, քոտութեան եւ տեսակ-տեսակ խոցերի բժշկող: Նա ոչ միայն սրբում էր յուսով իր դուռը դիմող ուխտաւորներին յիշեալ ախտերից, այլ բուժորովին առողջ մարդերի մէջ պատճառում էր նոյն ախտերը, եթէ նրանք կը բարկացնէին իրան, եթէ անհնազանդ կը գտնվէին դէպի իր վանականները, եւ կամ չէին լրացնի նրանց պահանջները: Այս պատճառով, ժողովրդի մէջ բորոտութիւնը, քոտութիւնը, մի քանի տեսակ խոցեր եւ կերցաւը՝ կոչվում էին «տիրամօր եարայ», այսինքն՝ Տիրամօր վէրք կամ խոցեր, որոնք յայտնվում են որպէս պատիժ մարդիկների յանցանքի համար Աստուածամօր կողմից:

Կորդուաց երկրի Աստուածամայրը խստաօրոտ էր եւ վրէժխնդիր: Նրա բարկութիւնը մարդիկներից անցնում էր եւ անասունների վրայ: Ընտանի կենդանիներից ամեն պիսակաւորը համարվում էր նրա վանքին նուիրական, որովհետեւ սուրբ Տիրամայրը դրել էր նրա վրայ իր «նըշանը»: Տէրն իրաւունք չունէր իր պէտքերի համար գործ ածել իր կովը, եզը, գոմէշը, ձին եւ այլ չորքոտանին, եթէ նրանց վրայ գտնվում էր «տիրամօր նշանը», որը մի ուրիշ բան չէր, եթէ ոչ մի քանի պիսակներ անասունի մարմնի որ եւ իցէ տեղում: Նա կամ պէտք է ինքն իր անա-

տունը ուղարկէր վանքը, եւ կամ սպասէ, մինչեւ վանքի «մղգսիքը» գային եւ տանէին: Ամեն տարի վանքի «մղգսիքը» պտըտում էին գաւառներում եւ հաւաքում էին այսպիսի անասուններ: Այ մի հայ իրաւունք չունէր գնել կամ վաճառել նրանց, որովհետեւ վանքի սեպհականութիւն էին:

Վանքի մօտ կար մի գիւղ, որ կոչւում էր «վանքի գիւղ»: Նրա ընակիչները բոլորովին ծոյլ եւ տխմար մարդիկ էին, ուրիշ պարապմունք չունէին, միայն ծառայում էին վանքին եւ կոչւում էին «տիրամօր մղգսիք»: Նրանց ապրուստի աղբիւրը վանքն էր:

Առանց ցաւելու չէր կարելի նայել, երբ մի ամբողջ գիւղի ողորմելի բաղմութիւնը նուիրել էր իրան միայն վանքի սպասաւորութեանը, դառնալով կոյր գործիք նրա միաբանութեան ձեռքում: Տիրամօր «մղգսին» գրագէտ մարդ չէ: Բայց նա գիտէ Աւետարանից ամբողջ գլուխներ, երգում է շարականներ, կարդում է եկեղեցական ընթերցանութիւններ, երբ նա, առած իր հետ վանքի սրբութիւններից մէկը ման է գալիս գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, մտնում է ամեն ջերմեռանդ հայի տուն, վանքի սրբութիւնը բաց է անում, մաղթանք է կատարում, համբուրել է տալիս, եւ ողորմութիւն է հաւաքում:

Տիրամօր «մղգսիներին» մուրացիկ թափառականները կարելի էր տեսնել ամեն տեղ: Ես դեռ յիշում եմ, երբ նրանք մեր տունն էին գալիս, բաց էին անում վանքի «սուրբ նշանը» — նա լի-

նում էր՝ կամ մի խաչ, կամ մի որ եւ իցէ սուրբի մարմնի մասունքը, — որը դնում էին մաղի վրայ, նրա չորս կողմից ձեռքով բռնում էին, եւ սկսում էին զանազան բաներ կարդալ: Մայրս ինձ, Մարիամին եւ Մագթաղին նստեցնում էր մաղի տակ, որի վրայ դրած էր «սուրբ նշանը»: Այդ անում էր այն մողբով, որ մաղի ծակերից «սուրբ նշանի» օրհնութիւնը թափվէր մեր գլխին: Յետոյ նրանք «խաչալուսայ» էին անում, մեր երեսին օրհնած ջուր էին քսում, եւ շատ ուրիշ բաներ էին անում, որ այժմ մոռացել եմ . . . Մայրս փող չէր ունենում, բայց դարձեալ Տիրամօր մղգսիներին աւանց մի բան տալու ճանապարհ չէր գցում: նա կրտսրում էր իր պարանոցի կամ գլխի զարդերից մի արծաթ եւ տալիս էր նրանց:

Վարդապետները վանքի սրբութիւնները տալիս էին մղգսիներին, ժողովրդի մէջ ման ածելու, զանազան սրայմաններով — երբեմն վարձով, երբեմն կապալով, իսկ երբեմն այն դաշամբ, որ հաւաքած գումարի մի մասը տային վանքին, միւս մասը իրանք մղգսիքը վեր առնէին:

Բայց քիչ չէր պատահում, որ մղգսիները, օգուտ քաղելով ժողովրդի միամտութիւնից եւ նրա սնահաւատութիւնից, դէպի չարն էին գործ դնում վանքի հաւատարմութիւնը: Նրանցից շատերն ունէին իրանց տներում խաչեր եւ կեղծ, հնարած «սուրբ նշաններ» — դրանց ման էին ածում վանքի սրբութիւնների անունով:

Սուրբ Տիրամօր հրաշագործութիւնը, զանազան բորոտութիւններ, խոցեր եւ այլ փոխան-

ցիկ Հիւանդութիւններ բժշկելու մասին, ամեն տեղ հռչակված լինելով, ամեն կողմից բերում էին նրա վանքը այսպիսի ախտաւորներին: Նրանք մնում էին այնտեղ տարիներով, ի հարկէ, քիչերին էր յաջողւում առողջանալով իրանց տունը վերադառնալ, իսկ մեծ մասը անխնամ մնալով, ոչնչանում էին: Ես հիմա եմ հասկանում վնասակար հետեւանքը մի այսպիսի սնահաւատութեան, որ մտցրել էին ժողովրդի մէջ վանքի արեզանները: Հիւանդութիւններից շատերը փոխանցական լինելով, ուխտաւորները վարակւում էին եւ տարածում էին ժողովրդի մէջ: Այս էր պատճառը, որ երբեմն բոլորովին առողջ ուխտաւորը վերադառնում էր իր տունը ախտաւորված. նա համարում էր այդ մի պատիժ, որ տուեց նրան Տիրամայրը, գուցէ իր մեղքերի համար . . .

Նոյն իսկ վանքի գիւղացիները, անգագաբար յարաբերութիւններ ունենալով հիւանդների հետ, վարակւում էին: Այ մի տեղ չէ կարելի տեսնել այնքան բորոտներ, մարմնով եւ դէմքով այլանդակված մարդիկ, որքան վանքի գիւղում: Մի քանի տեսակ հիւանդութիւններ դարձել էին նրանց մէջ ժառանգական, անցնում էին սերունդից սերունդ, որպէս էր հաշմանդամութիւնը:

Մովսէս առանձին օրէնքներ գրեց բորոտների եւ զանազան փոխանցական հիւանդութիւններ ունեցողների մասին: Եւ մինչեւ այսօր արեւելցիք իրանց ընակութիւնից դուրս են քրջում նրանց: Բայց սուրբ Տիրամօր «մղղպին» ուրախ է լինում, երբ նրա կինը ծնում է մի զա-

ւակ բոլորովին այլանդակված կերպարանքով. այլ խօսքով ասած, զարդարված «տիրամօր նշաններով»։ Մի այսպիսի հրէշաւոր ցուցանքը բերում է հօր համար բաւականին արդիւնք։ Նա դնում է իր որդին աւանակի վրայ, ման է ածում երկրից երկիր, ցոյց է տալիս Աստուծոյ Մօր սքանչելիքը, շարժում է մարդկանց մէջ երկիւղ եւ ջերմեւանդութիւն, — փող է հաւաքում . . .

Յիշեալ հիւանդութիւնները ունեցող թրշուաւները կոչվում էին՝ «տիրամօր խեղճեր»։ Պրանց մանածելը ժողովրդի մէջ՝ սարսափ էր տարածում եւ աւելի էր շարժում տեսնողների հաւատքը դէպի վանքը, եւ հետեւապէս բազմացնում էր ուխտաւորների թիւը։ Այս պատճառով վարդապետները ամենեւին չէին արգելում մղզախների խարէութիւնները, որովհետեւ նրանց հետ կապակից էին վանքի շահերը։

Հայերի մէջ անէծք է դարձել ասելը՝ «Տիրամօր եարան (խոցը) ընկնի քո վրան»։ Եւ առանց սարսափելու ոչ սք չէ յիշում Կորդուաց լեռների սուրբ Աստուածածինը . . . Նա վրէժխնդիր է եւ խստասիրտ . . .

Ես էլ այն ժամանակ նոյն մոլորութեան մէջն էի, ես էլ տողորված էի նոյն սնահաւատութեան ախտով . . . Ես էլ հաւատում էի այս քոլորին . . . Բայց երբ կարգացի Հայոց Պատմութիւնը, այն ժամանակ հասկացայ, որ Տիրամօր վանքի այս աւանդութիւնները եւ սովորութիւնները խիստ խորին կապ ունէին մեր պատմական անցեալի հետ, այն ժամանակների հետ,

երբ Ներսէս մեծը Տիրանի որդի Արշակի օրերով  
Հայաստանում հիմնեց բազմաթիւ վանքեր. նրան-  
ցից շատերը ծառայում էին որպէս բորտոնե-  
րի եւ հաշմանդամների պատասպարաններ: Ժողո-  
վրդից հեռացրած այդ ախտաւոր հասարակու-  
թիւնը ապրում էր առանձին վանքերի մէջ, ուր  
նրանց խնամք էին տանում: Բայց այդ մարդա-  
սիրական սովորութիւնը, ժամանակների հետ  
փոխվելով, ստացաւ բոլորովին ուրիշ նշանակու-  
թիւն, եւ ժողովրդի սնահաւատութիւնը տուեց  
նրան մի այլ կերպարանք: Բայց 15 դար առաջ,  
այսինքն Ներսէս մեծի օրերով, այսպիսի հիմնա-  
կութիւնների նպատակը բոլորովին ուրիշ էր,  
բոլորովին մարդասիրական էր:

Տիրեց միջին գիշեր: Աւխտաւորներից ոչ ոք  
գեռ ընած չէ: Վանքի շուրջը ընդարձակ տա-  
րածութիւն պատած է վրաններով. նրանց առ-  
ջեւից բարձր ընկած գոյնզգոյն լապտերները տա-  
լիս են այն ընդհանուր լուսաւորութեանը կա-  
խարդական բնաւորութիւն: Վրանների ամեն  
մէկի մէջ զետեղված են ախտաւոր գերդաստան-  
ներ, իսկ շատերը մնացել են բացօթեայ, իջե-  
անելով բաց երկնքի տակ: Այս խառնիճադանձ  
ամբոխի մէջ կարելի էր գտնել ամեն երկրի հայ-  
եր, սկսեալ Փոքր Ասիայից մինչեւ Պարսկաս-  
տան, մինչեւ Արարատի գաւառները: Իսկ Հաղ-  
բակայ, Վանայ, Մուշի, Բաղէշի բնակիչների մեծ  
մասն այնտեղ էին:

Ես գուրս եկայ մեր վրանից տեսնելու, թէ  
սպամաստեցիներից ովքեր էին եկած: Մարօն ցան-

կութիւն յայտնեց ինձ հետ գալու: Մարգարիտը եւ Խաթունը չափազանց յոգնած էին, մնացին վրանում: Փոքրիկ Սալբին արդէն քնած էր: Երկար ես ման էի գալիս Մարօի հետ ուխտաւորների բանակի մէջ: Ամեն տեղ շարժողութիւն կար, խառնվում էին, ամբոխվում էին, ամեն տեղ լսելի էր լինում երգ, աղաղակ, ծիծաղ, անէծք, աղօթք, եւ երբեմն մանուկ շրթունքների ջերմ սիրախօսութիւններ. . .

Կարգալով վերջին ժամանակներում Յունաստանի պատմութեան մէջ ոլիմպիական, գելլիեան Ապողոնի եւ սպանդարամետական տօների մասին, միշտ ես յիշում էի իմ ուխտագնացութիւնը եւ սուրբ Տիրամօր վանքը: Ես յիշում էի նրա տօնախմբութիւնը, ուր սկսեալ խորին հեթանոսութիւնից, ժողովրդի հոգու մէջ մտած նախապաշարմունքները արտայայտվում էին իրանց բոլոր նախնական կերպարանքով: Ես երեւակայում էի իմ մտքում միշտ մի այսպիսի պատկեր՝—քրիստոնէութիւնը յայտնված քուրմի ըզգեստով. . .

Ոչ մի նոր վարդապետութիւն բոլորովին չէ կարողանում ջնջել, անհետացնել ժողովրդի սրտից այն, որ թողել է անցեալը: Հեթանոսութեան ծէսերը, արարողութիւնները, պաշտամունքը գարեբով արմատացել էին հայի հոգու մէջ, նրանք միացել էին նրա քնաւորութեան հետ: Քրիստոնէութիւնը միանգամով սրբել Հայաստանը հին նախապաշարմունքներից կարող չէր, մինչեւ ժամանակը եւ կրթութիւնը չը տար նրան

մի նոր ձեւ եւ կերպարանք:

Մենք ման էինք գալիս ուխտաւորների բանակի մէջ, ուր իւրաքանչիւր քայլում հանդիսանում էր մի նոր տեսարան: Մարօն լուռ էր, նա խիստ սակաւ էր խօսում: Նա վազում էր մի տեսարանից միւսը, որպէս անհանգիստ թիթեռնիկը թռչում է մի ծաղկից դէպի միւսը: Կարծես, նրա հետաքրքրութիւնը ոչ մի բանի մէջ չէր կարողանում բաւականութիւն գտնել. նա բոլորից էլ շուտով ձանձրանում էր:

Մի տեղ — շուրջ սաղը ձեռքն հանդէս է մտել. նա իր նուագարանը սեղմած կուրծքին, ածում է, երգում է եւ պատմում է մի հին վէպ: Հեքիաթ սիրոյ բազմութիւնը, շրջապատած նրան, խորին ուշագրութեամբ լսում է եւ քաջալերում է իր գովեստներով եւ ընծաներով ժողովրդական վիպասանին:

Մի տեղ հանդէս են մտել երկու աշուղներ: Նրանք մրցութիւն են անում միմեանց հետ: Որպէս մի զոյգ համարձակ մենամարտողներ, տաքացած, բորբոքված, կուռում են: Գա հանձարի եւ մտաւոր ճարտարութեան կռիւ է: Նրանցից մէկը երգով առաջարկում է մի հարց, միւսը պէտք է խկոյն պատասխանէ նոյնպէս երգով: Նրկուսի երգեցողութեան յանգերը, չափերը, եւ եղանակը պէտք է միաձեւ լինեն: Հարցը եւ պատասխանը կատարվում է զարմանալի արագութեամբ, յանպատրաստից: Նա յաղթված է համարվում, երբ պատասխանում է անճիշտ, կամ խիստ անագան: Յաղթողը խլում է իր հակա-

ուսկորդի ազը, մուզանների նրան պարգեւած քնարը, — դա բանաստեղծի մրցանակն է:

Նս յետոյ շատ անգամ մտածում էի, երբ մինչեւ այսօր վանքերի տօնախմբութիւնների ժամանակ յայտնվում են աշուղները, որպէս ժողովրդական բանաստեղծներ, ցոյց տալու իրանց հանճարը եւ մրցանակ ստանալու, — չէ՞ որ դա մի եւ նոյն հին սովորութիւնն է, որ մնացել է կաթաղատական դարերից, երբ մեր երգիչները յայտնվում էին մեհենական տօներում: Բայց սրտեղ մնացին նրանց ստեղծագործութեան պտուղները:

Մի այլ տեղ առաջնորդները ածում են զուռնայ եւ նաղարայ: Նրանք կանգնած են տափարակի վրայ: Այնտեղ հաւաքվել է զուարճասէր բազմութիւնը: Պար են բռնել. դա կոչվում է էւլլէ կամ փռալ: Տղամարդիք, կանայք եւ աղջիկներ, միմեանց ձեռքից բռնած, կազմել են մի բոլորակ շղթայ: Նուագածուները կանգնած են բոլորակի կենտրոնում: Խայտաճամուկ շղթան պտըտվում է նրանց շուրջը: Կնիկների երեսները քօզարկած են, իսկ աղջիկներինը բաց են: Մի տղամարդ, գոյնզգոյն թաշկինակը ձեռքում, դրօշակի նման փռալուցնելով, տանում է պարագլուխը: Նա սկսել է մի ընթացիկ եւ ամեն անգամ երգում է մի տուն, ամբողջ խօրը կրկնում է նրա խօսքերը:

Իսկ երբեմն երգում են հերթով: Այն ժամանակ մրցութիւն է լինում տղամարդերի եւ աղջիկների մէջ: Նրանք պատասխանում են միմեանց դանազան սրախօսութիւններով:

Պարի եղանակը կամ ձեւը պահպանւում է ոտքերի զանազան անոակ շարժուածքներով: Երբեմն շղթայի բուրբակ շարքը ստանում է ուրմուր ձեւ, այն ժամանակ կազմւում է մի կատարեալ լարերինթոս: Բայց երբէք խաղացողները չեն խառնւում միմեանց:

— Կուզէս, մենք էլ պար բռնենք, հարցրի Մարօից:

— Չէ, գնանք ուրիշ բաներ մտիկ անելու, պատասխանեց նա:

Պատառելով խառնված ամբոխը, մենք անցանք վանքի գաւիթը. այստեղ հանգիստանում էր մի այլ տեսարան:

Մարօն սարսափեցաւ:

Այստեղ բազմութիւնը շրջապատել էր մի նորահաս կնոջ, որ ուշաթափ եղած, մոլեգնաբար թաւայլում էր գետնի վրայ: Նրա բերանը փրփրում էր, աչքերը վառւում էին վայրենի կրակով, մարմնի անդամները դողդողում էին, եւ կատաղի կերպարանքը ցոյց էր տալիս, որպէս թէ նա տանջւում է մի աներեւոյթ զօրութիւնից: Նա երբեմն իր դողդոջուն շղթունքի միջից արձակում էր խուլ, մթին եւ անկասկածաբեր:

Նրան կոչում էին «ընկաւոր»:

Մի վարդապետ փոքրիկ խաչը ձեռին կանգնած էր «ընկաւորի» մօտ: Նրա մօրուքի եւ շրթունքի ցնցողութիւնից երեւում էր, թէ արեղան աղօթում է:

«Ընկաւորը» կրկին ուշաթափ եղաւ, մտառ-

րապէս յափշտակվելով մի վերին ազդեցութիւնից, Քանի րոպէ նա մնաց անշարժ: Եւ ապա սկսեց արձակել խորին հառաչանքներ, արտասանել կցկտուր բառեր, եւ կոչել հրեշտակների, դեւերի, սատանաների, սուրբերի անուններ:

Վարդապետը գրեց «ընկաւորի» բերնում փոքրիկ խաչը: Նա ագահ ախորժակով խաչը ներս է կլանում: Քանի րոպէից յետոյ վարդապետը ձգում է շղթայից, որին կապված էր փոքրիկ խաչը, եւ դուրս է քաշում:

«Ընկաւորը» փոքր ինչ սթափվում է: Բայց տակաւին նրա երեսը զարհուրելի է եւ աչքերն արտայայտում են սարսափելի վրդովմունք:

Վարդապետը գարձեալ նրա բերնումն է դնում խաչը, եւ այս գործողութիւնը կրկնում է երեք անգամ:

«Ընկաւորը» բաւականին զգաստացած, ձայն է տալիս.

— Վանեցի Շուշան-Խաթունը թող այստեղ հրամայէ, «Աղան» (Առտուածամայրը) կանչում է:

Շուտով երեւան է լինում Շուշան-Խաթունը լի ահ ու դողով: Պա մի հարուստ վաճառականի կին է, որ աւելի քան տասն տարի ամուսնացած լինելով, տակաւին զաւակ չունի:

«Ընկաւորը» սկսում է բարբանջել.

«Եղիսարէթն աւետիս տուեց. . . կոյս Սարիամը յղացաւ. . . Գարրիէլը ուրախացաւ. . . որդին արգանդումը ցնծացաւ. . . Ո՞վ է, որ բաց է անում ամլութեան կապը. . . Սուրբ Տիրամայրն է այն. . . Գոհացէք, ժողովուրդներ. . . Աւրախ եղէք,

ուխտաւորներ . . . Աստուծոյ ատեանը բացվել է . . .  
Լոյսը վերեւից կաթել է . . . Երանի՛ տեսնողին . . .  
երանի՛ լսողին . . .

Վարդապետը սկսում է բացատրել «ընկաւորի» խօսքերը. ասում է Շուշան-Խաթունին, թէ «Ազան», այսինքն Աստուածածինը, ընդունեց նրա խնդիրքը, թէ նրա ամուսնեան կնիքը ջնջուեցաւ, եւ նա կը ծնէ մի որդի, որը մինչեւ եօթը տարի պէտք է նուիրված լինի վանքին, ամեն տարի նրա տօնախմբութիւնների ժամանակ կատարելով Տիրամօր ուխտագնացութիւնը, եւ ողորմութիւն տալով նրա «խեղճերին»:

Շուշան-Խաթունը ուրախանում է, եւ արձակելով իր պարանոցէն ծանրագին շղթան, զարգարած ոսկի դրամներով, ձգում է «ընկաւորի» առջեւը:

Մարգարէ կինը դարձեալ ընկնում է մտաւոր յափշտակութեան մէջ: Նրա բերանը սկսում է փրփրել, երեսի վերայ երեւում են զարհուրանքի նշաններ: Նա մրմնջում է, որպէս թէ խօսելով մի աներեւոյթ էակի հետ: Վարդապետը գործ է գնում խաչի ներգործութիւնը: Նա փոքր ինչ ուշի գալով, ձայն է տալիս.

— Մշեցի Գրիգոր ազային կանչեցէք:

Յայանվում է Գրիգոր ազան:

«Ընկաւորը» կարգում է պատգամը.

— Անարժանի վարձն է դաժան . . . Սեւ հաւեր, կարմիր կատու . . . նա թող լինի ինձ վարձատու . . . Քո սիրտն ինչու չէ ցնծում . . . չը ցանած տեղից դու չես հնձում . . . Ալաք . . . բա-

լաք . . . ան . . . չորս կողմը զառ . . . մէջն արբէ-  
շում . . . Գնա բեր . . . Ուրախացիր . . .

Վարդապետը բացատրեց պատգամախօսի  
գուշակութիւններն այսպէս.

— «Ուրախացիր» . . . վերջն էլի լաւ եկաւ,  
վերջն ուրախութիւն է:

Եւ նոյն բովէում արեղայի խորամանգ գէմքի  
վրայ երեւաց մի կեղծ ժպիտս նա շարունակեց.

— «Ալաք, բալաք» նշանակում է գոյնզգոյն  
կամ զօլ-զօլ, այսինքն՝ կերպաս, արբէշումի կեր-  
պաս, եզերքը զառով զարգարած: — Դա տաճարի  
վարագոյրն է: «Աղան» պահանջում է ձեզանից, —  
արեղան դարձաւ գէպի մշեցի Գրիգորը: — Դուք  
այսուհետեւ կուրախանաք, ձեր խնդիրքը կը կա-  
տարվի: «Աղայի» տաճարի վարագոյրը հնացել է:

Գուշակութիւնները մինը միւսի ետեւից շա-  
րունակվում էին: Զարմանալին այն էր, որ «Աղան»  
իր պատգամախօսի բերանով կոչում էր ամեն  
երկրից եկած նշանաւոր եւ հարուստ ուխտա-  
ւորներին: Իսկ նրանք խորին երկիւղածութեամբ  
լսում էին իրանց դատաւճիռը:

Յետոյ գուշակողը ընկնում է բոլորովին ու-  
շագնացութեան մէջ: Վարդապետները տանում  
են նրան, հաւատացնելով, թէ նոյն դրութեան  
մէջ նա կը մնայ մի քարայրի մէջ մինչեւ վանքի  
գալոց տօնախմբութեան օրը:

— Խեղճ, ասաց Մարօն, — ինչպէս պէտք է  
մնայ այնտեղ, բա՛ չի՛ մեռնի: Փարհատ, ես կու-  
ղէի, որ «ընկաւորը» մի բան էլ ինձ համար  
ասէր: — Գու չե՛ս հաւատում:

— Հաւատում եմ, պատասխանեցի ես:

Իրաւ որ, հաւատում էի: Իսկ եթէ Մարօն այժմ հարցնէր ինձանից, նրան կասէի՝ այն ժամանակ, երբ մարդիկ կուռք էին պաշտում, Պիւթիաս քրմուհին, իր եռոտանիի վրայ կանգնած, այսպիսի պատգամներ էր կարդում: Դա եւս Հայաստանի հեթանոսական դարերից մնացած հին սովորութիւն է:

Մենք անցանք եկեղեցական մարգարէութիւնից դէպի ժողովրդական մարգարէութիւնը:

Հեռու, մի քարաժայռի վրայ, նստած էր փոքրիկ աղջիկ: Նրա նիհար եւ բարակ երեսը, օժիած ընկուզի իւղով, փայլում էր ջահի լուսով, որ վաւրում էր նրա մօտ: Նա հագած ունէր մի տեսակ խայտաճամուկ եւ կախարդական զգեստ: Մանուկ օրիորդների բազմութիւնը շրջապատեղ էր նրան: Նա նոյնպէս գուշակում էր:

Մենք մօտեցանք:

— Դա այն աղջիկն է, ասաց Մարօն:

— Հիւրքին: Այսպէս կոչում են նրան:

Հիւրքին ճանաչեց՝ թէ ինձ եւ թէ Մարօն:

— Եկէք, գուշակեմ ձեզ համար, նա դարձաւ դէպի մեզ ժպտելով:— Զեզանից փող չեմ առնի:

— Ե՞րբ եկար այստեղ: Ա՞ր է քո մայրը, սկսեցի ես շփոթեցնել նրան զանազան հարցերով:

Գեռ նա պատասխան չը տուած, յայտնվեցաւ Սուսանը, կասկածաւոր կերպով նայեց իմ երեսին, մամռաց դէպի Հիւրքին մի քանի անհասկանալի խօսքեր: Փոքրիկ վհուկը վայր թռաւ ժայռից, որի վրայ նստած էր, եւ երկուսը միա-

տին անյայտացան գիշերային խաւարի մէջ:

— Ի՞նչու նրանք փախան, երբ տեսան մեզ, հարցրուց Մարօն:

— Չեմ իմանում: Պառաւ կախարդը միշտ զգուշանում է, որ Հիւրբին ինձ չը հանդիպէ, պատասխանեցի ես:

— Իստակ սատանայ է այդ աղջիկը, ասաց Մարօն:

— Նա հաւատացնում էր, թէ իր մայրը գողացել է նրան դեւերի օրօրոցից, մէջ մտաւ մի աղջիկ, որ կանգնած էր մեզ մօտ — Նրուստ է ասում, եթէ դելիկ չը լինի, մի այնքան պտտիկ երեխան կարո՞ղ է ամեն բան գիտենալ: Նա ասաց ինձ բոլորը, ինչ որ կար իմ սրտում, ինչ որ ես արել էի . . .

Երբ հեռացանք բազմութիւնից, Մարօն ինձ ասաց.

— Կամ Կարօն, կամ նրա ընկերներից մէկն այստեղ պէտք է լինի:

— Կու ի՞նչից ես իմանում:

— Այդ կախարդ կինը եւ փոքրիկ վհուկը միշտ հետեւում են նրանց: Որտեղ որ Կարօն լինում է, դրանք այնտեղ իսկոյն յայտնվում են:

— Ես չեմ հասկանում, Կարօն եւ իր ընկերներն ի՞նչ գործ ունեն այդ բոշաների հետ:

— Ես էլ չեմ հասկանում, պատասխանեց Մարօն: — Բայց մի բան ասեմ քեզ, Փարհատ, այն փոքրիկ վհուկը, որին կոչում են Հիւրբի, հայերէն խօսում է եւ խօսում է ինչպէս մի հայ:

— Բօշաներն ամեն լեզուով խօսում են:

— Դա նրանց նման չէ: Մի անգամ ես ասեցի՝ Հիւրքի, եկ մեր տանը մնա, ես քեզ կը պահեմ, ինձ քոյր կը շինեմ: Նա ինձ ասաց, «չէ, ես մօրս մօտ պիտի գնամ, մայրս ինձ շատ է սիրում»: Այս խօսքերը նա ասաց հայերէն լեզուով, բայց պառաւը հէնց որ լսեց, բարկացաւ, շուտով հեռացրուց Հիւրքիին:

— Նա մի կտրու՞մ ճայր է պտուռւմ, Մարօ, բայց սրտեղ է, յայտնի չէ, խեղճը միշտ յիշում է նրան:

— Այդ ես էլ իմանում եմ, պատասխանեց Մարօն:

Դառնալով դէպի մեր վրանը, մենք անցանք «փորձութեան ձորի» միջով: Այնտեղ էր «վիճակի ժայռ»: Նա կոչւում էր «վիճակի ժայռ» այն պատճառով, որ նրա վրայ ուխտաւորները փորձում են իրանց բախտը: Նրանցից իւրաքանչիւրը մօտենում է ժայռին, առնում է գետնից բարի փոքրիկ կտոր եւ կպցնում է ժայռին: Եթէ բարի կտորը մնայ նրա վրայ կպած, նշանակում է, որ նրա ուխտը ընդունելի է եղած: Իսկ եթէ պոկ գալով, քարը վայր ընկաւ, վիճակափորձը տխուր դէմքով հեռանում է խորհրդական ժայռից:

Մարօն մօտեցաւ փորձելու իր բախտը, բայց այնքան բազմութիւն թափւած էր այնտեղ, որ չը կարողացաւ տեղ գտնել: Մենք թողեցինք այդ մի ուրիշ ժամանակի:

---

ԲՈՂՈՔ ՎԱՆԱԿԱՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԳԷՄ

Գիշերից բաւական անցել էր, երբ դարձանք մեր վրանը: Պառաւ Խաթունը անքուն պահապանի նման հսկում էր: Մարգարիտը ընած էր, փոքրիկ Սալբիին սեղմած ունելով իր գրկում: Քնի մէջ նա մոռացել էր իր քօղը, երեսը մնացել էր բաց: Պառաւը տեսնելով իմ ներս մտնելը, նրա երեսը ծածկեց: Մարօն սկսեց ծիծաղել, որ ոչ սակաւ բարկութիւն պատճառեց պառաւի մէջ:

— Գու ոչ ահն ես իմանում, ոչ ամօթը, Մարօ, միայն Աստուած գիտէ, թէ քո վերջն ինչ կը լինի . . . ասաց նա ծանր կերպով:

Մարօն ժպտաց եւ ոչինչ չը պատասխանեց:

Մարօն թէեւ խոստացաւ, թէ կաշխատէ, որ ձանապարհին Մարգարիտին խօսացնէ ինձ հետ, կամ նրան իր երեսը բաց անել կը տայ ինձ մօտ, բայց հնար չեղաւ. Մարգարիտը մնաց ինձ համար միշտ լուռ եւ վարագուրեալ կուռք:

Առաւօտը պէտք է լուսացնէր Տիրոջ կիւ-

բակէն—տօնի մատաղ կտրելու օրը: Ահա այդ պատճառով, կէս գիշերից սկսած, ամեն մի ուխտաւորի վրանի առջեւ, գետնում փորած հնոցի մէջ, վառւում էր կրակ, եւ նրա վրայ դրած կաթսայի մէջ եփ էր գալիս մատաղի խաշլաման: Նոգին կաթսաների արտաշնչութիւնից լցրել էր օդը ախորժ-բարեպաշտական հոտով: Մի քանի տեղերում գեւո նոր էին մորթում զօհերը: Վանքի մղզմիները փութաջան եռանդով պտըտում էին ուխտաւորների քանակի մէջ, կատարելու նրանց պահանջները: Մղզմիներն էին վաճառում մատաղացու ոչխարները եւ մատուցանում էին ուխտաւորներին ինչ որ նրանց պէտք էր: Եւ դրանց մէջն էր վանքի սպասաւորների օգուտը: Ամեն մի կտրած մատաղի ազդրը մղզմիների սեպհականութիւնն էր, իսկ մորթը պատկանում էր վանքին: Եւ վարդապետների թիւը մղզմիներից պակաս չէր, որոնք հաւաքում էին մորթերը:

Պառաւ Խաթունը վազուց գնել էր մեր մատաղացու ոչխարը, մի սպիտակ, անարատ խոյ:

— Ի՞նչ եղաւ, ուշացաւ վարդապետը, ասում էր անգաղար պառաւը:— Չեկաւ, որ աղը օրհնէ:

— Ի՞նչ պէտք է օրհնած աղը, հարցրի ես:

— Կարծես, հայ-քրիստոնեայի տղայ ջըլինի, պատասխանեց պառաւը կծու կերպով.— այսքանն էլ չէ իմանում, բայց հինգ տարի վարժատուն է գնացել, գիրք է կարդացել . . .

Մարօն ասաց՝ թէ օրհնած աղը նրա համար է, որ ուտացնում են մատաղին նախ քան նրան զօհելը:

Վերջապէս յայտնվեցաւ վարդապետը: Նա այնքան զբաղված էր, որ հազիւ ժամանակ ունեցաւ առնել իր ասիւն մէջ մի քիչ աղի փշրանք, որը մօտեցրուց իր բերանին, անխելի ձայնով փրփրթաց նրա վրայ մի քանի խօսքեր—ի հարկէ աղօթք պէտք է լինէր — եւ ապա տուեց աղբ պառաւ Խաթունին: Պառաւր առեց աղը, վարդապետի աջը համբուրելով, եւ մի եւ նոյն ժամանակ կօխեց նրա ասիւն մէջ մի բան: Վարդապետը շնորհակալութիւն յայտնեց, օրհնեց եւ հեռացաւ, ասելով՝ շնորհակալութիւն մատաղ լինի, սուրբ Աստուածածնի օրհնութիւնը ձեզանից անպակաս լինի՝ եւ այլն:

Աղն ուտացրինք ոչխարին, խեղճ անասունը այնպէս ակորժանօք կերաւ, ամենեւին չը մըտածելով, թէ այնուհետեւ որպիսի դառն վիճակ էր սպասում նրան:

Թէեւ ես երկար թափառեցի ուխտաւորների բանակի մէջ, բայց տակաւին իմ նպատակին հասած չէի. սալմաստեցիներից ոչ մէկին չը տեսայ: Վանքի մղգսին յայտնեց՝ թէ նրանց քարաւանը իջեւանել է բլուրի միւս կողմում, որովհետեւ սալմաստեցիք, ուխտաւորների վերջինները լինելով, վանքի մօտակայքում տեղ չը գտան: Երբ ես տուեցի նրան երկու դուրուշնոցը, նա յանձն առաւ տանել ինձ եւ ցոյց տալ նրանց տեղը:

Եւ իրաւ, իւրաքանչիւր երկրի ուխտաւորների քարաւանը իջեւանել էր մի առանձին տեղում: Ամբողջ կէս ժամ մենք անց էինք կենում այն ընդարձակ եւ խուռն բանակի միջով, դեռ

վերջ չը կար: Բայց մղգսի թորոսը—այսպէս էր իմ առաջնորդի անունը—գեռ գոհ չէր վանքի այն տարուայ «հունձքով»՝ նա գտնում էր ուխտաւորների թիւը շատ պակաս, անցեալի հետ համեմատելով:

—Ատոցան ժամանակները, աղայ,—ասում էր նա խորին կերպով հոգւոց հանելով:—Առաջ լաւ էին տարիները. կը տեսնէիր, այստեղ սար, ձոր, դաշտ, ասեղ գցելու տեղ չը կայ, ամենը բռնած կը լինէր ուխտաւորներով: Հիմա նրա կէսը, կէսի կէսը չը կայ: Ել ինչով պէտք է ազրես: Տասներկու գլուխ քուլֆաթ կայ իմ տանը, ամենից պտիկը հինգ տարեկան է: Հաց կուզեն, հալաւ կուզեն, իրտեղից բերես: Ինչ էլ որ ուխտաւորներից ձեռքդ է գալիս, մեծ բաժինը մեր հայրսուրբները խլում են. թէ չը տաս, վանքի գիւղից դուրս կանեն: Ի՞նչ պէտք է անես նրանից յետոյ . . .

Մի քանի բոպէ տխուր լուսթիւնից յետոյ մղգսին շարունակեց.

—Իմ տղերքը իմ բախտից բոլորն էլ մարմնով ողջ դուրս եկան, գոնեա մէկն էլ «խեղձ» չեղաւ, որ հօր դարգին դարման անէր . . .

Ես սարսափեցայ, լսելով հօր մի այսպիսի անգութ ցանկութիւնը, որով կամենում էր, որ իր զաւակներից մէկը «խեղձ» լինէր, այսինքն սուրբ Աստուածածնի հրէշաւոր ախտաւորներից մէկը լինէր, մարմնով այլանդակված, որ կարողանար «հօր դարգին դարման անել» . . .

—Ինչ կուզէիր, որ մէկը «խեղձ» լինէր,

կտրեցի ես մղղսու խօսքը:

— Ի՞նչպէս չուզես, աղայ: «Խեղճին» ամեն անգամ զանազան երկրներ պտըտացնելիս, կը տար ինձ աւելի քան հինգ հարիւր զուրուշ, դա բաւական էր իմ տանը մի տարուայ համար: Հիմա ի՞նչ բանի են պէտք մէկէլները, որ ողջ են, որ ձեռք եւ ոտք ունեն: Նրանցից խէր (օգուտ) չը կայ . . .

— Ի՞նչու ես դու ցանկանում, որ «խեղճը» անպատճառ քո որդիներից մէկը լինէր. այս վանքում խօ շատ կայ, որին ուզենաս, կարող ես տանել, ման ածել եւ փող հաւաքել:

— Կարող եմ: Բայց դու կարծում ես, որ մեր հայր սուրբերն իրանց հօր հօգու համար կը տան ինձ «խեղճին» ման ածելու: Չէ, եղբայր: Իրա համար նրանք կը վեր առնեն աւելի՛ քան թէ ես կը հաւաքէի: Ինձ կը մնար իմ չարչարանքը: Օրինակ քեզ, մղղսի Յակօն այս տարի տարաւ «խեղճերից» մէկին Վանայ երկրում ման ածելու. նա բերեց հազար զուրուշից աւելի. բայց հարիւր զուրուշ չը մնաց իր ձեռքում: Բայց երբ «խեղճն» իմ մօից եւ արիւնից կը լինի, այն ժամանակ վարդապետները չեն կարող պարպել իմ քսակը . . .

Այժմ հասկանալի էր ինձ մղղսու ցանկութիւնը. նա կամենում էր շահվել իր «խեղճից»: որպէս իրան պատկանող սեպհականութիւնից, եւ չէր ուզում վարձել վարդապետներից իր համար անօգտաւէտ պայմաններով: Թողեալ այդ, ես մղղսի Թորոսի խօսքերի մէջ նկատում էի ոչ միայն բողոք դէպի վանական արեղանների հա-

ըրտահարութիւնը, այլ մի գառն ատելութիւն  
դէպի նրանց սրբազան անձնաւորութիւնը, որը  
չը պէտք է լինէր առանց իրական պատճառների:

— Երեւում է, վարդապետները քեզ հետ այն-  
քան լաւ չեն, մղզոխ Թորոս:

— Վարդապետներ . . . կրկնեց նա խորհրդա-  
կան ձայնով:— Ի՞նչ կասես, եղբայր, դրանք մար-  
դիկ չեն. իստակ սեւ սատանաներ են . . . Կրանք  
այն մղզոսուն հաց կը տան, որ նրանց ամեն  
ասածին պատասխանէ՝— «Հա՛»: Բայց մղզոխ Թո-  
րոսը մէկ գրուստ մարդ է, նա չէ կարող վատ  
բանին «Հա՛» ասել . . .

Առհասարակ ես նկատում էի, որ մարդիկ  
այն ժամանակ միայն ջերմեռանդ են դէպի վան-  
քերը եւ վանական արեղաները, երբ նրանցից  
հեռու են Արի ընդհակառակն, ես տեսնում էի,  
որ վանքերին մերձաւոր ժողովուրդը չափազանց  
զղուած էր նրանցից, Ի՞նչ էր դրա պատճառը,  
եւ չը գիտէի. միայն երեւում էր նրանց մէջ  
միջեւ անգամ թերահաւատութիւն այն սրբա-  
զան տեղերի մասին, որոնք նուիրական էին ամեն  
մի հայի համար: Շատ անգամ մի գործարանի  
կառավարչի վատութիւնը ծնուցանում է յաճա-  
խորդների մէջ ատելութիւն դէպի նոյն իսկ գոր-  
ծարանի հիմնարկութիւնը: Արդեօք այս օրինակը  
չէր վերաբերում եւ մեր արեղաներին եւ մեր-  
վանքերին:

Ես երեխայութիւնից ունէի փոքրիկ խորա-  
մանկութիւն, սատանայի պէս մտնել մարդու դա-  
մարում, եւ որպէս ասում են, նրա ուղեղը թափ-

տալ: Լսելով մղզախ Թորոսի վերջին խօսքերը, թէ վարդապետները այն ժամանակ միայն վարձա-  
տրում են վանքի սպասաւորներին, երբ նրանց  
կամքին հլու ծառաներ են դառնում, որոնք նը-  
րանց իւրաքանչիւր խօսքին, որքան եւ վատ լի-  
նէր նա, կը պատասխանեն՝ «այո՛», — ես սկսեցի  
աւելի հետաքրքիր լինել, թէ ի՞նչ էր պատճառ  
տուել մղզառու դժգոհութեանը՝ Նա թէեւ խիստ  
դժուարութեամբ, այսուամենայնիւ, պատմեց.

— Մենք երկու եղբայրներ էինք. իմ պստիկ  
եղբայրը պսակվեց, մի ամիս չանցաւ, մեռաւ:  
Նրա հարսը մնաց տանը այրի: Մէկ օր մեր Վա-  
րապետ հայր սուրբն ինձ կանչեց իր մօտ, ա-  
սաց՝ — «Մղզախ Թորոս, քո եղբոր կնիկը ի՞նչ կա-  
նէ տանը: Ես պատասխանեցի՝ — Հայր սուրբ,  
ծառայ եմ արիւղ, ի՞նչ պէտք է անէ, իմ երե-  
խերքին շորեր կը կարէ, կը կարկտէ, թոնիր կը  
վառէ, հա՛, այդպէս տան բաներ կանէ: Իմ կնի-  
կը հլուանդ է, իմ երեխերքը նա կը պահէ: Վար-  
դապետն ասաց՝ — «Սյդ բաներից քեզ ի՞նչ խէր,  
դու քո եղբոր կնիկն ուղարկիր, թող գայ վանքի  
ոչխարները կթէ, այս գործից քեզ համար շատ  
շահմունք կը լինի. եղից, պանիրից, բուրդից իր  
համար «քալափուր» կանէ: Քեզ էլ սուրբ Սքան-  
չելագործի մատուցը կը տամ, կերթաս Թարրի-  
զու կողմերը, կը պտըտես: Ես ուրախացայ, այն-  
ժամանակ մի քանի հարիւր դուրուշ պարտք ու-  
նէի, մտածեցի, հա՛, Աստուած ողորմաց, պարտ-  
քերս կը տամ: Մէկ էլ միտք արի՛ — լաւ, իմ եղ-  
բոր կնիկը մէկ ամսոյ ջահլի հարս է, հալայ

իր մեռելի սեւի մէջն է, ես ինչպէս թողնեմ,  
որ նա գնայ վանքի ոչխարները կթէ: Կասես թէ,  
ուստանան ինձ խելքից հանեց, ասեցի՝ ինչ կայ,  
մեր մղղախներին շատերի կնիկներն, հարսերն,  
վանքին ծառայութիւն կանեն, միաբանների հա-  
մար հաց կը թխեն, նրանց շորերը կը լուան,  
կը կարկտեն, վանքի պանիրը կը մակարդեն, իւղ  
կը հանեն, բուրգը կը մանեն, ինչ գլուխդ ցա-  
ւեցնեմ - վանքի համար ստանտիկնութիւն կանեն:  
Ու այն կնիկների տղամարդիկն աւելի պատիւ  
ունեն հայր սուրբերի մօտ. լաւ ուտում են, լաւ  
խմում են, լաւ հագնում են: Ի՞նչու մղղախ Թո-  
րոսը նրանցից պակաս մնայ: Ես Կարապետ հայր  
սուրբի հրամանը կատարեցի. իմ եղբօր կնիկը  
գնաց վանքի ոչխարները կթելու, ես էլ առայ  
սուրբ Աքանչեւագործի մասունքը, գնացի դէպի  
Թաքրիզու երկիրը: Իմ ժողովարարութիւնը քա-  
շեց աւելի քան կէս տարի: Երբ գործայ տուն,  
տեսնեմ, հարսը չը կայ: — Ո՞ր է մեր հարսը, հարց-  
նում եմ իմ կնիկանից, նա պատմեց, թէ՛ «հարսն  
ամեն օր կը գանգատվէր, չէր ուզի վանքը գը-  
նալ, հայր սուրբը մարդ կուղարկէր, կը տանէր:  
Հայր սուրբը կասէր՝ քեզ մղղախ Թորոսն է տը-  
ւել, որ վանքի ոչխարները կթես, դու քո խղձով  
պէտք է կատարես, մինչեւ նրա գալը»: Մէկ օր  
տեսանք՝ հարսը չը կայ. արեւը մտաւ, գիշերն  
անցաւ, նա տուն չեկաւ: Առաւօտեան գնացինք,  
սարը պտռեցինք, ձորը պտռեցինք, չը կայ ու  
չը կայ: Ո՞րտեղ կորաւ, Աստուած: Գնացինք ծո-  
վի ափը, այնտեղ տեսանք հարսի մարմինը ծովի

գաղղանները գցել էին դուրս. նա խեղդուած էր...  
Մօրից ոչ այնքան հեռու ընկած էր մի նորածին  
տղայ, որին դաշտի գաղղանները պատառել էին»...

Մղդսին ձեռքը տարաւ դէպի երեսը, ինձ  
երեւաց, որ նա սրբեց աչքերի արտասուքը, եւ  
ապա ձեռքը մեկնեց դէպի բլուրի ստորոտը, ա-  
սելով.

— Այստեղ են սալմաստէցի ուխտաւորները:

Ես բաժանովեցայ, ինձ հետ տանելով նրա  
պատմութեան տխուր տպաւորութիւնը . . .



Կ Ր Կ Ի Ն Ն Ա Ն Գ Ի Դ Պ Ո Ի Մ Ն

Մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ սալմաստէցի ուխտաւորների թւում գտայ իմ մօրը եւ քոյրերիս: Նրանք եկել էին իմ քեռի Պետրոսի հետ, որը իր ընտանիքով նոյնպէս ուխտէր եկած: Մօրս վրանը կազմուած էր քեռուս վրանին կից: Իմ հայրենակիցներից մէկը ինձ այնտեղ տարաւ:

Մինչեւ այնօր երբէք չէր պատահել ինձ այնպէս ջերմ կերպով զգալ մայրական սէրը եւ քոյր սրտի գորովական քնքշութիւնը, որպէս այն բուսակում, երբ ես գտայ իմ մօրը եւ քոյրերիս: Սկզբում նրանք մնացին բոլորովին ապշած, խօսք չէին գտնում խօսելու, եւ իրանց կարօտութիւնը յայտնում էին համբոյրներով, գրկախառնութեամբ եւ արտասուքով: Ես էլ չը կարողացայ պահել իմ սրտի զեղմունքը, եւ իմ աչքերում յայտնվեցաւ արտասուք:

— Փնփք քեզ, Աստուած, չը մեռայ եւ կրկին տեսայ որդուս . . . քեզ մատաղ, բախս . . . ինչ-

պէս դու թողեցիր մեզ, իմ աչքի լոյս... ես ո՛վ  
ունեմ բացի քեզանից, Ֆարհատ ջան, դու որ  
չը լինիս, ինձ թող տանեն ողջ-ողջ գերեզմանը  
դնեն . . . Ի՞նչ էի արել քեզ, Ֆարհատ ջան, ի՞նչու  
հեռացար մեզանից . . .

Այսպէս միմնջում էր մայրս, մերթ ուրախա-  
նալով եւ մերթ լալով, իսկ քոյրերս, Մարիամը  
ու Մագթաղը, չէին ուզում ինձ բաց թողնել  
իրանց գրկից:

Մայրս եկած էր ուխտ, որպէս յիշեցի, իմ  
բեռի Պետրոսի ընտանիքի հետ: Այդ մարդն իմ  
հոգեւոր հայրն էր, մի եւ նոյն ժամանակ մեր  
թագի տանուտէրը: Քեռի Պետրոսը Սալմաստի  
մէջ համարվում էր շատ փորձված, խոհեմ եւ  
խելացի մարդ. նա նշանաւոր էր իր երկար ճա-  
նապարհորդութիւններով դանազան երկրներում:

—Ա՛ւմ հետ ես եկել, Ֆարհատ, հարցրուց  
մայրս: — Ի՛նչ ի՞նչ գիտէիր, որ մենք այստեղ ենք:

Ես պատասխանեցի, թէ եկած եմ որսորդ  
Ալօի ընտանիքի հետ, յայտնեցի՝ թէ ուրբեր են  
նրանցից եկածները: Մարիամը եւ Մագթաղը շատ  
ուրախացան, երբ լսեցին, թէ Մարօն էլ ուխ-  
տաւորների թւումն է:

—Ֆարհատ ջան, տար մեզ տեսնենք Մա-  
րօին, ասաց Մարիամը:

—Ի՛նչ խօ կը թոյնենս, մայրիկ, գնանք Մա-  
րօին տեսնենք, աւելացրուց Մագթաղը:

Ես առաջարկեցի եւ մօրս գալ ծերունի որ-  
սորդի ընտանիքի վրանը եւ նրանց հետ միասին  
լինել մինչեւ տօնախմբութեան վերջը: Մայրս

պատասխանեց, թէ անյարմար կը լինի քեռի Պետրոսի ընտանիքից բաժանովել, գուցէ կը վերաւորվէին նրանք: Բայց երեսներքը, որ ցանկանում էին Մարօին տեսնել, կարող էին գնալ, միայն պէտք է գիշերը չը մնան նրանց մօտ, այլ շուտով վերագառնան. իսկ ինքը առաւօտեան պատարագից յետոյ կը գայ Խաթունին եւ Հասօի նշանածին տեսնելու: Եւ աւելցրուց, թէ ինքը միշտ գոհ է եղել ծերունի որսորդից, եւ համարում է որսորդին շատ բարի մարդ. եւ նա փոքր ինչ հանգիստ էր իմ մասին նրանով միայն, որ գիտէր, թէ ես գտնվում եմ որսորդի տանը:

— Դու որտեղից գիտէիր, մայրիկ:

— Ինքը որսորդը մարդ էր ուղարկել ինձ մօտ, քո մասին իմացում տալու:

— Եւ դու գիտես, թէ ինչպէս յայտնվեցայ ես այնտեղ:

— Կարօն քեզ տարաւ: Ես բոլորը գիտեմ. . .

Վերջին խօսքը արտասանելու միջոցին մօրս ձայնը դողաց: Զը գիտեմ, ինչու Կարօի անունը նրան վրդովմունք պատճառեց:

— Կարօն շատ լաւ տղայ է, մայրիկ:

— Լաւ է, բայց. . . Թող մնայ, ես յետոյ կը խօսեմ նրա մասին. . .

— Յայտնվեցաւ փախտականը, լսելի եղաւ քեռի Պետրոսի որոտացող ձայնը, որ նոյն միջոցին ներս մտաւ մօրս վրանը, ուր նստած էինք մենք:

Ես կանգնեցայ, եւ պահպանելով այն ժամանակի քաղաքավարութեան ձեւը, համբուրեցի քեռուս ձեռքը: Նա համբուրեց իմ ճակատը

եւ նստեցրուց իր մօտ:

Քեռի Պետրոսը գանձում էր իր հոգու խիստ ուրախ տրամադրութեան մէջ. ինձ երեւաց, որ նա փոքր ինչ հարփած էր: Նա տարել էր իր գերդաստանը ման ածելու եւ դառնում էր զբօսանքից: Նա դարձաւ դէպի ինձ այսպիսի անկապ խօսքերով.

— Ի՞նչ ես շինում դու, լաւ ես, ի՞նչ է անում հին աշուճ . . . մարդիկ այստեղ հոգու համար են գործում, իսկ «նա» այնտեղ եզիգիւնների իշխանի մօտ, Աստուած ոչ գիտէ, ի՞նչ սատանայական որսգայթներ է լտրում . . . եւ իր «ձտերին» երկրի զանազան կողմերն է ուղարկում: . . . Ի՞նչի համար, ի՞նչ դուրս կը գայ այս յիմարութիւններից. . . եւ դու, քամի փչող ընկեր, լաւ տեղն ընկար, ինչպէս մուկը մինորսակի մէջ. . .

Ինձ պարզ հասկանալի էր, թէ քեռի Պետրոսի հեգնական ակնարկութիւններն ումն էին վերաբերում: Նա խօսում էր որսորդ Այօօի եւ նրա հիւրերի՝— իմ ընկերների մասին: Բայց որտեղից գիտէր նա թէ որսորդը, կամ նրա խօսքով՝ «հին աղուէսը» գնացել էր եզիգիւնների իշխանի մօտ. այդ մի գաղտնիք էր, որ ես նոյնպէս չէի կարող իմանալ, . եթէ Կարօի նամակն իմ ձեռքը չընկնէր: Եւ որտեղից յայտնի էր նրբան, թէ ծերունի որսորդի «ճըտերը», այսինքն Կարօն իր ընկերների հետ, գնացել էին զանազան կողմեր: Եւ ի՞նչ կասկածաւոր մի բան կար նրանց վարմունքի մէջ, որը, որպէս երեւում էր, ընդգէմ էր քեռի Պետրոսի համակրութեանը Այօ

Հարցերն ինձ համար բոլորովին հանելուկներ էին: Այնուամենայնիւ, ինձ խիտ անհաճոյ երեւեցաւ քեռի Պետրոսի արհամարհական խօսքերն այն մարդկանց մասին, որոնց ես շատ պատում էի: Ես ուզեցի որպէս ասում են՝ նրա բերնի համը տալ, բայց այն միջոցին ներս մտաւ փանքի արեղաներից մէկը: Դա Կարապետ հայր սուրբն էր, այն փարգապետը, որ այնպէս անխիղճ կերպով անբախտացրել էր միգոսի Թորոսի հարսին, եւ երկու թշուառ զոհերի մահուան պատճառ էր գարձել . . .

Մարիամը եւ Մագթաղը փազուց ինձ աչքով լուռ նշաններ էին անում, որ շուտ փերջացնեմ քեռի Պետրոսի հետ: Նրանք շատ ուրախացան, որ արեղայի յայտնվելն ընդհատեց մեր խօսակցութիւնը, եւ ես դուրս եկայ փրանից:

— Դու էլի կը գնաս մեր մօտ, Փարհատ, հարցրուց քեռի Պետրոսը:

— Ի հարկէ, պատասխանեցի ես:

— Լաւ, գնա:

Արեղան եւ քեռի Պետրոսը նստեցան միմեանց շատ մօտ եւ մեզ բոլորովին անխելի ձայնով խօսում էին:

Մայրս նոյնպէս փրանից դուրս եկաւ ինձ հետ: Նա ասաց, թէ շատ կը ցանկանար, որ ես նրա մօտ մնայի, բայց որովհետեւ ծերունի որսորդի ընտանիքը եկած են առանց տղամարդի, չէ ուզում ինձ բաժանել նրանցից, միայն ցանկանում է, որ ես գտնեալ ցերեկներն անցուցանեմ նրա մօտ. իսկ գիշերները Մարօի եւ Մար-

գարիտի մօտ մնամ, չիցէ թէ նրանց մի վտանգ պատահի, որովհետեւ ուխտաւորների մէջ շատ անկարգութիւններ էին լինում:

— Բայց թող քոյրերս այս գիշեր մնան ինձ մօտ, ինգրեցի մօրիցս:

— Հա, մայրիկ, մենք կը մնանք Մարօի մօտ, ասաց Մարիամը:

— Լաւ, մնացէք, ասաց մայրս, եւ կրկին ինձ համբուրելով, ճանապարհ դրեց:

Երբ փոքր ինչ հեռացանք սալմաստէցի ուխտաւորների իջեւանից, ես քոյրերիցս հարցրի, թէ մեր քաղաքացիներից ո՞վքեր են եկած:

Նրանք յայտնեցին մի քանի անուններ, իսկ Մարիամը աւելացրուց.

— Գիտես, Փարհատ, Սօնան էլ եկել է մեզ հետ. նրա հայրն էլ, եղբայրն էլ եկել են: Հիմա ինչ կասի, երբոր տէրտէրը քեզ կը տեսնէ:

— Ինչ պէտք է ասի, պատասխանեց Մագ-թաղը ծիծաղելով. — Կը բռնէ ականջներիցը, ձիգ կը տայ ու կասէ՝ — Փարհատ, ի՞նչու փախար վարժարանից:

— Նա չէ կարող, հիմա ես նրա ականջներից ձիգ կը տամ, պատասխանեցի ես:

— Վայ, մեղք չէ, ախար նա տէրտէր է:

— Փարհատը հանաք է անում, խօսեց Մարիամը:

— Սօնան գիտէ, որ այստեղ եմ, հարցրի ես:

— Նա չէ իմանում, նա այսօր առաւօտեան ինձ ատում էր՝ «էրնէկ, Փարհատն այստեղ լի-նէր»: — Նա շատ ուզում էր քեզ տեսնել: Ի՞նչու

էր ուզում, Ֆարհատ, հարցրուց Մարիամը:

— Զեմ իմանում. . . Բայց որտեղ են վեր եկել նրանք:

— Զը տեսար դու, նրանց չաղըրը կպած էր մերին: Նրանք էլ քեզ չը տեսան, չեմ իմանում, ուր էին գնացել, այնտեղ չէին, ասաց Մարիամը:

Քոյրերս պատմեցին մեր քաղաքից մի քանի նորութիւններ, որոց թւում յայտնեցին եւ վարժապետիս կնոջ՝ ողորմելի Գիւլ-Ձհանի մահը: Ես մի կողմից ուրախացայ, որ խեղճ կինը ազատվեցաւ իր տանջանքներից, որով չարչարվում էր նա այնքան շատ տարիներ, խիստ հազիւ բաժանվելով հիւանդութեան մահճից: Բայց ինձ վրայ խիստ տխուր տպաւորութիւն գործեց, երբ Մագթաղը ասաց թէ մեր քաղաքում այնպէս լուր էր տարածվել, իբր թէ տէրտէրակնոջ մահուան պատճառն եղել է տէր հօր սաստիկ ծեծը, որին արժանացրել էր քահանան իր կնոջը նրա մահուանից մի քանի օր առաջ: Ես առանց երկբայութեան հաւատացի, մտաբերելով, թէ որպէս բարբարոսաբար ծեծում էր նա ինձ եւ իմ ընկերներին: Եւ մի այսպիսի մարդը, որպէս վարժապետ եւ քահանայ, առաջնորդում էր մի ամբողջ քաղաքի ուխտաւորներին գէպի Աստուծոյ Մօր տաճարի երկրպագութիւնը . . .

Որպէս իմացայ քոյրերիցս, տէր Թօգլիլը բացի Սօնայից բերել էր իր հետ եւ իր որդի Ստեփանին Խեղճ տղայի խելացնորութիւնը, վերջին օրերում աւելի սաստկացած լինելով, հայրը բերել էր նրան սուրբ Աստուածածնի վանքը այն

մտքով, որ թողնէ Ստեփանին մնալու վանքի «խեղճերի» մէջ, այնտեղ բժշկովելու համար: Նա այժմ համարում էր Ստեփանի խելացնորութիւնը Տիրամօր պատիժներից մէկը: Արքան ճիշտ էր այդ կարծիքը, ես չը գիտէի, բայց ես գիտէի մի բան, թէ որպէս Ստեփանի հայրը չարաչար կերպով վարվում էր նրա հետ. որպէս նրա երեխայութեան ժամանակ, իբրև պատիժ, կախ էր տուել խեղճ տղային ջրհորի մէջ, նա մնացել էր այնտեղ կէս ժամ, եւ այնուհետեւ Ստեփանի խելքը տեղը չեկաւ. նա միշտ ցնորվում էր, երբ ջուր կամ հօր էր տեսնում. . . Այս ես գիտէի. . .


Ես շատ ուրախ էի, որ գնալով մօրս մօտ, քեռի Պետրոսի վրանը, չը հանդիպեցայ վարժապետիս: Ինձ խիստ անտանելի էր միւս անգամ տեսնել այն մարդու երեսը, որը այնքան դառն ցաւերի պատճառ էր եղել ինձ:

Հասնելով մեր վրանը, գտանք պառաւ Խաթունին եւ Մարգարիտին քնած. Մարօն արթուն նստած սպասում էր ինձ:

Ես չեմ կարող նկարագրել այն ուրախութիւնը, որով Մարօն հանդիպեց իր երեխայութեան երկու ընկերուհիներին. նրանց միմեանց հետ փաթաթվելը, նրանց պարզ ու անմեղ սրտերի արտահեղութիւնը, նրանց անկեղծ շրթունքների մրմունջը բարձր է գրչի զօրութիւնից. այդ միայն պէտք է տեսնել եւ զգալ:

Հայկական աղջկայ սրտի մէջ կայ մի բան, կատարեալ հրեշտակային, որ մնում է միշտ անհասկանալի հասարակ մահկանացուների համար:

Նա այնպէս մաքուր եւ սրբազան է, որպէս մի  
անարատ աստուածութիւն. նա արտախայլում է  
իր ջերմ լուսով, նա բուրում է իր անուշ հո-  
տաւէտութեամբ, բայց միշտ մնում է անշօշա-  
փելի . . .



16.

ՔՈՒՐԴԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՐԲԱՐԱՆԻ ՄԷՋ

Աստուծոյ լոյսը բացվեցաւ: Օրը կիրակի էր: Առաւօտեան մայրս եկաւ մեզ մօտ, եւ մենք բոլորս միասին գնացինք վանքը ժամ: Մեր վրանումը մընաց միայն պառաւ Խաթունը, մատաղն եփելու համար:

Աւխտաւորների բանակը գտնվում էր իր ջերմեռանդ-բարեպաշտական վրդովմունքի մէջ: Ամեն տեղ երեւում էր շարժողութիւն, ամեն տեղ եփ էր գալիս բորբոքված հաւատքը, իր բոլոր աստուածային կարողութեամբ: Բազմութիւնը շտապում էր դէպի վանքը պատարագ տեսնելու եւ սուրբ Տիրամօր գերեզմանը համբուրելու: Այն խառնիճազանճ ամբոխի մէջ կարելի էր տեսնել ամեն երկրի հայեր, ամենատեսակ գլխարկներով, սկսած օսմանլուի ֆէսից, քրդի ապարօշից, մինչեւ պարսկի երկայն, մորթէ գդակները: Կանայքը նոյնպէս զանազանվում էին տեսակ-տեսակ հագուստներով. ամեն երկրի կինը ընդունել էր տիրող ազգի կանանց զգեստի ձեւերը:

Հայր միշտ սիրում է նմանել նա չէ պահպանում իր ինքնություն, յատկանիշ առանձնութիւնները:

Ուխտաւորների մէջ լեզուները մինչեւ անգամ բաժանված էին բարբառներով. մէկի խօսակցութիւնը միւսին համարեա անհասկանալի էր: Յաւալին այն էր, որ շատերը խօսում էին այն ազգի լեզուով, որի լծի տակ ապրում էին, բոլորովին մոռանալով մայրենի խօսքը. ինձ երեւում էր, իբր թէ այն բազմազան ամբոխի մէջ ազգային ամբողջութիւնը իսպառ քայքայվել էր, եւ քանդվել էին նրա մէջ միաւորիչ յոգերը . . .

Բայց մի կապ, որ գեռ պահպանվել էր, մի կապ, որ միաւորում էր այն խորտակված ամբողջութեան զանազան կտորտանքը; մի կապ, որին չէր կարողացել խզել բռնակալի սուրը, դա էր՝ — կրօնքը եւ եկեղեցին —

Բայց կարո՞ղ էր պահպանվել այս կապը միշտ անխզելի, իր աստուածային ամուր հաստատութեան մէջ, երբ նրա հոգատարներն էին՝ կարապետ հայր սուրբի նման արեղաններ եւ տէր Թօղկի նման քահանաներ . . .

Եւ այժմ գառն մտածմունքներ պաշարում են ինձ, երբ ծագում է իմ գլխում այդ հարցը...

Սուրբ Տիրամօր տօնախմբութիւնը մի կատարեալ արեւելածառ էր, ուր գլխաւորապէս երկու դաս լածառականներ հանդէս էին հանել իրանց միտերքը եւ կարծես, աննկատելի կերպով միմեանց հետ մրցութիւն էին անում:

Վաճառականների մի դասը բազկացած էր

վանեցի առեւտրականներից, իսկ միւսը՝—վանքի արեղաններից:

Վանեցին գարսել էր հրապարակի վրայ զանազան տեսակ մանրուքներ, կանանց հասարակ զարդեր, գոյնզգոյն փարջաններ, մի խօսքով, այնպիսի խայտաճամուկ ապրանքներ, որոնք կարող էին հրապուրել գնողներին, եւ մինչեւ անգամ ամենախնայող ժլատի քսակից դուրս քաշելով մի քանի դուրուշներ: Ծախողը կանգնած էր իր մթերքի մօտ եւ բարձրաձայն գովաբանում էր իր վաճառքի լաւ յատկութիւնները:

Մնացնելով վանեցիներից, գալիս է արեղայ-վաճառականների կարգը, եւ քո առջեւ բացվում է մի ահագին հիմնարկութիւն՝—վանքը: Դա բովանդակում է իր մէջ մի հանդիսարան . . .

Մտնում ես վանքի գաւիթը: Այտոեղ, վանքի դրան երկու կողմերից սկսած, մինը միւսի մօտ զուգահեռաբար նստած են «խեղձերը»: Նրանց երկու կարգ շարուածքի միջով բացվում է մի քուչայ որ տանում է դէպի վանքի դուռը: Նոյն քուչայով անցնում են ուխտաւորները: «Խեղձերի» այլանդակված կերպարանքները բերում են անցորդի վրայ զարհուրանք, մի եւ նոյն ժամանակ լցնելով նրա սիրտը մի պատկառելի երկիւղածութեամբ դէպի մեծ Աստուածուհու վեհութիւնը, որ ցոյց էր տուել իր նշանները այն թշուառների վրայ:

Երբ մենք անցնում էինք «խեղձերի» միջով, մի պատանի, մաշված եւ գունաթափ երեսով, գեղեցիկ երկնագոյն աչքերով, եւ շէկ-մետաք-

ասնման մազերով, վեր թռաւ տեղից եւ գրկեց ինձ, ասելով.

— Փարհատ, ես վախում եմ գրանից. . .

Պատանին ցոյց տուեց «խեղճերին», որոնց կարգում նստացրել էին եւ իրան:

Ես ճանաչեցի. նա տէր Թօղլիկի որդին՝ Ստեփանն էր:

Մինչեւ իմ խօսելը, շուտ վրահասաւ արեղաններից մէկը, որ կանգնած «խեղճերի» մօտ, պատմում էր անցորդներին, թէ նրանցից իւրաքանչիւրն ինչ յանցանքի համար ենթարկուած էր Տիրամօր պատժին: Արեղան, ինձանից հեռացնելով Ստեփանին, ստիպեց նստել իր տեղը: Պատանին ողորմելի կերպով նայեց մեզ վրայ եւ գլուխը քաշ գցեց: Խեղճ տղայ, բնտանիքը, որ անբախտացրել էր նրան, բաւական չէր, որ չէր դգում իր բարբարոսութիւնը, այժմ բոլորովին դուրս էր գցել թշուառ զոհին իր միջից. . .

Մենք մտանք վանքի մէջ: Այստեղ տաճարի սուրբ սեղանի վրայ կարգով շարած էին՝ արծաթի եւ ոսկու մէջ պատած սրբոյ մասունքներ եւ զանազան տեսակ մեծ եւ փոքր խաչեր: Աւխտաւորները հերթով մօտենում էին, համբուրում էին եւ գցում էին նրանց մօտ դրած թասերի մէջ փողեր:

Համբուրելով սուրբ մասունքները, մենք անցանք երկրպագութիւն տալու Աստուծոյ Մօր գերեզմանին:

Ամեն տեղ դրած են գանձանակի թասերը, որոնց մէջ ուխտաւորները գցում են իրանց

նուէրները: Արեղան, կանգնած գանձանակի թա-  
սերի մօտ, պատմում է սրբութիւնների հրաշալի  
զօրութիւնը, շարժում է ուխտաւորների ջերմե-  
ռանդութիւնը, եւ ուժ է տալիս նրանց առա-  
տաձեռնութեանը:

Այս բոլորն ինձ վրայ այն տպաւորութիւնը  
չէր գործում, ինչ որ այժմ գրում եմ. դա վեր-  
ջին ժամանակներում, շատ տարիներից յետոյ,  
հին տպաւորութիւնների այլակերպիւմ արտա-  
գրութիւնն է: Իսկ այն ժամանակ ես էլ, նա-  
խապաշարմունքներով լի, նոյն սնահաւատ ուխ-  
տաւորներից մէկն էի: Ես մինչեւ այսօր չեմ կա-  
րող մոռանալ այն ուրախութիւնը, երբ Մարօն,  
տալով ինձ Մարգարիտի ձեռքը, ասաց.

— Հիմա համբուրիկեցէք եւ քոյր-եղբայր դար-  
ձէք:

Ես եւ Մարգարիտը միասին համբուրեցինք  
սուրբ մատուցները եւ այն օրից ուխտեցինք  
մնալ միմեանց հետ որպէս քոյր եւ եղբայր: Մա-  
րօն համբուրիկեց Մարիամի եւ Մագթաղի հետ,  
իսկ մայրս պառաւ Խաթունի հետ, որ վերջաց-  
նելով իր գործը, եկել էր ժամ:

Տիրամօր վանքի ներսի կազմակերպութիւնը  
ունէր նոյն ձեւը, որը տեսնվում է այս կողմե-  
րում այն վանքերի մէջ, որոնց շինութեան հնու-  
թիւնը հասնում է մինչեւ հինգերորդ դարը,  
այսինքն՝ տաճարը բաժանված է նախագաւիթից,  
որ կոչում են Դարպաս: Ժողովուրդը կանգնած է  
դարպասի մէջ, իսկ տաճարում կատարվում է  
ժամերգութիւնը, այնպէս որ, հանդիսականները

գալիւններին չեն տեսնում: Մի դուռ միայն տա-  
ճարից բացված է դարպասի մէջ, որտեղից պա-  
տարագիչը երբեմն դուրս է երեւում, խորհուրդը  
կատարելու ծէսերին համաձայն:

Տաճարի մէջ կատարվում էր սուրբ սեղանի  
խորհուրդը, թէեւ պատարագիչը չէր երեւում,  
բայց ես իսկոյն նրա ձայնից ճանաչեցի վարժա-  
պետին՝ տէր Թօղիկին: Թոյլ տալ մի օտարեր-  
կրեայ քահանային պատարագ մատուցանել վան-  
քի բնակի վրայ, այն եւս մի այնպիսի հանդիսա-  
ւոր օրում, դա մեծ շնորհ էր վանահօր կողմից  
դէպի տէր Թօղիկի անձնաւորութիւնը: Դա ու-  
նէր եւ իր նիւթական օգուտը, սրովհետեւ, որ-  
քան բաղմամբիւ ձեռքերից նա այնօր նուէրներ  
ընդունելու էր նրանց անունները սուրբ սեղանի  
վրայ «յիշելու» համար. . .

Այս իրողութիւնը դարձրուց իմ առանձին  
ուշադրութիւնը դէպի տէր Թօղիկը:

Մի այլ երեւոյթ, որ ոչ սակաւ գրաւեց իմ  
ուշադրութիւնը, այն էր, որ այնտեղ, ուր բնակի  
վրայ շարած էին վանքի սրբութիւնները համբու-  
րելու համար, վարդապետների թւում կանգնած  
էր մի քուրդ, եւ հսկում էր նուէրների վրայ, որ  
համբուրող ուխտաւորներն ընծայում էին: Մի  
այլ քուրդ եւս նոյն պաշտօնով կանգնած էր  
ճիրամօր գերեզմանի մօտ:

Ինձ ասացին, թէ քրդերը Հէյդար աղայի  
մարդիքն են, որոնք պահպանում են ուխտաւոր-  
ներից նուիրված արծաթը, որ վարդապետները  
անհաւատարիմ կերպով չը վարվեն նրա հետ, եւ

աղան կարողանայ ամբողջութեամբ ստանալ իր մասը, որ նշանակված է նրա համար տօնի եկամուտից: Եւ ասացին, թէ ինքը Հէյդար աղան գտնվում է վանքում եւ վանահօր մօտ հիւր է:

Ինձ վրայ խիստ դառն տպաւորութիւն գործեց, որ բրդի ոտքը անցնում էր մինչեւ անգամ բրիստոնէական սրբարանի շէմքից, եւ նա միջամտութիւն էր գործում եկեղեցականի տնտեսութեան մէջ:

Մինչ ինձ խռովում էր այս մտածութիւնը, զգացի որ իմ ետեւից մէկը հանդարտ կերպով փէշս քաշեց: Շուռ եկայ, տեսնեմ՝ Սօնան կանգնած էր իմ մօտ, խօսում էր Մարօի հետ: Բաղմութիւնն այնքան սեղմված էր մինը միւսի վրայ, որ Սօնայի արարմունքը մնաց աննկատելի: Նա իր յօնքի շարժմունքով նշան տուեց եւ շարունակեց խօսել Մարօի հետ: Ես հասկացայ. նա ինձ զգուշացրուց, որքան կարելի է ինձ հեռու պահեմ նրանից, որովհետեւ նրա մօտ կանգնած էր իր մօրաքոյրը: Ի՞նչ էր նշանակում այդ:

Բայց ես չը կարողացայ առանց հիացմունքի տեսնել նրա տխուր եւ գունաթափ դէմքը, որ իր դալկութեան մէջ աւելի գեղեցիկ էր:

— Ասում են, սարիցը մի ճգնաւոր են բռնել, խօսում էր Սօնան:

— Ես էլ լսեցի, պատասխանեց Մարօն: — Ասում են, բերել են վանքը, գցել են մէկ խուցի մէջ, դուռը փակել են. միւս օրը գնացել են, դուռը բաց են արել, տեսել են ճգնաւորը խափանվել է: Հիսա չեն իմանում արդեօք ճգնա-

ւոր էր, թէ սատանայ:

— Մեղք է, այդպէս չեն խօսի, Մարօ, ասաց Սօնան: — Սատանան որն է. ակար ճգնաւորն էլ խափանվում է. տեսնում ես, աչքիդ առջեւ կանգնած է, մէկ էլ տեսար՝ էլ չը կայ:

— Ասում են, այստեղ մի այդպիսի վարդապետ կայ, այնտեղ սարումը ճգնում է, որը երբեմն երեւում է, իսկ երբեմն աներեւոյթ է լինում, մէջ մտաւ Սօնայի մօրաքոյրը:

— Գնանք տեսնենք, ասաց Մարօն:

— Ես կը վախենամ, պատասխանեց Սօնան:


— Վա՛, ճգնաւորն էլ մարդ է, խօ գեւ չէ, ինչու ես վախենում, ասաց Մարօն:

— Ես մեր Ստեփանիցն էլ վախեցայ, չէնց որ տեսայ՝ նա նստած էր «խեղձերի» մէջ:

Քոյրը վախենում էր եղբօրից, որոնք միասին մեծացել էին, որոնք հազար անգամ համբուրվել էին, վախենում էր, որովհետեւ եղբայրն այժմ գտնվում էր այն հասարակութեան մէջ, որոնք ոգիների հետ հաղորդակցութիւն ունէին . . .

Աւխտաւորների բազմութիւնը հետզհետէ ամբողջում էր վաճի մէջ. տեղի նեղութիւնից արձակ շարժումնք գործել անկարելի էր. մարդ զփուարանում էր ազատ շունչ քաշել: Արեղանների ահագին խումբը իրանց ազազակներով, խրատներով եւ մինչեւ անգամ հայհոյանքներով չէին կարողանում կարգ պահպանել բազմութեան մէջ: Խռովութիւնը գնալով սաստկանում էր: Ես առաջարկեցի մերայիններին դուրս գնալ:

սկսեցինք զօրով պատառել ամբողջը, մինչեւ կարողացանք հասնել վանքի դռանը: Նոյն միջոցին Սոման թեքվեցաւ դէպի ինձ եւ խուլ կերպով ասաց՝ — արեւը մտնելէն յետոյ եկ «Կախման» քէ-րէ՛ն մօտ . . .



## Լ.Ձ.

Խ Ո Ր Հ Ր Կ Ա Ի Ո Ր Ա Ւ Ե Ղ Ա Ն

«Կաթնաղբիւրի» մօտ . . . Հիմա ես հասկանում եմ թէ ինչու Սօնան այնտեղ նշանակեց տեսութեան համար: «Կաթնաղբիւրն» այն աղբիւրներինցն էր, որոնք ժողովրդի մէջ վայելում են սրբազան նշանակութիւն: Նրան կոչում էին «Կաթնաղբիւր» այն պատճառով, որ ժողովրդի մէջ պահպանվել էր մի այսպիսի աւանդութիւն, իբր թէ այն աղբիւրի մէջ ծորեցրել էր Տիրամայրը մի կաթիլ իր սուրբ կաթնից: Նրա ջուրն ունէր բժշկական զօրութիւն ոչ թէ իր մէջ գտնված հանքային բազալթութեանց պատճառով, ոչ, ջուրը հասարակ մաքուր ջուր էր, այլ նա ունէր գերբնական յատկութիւններ: Նրա մէջ լուացվողը փրկվում էր իր ցաւերից, նաեւ կատարվում էին նրա որտի այս եւ այն ցանկութիւնները: Լեզացոյցն ընտրում էր այնպիսի ժամանակ, որ ոչ ոք չը խռովէր նրա հանգստութիւնը, ոչ ոք չը խանգարէր այն խորհրդական պայմանները, որ նա պէտք է կատարէր լուացվելու ժամանակ:

Այս, սրպիսի անհամբերութեամբ սպասում էի այն օր արեւի մտնելուն: Կարծես, Յեսուի ձեռքը մեխել էր նրան երկնքի վրայ, տեղիցը չէր շարժւում: Ես համբերել չը կարողացայ եւ գնացի աւելի շուտ քան Սօնայի նշանակած ժամանակը:

Վանքի պարիսպների մօտ, երկայն գերանների գլխին կապած չուանի վրայ, խաղում էր մի մանկահասակ լարախաղաց, նա իր գոյնզգոյն, խայտաճամուկ զգեստով եւ զարմանալի ճարպիկութիւններով յափշտակել էր ռամկի հիացմունքը: Ուխտաւորների բազմութիւնը, տաքացած կրօնական զգացմունքներով, շրջապատել էին զամբասանը: Նրանք օրհնում էին «Մուշի Սուլթան Սուրբ Կարապետի» հրաշագործութիւնը, որ տուել էր նրան այնքան շնորհ եւ ճարպիկութիւն:

— Լաւ ժամանակ է ընտրել Սօնան, մտածում էի ես, — հիմա «Կաթնաղբիւրի» մօտ ոչ ոք չի լինի, բոլորը այստեղ են:

«Կաթնաղբիւրը» գտնւում էր նեղ ձորի մէջ, մի ահագին քարաժայռի ներքոյ, որ գոգաւորփելով, կազմել էր մի լայն քարանձաւ, որտեղից բխում էր ջուրը, եւ նոյն քարանձաւի մէջ հաւաքւելով, առաջ էր բերում մի փոքրիկ աւազան: Այս նուիրական աւազանի մէջ լողանում էին ուխտաւորներն, աւելի բժշկութեան եւ հոգեւոր շնորհներ ստանալու յուսով: Քարանձաւի մուտքը այնքան լայն բացուածք ունէր, մինչ կիսով չափ երեւում էր նրա ներսոյքը:

Ես մտածում էի, թէ Սօնան դեռ եկած չի լինի, որովհետեւ նշանակել էր տեսնուել ինձ հետ:

արեւը մտնելուց յետոյ, իսկ ես անհամբերս եկել էի մի ամբողջ ժամ առաջ: Բայց երբ ես հեռուից նայեցայ քարանձաւի մէջ, ինձ երեւացին հանուած հագուստներ, որ գրած էին նրա մուտքի մօտ: Հետաքրքրութիւնս ստիպեց ստուգել՝ այդեօք այր մարդ էր լողացողը, թէ կին: Մտածում էի՝ մի գուցէ նոյն ինքն Սօնան լինէր, որ ինձ գիտմամբ տեսութիւն նշանակեց արեւը մտնելուց յետոյ, որպէս զի ինքը վերջացրած լինի իր լողանալը:

Ես սկսեցի հեռուից նայել դէպի քարանձաւի ներսը, մանուկ մարդիկ այսպիսի անպատկառ հետաքրքրութիւններ շատ ունեն: Յանկարծ ջրի մակերեւոյթից դուրս քարձրացաւ մի գեղեցիկ մարմին: Հրաշայի մի մարմին էր նա: Գլխի արձակված գիսակները սքօղել էին դեռ նոր զարգացած կուրծքը: Նա երեխայական անմեղ դուարճութեամբ թռթռում էր, խաղ էր անում աւազանի ալիքների հետ: Արեւի վերջին ճառագայթներն ընկած էին նրա դէմքի վրայ: Արբան հրապուրիչ էր ջրի մանրիկ կաթիլներով ցողված այն կուսական դէմքը: Բայց նա երեսը շուռ տուեց, կարծես, չէր ցանկանում, որ արեգակն իր լուսեղէն շրթունքներով շօշափէր նրա անմեղ կուրծքը: Նոյն ժամուն նա երեւցրուց մի լիքն եւ հրաշայի թիկունք:

Նա մի րոպէական երեւոյթ էր: Մարմինը կրկին անհետացաւ ջրի մակերեւոյթի տակ:

Այսպէս երեւում են «հրեղէն կուսանքը» Վանայ ծովակի միջից, այսպէս հրապուրում են

Նրանք պատանիներին, որոնք լի սիրահարական  
ցնորքներով իրանց գցում են ալիքների մէջ, եւ  
ջրային աղջիկները յափշտակում, տանում են  
իրանց որսին դէպի ծովակի անդունդը, եւ այն-  
տեղ՝ իրանց բիւրեղային պալատներում զուար-  
ճացնում են նրան . . .

Ջրային յաւերժահարսը կրկին յայտնվեցաւ  
Այս անգամ նա հանգիստ էր. այս անգամ նա  
չէր թռչկոտում այս կողմ եւ այն կողմ: Նա կի-  
սով չափ նստած ջրի մէջ, սանդրում էր իբր  
կայն գիտակներու՝ նա ինքն էր, — Սօնան էր: Ես  
վաղուց ճանաչում էի այն խարտեաշ մետաք-  
սանման գիտակները, ինձ ծանօթ էր այն հրեշ-  
տակային կերպարանքը, որ իր մերկութեան մէջ  
աւելի սքանչելի էր:

Նոյն միջոցին ինձ տիրեց մի զգացմունք.  
դա նմանում էր այն սարսափելի զգացմունքին,  
որ տանջում է մի եղեռնագործին, որը մեղան-  
չել էր մի որ եւ իցէ սրբութեան դէմ:

Չարհուրելի՛ է խղճի խայթն, երբ նա սկսում  
է ծակոտել մի սիրտ, որ դեռ ոչ բոլորովին կո-  
րուսել էր իր կենսական զօրութիւնը . . . Ես սի-  
րում էի այս անմեղ աղաւնեակին . . . մտածում էի  
ես, — բայց Մարօն, կիսավայրենի Մարօն խլեց  
այն սիրտը, որ պատկանում էր Սօնային . . .

Իմ մտածութիւնները ընդհատեց մի մարդ,  
որ ձորի միջով գալով, ինձ երեւաց, թէ ուղիղ  
դիմում էր դէպի բարանձաւը՝ նա ոտքից ցզլուխ  
հագած ունէր սեւ զգեստ կոշտ մազէ շալերից:  
Նրա բոլոր կերպարանքից յայտնի էր, թէ անա-

պատական արեղայ պէտք է լինի: Նա ընթա-  
նում էր հանդարտ եւ հաստատուն քայլերով, եւ  
մեղմ ձայնով եղանակելով մի տխուր մեղեգի:

Ես իսկոյն վազեցի գէպի նրա կողմը եւ  
առաջը կտրեցի, ասելով.

— Հեռուից անցէք, չը մօտենար քարանձա-  
ւին, այնտեղ լողանում է մի օրիորդ, որ իմ ազ-  
գականն է:

— Ես գէպի այս կողմն եմ գնում, պատաս-  
խանեց արեղան, ցոյց տալով ծովակը, եւ մի  
քննողական հայեացք ձգելով իմ երեսին, անցաւ:

Բայց ինչ խորհրդական մարդ էր դա. ես  
մտածում էի. անտարակոյս նոյն լեռների մէջ  
առանձնացած ձգնաւորներից մէկը պէտք է լի-  
նէր: Երբ աւելի հեռացաւ, նա փոխեց երգի եղա-  
նակը. այժմ նրա ձայնը լսելի էր լինում աւելի  
ըարձր հնչիւններով: Ես բոլորովին զարմացայ.  
այն մի հոգեւոր մեղեգի չէր, այնպիսի երգեր  
միայն կարելի է լսել Արաբիայի դաշտերում, երբ  
բէզուինը միայնակ անցնում է անապատի միջով:

Նոյն միջոցում ինձ զարմացրուց մի այլ  
երեւոյթ եւս. ես տեսայ, որ կախարդ Սուսանը  
իր փոքրիկ վհուկ ընկերի հետ դուրս վազեցին  
թրչիերի միջից եւ միացան արեղայի հետ: Արե-  
ղան գրկեց Հիւրբիին, համբուրեց, եւ ապա միա-  
սին անհետացան բլուրների յետքում:

Ի՞նչ գաղտնիք էր այդ. ինչ գործ ունէր արե-  
ղան կախարդ պառաւի հետ օրուայ մի այնպիսի  
տարածամ պահուն: Նրա երգն անգամ, որպէս  
ես հասկացայ, իր խորհրդական հնչիւնների մէջ

ունէր մի ծածուկ նշանակութիւն, որ դուրս  
կանչեց կախարդին իր թագստեան տեղից: Եւ  
ինչ լեզուի երգ էր այն:

Այս մտածութիւններն ինձ այն աստիճան  
զբաղեցրել էին, որ ես ամենեւին չէի նկատել,  
թէ արեւը վաղուց մայր էր մտել եւ ձորի մէջ  
մութը բաւականին թանձրացել էր, իսկ Սօնան  
հագնուած, դուրս էր եկել քարանձաւից:

Երբ ես մօտենում էի նրան, իմ գլխում  
ստըտուում էին խիտ քաղցր ցանկութիւններ,  
ես յոյս ունէի, թէ Սօնան ինձ կը գրկէ, կը  
համբուրէ, կը յայտնէ իր կարօտութիւնը ինձ  
երկար ժամանակ չը տեսնելու համար, եւ շատ  
գեղեցիկ խօսքեր կասէ: Բայց դրանցից եւ ոչ  
մէկը չեղաւ:

— Պարհատ, ասաց, նա խիտ սառն կեր-  
պով, — որոնիր մի ծածուկ տեղ, ուր մեզ չը տես-  
նեն, ես մի քանի խօսքեր ունեմ քեզ ասելու:

Մենք բարձրացանք գէպի մերձակայ բլուրի  
զառիվերը, որ պատած էր վայրենի նշենիներով,  
եւ նստեցինք մի սեպացած ժայռի մօտ: Այն-  
տեղից գիշերային մթութեան մէջ տեսնուում էր  
ուխտաւորների բանակը, որ լուսաւորված էր  
գոյնզգոյն լապտերներով, որ բռնել էր ընդարձակ  
տարածութիւն վանքի չորեք կողմում, եւ մինչեւ  
այնտեղ լսելի էին լինում զանազան նուագածու-  
թեանց ձայներ: Բայց Սօնային ոչինչ չէր գրաւում,  
տխուր էր նա, մահուան պէս տխուր էր նա:  
Խեղճ աղջիկ, ես երբէք նրան ուրախ չէի տեսել...

Սօնայի առաջին խօսքերը բոլորովին ընտա-

նեկան էին, վերաբերում էին իր վիճակին: Նա  
ասաց, թէ զրկուելով մօրից, իր միակ մխիթա-  
րութիւնն էր Ստեփանը՝ իր սիրելի եղբայրը: Եւ  
չընայելով, որ Ստեփանը վերջին ժամանակներ  
ում քաւականին ուղղուել էր, այսուամենայնիւ  
նրա հայրը, Ստեփանի խելագարութիւնը Տիրա-  
մօր պատիժ համարելով, բերեց նրան եւ վանքի  
«խեղձերի» մէջ գցեց: Նա պատմում էր, թէ  
ինքը շատ աղաչեց հօրը, որ այս անգթութիւնը  
չանէ, Ստեփանին թողնէ տանը, թէ ինքը խոտ-  
տանում է միշտ խնամել, պահպանել նրան,—  
բայց հնարք չեղաւ, հայրը չընդունեց: Այս  
պատճառով Սօնան ստիպուեցաւ Աստուածածին  
ուխտ գալ, որովհետեւ չէր ուզում շուտով բա-  
ժանվել իր եղբորից: Եւ այժմ ամեն օր աղա-  
չում է, պաղատում է հօրը, որ Ստեփանին  
«խեղձերի» մէջ չը թողնէ, որ նրան վանքից յետ  
առնէ եւ կրկին տուն տանէ եւ այլն:

Այս բոլորը նա պատմեց խիստ ցաւալի եւ  
գառն եղանակով, բայց առանց մի կաթիլ ար-  
տասութիւն խեղձ աղջիկ, այնքան անբախտ էր,  
որ լացել եւս չէր կարող . . .

Այնուհետեւ նա ինձանից երգում առեց եւ  
սկսեց պատմել մի գաղտնիք:

Նա ասաց, թէ որսորդ Ալօի եւ նրա հիւ-  
րերի՝ այսինքն Կարօի եւ նրա ընկերների դէմ  
սարքվում է մի մեծ դաւադրութիւն: Պատմեց, թէ  
իր հօր մօտ մի քանի անգամ եղել են գաղտնի  
ժողովներ, ուր հաւաքվում էին Տիրամօր վանքի  
վանահայր Կարապետ հայր սուրբը, իմ քեռի

Պետրոսը, մի մեծ քուրդ իշխան եւ ուրիշ մի քանի մարդիկ, որոնց չէ ճանաչում: Յայտնեց, թէ ինքը մի քանի անգամ ծածուկ լրտեսել է նրանց խօսակցութիւնը, թէ եւ բոլորը չէ հասկացել, բայց այսքանը իմանում է, որ նրանք խօսում էին որսորդ Ալօի, Վարօի եւ նրա ընկերների մասին «շատ վատ բաներ», եւ մտածում էին, թէ ինչ հնարքով նրանց բռնել տան, ոչնչացնեն, որ «երկրի խռովութիւնը հանդարտվի» . . .

— Լաւ, նրանք ի՞նչով են մեղաւոր, կտրեցի՞ ես Սօնայի խօսքը, բոլորովին շփոթվելով:

— Ես չեմ իմանում, Փարհատ, պատասխանեց Սօնան նոյնպէս վրդովված ձայնով:— Ստում են՝ նրանք չար մարդիկ են, աւազակներ են, ուր որ գնում են, այնտեղից արիւնը եւ կոտորածը պակաս չէ լինում . . .

— Ես չեմ հաւատում, Սօնա:

— Ես էլ չեմ հաւատում, բայց ի՞նչ անես, ասում են, չես կարող ասողի բերանը բռնել: Ես երբոր այս խօսքերը լսեցի, շատ տխրեցի, մտածում էի, որ դու էլ նրանց հետ ես, քեզ էլ կարող է մի վտանգ պատահել:

Սօնայի աչքերը այդ միջոցին լցուեցան արտասուներով, նա հեկեկալով շարունակեց.

— Ես հենց որ լսեցի, գնացի քո մօր մօտ, բոլորը պատմեցի, որ նա քեզ ասէր. մայրդ ժամանակ չը գտաւ: Բայց որքան տխրեց մայրդ, Փարհատ, «որդիս կորաւ» . . . ասում էր նա:

Իմ վրդովմունքը հետզհետէ սաստկանում

էր. ես չէի կարողանում հասկանալ, թէ այս ի՞նչ բան է, որ հայոց վարդապետը, որ հայոց քահանան եւ իմ բեռի Պետրոսի նման մարդը, միացած քուրդ իշխանի հետ, դաւազրութիւն էին հնարում մի քանի բարի, եւ խեղճ ժողովրդի արտասուքը սրբող, երիտասարդների գէմն Նրանք աւելի բարւոք էին համարում քուրդ իշխանի անտանելի լուծը, այն իշխանի, որի սրբապիղծ ձեռքը մուտք էր գործել մինչեւ հայոց տաճարի ներսը, որն, ինչպէս իմ աչքով տեսայ, կանգնած սուրբ սեղանի մօտ, տաճարի գանձանակի վրայ էր հսկում. . .

Բայց Սօնայի երկիւղը միայն իմ մատին չէր. նա ամիսոսում էր եւ Կարօին եւ Նրա ընկերներին՝ «Նրանք լաւ տղերք են, ասում էր նա, ես Նրանց ոչ մի ժամանակ չեմ մոռանայ»։ — Եւ նա խորհուրդ էր տալիս, բոլորը յայտնել Նրանց, զգուշացնել, որ վտանգի չը հանդիպեն։

Սութը բոլորովին պատել էր, երբ մենք վերադարձանք ուխտաւորների բանակը։ Թէ Սօնան եւ թէ ես այն աստիճան խռովված էինք, որ մեր մէջ ուրիշ խօսակցութիւն չեղաւ։ Լուռ իմ կողքով գնում էր Սօնան։ Խեղճ աղջիկ, նա միանգամից կորցնում էր երկու մխիթարութիւն՝ — իր հարազատ եղբօրը, որին պէտք է թողնէր վանքի «խեղճերի» մէջ, եւ այն տղամարդին, որին սիրում էր, որի ձեռքը բռնած, գնում էր այժմ։

Երբ մենք մօտեցանք ուխտաւորների բանակին, նա ասաց.

— Դու ինձ հասցրու մինչեւ մեր տիրացու

Թաթոսի վրանը, եւ հեռացիր:

— Նա՛ էլ այստեղ է, հարցրի ետ:

— Այստեղ է, ուխտ է եկած իր կնոջ եւ ազգականների հետ:

— Մի՛թէ նա այժմ կին ունի:

— Մի քանի ամիս է ինչ որ պսակվել է, միտք ունի շուտով քահանայ դառնալու:

— Հէնց ես մնացի առանց կնոջ, ամենքը պսակվեցան . . .

— Քեղ էլ Աստուած ողորմած է . . . պատասխանեց Սօնան, խորհրդաւոր ձայնով. եւ այն ժամանակ միայն ես նկատեցի, որ ժպիտի նման մի բան շողաց նրա տխուր դէմքի վրայ:

Տիրացու Թաթոսն արդէն ծանօթ է մեր յիշատակարանի մէջ նրա սկզբից: Այս տխմարը մի ժամանակ մեր դպրոցի վերակացուն էր, աշակերտները նրան կոչում էին «դպրոցի շուն», այժմ նա ամուսնացած էր, եւ շուտով պէտք է քահանայ դառնար . . . արդեօք, արժան էր այդ պատուին . . .

Հասցնելով Սօնային տիրացու Թաթոսի վրանը եւ հեռացայ:



## ԼԷ.

Դ Ի Մ Ա Կ Ը Պ Ա Տ Ռ Վ Ո Ի Մ Է

Քիշերից բաւական անցել էր. ես իմ մտածութեանց մէջ բոլորովին մոլորված, չը գիտէի թէ ուր գնամ: Սօնայի հաղորդած տեղեկութիւններն ինձ բոլորովին շփոթել էին: Մէկ էլ տեսնեմ, առաջս կտրեց իմ քեռի Պետրոսը:

— Ե՛կ, ասաց նա ծանր կերպով, — եկ, մոլորեալ ոչխար, գնանք ինձ մօտ, բեզ հետ խօսելիք ունեմ:

Ես հետեւեցի նրան ամենայն խոնարհութեամբ, որովհետեւ երեխայութիւնից սովորած էի նրան իբրեւ հայր ճանաչել: Նա ինձ տարաւ իր վրանը, կնոջը եւ միւսներին հրամայեց գնալ դրացիների մօտ եւ առանձին ինձ հետ սխեց խօսել: Նրա խօսքերը դարձեալ վերաբերում էին ծերունի որսորդին, Կարօին եւ նրա բնկերներին, եւ աւելի բացատրում էին Սօնայի ինձ հաղորդած գաղտնիքների ճշտութիւնը: Բայց ինչ որ նոր եւ հետաքրքրական էր քեռի Պետրոսի խօսքերի մէջ, դա վերաբերում էր ծերունի որ-

սորգի երիտասարդական կեանքին եւ նրա աղ-  
մրկալի անցեալին:

Քեռի Պետրոսն ասում էր, թէ ծերունի  
որսորդը մի ծպտեալ անձնաւորութիւն է, որ ծած-  
կուած է հասարակ որսորդի կերպարանքում, թէ-  
նա Մոկաց եւ Սասնոյ երկրից փախստական ան-  
ցել էր Պարսկաստան, այնտեղ առժամանակ իրան  
թագցնելու համար: Թէ նրա անունը առաջուց  
Ալօ չէ եղել, այլ նա կոչվում էր իր երկ-  
րում Մէլիք-Միսաք, եւ ամբողջ Սասունի եւ  
Մոկաց երկրի իշխանն է եղել: Նա ունէր այն-  
տեղ իր սեպհական ամրոցը, հարուստ կալուած-  
ներ եւ իր ձեռքի տակ բազմաթիւ քաջ պատե-  
րազմողներ: Ամբողջ Սասունը եւ Մոկաց երկ-  
րի կիսավայրենի ժողովուրդը դողում էին նրա  
զօրութիւնից: Նա իր իշխանութեան ներքոյ  
զսպել էր, ոչ միայն տեղացի հայերին, այլ բոլոր  
նոյն երկրում բնակվող քուրդ եւ օտարազգի ցե-  
ղերին:

Մէլիք-Միսաքը իր կառավարութեան մէջ  
նոյնն էր, ինչ որ է մի երեւելի քուրդ իշխան իր  
բոլոր միապետական զարհուրանքով: Նա նոյն-  
պէս արշաւանքներ էր գործում հակառակ ցե-  
ղերի վրայ, կոտորում էր, յափշտակում էր աւար-  
ներ եւ գերիներ էր բերում: Այսպիսով նա իր  
իշխանութեան ներքոյ խոնարհեցրել էր, բացի  
հայերից եւ մի քանի քրդերի ցեղեր: Վերջին-  
ներն այնպէս սերտ կապուած էին իրանց հայ  
Մէլիքի հետ, որ առանց խտրութիւն դնելու, մաս-  
նակցում էին եւ այն արշաւանքների մէջ, որոնք

տարածվում էին հակառակ կողմի բրդերի վրայ:

Այստեղ ես կտրեցի բեռի Պետրոսի խօսքը, հարցնելով.— Բրդերը նոյնը չէին անում հայերի վերաբերութեամբ:

— Անում էին, պատասխանեց նա:— Բայց հային ինչ կը վայելէ աւազակ քրդից օրինակ առնել:

Ես մտաբերեցի այն խրատը, որ լսել էի ծերունի որսորդից, եւ պատասխանեցի նոյն սճով.

— Աւազակի հետ պէտք է աւազակ լինել. աւազակի հետ չէ կարելի ճգնաւորի պէս վարուել: Երբ որ բուրգն իր սրով եւ նիզակով դիմում է մեզ վրայ, երբ որ նա գալիս է մեր տունը քանդելու, մեր կայքը յափշտակելու, մեր ընտանիքը անպատուելու, մեզ պէտք չէ խաչով եւ աւետարանով դուրս գալ նրա առաջը, այլ մեզ պէտք է նոյնպէս սրով պաշտպանել մեր պատիւը:

— Վարակուել է թշուառականը . . . ասաց բեռի Պետրոսը գլուխը շարժելով:— Այսպէս կարող է խօսել միայն ծերունի որսորդի յառաջագէմ աշակերտը:

— Ուղիղ է, ես առաջ այսպէս չէի մտածում, ես կարծում էի, թէ Աստուած հային ստեղծելու ժամանակ նրա ճակատին գրել է, որ նա միշտ խեղճ լինի, օտարի ձեռքի տակ գերի լինի, ինքն աշխատէ եւ ուրիշին ունացնէ, գլխին ծեծեն՝ լուռ կենայ, երեսին թքեն՝ լուռ կենայ, մի խօսքով աշխարհի բոլոր անպատուութիւններին պէտք է համբերէ նա: Բայց հիմա ես հասկանում եմ, որ Աստուած չէ ցանկանում, որ

Հայր թշուառ լինի, եւ եթէ նա թշուառ է, ինքն է պատճառը . . .

— Դու վարակուել ես . . . խեղճ տղայ, պատասխանեց քեռի Պետրոսը ցաւակցական եղանակով: — Դրանք այն երեւելի աւազակապետի (ճերունի որսորդի) խօսքերն են, որ դուրս են թափուլում քո բերանից: Դրանք այն «հին գայլի» խօսքերն են, որի համար ազամորդու կեանքը մի ճանճի կեանք է, որն իր գլխի մազերի համբարքով մարգիկ է կոտորել, որը հազարաւոր տուններ է բանգել, որի սիրտը գութ եւ խիղճ կոչված բաների հետ երբէք ծանօթ չէ եղել:

Վերջին խօսքերն աւելի զայրացուցին ինձ, նրանք խիստ կեղտոտ հայհոյանք էին մի մարդու դէմ, որն այնքան բարեսիրտ էր եւ մեծահոգի, որը թշուառի հայր էր եւ կարօտեալի բարերար: Ես պատրաստ էի խկոյն վեր թռչել, բռնել քեռուս կոկորդից եւ խեղզել նրան, բայց մի յանկարծակի այցելութիւն արգելեց իմ կատապութեանցը:

— Ողջոյն, լսելի եղաւ մեր ետեւից եւ վրանի մէջ յայտնվեցաւ իմ վարժապետը—տէր Թօդիկը:

— «Անառակ որդին» երեւաց, առաց նա ինձ տեսնելով: — Բայց արգեօք զղջացել է նրա սիրտը:

— Ընդհակառակն, աւելի խտացել է, պատասխանեց, քեռի Պետրոսը:

Ես լուռ էի:

Տէրտէրը եկաւ նստեց:

Քեռի Պետրոսը մասնաւորապէս պատմեց նրան այն վիճաբանութիւնը, որ անցել էր մեր

մէջ, եւ խիստ սեւ գոյներով նկարագրեց իմ  
յամառութիւնը եւ մոլորութիւնը:

Տէրտէրը իր յատուկ կրօնական փիլիսոփայու-  
թեամբ սկսեց կշտամբել իմ ցնորքները, ասելով.

— Մեր, Տիրոջ մեղաւոր ծառաներիս, ձեռ-  
քումը ոչինչ չը կայ. մենք ոչինչ չենք կարող  
անել: Ամեն ինչ, որ լինում է, Աստուծոյ կամ-  
քովն է լինում. առանց Նրա կամքին տերեւն  
անգամ ծառից ցած չէ գալիս: Աստուած է  
ստեղծել բոլոր արարածներին եւ Նա է նշանա-  
կել բոլորի վիճակները: Սրինակ, եզին ստեղծել է,  
որ մարդու վարը վարէ, ոչխարին ստեղծել է, որ  
մարդուն կաթ, կերակուր եւ հագուստ տայ. ձիուն  
ստեղծել է, որ մարդու ծանրութիւնները տանէ,  
— այսպէս, ամեն մէկին մի բանի համար է ստեղ-  
ծել Աստուած: Բայց մարդը գայլից չէ կարող  
կաթ եւ բուրգ ստանալ. առիւծին չէ կարող  
ստիպել, որ իր վարը վարէ, եւ արջին կարող չէ  
հրամայել, որ իր ծանրութիւնները տանէ: Դրանք  
գաղաններ են. դրանց միւս անասունների համար  
որպէս պատիժ ստեղծել է Աստուած: Դրանք պէտք  
է յափշտակեն, կեղեքեն, միւսների մտով եւ ա-  
րիւնով կերակրվեն:

Ես դարձայ գէպի վարժապետս, ոչ աշա-  
կերտի երկչոտութեամբ, այլ համարձակ կերպով  
հարցրի.

— Ի՞նչ համեմատութիւն կայ ձեր ասած-  
ների եւ մարդու մէջ:

— Համեմատութիւնը նոյն է, պատասխա-  
նեց տէրտէրը: — Մարդիկ էլ այնպէս են ստեղ-

ծուած. մէկը *պարտաւոր* բնութիւն ունի, միւսը  
*գաղափարային*:

— Մենք, հայերս, որ մէկիցն ենք:

— Մենք Աստուծոյ գառնուկներն ենք, պատաս-  
խանեց նա, աւելացնելով աւետարանական խօսքը՝  
— «արածեալ զոչխարս իմ, ասաց Տէրն մեր Յիսուս  
Քրիստոս Պետրոս առաքեալին. դրանից երեւ-  
ում է, որ մենք գազան բրդերի նման չը պէտք  
է լինենք:

Ես տէրտէրի խօսքերի մէջ մի նոր բան չը-  
գտայ, դարձեալ նոյն քարոզներն էին, որ հա-  
զար անգամ լսած էի, բայց այժմ նրանք իմ  
գլխում չէին մտնում, այժմ ես հասկանում էի,  
թէ որքան վնասակար էին նրանք:

Բայց ինձ նոյն բոպէում տանջում էր մի  
այլ միտք, ես շատ դժգոհ էի, որ տէրտէրը եկաւ  
եւ խառնեց իմ եւ քեռի Պետրոսի մէջ սկսուած  
խօսակցութիւնը: Նրա պատմութիւնը ծերունի  
որսորդի անցեալի մասին մնաց անկատար. ես  
ցանկանում էի մինչեւ վերջը լսել այս գաղտնա-  
ծածուկ մարդու կեանքի պատմութիւնը:

Քեռի Պետրոսը ինքն առիթ տուեց շարու-  
նակելու ընդհատված պատմութիւնը:

— Տեսնո՞ր, որդի, ասաց նա, — տէրտէրն էլ  
նոյնն է խօսում, ինչ որ ես էի ասում քեզ. հե-  
ռացիր այս *հարցերէն*, եթէ չես կամենում կորց-  
նել քեզ:

— Ես ուղում եմ աւելի լաւ ճանաչել նրանց,  
քեռի, պատմեցէք, թէ ինչպէս ընկաւ Մէլիք  
Մխաթը իր փառքից եւ ինչը առիթ տուեց նր-

քան հասարակ որսորդի կերպարանքով յայտնվել Պարսկաստանում:

— Դա մի երկար պատմութիւն է, որի մանրամասնութիւններն ինձ եւս յայտնի չեն, ասաց նա:— Միայն այսքանը գիտեմ, որ Մոկաց եւ Սասնոյ երկրներում մի քանի ուրիշ հայ իշխաններ եւ մի քանի տանուտէրներ հակառակ կուսակցութիւն էին կազմում Մէլիքի գէմ: Նրանք միացան տեղային հայոց առաջնորդի հետ, եւ մի քանի վարդապետներ էլ իրանց կողմը գցելով, գրգռեցին ժողովուրդը Մէլիքի գէմ: Նրանք ասում էին, թէ մենք չենք ուզում, որ մեզ վրայ «հայ» տիրէ, մեզ համար լաւ է քուրդը, «հայից բէկ (իշխան) լինել չէ կարող»:

Այնուհետեւ քեռի Պետրոսը խիստ արհամարհական կերպով նկարագրեց Մէլիքի անկումը: Եւ նրա խօսքերից միայն այսքանը կը յիշեմ:

Ամեղիայի մէջ այն ժամանակ նստում էր մի քուրդ իշխան, նա մի քանի ցեղերի գլխաւորն էր եւ ունէր իր ձեռքի տակ բազմաթիւ պատերազմող տղամարդիկ: Քուրդ իշխանը Մէլիքի սխերիմ թշնամիներից մէկն էր: Հայոց Առաջնորդը մի քանի տանուտէրների հետ ծածուկ գնում են նրա մօտ, յայտնում են, թէ որպէս իրանք, նոյնպէս եւ ժողովրդի մեծ մասը Մէլիքից գոհ չեն, եւ ցանկանում են նրա լուծը իրանց վզից գցել: Այս պատճառով հրաւիրում են քուրդ իշխանին յանձն առնել իրանց վրայ տիրապետելը: Եւ առաջնորդը իր տանուտէրների հետ խոստանում են, որ ամեն կերպով կօզնեն

եւ ձեռնտու կը լինեն քուրդ իշխանին Սասունը  
եւ Մոկաց երկիրը տիրելու գործի մէջ:

Ես կտրեցի քեռի Պետրոսի խօսքը, հարցնելով.

— Առաջնորդը ի՞նչ մի առանձին օգուտ ունէր  
հայ ժողովուրդը քուրդ իշխանի ձեռքում մատ-  
նելու մէջ:

— Շատ օգուտ, պատասխանեց նա. — Եթէ  
Մէլիքը մէջտեղից վերցուէր, միայն առաջնորդը  
կը մնար որպէս ժողովրդի հոգեւոր եւ մարմնա-  
ւոր ներկայացուցիչը: Բայց մէլիքի ստուերի տակ,  
նա ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի բարձր հոգեւո-  
րական:

Այս յետոյ, խիստ յետոյ ես հասկացայ հայոց  
հոգեւորականութեան մշտական կռիւր մարմնա-  
ւոր իշխանութեան դէմ: Այս այն ժամանակ հաս-  
կացայ, երբ կարգացի մեր ազգի պատմութիւնը  
եւ ծանօթացայ նրա թշուառ անցեալի հետ . . .

Քուրդ իշխանի վաղուց վախազած բաղձան-  
քը հէնց այն էր, ինչ որ առաջարկում էին հայոց  
առաջնորդն եւ տանուտէրները: Դաւադրութիւնը  
սահմանվում է, իսկ գործադրութիւնը նշանակ-  
վում է զատկի աւագ շաբաթի գիշերը: Նոյն  
գիշերը, երբ Մէլիքը իր ընտանիքով բոլորել էին  
ճրագալոյցի սեղանի շուրջը, յանկարծ նրա ամ-  
բողը պաշարվում է բազմաթիւ քրդերով: Մի  
քանի բոպէում հրդեհը չորս կողմից սկըս-  
վում է տարածվիլ դէպի ներսը. ամբողը կոր-  
չում է ծուխի եւ բոցերի մէջ: Պարիսպները խոր-  
տակվում են եւ ներս է թափվում կատաղի ամ-  
բոխը: Սկսվում է սարսափելի կոտորածը: Մէ-

լիբը երկար քաջութեամբ կուռում է, բայց շատ վերբեր ստանալով, վերջապէս ընկնում է նա Մըհէն կրակի, սրերի եւ գնդակների միջից յափշտակում է իր, դեռ ոչ բոլորովին անշնչացած, տիրոջը: Բայց նրա բոլոր որդիքը, աղջիկները, ծառաները եւ աղախինները կոտորվում են: Ազատվում է միայն Մէլիքի մի հատիկ աղջիկը՝ փոքրիկ Մարօն, որին ստնտուն փախցնում է:

Բայց գրանտով բոլորը չէ վերջանում: Ժողովրդի մեծ մասը չէր ցանկանում զրկուել իր գըլխաւորից, որ այնքան սիրելի էր բոլորին, որ միշտ հօր պէս խնամել էր նրանց կեանքը եւ պատիւը թշնամիներից: Ժողովուրդը սուրբ է կանգնում, սկսում է ընդդիմանալ քուրդ իշխանին: Բայց ինչ կարող է անել մի անգլուխ ժողովուրդ, որ առաջնորդող չունի: Մի քանի ամբողջ շաբաթներ Սասունը եւ Մոկաց երկիրը դարձել էին արեան կոտորածի ասպարէզ: Մէլիքը վերաւորված առիւծի նման, հեռուից մռնչում էր, բայց ոչնչով չէր կարող օգնել: Քրդի սուրն անխնայ կոտորում էր, եւ նոյն սուրին ուժ եւ զօրութիւն տուողներն էին նոյնպէս հայեր, չնայր եւ եղեռնագործ եկեղեցականներ . . .

Ժողովուրդը վերջապէս նուաճվում է օտարի լծի տակ . . . քուրդ իշխանը տիրում է . . .

Այնուհետեւ հազարաւոր մարդիկ որոնում էին Մէլիքին, որովհետեւ նրա գիակը ամբողջ կոտորածի մէջ չը գտնուեցաւ: Բայց նա Մըհէի հսկայական ուսերի վրայ, ամմատելի լեռներից եւ ձորերից անցնելով, արդէն փոխադրվել էր

Պարսկաստան:

Քեռի Պեարսի պատմութիւնը ինձ վրայ տար-  
ապիելի տպաւորութիւն գործեց. ես բոլոր մարմ-  
նով դողում էի, եւ մանաւանդ աւելի եղաւ իմ  
բարկութիւնը, երբ տէրտէրն՝ այս բոլորը լսելուց  
յետոյ՝ ատաց առածի ձեւով.

— «Զարը միշտ չարով կը սասանվի». — «Սրի  
հետ խաղացողը միշտ սրով կը մեռնի». եւ աւե-  
լացրուց. — Այսպիսի մարդիքն ոչ միայն իրանց  
անձի կորստեան պատճառ են դառնում, այլ ժո-  
ղովրդին էլ արեան եւ կրակի մէջ են գցում:

— Բոլորովին ուղիղ է ձեր խօսքը, տէր հայր,  
ատաց քեռի Պեարսը: — Մէլիքը Պարսկաստան  
գալուց յետոյ, նա երկար ժամանակ իր գաղտնի  
նպատակներով կարողացաւ թագնուած մնալ  
որսորդի անուան տակ, բայց երբ որ նկատեց, թէ  
այնտեղ եւս պէտք է մերկացուի ինքը, նա թողեց  
Սալմաստը եւ անցաւ Հաղբակ: Ժողովուրդն այն-  
տեղ ռամիկ էր եւ կիսալայրենի, իսկ մի այսպիսի  
ժողովուրդ պէտք էր նրան: Նա շուտով կարողա-  
ցաւ գրաւել ռամիկն եւ բոլորի հաւանութեամբ  
նոյն գաւառի «Միր» ընտրվեցաւ: Այնուհետեւ  
խռովութիւնը այս երկրից պահաս չէ: Հաս-  
պիստանու կախը իր յաջողութեամբ խրախոյս  
տուեց նրան, այժմ նա իր նպատակին մասամբ  
հասել է, եւ կամենում է Հաղբակայ \*) լեռների

\*) Մեր յիշատակարանի մէջ բազմիցս յիշված Հաղ-  
բակը Վասպուրականի Փոքր Հաղբակ կոչված գաւառը  
հասկանալու է, որն այժմեան Վանայ փաշայիկի գա-  
ւառներից մէկն է: Փոքր Հաղբակը իր լեռնային գրու-

վրայ այն խաղը խաղալ, ինչ որ խաղում էր մի  
ժամանակ Սասնոյ մէջ:

— Այսպիսի մարդիկը ժանտախտ են, ուր  
եւ գնում են, իրանց հետ տանում են մահ եւ  
կոտորած, ասաց տէրտէրը:

— Եթէ ծերունի որսորդի միտքն այն է, պա-  
տաւախանեցի ես, — որ հայը ազատված լինի օտարի  
լծից, որ նա իր տունը, իր երկիրը ինքը կառա-  
վարէ, — դրա մէջ ես մի վատ բան չեմ տեսնում:  
Եւ ես ինքս կը լինեմ առաջինը, որ կը նուիրեմ  
իմ արիւնը նրա նպատակին:

— Եւ դու ինքդ կը լինես առաջին խելա-  
գարը . . . խելի եղաւ մի նոր ձայն:

Ես մինչ այն աստիճան խռովութեան մէջ  
էի, որ ամենեւին չէի կարողացել նկատել, որ  
մի վարդապետ ներս էր մտած քեռի Պետրոսի  
վրանում եւ ականջ էր դնում մեր խօսակցու-  
թեանը: Իսկ մի եւ նոյն արեղան էր, որին ցերե-  
կով տեսած էի «Վաթնաղբիւրի» ձորում: Նա  
եկաւ նստեց: Քեռի Պետրոսի եւ տէր Թօղիկի ըն-  
դունելութեան ցոյցերից երեւաց, որ չափազանց  
յարգանք ունէին դէպի հայր սուրբը: Ծրագի  
լուսով ես աւելի լաւ կարողացայ զննել նրան:  
Նա մի մարդ էր ալեխառն մօրուքով եւ նոյն-  
պէս դեռ նոր ճերմակած երկայն մազերով: Հա-  
գուստը խիստ անշուք էր, այնպէս հագնվում են

---

թեամբ կազմում է մի բարձրաւանդակութիւն, որ իր  
սառը կլիմայի պատճառով աւելի յարմար չէ երկրագոր-  
ծութեան համար, բայց ունի ձոխ արօտամարդեր, որ  
չատ նպատաւոր են խաշնարածներին:

միայն անապատական ճգնաւորները: Ինչ որ նշա-  
նաւոր էր նրա կերպարանքի մէջ, գոթա էին  
կենդանի եւ կրակոտ աչքերն, որոնք իրանց առոյ-  
գութեամբ մի յայտնի բացառութիւն էին կազ-  
մում նրա զառամեալ հասակի մէջ:

Նա առանց ինձ վրայ ուշադրութիւն դարձ-  
նելու, սկսեց խօսել քեռի Պետրոսի եւ տէրտէրի  
հետ: Քանի ըստէից յետոյ ես ինձ բողբոլիմ  
աւելորդ զգացի նրանց հասարակութեան մէջ,  
մանաւանդ երբ նշմարեցի, որ իմ ներկայութիւնը  
նրանց հաճոյ չէր. ուստի բարի գիշեր ասելով,  
հեռացայ:



## ԼԲ.

### Բ Ա Ր Կ Ա Ց Ա Ծ Մ Ա Ր Օ Ն

Պարս վազեցի քեռի Պետրոսի վրանից: Ես երկար չէի կարողանում մոռանալ անապատական ճգնաւորին: Այս արեղան ինձ երեւում էր որպէս մի կախարդական անձնաւորութիւն: Քանի ժամ առաջ ես տեսայ նրան «Վաթնաղբիւրի» ձորում. նա անցաւ այնտեղից որպէս մի անըջային ուրուական, մեղմ կերպով եղանակելով մի արարական հրգ: Նրա ձայնը թըփերի միջից դուրս կանչեց կախարդ Սուսանին: Նա գըրկեց Հիւբբիին եւ անհետացաւ բլուրների մէջ: Այժմ կրկին ես տեսայ նրան երկու մեծ դաւագիրների վրանում: Ի՞նչ գործ ունէր Սուսանի եւ Հիւբբիի բարեկամը Կարօի եւ ծերունի որսորդի թշնամիների մօտ.—այդ ես հասկանալ չէի կարողանում:

Այդ մտածողութեան մէջ ես անցայ ուխտաւորների բանակը: Հասնելով մեր վրանը, տեսայ, այնտեղ բոլորը քնած էին. արթուն էր միայն Մարօն. նա դուրս պէս նստած վրանի մուտքի մօտ սպասում էր ինձ:

— Որտեղ կորար դու, հարցրուց նա, երբ տեսաւ ինձ:

Ես ոչինչ չը պատասխանեցի, եւ տեսնելով, որ վրանի մէջ կանայքը քնած են, ներս չը մտայ, այլ նստեցի դրսում կանաչ խոտերի վրայ: Բայց իմ լուսթիւնը աւելի շարժեց Մարտի բարկութիւնը:

— Նաո չարկաւոր է, ասաց նա ինքն իրան խօսելով, — չի էլ ուզում պատասխան տալ, կարծես, ինձ համար կարմիր հարս է գարձել, սպանում է, որ ես դրան «բերանբացուկ» \*) պէտք է տամ:

Այս խօսքերը մի այնպիսի հեգնական եղանակով արտասանեց Մարօն, որ անկարելի էր չը ծիծաղել: Բայց ես մտածեցի ծանր երեւացնել ինձ, այս պատճառով երեսո շուռ տուի, որ նա չը տեսնէ իմ ծիծաղը:

Մարօն նստած էր վրանի դռանը ներսի կողմից. ես նրանից փոքր ինչ հեռու էի:

— Եթէ դու կը գաս ինձ մօտ, այն ժամանակ քեզ հետ կը խօսեմ, ասեցի ես:

— Նաո չարկաւոր չէ, պատասխանեց նա արհամարհանօք: — Ի՜նչ մեծ տղայ է գարձել,

---

\*) Հայաստանում դիւ շտո տեղերում մնացել է այս սովորութիւնը, որ նորահարսը, առաջին անգամ փեսայի տունը գնալով, առհասարակ ոչ մէկի հետ չէ խօսում, բացի իր ամուսնի փոքրիկ բոյրերից և փոքրիկ եղբայրներից: Նա և իր փեսայի հետ չի խօսի առաջին դիչերում, մինչև չը ստանայ նրանից մի ընծայ. այս ընծան կոչվում է «բերանբացուկ»:

պէտք է նրա սպասին գնալ, վրձնց չէ:

Ես նկատեցի, որ Մարօն բարկացած էր իմ վրայ, պէտք էր գիտննալ պատճառը. դրա համար ես մօտեցայ եւ նստեցի նրա մօտ:

— Դու այսօր շատ ես խօսացել, ասաց նա այժմ աւելի ծանր կերպով — լաւ է, որ գնաս քնես, գիտեմ, յոգնած կը լինես:

— Ի՞նչ գիտես, հարցրի զարմանալով:

— Ես գիտեմ. . . — Բայց դու լաւ ընկեր չես, Ծարհատ, ամօթ քեզ համար, փոխեց նա իր խօսքը: — Քեզ հետ ժամադիր եղող աղջիկը այնքան շտապեց, որ թողեց «Կաթնաղբիւրի» մօտ իր սանտրը. բայց դու այնքան անշնորհք գտնվեցար, որ չը կարողացար նկատել: Ա.ս., քեզ եմ տալիս, տար, առաւօտեան իրան տուր, գլուխդ գովիր, ասան, ես գտայ, թող երեսդ սիւստակի:

Այժմ ես հասկացայ, թէ ինչու էր Մարօն բարկացել իմ վրայ: Նա տուեց ինձ մի սանտր. դա Սօնայի սանտրն էր, որ մոռացմամբ թողել էր «Կաթնաղբիւրի» մօտ լողանալու ժամանակ: Բայց որտեղից էր ընկել Մարօի ձեռքը:

— Ո՞վ տուեց քեզ այդ սանտրը, հարցրի ես:

— Ես ինքս գտայ այնտեղ:

— Դու մեզ տեսար:

— Կոյր չէի, որ չը տեսնէի:

— Բայց մենք ի՞նչու չը տեսանք քեզ:

— Ես շատ անգամ դելի պէս այքի չեմ երեւում, պատասխանեց նա ծիծաղելով:

Մարօի խորամանկութիւնները ես վաղուց գիտէի, այդ պատճառով իսկոյն չը կարողացայ

հաւատալ նրան, եւ ասեցի:

— Ինչ սուտ ես խօսում, այս սանտրը ուրիշ կերպով հասել է բո ձեռքը:

— Ձե՛ս հաւատում ինձ, պատասխանեց նա պինդ ձայնով:— Կուղե՛ս բոլորը կը սլատմեմ: Նա աղբիւրի մէջ լողանում էր, դու հեռուից ապուշի պէս նայում էիր. յանկարծ անցաւ ձորի միջով ձգնաւորը. նա երգում էր մի տխուր մեղեգի: Յետոյ յայտնվեցան Սուսանն ու Հիւբբին. իսկ դուք բարձրացաք բլուրի վրայ, նստեցիք նշենիների թփերի մէջ: Թէ կուղես, կը պատմեմ, դուք ինչ խօսեցիք:

— Հիմա հաւատում եմ:

Մարօն մտածութեան գնաց եւ բոպէական յուսթիւնից յետոյ խօսեց.

— Խեղճ Սօնա, որքան անբախտ է նա . . . Կիմ սիրտը չը դիմացաւ, երբ նա այնպէս ցաւալի կերպով խօսում էր իր մօր մահուան մասին եւ իր եղբօր կորստեան մասին:— Իմ սիրտը չը դիմացաւ, եւ ես թաքնուած թրվիերի մէջ, լաց էի լինում, Փարհատ:

Վերջին խօսքերի միջոցին ես նկատեցի Մարօի աչքերում արտասուք:

— Ինչ հիմա էլ լաց ես լինում, ասեցի նրան:

Նա ոչինչ չը սպտասխանեց: Բայց յանկարծ մի կատաղի ցնցում փոխեց նրա հեզ, ցաւակցական դէմքը, եւ նա խօսեց լի սպառնալիքով.

— Փարհատ, Աստուած վկայ, ես նրա հօրը շան պէս կը սատկացնեմ, թող նա տէրտէր լինի, մեղքից չեմ վախենայ, գիտեմ, որ նա սատանայ է:

— Բայց նա Սօճայի հայրն է:

— Ղորդ է, ես Սօճային շատ եմ սիրում, նա լաւ աղջիկ է, եթէ ես մի քոյր ունենայի, նրանից աւել չէի սիրի, բայց իմ հօրը աւելի եմ սիրում . . .

Մարօի կատաղութեան պատճառը յայտնի էր. բայց նրա վրդովմունքը ինձ ծիծաղելի էր թւում, եւ ես փորձելու համար հարցրի.

— Տէրտէրն ի՞նչով է մեղաւոր:

— Գու կարծում ես, ես չը լսեցի՞, պատասխանեց նա. — ես բոլորը իմանում եմ, թէ որպիսի խոր է ուղտւմ տէրտէրը փորել իմ հօր, Կարօի եւ նրա ընկերների համար: Նրանք ի՞նչ են արել, ի՞նչով են մեղաւոր:

Ես աշխատեցի հանգստացնել կատաղած Մարօին, որից ամեն բան սպասելի էր:

— Չէ, Մարօ, այդ լաւ չէ, ինչ որ դու մտաւորդ դրել ես: Ծշմարիտ է, քո հօր գէ՛մ գաւադրութիւն կայ, բայց մենք պէտք է խոչեմ լինենք, մենք պէտք է շտապենք շուտով վերագաճալ տուն եւ բոլորը յայտնել քո հօրը:

— Շտապել պէտք չէ, նա մի օրից յետոյ բոլորը կիմանայ, պատասխանեց Մարօն անփոյթ կերպով: — Բայց ես իմ ուխտածը պէտք է կատարեմ . . .

— Այդ թող մնա, ինչ որ դու ուխտել ես: Բայց դու ինձ այն ասա, թէ քո հայրն որտեղից կարող է իմանալ:

— Ես նրա մօտ մարդ ուղարկեցի:

— Ե՞րբ, ո՞ւմը:

Մըհէն կէս ժամ առաջ այստեղ էր նա այս կողմով անցնելով, եկել էր սուրբ Աստուածածինը համբուրելու։ Նրան ասել էին, թէ մենք եւս ուխտաւորների թւում ենք. տեսայ՝ ուրախ ուրախ գալիս է։ Ո՞րտեղից էր գալիս, նա ինձ չասաց, բայց շատ ուրախ էր։ Ես պատմեցի նրան իմ լսածները հօրս մասին։ Նա բարկացաւ, եւ էլ չըստգտեց որ գնայ սուրբ Աստուածածինը համբուրէ, իսկոյն վեր առաւ իր ահագին լախտը եւ շտապեց հօրս մօտ։

— Բայց նա իմանում էր հայրդ որտեղ է։

— Իմանում էր։ Ասաց. «էդ ի՞նչ սատանայական բան է, ես մի օրից յետոյ բոլորը կը պատմեմ որսորդին»։ Թէեւ հայրս այժմ Շատախի մէջն է գտնվում, որ այստեղից մի քանի օրուայ ճանապարհով հեռու է, բայց ես գիտեմ, որ Մըհէն քամուց աւելի արագ է գնում, նա էգուց չէ՝ միւս օրը հօրս մօտ կը լինի։

Մըհէն չէր ասել Մարօին, թէ որտեղից է գալիս, բայց գիտէի, թէ ուր էր գնացել նա եւ որտեղից էր վերադառնում։ Նա եկել էր իր արխնոտ շրթունքով Աստուածածինը համբուրելու . . . Ջարմանալի է, կրօնական զգացմունքը գտընվում է եւ ամենակատաղի եղեռնագործի մէջ . . . Բայց մի՞թէ կարելի էր նրան եղեռնագործ համարել . . .

Մարօի կարգադրութիւնները թէեւ բաւականին հանգստացրին ինձ, բայց ես դարձեալ պընդեցի, թէ մեզ պէտք է շտապել շուտով տուն վերադառնալու։ Նա դարձեալ ընդդիմացաւ ինձ։

— Ես չեմ գնայ, մինչեւ ասածս չը կատարեմ, ես այս գիշեր պատրաստվել էի, բայց . . .

Հեռուից լսելի եղաւ մի մեղմ երգեցողութեան ձայն, նոյն իսկ եղանակով, որ ես լսել էի այնօր «Վաթնաղբիւրի» ձորում: Մարօն լսելով ձայնը, փոխեց իր խօսքը.

— Սյդ «ճգնաւորն» է, որ երգում է, ասաց նա.— Ի՞նչպէս լաւ երգում է, լսիր, Փարհատ:

Եւ իրաւ, գիշերային լռութեան մէջ երգը հիանալի էր: Մարօն երկար ականջ դնելուց յետոյ հարցրուց.

— Դու գիտե՞ս նա ով է, Փարհատ:

— Ես նրան չեմ ճանաչում, այսօր առաջին անգամ տեսայ նրան «Վաթնաղբիւրի» ձորում, եւ նա երգում էր մի եւ նոյն այս երգը՝ Իսկ յետոյ երեւեցաւ նա իմ քեռի Պետրոսի վրանում:

— Ո՞րքան միամիտ ես, Փարհատ:

— Ի՞նչու:

— Նրա համար որ, դու չը կարողացար ճանաչել քո վաղեմի ընկերին:

— Ո՞վ էր նա:

— Ասլանը:

— Չեմ հաւատում, դու ինձ վրայ ծիծաղում ես, Մարօ:

— Վեր կաց, գնանք, նա մեզ կանչում է. ես հասկանում եմ նրա երգի միտքը. գնանք, մի ուշացիր. նրան մէկ էլ կը տեսնես ու կը հաւատաս:

Թէեւ այս խօսքերը Մարօն արտասանեց խիստ պինդ համոզմունքով, այսուամենայնիւ, ես չէի կարողանում հաւատացնել ինձ, թէ մի զառամեալ

անապատական արեղայ կարող էր Ասլանը լինել: Բայց Մարօն հաստատեց իր խօսքը մի ուրիշ փաստով, որ շատ հաւանական էր: Նա յիշեցրուց ինձ այն նկատողութիւնը, որ արել էր նա, երբ առաջին անգամ տեսաւ պառաւ կախարդին եւ փոքրիկ շիւբբիին, որ նստած ժայռի վրայ, ուխտաւորների համար գուշակում էր: Նա այն ժամանակ ասաց. «Վարօն կամ նրա ընկերներից մէկը պէտք է այստեղ լինի». եւ աւելացրուց, թէ «այս պառաւն իսկոյն յայտնվում է այնտեղ, ուր նրանք լինում են»: Եւ ես այնօր միթէ չէի տեսել մի եւ նոյնը, երբ «Վաթննադբիւրի» ձորում ծպտեալ արեղան միացաւ պառաւ կախարդի հետ եւ համբուրեց շիւբբիին:

Իմ տարակոյսը փարատված էր. ես յօժարվեցայ գնալ եւ գտնել «ճգնաւորին», բայց մտածում էի մեր վրանը անտէր եւ առանց տղամարդի չը թողնել: Երբ այդ մասին յայտնեցի Մարօին, նա պատասխանեց.

— Սուրբ Աստուածածինը իր ուխտաւորներին կը պահէ, գնանք:

Ես չը համոզվեցայ: Նա խնդրեց ինձ փոքր ինչ դրսում սպասել, իսկ ինքը մտաւ վրանի ներսը: Մինչեւ նրա դուրս գալը, ես գտայ վանքի գիւղացիներից մէկին, եւ նրան մի քանի դուրուշ տալով, պատուիրեցի հսկել վրանին մինչեւ մեր վերագարձը:

Քանի բոպէից յետոյ դուրս եկաւ Մարօն. ես հազիւ կարողացայ ճանաչել նրան. նա փաթաթված էր մի լայն Վանայ արայի (վերարկուի)

մէջ եւ գլխին քրդի ձեւով ապարօշ էր կապել:

— Իսկ ո՞վ է, հարցրուց նա, տեսնելով գիւղացուն:

— Ես պատուիրեցի նրան հսկել վրանին մինչեւ մեր վերադարձը:

— Խաթունը արթուն է: — Լաւ, գնանք:

Երբ փոքր ինչ հեռացանք, նա ասաց.

— Իսկ չես իմանում, Փարհատ, նա ինքը կը գողանայ: Այստեղ բոլորն էլ աւագակներ են:

— Վաճառի սպասաւորն երկիւղած կը վնի, պատասխանեցի ես:

— Չէ, այդպէս չէ, ես իմ աչքով տեսայ, թէ ինչպէս մի վարդապետ գողացաւ եւ գրքականը դրեց իմ գցած գանձանակը: Նրանք մեզ խաբում են, Փարհատ, նրանք այն չեն, որպէս դրսից երեւում են . . . Հայրս շատ է պատմել ինձ նրանց գործերի մասին . . .

— Քո վերարկուի տակից զէնքի ձայն է լսուիւմ, Մարօ:

— Հայրս պատվիրել է ինձ, երբ գիշերով հեռու տեղ ես գնում, պէտք է միշտ զէնք ունենաս:

Ճանապարհին ես Մարօից հարցրի, թէ ո՞րպէս նա կարողացաւ ճանաչել ծպտեալ «ճգնաւորին»:

— Ակզբում ես չը կարողացայ ճանաչել, երբ տեսայ նրան «Կաթնաղբիւրի» ձորում, պատասխանեց նա: — Թշուառականը մի այնպիսի մօրուք եւ ծամեր էր շինել, որ ինքը սատանան չէր կարող հնարել, երբ կամենում է ծերի կերպարանք

ընդունել: Երեսը ներկել էր եւ պսաւաւի գոյն էր տուել, մինչեւ անգամ խորշոմներ կային: Բայց աչքերը մնացել էին անփոփոխ: Ո՞վ չէ կարող ճանաչել Ասլանի գեղեցիկ աչքերը, եթէ միանգամ տեսել է նրան:

— Բայց որ դուր բերեց քեզ այնտեղ, «Վաթնաղբիւրի» ձորում:

Մարօն բոլորովին անկեղծաբար խոստովանեց, թէ նա հէնց այնօր Տիրամօր տաճարի մէջ նկատել էր, երբ Սօնան մօտեցաւ եւ շշնջաց իմ ականջին, նշանակելով տեսութիւն «Վաթնաղբիւրի» ձորում: Թէ այն շշուշը ծնուցել էր նրա սրտում կասկած եւ նախանձ . . . եւ ինքը չը կարողացաւ համբերել, եկաւ այնտեղ . . .


— Եւ քո կասկածանքը փարատվեցաւ, հարցրի ես, երբ նա վերջացրուց իր խօսքը:

— Իե՞ռ ոչ բոլորովին . . . Բայց ինձ համար մի եւ նոյն է . . . Սօնան լաւ աղջիկ է . . . ես սիրում եմ նրան . . . դու էլ պէտք է սիրես . . .

Այս խօսքերը Մարօն արտասանեց կտրատելով, կարծես, նրա լեզուն այրում էին: Բայց նա մեղաւոր չէր. նախանձը տիրում է բոլոր կենդանիների սրտին, որոնց մէջ զգացմունք կայ:

Հեռուից այժմ աւելի պարզ լսելի եղաւ «ճգնաւորի» երգի ձայնը:

Այս կողմով գնանք, ասաց Մարօն, — նրան կը գտնենք այն լեռների մէջ:



ԾԱԾԿԱՄԻՏ ԱՍԼԱՆԸ ԲԱՑՎՈՒՄ Է

Մենք գտանք «ճգնաւորին» վանքից բաւականին հեռու, լեռների մէջ, որ մօտ էին ծովեզրին: Նա նստած էր մի քարանձաւի մէջ, որի մուտքը նայում էր դէպի Լիմ անապատը: Լուսաւորված լուսնի արծաթափայլ շողքերով, այդ փոքրիկ կղզին երեւում էր ծովակի մէջ մի մնայլ բժի նման: Քարանձաւը, որի մէջ գտանք «ճգնաւորին» մի հին միայնակեացի բնակարան էր, որի յատակի վրայ դեռ մնացած փոսիկների մասին տակաւին կային կենդանի աւանդութիւններ, թէ նրանք առաջ էին եկել, իր անձը Աստուծուն նուիրած մարդու ստէպ ծրնրադրութիւնից: Այնտեղ ճրագ չը կար, բայց մի անկիւնում վառվում էին մի քանի կտոր փայտեր, ոչ թէ տաքացնելու համար, այլ լոյսի համար:

Մի կողմում խորին քնի մէջ պառկած էր պառաւ կախարդը, «ճգնաւորն» արթուն էր. նա իր փառահեղ մօրուքով նստած, մտածում էր: Նրա ծնկերի վրայ գլուխը դրած, ննջել էր փոք-

րիկ Հիւբրինս— Հրաշալի՛ մի տեսարան էր այդ։

Երբ մենք ներս մտանք, «ճգնաւորը» խիստ զգուշութեամբ փոքրիկ վճուկի գլուխը գրեց իր վերարկուի վերայ, որ նրա անուշ քունը չըխանգարէ, եւ վերկացաւ։ Նա գրկեց առաջ ինձ եւ համբուրեց, յետոյ գրկեց եւ Մարօին։ Մարօն չընդդիմացաւ նրան, օրովհետեւ ոչ մի աղջիկ չէր կարող մերժել այն անմեղ շրթունքը, որ այնպէս եղբայրաբար մերձեցան սիրելի օրիորդի շրթունքին։

Այնուհետեւ «ճգնաւորը» ոտքից մինչեւ գլուխ զննելով ծպտեալ եւ զինուորուած Մարօին, ասաց.

— Ահա այդպէս լաւ է. այդ սիրում եմ ետ։  
Մենք նստեցինք։

— Այժմ ես կը խլեմ իմ դիմակը, ասաց նա, — բարեկամներիս մօտ պէտք չէ ինձ թագնուած մնալ։

Նա առեց իր կեղծամը, մօրուքը, եւ մեր առջեւ ներկայացաւ Ատանը իր բնական կերպարանքով։

Ես մի քանի խօսքերով յայտնեցի մեր գալու նպատակը, այնուհետեւ պատմեցի այն բարբառը, ինչ որ լսել էի Սօնայից «Կաթնաղբիւրի» ձորում, այլ եւ հաղորդեցի նրան՝ ինչ որ ասել էին ինձ քեռի Պետրոսը եւ տէրտէքն իրանց վրանում։ Այնուհետեւ աւելացրի, թէ որպիսի դաւադրութիւն է պատրաստուում ծերունի որսորդի եւ նրա բարեկամների գէմի Իսկ Մարօն իր կողմից յայտնեց իր արած կարգադրութիւննե-

բը, թէ Մըհէի ձեռքով նա արդէն բոլորը իմացում տուած է իր հօրը:

— Ենորհակալ եմ ձեր հոգացութեան մասին, ասաց նա տխուր կերպով:— Բայց այդ բոլորը ես արդէն գիտէի: Իմ արեղայական կերպարանքը առիթ տուեց ինձ մտնել դաւադիրների ժողովների մէջ որպէս խորհրդակից: Բայց նրանց ճիգը անգոր է . . .

Որպէս երեւում էր, Ասլանը շատ տխուր էր, եւ մեր այցելութիւնն այնքան հաճելի չէր նրան: Գուցէ նա չէր գտնականում, որ իր կերպարանափոխութիւնը մերկացուէր մեր մօտ. գուցէ նա մեզ այնքան անփորձ էր համարում, որ չէր կարող հաւատալ մեզ իր գաղանխքները, որ նա պէտք է ծառայեցնէր մեզ բոլորովին անյայտ նպատակներին:

× Առժամանակ մտածելուց յետոյ, նա խօսեց.

— Ես չեմ զարմանում գործերի այսպէս լինելու մասին, այլ ցաւում եմ, որովհետեւ ամեն ժամանակ, երբ հայի համար որ եւ իցէ դաւաճանութիւն է պատրաստուում, նրա մէջ խառն է լինում դարձեալ նոյն իսկ հայի մատնիչ ձեռքը: Դա մի պատմական եղեռնագործութիւն է, որ սկսեալ ամենահին դարերից, խիստ յաճախ կրկնուի է մեր ազգի կեանքում: Դա հայի վատ յատկութիւններից մէկն է . . .

Ես առաջին անգամ տեսնում էի Ասլանին երկար խօսելիս. նա առհասարակ լուռ եւ ծածկամիտ երիտասարդ էր: Բայց նրա խօսելու ձեւը շատ տարբեր էր Կարօից: Կարօն ժողովրդի

որդի էր. նրա խօսքերն անտաշ էին եւ պարզ, բայց նրանց մէջ ուժ եւ զօրութիւն կար, նրբանք ազգում էին աւելի մարդու սրտի վրայ: Ասլանը ժողովրդի կրթված որդին էր, նրա խօսքերը կոկուած էին եւ գեղեցիկ, ազգում էին աւելի մարդու մտքի վրայ:

Նա շարունակեց.

— Թէ ի՞նչ հետեւանք կունենայ մեր ձեռնարկութիւնը, մենք այժմէն նախագուշակել չենք կարող, միայն վստահ ենք նրա յաջողութեան մէջ, որովհետեւ մենք հետեւում ենք բնութեան ընդհանուր օրէնքներին: Թէ բնութեան մէջ եւ թէ մարդկային կեանքում ոչինչ բան առանց պատճառի չէ կատարվում: Մենք տեսնում ենք, ամեն մի ճնշում եւ սահմանափակված զօրութիւն որքան աւելի սեղմվում է, այնքան աւելի զարգանում է: Նրա մէջ ընդդիմահարութեան ուժը: Այնուհետեւ նա պիտի պայթի, նա պիտի խորտակէ իրան սահմանափակող պատուարը եւ իր բնական ազատ ծաւալականութեանը պիտի հետեւի: Ժողովուրդը, ամբոխը նոյնպէս մի զօրութիւն է: Նա երկար չէ կարող համբերել իրան ճնշող եւ ստրկացնող կոպիտ ձեռքին: Նա վերջապէս պիտի խլրտի, պիտի խորտակէ իր շղթաները եւ պիտի թօթափէ բռնակալի լուծը: Բայէն հասել է . . . այս դրութեան մէջն է այժմ մեր ժողովուրդը:

— Քեռի Պետրոսները, տէր Թօղիկները, շարունակեց նա, — ժողովրդի անհարազատ որդիքն են. նրանք կարուած են ընդհանրութիւնից, որով

Հետեւ իրանց ետական շահերին են ծառայում։  
Նրանց թիւը փոքր չէ, եւ աւելի ցաւալին այն է,  
որ նրանք ժողովրդի առաջնորդող մասն են կազ-  
մում։ Ահա այստեղ է մեր դժբախտութիւնը։

—Ի՞նչ առանձին շահեր պէտք է ունենան,  
հարցրի ես։

—Քեռի Պետրոսը մի երեւելի քորդ իշխանի  
տան «շահբանդան» է. նա մատակարարում է  
բոլոր պիտոյքները, ինչ որ կը հարկաւորվի նրա  
տանը։ Նա այնպիսի ընդարձակ իրաւունքներ  
ունի իշխանի տնտեսութեան մէջ, որ առանց նրա  
հաճութիւնը ստանալու, առանց նրանից հարց-  
նելու, կատարում է բոլոր խնդիրները, բոլոր  
ապսպարանքները՝ ինչ որ տանեցիք պահանջում  
են իրանից։ Սկսած ուտելիչէններից, հագուստից,  
մինչեւ ամենամանր բաները նա է տալիս։ Վա-  
ճառականութիւնից անտեղեակ քրդի Հետ ցան-  
կալի է այսպիսի առեւտուր ունենալ։ «Շահբան-  
դան» ինքն է գնահատում, ինքն է գրում իր  
տետրակների մէջ իր տուածը, եւ տարեգլխին  
յայտնում է մի ահագին գումարի պահանջ։  
Միամիտ քորդն ընդունում է, բայց նա փող  
չունի, որ պարտքը հատուցանէ, բացի դրանից,  
նա զուտ արծաթով պարտք վճարելու սովորու-  
թիւն չունի։ Նա իր ստացած նիւթը փոխարի-  
նում է ուրիշ նիւթով։ Այս վերջինը նա ունի  
Բաւական է միայն, որ իշխանը բարեհաճէր մի  
արշաւանք գործել դէպի երկրի որ եւ իցէ կողմը,  
եւ ահա նա վերադառնում է ոչխարների, ձիերի,  
կովերի, գորգերի ու կապերտների ահագին աւա-

բով: Մի մարդ պէտք է, մի վաճառականութեան գլուխ ունեցող մարդ, որ այս միջերբը տանէ եւ մի հեռու երկրում արծաթի հետ փոխէ: Եւ ահա քեռի Պետրոսը պատրաստ է. նա ամեն տեղ ունէ իր գործակալները գողացած ապրանքը «սողացնելու» համար: Նա Իշխանից արծաթի պահանջ ունի եւ փոխարէնը ստանում է այդ աւարը: Իսկ գողացած ապրանքը միշտ էժան է վնում. . .

—Քեռի Պետրոսները, շարունակից նա, մի տեսակ աւազակներ են, միայն վաճառականի կերպարանքով: Ամեն մի քուրդ իշխան ունի գրանցից մի-մի հատ: Քեռի Պետրոսներին ցանկալի է, որ իրանց իշխանը միշտ հաստատուն մնար իր անսահման իշխանութեան մէջ, թէեւ նրանք գիտեն, որ իրանց ստացած միջերբը յափշտակված է հազարաւոր թշուառ հայերից: Բայց փոյթ չէ նրանց հայի արտասուքը, բաւական է, որ իրանք շահվում են. . .

Ասլանը խօսում էր մեղմ եւ անվրդով կերպով, որպէս թէ շատ հասարակ առարկայի վրայ լինէր նրա խօսքը: Բայց նա խօսում էր առանց լռելու, որովհետեւ նրա սիրտը լցուած էր: Այդ ժամանակ ես չէի կարողանում առանց սարսափելու նայել Մարօի երեսին. նրա շրթունքները դողում էին, գոյնը ստէպ ստէպ փոփոխվում էր, եւ երեսի բոլոր արտասանութեան մէջ երեւում էր իրատ կատաղի բարկութիւն:

—Պէտք է ոչնչացնել այս բոլոր քեռի Պետրոսներին, ասաց նա երկար լռութիւնից յետոյ:

— Կա մի առանձին օգուտ չի բերի, պատաս-  
խանեց Ասլանը իր սովորական սառնութեամբ:—  
Ողնջայնելով մի հասարակութեան միջից աւա-  
զակներին, մենք դրանով աւազակութիւնը ոչըն-  
չացրած չենք լինի: Կա ասիական կոշտ միջոց  
է չարութիւնը բառնալու համար: Մարդկային  
կեանքի մէջ ոչ մի երեւոյթ՝ առանց նոյն հա-  
սարակութեանը յատուկ պատճառների՝ երեւան  
չէ գալիս: Աւեր առնենք մի աւազակ, մի մար-  
դասպան, մի ստրուկ եւ քննենք նրանց կեանքի  
պատմութիւնը, կը տեսնենք, որ նրանց կեանքն  
այնպիսի պայմանների մէջ է դրուած եղել, որ  
աւազակը պէտք է աւազակ լինէր, մարդասպանը՝  
մարդասպան, եւ ստրուկը՝ ստրուկ: Փոխի՛ր նը-  
րանց կեանքի պայմանները, եւ դու կը տեսնես,  
որ նրանք օրինաւոր մարդիկ կը դառնան, Եւ  
այսպէս, մենք միայն պիտի ցաւենք, որ մեր մէջ  
յայտնուում են անպիտան մարդիկ, բայց գատա-  
պարտել նրանց չենք կարող, որովհետեւ մեր հա-  
սարակութիւնը իր փթած կազմակերպութեամբ  
ինքն է ծնել այն մարդիկներին: Եւ եթէ մենք  
ցանկանում ենք, որ չարագործութիւնը բառ-  
նանք, պէտք է աշխատենք նախ ուղղել հասա-  
րակութեան վատ կազմակերպութիւնը, եւ այն  
ժամանակ նրա անդամները բոլորը լաւ մարդիկ  
կը լինեն:

— Ես ձեր ասածները չեմ հասկանում, պա-  
տասխանեց Մարօն, — թէ ինչու մարդիկ այս-  
պէս կամ այնպէս են լինում: Ես գիտեմ միայն,  
որ պէտք է օձի գլուխը ջարդել, երբ տեսնում

ես, որ նա պատրաստվել է քեզ խայթելու: Ես  
երգուել եմ սատկեցնել քեռի Պետրոսին, նրա  
համար որ, նա իմ հօր թշնամին է, եւ այս գի-  
տաւորութիւնը արգէն յայտնել էի Փարհատին:

— Քո նպատակը շատ մասնաւոր է, ասաց Աւ-  
լանը, — դրանով շատ չես օգնի շնորհակալութիւն  
դին: Եթէ այստեղ լինէր մեր ընկեր Կարօն,  
նա գուցէ կը համաձայնուէր քեզ հետ, բայց ես  
համարում եմ այդ մանուկ սրտի բորբոքում եւ  
աւելի ոչինչ:

Առժամանակեայ մտածութիւնից յետոյ նա  
դարձեալ խօսեց:

— Եթէ օձը մի հատ լինէր, որպէս դու ասա-  
ցիր, պէտք էր նրա գլուխը ջարդել, այսպիսով  
մենք ազատված կը լինէինք գոնէ մի չարագոր-  
ծից, բայց դժբախտաբար նրանց թիւը շատ է:  
Ես եղել եմ Աօհական Տաճկաստանում, Կոստանդ-  
նուպօլսում, Եգիպտոսում, մի խօսքով ամեն տեղ,  
ուր կան հայեր: Ես բաւականաչափ ուսում-  
նասիրած եմ մեր ազգի թէ ներկայ եւ թէ ան-  
ցեալ կեանքը: Ես տեսել եմ, որ սկսած ամենա-  
ստոր քուրդ իշխանի դռնից, սկսած նահանգա-  
կան կուսակալ փաշաների դռնից, մինչեւ վե-  
զիրների դռները, մինչեւ Սուլթանի բարձրագոյն  
դուռը, բոլորը բռնուած են քեռի Պետրոսնե-  
րով: Եւ որքան մեծ անձի մօտ է նրանց ծա-  
ռայութիւնը, այնքան մեծ է եւ նրանց վնասա-  
կարութիւնը: Նրանք բոլորն էլ շատ նման են  
միմեանց. բոլորն էլ աւազակներ են. զանազա-  
նութիւնը միայն գողութեան տեսակի մէջն է:

— Բայց գողը այնքան վնասակար չէ, երբ մէկի ոչխարը, միւսի աւանակը գողանում է. իմ ասածները այնպիսի գողեր են, որ նրանց վնասը հասնում է մեր ամբողջ ժողովրդին: Նրանք խիստ յարմար գործիքներ են մեր բռնակալների ձեռքում: Նրանք ճնշում են, ոչնչացնում են ամեն զօրութիւն, որ գործ էր դրվում թշուառ ստրուկին հանգստութիւն պարգեւելու համար: Եւ այդ գողերը, այդ աւազակները, որպէս ասացի, մեր հասարակութեան առաջնորդող անձինք են. . .

— Թողնենք մանր քեռի Պետրոսներին, անցնենք դէպի խոշորները: Սուլթանի դռան համարեա ամբողջ տնտեսական եւ գանձային կառավարութիւնը հայ «սփէրէ» ձեռքումն է: Նրանք կրում են աւելի բարձր տիտղոսներ, — կոչվում են «սփէրէ» Տեսէք, ինչ է ամիրայ սեղանաւորի (սառաֆի) պաշտօնը. կառավարութիւնը տալիս է գաւառների հարկահանութիւնը՝ մի եւ նոյն ժամանակ նրանց դատաւորութիւնը փաշաներին կապալով: Բայց նա փաշայի վրայ վստահութիւն չունի, թէ նա իր ժամանակին կը ներկայացնէ նշանակած տուրքը: Փաշան պէտք է մի երաշխաւոր տայ: Ամիրայ սեղանաւորը միշտ պատրաստ է այս երաշխաւորութիւնը իր վրայ ընդունելու, որովհետեւ նրա մէջ մեծ շահեր ունի, որովհետեւ փաշայի կապալառութեան փաստակի մի մասն էլ ինքն պիտի վայելէ: Բայց որտեղից է գոյանում փաստակը: — Բիւրաւոր թշուառ հարստահարուածների քրտինքից: Փաշան սարսափելի անգթութիւններով հաւաքում է իրան յանձնուած

վիճակից տէրութեան հարկը եւ ուղարկում է երաշխաւոր սեղանաւորին, իսկ սեղանաւորն իր կողմից պէտք է արժաթը ներկայացնէ տէրութեան գանձարանը: Բայց նա զուտ արժաթ չէ տալիս, այլ փողի փոխարէն յետ է դարձնում գանձարանին թղթեր (փուսուլաներ), որոնց ինքը նոյնպէս փողի տեղ ընդունել էր գանձարանից: Այսպիսով նա շահացնում է՝ իր ձեռքի թղթերը:

— Բայց որտեղից ընկան նրա ձեռքը այդ թղթերը, հարցրի ես, լաւ չը հասկանալով Ասլանի վերջին խօսքերը:

— Սեղանաւոր ամիրան, պատասխանեց նա, զանազան առեւտրական յարաբերութիւններ ունի բարձրագոյն դրան հետ. կամ նա ընդունել է զօրքը կերակրելու եւ հագուստ մատակարարելու պարտաւորութիւնը, եւ կամ նա իր ձեռքում ունի, օրինակ, հարէմի տնտեսութիւնը: Աշխարհի ամենապատուական գոհարներով զարդարում է նա Սուլթանի բազմաթիւ կնիկներին, եւ աշխարհի ամենաթանգագին փարչաները մատակարարում է նրանց հագուստի եւ պաճուճանքի համար: Այս բոլորի փոխարէն նա չէ ստանում, որպէս ասում են շնորհք փող — նրան տալիս են թղթեր միայն: Ահա նոյն թղթերն է, որ նա կրկին յետ է դարձնում գանձարանին իր երաշխաւորութեան պարտաւորութիւնը կատարելու ժամանակ:

— Հիմա դուք տեսնք, շարունակեց նա, որ ամիրայ սեղանաւորը, բարձրագոյն դրան տըն-

տեսը, զօրքի եւ հարկերի կապալառուն, նոյնպիսի աւազակներ են, որպէս քուրդ իշխանի «շահբանդան» — որպէս քեռի Պետրոսը: Բայց նոյն «ամիրաներն» են մեր աղփաղէփէրը. նրանք են դարձնում մեր ազգի կառավարութեան սանձը գէպի ամեն կողմ, որ կողմը որ իրանց հաճելի է . . . Այժմ ի՞նչ յոյս կարող ենք ունենալ նրանցից, — մեր արիւնը ծծողներից, մեր աշխատութեան վաստակը մեր ձեռքից խլողներից . . . Նրանց համար միշտ ձեռնտու է մի անկարգ եւ բռնակալ կառավարութիւն, որի պլուտութեան մէջ կարողանում են որսալ իրանց շահերը: Հայի արտասուքը եւ թափուած արիւնը նրանց չէ ազդում. նրանք իրանց քսակը հարստացնելու համար են միայն մտածում . . .

— Եւ այսպէս, մեր ժողովրդի դրամատէրները, այսինքն այն անձինքը, որոնց ձեռքում կայ նիւթական կարողութիւն, փոխանակ օգնելու, որ մշակը եւ գիւղացին հաց եւ հանգստութիւն ունենան, աւելի իրանք են մաշում նրանց կենսական զօրութիւնը, աւելի իրանք են ամբացնում նրանց ստրկութեան շղթաները: Թէեւ նրանց գործողութիւնները կատարվում են անուղղակի կերպով, բայց մի եւ նոյն է՝ լինել աւազակ, կամ աւազակի ձեռքում գործիք: Բայց ազգը, միամիտ եւ տգէտ ազգը պարծենում է իր «ամիրաների» փառքով, խոնարհվում է նրանց առջեւ, եւ խորին յարգութեամբ մատուցանում է իր խոնարհ երկրպագութիւնը . . .

— Բայց ի՞նչպէս է լինում, որ այսպիսի վատ

մարդիկ մեծամեծ պաշտօնների են հասնում, հարցրի ես:

— «Հայը հաւատարիմ է, առում է թուրքը, նա լաւ ծառայել գիտէ» . . . Այո՛, հաւատարիմ է նա եւ նրա հաւատարմութիւնը հնօր է տալիս նրան վայելել կառավարութեան վստահութիւնը: Բայց հաւատարմութիւն բառը բռնակալի լեզուով ունի բոլորովին այլ նշանակութիւն, — նոյն իսկ նշանակութիւնը, որպէս աւազակապետը իր ձեռքի տակ եղող սրիկաներին իր հաւատարիմ պաշտօնեաներ է կոչում:

— Հայ գրամատէրների այս տեսակ «հաւատարմութիւնը» մի կողմից առիթ տուեց նրանց իրանց գործունէութիւնը նուիրել կառավարութեան պիտոյքներին, միւս կողմից, զրկեց նրանց մի աւելի հաստատուն եւ ընդարձակ ասպարէզից, այն է՝ արդար եւ խղճմտանքով վաճառականութիւնից: — Այս ասպարէզը մնաց յոյներին: — «Յոյնը անհաւատարիմ է», առում է թուրքը եւ նրա վրայ վստահութիւն չունի, նրան գործ չէ յանձնում: Դա իրաւ է: Արովհետեւ յոյնը այնքան մեծամիտ է, որ նա չէր կարող հայի պէս իրան այնքան ստորացնել, որ կարող լինէր հաշտուել իր ատելի թշնամու հետ, — իր երկիրը տիրողի եւ իր ազգակիցներին ստրկացնողի հետ: Այս պատճառով յոյնի գրամատէրները չուզեցին ամիրաներ, սառաֆներ եւ տէրութեան կապալառուներ դառնալ. նրանք ձեռք առին ազատ վաճառականութիւնը, սկսեցին երկրի արդիւնաբերութիւնը գուրս հանել եւ գրսից ներս բերել:

Ահա այսօրուայ-օրում Տաճկաստանի ընդար-  
ձակ վաճառականութիւնը նրանց ձեռքումն է:

— Բայց հայերը բողոքովին զուրկ չեն վաճա-  
ռականութիւնից, կարեցի ես Ասլանի խօսքը:

— Այն քո տեսածը վաճառականութիւնն չէ,  
պատասխանեց նա, — այն մի տեսակ վաշխառու-  
թիւնն է, որով պարսպլում են եւ հրէաները:  
Վեր առնենք, օրինակ, Վանայ նահանգը, որը  
ձեզ փոքր ի շատէ ծանօթ է. բննելով այստեղի  
վաճառականների գործունէութիւնը, դուք կը  
տեսնէք մի եւ նոյնը, ինչ որ անում են մայրաքա-  
ղաքներում մեր խոշոր իդրամատէրները: Զանա-  
զանութիւնը միայն նրանումն է, որ դրանք մանր  
հարստահարողներ են, այլ խօսքով, փոքրիկ աւա-  
զակներ են, իսկ նրանք — մեծ: Մեր գիւղացիները  
միշտ փողի կարօտութիւն ունեն հարկեր վճա-  
րելու համար եւ այլ կենսական պահանջների  
համար: Փողը նրանք ստանում են վաճառակա-  
նից, ի հարկէ, ծանր տոկոսներ վճարելով: Գիւ-  
ղացիները նոյնպէս պարտքով գնում են վաճա-  
ռականից իրանց տան, հագուստի եւ այլ հար-  
կաւորութեանց վերաբերեալ իրեղէնները: Գալիս  
է պարտքը վճարելու ժամանակը, գիւղացին փող  
չունի որ տայ, վաճառականը յափշտակում է  
նրա բոլոր երկրագործական արդիւնքը կէս գնով:  
Այսպիսի աւազակները կը ցանկանան, որ գիւ-  
ղացու վիճակը բարւոքի, կը ցանկանան, որ  
նա փողի կարօտութիւնն չունենայ: Աւելացնենք  
դրա վրայ քրդի, թուրքի, աէրութեան հարկա-  
հանների հարստահարութիւնները. — խեղճ գիւ-

ղացին ինչով կարող է այս բոլորին բաւակա-  
նութիւն տալ: Նրա երկրագործութիւնը դեռ իր  
նահապետական ձեւի մէջն է, աւելի արդիւնք  
չէ տալիս: Նա արհեստ չը գիտէ, որ իր ձեռքի  
արդիւնաբերութիւնը մշակված կերպով վաճա-  
ռահանէ դէպի օտար երկրներ: Այլ եւս ինչով  
կարող է նա իր ընտանիքը պահել, երբ իր աշ-  
խատութեան այն փոքրիկ վաստակն եւս ձեռ-  
քիցը խլում են: Ահա այստեղից է ծագում այն  
տխուր երեւոյթը, որ մեր ժողովուրդը հայրենի  
հողի վրայ իր ապրուստը ճարելու հնարներ չու-  
նի: Նրա աշխատութեան արդիւնքը նրա ձեռքից  
խլում են. նա մնում է միշտ աղքատ եւ միշտ  
առանց հացի, եւ այդ պատճառով ստիպուած է  
թողնել հայրենի հողը եւ օտար երկրներում  
բախտ որոնել: Եւ քանի՜ հազար թշուառ ըն-  
տանիքներ այժմ մնացել են առանց տղամարդ-  
ների. միայն կոտորանդնուպօլտում այժմ 40 հա-  
զար հայ պանդուխտներ կան, եւ նրանց մեծ  
մասը վանեցիկներ են: Ի՞նչ անէ խեղճ գիւղա-  
ցին, որ չը գաղթէ: Թողեալ այն, որ նրան կո-  
ղոպտում է թուրքը, բուրդը եւ տէրութեան  
պաշտօնեան,—նոյն իսկ իր արիւնակիցը, իր կրօ-  
նակից հայը նրա կեանքի զօրութիւնը ծծում է,  
նրան խեղճութեան եւ թշուառութեան մէջ է  
գցում: Տաճկաստանի բոլոր քաղաքները լցուած  
են հայ մշակներով կամ հայ համալներով.—բայց  
գրանք մեր երկրի գլխաւոր ուժերն են, որ մաշ-  
վում են. եւ ոչնչանում են պանդխտութեան մէջ:  
—Դուք տեսաք, շարունակեց նա, որ հայ

դրամատէրը, հայ վաճառականը՝ մեր հասարակութեան բոլորովին աւերված՝ եւ վնասակար մասն է. նրանցից մենք ոչինչ բարիք չենք սպասում: Նրանք պաշտում են իրանց քսակը եւ աւելի ոչինչ: Վաճառականը ազգ եւ հայրենիք չունի, նրա հայրենիքն այնտեղ է, որտեղ են նրա շահերը: Եւ այս տեսակ վաճառականութիւնը (եթէ կարելի է վաճառականութիւն կոչել) աւելի վտանգաւոր է դառնում, երբ նա ներքին կապ ունի կառավարութեան պաշտօնակալների եւ նրանց անիրաւ գործունէութեան հետ: Դուք շատ անգամ եւ շատ տեղ տեսած էք այս բանը. օրինակ, գիւղացին պատրաստի արծաթ չունի եւ հարկի փոխարէն տալիս է իր արդիւնաբերած նիւթի մի մասը. հարկահանը չէ ընդունում, եւ ոչ ժամանակ է տալիս նրան, որ կանոնաւոր կերպով վաճառէ եւ հարկը լրացնէ: Դուք տեսնում էք, որ խեղոյն յայտնվում է հայ վաճառականը, եւ օգուտ քաղելով գիւղացու նեղ դրութիւնից, խոստանում է հարկահանի փողը տալ, եւ խիստ չնչին գնով առնում է գիւղացու դառն աշխատութեան պտուղը.— Էիմա տեսնում էք, դրանք բոլորն էլ քեռի Պետրոսներ են, միայն զանազան կերպարանքներով. . . — Քեռի Պետրոսներին միշտ ձեռնտու է միանալ քուրդ իշխանների հետ եւ դաւադրութիւն մեքենայել մեր դէմ. . .

Ասլանի ասածները ես բոլորը հասկանում էի, որովհետեւ իմ փորձած եւ տեսած բաներ էին: Կարծես թէ, ես բոլորը առաջուց գիտէի, թէ եւ ոչ մի անգամ իմ մտքով անցած չէին նրանք.

եւ ոչ մի անգամ իմ ուշադրութիւնը գրաւած չէին: Աեանքի խօսքը միշտ հասկանալի է լինում մարդուն, որքան եւ նա անզգայ լինէր, որովհետեւ այն խօսքը ուղղակի վերաբերում է նրա գոյութեան պահանջներին:

— Այս բոլորը հասկանում եմ, ասեցի ես, թէ ինչու քեռի Աետրոսներն այսպէս են վարվում, բայց չեմ հասկանում մի բան, թէ մեր տէր Թօմ դիկներն ինչ շահ ունեն միանալու դրանց հետ:

— Դրանք էլ մի տեսակ վաճառականներ են, պատասխանեց նա, — դրանք էլ ունեն իրանց կրօնական մենտավաճառութիւնները: Զանազանութիւնը միայն վաճառքի նիւթի մէջն է: Եւ վաճառականը միշտ խաբեբայ է, միշտ խարդախ է, միշտ անիրաւ է: Երբեւ օրինակ, ես կը խօսեմ միայն այս վանքի վանահայր Աորապետ վարդապետի վրայ: Դա առաջ ճէր Յուսկան որդու վանքի վանահայրն էր, որն այս կողմերի աննշան եւ ոչ այնքան արդիւնաւոր վանքերից մէկն է: Նա մտածեց ձեռք ձգել սուրբ Աստուածածնի վանքը, եւ ինչ միջոցով. — խոստացաւ մի քուրդ իշխանի, թէ տարեկան արդիւնքի կէսը նրան կը տայ, միայն թէ նա օգնէ իրան վանահայր լինելու, եւ այսպէսով հասաւ իր նպատակին: Եւ դուք ձեր աչքով տեսաք, թէ որպէս քուրդ իշխանի գործակալները, մտան մեր տաճարի սրբաբանի մէջ, հսկում էին գանձանակների վրայ: Հիմա հարցնում եմ, դուք մի պարզ նմանութիւն չէ՞ք տեսնում այս եկեղեցականի եւ կառավարութեան կապալառուի մէջ . . .

Մեր խօսակցութիւնն ընդհատեց պառաւ կախարդի ձայնը, որն իր անբջային դառանցութեանց մէջ խօսում էր զանազան կցկտուր եւ մեզ անհասկանալի խօսքեր: Եւ զարմանալին այն է, որ նա խօսում էր խիստ մաքուր հայերէն լեզուով: Նրա խօսքերի մէջ ստէպ լսելի էր լինում անունս Հռիփսիմէ: «Ես կայրեմ ամբողջ... ասում էր նա, կը խորտակեմ նրա պարիսպները... իմ Հռիփսիմէն այնտեղ տխուր է... ես կազատեմ նրան... մօտ է օրը... տագնապի մեծ օրը... արիւն, հուր եւ փոթորիկը կը մաքրէ այս երկիրը... Հռիփսիմէ, շատ տանջուեցար... ես կը սրբեմ քո արտասուքը» . . .

— Այս պառաւը միշտ խօսում է մի «ասորոցի» եւ այնտեղ պահւած մի «աղջկայ» մասին, ասեցի ես Ասլանին:

— Դա նրա ցնորքն է... պատասխանեց նա. — խելագարները շատ անգամ ունենում են մի երեւակայական ինքնագաղտիար, որը մոռանալ կարող չեն . . .

— Դա խօսում է հայերէն, եւ որքան լաւ է խօսում. ես առաջին անգամ լսում եմ դրա հայերէն խօսելը, մէջ մտաւ Մարօն:

— Բօշաններն ամեն լեզուով խօսում են, ասաց Ասլանը ժպտելով. — երեւի, նա զգում է, որ Հայաստանումն է պառկած . . .

— Բայց այս փոքրիկ վհուկը ի՞նչու լուռ է, ասաց Մարօն, եւ խոնարհւելով համբուրեց Հիւրբիի երեսը:


— Նա խելացի է . . . պատասխանեց Ասլանը,

ապա խօսքը փոխեց. — Գուք աւելի լաւ կանէք, որ այժմ հեռանաք այստեղից. ահա մօտ է արեգակի ծագելը. թող ձեզ չը տեսնեն այստեղ:

Արշարայսը, իրաւ, սկսել էր շառագունել. մենք առանց նկատելու անցուցել էինք ամբողջ գիշերը: Բայց Ասլանի մեզ հեռացնելու պատճառն ոչ այնքան լոյսի ծագելն էր, որքան այն, որ նա վախում էր, չը լինի թէ մենք լսէինք պառաւ կախարդի բերնից մի անզգոյշ խօսք, որը կը մերկացնէր այն գաղտնիքը, թէ ինչու պառաւը իր փոքրիկ Հիւրբիի հետ միշտ անբաժան էին Կարօից եւ նրա ընկերներէից, եւ կամ այն ինչ չամրոցային աղջիկ էր, որ պառաւ կախարդի երեւակայութեան մշտական ցնորքն էր դարձել, որպէս աշխատում էր մեզ հաւատացնել ծածկամիտ Ասլանը . . .

Մենք ընդունեցինք Ասլանի ասածը եւ պատրաստուեցանք գնալու դէպի վանքը:

— Քանի որ այստեղ էք, ասաց նա, — մենք կրկին եւ կրկին անգամ պէտք է տեսնուենք, եւ հարկաւոր է որ տեսնուենք. մենք խօսելու շատ բաներ ունենք . . .



ԱՍԼԱՆԻ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արեգակը արդէն ծագել էր, երբ մենք հասանք փանքի մօտ: Մարօն այնպէս անցաւ ուխտաւորների բանակի միջից, որ ոչ ոք նրան չը ճանաչեց:

Ես այնուհետեւ մի բանի անգամ տեսնուեցայ Ասլանի հետ. նա իր արեղայական կերպարանքով յայտնվում էր ուխտաւորների ամեն շրջաններում: «Այտեղ, ասում էր նա, այս տօնախմբութեան առիթով հաւաքվել են ամեն երկրի հայեր, եւ ես նրանց լաւ ուսումնասիրելու համար փոխեցի կերպարանքս, գիտէի, որ արեղան աւելի մատչելի է նրանց: Այս մարդիկն առանց զգացմունքի, առանց եռանդի չեն. նրանք հասկանում են իրանց գրութեան բոլոր այլանդակութիւնը, բայց դարեւոր հարստահարութիւնների տակ ճնշուելով, մինչ այն աստիճան հոգով եւ մարմնով թուլացած են, որ շատ բնական են գտնում իրանց վիճակի բոլոր դառնութիւնները: Նրանք կարծում են, թէ այլ կերպ լինել կարող

չէր, թէ իրանք ստեղծված են ստրուկներ լինելու համար: Մի ձեռք, մի զօրեղ ձեռք պէտք է, որ դրանց վեր բարձրացնէ ընկած դրութիւնից եւ կանգնեցնէ մարդկային ազատ իրաւունքների վրայ: Այնուհետեւ նա երկար խօսում էր ինձ հետ զանազան առարկաների վրայ, ես մինչեւ այսօր չեմ մոռացել, եւ կարող եմ բոլորը բառաւ բառ գրել: Նա ասում էր.

«Լինում է, այո՛, որ մի ամբողջ ժողովուրդինքն է կանգնում ոտքի վրայ, ինքն առանց օտարի ձեռնտութեան թօթափում է իր վզից ստրկութեան լուծը: Բայց դա լինում է այն ժամանակ, երբ նա բաւականին հասկացել է, թէ ինչ բան է ազատութիւնը: Եթէ մեր ժողովրդի առաջնորդող մասը նրան այն շաւղի մէջ գրած լինէր, նրան այնպիսի ուղղութիւն տուած լինէր, որ նա վերջապէս հասկանար, թէ որքան վատ է օտարի կոպիտ ուժի տակ ճնշուած դրութիւնը, թէ որքան լաւ է իր սեպհական հողի վրայ իր քրտինքով ազատ ապրելը.— Դէ՛ արդէ՛ շատ հեշտ առաջ կերթար . . .

— «Բայց ո՞վքեր են մեր ժողովրդի առաջնորդող անձինքը? — Մենք ազնուապետական դաս չունենք, մենք ունենք վաճառականներ եւ եկեղեցականներ: Վաճառականները, այլ խօսքով, դրամատէրները, դուք գիտէք, ինչ տեսակ հրէշներ են. մնում են եկեղեցականները, որոնց ձեռքումն է ժողովրդի կրթութիւնը եւ նրա բարոյական եւ մտաւոր դաստիարակութիւնը: Եկեղեցականը, որ ազգի մէջ եւ լինէր նա, միշտ

ընդդէմ է մարդկային անհատական ազատութեան Եկեղեցականը միշտ ընդդէմ է ազգայնութեան գաղափարին. նա ճանաչում է ազգը միայն կրօնքի անունով. նրա «հօտի» մէջ «խուժդուժ, սկիւթացի եւ յոյն» — բոլորը մէկ են: Եկեղեցականը միշտ ընդդէմ է աշխարհային բարեկեցութեան. նա չէ կարող համբերել, որ մարդը ճանաչէր իր հայրենիքը, այսինքն երկրի այս կամ այն կտորի վրայ հիմնէր իր կեանքի եւ ապրուստի գոյութիւնը: Եկեղեցականը հերքում է ներկայ աշխարհը. նրա հայրենիքը երկինքն է:

«Ուրեմն մի ժողովուրդ, որ յանձնուած էր եկեղեցականի կրթութեանը, կարող է մտածել այս բաները, — թէ ինքը մի ազգի որդի է, ունի իր առանձնութիւնները, իր պատմութիւնը եւ իր աւանդութիւնները, որոնք իր համար նոյնքան սուրբ են, որքան սուրբ է ազգային ինքնուրոյնութիւնը: Թէ իր նախնիքը թողել են իրան մի կտոր հող, դա իր նուիրական ժառանգութիւնն է. այն հողը պէտք է մշակէ եւ նրանով քաղցր ու հանգիստ վարէ իր կեանքը:

«Ես կը յայտնեմ քեզ միմիայն Վանայ նահանգի, կամ հին անունով Վասպուրականի, վիճակագրութիւնը եւ կը տեսնես, թէ ժողովրդի հետ համեմատելով, որքան մեծ տեղ է բռնում եկեղեցական տարրը իր վանքերով եւ մենաստաններով: Նա հանեց իր ծոցից մի փոքրիկ յիշողութեան գրքոյկ եւ սկսեց կարդալ.

«Վանայ նահանգն ունի 2½ գաւառ, որոնք շրջապատում են Բղնունեաց ծովակի չորս կողմը:

Յիշեալ գաւառների մէջ բազմաթիւ հայաբնակ եւ խառնաբնակ գիւղերից այժմ շէն մնացած են 1652-ը. նրանց մէջ բնակվում են 43,750 հայ ընտանիք, որոնք բաղկացած են մօտ 350,000 հոգուց: Բացի գիւղաբնակներից, Վան քաղաքն ունի 20,640 հոգի հայ բնակիչ. կը նշանակէ՝ ամբողջ Վանայ նահանգն ունի 370,640 հոգի հայ բնակիչներ: Յիշեալ գիւղօրայքում եւ Վան քաղաքում կան 382 եկեղեցիներ, որոնք ունեն 270 քահանայ. կը նշանակէ՝ շատ գիւղեր զուրկ են եկեղեցուց, եւ շատ եկեղեցիներ քահանայ չունեն. բայց կան այնպիսի գիւղեր, որոնք մի եկեղեցու փոխարէն ունեն մի քանիսը: Դրա հակառակ, համեմատաբար շատ խոշոր բազմութիւն են կազմում կուսակրօն արեղաները, վանքերը եւ մենաստանները:— Վանայ նահանգն ունի 87 վանքեր եւ մենաստաններ, որոնց մէջ բնակվում են 1500-ի չափ եպիսկոպոսներ, վարդապետներ, ճգնաւոր եւ մենակեաց արեղաներ:— Այս բոլոր կրօնական հիմնարկութիւնների հանդէպ ամբողջ նահանգում չը կայ ոչ մէկ ժողովրդական դպրոց: Վան, արդարեւ, մի քանի վանքերի խուցերում փոքրիկ վարժարաններ, բայց նրանք պատրաստում են տիրացուներ եւ կրօնաւորներ միայն, իսկ ժողովրդի հազարից մէկը անգամ գրագէտ չէ: :

Երեւակայեցէք, 87 վանքեր եւ մենաստաններ ու 1500-ի չափ կուսակրօն արեղաներ մի նահանգում,— դա մեծ քանակութիւն է: Բայց առաջ աւելի բազմաթիւ են եղել վանքերը. նրանց

շատերի աւերակներն են մնում այժմ, եւ շատերը բոլորովին անհետացել են: Արեղաների մասին նոյնպէս խօսում են, թէ այժմ նրանց թիւը կիսով չափ պակասել է, բայց այդ մնացածները դարձեալ շատ են: Եւ այս ծոյլ, ցնորամիտ «երկնաքաղաքացիների» ազդեցութեանն ենք պարտական, որ մեր ժողովուրդն այսօր գտնւում է իր խորին բթամտութեան մէջ»:

«Բայց եղել են ժամանակներ եւ այն ժամանակները շատ հին են, երբ մեր եկեղեցականներն այնպէս չէին, որպէս այժմ: Նրանք դրանց նման անբնական կեանք չէին վարում. նրանք գերդաստանի հայրեր էին եւ ընտանիքների մէջ էին բնակւում: Այս պատճառով, նրանք գիտէին, թէ ինչ է կեանքը, ինչ է աշխարհը եւ ինչպէս պէտք է հոգ տանել նրա համար, որ մարդու ապրուստը հանգիստ ու բախտաւոր լինի: Գերդաստանի հայր լինելով, մի եւ նոյն ժամանակ նրանք ժողովրդի հայրն էին. ծնողական սիրոյ զգացմունքը առաջ էր բերել նրանց մէջ եւ խիստ ջերմ սէր դէպի ամբոխը, եւ բոլոր սրտով նուիրել էին իրանց անձը ժողովրդի բարօրութեանը: Իսկ այժմ չէ կարելի գտնել մի մարդ, որ այնպէս վայրենի, անզգայ եւ անտարբեր լինէր դէպի հասարակաց բարին, ինչպէս մեր կուսակրօն եկեղեցականը»:

«Վանքն այն ժամանակ, այժմեան պէս, աշխարհային գործերից փախած եւ իրան երեւակայական հոգեւոր ցնորքների նուիրած, ծոյլերի բնակարան չէր: Վանքն այն ժամանակ, այժմ-

մեան պէս շնորհավաճառութեան, կախարդութեան, եւ տեսակ տեսակ մոլութիւններէ հանդիսարան չէր:—Վանքն այն ժամանակ հոգեւոր եւ մարմնաւոր դպրոց էր, ուր անխոնջ միաբանութիւնը պարապած էր մանկտու կրթութիւնով, գրքերի թարգմանութիւններով, ինքնուրոյն հեղինակութիւններով եւ գիտութիւնն ու լոյսը ժողովրդի մէջ տարածելով:

«Եկեղեցականութիւնն այն ժամանակ, որպէս կրօնի, եկեղեցու եւ կրթութեան, նոյնպէս եւ հայրենիքի ու պետութեան՝ հզօր պաշտպանն էր:—Եթէ լինում էին մեր թագաւորների ու նախարարների մէջ խռովութիւններ, եկեղեցականն էր նրանց մէջ հաշտեցուցիչ տարրը: Եթէ լինում էին թշնամու հետ պատերազմներ, եկեղեցականն էր ոգեւորում ժողովրդին կռուելու, բաջութեամբ կռուելու եւ պաշտպանելու իր հայրենիքը: Եթէ որ եւ իցէ թագաւորի հետ պէտք էր խաղաղութեան դաշն կապել, եկեղեցականն էր դեսպանախօսութեան գնում: Եթէ հայրենիքին վտանգ էր սպառնում եւ ուրիշ թագաւորից պէտք էր օգնութիւն խնդրել, եկեղեցականն էր միջնորդ դառնում:—Մի խօսքով բարձր հոգեւոր կառավարութիւնը խիստ սերտ կերպով կապված էր թագաւորի իշխանութեան հետ. եւ երկու ներդաշնակ ուժեր, միացած մի ամբողջութեան մէջ, լծորդաբար առաջ էին տանում պետութեան կառավարութիւնը: Եւ այն ժամանակ Հայաստանը երջանիկ էր. . .

«Այս ամենը, ինչ որ գործում էր եկեղեցա-

կանութիւնը, բոլորովին ընդդէմ էր նրա կրօնական բնաւորութեանը: Բայց մեր եկեղեցականութիւնը այն ժամանակ մի նշանաւոր բացառութիւն էր կազմում ամբողջ բրիտանական աշխարհում. — նա կատարեալ փողոցական էր. նա միացնում էր իր մէջ հոգեւոր եւ նիւթական կեանքը — իրական աշխարհը եւ երկինքը: Իսկ այժմ . . .

«Այժմ եկեղեցականը մեզ համար մի մեծ աւած եւ անպիտանացած տարր է. նորից կեանք տալ նրան, դա շատ ուշ կը լինէր. այդ պատճառով մենք ստիպուած ենք դիմել ուրիշ միջոցների, որպէս զի մեր ժողովուրդը վերականգնենք, որի մէջ դեռ բոլորովին հանգած չեն կենսական ուժերը: — Այո, հանգած չեն, բայց մնացել են նրանց անզօր կայծերը միայն, որոնց պէտք է շունչ տալ, բորբոքել, մինչեւ նրանք բոցավառվեն. . . Իսկ դա լինում է տակու՛ն եւ հիմնաւոր կրթութեամբ, որպէս զի, ժողովուրդն ինքը հասկանայ, թէ որքան լաւ է ազատութիւնը, որքան հանգիստ եւ ուրախ է լինում մարդու կեանքը, երբ նա ազատ է» . . .

«Բայց մեր ընկեր Կարօն բոլորովին տարբեր մտածութիւն ունի. նա բնութեան հարազատ եւ ազատ որդին է: Նա ասում է՝ ազատութիւնը մարդու ընդարդս բնազդումներից մէկն է. նա ստեղծված եւ ծնված է մարդու հետ: Նա ասում է՝ բնութեան մէջ ամեն մի առարկայ, որոնց մէջ կայ կեանքի եւ անելութեան դորութիւն, պահանջում են ազատ լինել, ազատ զար-

գանալ: Եւ եթէ մարդը տանում է ստրկութիւնը, դա ակամայ է. հեռացրու նրանից ճնշող ուժը, կը տեսնես, նա ազատ էակ է: Շատ հարկաւոր չէ, ասում է Կարօն, որ մարդը հասկանայ թէ ինչ բան է ազատութիւնը, որպէս զի ձգտումն ունենայ դէպի նա: Որպէս կարող է մարդը չը գիտենալ, թէ ինչ նիւթ է օգը, կամ որպիսի քիմիական տարերբից բաղադրված է նա եւ կամ ինչ սնունդ է տալիս իր մարմնին,—բաւական է, որ նա գիտէ, երբ օգ չը շնչէ, կը մեռնի: Ազատութիւնը, ասում է նա, մարդու հասարակական կեանքի մթնոլորտն է, որի մէջ զարգանում է նա, կատարելագործվում է եւ հասնում է իր մարդկային բարձր նշանակութեանը: Որքան ճշնշուած, որքան սահմանափակված լինի այս մթնոլորտը, այնքան մարդը անզօր, ծոյլ եւ բթամիտ կը մնայ:—Ազատութիւնը մարդ սովորում է ազատութեան մէջ:

«Ես մասամբ համաձայն եմ Կարօի հետ, առաջ տարաւ Աւլանը,—այո՛, ազատութեանը մարդ ընտելանում է ազատութեան մէջ: Բայց գլխաւոր բանն այն է, թէ ինչ միջոցներով պէտք է տալ մի ճնշուած ժողովրդին ազատութիւն, երբ որ հազարաւոր զօրեղ ձեռքեր արգելք են լինում: Եւ ո՞վ պէտք է առաջնորդէ ժողովրդին դէպի ազատութիւն:

«Մեր դրամատէրներն, որպէս դու տեսար, սկսած առաջին «ամիրայից» մինչեւ վերջին բեռի Պետրոսը» աւազակներ են, ապրում են ժողովրդի արիւնով եւ քրտինքով: Մեր եկեղեցականները, սկսած պատրիարքից մինչեւ վերջին Կա-

բապետ Հայր սուրբը, նոյնպէս աւագակներ են։ Պատրիարքը իր առաքելական աթոռը գնում է Սուլթանի բարձրագոյն դռնից կաշառքով։ Իսկ Կարապետ Հայր սուրբն իր վանքի վանահայրութիւնը գնում է քուրդ իշխանից նոյնպէս կաշառքով։— Երկուսն էլ պէտք է կողոպտեն, կեղեքեն ժողովուրդը, որ կարողանան իրանց բռնապետական դիրքը պահպանել։

«Մեզ պակաս է եւ հասարակական գլխաւոր զօրութիւնը, այն է թարմ եւ նորահաս երիտասարդները, գրանք կարող էին դպրոցների, գրականութեան եւ լրագրութեան միջոցով զարթոցնել եւ նախապատրաստել ժողովրդին։ Բայց դժբախտաբար մենք երիտասարդութիւն չունենք, մենք ունենք Կ. Պոլսում մի քանի տրգէտ եւ ամեն կրթութիւնից զուրկ «զէվզէկներ» միայն, որոնք ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ շահակրատ տիրացուներ։ Եւ ո՞վ է մտում։— Մտում են մի քանի Կարօններ, արդարեւ, ազնիւ եւ գործող անձինք, բայց մի ձեռքը ծափ կը զարկէ . . .

«Սյսուամենայնիւ, մենք բոլորովին յուսահատ չենք, մենք ունենք մի, թէեւ անմշակ, բայց մեծ զօրութիւն — ա՜յն է, — դա բաւական է . . .

«Քեզ ցոյց տուած վիճակագրական թուանշաններից յայտնի է, թէեւ Հայ ժողովուրդը Վանայ նահանգում թշնամու սրից, սովից, կրակից եւ բարբարոսական հարստահարութիւններից այժմ մեծ մասամբ սպառվել է, այսուամենայնիւ 370,640 հոգին դարձեալ մի խոշոր թուա-

նշան է: Մի այսքան բազմութիւն դեռ ամփոփ-  
կերպով մնացել է հայրենական հողի վրայ: Թո-  
ղեալ այդ, այս նահանգում կան եւ ուրիշ ազ-  
գութիւններ, որոնք մեզ վիճակակից են — Նրէա-  
ների, ասորիների, բոջաների եւ եզիդիների դրու-  
թիւնն աւելի վատ է քան թէ հայերինը: Այս  
թշուառականները նոյնպէս մարդիկ են, եւ մեզ  
նման մարդիկ, նրանց էլ պէտք է ազատու-  
թիւնը: Նրանք մեր բարի դրացիներն եւ լաւ կե-  
նակիցներն են, նրանք պատրաստ են մեզ հետ  
գործելու . . .

«Հաշուելով ամբողջ Վանայ նահանգի քուրդ-  
թուրք եւ այլ մահաբազան ազգաբնակչութիւն-  
ները, բոլորը հայերի կէս մասը հազիւ են կազ-  
մում. բայց նրանք տիրում են ամենի վրայ, որով-  
հետեւ զէնք ունեն, որովհետեւ կռպիտ եւ վայ-  
րենի ուժ ունեն: Այս երկրներն անունով միայն  
պատկանում են Տաճկաստանին, բայց իսկապէս  
տիրում են քրդերը: Այսպիսի բարբարոս ազգերի  
իշխանութեան ներքոյ, որոնք ամենեւին կրթու-  
թեան ընդունակ չեն, անհնար է մի ուրիշ աւելի  
ընդունակ ազգութեան զարգանալ եւ մարդ-  
կային առաջադիմութեան ձգտել: Ահա գլխա-  
ւոր պատճառը, թէ ի՞նչու այստեղ հայերն այս-  
քան յետ են մնացել, եւ այսպէս խաւարի մէջ  
են ապրում: Կրկնում եմ, հայը ընդունակ է կրթ-  
ութեան, որովհետեւ նա քրիստոնեայ է, որով-  
հետեւ նա ունի հարուստ լեզու եւ ճոխ, բազ-  
մակողմանի գրականութիւն. — նա ունի պատ-  
մական անցեալ: Մի քրէական յանցանք է դա

մարդկութեան դէմ, թողնել մի այսպիսի ազգութիւն, որ բարոյապէս, մտաւորապէս եւ ֆիզիքապէս ոչնչանայ վայրենի բրդի ու թուրքի լծի տակ: Հայը եւ ասորին կարող են արեւելքում գիտութեան եւ կրօնի առաքեալներ լինել, ինչպէս եղել են առաջ, բայց նախ պէտք է նրանց ազատութիւն տալ:

«Բայց երբէք օտարը մարդու համար չէ մը տածում, քանի որ նա ինքն իր մասին անհոգ է: Ռամկական առաժն ասում է՝ «մինչեւ տղան լաց չէ լինում, մայրը ծիծ չէ տալիս»: Բայց մենք այդ էլ փորձեցինք. շատ լաց եղանք, շատ աղաղակեցինք, բայց մեր ձայնը լսող չեղաւ. . . Որովհետեւ ամբողջ աշխարհն իր փորի եւ քսակի համար է մտածում. . . Որպէս Կ. Պօլսի «ամիրայ» սեղանաւորը, իր անձնական շահերի պատճառով, միշտ խնկարկում է մի փիթած եւ անկարգ կառավարութեան եւ միշտ նրա տեւողականութեան համար է աղօթում,—այնպէս էլ կան ամբողջ քրիստոնեայ պետութիւններ, որոնք թուրքի հետ առեւտրական յարաբերութիւններ ունեն, եւ իրանց մասնաւոր շահերի պատճառով, թողնում են, որ զանազան խեղճ ազգութիւններ թուրքի բռնակալութեան տակ ճնշուեն:—Նրանք վաճառականներ են, վաճառականի սրտից միշտ հեռու է մարդասիրական զգացմունքը. . .

«Օտարի օգնութիւնից մեզ շահ չը կայ: Դժբախտ է այն ազգը եւ միշտ դժբախտ կը մընայ, որ օտարի օգնութեանը կարօտ կը լինի: Այ դը իր հօր հոգու համար մեզ չի օգնիլ, նա

պէտք է տասը բան առնէ մեզանից, որ մի բան տայ, «Ողորմութիւն խնդրողի երեսը միշտ սեւ կը լինի եւ քսակը դատարկ»: Մարդ պէտք է իր սեպհական աշխատութեամբ եւ իր ուժովը ռաբի կանգնէ: Օտարի օգնութիւնը նման է մի նեցուկի, որը հէնց որ յետ քաշեցիր, կը տեսնես, դարձեալ ցած կընկնի նրա վրայ յենված առարկան . . .

«Մեր գլխաւոր օգնականն է մեր երկրի բնութիւնը — նրա տեղագրական դիրքը, Վան-Տոսպը իր անմատչելի լեռներով, իր անդնդախոր ձորերով, եւ իր նեղ փապարներով մի հսկայական ամրոց է. այստեղ շատ դժուարութեամբ կարող է մուտք գործել օտար եւ ինքնակոչ հիւրը: Այստեղ շատ անգամ հռոմայեցիք, յոյները, պարսիկները, մարերը եւ արաբացիք կորցրել են իրանց լէգէօնները: Վանայ նահանգը բնութիւնից պատրաստված է հայերի համար աշխարհապաշտան լինելու: Նա իր չորեք կողմում ունի այնպիսի գաւառներ, որոնք մինչեւ այսօր շատ խիտ բնակեցրած են հայերով: Հիւսիսից բռնած է Արղրուսի ընդարձակ նահանգը Վարսի, Բայազէդի եւ Մագուի գաւառներով: Հարաւորից՝ Ռիարէքիի նահանգը Սասնոյ եւ Մոգաց գաւառներով: Արեւմուտքից տարածվում է ընդարձակ Տարօնը՝ Բաղէշի եւ Մուշի գաւառներով: Արեւելքից՝ Խոյի, Սալմաստի Ուրմիայի եւ Ռալանդուզի գաւառները:

«Բացի յիշեալ նահանգներից եւ գաւառներից, որոնք շրջապատում են Վան-Տոսպը, մենք

Հարաւ-արեւելեան կողմում ունենք մի լաւ գրացի—լեւնային Զօլամէրիկը, որ իր վայրենի գրութեամբ կարող է Հայաստանի Վաղիստանը համարվել: Այս երկիրը, որ մեր հին Տմորիք կամ Վորդիք գաւառն է, այժմ բնակեցրած է ասորիներէ ջօլօ կոչված ցեղով, որոնք նեստորական քրիստոնէաներ են: Զօլօն մի քաջազնական ժողովուրդ է, որ սկսեալ անյիշելի ժամանակներէց, Զօլամէրիկի լեւներում պահպանել է իր անկախութիւնը: Քրդի եւ թուրքի իշխանութիւնը մինչեւ այսօր այնտեղ մուտք չէ գործել: Բայց ի՞նչ է պատճառը: Զօլօները թւով այստեղի հայերէց շատ փոքր են. նրանց թիւը հազիւ թէ 50 հազարի է հասնում,—կը նշանակէ, Վանայ նահանգի հայ ազգաբնակչութեան ութերորդ մասը:—Ուրեմն ի՞նչ է պատճառը, որ նրանք ազատ են:


«Զօլօները բոլորը զինուորված մարդիկ են, նրանց կանայքն, աղջիկներն մինչեւ անգամ զէնք են կրում: Նրանք հասկացել են, թէ առանց սրի մեր դարում չէ կարելի գլուխ պահել: Հրեշտակները միայն զէնք չեն կրում, որովհետեւ պաշտպանելու ոչինչ չունեն. բայց նրանք էլ հարկաւորված միջոցում զինուորվում են . . . . .»

Զօլօները կառավարվում են իրանց պատրիարգի իշխանութեան ներքոյ, որ կոչվում է Մար-Շիմոն. դա ժողովրդի հոգեւոր եւ մարմնաւոր իշխանն է: Այժմեան Մար-Շիմոնը մի քաջ երիտասարդ է, որ միացրել է իր ձեռքում Քրիստոսի խաչը եւ ազատութեան սուրբ: Բոլոր ժողո-

վուրդը հպատակում է նրան որդիական հնա-  
զանգութեամբ: Մար-Շիմոնի օրինակը մի բացա-  
ռութիւն է ամբողջ քրիստոնէական աշխար-  
հում, որ հոգեւոր պատրիարքը մի եւ նոյն ժամա-  
նակ հասարակ զինուոր է, հայրենիքի պաշտպան  
է: Հռօմի պապը նոյնպէս պահում է զինուոր-  
ներ, բայց պապի իշխանութիւնը մի կատարե-  
լագործուած խաբէութիւն է: Մար-Շիմոնը զի-  
նուոր է, զինուորի բոլոր ազնիւ յատկութիւն-  
ներով:

«Մար-Շիմոնի երկիրը մեծ մասամբ մաքրած է  
օտարազգիներից. այնտեղ կան փոքր թւով հայեր  
եւ մի քանի քրդի ցեղեր, որոնք բոլորն էլ հպա-  
տակում են պատրիարգի իշխանութեանը: Մար-  
Շիմոնի երկիրը մի փակված Չինաստան է, ուր  
օտարի ոտքը մուտք չէ գործում: Բայց Կարօն  
այժմ այնտեղ է. նա գնացած է պատրիարգի  
մօտ և ասէ՛ք զայն զհայր տնօրինութիւններ  
անելու, յուսով եմ, որ նրա տեսութիւնը յաջող  
վախճան կունենայ . . .

«Զօլօնների օրինակը մի մեծ խրատ է մեզ  
հայերիս համար, թէ մենք էլ կարող ենք մեր  
լեռներում ազատ եւ հանգիստ ապրել, եթէ մեր  
ազատութիւնը կամենայինք պաշտպանել մեր  
սրով եւ արիւնով: Բայց մենք ունենք այնպիսի  
հոգեւորականութիւն, ինչպէս Մար-Շիմոնը. մենք  
ուրեք այնպիսի ժողովուրդ ինչպէս Զօլօն: Հայր  
սրից այնպէս է վախենում, ինչպէս դեւից . . .



## ԽԱ.

### Ս Ի Ր Ո Յ Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ Ը

Վանքի տօնախմբութիւնը արդէն վերջացած էր: Ուխտաւորները սկսել էին վերադառնալ դէպի իրանց երկրները: Ծերունի որսորդի ընտանիքը նոյնպէս պատրաստուամ էր առաւօտեան թողնել վանքը: Բայց իմ մէջ առաջ էր եկել մի զարմանալի փոփոխութիւն. ես մտացել էի Մարօին, մտացել էի Սօնային, մտացել էի մօրս եւ քոյրերիս, որոնք այնքան սիրում էին ինձ, եւ աշխատում էին ինձ իրանց հետ մեր տունը տանել: — Ես սիրահարվել էի Ասլանի վրայ: Կարծես թէ, այդ ոգելից երիտասարդը կախարդած լինէր ինձ. ես չէի ուզում քաժանվել նրանից: Թէեւ Ասլանի խօսքերն ինձ շատ մտօթն էին, թէեւ ես դեռ պարզ չէի հասկացել, թէ ինչ նպատակի ձգտում է նա, եւ ինչ են ուզում անել նրա մտերիմ ընկերներն, այսուամենայնիւ, մտածում էի, թէ լաւ է նրանց հետ լինել, նրանց հետ գործել, — նրանք ազնիւ մարդիկ են: Այս պատճառով, երբ Ասլանը յայտ-

նեց, թէ «մի գործի» համար միտք ունի Վանքազաբբ գնալ, ես աղաչեցի, որ ինձ էլ իր հետ տանէ: Նա չը յօժարվեցաւ, ասաց, թէ դու եկել ես ծերունի որսորդի ընտանիքի հետ, պէտք չէ նրանց անտէր թողնել:—Մարօն մեզ մօտ էր, նա լսեց այս խօսքերը եւ իրան յատուկ արհամարհական ոճով պատասխանեց.—'Թէ ես շատ հարկաւոր չեմ նրանց, թէ նրանք առանց ինձ էլ կարող են տուն վերադառնալ, թէ որսորդի ընտանիքին ոչ ոք չի համարձակվի մօտենալ: Ա՞յլ որ չէր ճանաչում Մարօին, կարող էր վշտանալ այս խօսքերից, բայց ես գիտէի նրա սիրտը, թէ որքան բարի էր նա, այս պատճառով նրա խօսքերը շարժեցին իմ ժպիտը միայն:

Երեկոյ էր: Այս խօսակցութիւնն անց էր կենում մեր մէջ մի քլուրի վրայ, որ բաւականին հեռու էր վանքից. այնտեղ գնացել էինք Մարօի հետ «տիրամօր ծաղիկներ» \*) քաղելու, ուր եւ հանդիպեցանք Ասլանին: Նա դարձեալ կերպարանափոխ էր եղած: Այժմ նմանում էր մի վանեցի վաճառականի:

Մարօն եւս իր կողմից խնդրեց Ասլանից, որ ինձ վեր առնէ իր հետ, ասելով, թէ ես ամենեւին քաղաք չէի տեսել, հարկաւոր էր ինձ քաղաք տեսնել, եւ մենք երկուսս էլ երկար թա-

---

\*) Դա մի տեսակ դեղնագոյն ծաղիկ է մանրիկ և ցամաք թերթիկներով, որոնցմով լի է վանքի շրջակայքը. նա երբէք չէ խամրում, այս պատճառով և կոչվում է «անթառամ ծաղիկ». նուիրված է Աստուածամօրը, ևրկնքի անթառամ ծաղկին:

խանձեղուց յետոյ, վերջապէս նրան ընդունել տուինք:

— Ես դուրս եմ գալու հէնց այսօր, արեւը մանելէն յետոյ, ասաց նա.— մնում է մէկ ու կէս ժամ:

Ես խնդրեցի մի փոքր սպասել, մինչեւ ես գնամ մօրս եւ քոյրերիս հետ տեսնուեմ:— Սպասել կարող չեմ, ասաց նա,— վաղը չէ, միւս օրը առաւօտեան ես պէտք է վանում գտնուեմ:

— Ուրեմն, դու գիշերները չի՛ պիտի հանգրտանաս, որ կարողանաս հասնել, հարցրուց Մարօն:

— Ոչ, պատասխանեց նա,— որովհետեւ երեք օրուայ ճանապարհ է:

— Ուրեմն ես չի՛ պիտի կարողանամ տեսնել մօրս:

Նա մօտեցաւ ինձ եւ հազիւ լսելի ձայնով ասաց.

— «Ով որ կամենում է մեր ետեւից գալ, պէտք է թողնէ իր մօրը, հօրը, քոյրերին եւ եղբայրներին:— Հասկացա՞ր?»

Այնուհետեւ Ասլանը յայտնեց, թէ եւ ընդունում է ինձ իր հետ վան տանել, բայց չէ կարող միասին գուրս գալ, այլ կը սպասէ ինձ առաջին իջեւանում, որ այնքան հեռու չէր, եւ պատուիրեց, գնալ ձի նստել եւ անմիջապէս ճանապարհ ընկնել: Այնուհետեւ նա խիստ մտերմութեամբ գրկեց Մարօին եւ ինձ, յետոյ բաժանվեցաւ: Մենք շտապեցինք դէպի մեր վրանը:

Ճանապարհին Մարօն ինձ ասաց.

— Գնահ, Պարհատ, լու ես անուամ, որ գնում  
ես, Վան քաղաքը կը տեսնես, բայց Սոնային չը  
մտնանաս . . .

Այս խօսքը ինձ կտակածանքի մէջ գցեց, եւ  
ես հարցրի, թէ ինչ մտքով էր ասում այդ . . .

— Սոնան սիրում է բեզ, Պարհատ, դու էլ  
նրան խօսք ես տուել . . . տղամարդը պէտք է  
իր խօսքը կատարէ . . .

— Այդ դու որտեղից գիտես:

— Ես բոլորը գիտեմ . . . ես գիտեմ, թէ դուք  
ինչպէս էք անցկացրել ձեր օրերը այն ժամանակ,  
երբ դու աշակերտ էիր նրա հօր տանը . . . ես  
ամենը գիտեմ . . .

Ես բոլորովին շիտթվեցայ:

— Ո՞վ ասաց բեզ:

— Սոնան ինքը պատմեց ինձ: Նա այնպէս  
ցաւելով էր պատմում, որ ես չը կարողացայ իմ  
արտասուքը պահել:

Ես ոչինչ չը պատասխանեցի. նա շարունա-  
կեց խօսել:

— Իու գիտես, Պարհատ, Սոնան որբան ան-  
բախտ է. նրա մխիթարութիւնն այժմ դու ես.  
բայց եթէ դու էլ խաբես նրան, նա էլ չի ապրի:

Մարօի ամեն մի բառը ինձ վրայ կայծակի  
ներգործութիւն էր ունենում: Ես չը գիտէի ինչ  
պատասխանեմ, նրա ասածները բոլորը ճշմարիտ  
էին. ես Սոնային խօսք էի տուել . . .

— Իու Սոնային խօսք ես տուել, կրկնեց եւ  
Մարօն. — լու չէ, երբ տղամարդն իր խօսքը  
չէ կատարում . . .

— Բայց եթէ աղջիկը չէ՛ կատարում. . .

— Նոյնպէս լաւ չէ:

Ես նկատեցի, Մարօի ձայնը զգալի կերպով գողում էր վերջին պատասխանը արտասանելու միջոցին:

Ես ասեցի.

— Դու էլ ինձ խօսք ես տուել. . .

— Տուել եմ, ճշմարիտ է, բայց ես չեմ օգտւում ուրիշի սիրոյ փշրանքովը կշտանալ. . .

Ես թէեւ հասկացայ, թէ ինչ ասաց նա, բայց դարձեալ հարցրի.

— Ի՞նչ է նշանակում այդ:

Նա իսկոյն չը պատասխանեց, բայց ես նկատեցի, որ նրա աչքերը վառւում էին բարկութեան բոցով. եւ նա վերջապէս պատասխանեց բոլորովին կատաղած կերպով.

— Ես գիտէի, որ դու խիղճ չունես, բայց հիմա տեսնում եմ, որ դու խելք էլ չունես:— Ես չեմ կարող սիրել այն մարդուն, որ խաբել գիտէ. . .

— Ուրեմն մեր մէջ ամեն ինչ վերջացած է:

— Հէնց այն բոպէից, երբ «Վաթնաղբիւրի» ձորում, Սօնան ըստ մօտ նստած, իր անբախտութիւնն էր պատմում. . .

Մարօի խօսքերն որքան եւ վիրաւորական լինէին, որքան եւ կծու լինէին, բայց նրանք ուղիղ էին: Ես զգում էի իմ մեղքը. ոչ բարկանալու եւ ոչ ներողութիւն խնդրելու իրաւունք չունէի. . .

Առժամանակեայ լռութիւնից յետոյ նա հարցրուց.

— Եթէ դու ուզում ես, որ մենք դարձեալ բարեկամներ մնանք,—պէտք է սիրես Սօնային:

— Ես ուզում եմ, որ մենք մնանք այնպէս, ինչպէս էինք առաջ. . .

— Դա անցաւ:— Պատասխան տուր, ինչ բանի համար հարցնում եմ քեզանից:— Կը սիրես Սօնային, թէ ոչ:

— Իմ խօսքը հէնց այն է. . .

Նա կանգնեց կէս ճանապարհի վրայ. ես նշմարեցի, նա ամբողջ մարմնով դողում էր, եւ գունատված դէմքի վրայ նկարված էր վայրենի կատաղութիւն:

— Այստեղ մենք բաժանվում ենք, ասաց նա աշխատելով գալել իր վրդովմունքը:— Դու այլ եւս չես կարող ոտք կոխել որսորդի վրանը: Սպասիր այստեղ. ես կը գնամ, կուղարկեմ քո ձին եւ զէնքերը, ուր որ ուզում ես, գնա:

— Աւրեմն դու արտաքսում ես ինձ:

— Ինչպէս կուզես, այնպէս հասկացիր. . .

— Անգո՛ւթ. . .

Նա շուռ տուեց երեսը, որ ես չը տեսնեմ եւ շարունակեց շտապով գնալ դէպի ուխտաւորների բանակը: Որքան էլ խռովված լինէի ես, դարձեալ չէր կարելի չը նկատել նրա աչքերում արտասուքի այն կաթիլները, որոնք դուրս ցայտեցին հրեղէն գնդակների նման:

Մինչեւ այսօր եւ գուցէ յաւիտեան, չեմ կարող մոռանալ այն վշտահար դէմքը իր արդար-վրէժխնդրական զարհուրանքով. . .

Ես բոլորովին սառեցայ, մնացի քարէ պր-

ձանի նման կանգնած: Աչքերիս առջեւը մըթ-  
նեց, ոտքերս դողացին, եւ անշունչ դիակի նման  
գլորվեցայ գեաին. . .

Մութը բոլորովին պատել էր, երբ յուշի  
եկայ: Ո՛րքան մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ  
գլուխս Մարօի գրկումը գտայ: Նա համբուրեց  
իմ ճակատը ասելով.

— Դու կը ներես ինձ, Յարհատ, ես քո սիրտը  
կտորեցի. . .

Նա սկսեց դառը կերպով հեկեկալ:

— Քո վէրքը վտանգաւոր չէ, Յարհատ, ես  
լուացի նրան, փաթաթեցի, արիւնը բոլորովին  
դադարել է: Այժմ դու լաւ ես:

Եւ իրաւ, ես զգացի, որ ամբողջ մարմնով  
շողախալած եմ արեան մէջ: Իսկոյն հասկացայ,  
որ վայր ընկնելու միջոցին գլուխս դիպցրել էի  
քարին, եւ Մարօն այդ տեսնելով, յետ էր գար-  
ձել ինձ օգնելու համար:

— Ես պատճառ եղայ. . . ասաց Մարօն, — ես  
կը սիրեմ, մի՛շտ կը սիրեմ քեզ: — Մի նախատիր  
ինձ, Յարհատ:

Եթէ մեռած եւս լինէի, այս խօսքերը կա-  
րող էին կենդանացնել ինձ: Բայց արեան չափա-  
զանց հոսումը բաւականին սպառել էր իմ ու-  
ժերը: Ես, կարծես, երազի մէջ լսում էի նրա  
խօսքերը, կարծես, երազի մէջ զգում էի նրա  
ջերմ շրթունքների հպաւորութիւնը, որ ստէպ  
ստէպ սեղմվում էին իմ երեսի վրայ. . .

Մին էլ զգացի՝ մի հսկայական ձեռք վեր  
բարձրացրուց ինձ գետնից եւ ծտի նման գցեց

ուսին, եւ ինձ լսելի եղան Մըհէի խօսքերը.

— Սատանան տանի. . . մի պատիկ ծւատվելուց ընկած է գետին, կը թրթրփայ. . . չի էլ ամաչում. . . արիւնից սիրտը կը մարի. . .

Ես արթնացայ միւս անգամ, երբ գիշերից բաւական անցել էր: Ծերունի որսորդի վրանի մէջ աղօտ լուսով վառվում էր իւղն սպառված լապտերը: Մարօն միայնակ նստած էր իմ մօտ. վրանում բացի մեզանից ոչ ոք չը կար. միւսները քնած էին դրօսումը: Մարօի առաջին հարցմունքն եղաւ, թէ ի՞նչպէս եմ զգում ինձ: Ես պատասխանեցի, թէ լաւ եմ, միայն շատ ցաւում եմ, որ յետ մնացի Ասլանի հետ ճանապարհորդելուց:

— Մըհէն այստեղ է, ասաց նա, երբ բոլորովին կառողջանաս, նա քեզ կը տանէ Վան: Ասլանը այնտեղ մի քանի օր պէտք է մնայ: Իսկ դարձեալ կը գտնես նրան:

— Ես կը գնամ առաւօտեան, վաղ առաւօտեան: Ասլանը խոստացաւ սպասել ինձ առաջին իջեւանում, ես նրան սպասել չեմ տայ:

Առաւօտեան ինձ բոլորովին առողջ չէի զգում: Արեան չափազանց հոտումը բաւական թուլացրել էր ինձ: Բայց մի քանի օրից յետոյ ես կարող էի ձի նստել եւ ճանապարհ գնալ: Մարօն առաջարկեց Մըհէին ինձ հետ վեր առնել:

— Մըհէն ի՞նչու է եկել, հարցրի ես:

— Նա եկել է մեզ տանելու, պատասխանեց նա:

— Ո՞վ է ուղարկել:

— Հայրս:

— Ուրեմն ես ինչպէս կարող եմ նրան առնել ձեզանից:

— Մենք առանց նրան եւս կարող ենք գնալ:

— Հէնց ե՞ս կոյր հաւի պէս չեմ կարող մեծակ ճանապարհ գնալ:

— Կարող ես, բայց ճանապարհը կը կորցնես: Բացի դրանից Մըհէն հօրիցս նամակ ունի Ասլանի վրայ, պէտք է շուտով հասցնի:

Սրելը դեռ չը ծագած Մըհէի հետ ճանապարհ ընկանք: Նա ձի նստելու սովորութիւն չունէր, «Մեղք է, ասում էր, ասպառաքերս ինչու համար ստեղծել է Աստուած»:

Մըհէն գնում էր իմ ձիու առաջնից, ահագին լսխտը իր թելի վրայ դրած: Նա լուռ էր, նա չէր խօսում եւ իմ հարցերին տալիս էր խիստ կարճ պատասխաններ:

Ես ճանապարհին հազիւ կարողացայ մտաբերել, թէ որքան անքաղաքավարի կերպով բաժանվեցայ Մարօից: Ես նրան ոչ մի խօսք չասացի. նա այնքան տեղ եկաւ ինձ հետ, նայում էր իմ վրայ, սպասում էր մի քաղցր խօսք լսել: Ես մտաբերեցի, որ իմ հեռանալուց յետոյ, նա խիղճն չը վերադարձաւ դէպի վրանը, այլ նստեց ճանապարհի մօտ մի քարի վրայ: Ես այժմս էլ յիշում եմ, թէ ինչպէս գլուխը քարշ գցած, նստած էր նա: Ես հարցրի Մըհէից: Մըհէն Մարօի մօտ էր, նա յետոյ եկաւ եւ հասաւ ինձ: — «Նա լաց էր լինում», ասաց իմ ուղեցոյց Հերուկէսը:

— Ի՞նչու էր լաց լինում, Մըհէ:

— Սատանան գիտէ, թէ աղջիկը ինչու լաց  
կը լինի. . .

Մըհէն, ինչպէս առաջ ես մտածում էի,  
այնքան յիմար չէր. նա երեւաց ինձ խիստ ծած-  
կամիտ մի մարդ։ Որովհետեւ որքան ես աշխա-  
տեցի նրանից դուրս քաշել մի խօսք, թէ ինչ  
նպատակ ունէր նրա թափառելը մի օր այստեղ,  
միւս օր այնտեղ,—նա ոչինչ չը յայտնեց, տուեց  
միայն մի քանի արհամարհական պատասխան-  
ներ, ասելով.— «Եթէ շատ բան գիտեմաս, շուտ  
կը պառաւես»:

Առաջին իջեւանում, ուր ժամադիր էր եղած  
Սալանը ինձ սպասելու, նրան չը գտանք։ Գա մի  
փոքրիկ հայարնակ գիւղ էր քրդերի հետ խառը  
Բայց երբ մօտեցանք գիւղին, մի մարդ դուրս եկաւ  
իմ առաջ, երեւում էր, որ նա մեզ սպասում էր:

— Ի՞նչպէս է բո անունը, հարցրուց նա:

— Փարհատ:

Նա հանեց իր ծոցից մի կնքած թուղթ եւ  
տուեց ինձ: Նրա մէջ գրած էին այս խօսքերը.

«Փարհատ, մի դէպք առիթ տուեց ինձ  
շեղուիլ այն ճանապարհից, որ ուղղակի տա-  
նում է դէպի Վան: Ներեցէք, որ չը կարողացայ  
սպասել բեզ: Այս մարդուն պատուիրած եմ, որ  
բեզ ինձ մօտ բերէ: Նա գիտէ իմ տեղը, Ասլան»:

Թուղթը կարդալուց յետոյ այն մարդը հարց-  
րուց.

— Եթէ այստեղ հանգստանալու միտք չու-  
նէք, ես այս բոպէիս էլ պատրաստ եմ ձեզ առաջ-  
նորդելու:

Այս տղամարդը հագնուած էր բոլորովին բրդի ձեւով, եւ եթէ նա հայերէն չը խօսէր, ես նրան բուրդ պիտի կարծէի: Զէնքերը նայնպէս բրդի էին՝ երկար նիզակը ձեռին, մի զոյգ ատրոճանակներ գօտիումը խրած, ահագին երկաթապատ վահանը ուսին գցած եւ կեռ սուրը կողքից բարշտուած:

Նա սկսեց բրդերէն խօսել Մըհէի հետ: Երեւում էր, երկուսն էլ ճանաչում էին միմեանց: Ինձ էլ ծանօթ երեւաց այն հսկայ տղամարդի դէմքը, որպէս թէ միանգամ պէտք է տեսած լինէի նրան: Իսկոյն մտաբերեցի, որ դա այն երկու զէյթունցի տղամարդերից մէկն է, որոնց ես տեսայ արաբական մինարէթում, այն գիշերը, երբ առաջին անգամ հանդիպեցայ Վարօին: Այժմ հասկացայ, թէ ինչու Աւլանը փոխել էր իր ճանապարհի ուղղութիւնը. երեւի, զէյթունցիին նրան մի անակնկալ բան հաղորդած պէտք է լինէր, որ առիթ էր տուել նրան թողնել ուղղակի Վան գնալը:

Վերջացնելով իր խօսակցութիւնը նրա հետ, Մըհէն դարձաւ դէպի ինձ այս խօսքերով.

— Ես հիմա գիտեմ, թէ ուր է գնացել Աւլանը, ես քեզ կը տանեմ ուղիղ նրա մօտ, այս մարդը մեզ պէտք չէ:

— Բայց դու ճանապարհը ճանաչում ես, հարցրի ես:

— Սատանայի պէտ:

— Բայց քանի որ դուք չէք ուղում այստեղ հանգստանալ, սպասեցէք, մինչեւ ես մի բան

կը բերեմ ճանապարհին ուտելու համար, ասաց զէյթունցին եւ վազեց դէպի գիւղը:

Նա մտաւ գիւղի ծայրումը գտնուած աներից մէկի մէջ եւ քանի թուլէից յետոյ դուրս եկաւ մի մաղ ձեռին բռնած: Նրա մէջ դրած էին մի քանի հատ տափակ, լայն եւ բոլորակ հացի նման բաներ, մի փոքր դեղնագոյն, եւ երեսներն օժած մեղրով: Դա չորացրած սեր էր. բաւականին հաստ զանգուածով, Հայաստանի պարարտ կաթի արգիւնքն էր:

Մըհէն երկու հատ առեց, եւ փողի նման գալարելով, մի թուլէում կերաւ:

— Մըհէն էսպիտի տատանայական բաներով չի կշտանայ, գնա, հաց բեր, ասաց զէյթունցուն:

Բայց ես մէկ հատի կէսը հազիւ կարողացայ ուտել, այնքան պարարտ եւ սննդարար էր սերը:

— Ես հաց ունեմ հետս վերառած, երբ որ քաղցած լինես, կը տամ: Հիմա գնանք, ուշ է Մըհէ, ասեցի նրան:

— Հիմա տուր, երբ փորս դատարկ է:

Զէյթունցի տղամարդը չը թողեց ինձ բաց անել խորջինը, որ կապած էր ձիուս գաւակին, որի մէջ Մարօն ինձ համար ճանապարհի պաշար էր դրած, այլ ինքը գնաց, բերեց երկու հատ գարեհացի ահագին բլիթներ: Մըհէն նրանք եւս կերաւ: Այնուհետեւ մենք ճանապարհ ընկանք:

Արեւն արդէն սկսել էր թեքվել իր կէսօրուայ կէտից դէպի մուտքը:

Հ Ա Յ Հ Ո Վ Ի Ի Ն Ե Ր

ՄըՏէն հայոց լեռների գազանն էր. նա այնպիսի անյայտ շաւիղներով տանում էր ինձ, որ սատանան ինքը կը մոլորուէր: Ես ստիպուած էի ցած իջնել ձիուցս: Սարերի ելեւէջներն այնքան դժուարին էին, որ ձիս չէր կարողանում առաջ գնալ: ՄըՏէն կատաղութեան չափ բարկացած էր: «Թող էս անպիտանին, ասում էր նա, ես չեմ իմանում ինչ բանի պէտք է»: ՄըՏէի հետ վիճել այն քարերի մէջ, յիմարութիւն կը վիճէր, պէտք էր նրա գլուխը մի կերպով շոյել: «Քա Կարօի ձին է, ասում էի ես, նա է ընծայել ինձ, դու խօ Կարօին սիրում ես»:

ՄըՏէն Կարօի վրայ մեծ համարում ունէր, նրա անունը տալու ժամանակ նա մեղմանում էր. այսուամենայնիւ ձին մեզ հետ քարշ տալը վերջապէս բոլորովին անհնարին եղաւ: ՄըՏէն յայտնեց, եթէ ես հաճութիւն կը տայի, նա կառող էր մի մարդ գտնել եւ ձին նրան յանձնել,

որ յետոյ ուրիշ ճանապարհով բերէր եւ հասցնէր մեզ: Եւ աւելացրուց, թէ ինքը շտապում է, շատ է շտապում, ձիան դանդաղ ընթացքով գնալ չէ կարող, որովհետեւ Ասլանի վրայ նամակ ունի, պէտք է շուտով հասցնի, եւ դրա համար ընտրեց դժուարին, բայց կարճ ու կտրուկ ճանապարհը:

Ես տեսայ, որ Մըհէի առաջարկութիւնն ունէր իր առանձին կարեւորութիւնը, բայց որտեղից մարդ գտնել եւ ո՛ւմ յանձնել ձինս — «Ես կը գտնեմ» ասաց նա, եւ պատուիրեց ինձ մի փոքր սպասել ձիան մօտ, իսկ ինքը առաջ վազեց եւ մի րոպէում բարձրացաւ սարի գլխին, սկսեց այնտեղից նայել իր շուրջը: Նա արծուի սրտեսութիւն ունէր. շատ հեռուից տեսաւ մի հովիւ, որ արածացնում էր ոչխարներ: Այնուհետեւ նա իր մատները փողի ձելով գալարելով, դրեց բերնին, եւ այնպիսի մի որոտալից ձայն արձակեց, որի արձագանքը կրկնվեցաւ լեռների հեռակայքում: Քանի րոպէից յետոյ նոյն ձայնով պատասխանեցին: Ես առաջին անգամ տեսայ, թէ լեռների մէջ ինչպէս են հեռուից-հեռու խօսում:

Շատ չանցաւ, մեզ մօտ յայտնվեցաւ հովիւը, դա մի քուրդ էր: Մըհէն մի բանի խօսք ասաց նրան բրդերէն, յետոյ ձին յանձնեցու «Էիմա մենք գնանք», ասաց ինձ:—Ո՛ւր գնանք, դու ձին տալիս ես աւազակին եւ կարծում ես, թէ նա կը դարձնէ մեզ»:

Մըհէն իր առանձին եղանակով հանգրտացրուց ինձ, ասելով, թէ-եւ ինքը գիտէ, որ նա աւազակ է, բայց մի բան, որ յանձնում

ես աւազակին որպէս աւանդ, նա սրբութեան պէս պահում է եւ կրկին գարձնում է իր տիրոջը: Բացի գրանից, աւելացրուց նա. թէ ինքը տեղեկացաւ, որ այդ հովիւը որ բրդի հօտերն է արածացնում, եթէ նա անհաւատարիմ կը գըտնուի իր պարտաւորութեան մէջ, ինքը Մըհէն կարող է մի ձիու փոխարէն յափշտակել նրա ազայի ամբողջ երամակը:

Այս բաները, ի հարկէ, Մըհէն ինձանից աւ էր հասկանում. ես համաձայնվեցայ, միայն հարցրի, թէ մինչեւ ե՞րբ կարող էր նա հասցնել մեզ ձին:

— Մի օրից յետոյ, պատասխանեց նա, որովհետեւ այն ճանապարհը, որտեղից նա պէտք է ձին բերէ, մի օրով երկար է:

Մենք շարունակեցինք գնալ:

— Բայց մենք ե՞րբ կարող ենք հասնել այն տեղը. որտեղ այժմ գտնվում է Ասլանը, հարցրի ես Մըհէից:

— Թէ որ ամբողջ գիշերը գնալու լինենք, էգուց կէսօրին կը հասնենք, ասաց նա:

— Ամբողջ գիշերն ի՞նչպէս կարող ենք գնալ առանց հանգստանալու, ես հիմիկուանից յոգնել եմ:

— Թէ որ չես կարող, ասաց նա խիստ սառը կերպով, — ես բեզ էլ թող կը տամ, ինչպէս բո ձիուն: Ես նորահարսի հետ բալելու համբերութիւն չունեմ. . .

Ես մեղմութեամբ պատասխանեցի.

— Մըհէ, դու իմանում ես, որ ես սովոր չեմ

այսպիսի քարերի մէջ ոտքով երկար ման գալ:

— Հիմա սովորիր:

— Կը սովորեմ, բայց միանգամով չէ կարելի:

— Թէ որ յոգնես, ես կառնեմ շալակս:

— Ես խօ երեխայ չեմ:

— Ապա ի՞նչ ես, հարցրուց նա վայրենի ժպիտով:

Ես ոտքով ճանապարհորդելու մէջ շատ թոյլ չէի, բայց ինձ թուլացրել էր գլխիս վերքը եւ արեան շափաղանց սպառալիլը: Բայց Մըհէի նման երկաթի մարդու ծիծաղը միայն կը շարժէր, եթէ նրան ասէի, թէ վերքիս պատճառով է, որ ես չեմ կարողանում նրա հետ ընթանայ: Նա իր մարմնի վրայ ունէր անթիւ մեծամեծ սպիներ, որոնք ստանալու ժամանակ երբէք թուլացած չէ եղել . . .

Արեւը մտաւ: Բարեբախտաբար այն գիշեր լուսնկայ էր: Ես ստիպված էի հպատակել իմ խտտասիրտ ուղեկցի կամքին: Գիշերային հովաք սուն պահուն ճանապարհորդութիւնը շատ յոգնեցուցիչ չէ լինում, այսուամենայնիւ, երբ կէս գիշեր դարձաւ, ես բոլորովին թուլացայ: Մըհէն նկատեց այդ, երեւի, նա խղճաց իմ վրայ:— Մի փոքր էլ գնանք, ասաց նա, ձորի մէջ հովիւների վրաններ կան, քեզ այնտեղ կը հանգստացնեմ: Բայց Մըհէի լեզուով ամեն խոշոր բան փոքր էր, ամեն երկար բան կարճ էր: Լուսաբացին երկու ժամ մնացած, մենք հողիւ կարողացանք հասնել այն ձորին, որ Մըհէն ասում էր, եւ իրաւ, այնտեղ գտանք հովիւների վրաններ: Բայց կատաղի շները չէին թողնում մօտենալ, իսկ

վրանների մէջ բոլորը քնած էին: Մըհէն ինձ աւելի երկիւղ տուեց, ասելով թէ շների ձայնից հովիւները կը զարթնեն, եւ մեզ աւազակներ կարծելով, գուցէ հրացանով հեռուից կը զարկեն: Բայց ես այնքան յոգնած էի, որ Մըհէի խօսքերը բանի տեղ չը գրեցի, ես պատրաստ էի ամեն վտանգ յանձն առնել, գէթ մի փոքր հանգրստանայի:

Բայց Մըհէն հեռուից մի տեսակ ձայն արձակեց, որի միտքը այն էր թէ՛ «հիւր ենք»: Վրանների գիշերային պահնորդներից երկուսը մօտեցան մեզ: Մըհէն այժմ սկսեց խօսել հայերէն: Այլ եւս երկար բացատրութիւններ պէտք չէին. մեր հայ լինելը փարատեց նրանց կասկածանքը եւ իսկոյն ընդունովեցանք: Հովիւները հայեր էին: Մեզ տարան տանուտէրի վրանը, որ հովիւների գլխաւորն էր: Տանուտէրի մեծ որդին ընդունեց մեզ, իսկոյն վառել տուեց փայտեայ լուցկիներ ճրագի տեղ, եւ առանց մեզ հարցնելու, հրամայեց ուտելու մի բան պատրաստել: Ես յայտնեցի, թէ ուտելու ամենեւին ախորժակ չունեմ, թէ շատ կը ցանկանայի ինձ մի անկիւն շնորհէին, որ մի փոքր քնէի եւ հանգստանայի:

— Թող նա քնէ, ասաց Մըհէն, ես ուտել եմ ուզում. գայլի պէս քաղցած եմ:

Վրանի մի կողմում, ուր պառկած էին մի քանի երեխաներ, ինձ համար պատրաստեցին անկողին. գլուխս բարձի վրայ դնելն եւ այքերիս փակուիլը մին եղաւ: Ո՛րքան գիւր է գայլիս քունը վստահա՛ծ մարմնին, որքան բազր է լինում

Նա, մանաւանդ հովուի խաղաղ վրանի տակ . . .

Քանի՞ ժամ բնել էի, ես չը գիտեմ, միայն երբ արթնացայ, արեգակը կանգնած էր կէսօրուայ տեղում Մըհէն չը կար. նա անյայտացել էր:

Տանուտէրը, որ մի ծերունի մարդ էր, պատմեց, թէ քո ընկերը հեռացաւ այստեղից հէնց գիշերով, երբ իր քաղցը մի փոքր յագեցրուց: Ասաց, թէ նա սաստիկ շտապում էր, այս պատճառով սպասել չը կարողացաւ:

Ես շատ քարկացայ կիսախելագար Մըհէի մի այսպիսի վարմունքի վրայ, եւ մտքումս սկսեցի նախատել Մարօին, որ ինձ այն յիմարի ձեռքը գցեց: Բայց տանուտէրն ինձ հանգստացրուց, ասելով.

— Գու քո սիրտը մի դառնացնի, գու օտար տեղում չես, այստեղ քո տունն է, հանգստացի՛ր, բայց երբ կը կամենաս գնալ, այն ժամանակ իմ որդիներից մէկը կը տանէ քեզ այնտեղ, ուր պէտք է գնայիր:

— Բայց ես չեմ իմանում, ո՞ւր պէտք է գընամ, այն յիմարը պէտք է տանէր ինձ, պատասխանեցի դարձեալ վրդովված կերպով:

— Մենք գիտենք, ասաց ծերունին հանդարտութեամբ:—Քո ընկերը պատուիրեց մեզ, որ քեզ հասցնենք Ս.—բէկի վրանները. նրա արօտամարգերը շատ հեռու չեն այստեղից:

— Ո՞վ է Ս.—բէկը:

— Եզիզիների գլխաւորն է:

Ես մի փոքր հանգստացայ, մանաւանդ երբ մտաբերեցի, որ Մըհէն նամակ ունէր Ասլանին:

Հասցնելու, դրա Համար նա շտապում էր, նա չէր կարող իմ դանդաղ քայլերին համբերել:

Տանուտէրի խօսքերից երեւաց, որ Սըհէն չէր յայտնել նրան մեր իսկական նպատակը, թէ ինչ գործով էինք գնում եզիզիների գլխաւորի մօտ եւ ոչ Ասլանի մասին յիշել էր մի բառ: Նա հնարել էր մի խոշոր սուտ, իբր թէ մենք Սուրբ Տիրամօր ուխտաւորներ ենք, այնտեղ գողացել էին մեր ձին, եւ լսելով, թէ ձին եզիզիների ցեղի մէջն է տարվել, այժմ գնում էինք այնտեղ ձին գտնելու: Սըհէի սուտը մասամբ ճշմարիտ էր, որովհետեւ նա իմ ձին յանձնեց մի հովուի, որ եզիզիների ցեղին էր պատկանում, եւ գուցէ այնտեղ կը գտնէինք, ուր պէտք էր մեզ գնալ:

Ծերունի տանուտէրը, իր նահապետական բնաւորութեան յարմար, միշտ աշխատում էր մի բանով հիւրասիրել ինձ, որ ես ուտէի, խմէի եւ ուրախ լինէի: Դուք, ասում էր նա, անպատուած կը լինէք իմ վրանը, եթէ դժգոհ հեռանաք այստեղից: Բայց ինչ որ աչքի էր զարկում, այն էր, որ նրա հարսները, ազժիկ թուռները, ոչ մէկը չէր թաքցում ինձանից, ոչ մէկը երեսը չէր ծածկում, որպէս սովորութիւն է Պարսկաստանի հայ կնիկների մէջ, նրանք բոլորը խօսում էին ինձ հետ, որպէս թէ ես նրանց վաղեմի բարեկամը լինէի: Եւ նրանց խօսակցութիւնն այնքան պարզ եւ անմեղ էր, որ չէր կարելի չր համակրել նրանց:

— Դու քոյր ունես, հարցնում էր մի հասուն օրիորդ:

— Ունեմ, երկուսը, պատասխանեցի ես:

— Նրանք քեզ համար գուլբաներ գործում են, քո ոտքերը մաժում են քնելու ժամանակ:

— Ո՛չ, նրանք ծոյլ են:

— Եւ դու նրանց չե՞ս ծեծում:

Մէկ ուրիշը հարցնում էր.

— Քո քոյրերն այսպիսի ականջի օղեր ունեն, եւ ցոյց էր տալիս իրը:— Տես, եղբայրս է առեր:

— Չունեն, պատասխանում էի ես:

— Բայ, դու նրանց չե՞ս սիրում:

Հարսներից մէկը հարցրեց.

— Քո նշանածը քանի տարեկան է:

— Ես նշանած չունեմ, պատասխանեցի:

— Հը՛մ, դու երեւի քաջ տղայ չես, որ աղջիկները քեզ չեն հաւնում, նկատեց նա ծիծաղելով:

— Կարելի է դա նրանց չէ հաւնում, մէջ մտաւ միւս հարսը:

— Կարելի է վարդապետ է ուղում դառնալ, ասաց մեծ մայրը:

Բայց իմ սիրտն այնքան լցուած էր, որ ես այս կատակները ախորժակ չունէի լսելու: Իմ պատասխանները լինում էին սառն եւ անհամ, այնպէս որ, նրանք շուտով ձանձրացան:

Բայց տանուտիրոջ որդիքն ամենեւին խօսակցութեան մէջ չէին մտնում, երեւում էր, հօր մօտ համարձակութիւն չունէին խօսելու: Իսկ քոյրը զինուորոված էին. ինքը տանուտէրն իր

ծեր հասակով գօտկում խրած ունէր մի զոյգ ատրճանակներ։ Երբ ես հարցրի, թէ խաղաղութեան ժամանակ, իր օթեւանի ծածկի տակ, ի՞նչ պէտք կար զէնք կրելու, տանուտէրը պատասխանեց.

— Մենք մեր ձեռքը մեզանից չենք կտրում։ Եւ դէն չենք գցում, երբ որ անգործ ենք մնում։

— Բայց ձեռքը մեզ ուրիշ ժամանակ պէտք է։

— Սուրն էլ նոյնպէս, ասաց նա, եւ ապա աւելացրուց. — Աստուած բոլոր անասուններին զէնք է տուել, որովհետեւ թշնամի ունեն։ Մարդուն զէնք չէ տուել, բայց խելք է տուել զէնք շինելու։ Անասունը իր կարճ խելքով միշտ իր զէնքը իր վրայ է պահում, բայց մենք յիմար կըլինէինք, թէ առանց զէնքի մնայինք, որովհետեւ մեր թշնամին աւելի կատաղի է։

— Ո՞վ է մեր թշնամին, հարց արի ես միամտաբար, ծերունուն փորձելու մտքով։

— Չե՞ս իմանում, քո ձին ո՞վ գողացաւ, հարցրուց նա։

— Քուրդը։

Հիմա իմացար, մեր թշնամին նա է, որ մեր ունեցածը մեր ձեռքից խլում է։— Ի՞նչ ճանապարհ ես գնալու, ի՞նչ կանես, եթէ մի քուրդ գայ, եւ իր նիղակը կուրծքիդ դնելով, ասէ, դէ՛, մերկացիր։

— Ի՞նչ պէտք է անեմ, կը մերկանամ, ինչ որ ունեմ բոլորը կը տամ։

— Այն ժամանակ առանց շապիկի կը մնաս։

— Ուրիշ ի՞նչ ճար կայ։

— Ի՞նչու չը կայ, հարցրուց ծերունին մի փոքր բորբոքիկով:— Քրդի մարմինը խօ երկաթից չէ շինած, նա էլ մեզ նման մարդ է: Գու էլ կարող ես քո նիզակը նրա կուրծքին դնել, կամ կը սպանես եւ շապիկդ կազատես, կամ կը սպանվես. թող նրանից յետոյ ինչ որ տանելու է, տանէ, որովհետեւ մեռելի համար էլ հազուադէպ է:

— Բայց Քրիստոսը ասում է, որ հակառակութիւն չանենք. ով որ մեր շապիկն ուզում է, պէտք է իրան տանք:

— Քրիստոս եթէ շապիկ ունենար, այս խօսքը չէր ասի, պատասխանեց ծերունին հեգնական ձեւով:

Այս խօսքերը ինձ համար նոր չէին, ես հազար անգամ լսել էի ծերունի որսորդից: Բայց զարմանալին այն էր, որ ես տեսնում էի՝ խաշնարած հայերը բոլորովին ուրիշ սիրտ ունէին, մինչդեռ երկրագործներն եւ քաղաքացիքը բոլորովին մեռած մարդիկ էին: Ասլանը ասում էր «դա նրա համար է, որ խաշնարածներն աւելի տէրտէրի երես չեն տեսնում»:

Այս հայերը մնացել են իրանց նախնական պարզութեան մէջ, մտածում էի ես, իրանց լեռներում անարատ պահուել են նրանք, որովհետեւ փչացած, անպիտանացած հասարակութեան հետ հազորդակցութիւն չեն ունեցել:

Ես վաղուց լսել էի այս ժողովրդի մասին մի զրոյց, որ ինձ անհաւատալի էր թւում, իբր թէ միանգամ նրանց մէջ խօլերայ ընկած է

եղել: ժողովուրդը մի քանի անգամ գիմել է եկեղեցին, եւ խնդրել է իրանց սուրբ Խաչից (եկեղեցին նրա անունով էր շինուած), որ ցաւը իրանցից հեռացնէ: Բայց տեսել են, որ սուրբ Խաչը ամենեւին ուշագրութիւն չէ դարձնում, եւ ցաւը որ ըստ օրէ սաստկանում է: Այն ժամանակ բոլոր ամբօխը բարկութեամբ յարձակում են սուրբ Խաչի վրայ, եկեղեցու դռները փակում են եւ սկսում են նրա վրայ հրացաններ արձակել, եւ սպառնալիքներ կարգալ: Բարեբախտաբար խօլերան դադարում է եւ եկեղեցին ազատվում է քանդուելուց:

Այժմ, լսելով ծերունի տանուտէրի խօսքերը, ես մտածում էի, թէ շատ հեռու չէ մի այնպիսի ժողովրդից այս տեսակ վարմունք, որովհետեւ նա սուրբի վրայ նայում է այն աչքով, ինչ աչքով նայում է ծառան իր տիրոջ վրայ, որ եթէ հաց չը տայ, եւ նրան չը վարձատրէ, ծառան կը դադարէ ծառայելուց, եւ գուցէ կը թշնամանայ նրա հետ:

Բայց որքան էլ հաճելի լինէր ինձ ծերունի տանուտիրոջ հիւրասիրութիւնը, ես դարձեալ շտապում էի շուտով ճանապարհ ընկնել: Արովհետեւ մտածում էի, եթէ ուշանամ, գուցէ Ասլանը դարձեալ չի սպասի ինձ: Ես նրան վերջին օրերում լաւ էի ճանաչել. նրա համար ընկեր, բարեկամ ոչինչ նշանակութիւն չունէին. նա իր «գործին» էր նայում: Եւ շատ կարելի էր, նա ինձ բոլորովին մոռացել էր, որպէս մոռացել էր Աօնային, որին մի ժամանակ այնքան տաք

կերպով սիրում էր նա: «Այսպիսի մասնաւոր սէրը, առաց նա, ոչինչ նշանակութիւն չունի այն հէ՞ «չէր» մօտ, որով լցուած է այժմ իմ սիրտը: . . .

Հովիւների վրանները կազմուած էին մի նեղ հովիտի մէջ. նրանք թուով մի քանի հարիւր կը լինէին. իւրաքանչիւր վրանը պատկանում էր մի ընտանիքի. բայց բոլորը մի գիւղի ժողովուրդ չէին, այլ մի քանի գիւղերի բնակիչները հաւաքւած էին միասին: Բայց դարձեալ նրանք խառնուած չէին, եւ ամեն մի գիւղի խաշնարածներին իրանց առանձին տեղն ունէին, նրանց վրաններն առանձին խումբեր էին կազմում: Բայց այս ժողովուրդը բոլորովին չէր նուիրուած խաշնարածութեան, նրանք ունէին եւ իրանց երկրագործութիւնը: Ամեն ընտանիքի մի մասը մնացել էր գիւղերում ցանքերը մշակելու համար. մասնաւոր ցանքերի մեծ մասը չորային էր, որ աւելի խնամոց կարօտութիւն չունի. վարում են սարերի հարթհասար կողքեր եւ ցանում են, այնուհետեւ ոռոգումը թողնում են բնութեան հոգատարութեանը:

Տղամարդիկը միայն հոգս էին տանում հօտերի պահպանութեան եւ դարմանելու մասին: Ծննդեան հոգսերը կանանց վրայ էր: Ոչ մի կին, ոչ մի աղջիկ անգործ չէր այս աշխատասէր հասարակութեան մէջ. կանայք էին կաթը կթում, իւր պատրաստում եւ պանիր մակարդում: Կանայք էին ոչխարները մազակտոր անում, բուրդը մանում եւ նրանից կապերտներ, գորգեր, եւ

զանազան օթոցներ պատրաստում: Այս կանանց արդիւնքն է այն նուրբ շալեղէն գործուածները, որոնցով պարծենում է Վանը, որոնք ծառայում են հարուստ իշխանների համար վերարկու եւ այլ հագուստներ լինելու: Նրանք ծանօթ են բոլոր բոյսերի, արմատների եւ հանքերի հետ, որոնք տալիս են զանազան ներկեր, եւ իրանք են պատրաստում այն գեղեցիկ գոյները, որոնցմով նշանաւոր են Վանայ շալեղէն գործուածները: Այս բոլորից երեւում է, որ այս ժողովուրդը շատ հին ժամանակներում դուրս է եկել իր վայրենութիւնից, եւ արհեստը ու աշխատութիւնը խիստ վաղուց ծանօթ է եղել նրան:

Յինը այստեղ մարդ էր, իր բուն նշանակութեամբ. նրա յարաբերութիւնները տղամարդի հետ աւելի ազատ էին: Նա մնացել էր իր նահապետական պարզութեան մէջ. նա դեռ չէր խարգախւել հարեմական սովորութիւններով, որպէս Պարսկաստանի եւ Հայաստանի այլ կողմերի հայ կանայքը, որոնք մահմեդականների ազդեցութեան տակ փոխել էին իրանց ազգային բնագործութեան իսկական յատկանիշները:

Աւելի ազատ էին աղջիկները, դեռ կոյս, չամուսնացած աղջիկները: Նրանք թէեւ սովոր չէին խօսել սիրոյ վրայ, թէեւ չը գիտէին սեթեւեթել մանուկ պատանիների հետ, բայց նրանց արգելւած չէր խօսել, զուարճանալ, զբօսանքի գնալ երիտասարդների հետ: Այսպիսի սպարապան սերտ յարաբերութիւնները երկու սեռերի, առաջ էր բերել ամբողջ ժողովրդի մէջ մի տե-

ասակ անմեղութիւն, որ տիրում է մի ընտանիքի մէջ, քոյր եւ եղբոր մէջ:

«Ազատութիւնը, ասում էր Ասլանը, գտնւում է ժողովրդական կենցաղավարութեան երկու ծայրերի մէջ, մէկում, երբ նա դեռ իր նահապետական պարզութեան մէջ է ապրում, միւսում, երբ նա հասել է քաղաքակրթութեան չոյսին: Այս երկու ծայրերի միջոցում տիրում է ստրկութիւնը»: — Այս ժողովուրդը դեռ առաջին ծայրի վրայ էր կանգնած:

Ծերունի տանուտէրը, տեսնելով որ ես շատ շտապում եմ, հրամայեց իր ձիերից պատրաստել երկուսը, մէկը տուեց իր միջնակ որդուն եւ հրամայեց ինձ տանել եւ հասցնել Ս. — քէլի վրաններին, միւսը ինձ տալով ասաց.

— Քո ձին գողացվել է, ինձ համար նախատինք կը լինէր, որ մի «լաւ բարեկամիս» որդեգիրն իմ վրանում հիւր լինելուց յետոյ, այստեղից հեռանար առանց ձիու. դրա համար այս նժոյգը կը տանես որպէս իմ կողմից ընծայ:

Ես հրաժարվեցայ ընդունելուց, եւ մի եւ նոյն ժամանակ դժուարացայ Մըհէի հնարած սուտը պարզել, որ իմ ձին ամենեւին գողացված չէր:

Ծերունին դարձեալ պնդեց, թէ ես հիւրասիրութեան դէմ վարուած կը լինեմ, եթէ չընդունեմ նրա պարգեւը: Ես պատասխանեցի.

— Դուք այս ձին ինձ նրա համար էք ընծայում, որ ես կորցրել եմ իմը, ես կընդունեմ, միայն այն պայմանով, եթէ կը գտնեմ իմ ձին, այն ժամանակ ձերը յետ կը դարձնեմ:

Մերունին ասաց. միայն դա չէ պատճառը, այլ նա ցանկանում է, որ «իր բարեկամի» որդեգրին մի թեթեւ բանով պատուած լինի: Բայց ո՞վ էր նրա բարեկամը, որի որդեգիրը լինէի ես:

— Մերունի որսորդը, ասաց նա:

— Բայց դուք իրանդից գիտէք, որ ես նրա որդեգիրն եմ:

— Ես բոլորը գիտեմ . . . պատասխանեց նա խորհրդաւոր ձայնով:

Մենք ճանապարհ ընկանք: Տանտիրոջ ընտանիքը շատ սիրով ճանապարհ դրեց ինձ, կարծես, ես տարիներով նրանց մէջ ապրած լինէի:

Տանտիրոջ միջնակ որդին, որ պէտք է առաջնորդէր ինձ մինչեւ եզիզիների գլխաւորի վրանը, մի կատարեալ դիւցազն էր, նա իր ձիւ վրայ նստած, կարծես թէ, կազմում էր նրա հետ մի ամբողջ մարմին, որ ստեղծուած էր պատերազմի համար: Ես երբէք չեմ մոռանայ նրա խօսքը, որ ճանապարհին ասաց ինձ. «Մեր կեանքը սրի մէջն է» . . .

Մենք գնացինք ուղիղ ճանապարհով, եւ ոչ լեռների միջով, որպէս տանում էր Մըհէն, եւ նոյն աւուր երեկոյեան պահուն հասանք Ս.— բէկի վրաններին:

Ե Ձ Ի Պ Ի Ն Ե Ր

Մենք հասանք եղիզիների բէկի չաղքներին նոյն աւուր երեկոյեան պահուն, երբ արեւն արդէն մտած էր: Երկու մարդ կէս ճանապարհի վրայ սպասում էին եւ մեզ ուղղակի տարան բէկի վրանը: Ասլանը այնտեղ էր. նա երբ տեսաւ ինձ, «վերջապէս եկար գու» ասաց եւ ժպիտի նման մի բան երեւաց նրա սառն դէմքի վրայ:

Մի փոքրիկ, կանաչազարդ հովիտի մէջ զետեղուած էին եղիզիների չաղքները մի քանի հարիւրի չափ, իսկ կենտրոնում կազմած էր բէկի վրանը: Նա որոշվում էր միւս բոլորից իր մեծութեամբ եւ գեղեցկութեամբ: Նա բաժանված էր չորս մասի,—մէկի մէջ, ուր ընդունեցին մեզ, նստած էր ինքը բէկը, եւ գիտակը ձեռին անգազար նայում էր այս կողմ եւ այն կողմ, կարծես, նա միշտ երկիւղի մէջ էր, չիցէ թէ թըշնամու անակնկալ յարձակում լինի նրա վրայ:— Այդ մասը նրա հիւրանոցն էր: Նրա առջեւ մերկ գետնի վրայ կարգով զցուած էին մի քանի երկայն

նիղտկներ, շինված այն եղէգներից, որ բուսնում են Տիգրիսի եզերքի վրայ, որոնք այնքան թերուն եւ անբեկանելի են, որ կարծես, բնութիւնն ինքը ստեղծել էր մահուան գործիք դառնալու։ Հիւրանոցի սիւներից քարշ էին տուած զէնքերի այլ եւ այլ տեսակներ, որպիսի են՝ վահաններ, սրեր եւ զանազան հրացան գործիքներ։ Հիւրանոցի աջակողմեան մասնում կապած էին մի քանի ձիաներ, թամբած, եւ բոլորովին կազմ ու սլափափափ։ Այդ նրա համար էր, եթէ վտանգ պատահէ, իսկոյն տէրերը թռչեն նրանց վրայ, եւ դուրս գան թշնամու առջեւ։ Հիւրանոցի ձախակողմեան մասնում զետեղուած էին բէկի թիկնապահները, որոնք նրանից միշտ անբաժան են մնում։ Նրանք նրա մերձաւոր ազգակիսններին էին, որոնց վրայ աւելի վստահութիւն ունէր բէկը։ Հիւրանոցի ետեւի կողմում մի ընդարձակ բաժին կացուցանում էր կանանոցը, ուր զետեղված էր նրա ընտանիքը։— Այս բոլորն այնպէս յարմար կերպով վարագոյրներով բաժանված էր մինը միւսից, որ ամբողջ վրանը ներկայացնում էր մի գեղեցիկ շարժական ապարանք իր բոլոր սարք ու կարգով. բայց ամենի մէջ նշմարվում էր պարզութիւն եւ նահապետական անշքութիւն։

Ենքը բէկը մի ցամաք մարդ էր միջակ հասակով, եւ կարելի է ասել, աւելի կարճ, քան թէ լինում են միջակ հասակ ունեցող մարդիկ\*։ Նրա տարիքը վաղուց անցել էին յիսուսից, բայց դեռ ոչ մի մազ չէր սպիտակել զլիսի վրայ։ Դէմքը

Թուխ-գեղին գոյն ունէր, խիստ մելամաղձոտ, բայց աչքերի մէջ բորբորվում էր վայրենի կրակ: Ինձ վրայ շատ վատ տպաւորութիւն էր գործում նրա աւաղակային հայեացքը:

Բայց նա շատ քաղաքաւարութեամբ դարձաւ դէպի ինձ եւ ասաց այս խօսքերը.

— Ես ուրախ եմ, որ դու ոտք կոխեցիր իմ վրանի շէմքի վրայ, որովհետեւ դու իմ «լաւ բարեկամի» ընկերն ես:

Վերջին խօսքերի միջոցին նա ակնարկութիւն արեց Ասլանի վրայ: Ես գլուխ տուեցի եւ ոչինչ չը պատասխանեցի:

Վրանի մուտքի այս եւ այն կողմերում, ձեռքները իրանց սրերի վրայ դրած, կանգնած էին բէկի հինգ որդիքը, որպէս պահապան հրեշտակներ: Նրանց երեսների բացատրութեան մէջ պարզ նշմարվում էր, թէ բաւական էր մի փոքր ակնարկութիւն հօր կողմից, եւ նրանք իսկոյն կը կոտորէին հանդիպածին:

Հայրը նրանց մէկին հրամայեց, որ ընթրիք տան:

Բէկն ինձ հետ խօսում էր եւ վարվում էր որպէս մի երեսխայի հետ: «Դու քանի՞ ձի ես գողացել, հարցնում էր նա, քանի՞ մարդ ես սպանել:—Պատահել է քեզ աղջիկ փախցնել:—Այս եւ սրա նման շատ բաներ հարցնում էր նա այնպիսի մի հասարակ ձեւով, որպէս մէկը վարժատան աշակերտից հարցնելու լինի՝ «դու կարգացել ես Նարեկը, կամ շարականից որքան ես անցել»:

Երբ ես պատասխանում էի, թէ նրա ասածներից ոչ մէկը չեմ կատարել, նա ծիծաղում էր, ասելով, «ճրճան ծոյլ ես դու» . . .

Ասլանը այս խօսքերը լսելով, նոյնպէս ծիծաղում էր, բայց ես բարկանում էի:

— Դու լաւ տղայ կը դառնաս, ասաց բէկը, ես քեզ իմ որդիների մէջ կը պահեմ, եւ կը սովորես Կազ փրնել:

Մտքումս ասեցի, եթէ քաջութիւնը աւազակութեան մէջն է, ես երբէք նպատակ չունեմ այդ սովորելու:

— Ես այնքան երկչոտ չեմ, որքան դուք կարծում էք, բէկ, պատասխանեցի լսելի ձայնով:

— Այդ մենք կարող ենք փորձել, ասաց նա, — եւ փորձելու առիթ կայ. քո ձին որ Մըհէն լանձնել էր մի հովուի, նա ռաւանդների ցեղին է պատկանում: Թշուառականը, որ խոստացել էր, դեռ չէ վերադարձրել ձին: Երեւի, պահելու միտք ունի: Ռաւանդների երամակները մեզանից ոչ այնքան հեռու մի սարի ետեւում արածում են: Եթէ քեզանում սիրտ կայ, այս բոսպէիս կը գնաս, եւ նրանց ձիերից մի քանի հատ կը բերես: Եգուց նրանք ստիպված կը լինեն քո ձին բերել եւ իրանցը տանել:

Ես զարմացայ բէկի մի այսպիսի առաջարկութեան վրայ եւ պատասխանեցի.

— Դիցուք թէ մի խաբերայ հովիւ, օգուտ քաղելով Մըհէի միամտութիւնից, իմ ձին տարաւ եւ յետ դարձնելու նպատակ չունի. բայց ես ինչ իրաւունք ունեմ ուրիշի ձին բերել նրա փոխարէն:

Բէկը պատասխանեց.

— Հիմա երեւաց, որ դու ոչ միայն երկչոտ ես, այլ աշխարհի կարգն էլ չես իմանում:

Ես կարծում էի, թէ բէկն այս բոլորը կատակի համար էր խօսում, բայց երբ Ասլանը պատմեց մի քանի բաներ քրդերի կեանքից, այն ժամանակ ես համոզվեցայ, որ նա կատակ չէր անում, Գրդերի մէջ օրէնքի զօրութիւն էր ստացել այն սովորութիւնը, երբ մի առանձին ցեղի պատկանող մարդ յափշտակում է որ եւ իցէ ուրիշ ցեղի հասարակութեանը պատկանող մի մարդու սեպհականութիւնը, վերջինը իրաւունք ունի իր կորուստի փոխարէնը յափշտակել աւագակի ցեղին պատկանող մի օտար մարդու կայքից, թէեւ նա ամենեւին խառն չէ եղել յիշեալ գողութեան գործի մէջ:— Այստեղից առաջ են գալիս այն անընդհատ յափշտակութիւնները, որ կատարվում են տարբեր ցեղերի մէջ եւ պատճառ են տալիս նրանց մշտական կռիւներին. Արէժիւնգրութեան մի այսպիսի ձեւը շարժական կայքից անցնում է եւ անձինքների վրայ: Մի ցեղին պատկանող մարդ իր սպանված ազգակցի արեան փոխարէն կարող է սպանել մի ուրիշ մարդու հակառակ ցեղից, թէեւ նա բոլորովին անմեղ լինէր:— Նա ծագում է այն սկզբունքից, որ ցեղը քրդերի մէջ մի ամբողջ ընտանիք է, կապված թէ նիւթական եւ թէ բարոյական շահերով, եւ ցեղը բազմակցող իւրաքանչիւր անհատը մինը միւսի փոխարէն պատասխանատու է: Մի այսպիսի կապակցութիւնը, թողնելով իր վատ կող-

մերը, ունի եւ իր հասարակական օգուտները. օրինակ, եթէ մի քրդի ոչխարները հիւանդութիւնից կոտորվեցան եւ նա մնաց առանց ապրուստի, այն ժամանակ նրա ցեղակից քրդերի պարտաւորութիւնն է իրանց ունեցածից տալ անբախտին մի-մի ոչխար, մինչեւ նրա հօտի առաջուայ թիւը լրանայ:

Երբ որ բէկն ինձ հետ խօսում էր, հեռուից լսուեցան շների խառն ձայները: Նրա որդիներից երկուսն իսկոյն դուրս վազեցին իմանալու, թէ ինչ էր աղմուկի պատճառը: Քանի բոլէից յետոյ յայտնուեցաւ Մըհէն, բշելով իր հետ ձիաների մի ամբողջ երամակ:

— Սատանան տանի, ասում էր նա ինքն իրան մրմրթալով, — թեւքօ ծւատեցին:

Եւ իրաւ, մենք տեսանք, նրա թեւքից արիւն էր հոսում, եւ վէրքը թողած էր բոլորովին անխնամ, առանց փաթաթելու: Բէկի կանանոցից դուրս եկան մի քանի պառաւներ, սկսեցին համոզել Մըհէին, որ վէրքը վտանգաւոր է, եւ խընդրում էին, որ թոյլ տայ սպեղանի դնել եւ փաթաթել, Նա խիստ դժուարութեամբ ընդունեց:

Վէրքը առաջ էր եկած նիզակի ծակելուց: Պառաւներից մէկը սկսեց լիզել վէրքը եւ ծծելով դուրս քաշել արիւնը: Նա մի զգուշութիւն էր, չր թողնել որ մարմինը վարակի, եթէ վիրաւորող գէնքը թունաւոր է եղել: Այս գործողութիւնը ինձ զարմացրուց, որովհետեւ առաջին անգամն էի տեսնում: Բայց երբ վերջին ժամանակներում, կարգալով հայոց պատմութիւնը, պատահեցան

ինձ Առէզ կամ Յարալէզ գից անունները, ետ  
հասկացայ, թէ ինչ պաշտօն էին կատարում  
հայոց այդ բժիշկ աստուածները: Եւ շատ բնա-  
կան է, գազանները միշտ իրանց մարմնի վէրքը  
լիզելով են առողջացնում, եւ նախնական մար-  
դիկ պէտք է հետեւէին նրանց օրինակին:

Այսուամենայնիւ, բրգերի մէջ շատ առաջ  
է գնացել բժշկութեան վիրաբուժական մասը.  
կեանքը ու նրա կարիքներն ուսուցել են նրանց  
զարգանալ արհեստի այս ճիւղի մէջ:

Բայց ինչ էր այս բոլոր ազմուկի պատ-  
ճառը, որտեղից էր բերել Մըհէն այս ձիաները:

— Տես, քաջն այսպէս է լինում, ասաց բէկը  
գառնալով դէպի ինձ, — տեսնում ես Մըհէին, մի  
ձիու փոխարէն բերեց տասը ձիաներ:

Ես հասկացայ, Մըհէն կատարել էր այն յա-  
փրշտակութիւնը, ինչ որ բէկը քանի բոպէ առաջ  
ինձ էր առաջարկում: Նա այս արել էր առանց  
ոչ որին յայտնելու: Առաջին օրը, երբ նա եկել  
էր Ասլանի մօտ եւ իմացել էր, որ ձին տակաւին  
չեն բերած, առանց նրա հետ խորհուրդ անե-  
լու, անյայտացել էր, եւ ահա գարձաւ նա մեծ  
աւարով: Թէեւ Մըհէն մեզ ոչինչ չտեսց, բայց  
երեւում էր, որ նա կռիւ էր ունեցել բրգերի հո-  
վիւնների հետ, եթէ ոչ, այլապէս վիրաւորված  
լինել չէր կարող:

Մըհէն չը սպասեց մինչեւ ընթրիք տային,  
եւ խնդրեց մի քանի հացեր եւ մի մեծ կտոր  
պանիր, բոլորը կերաւ, եւ խմելով մի ահագին  
աման ջուր, գնաց բնելու: Խղճալին երեք օր էր:

որ մի րոպէ եւս հանգստացած չէր:

Գիշերից բաւական անցել էր, բայց տակաւին վրաններէից շատերի մէջ լոյս էր երեւում: Մեր ընթրիքը տուեցին. նա պատրաստված էր խիստ պարզ կերակուրներից, որոնց մէջ գլխաւոր տեղն էր բռնում մի ամբողջ խորոված գառը:

Ընթրիքից յետոյ բէկը կամեցաւ մեզ զուարճացնել եւ կանչել տուեց մի երգիչ: Նա մի վոքերիկ մարդ էր, ոտքերով կազ, որ շատ նմանում էր մեր աշուղներին, որոնք հաղիւ տզատ են լինում մի որ եւ իցէ մարմնական արատից: Երգիչն ածում էր ջութակի վրայ:

Ենձ մինչեւ այնօր չէր պատահել լսել մի երգ, որ այնքան յատկանիշ լինէր ազգային բնաւորութեան, որ այնքան արտայայտող լինէր ժողովրդական սգուն, որպէս քրդի երգը: Քրդի երգը լսելիս, մարդ միշտ երեւակայում է՝ իրան — քրդին, նիզակը ձեռին, սէգ նժոյգի վրայ նըստած, կայծակի պէս սլանում է լեռների մէջ. . .

Քուրդ աշուղի երգածները հասարակ տաղեր չէին. նա երգում էր մի ամբողջ վէպ, որ ժողովրդական պօէտը առել էր կենդանի անցքերից: Դա մի քաջազնական բանաստեղծութիւն էր, որի մէջ խիստ ազգու կերպով նկարագրված էր այն տրիւնահեղ կռիւր, որ ունեցել էր բէկը-քրդերի մի ուրիշ ցեղի հետ, եւ որի մէջ սպանվել էին նրա երկու որդիներն եւ աւար էին առնուել նրա հօտերը:

«Այսպէս, ասում էր Ասլանը, մի ժամանակ մեր նախարարների տներում երգում էին Գող-

Թան երգիչները, բայց նրանց ձայնը լռեց այն օրից, երբ հայերի մէջ քաջազնական հոգին հանգաւ. . .

Աշուղի բոլոր երգեցողութեան ժամանակ տխուր էր բէկը: Արէժխնդրութեան արիւնը բորբոքվում էր նրա աչքերում, որովհետեւ նա լսում էր սիրելի որդիների արիւնոտ կռիւը, որի մէջ այնքան շատ սպանեցին նրանք եւ սպանվեցան. . .

Նոյն միջոցին վարագուրի յետքից, որ բաժանում էր մեզանից կանանոցը, լսելի եզան դառն հեկեկանքի ձայներ: Մի աղախին դուրս եկաւ այնտեղից, եւ մօտենալով բէկին, ասաց. «Տիկինը խնդրում է, որ այս երգը չ'երգեն»:

Ա՞յլ էր տիկինը:—Պա նոյն տղամարդի ամուսինն էր, որի քաջագործութիւններն էր երգում աշուղը, եւ որը սպանված էր. . .

Ճշմարիտն ասած, ինձ վրայ եւս խիստ դառն տպաւորութիւն գործեցին վիպասանի խօսքերը, որոնք ազգում էին կորով եւ ցաւակցութիւն:

Երեւի, ինքը բէկն եւս ուրախ տրամագրութեան մէջ չէր. նա մեզանից ներողութիւն խնդրեց եւ գնաց քնելու: Նրա գնալուց յետոյ երգիչը նոյնպէս հեռացաւ: Այնուհետեւ Ասլանը ինձ պատմեց, թէ այս անցքը պատճառ էր առել եզիդիների ցեղի տոհմային ռխակալութեանը մի օրիշ ցեղի հետ, որը Վանայ նահանգում նշանաւոր է իր վայրենի բարբարոսութեամբ, որոնց ձեռքում այնքան տանջուած են հայերը. . .

Այս լսելուց յետոյ ես մասամբ հասկացայ Ասլանի եզիդիների բէկի մօտ գալու նպատակը,

հասկացայ նաեւ, թէ ինչ խորհուրդ ունէր Կա-  
թօի նամակի մէջ այն մասը, որով առաջարկում  
էր ծերունի Արսորդին եզիզիների բէկի մօտ գը-  
նալ, եւ նա տտանալով նամակը, էլ չը սպասեց,  
գիշերով ձանապարհ ընկաւ։ Կա մի բանի շա-  
բաթ առաջ էր. եւ նամակը մի գիպուածով իմ  
ձեռքը ընկաւ. . .

Մեզ համար եւս անկողին պատրաստեցին  
քնելու։ Բայց Ասլանը երկար նստեց. նա պատ-  
րաստում էր մի բանի նամակներ, որ վաղ-առա-  
ւօտեան պէտք է Մըհէն տանէր։ Նա ինձ չսօսց,  
թէ ումն է գրում նամակները եւ ոչ ես հա-  
մարձակութիւն ունեցայ հարցնելու, միայն նը-  
կատեցի, թէ խեղճ Մըհէն այնպէս վիրաւոր, որ-  
պէս կարող էր ձանապարհ գնալ։

— Կը գնայ, ասաց նա, այնպիսի վէրքերը  
Մըհէի համար նշանակութիւն չունեն։

Ո՛րքան անգութ են այս մարդիկը. . . մտա-  
ծում էի ես։

Ես սպասել չը կարողացայ, մինչեւ Ասլանը  
վերջացնէր իր գրութիւնները. հէնց գլուխս դրի  
բարձի վրայ, քունս տարաւ։ Բայց երբ աչքս  
ընկաւ նրա նամակներից մէկի վրայ, տեսայ, նրա  
գրուածքը ոչ մի ազգի տառերի չէին նմանում,  
կարծես, դա մի առանձին հնարած գիր լինէր,  
որի գաղտնիքը միայն գրողին եւ ստացողին էր  
յայտնի. . .

Վաղ-առաւօտեան Ասլանը ինձ դարձեցրուց։  
Ես շատ նեղացայ, Այս մարդը դեւի նման քուն  
չունէր, ինձ էլ անհանգիստ էր անում։ Մըհէն

արգէն գնացել էր. ես նրան տեսնել չը կարողացայ: Բայց Ասլանը, նկատելով իմ վրդովմունքը, մի առանձին կարեկցութեամբ ասաց.

— Ես գիտէի, որ քունը քաղցր էր քեզ համար, բայց ես ցոյց կը տամ քեզ մի տեսարան, եւ դու կը ներես, որ քեզ անհանգիստ արեցի:

Նոյն միջոցին ես լսեցի մի տխուր երգի ձայն. —

«Այն քաջ մարդու շապիկն է դա,

Որ իմ ձեռքով կարեցի.

Արիւնտ է, կարմիր ներկած,

Արտասուքով լուացի:

Դա շապիկն է այն քաջ մարդու,

Որ քեզի հայր կոչում է.

«Վրբէժ - վրբէժ չար ոտխից»

Գերեզմանից կանչում է:

Գէ, մեծացիր, իմ նազելի,

Չարի արիւնը խմէ,

Քո մօր սրտին մխիթարանք,

Ուրախութիւն պարգեւէ:

Սարտափելի՛ մի տեսարան էր այդ: Մի մանկահասակ տիկին նստացրել էր իր փոքրիկ երեխային մոխիրների կոյտի վրայ, եւ նրա վզին գցել էր արեան մէջ շաղախոված մի շապիկ: Նա մոխիրը ձանկերով առնում էր գեանից, ցրում էր իր գլխի վրայ, լաց էր լինում, եւ դառն

ձայնով եղանակում էր յիշեալ երգը:

— Այս այն տիկինն է, ասաց Ասլանը, որ գիշերը իր ազախնին ուղարկեց բէկի մօտ, խընդրելու, որ չասել տայ այն երգերը, որոնք յարուցանում էին նրա մէջ տխուր զգացմունքներ: Ամեն առաւօտ, արեւածագից առաջ, ես տեսնում եմ սրան, այսպէս լաց է լինում, սովորեցնում է իր զաւակին վրէժխնդիր լինել հօր մահուան համար: Սովորեցնում է քաջ լինել. . . Այսպէս կրթում է դիւցազնական մայրը իր որդուն, այսպէս պատրաստում է նրան այն կեանքի համար, որ առանց սրի եւ արիւնի կեանք չէ:

Մի առանձին զգացմունքով արտասանեց Ասլանը այս խօսքերը: Բոպէական լռութիւնից յետոյ նա շարունակեց.

— Բայց ի՞նչ է սովորեցնում իր զաւակին հայ մայրը — Սովորեցնում է խոնարհ եւ համբերող լինել. . . Եւ ստրկութիւնը ուսանում է որդին օրօրոցի մէջ. . . «Խոնարհ եւ համբերող լինել» . . . գեղեցիկ խօսքեր են, — քրիստոնէական ընկեր-հաշտութեան խօսքեր են: Բայց մենք բոլորովին ուրիշ աշխարհում ենք ապրում. մեզ դեռ եւս պէտք է հետեւել այն օրէնքին, որ ասում է՝ «ակն ընդ ական». . .

Ասլանը լռիկ մէկն էր, բայց երբ նա սկսում էր խօսել, էլ խօսքերին վերջ չը կար:

— Քուրդ կինը իր զաւակներից գազաններ է զարգացնում, ասաց նա. — բայց հայ կինը պատրաստում է գառներ: Ի՞նչ համեմատութիւն այս երկուսի կենակցութեան մէջ. չէ՞ որ վեր-

ջինը պէտք է զոհ գնայ իր տկարութեամբ առաջինի կատաղութեանը: Արդարեւ, ես ընդդէմ եմ վայրենութեան, բայց անձնազաշտպանութիւնը սուրբ է մարդու համար նոյնքան, որքան արդար վրէժխնդրութիւնը:

Ասլանի խօսակցութիւնը ընդհատեց մի ծառայ, որ ներս մտնելով ասաց, թէ բէկը իր առանձնարանում կոչում է նրան: Նա խիղջն վերկացաւ գնաց: Ես մնացի մենակ, նոյն միջոցին իշխանի աղջիկները ներս մտան, հաւաքեցին մեր անկողինները: Նրանցից մէկը ջուր բերեց եւ սկսեց իր ձեռքով ածել, որ ես լուացվեմ: Լեռների այս հարազատ կոյսը մի սիրուն աղջիկ էր, եւ խիստ հրապուրիչ իր վայրենի գեղեցկութեամբ:

— Ի՞նչ անկողինը ես էի պատրաստել, ասաց նա: — Ի՞նչ հանգիստ բնեցիր, լաւ երազներ տեսար:

— Լաւ երազներ տեսայ: Ես ամբողջ գիշեր խօսում էի մի աղջկայ հետ, որը այնպէս գեղեցիկ էր, որպէս դու:

Այս խօսքը ես ասեցի բոլորովին կատակով, բայց նա շարժեց սիրուն օրիորդի սիրտը, եւ նրա արատաւքի հետ դուրս թափեց մի գաղտնիք, որ ոչ սակաւ զարմացրուց ինձ:

— Ես գեղեցիկ չեմ, ասաց նա, ես մի անպէտք լաթի կտոր եմ, որ ոտքի տակ են գցում: .

Ես ոչինչ չը գտայ նրան պատասխանելու, որովհետեւ չէի խմանում, թէ ինչ մտքով է ասում այդ: Նրա եղբայրները ներս մտան, օրիորդը հեռացաւ:

Արեւը նոր սկսեց ծագել:

Նոյն միջոցին բէկի առանձնարանից յետ դարձաւ Ասլանը, ինձ յայտնեց, թէ ինքը մի ոչ այնքան հեռու տեղ պէտք է երթայ, եւ պատուիրեց սպասել մինչեւ իր վերադարձը:

Զիեքը վրանի առջեւ պատրաստ էին. նա եւ բէկը հեծան, եւ առնելով իրանց հետ մի քանի ծառաներ, հեռացան:

— Ո՞ւր են գնում, հարցրի բէկի որդուց, որ ինձ մօտ նստած էր:

— Սեղանից ոչ այնքան հեռու մի աւերակ բերդ կայ, հայրս միտք ունի նորոգել տալու, գնում են այն բերդը տեսնելու, ասաց նա:

Ինձ շատ հետաքրքրական չէր այդ, որովհետեւ ես ուր որ գնում էի, միշտ աւերակ բերդեր էի տեսնում: Վանայ կողմերի լեռները լիքն են աւերակ բերդերով, եւ նրանք ամենեւին չէին գրաւում ինձ: Բայց նոյն րոպէում իմ միտքը գրաւում էր գեղեցիկ օրիորդը. մտածում էի թէ այն ինչ խօսք էր, որ նա ասաց ինձ, եւ ինչո՞ւ այնպէս ակամայ փղձկեցաւ նա: Բայց որտեղ միւսանգամ կարող էի տեսնել նրան:

Նուտով մեզ նախաճաշիկ տուեցին: Քրդի նախաճաշիկը շատ համեղ է լինում, նա պատրաստված է՝ սերը, կարագը, մածուճը մեղրի հետ խառնած մի բաղադրութիւնից, եւ համեմած է լեռնային լոյսով: Հացը նրանք թխում են երկաթեայ լայն կասկարայի վրայ: Ես վաղ առաւօտեան տեսնում էի, թէ որպէս կանայք փութաջան կերպով հաց էին պատրաստում: Եւ չը նայե-

լով, որ բէկը մի ամբողջ ցեղի գլխաւորն էր, դարձեալ նրա կանանց, աղջիկների եւ հարսների մէջ չէր երեւում այն, որպէս ասած, տիկնութեան անշարժութիւնը, որ տիկիները հանգիստ նստած, տնային բոլոր գործերը ազախիներին եւ սպասաւորներին են կատարել տալիս: Քրդի կինը, թէ իշխանի տիկին լինէր նա եւ թէ հասարակ հովուի, իր տնային գործերը իր ձեռքովն է կատարում: Քրդի տնտեսութեան մէջ անգործ է միայն տղամարդը: Նա առաւօտեան վեր է կենում, կամ իր ձիու հետ է խաղում, կամ իր զէնքերն է մաքրում, կամ վառօդ ու գնդակ է պատրաստում, եւ եթէ ուրիշ գործ չունի, մի ընկեր է գտնում, եւ նստում է նրա հետ, ծըխում է ու իր գլխի անցքերն է պատմում, գլխաւոր արհեստը, որի մէջ նա շահ է բերում իր ընտանիքին, է աւազակութիւնը, — այս գործի մէջ քուրդը ծոյլ չէ:

Նախաճաշիկից յետոյ բէկի որդիքը կամեցան ինձ զուարճացնել եւ առաջարկեցին գնալ որսորդութեան: Ես ընդունեցի: Որսորդութեան համար ամեն ինչ հոգացել էին. ձիերը, շները եւ բազէները արդէն պատրաստ էին: Մենք առաւօտեան հովով դուրս եկանք: Այն հովիտի մէջ, զետեղված էին եզիդիների վրանները, կար մի ընդարձակ, կանանչապատ դաշտ: Այս տեղ բէկի որդիքը կամեցան մի փոքրիկ ձիարշաւ հանդիսացնել: Վրանաբնակների կանայքը կանգնած, նայում էին մեզ վրայ: Նրանք խիստ վարպետ կրիտիկոսներ են տղամարդի արիութիւնների:

Ինչ գժուար է նկարագրել, պէտք է աչքով տեսնել, որ հասկանալ, թէ որքան ճարպիկ, որքան արագաշարժ եւ որքան դեւի պէս խորամանկ է քուրդը, երբ նա հեծած է ձիու վրայ: Ձին ամենայն արագութեամբ վազելու ժամանակ՝ քուրդը ճախարակի նման պտոյտվում է նրա ամեն կողմերը: Երբեմն տեսնում ես, նա մի թըռիչք գործեց, ձիու պարանոցովն անցաւ, եւ կրկին նստեց թամբի վրայ: Երբեմն տեսնում ես, նա իր ոտքերը ասպանդակի մէջ թողնելով, կռայաւ, եւ ձեռքով գետնից հաւաքում է քար, փայտ, կամ իր ձգած նիզակը, եւ նրանցով կարկոտի նման մինը միւսի ետեւից ուժակոծում է իր հակառակորդին, որին հալածում է: Բայց ձին նոյն միջոցում արագ վազում է առանց կանգնելու: Եւ գլխաւորը, որ միջոց է, տալիս քրդին պատերազմել ձիու վրայ, այն է, որ նրա ձեռքերն ամենեւին չեն զբաղված իր նժոյգի սանձը կառաւարելով, նա սանձը բոլորովին բաց է թողնում, եւ իր ծնկերի զանազան շարժումները բաւական են ցոյց տալու ձիուն իր ընթացքի ուղղութիւնը: Եւ իտեպի անասունը այն աստիճան վարժուած է, որ բոլորը հասկանում է, եւ համարեա գուշակում է իր տիրոջ միտքը: Այսպիսով ձիաւորի ձեռքերն ազատ են մնում, եւ նա կարողանում է իր ձին գէպի զանազան կողմեր պտրտացնել, եւ մի եւ նոյն ժամանակ գործ անել իր զէնքերը: — Հրացան արձակել, գարձեալ լեցնել, գարձեալ արձակել, թէ եւ ձին անգագար շարժողութեան մէջ է: Մի

խօսքով, ձին եւ քուրդը գործում են, որպէս մի ամբողջ մարմին, որին մի կամք եւ մի նպատակ է կառավարում:

Այսպէս ես տեսայ բէկի որդիներին, որոնք մի փոքրիկ ձիարշաւ կատարեցին այն դաշտումը: Նրանք հրաւիրեցին ինձ եւս մասնակից լինել, բայց ես հրաժարուեցայ, որովհետեւ բոլորովին անվարժ էի, եւ ինձ խայտառակել չուզեցի:

Բայց ինձ բոլորովին զարմացրին նրանց ձիերը: Զաւիագանց լաւ կրթված էին արշաւանքի համար: Քուրդն երբէք իր նժոյգը չի տալիս ուրիշին հեծնելու, թէեւ նա իր եզրայրը լինէր, որովհետեւ նրանք երկուսը ծանօթ են միմեանց բնաւորութեանը. մի օտար մարդ կարող էր հակառակ վարված լինել ձիու վարժութեանը եւ վայրենացնել նրան: Այս պատճառով առած է գարձել քրդերի մէջ ասել. թէ «երկու բան չէ կարելի ուրիշին տալ հեծնելու համար, մէկը կինը, միւսը ձին»:

Մեր որսորդութիւնը բաւականին յաջող անցաւ: Ես թէեւ ձիարշաւի մէջ ցոյց տուի իմ կատարեալ անկրթութիւնը, բայց որսորդութեան մէջ մի փոքր երեսս պարզացրի. Քրդերը, սովորած լինելով աւելի նիզակի, ատրճանակի եւ սրի կռիւներում, հրացան արձակելու եւ նպատակին դիպցնելու մէջ շատ վարժ չեն լինում: Ես բանիցս անգամ կարողացայ վայր ձգել օդի մէջ թռչող կաքաւին, կարողացայ գետին գլորել նապաստակին իր փախչելու միջոցին, բայց նրանցից միայն երկուսին յաջողվեցաւ այդ անելը:

Ասլանը ինձ հետ ժամանակ չը որոշեց, թէ երբ կը վերադառնայ, այս պատճառով ես շտապում էի շատ չուշանալ, մտածելով, գուցէ նա եկած կը լինէր: Դրա համար մենք վերադարձանք բէկի վրանը, երբ կէսօր էր: Ասլանը գեռ եկած չէր:

Ես շատ սոված էի, բայց ճաշը ուշ տուեցին, որովհետեւ մեր որսած թռչուններից ու երէններից եւս պէտք էր մի բան պատրաստել. բացի գրանից, սպասում էին բէկի եւ Ասլանի գալուստ:

Ես չուզելով անգործ նստել վրանի տակ, եւ ինքնակոչ հիւրի պէս ստասել, մինչեւ ուտելու մի բան տային, գուրս եկայ այն անդից, եւ սկսեցի գլուխ գէպի փոքրիկ վտակը, որ հասում էր հովիտի միջով:

Վէսօր էր: Այս ժամին հողիւները քշում են ոչխարները վրաններին մերձակայ մակադատեղիներում, ուր գնում են կնիկները եւ աղջիկները կաթը կթելու: Նրանք արդէն իրանց գործը վերջացրել էին, եւ կաթնով լի սափորները գլխների վրայ դրած, վերադառնում էին ոչխարների հանգրուանից: Քիչ էր պատահում, որ այդ աղջիկները կամ մանկահասակ կանայքը իմ մօտով անցնելիս, որ եւ իցէ կատակ կամ սրախօսութիւն չարձակէին գէպի ինձ: Նրանք մի բան էին ասում, եւ առանց պատասխանին սպասելու, ծիծաղելով անց էին կենում: Ես յիմարի պէս նայում էի նրանց ետեւից եւ լուռ էի մնում: Վերջապէս հանդիպեց նա, որին ես որոնում էի. —  
— Թութին, այսպէս էին կոչում այն աղջկան,

որ առաւօտեան իմ լուացիւելու ժամանակ թողեց իմ մտքում մի կասկածաւոր կարծիք. այժմ նա դառնում էր ոչխարների հանգրուանից, եւ որպէս իր ընկերուհիքը, կաթնով լիքը սափորը գլխին դրած: Նրա հետն էր այն մանկահասակ կինը, որից առաւօտեան լսեցի աղէտալի երգը: Նրանք տեսնելով ինձ, բաժանուկեցան իրանց խմբից եւ եկան ինձ մօտ:

— Կաթ կը խմե՞ս, եղաւ Թուֆիի առաջին խօսքը:

Քէեւ ես սովորութիւն չունէի հում կաթ խմելու, բայց Թուֆիի խօսքը չը կոտորելու համար, ընդունեցի նրա հրաւերը: Նա լեցրուց փոքրիկ փայտեայ գաւաթը, որ իր հետ ունէր եւ ժպտելով տուեց ինձ:

Նրանք նստեցին վտակի ափի մօտ հանգստանալու: Եւ իրաւ, բաւական յոգնած էին, որովհետեւ հեռու տեղից էին գալիս: Թուֆին սկսեց վտակի սառը ջրով լուանալ իր բորբոքված հրեսը եւ յետոյ սրբեց հագուստի գրոշակով: Նրա ուղեկիցը լուռ էր. ցերեկով ես աւելի պարզ կարողացայ նշմարել նրա գեղեցիկ երեսի տխուր գծերը:

Ես ուղեցի զբաղեցնել նրանց:

— Ի՞նչ ունէ՞ք շատ աղախիններ, ասացի ես, էլ ի՞նչու էք ինքներդ այսքան նեղութիւն բաշում:

— Մենք խօ հիւանդ չենք, պատասխանեց Թուֆին, որ հանգիստ պառկենք ու ոչինչ չը շինենք:

— Այդպիսինն էլ ունի իր գործերը, պատասխանեց միւսը աւելի խոհեմ կերպով:

— Ընկերիդ սրտեղ ես թողել, հարցրուց Թուֆին:

Ես իմացայ, որ Ասլանի մասին է հարցնում:

— Քո հօր հետ գնացել են, չեմ իմանում որտեղ:

— Նրա սրտում սատանայ է նստած, դու գիտե՞ս, հարցրուց Թուֆին բարկացած ձայնով:

— Ի՞նչու ես այսպէս խօսում, խենթ, զգուշացրեց նրան տիկինը եւ սկսեց կշտամբել: — Ասլանը շատ լու տղայ է:

— Բայց ձիւնի պէս սառն է նա:

— Ի՞նչու, նրա համար, որ քեզ հետ սիլիբիլի (սեթեւեթ) չէ՞ անում:

Այս երկուսի վիճելուց ես խփոյն հասկացայ Թուֆիի ատելութեան պատճառը դէպի Ասլանը: Երեւում էր, խղճալի ազգիկը սիրում էր նրան, եւ սառնասիրտ, անգույն Ասլանից մերժված էր եղել: Բայց Թուֆին չը հանգստացաւ տիկնոջ խօսքերով, եւ աւելի բարկանալով ասաց.

— Ես միշտ կասեմ, նրա սրտում սատանայ է նստած. նա խիղճ չունի. դրա համար էլ ոչ մի ազգիկ նրան լու տղամարդ չի ստի. . .

Ես նկատեցի նրա աչքերի արտասուքը. նա էլ չը սպասեց, առեց իր սափորը եւ սկսեց դիմել դէպի վրանները:

Նրա գնալուց յետոյ տիկինը ինձ պատմեց, թէ մի օր բէկի վրանում մի քանի քուրդ իշխաններ ժողով են ունեցել, նրանց մէջն է եղել

եւ Ասլանը: ծողովի խորհրդածութիւնը հասել է տաք միճարանութեան, որի մէջ Աբդուլլահի որդի Ահմէն խօսքով վերաւորել է Ասլանին: Այս Ահմէն նշանաւոր էր քրդերի մէջ իր ժանտ բնաւորութեամբ եւ մի եւ նոյն ժամանակ իր տարօրինակ ուժով: Ասլանը չէ համբերում, յարձակվում է նրա վրայ, եւ երեխայի նման կաշկանդելով, խլում է ծողովի միջից, եւ վրանից գուրս բարշ տալով, կամենում է սպանել նրան: ծողովի բոլոր իշխանները վրայ են թափվում, հազիւ կարողանում են ազատել վիթխարի Ահմէին Ասլանի ձեռքից: Թութին տեսնում է այս կռիւը, եւ «այն օրից, ասաց տիկինը, խեղճ ազջիկը գժուած է Ասլանի համար» . . .

— Բայց նա որքան քաջ է, այնքան եւ լամարգ է, աւելացրուց տիկինը:— Ետտ անգամ նա մխիթարել է ինձ սիրելի ամուսնիս մասին, շատ անգամ խրատներ է տուել, թէ որպէս պէտք է կրթեմ սիրուն դաւակիս: Նա մի կատարեալ շէշ է, միայն գիրքն է պակաս . . .

Ինձ շատ գրաւեց տիկնոջ համակրական զգացմունքը դէպի ազնիւ մարդը:

— Թութին խենթ է, ասաց նա, չէ ճանաչում նրան:

Եւ նա դիմեց դէպի վրանները, ինձ թողնելով վտակի ափի մօտ:

Ասլանը եւ բէկը վերագարձան խիստ ուշ, քան թէ մենք մտածում էինք: Եկածին պէս նա մի փոքր հաց խնդրեց, կերաւ, եւ ինձ պատուիրեց, որ պատրաստովեմ, որովհետեւ կէս ժամից

յետոյ ինքը պէտք է ճանապարհ ընկնէր դէպի Վան գնալու: Նոյն միջոցին նա բաց արեց թըղթերի մի պահարան, եւ կամենում էր այնտեղ դնել մի հաստ թերթ, որի վրայ երեւաց ինձ մի նկարված պատկեր: Ես մտայ, որ տեսնեմ պատկերները: Նա չը գողեց ինձանից եւ ցոյց տուեց:

Վա աւերակ բերդի պատկերն էր, որին գնացել էր նա հետազօտելու: Թղթի վրայ երեւում էր բերդը իր աշտարակներով եւ կիսակործան փլատակներով, երեւում էին լեռները, շաւիղները եւ բերդի բոլոր մերձակայքը, այնքան կենդանի կերպով նկարված, որ կարծես, խկականը լինէր: Վա Ասլանի շնորհալի ձեռքի գործն էր: Սեւ մատիւր ամենայն ճարտարութեամբ հնազանդել էր նրան: Եւ ես առաջին անգամ տեսնում էի մի այսպիսի հիանալի պատկեր:

Ասլանը տեսնելով, որ ես շատ գրաւվեցայ, ցոյց տուեց ինձ մի քանի ուրիշ թղթեր եւս, բայց նրանք պատկերներ չէին, ես նրանցից ոչինչ հասկանալ չը կարողացայ, ինձ երեւում էին միայն թղթի վրայ խաղիսղած սեւ գծեր, որոնք բաժանած էին գոյնզգոյն ներկերով:

— Դրանք ի՞նչ են, հարցրի Ասլանից:

— Վանայ նահանգի աշխարհագրական քարտէզներն են, պատասխանեց նա:

Ես դարձեալ ոչինչ հասկանալ չըկարողացայ:

— Այս թղթերի վրայ, ասաց նա, նկարված են Վանայ նահանգի բոլոր գիւղերը, լեռները, գետերը, գաշտերը, մի խօսքով, ինչ որ ստեղծել են բնութիւնը եւ մարդիկ:

— Յոյց տուր մի գիւղ, ասեցի նրան:

Նա ցոյց տուեց փոքրիկ օ-ի պէս մի բան, որի մօտ խազած էր նոյնպէս փոքրիկ մի խաչ:

— Դա, ասաց, սուրբ Տիրամօր գիւղն է, որտեղ դու ուխտ էիր գնացել: Իսկ այն խաչը վանքն է:

— Այս ի՞նչպիսի գիւղ է, որտեղ ոչ մի մարդ չէ երեւում, հարցրի ես:

Նա ծիծաղեց միայն եւ ոչինչ չը պատասխանեց:

— Դրանք էլ դու ես նկարել, հարցրի ես:

Նա գլխով շարժեց, թէ այո՛:

— Բայց ի՞նչ բանի պէտք են գրանք:

— Բժիշկին երբ որ կամենում է բժշկել մի մարդու հիւանդութիւնը, նախ եւ առաջ պէտք է ծանօթանայ նրա մարմնի կազմուածքի հետ, պատասխանեց նա — եւ մենք, եթէ կամենում ենք մեր հայրենիքին որ եւ իցէ օգուտ մատուցանել, նախ եւ առաջ պէտք է ճանաչենք նրան:

Մեր ձիերը վրանի առջեւ կանգնած էին. ինձ համար պատրաստել էր տուել բէկը մինը իր ձիերից: Ես յայանեցի նրան, թէ ինչ պայմանով էի ընդունել ինձ ընծայած ձին հայ վրանաբնակիների գլխաւորից, եւ աւելացրի, թէ ես այժմ իրաւունք ունէի նրա տուած պարգեւը ինձ հետ տանել, որովհետեւ իմը չը գտնվեցաւ: Ուրեմն բէկին պէտք չէր իր ձիերից մէկը անհանգիստ անել:

— Ձեր ձին գտնուածի հաշուումն է, որովհետեւ նրա փոխարէն մենք ունենք տասը հատ:


ասաց բէկը ծանր կերպով. — Բայց հայ վրանա-  
բնակիների գլխաւորի քեզ ընծայած ձին ես վա-  
ղուց արգէն գարձրել եմ իր տիրոջը:

Ես ստիպվեցայ ընդունել բէկի պարգևը,  
որի վրայ աւելացրուց նա մի զոյգ ատրճանակ,  
ասելով.

— Այս ատրճանակները նոյնպէս ընդունե-  
ցէք իմ կողմից որպէս ընծայ, գրանք Բախի-  
սարայի ընտիր գործ են: Երբ որ կը յաջողի  
ձեզ գրանցով սպանել ձեր թշնամիներից մէկին,  
միշտ յիշեցէք եզիդիների բէկին:

Ասլանը մինչ այն աստիճան ընտանեցած էր  
բէկի գերգաստանի հետ, որ մինչեւ անգամ մը-  
տաւ կանանոցը եւ ամենի հետ մնայք բարեաւ  
ասաց: Բոլորը շատ սիրով մեզ ճանապարհ գը-  
րին, միայն մի հոգի գժգոհ էր. գա էր գեղե-  
ցիկ Թութին, որ վրանի ետեւում մենակ կանգ-  
նած, լաց էր լինում . . .

Արեւը մտաւ, երբ մենք հեծանք ձիերը: Ես  
չը կարողացայ հասկանալ, թէ ինչ էր պատ-  
ճառը, որ Ասլանը միշտ գիշերով էր ճանապարհ  
գնում:



Գ Ի Ժ Տ Ե Ր Տ Ե Ր Ը Ե Ի Բ Ժ Ի Շ Կ Ը

Երկրորդ առար առաւօտեան պահուն մենք հասանք ոչ այնքան հեռու Վանից մի հայաբնակ գիւղի—Սյստեղ, ասաց Ասլանը, պէտք է փոքր ինչ հանգստանալ: Ինձ շատ հաճելի էր նրա խօսքը, որովհետեւ ամբողջ գիշերը չէինք քնել, անգագար ճանապարհ էինք եկած:

Նա ձին քշեց գէպի մի տուն, որ գիւղի քահանային էր պատկանում, ես էլ հետեւեցի նրան: Քահանան յայտնի էր այս կողմերում իր մականունով՝ «գալի քէշիշ» — որ նշանակում է զե՛՛՛ր րե՛րրե՛ր, բայց ոչ այն տեսակ գժերից, որոնք խելք չունեն, այլ այն տեսակներից, որոնք մեր գրաբար լեզվում արտասանվում են բառերովս «խօլ» կամ «վիրագ»:

Մենք հասանք նրա տանը նոյն ժամանակում, երբ նա մի քանի մարդկանց իր դռան առջեւ կապած, ծեծ էր տալիս:

— Հը՛մ, տէրտէր, էլ ի՛նչ կայ, ասաց Ասլանը նրան տեսնելով:— Գարձեալ արգարութեան գաւազանը ձեռք ես առել . . .

— Այս անպիտաններին պէտք էր մի փոքր խրատել . . . պատասխանեց նա անփոյթ կերպով եւ մօտեցաւ մեզ:— Գէ, դաժ իջէք, Վանից նոր բերել տուած լաւ արաղ եւ գինի ունեմ:

— Բայց մինչեւ մենք կը խմէինք ձեր լաւ արաղն ու գինին, դուք հրամայեցէք, որ այս «անպիտաններին» արձակեն, ասաց Ասլանը ծիծաղելով:

— Ա՛յ, դուք իմ դատաստանական գործերը մի խառնէք, անպիտանները պէտք է պատժուին, ասաց նա:— Գնանք տուն:

Յանցաւորներն երկու քրդեր էին, որոնք, ասում էր տէրտէրը, գողացել են գիւղի նախիրից երեք կովեր: Ասլանը այս լսելով, այլ եւս չը միջնորդեց, մտանք տէրտէրի տունը: Նա մեզ տարաւ մի սենեակ, որ իր հիւրանոցն էր եւ մի եւ նոյն ժամանակ քնարանը, բայց տէրտէրը նրան կոչում էր «է-տէ-տէ-տէ» այսինքն գիււանատուն:

Ես մտածում էի, թէ այնտեղ կը գտնեմ տէր Թօգիկի սենեակի նման զանազան կախարդական գրքեր կամ Այամաուրք. բայց մի թղթի պատառ անգամ չը կար այնտեղ: Անտեղ կային նիզակներ, հրացաններ եւ զանազան տեսակ զէնքեր:

Տէրտէրը, որպէս երեւում էր, առաջուց գիտէր Ասլանի նոյն ժամուն իր տունը գալը, գիտէր նաեւ, թէ որտեղից է գալիս նա: Ես խոկոյն հասկացայ, որ Ասլանը եւ «գիժը» նախաձանօթներ էին, գուցէ շատ մօտ բարեկամ-

ներս Բայց ի՞նչ գործ ունէր խելացի Ասլանը  
«գժի» հետ :

Տէրտէրը բաւական բարձրահասակ եւ ցա-  
մաք մարդ էր. նրա կազմուածքի բոլոր գծերից  
երեւում էր վայրենութիւն: Ինչ որ աւելի սար-  
սափելի էր եւ անախորժ, էր նրա ձայնը, որ  
խօսելու միջոցում որոտում էր: Նրա ձախ ձեռքի  
երեք մատները կտրած էին, երեւի, սրով, իսկ  
գլխի ու պարանոցի վրայ նոյնպէս վէրքի նշան-  
ներ կային, Եթէ Ասլանը չասէր ինձ, թէ նա քա-  
հանայ է, ես կը համարէի «գժին» մի աւազակ,  
որ իր ամբողջ կեանքը անցուցել էր յափշտա-  
կութիւններով եւ մարգասպանութեամբ:

Հէնց որ մտանք «դիւանատունը», նա մօ-  
տեցաւ մի պատուհանի, վարագոյրը յետ քաշեց  
եւ այնտեղից դուրս բերեց մի ահագին շիշ վիքը  
արաղով. նախ լեցրուց ինքը խմեց, յետոյ տուեց  
Ասլանին, եւ ապա ինձ առաջարկեց, ասելով.

— Ա՛ռ, խմիր, ոսկորներդ կը պնդացնէ, յոգ-  
նած ես:

Տեսնելով ահագին բաժակը, ես սարսափեցայ:

— Արաղ խմելու սովորութիւն չունեմ, ասեցի:

— Խ՛նչու, տիրացու, հարցրուց նա, իր սոս-  
կալի աչքերով ուղիղ իմ երեսին նայելով:

— Տիրացու չէ, պատասխանեց Ասլանը:

— Բայց շատ նման է, ասաց նա հեզնա-  
կան ձայնով:

— Մենք նրան տիրացութիւնից ազատեցինք,  
պատասխանեց Ասլանը խորհրդական ձայնով:

— Այդ լու է . . . խօսեց նա եւ մօտեցաւ մի

ուրիշ պատուհանիւ—Ես կը տամ քեզ «կարմիր հարսի արտոյ», ասաց նա եւ դուրս բերեց վարագուրի ետեւից մի ուրիշ շիշ, լցրած դեղնագոյն ըմպելիքով:

Ես նրանից խմեցի, որովհետեւ բաւականին քաղցր էր եւ ախորժելի Յետոյ տէրտէրը մօտեցաւ լուսամուտին եւ ձայն տուեց.

—Տիրօխնի, սատանան քեզ տանի, որտեղ ես կորի:

Իսկոյն յայտնվեցաւ մի կարճիկ հասակով կին, եւ սկսեց Ասլանի հետ բարովել: Պա տէրտէրակինն էր, բաւականին համակրական մի կին:

—Գնա՛ այդ նոր հիւրի երեսն էլ պալէր, քօռացած, ասաց «գիժը» իր կնոջը:

Նա գրկեց ինձ եւ սկսեց երեստ համբուրել:

—Գէ, հիմա գնա ինչ «հոգու բաժին» որ ունես, բոլորը բեր. դրանք քաղցած են:

Երէցկիները մի թեթեւ ժպիտ գործեց փոքրիկ երեսի վրայ եւ դուրս վազեց: Երեւում էր, նա շատ ուրախ էր իր հիւրերով, եւ գնաց մեզ համար նախաճաշիկ պատրաստելու:

«Գիժը» փոքր առ փոքր սկսեց ինձ դուր գալ. նրա առաջին ժանտութիւնը, որ ինձ վրայ վատ տպաւորութիւն գործեց, կարծես թէ անցաւ, եւ նա երեւում էր ինձ մի մարդ չափազանց սրբղ եւ բարեմիտ:

Ասլանը հարցրուց տէրտէրից, թէ որտեղ են պահված իր «խրեղէնները»: Նա ցոյց տուեց մի ուրիշ սենեակ, եւ Ասլանը առանց առաջնորդի մտաւ այնտեղ: Ես մնացի տէր հօր հետ մենակ:

— Կարգացել էս, հարցրուց նա ինձանից:

— Կարգացել էմ, պատասխանեցի ես:

— Ո՞ւմ մօտ:

— Մեր թաղի քահանայի, Տէր Թօղիկի մօտ:

— Հասկացայ . . . — Դեռ չէ սատկել այն աւաղակը:

— Մնում է, պատասխանեցի ես: — Բայց դուք սրտեզից էք ճանաչում նրան:

— Ո՞վ չէ ճանաչում այն անպիտանին. նա Դատվանի «գզիրն» էր, էլ չարութիւն չը թողեց, որ չը գործէր: Վերջը «ռէսին» սպանեց, փողերը կողոպտեց, փախաւ, եկաւ Սալմաստ, այնտեղ անունը փոխեց, եւ ասաց, թէ անապատի ձգնաւոր էմ, այսպիսով քահանայ դարձաւ. հիմա սկսել է կախարդութիւններով ժողովրդին խաբել: — Այդպէս չէ:

Այս խօսքերը լսելով, ես բոլորովին զարմացայ:

— Դու ի՞նչպէս պոճար նրա ձեռքից, հարցրուց ինձ:

— Փախայ նրա ուսումնարանից:

— Խելացի բան տեսար: Երանի՛ թէ Կարօ՛ հետ փախած լինէիր. հիմա մի օրինաւոր մարդ դարձած կը լինէիր . . . — Ա՛խ, թէ մի անգամ ձեռքս կ'ընկնէր այն անպիտանը . . .

— Ի՞նչ կանէիք, հարցրի ես ծիծաղելով:

— Ի՞նչ պէտք է անէի, իր հանգուցեալ հօր մօտ կուղարկէի . . .

Մեր խօսակցութիւնը ընդհատեց մի մարդ, որ դուրս եկաւ այն սենեակից, ուր մտել էր Ասլանը:

Նա աչքերին ակնոցներ ունէր դրած եւ ոտքից ցգլուխ հագնուած էր երոպական ձեւով: Ես առաջին անգամ տեսնում էի այսպիսի հագուստով մարդ: Նոյն միջոցին ներս մտաւ եւ երէցկիւնը նախաճաշիկի մատուցարանը ձեռին բռնած, եւ տեսնելով երոպացուն, երեսը խաջակնքեց, ասելով.

— Վահ, Տէր Յիսուս, չարը տանես, բարին բերես . . .

Տէրտէրը մի անկիւնում կանգնած ծիծաղում էր: Ես լաւ ղննեցի, տեսայ, որ երոպացին ոչ այլ ոք էր, եթէ ոչ Ասլանը, միայն կերպարանափոխ եղած, որպէս շատ անգամ տեսել էի նրան արեղայի հագուստով, կամ վանեցի վաճառական ձեւացած:

— Հը՛մ, երէցկիւն, դարձաւ նա դէպի միամիտ «տիրօսնին» — եթէ գիշերով տեսնէիր ինձ, ի՞նչ կանէիր:

— Ի՞նչ պիտի անէի, երեսս խաչ կը հանէի, դու դեւի պէս կը խափանվէիր:

— Ես խօ դեւ կամ սատանայ չեմ, որ խաչից վախենայի:

— Բայ սատանան ի՞նչպէս կը լինի — Ափսոս չէ՛ին առաջվայ շորերդ, որ փոխեցիր:

— Ես ամբողջ տասը տարի այսպէս եմ հագնուած եղել . . . պատասխանեց Ասլանը

— Սուրբ տիրամերը վկայ, դա լաւ չէ, ախար, ինչի՛ է նման այսպիսի նեղ վարդիքը:

— Դրանք թող մնան, կտրեց տէրտէրը կնոջ խօսքը: — Հիմա պէտք է տեսնենք, թէ ի՞նչ բանի է

նման քո բերած նախաճաշիկը՝

Տէրտէրը յետ քաշեց մի ուրիշ վարագոյր եւ նրա ետեւից դուրս բերեց մի մեծ սրուակ գինի, գրեց իր կողքին եւ նստաւ սեղանի մօտ։ Մենք եւս մօտեցանք ուտելու։ Նախաճաշիկը քաւականին լաւ էր պատրաստած. շատ ապրի տէրտէրակինը, ամենեւին չէր երեւում, թէ հասարակ գիւղացու եփած կերակուրներ լինեն։ Բայց տէրտէրակինը գիւղացի չէր, նա Վանայ քաղաքիցն էր, եւ որպէս յայտնեց ինձ յետոյ Ասլանը, նա տէր հօր երկրորդ կինն էր, որի հետ ամուսնացել էր նա իր քահանայութեան ժամանակ, առաջին կինը մեռնելուց յետոյ, Թէեւ հայ քահանաներին թոյլ տրուած չէ երկրորդ ամուսնութիւն, բայց «գիժը» այն տէրտէրներից չէր, որ ենթարկուէր եկեղեցական կանոնների։ Նա ամեն բանի մէջ, որպէս ռամկօրէն ասում են՝ «չօմախի (մահակ) զօռով էր գործում» . . . բայց որպէս եւ լինէր, տէրտէրն եւ երէցկինը շատ սիրով էին երեւում միմեանց հետ։

Հացի ժամանակ Ասլանը հարցրուց, թէ ի՞նչ նոր լուրեր կան Վանից։

— Ազգային գործերը վատ չեն, պատասխանեց տէր հայրը ծանր կերպով. — Պ . . . -ը ողջ եւ առողջ է, գիշերները բօշաների լակոտներ պարածելով է անցկացնում . . . իր ձեռները նրանց շլինքին է փաթաթում . . . Քրգերին՝ սովորեցնում է այս եւ այն վանքի հունձքի գէղերը կրակում են, որ գիշերները լոյս լինի . . . Տօնախրմբութեանց ժամանակ ինքն էլ յետ չէ մնում։

Հասարակաց ուրախութիւնից, եւ իր ժողովուրդը բարոյապէս մխիթարում է. կոյս աշխիկներ եւ ջահիլ հարսներ է փախցնել տալիս, որ Հայոց զաւակներն աճեն, ազգը բաղմանայ . . . Եթէ մի անպատիւած աղջկայ հայր գալիս է նոյն անպատիւոյի մօտ բողոքելու (ուրիշ հրօտել կարող է գնալ խեղճը), նրան մի փոքր խրատում է, փայտի տակ է գցում, ոսկորները լաւ ջարդում է, որ փափկանան . . . Յետոյ նրան ասում է. «գնա, եղբայր, այս աշխարհը քո տեղը չէ, դու մեծի պատիւը չես հասկանում»: Նա ականջ է դնում նրա խրատին եւ գնում է միւս աշխարհը . . . Մի ուրիշ սովորութիւն էլ ունի նա, որից երեւում է, որ նա շատ բարեսիրտ է: Երբ քրդի աւազակները հայոց գիւղօրայքը թաղնում են, եւ դժբախտաբար բռնւում են, նա քրիստոնէական մարդասիրութեամբ գնում է փաշայի մօտ եւ աւազակներին աղատում է, դրա համար քրդերը նրան «հայր» են կոչում . . . Մի ուրիշ լաւ կանոն էլ ունի նա, երբ մէկին կամենում է խրատել, նրանից փող է աւնում, «ոչինչ պատիժ, ասում է նա, այնպէս չի ցաւեցնի ադամաորդուն, որպէս փողը, որովհետեւ շատ է սիրում»:

— Բայց ի՞նչպէս մինչեւ այսօր նոյն խրատներից զուրկ մնացիք դուք, հարցրուց Առանը վրդովված ձայնով:

— «Գիժը գժին երբ որ կը տեսնի, իր մահակը կը թաքցնի», ասաց նա թուրքի առածով: — Թէեւ նա աւազակ է, բայց ես էլ շատ բարի պտուղ չեմ . . .

— Լաւ, դու այն ասած, ինչ աչքով են նայում քաղաքի իշխաններն այդ աւազակի այս տեսակ առաքինութիւնների վրայ, հարցրուց Ասլանը:

— Նրանք անշնորհակալ մարդիք չեն, ընդհակառակն, շատ երախտագէտ են, պատասխանեց տէրտէրը առաջուայ ծանր կերպով:— Նրանք իրանց պարտքը լաւ ճանաչում են, եւ ամեն ամիս ժողովրդի կողմից շնորհակալութեան վրկայականներ են ուղարկում Պօլիս եւ նրան մեծ մարդկերանց հետ են համեմատում: Բայց պէտք է ճշմարիտն ասած, նա էլ չէ մոռանում իր պարտոտ որսերից երբեմն նրանց բերանը փոքրիկ պատառներ գցել:

— Փաշայի հետ ինչպէս է նա:

— Որպէս եղ ու մեղր, — այնքան քաղցր են:

— Դա նոյն փաշան է, որ միանգամ հայոց եկեղեցու սեղանի վրայ բոշայ տղաներ էր պարածել տուել եւ գինի էր խմել:

— Լէնց նոյնը: Նա էլ հէնց փաշայից սովորեցաւ բոշաների պարածելը:

Բոլոր այս խօսքերը, ինչ որ ասում էր տէրտէրը, թէեւ ինձ շատ հասկանալի չէին, բայց որպէս նկատում էի, խայթոցի նման ծակում էին Ասլանի սիրտը: Նրա պարզ դէմքը հետզհետէ մթնում էր եւ նրա ձայնը զայրացած եղանակ էր ստանում:

— Ինձ բոլորովին անհաւատալի է թւում, ասաց նա, — Վանայ ժողովուրդը իր նահապետական պարզմտութեան մէջ չէր կարող համբերել այժ

աստիճան չարագործութիւնների: Այդ նշանա-  
ւոր մարդու վատ օրինակը աւելի շատ գայթակ-  
ղեցնում է, աւելի շատ վիրաւորում է միամիտ  
ժողովրդի զգացմունքը:

«Նիզակը գողացողը առաջ նրա թագցնե-  
լու տեղը կը գտնի», պատասխանեց տէրտէրը:—  
Նա շատ ճարպիկ է իրան արդարացնելու խօսքեր  
գտնելու մէջ: Երբ նրան ասում են, թէ դու ի՞նչ  
գործ ունես փաշայի, կամ այս եւ այն աւազակ  
քրդի եւ բօշայ պար եկողների հետ:—Նա միշտ  
Պօղոսի, իր անուանակցի, խօսքերը վկայութիւն է  
բերում, թէ «պէտք է հրէայի հետ հրէայ լինել  
եւ հեթանոսի հետ հեթանոս: Ասում է, թէ ես  
ժողովրդի օգտի համար եմ նրանց հետ բարե-  
կամութիւն պահպանում, եւ մահաբաւանդ-  
ներով չեմ նշնակում հետեւում, որ նրանց հաճոյա-  
նամ եւ իմ ազգի շահերը պահպանեմ:

— Զարագործ, ասաց Ասլանը:— Վաստիկները  
միշտ այսպէս էին իրանց արդարացնում:

Թէեւ Ասլանը առաջուց ասում էր, շատ  
քաղցած եմ, բայց համարեա ոչինչ չը կերաւ:  
Տէրտէրն էլ նկատեց այս եւ հարցրուց.

— Ի՞նչու չես ուտում:

— Ախորժակս աւերվեցաւ, ասաց նա:

— Ա՛ռ խմիր, թող սիրտդ հովանայ, դար-  
դերդ կը մոռանաս:

Ասլանը ընդունեց գինու ահագին գաւաթը,  
միանգամով խմեց:

— Բայց քո ախորժակը տեղն է, դարձաւ  
դէպ ինձ տէրտէրը. — որովհետեւ դու չես մտա-

ծում այն բանի վրայ, թէ Վանում ինչեր են կատարուում:

— Ես դրա համար գնում եմ այնտեղ, որ տեսնեմ, ինչպէս քաղաք է:

— Աւելի լաւ կանես, որ տեսնես, մարդիկ ինչպէս են ապրում այնտեղ, ասաց քահանան:

Այնուհետեւ Ասլանը եւ տէրտէրը գնացին մի առանձին սենեակ, այնտեղ առ ժամանակ տաք տաք խօսում էին. ես ոչինչ հասկանալ Նրանց խօսքերից չը կարողացայ, որովհետեւ հեռու էին: Ասլանը դուրս եկաւ շատ վրդովված, եւ հրամայեց իսկոյն պատրաստել ձիերը:

— Դուք մտածեցէք, որ եւ է բան չը մտնանալ այնտեղ, ասաց քահանան:

— Ինչ որ պէտք էր վեր առնել՝ ես տեղաօրեցի այն երկու արկղների մէջ, ասաց Ասլանը:— Բայց դուք պատրաստեցէք մի ձի արկղները կրելու համար եւ մի ծառայ, որ ինձ հետ լինի:

— Կէս ժամից յետոյ կարող ես ճանապարհ ընկնել, դուք համեցէք, այս մի գաւաթն էլ անուշ արէք:

Ասլանը ընդունեց եւ խմեց:

Տէրտէրի խօսակցութեան մէջ «դու» եւ «դուք» մի եւ նոյն նշանակութիւնն ունէին. նա խառն ամեն կերպ գործ էր անում:

— Ո՛ւր են, տղերքից ոչ մէկը չէ երեւում, հարցրուց Ասլանը:

— Ամենքն իրանց սիրելի խանումներին առած, գնացել են սարը ոչխարների մօտ. Ալմաստն էլ այնտեղ է. ես եւ իմ թանգագին «տիրօխնին»:

մնացել ենք տանը: — Քահանայութիւնը ծանր պաշտօն է, աւելացրուց նա:

— Եւ դու ճշմարտութեամբ կատարում ես... այնպէս չէ՛, հարցրուց Ասլանը ծիծաղելով:

— Աւելի լաւ, քան մեր տէր Մարութը, որը քերականութիւն է կարգացել: Իմ մկրտածները աւելի լաւ քրիստոնեաներ են դառնում, եւ իմ թաղած մեռելը գերեզմանից բնաւ չէ վեր կենում . . .

— Բայց այն ի՞նչպէս եղաւ, որ միանգամ երեխային աւազանի մէջ խարշեցիր: — Պատմիր, տեսնեմ:

— Դա հին բան է, հիմա այնպէս չեմ անում:

— Պատմիր, թող Ֆարհատն էլ լսէ:

Տէրտէրը շատ ծիծաղելի կերպով պատմեց, թէ իրանց երկրում սովորութիւն կայ, երբ ձրմեռը երեխային եկեղեցում մկրտելու են բերում, նրա հետ տաք ջուր են բերում աւազանում լեցնելու համար: Մի մկրտութեան ժամանակ տատմօր բերած ջուրը շատ տաք է լինում, տէր հայրը այնպէս լցնում է աւազանի մէջ, եւ չէ մտածում փորձել տաքութեան աստիճանը: Էնց որ տղային կոխում է աւազանի մէջ, խեղճը խփոյն խարշվում է, եւ տէրտէրը այն ժամանակ միայն հասկանում է, թէ նա մեռաւ, երբ նկատում է, որ էլ ձայն չէ հանում: Ե՛րա փչացաւ, ասում է կնքահօրը, թէ կայ, գնացէք մի ուրիշը բերէք: որ մկրտեմ:

Տէրտէրը մեզ երկար ջր պահեց՝ երեսում էր, նա ինքը նոյնպէս շտապում էր, որ մենք շուտով

ճանապարհ դուրս գանք: Ինքը եւ երէցկիւնը եկան մեզ հետ մինչեւ գիւղից դուրսը, եւ այնտեղից բարեմաղթութիւններով բաժանվեցան մեզանից:

Գիւղը, ուր գտնվում էր տէր հօր տունը, նստած էր լեռների կուրծքի վրայ, եւ չորեք կողմից, որպէս բնական պարիսպներ, շրջապատել էին նրան սեպաձեւ բլուրներ, որով նա ստացել էր շատ ամուր եւ անառիկ դիրք:

— Տեսնում ե՞ս այս գիւղը, ասաց Ասլանը, երբ հեռանում էինք այնտեղից.— Նա ունի յիսուս տուն միայն, բայց ամբողջ մի ամիս պատերազմեց աւելի քան 500 քրդերի հետ, եւ մընաց դարձեալ անառիկ:

— Որովհետեւ ամուր դիրք ունի, պատասխանեցի ես:

— Այդ չէ միայն պատճառը, բնակիչները քաջ եւ սրտոտ մարդիկ են:

— Որովհետեւ այնպիսի քահանայ ունեն, որպէս «գիժը»:

— Զարմանալի մարդ է դա, պատասխանեց Ասլանը.— Ինչ նրա կատակներին մի նայիր, բաւականին խելք ունի, եւ շատ բարեսիրտ է:

Այնուհետեւ Ասլանը պատմեց մի քանի հետաքրքիր անցքեր «գժի» կեանքից, որոնց ամենի մէջ երեւում էր նա չափազանց յանդուգն եւ մեծասիրտ բնաւորութեամբ.— մի արկածախնդիր մարդ, որ իր ամբողջ կեանքում կռուել էր զոհազան դժուարութիւնների դէմ: Նրա ձեռքերը մաքուր չէին մնացել եւ արիւնից. նա շատ անգամ սպանել է, յափշտակել է, աւար եւ գերի

է բերել նատ անգամ եւս յաղթվել է, բոլոր կայքը թշնամուց յափշտակվել է, եւ նրա առաջին կինը եւ որդիքը սրի բերանն են ընկել: Մի փոքր նշմարվող խելագարութիւնը այս անգործ յետոյ է պատահել:

— Այսուամենայնիւ, շարունակեց Ասլանը, տէր Մեսրոպը ժողովրդից շատ սիրված մարդ է. մօտ տասն հայոց գիւղեր այս կողմերում գտնվում են նրա հովանաւորութեան ներքոյ: Եւ բոլորը հօր նման պաշտում են նրան: Մի սաստիկ սովի ժամանակ, նա ծախեց ինչ որ ինքն ունէր, եւ ծախել տուեց հարուստներինը, եւ այսպէսով պահպանեց աղքատների կեանքը: Նա իբրեւ քահանայ, թէեւ անյարմար է, բայց իբրեւ կառավարող անձն, ունի շատ արժանաւորութիւններ: Այս պատճառով է, որ կարողացել է իր ձեռքի տակը պահել այս լեռներում գտնված բոլոր հայոց գիւղօրայքը, առանց թոյլ տալու որ եւ իցէ քրդի կամ թուրքի միջամտութիւն գործել նրանց հասարակական գործերի մէջ:

— Բայց կարգալ իմանում է, հարցրի ես:

— Նա անգրագէտ է եւ իր անունը հազիւ է գրում: Բայց իմ կարծիքով, այսպիսի քահանաներն աւելի լաւ են, քան թէ նրանք, որ աստուածաբանական միջին խնդիրների մէջ թթուած, ժողովրդին աւելի մոլորութեան եւ հակառակ էրէզմի մէջ են գցում: Այսպիսի ժողովուրդը կեանք եւ հիմք չունի երկրի վրայ:

Տէր Մեսրոպը, առաջ տարաւ նա, հայ քահանայի տիպ չէ: Նա, աւելի յարմար է ասել,

բրդի շէյխ է, որ մասնակից է լինում իր ժողովրդի բոլոր կարիքներին. — կռիւի ժամանակ քաջ զինուոր է, խաղաղութեան ժամանակ քահանայ է եւ դատաւոր: Միշտ այսպէս են եղել խաշոնարած ցեղերի քահանաները: Այսպէս էին եւ Արրահամը, Իսահակը, Յախորը ու նրանց յաջորդները: Մեր ընկերներից մէկը քահանայ է, — չեմ ուզում անունը տալ, — եւ լաւ քահանայ, գիտէ յունաց, երբայեցոց եւ լատինացոց լեզուները, կարգացել է այն բոլոր գրքերը, ինչ որ վերաբերում է Աստուծուն, սկսած այն օրից, երբ յայտնվեցաւ մարդերի մէջ աստուածութեան գաղափարը: Բայց այս երեւելի աստուածաբանը իր բոլոր գիտութիւնը ծալել է եւ պարկն է դրել, որովհետեւ իմանում է, թէ ժողովուրդը չի հասկանայ իրան: Բայց մեր ժողովուրդն աւելի լաւ կը հասկանայ տէր Սեսրոպի լեզուն, որովհետեւ նա ժողովրդի միջից ծագած, եւ ժողովրդի գաղափարներով մարդ է, նա դպիր չէ:

Ասլանի այն խօսքը, — թէ Վմեր ընկերներից մէկը քահանայ է, — ինձ նոր մտածութեան մէջ գցեց: Ես նրա ընկերներին բոլորին ճանաչում էի. այդ օրն էր, որ «աստուածաբանութիւնը ծալած պարկն էր դրել» եւ այժմ սրի հետ էր խաղում: Նա ինձ ոչինչ չասաց եւ ես չը հարցրի, որովհետեւ սկզբից յայտնեց, թէ ասելու նպատակ չունի:

Բայց ինձ ոչ սակաւ զարմացնում էր Ասլանի եւրոպական ձեւով կերպարանափոխութիւնը, մանաւանդ այն խօսքը, որ նա ասաց տէրտէրա-

«ես ամբողջ վեց տարի այսպէս եմ հագ-  
ծ եղել». . . Ո՞րտեղ, որ երկրում:

Մինչ ես այս մտածութեան մէջ էի, նա  
ասաց.— Փարհատ, այսօր մենք հասնելու  
ենք Վան քաղաքը. այնտեղ ոչ ոք չէ ճանաչում  
ինձ, բացի մի քանի բարեկամներից. ես այնտեղ  
յայտնվելու եմ որպէս եւրոպացի բժիշկ. դու  
պէտք է զգոյշ լինես չը խանգարել իմ գերը. . .


— Ես այնքան յիմար չեմ, պատասխանեցի:  
Բայց եթէ քեզ առաջարկելու լինեն մի հիւանդ,  
ինչ կանես:

— Կը բժշկեմ, պատասխանեց նա:

— Ի՞նչպէս կարող ես բժշկել, հարցրի ես  
դարմանալով:

— Կարող եմ, դարձեալ պատասխանեց նա  
վճռական կերպով.— Տեսնո՞ւմ ես այն երկու մեծ  
արկղները, որ տանում է տէր Մեսրոպի ծառան,  
նրանց մէջ ամփոփված են իմ դեղօրայքը, եւ  
բժշկական գործիքները, որ շատ անգամ ինձ հետ  
ման եմ ածում:

Ես յետոյ, շատ յետոյ իմացայ, որ Ասլանը  
ոչ թէ հասարակ բժիշկ էր, այլ մի հմուտ բժըշ-  
կապետ: Նա այդ արհեստը ուսել էր Ամերի-  
կայում, երբ Հայաստանից այնտեղ էր գնացել:  
Նա ուսել էր եւ շատ եւրոպական լեզուներ, եւ  
այնպէս էր սիրում արհեստը ու գիտութիւնը,  
որպէս հասարակաց բարօրութեան գործը: Այո՛,  
եւ շատ յետոյ իմացայ, որ նա տէր Թօդիկի  
դպրոցից փախչելուց յետոյ իրան նուիրել էր ուս-  
ման եւ բարձր գիտութիւնների:



— Լաւ, քանի որ դու բժիշկ ես, այլ եւս  
կասկածելու ինչ ունես: Ես ինչո՞վ կարող եմ  
խանգարել քո դերը, հարցրի ես:

— Ես այնտեղ պէտք է գաղեմ իմ հայր-  
թիւնը . . . պատասխանեց նա փրգովված ձայնով,  
կարծես, նրան խիստ ծանր էր արտասանել այս  
խօսքը:

## Վ Ե Ր Զ

ԱՌԱՋԻՆ ՀԱՅՈՐԻ

Ր Ա Ֆ Ֆ Ի Ի մահաց յետոյ լոյս են տեսել մեր


հրատարակութեամբ.

1. Հայ կիներ և հայ երիտասարդութիւնը
2. Խենթ և Ջալալեդդին, երկուսը մի գրքի մէջ  
ամփոփած . . . . . 2ր. 50կ.
3. Գաւիթ Բեկ Ա. Բ. Գ. վերջաբանով . . . 3ր. —
4. Կայծեր Ա. հատ. Բ. տպագրութիւն . . . 2ր. —
5. Կայծերի վերջը . . . . . — 50
6. Մինը այսպէս, միւսն այնպէս, պատկերագարդ 1ր —
7. Վեպիկներ և պատկերներ Ա. հատ. . . 2—50
8. Վեպիկներ և պատկերներ Բ. հատ. . . 2—50

Մամուլի տակն է ևւ շուտով լոյս կը տեսնի

Ջ Ա Հ Ր Ո Ի Մ Ա Ր

Հրատ. Այլի Աննա Մէլեք-Յակովբեան—Բաֆֆի





Բ Ա Յ Յ Ի Ի

Առանձին գրքերով լոյս տեսած աշխատութիւնները

- |   |      |
|---|------|
| 1. Փ ու Ն ջ Ա. (սպառուած)                               | 1—50 |
| 2. Փ ու Ն ջ Բ.  | 1—50 |
| 3. Խ ա մ ս. Մ է լ ի թ ու թ. (սպառուած)                  | 1—50 |
| 4. Ո ս կ ի Ա թ ա ղ ա ղ (սպառուած)                       | 1    |
| 5. Ղ ա ր ա ք. Ա ս տ ղ ա գ. (սպառուած)                   | 1 20 |
| 6. Կ ա յ է ն ի Կ տ ա կ ը                                | 1 20 |
| 7. Խ ա չ ա գ. Յ ի շ ա տ. Ա. Եւ Բ. սպառ.                 | 1 20 |
| 8.            «                    «           Գ. Եւ Գ. | 1 50 |
| 9. Կ ա յ ծ Ե ր Բ.                                       | 2 50 |
| 10. Ս ա մ ս ու է լ Ա. Բ. Գ.                             | 3    |









43

## Haverhill Public Library.

This book, unless marked "Seven day book," may be kept four weeks, and, if non-fiction, may be renewed once for four weeks. If it is fiction, or on the reserve list, it may not be renewed. It may not be transferred.

If this book is kept overtime, a fine of two cents a day will be charged. If sent for by messenger, the fine and twenty cents additional will be charged.

Borrowers finding this book mutilated or defaced will please report it.

<del>JAN 30</del>	<del>DEC 1</del>	<del>JAN 18</del>
<del>DEC 5</del>	<del>FEB 23</del>	<del>FEB 5</del>
<del>MAR 22</del>	<del>JAN 3</del>	<del>APR 18</del>
<del>APR 20</del>	<del>FEB 7</del>	<del>SEP 12</del>
<del>JUN 2</del>	<del>FEB 28</del>	<del>MAR 9</del>
<del>JUL 24</del>	<del>APR 6</del>	<del>MAR 9</del>
<del>DEC 16</del>	<del>NOV 8</del>	<del>JUL 11</del>
<del>DEC 31</del>	<del>NOV 8</del>	<del>NOV 8</del>
<del>NOV 8</del>	<del>JUL 8</del>	<del>NOV 8</del>

108 1

10184-58

100077

80-4 7

43

Raffi

Sparks v.1

(Fiot.)

